Հ. ՖԵԼԵՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. Г. ФЕЛЕКЯН

ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ АРМЕНИИ В БОРЬБЕ ЗА ПОСТРОЕНИЕ СОЦИАЛИЗМА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Հ. ՖԵԼԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հ 44297

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

Մենագրության մեջ Սովետական Հայաստանում հրատարակված շուրջ 300 անուն պարբերականների, ինչպես և արխիվային փաստաթղթերի վերլուծության հիման վրա լուսաբանված է մամուլի գաղափարական-քաղաքական և դաստիարակչական-կազմակերպչական աշխատանքը սոցիալիզմի կառուցման պայքարում՝ հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական ինդուստրացման, գյուղի կոլեկտիվացման և կուլտուրական հեղափոխության կենսագործման ասպարեզներում։ Ցուցահեռարար տրված է նաև կուսակցական, սովետական, երիտասարդական, գյուղացիական, արհմիութենական, գրական-գեղարվեստական և այլ պարբերականների ընդհանուր բնութագիրը, Սովետական Հայաստանի պարբերական մամուլի սկզբնավորման ու զարգացման պատմությունը՝ 1920—1936 թվականներին։

6—10—1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պարբերական մամուլը միշտ էլ եղել ու մնում է կոմունիստական կուսակցության ամենասուր և հատու զենքերից մեկը: Հանրահայտ է, թե ինչպիսի բացառիկ դեր էր հատկացնում Վ. Ի. Լենինը մամուլին՝ սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարում. լինել ոչ միայն կոլեկտիվ ագիտատոր, կոլեկտիվ պրոպագանդիստ, այլև կոլեկտիվ կազմակերպիչ,— Լենինյան այս նշանաբանով է լուսավորված մեր բազմազգ հայրենիքի ժողովուրդների բոլշևիկյան մամուլի պատմությունը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով, խորհրդային իշխանության հաստատումով կոմունիստական մամուլը աշխարհի մեկ վեցերորդ մասում պատվով կատարեց դեռևս Կ. Մարքսի կողմից կանխորոշված իր պատմական առաքելությունը. «Փորել գոյություն ունեցող քաղաքական կյանքի բոլոր հիմքերը», ի հակադրություն ժամանակի պաշտոնական մամուլի, որին նույն Մարքսը տվել է այսպիսի բնութագրություն. «Բուրժուական ազդեցություն է գործում միայն ենթագրաֆենական մամուլը: Մեծագույն արատը՝ կեղծավորությունը, անբաժանելի է այդ մամուլից. նրա այդ արմատական արատից էլ բխում են նրա մնացած բոլոր թերությունները, որոնց մեջ առաքինության սաղմ անգամ չկա, բխում է նրա ամենազզվելի—նույնիսկ գեղագիտական տեսակետից—արատը՝ պասսիվության արատը: Կառավարությունը լսում է միայն իր սեփական ձայնը. նա գիտե, որ լսում է միայն իր սեփական ձայնը, բայց և այնպես նա տարվում է այն ինքնախաբեությամբ, թե իբր լսում է ժողովրդի ձայնը, և նմանապես ժողովրդից էլ պահանջում է, որ նա տարվի ինքնախաբեությամբ: Իսկ ժողովուրդը, իր կողմից, կա՛մ մասամբ մատնվում է քաղաքական անհավատության, մասամբ էլ քաղաքական անհավատության, կա՛մ թե բոլորովին երես դարձնելով պետական կյանքից, դառնում է միայն մասնավոր կյանքով ապրող մարդկանց բազմություն:

Եթե տեր ասված իր սեփական արարչագործության մասին մի այն վեցերորդ օրն ասաց՝ «Եվ տեսա, որ ամեն ինչ լավ է», ապա ենթագրաքննական մամուլն ամեն օր գովաբանում է կառավարական կամքի արարչագործությունները. բայց քանի որ մեկ օրն անպայման հակասում է մյուսին, ապա մամուլը շարունակ ստում է և միաժամանակ պետք է թաքցնի, որ տեսնում է իր սուտը, պետք է կորցնի ամեն մի ամոթ»[1]։

Պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում պարբերական մամուլը կոչված էր իրականացնելու պատմական նոր խնդիրներ. իշխանության դեմ կռվելու գործիքից այն վերածվեց-դարձավ իշխանության պահպանման ու ամրապնդման, նոր կյանքի կառուցման գործիք միջոց։ Ինչպես դիպուկ նկատել է հրապարակախոսներից մեկը՝ խորհուրդների երկրում բազմամիլիոն աշխատավորների վիթխարի, իրոք հրաշագործ վերափոխումների համար «մամուլը նույնքան անհրաժեշտ է, որքան և վառելիքը, հում նյութերը, հացը...»[2]։

Խորհրդային պարբերական մամուլի կազմակերպման ու զարգացման հիմք և ելակետ ծառայեցին կոմունիստական կուսակցության համագումարների, կոնֆերանսների ու Կենտկոմի համապատասխան որոշումներն ու ցուցումները, սոցիալիստական հասարակության կառուցման գործում մամուլին վերապահված դերի լենինյան դասական ըմբռնումները, որոնք շարադրված են մասնավորապես «Խորհրդային իշխանության հերթական խնդիրները» հոդվածի նախնական ուրվագիծ (տարբերակ)», «Խորհրդային իշխանության հերթական խնդիրները», «Մեր թերթերի բնույթի մասին», «Մեծ նախաձեռնություն» աշխատություններում, մի շարք հոդվածներում ու նամակներում։

Պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումից հետո, նշում էր Վ. Ի. Լենինը, կուսակցական-խորհրդային մամուլը դառնում է այդ դիկտատուրայի զենքը, սոցիալիստական շինարարության կազմակերպման միջոցներից մեկը։ Նոր մամուլի առաջնահերթ պարտականությունն է՝ նպաստել աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աշխատանքի նկատմամբ նոր, կոմունիստական վերաբերմունքի արմատավորմանը։ «... Մասսաների դաստիարակությունը կենդանի, կոնկրետ օրինակներով և նմուշներով կյանքի

---

1 «Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին», Երևան, 1964, հ. 2, էջ 538։
2 «Խորհրդային Հայաստան», 1923, № 31։

բոլոր բնագավառներից,— ընդգծում էր Վ. Ի. Լենինը,— ... մամուլի գլխավոր խնդիրն է կապիտալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակ»[3]։ Այս առումով էլ նա պահանջում էր վերափոխել մամուլի հիմնական բովանդակությունը, ոճն ու աշխատանքի ձևերը. «Զափից ավելի տեղ է հատկացվում քաղաքական ագիտացիային հին թեմաների շուրջը,— քաղաքական ճոռոմաբանությանը։ Զափազանց քիչ տեղ է հատկացվում նոր կյանքի շինարարությանը, դրան վերաբերող փաստերին և փաստերին»[4]։ Շեշտելով մամուլի բովանդակությունը տնտեսական խնդիրների արծարծումով հարստացնելու անհրաժեշտությունը, Վ. Ի. Լենինը միաժամանակ զգուշացնում էր, որ այս դեպքում ևս վտանգավոր է ընդհանուր-վերացական մոտեցումը, կյանքից, սոցիալիստական շինարարության գործնականից կտրված անպտուղ մտամարզանքը. «Ավելի շատ էկոնոմիկա։ Բայց ո՛չ թե «ընդհանուր» դատողությունների, գիտական տեսությունների, ինտելիգենտական պլանների և այլ դատարկաբանության իմաստով,— որը, ցավոք սրտի, խիստ հաճախ հենց դատարկաբանություն է։ Ո՛չ, էկոնոմիկան մեզ հարկավոր է նոր կյանքի իսկական շինարարության փաստերի հավաքման, մանրակրկիտ ուսումնասիրման իմաստով»[5]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը ամենայն սրությամբ բարձրացնում էր կյանքի հետ կապերն ամրապնդելու, մամուլի բովանդակությունը սոցիալիստական շինարարության կենդանի ընթացքից քաղված կենսահյութով հագեցնելու խնդիրը։ «Ավելի քի՛չ քաղաքական ճոռոմաբանություն։ Ավելի քի՛չ ինտելիգենտական դատողություններ։ Ավելի մոտ կյանքին,— կոչ էր անում նա։— Ավելի շատ ուշադրություն այն բանին, թե ինչպես բանվորական ու գյուղացիական մասսան իրականում կառուցում է մի նոր բան իր առօրյա աշխատանքում։ Ավելի շատ ստուգում այն բանի, թե որքան կոմունիստական է այդ նորը»[6]։ Վ. Ի. Լենինը մամուլից պահանջում էր կտրուկ շրջադարձ կատարել դեպի արդյունաբերական և գյուղատնտեսական կյանքի «այն առօրյա կողմը... որտեղ ամենից ավելի կառուցվում է նորը, որտեղ հարկավոր է ամենից ավելի ուշադրություն, հրա-

---

3 Վ. Ի. Լենին. Երկեր, 4-րդ հրատ., հ. 28, էջ 109։

4 Նույն տեղում, էջ 106։

5 Նույն տեղում, էջ 107։

6 Նույն տեղում, էջ 109։

պարակայնություն, հասարակական քննադատություն, անպետքի խարազանում, լավից սովորելու կոչ»[7]։

Նոր մամուլի հիմնական պարտականություններից մեկը տեղական փորձի ուսումնասիրումը, ընդհանրացումը և տարածումն էր՝ աշխատանքի հաջող կազմակերպման, արտադրողականության բարձրացման, սոցիալիստական մրցության և մասսաների ստեղծագործական նախաձեռնության խթանման նպատակով։ «Է՛լ ավելի ու ավելի կոնկրետություն տեղական փորձը... ուսումնասիրելու գործում,— գրում էր Վ. Ի. Լենինը նամակներից մեկում,—... Որքան ավելի խորանանք կենդանի պրակտիկայի մեջ, թե՛ մեր, թե՛ ընթերցողների ուշադրությունը շեղելով դարշահոտ-դրասենյակային ու դարշահոտ-ինտելիգենտական... օդից, այնքան ավելի հաջող կընթանա թե՛ մեր մամուլի և թե՛ մեր ամբողջ շինարարության բարելավումը»[8]։ Նա պահանջում էր, որպեսզի մամուլը «սենսացիայի օրգանից, քաղաքական նորություններ հաղորդող պարզ ապարատից» վերածվի-դառնա «մասսաների տնտեսական վերադաստիարակության գործիք», ծանոթացնի նրանց՝ «թե ինչպես պետք է աշխատանքը կազմակերպել նոր ձևով». «Մենք պետք է հատկապես այժմ հոգ տաննք, որպեսզի արտասովոր թանկարժեք նյութի այն խոշոր քանակը, որ այժմ գոյություն ունի արտադրության նոր կազմակերպման փորձի ձևով առանձին քաղաքներում, առանձին ձեռնարկություններում, առանձին գյուղական համայնքներում,— որպեսզի այդ փորձը դառնա մասսաների սեփականություն»[9]։

Սրա մեջ էր հենց մամուլի դերի և կոչման արմատական տարբերությունը կապիտալիզմի տիրապետության և պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում։ Ի տարբերություն կապիտալիզմի, որը «թերթերը դարձրել էր կապիտալիստական ձեռնարկություններ, հարուստների հարստանալու, ինֆորմացիայի ու զվարճության գործիք», աշխատավոր մասսաներին խաբելու և հիմարացնելու գործիք», իշխանությունն իր ձեռքը վերցնելուց հետո պրոլետարիատն ստեղծում է այնպիսի մամուլ, որ «լուսավորում է մասսաներին», սովորեցնում նրանց, թե «ինչպես պետք է ապրել և իրենց տնտեսությունը կառուցել առանց կալվածատերերի ու առանց կապիտալիստների»[10]։ Հարկավոր է ամենայն աշխուժությամբ հետևել, խըն-

---

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 109։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 669—670։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 240։

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 150։

դիր էր դնում Վ. Ի. Լենինը, որպեսզի այդ նոր մամուլը «մասսաներին չվարձացնի և չհիմարացնի քաղաքական պիկանտություններով ու դատարկաբանություններով, այլ հենց առօրյա էկոնոմիկայի հարցերը դնի մասսաների դատաստանին, օգնի այդպիսիները լուրջ ուսումնասիրելու»[11]:

Նոր մամուլի ստեղծման ու զարգացման գործում կարևորագույն նշանակություն ունեցան նաև Վ. Ի. Լենինի այն ցուցումները, թե մեր երկրում պարբերական մամուլը, լավի և առաջավորի պրոպագանդման հետ միասին, պետք է անխնա մերկացնի ու քննադատի թերություններն ու սխալները, օգնելով այն խոչընդոտների, արգելքների հաղթահարմանը, որոնք ընկած են մեր առաջընթացի ճանապարհին. մամուլը պետք է ունենա մարտական թափ, սկզբունքային նպատակասլացություն, անհաշտ ոգի, լինի կուսակցության ամենասուր դենքը, պրոլետարիատի դիկտատուրայի գործիքը: Վ. Ի. Լենինը կոչ էր անում «չվախենալ սխալներն ու անշնորհքությունը բացահայտելուց»[12], մամուլի էջերում ծավալել «գործնական, անխնա, ճշմարիտ-հեղափոխական պատերազմ չարիքի կոնկրետ կրողների դեմ», անողոք ձգգել աճպարարներին, մորթապաշտներին, զսպողներին, կաշառակերներին ու պորտաբույծներին, և այն էլ ո՛չ թե «չոր-պաշտոնական, չինովնիկական ձևով», այլ «որպես հեղափոխական մամուլ», «որպես օրգան այն դասակարգի դիկտատուրայի, որն իր գործերով ապացուցում է, թե կապիտալիստների և կապիտալիստական սովորությունները պահպանող ձրիակերների դիմադրությունը կխորտակվի երկաթե ձեռքով»[13]:

Մերժելով քաղաքական ճոռոմաբանությունը, Վ. Ի. Լենինը ըստ էության պահանջում էր բարելավել և ուժեղացնել մամուլի քաղաքական-դաստիարակչական գործունեությունը, բարձրացնել գաղափարական-սկզբունքային աշխատանքի թափը, առավել կոնկրետ, նպատակասլաց ու նիրգործուն դարձնել մամուլի ելույթները նաև այս ասպարեզում: «Մենք այժմ էլ,— գրում էր նա նույն այդ ժամանակ,—...մոգաշաի անգամ իրավունք չունենք թուլացնելու ո՛չ մեր աշխատանքը բնակչության մասսաներին մեր իդեաների ճշմարտության մեջ համոզելու, ո՛չ էլ մեր աշխատանքը շահագործողների դիմադրությունը խորտակելու համար»[14]: Եվ ապա՝ «Ամենօր-

---

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 311:
12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 670:
13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 109:
14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 252:

ցա պրոպագանդան և ագիտացիան պետք է կրեն իսկապես կոմունիստական բնույթ։ Կուսակցության ձեռքում գտնվող մամուլի բոլոր օրգանները պետք է խմբագրեն վստահելի կոմունիստները, որոնք ապացուցել են իրենց նվիրվածությունը պրոլետարական հեղափոխության գործին»[15]։

• • •

Լենինյան վերոհիշյալ բնորոշումներն ու ցուցումները դրվեցին կոմունիստական կուսակցության համագումարների ու կոնֆերանսների՝ մամուլի վերաբերյալ որոշումների հիմքում, անգնահատելի դեր կատարեցին ինչպես ամբողջությամբ վերցրած Խորհրդային Միությունում, այնպես էլ առանձին ազգային հանրապետություններում նոր տիպի մամուլի սկզբնավորման ու զարգացման գործում։ «Այն ամենը,— ընդգծում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Խորհրդային Հայաստան» թերթը 1924 թվականին,— ինչ խոսել է ու գրել Իլյիչը թերթի, նրա կազմակերպչական սկզբունքի, նրա աննվիրների ու հնարավորությունների մասին, դեռ երկար ժամանակ կմնա անգնահատելի և բացառիկ կարևոր ու մեր կուսակցության և ամբողջ բանվորական դասակարգի համար թերթերի, գրականության և մամուլի վերաբերյալ ուղեցույց աստղ կծառայի»[16]։ *Իր տեսադաշտում ունենալով քննարկվող հարցի վերաբերյալ այն ժամանակ հայտնի լենինյան ամբողջ ժառանգությունը, մեր հանրապետության պարբերական մամուլը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում շեշտում-առանձնացնում էր լենինյան այն դրույթներն ու պահանջառաջարկները, որոնք սկզբունքային նշանակություն էին ձեռք բերում մամուլի գաղափարական-դաստիարակչական և կազմակերպչական աշխատանքի համար սոցիալիստական շինարարության տվյալ փուլում։*

Պարբերական մամուլի լենինյան սկզբունքները մասսայականացնելիս խորհրդահայ մամուլը, բնականաբար, առանձնակի ուշադրություն էր նվիրում կուսակցության կենտրոնական օրգան «Պրավդա»-ին, շեշտելով նրա ավանդների կարևորությունը նաև եռահոկտեմբերյան ժամանակաշրջանում, երբ մեր երկրի մամուլն «սկսեց գործել հարյուրապատիկ, հազարապատիկ ավելի բարդ,

---

15 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 31, էջ 245—246։

16 «*Խորհրդային Հայաստան*», 1924, № 111։

պատասխանատու պայմաններում»։ Եվակեատային նշանակություն ուներ մասնավորապես կուսակցականության և մասսայականության պահանջը, որը դրվեց խորհրդային մամուլի ստեղծման ու զարգացման հիմքում. «Ընկ. Լենինի ղեկավարությամբ սնված ու ապրած հին «Պրավդա»-ի գլխավոր արժանիքները,— կուսակցականությունն և մասսայականությունն,— այսօր նոր «Պրավդա»-ի և նրա հարյուրավոր ընկերակիցների աշխատանքի առանցքն են կազմում»[17]։ Ազգային լեզուներով հրատարակվող պարբերական մամուլի զարգացման, «սոցիալիստական շինարարության լուսաբանության ու ղեկավարության» գործում «Պրավդա»-ի ավանդների կենսունակությունը նկատի ուներ «Խորհրդային Հայաստան»-ը, երբ գրում էր. «Պրավդա»-ին են հետևում, նրանից սովորում Խորհրդային Միության մեջ հրատարակվող հարյուրավոր թերթերը»[18]։ Կոնկրետացնելով այս միտքը մեր հանրապետության մամուլի վերաբերյալ, թերթը մի այլ տեղիով ընդգծում էր, որ Խորհրդային Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող տնտեսական ու զաղափարական խնդիրների «լուծման անփոխարինելի և ամենահզոր գենքն է բանվորական և գյուղացիական մամուլը, «Պրավդա»-ի ոգով ու մեթոդներով աշխատող մամուլը»։ «Հին Պրավդա»-ի մարտական ավանդները վերհիշենք,— կոչ էր անում Հկ(բ)կ Կենտկոմի օրգանը մամուլի աշխատողներին,— սովորենք և կիրառենք նոր «Պրավդա»-ի մասսայական քաղաքական-դաստիարակչական աշխատանքի լենինյան նոր մեթոդները»[19]։

Նոր մամուլի կազմակերպման ու ղեկավարության լենինյան սկզբունքների և «Պրավդա»-ի ավանդների արմատավորման կենսական նշանակությունը խորհրդահայ պարբերականները մեկնում էին ճշմարիտ եվակեատից. «Պրավդա»-ի ավանդները նրա գլխավոր աշխատակից և ղեկավար ընկ. Լենինի ավանդներն են, մեր կուսակցության մարտական ավանդները»[20]։

Խորհրդային Հայաստանում պարբերական մամուլն իր առաջին քայլերն էր անում այն ճշմարիտ ըմբռնումով, թե մեր երկրի մամուլը պարտավոր է հարազատորեն արտացոլել աշխատավոր զանգվածների հերոսական գործերը, նրանց հոգսերն ու «հաղթա-

---

17 Նույն տեղում, № 102։

18 Նույն տեղում, 1927, № 104։

19 Նույն տեղում, № 110։ Ընդգծումն իմն է.— Հ. Ֆ.։

20 Նույն տեղում, 1926, № 104։

կան, անզուսպ ուրախությունները». «խորհրդային մամուլը միլիոնավոր մասսաների առօրյա մրջնային շինարար ջանքերի պատմությունն է»[21]։

Սրատացման այս պահանջը, իհարկե, չէր հանդիպվում լուսանկարչական պատճենավորման։ Խոսքը վերաբերում էր կյանքի կենդանի պրոցեսի տարեգրությանը։ Ըստ որում, այստեղ կարևոր նշանակություն էր ձեռք բերում այդ պատմական ընթացքին հարազատ մնալու հանգամանքը՝ նոր տիպի մամուլի ճշմարտացիության հատկանիշը։

Ճշմարտության և հեղափոխական օբյեկտիվության կարևոր դրսևորումներից մեկն էլ պարբերական մամուլը համարում էր անհաշտ պայքարը նոր կյանքի կառուցման ընթացքում ի հայտ եկած թերությունների, սխալների և կուսակցության գլխավոր գծից շեղվելու ամեն տեսակի դրսևորումների դեմ։ Իրականության ճշմարտացի արտացոլման խնդիրը խորհրդահայ մամուլը ևս ըմբռնում էր երկու միմյանց լրացնող հատկանիշների միասնության մեջ. մի կողմից՝ ամփոփել, ի մի բերել նվաճումները, խրախուսել նորը, առաջավորն ու ընդօրինակելին, այսինքն՝ հանրադիմարել սոցիալիստական շինարարության կուտակած դրական փորձը, ժողովրդական զանգվածներին տեղյակ պահելով նաև ծրագրվող աշխատանքներին. մյուս կողմից՝ թղթի վարագույրով չծածկել-չթաքցնել տարբեր ասպարեզներում առկա դժվարությունները և պակասությունները, այլ սխալների կրքոտ բացահայտմամբ ուղիներ նշել դրանց շուտափույթ հաղթահարման համար։

Ի դեպ՝ իր խնդիրների նման ըմբռնման մեջ էլ հենց պետք է փնտրել խորհրդային երկրի մամուլի որակական-տարբերիչ հատկանիշներից մեկը՝ բուրժուական ապազգիր խոսքի համեմատությամբ. մեր մամուլի վերոհիշյալ նպատակադրումն ինքնին արդեն թելադրում է համապատասխան շահագրգռված վերաբերմունք հասարակական հուզող խնդիրների նկատմամբ և սրատացավ, գործնական բնույթ հաղորդելով նրա ելույթներին՝ բացառում է ամեն մի ինքնանպատակայնություն կամ ժուռնալիստական սենսացիա։

Այս առումով էլ հենց վճռական նշանակություն էր տրվում մամուլի քննադատական ելույթներին պատասխանելու խնդրին։ Սկզբից ևեթ ամենայն սրությամբ դնելով այս պահանջը, խորհրդահայ պարբերականները հաճախ հիշեցնում էին Ռ.Կ(բ)Կ VIII համա-

---

21 «Խորհրդային Հայաստան», 1922, № 128։

գումարի հայանի որոշումը մամուլի վերաբերյալ. «Այն անձինք կամ հիմնարկները, որոնց գործունեությունների մասին խոսվում է մամուլում, պարտավոր են ամենակարճ ժամկետում նույն թերթի էջերում տալ գործարար փաստական հերքում, կամ էլ մատնանշել շոկված թերություններն ու սխալները»[22]: Այս պահանջը մինչև վերջ կենսագործելու համար անվիջում հետևողականություն հանդես բերեց հատկապես «խորհրդային Հայաստան»-ը՝ մեր հանրապետության կենտրոնական թերթը: Մի շարք հիմնարկների ու կազմակերպությունների ղեկավարներ դժկամությամբ, հաճախ էլ պարզապես ավիններով էին դիմավորում մամուլի մերկացումները, իսկ պարբերականների խմբագրությունները քննադատական նյութեր կազմակերպելու բավականաչափ եռանդ չէին ցուցաբերում: «Զափազանց վտանգավոր երևույթ» համարելով այս իրողությունը, թերթը կոչ էր անում. «Չխուսափել քննադատելուց, չխուսափել քննադատությանը պատասխանելուց: Ահա մի լոզունգ, որ պետք է իրագործենք: Բանվորների և աշխատավոր գյուղացիության գերագույն շահերի թելադրանքն է դա»[23]:

Պարբերական մամուլը հասարակական կարծիքի, սոցիալիստական շինարարության կազմակերպման խթան կարող է լինել այն դեպքում միայն, եթե կուսակցական, խորհրդային, տնտեսական և մյուս համապատասխան օրգանները պատշաճ ուշադրություն, հոգատար վերաբերմունք ցուցաբերեն մամուլի նյութերին, աշխատավորների նամակներին, ուսումնասիրեն նրանց առաջարկությունները ու պահանջները, սատար կանգնեն ամեն մի խելամիտ նախաձեռնության: Սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրների լուծմանը աջակցելուն զուգընթաց՝ այս հանգամանքը վճռական նշանակություն ուներ նաև մասսաների հետ մամուլի կապերն ամրապնդելու, թերթերի շուրջը նոր թղթակիցներ համախմբելու, առհասարակ ապագիր օրգանների հեղինակությունն ու կշիռը բարձրացնելու տեսակետից: ՌԿ(բ)Կ Կենտկոմը 1921 թ. ապրիլի 4-ի շրջաբերականում հիշեցնում էր, որ «տեղական շահերը շոշափող գործարար և հասկանալի թղթակցություններին պատասխանելու դեպքում անհապաղ երևան կգա ընթերցողների նամակների

---

22 «Պարտիական և սովետական մամուլի մասին». Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1955, էջ 289:

23 «խորհրդային Հայաստան», 1922, № 204:

նոր հոսանք»[24]։ Մամուլի կուսակցությունների գործարար բնույթը ապահովելու պայմաններից մեկն էլ աշխատավորական նամակներին ցուցարերվող հոգատարությունն էր համարում «Խորհրդային Հայաստան»-ը, երբ գրում էր. «Գյուղացին կամ բանվորը տեսնելով, որ իր խոսքը ուշադրության են առնում, ավելի կսկսի հետաքրքրվել մեր երկրի ներքին կյանքով, սեփական կարիքների առաջադրությամբ և լուսաբանությամբ»[25]։

Իրականության ճշմարտացի արտացոլումը, թերությունների պատճառների հետևողական բացահայտումը և ծրագրվող աշխատանքների քննարկումն ու մասսայականացումը մամուլի գործունեության կազմակերպչական կողմի հիմքն են կազմում, գործունեության, որը սոցիալիստական շինարարության յուրաքանչյուր կոնկրետ փուլում լրացվում-ամրապնդվում է ժուռնալիստական համապատասխան մեթոդներով, խմբագրությունների մասսայական աշխատանքի նոր ձևերով։ Նոր տիպի մամուլը ոչ միայն պարտավոր է «լիովին արտացոլելու մեր շինարարական աշխատանքը՝ իր բազում ծալքերով», այլև կոչված է «լինելու մեր ամենօրյա գործնական աշխատանքի դրդիչ, դեկավար, սրբագրող»։ Այս հարցին անդրադառնալիս խորհրդահայ պարբերականները ևս ամեն անգամ ընդգծում էին, որ մամուլի՝ իբրև կոլեկտիվ կազմակերպչի դերը ինքնին արդեն անհարիր է պասիվությանն ու կրավորականությանը. մեր մամուլը անպայմանորեն հարցեր պիտի հարուցի, խնդիրներ առաջադրի՝ ջանալով ճիշտ, առողջ հունի մեջ դնել հասարակական կարծիքի ձևավորման ընթացքը. նա պարտավոր է յուրովի ուղղություն տալու մասսաների ստեղծագործական աշխատանքի ծավալմանը, հակելու, որպեսզի մինչև վերջ կենսագործվի ընդհանուր գործի շահերից բխող ամեն մի նախաձեռնություն. վերջապես, նա կոչված է աշխարհին հետևելու կյանքի բոլոր ասպարեզներում տարվող գործնական աշխատանքներին և այս կամ այն միջոցառման ձախողման վտանգ զգալու դեպքում՝ անհապաղ միջամտությամբ ահազանգելու թերացումների, միտումնավոր կամ ակամա թույլ տրված սխալների, պանդուխտության, զլխավոր ուղուց կատարվող խոտորումների մասին։ Ըստ այդմ՝ մամուլը պետք է հետևողականություն հանդես բերի բացահայտված թերությունները վերացնելու գործում և կոնկրետ, գործնական միջոցառումներ

---

24 «Պարտիական և սովետական մամուլի մասին», էջ 322։

25 «Խորհրդային Հայաստան», 1923, № 21։

նշելուց բացի, հետևի, որ դրանք շատ փույթ և ճիշտ կիրառվեն։

Նշանակալից էր և այն իրողությունը, որ մեր մամուլում միասնաբար են դրսևորվել կազմակերպչական աշխատանքը և դաստիարակչական գործունեությունը. պարբերականները ոչ միայն արտացոլում-արձանագրում էին կատարվող աշխատանքի արդյունքները, ոչ միայն հարցեր էին հարուցում, այլև «ամենալայն, մանրամասն քննությամբ զբաղվում բոլոր այն խնդիրների, որոնց լուծման վրա էին աշխատում կուսակցությունն ու կառավարությունը»[26]։

Լենինյան հայտնի պահանջների տեսանկյունից ամփոփելով մեր Միության պարբերական մամուլի կատարած աշխատանքը, «Խորհրդային Հայաստան»-ը 1929 թ. մայիսի 10-ի խմբագրականում ընդգծում էր. «Պրոլետարական մամուլը, հակառակ անխուսափելի մի շարք թերությունների, կատարում է այն պարտականությունը, որ կուսակցությունը դրել է նրա ուսերին՝ պայքար հանուն կուսակցության միասնականության և լենինյան անաղարտության, պայքար հանուն ինդուստրացման և գյուղի սոցիալիստական վերակառուցման, պայքար հանուն կուլտուրական հեղափոխության»։

* * *

Մեր հանրապետության պարբերական մամուլը ևս կարևոր դեր խաղաց սոցիալիզմի կառուցման պայքարում։ Համակված սոցիալիստական վերաշինության պաթոսով՝ մամուլը կյանքի խորքերից էր քաղում իր նյութերը, կենսական խնդիրներ էր արծարծում, ոգեշնչվում ու ոգեշնչում էր մեծ ու փոքր հաջողություններով, այպանում խորթն ու խոտելին, անդիջում պայքարելով հանուն նորի հաստատման ու վերջնական հաղթանակի։

Հարուստ ու հետաքրքրական է խորհրդային հայ պարբերական մամուլի անցած ուղին, նաև ուսանելի՝ կյանքի հետ ունեցած իր սերտ, հազարաթել կապերով, սկզբունքային պայքարով, կուսակցությանն ու ժողովրդին ծառայելու մղումներով։

Դժբախտաբար, սակայն, մեր մամուլի կատարած այդ նշանակալից ու բեղուն աշխատանքը ցայսօր չի ստացել իր ամբողջական գիտական արժևորումը։ Եվ այս բացն ավելի ակնառու է դառնում, եթե նկատի առնենք այն որոշակի հետաքրքրությունը,

---

26 Նույն տեղում, 1926, № 104։

որ վերջին 10—15 տարում ցուցարերում են մեր հանրապետության պատմա-բանասիրական գիտությունների բնագավառների հետազոտողները մամուլի պատմության ուսումնասիրության նկատմամբ, մի հանգամանք, որ ինչքան անհրաժեշտ, նույնքան էլ ուրախալի է, մանավանդ այն առումով, որ 175-ամյա վաղեմություն ունեցող հայ պարբերական մամուլի պատմության ստեղծումը, չնայած նախկինում կատարված մի շարք արժեքավոր հետազոտություններին, այնուամենայնիվ, դեռևս մեր գիտնականների առջև ծառացած կարևոր հրատապ խնդիրներից մեկն է և պահանջում է, անշուշտ, համատեղ ջանքերի նոր նվիրումներ:

Այս ասպարեզում մենք ունենք արդեն առաջին հաջողությունները:

Նշված ժամանակահատվածում լույս տեսան Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» եռագրքի երկու տպավոր հատորները[27], որոնք իրավամբ ներդրում էին ուսումնասիրության այդ մարզում: Առաջին գրքում տրված է հնդկահայ (XVII—XVIII դարերի), երկրորդում՝ Արևմտյան Եվրոպայի հայ գաղթօջախներում (XVIII դարի սկզբից մինչև 70-ական թվականները) հրատարակված պարբերականների քննական վերլուծությունը՝ հասարակական-բաղաքական բովանդակության առնչություններով:

Իր բնույթով և հետազոտության ասպեկտով հետաքրքիր նորույթ էր Ս. Գ. Արեշյանի աշխատությունը[28], ուր ցարիզմի գրաքննչական բաղաքականության բացահայտմանը զուգընթաց՝ նկարագրված է հայ և ռուս առաջավոր մտավորականության այն համագործակցությունը, որը հնարավորություն էր տալիս մամուլի էջերում անցկացնելու ազատասիրական գաղափարներ, դրանով իսկ մեծապես նպաստելով հեղափոխական աշխարհայացքի ձևավորմանը ռուսահայ իրականության մեջ՝ մասնավորապես XIX դարի վերջերին և XX դարի առաջին տասնամյակում:

Ուշագրավ է Մ. Մխիթարյանի «Հյուսիսափայլ»-ին նվիրված մենագրությունը[29]: Ս. Իշխանյանն ուսումնասիրել է Ա. Աթանաս-

---

27 Ա. Կարինյան, *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, 1956, հ. II, 1960:*

28 *С. Г. Арешян.* Армянская печать и царская цензура, изд. АН Арм. ССР, 1957.

29 Մ. Մխիթարյան, *«Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևանի պետական համալսարանի հրատ., 1956:*

յանի ժուռնալիստական-հրատարակչական գործունեությունը[30]։

XIX դարի հայ պարբերական մամուլի վերաբերյալ գիտական մի շարք հոդվածներ ու հաղորդումներ են հրատարակել Մ. Մխիթարյանը, Մ. Հակոբյանը, Վ. Ղուկասյանը, Ս. Նազարյանը և այլ հետազոտողներ։

Զգալի գործ կատարվեց բոլշևիկյան հայ պարբերական մամուլի ուսումնասիրության ուղղությամբ։ Եթե նախկինում գրված մի քանի հոդվածներն ու թեկնածուական դիսերտացիաները նվիրված էին առանձին պարբերականների կամ առանձին ժամանակահատվածների նկարագրությանը, ապա Խիկար Բարսեղյանի մենագրությունը[31] հանդիսացավ այդ ասպարեզում առաջին ամբողջական հետազոտությունը, որի մեջ ցույց է տրված մոտ 50 պարբերականների դերը սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարում։ Բոլշևիկյան հայ մամուլի պատմության առանձին կողմերի և հրատարակչության մասնավոր խնդիրների քննությամբ հանդես են եկել մի քանի հեղինակներ[32], ապագրվել են բազմաթիվ հոդվածներ ու հաղորդումներ[33]։

---

30 Ս. Իշխանյան, *Հայ դեմոկրատական մամուլի պատմությունից*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964։

31 Խ. Հ. Բարսեղյան. *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն (1900—1920 թթ.)*, Հայպետհրատ, 1956, նույնի «История армянской большевистской периодической печати (1900—1920)», Հայպետհրատ, 1960։

32 Ն. Խալեյան, *Հայկական բոլշևիկյան մամուլը Անդրկովկասում ռուսական առաջին հեղափոխության տարիներին*, Երևան, 1955. Ն. Տոնոյան, *Հայ բոլշևիկյան մամուլը 1905—1907 թթ.*, Հայպետհրատ, 1958. Ս. Ավագյան, *Բաքվի կոմունայի պարբերական մամուլի պատմությունից*. Հայպետհրատ, 1962. Ա. Բեգլարյան, «Բանվորի կոչը», «Հայաստան» հրատ., 1966. Г. Ц. Лилоян. Национальный вопрос в армянской большевистской публицистике (1904—1914). изд. «Айастан», 1967. Մ. Բարյան. *Լենինիզմի պրոպագանդան հայ բոլշևիկյան մամուլում (1915—1917 թթ.)*, «Միտք» հրատ., 1968. Ս. Սարգսյան. *Սովետական Ռուսաստանի հայ մամուլը*, Դրապալատի հրատ., 1968 և այլն։

33 *Բոլշևիկյան հայ մամուլի և հրատարակչության հետ առնչվող որոշ հարցերի իրենց ուսումնասիրություններում ըստ հարկի անդրադարձել են* Գ. Ղարիբջանյանը (*«Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում»*, Հայպետհրատ, 1955), Վ. Ավետիսյանը (*«Սուրեն Սպանդարյան»*, Հայպետհրատ, 1957), Մ. Ուզումանյանը (*«Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թթ.»*, Հայպետհրատ, 1959), Խ. Բարսեղյանը (*«Ստեփան Շահումյան. կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն»*, «Հայաստան» հրատ., 1968) և այլ հետազոտողներ։ Ուշադրավ են նաև Հ. Բահաղյանի կազմած ու դի-

ՀՍՍՀ ԳԱ ... ԳՐԱԴԱՐԱՆ

Մեր հետազոտողները վերջին շրջանում սկսեցին լրջորեն զբաղվել հայ պարբերական մամուլի այնպիսի մի կարևոր ճյուղի գիտական ուսումնասիրությամբ, ինչպիսին է սփյուռքահայ մամուլը: Այս պրոբլեմի թե՛ գիտական և թե՛ քաղաքական արժեքն այնքան է ակնհայտ, որ կարիք էլ չի զգում հիմնավորման: Արժեքավոր են մասնավորապես Ռ. Հ. Խաչատրյանի[34], Կ. Լ. Դալլաքյանի[35], Մ. Ա. Բարլոյանի[36] աշխատությունները: Այս ուղղությամբ հետազոտություններ են կատարում նաև այլ ուսումնասիրողներ: Սփյուռքահայ մամուլի առանձին օրգաններին նվիրված արժեքավոր բնութագրություններ կան Լ. Խուրշուդյանի «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում» գրքի էջերում:

Համեմատաբար քիչ և աղոտ է ուսումնասիրված Խորհրդային Հայաստանի պարբերական մամուլը: Ա. Ն. Մնացականյանի՝ ռազմաճակատային թերթերին նվիրված գրքից[37] հետո մեր հանրապետության մամուլի պատմությունը երկար ժամանակ դուրս մնաց գիտական հետաքրքրության շրջանակներից: Դրա հիմնական պատճառը, մեր կարծիքով, այն էր, որ Խորհրդային Հայաստանի մամուլի կազմակերպիչների, խմբագիրների և ակտիվ աշխատակիցների անունն ու գործը հանիրավի դատապարտված էին մոռացության: ՍՄԿԿ XX համագումարը իրական հնարավորություններ ընձեռեց մամուլագիտության աշխուժացման համար նաև այս ասպարեզում: Ձեռք բերված առաջին արդյունքներն ամփոփվեցին «Հայ պարբերական մամուլի պատմությունից» ժողովածուի անդրանիկ (և ցավոք սրտի առ այսօր միակ) պրակում, որ կազմեց և հրատարակեց ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի հայ պարբերական մամուլի պատմության բաժինը 1963 թվականին՝ ակադ. Ա. Բ. Կա-

---

տականորեն ծանոթագրած ժողովածուները («Լենինյան «Իսկրա»-ն Անդրկովկասի մասին», Հայպետհրատ, 1960. «Центральные газеты РСДРП о Закавказье», изд. «Митк», 1965. «Правда» и «Социал-демократ» о Закавказье, изд. «Митк», 1968):

34 Ռ. Հ. Խաչատրյան, *Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1960։

35 Կ. Լ. Դալլաքյան, *Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից*, «Հայաստան» հրատ., 1964։

36 Մ. Ա. Բարլոյան, *Սփյուռքահայ մամուլի պատմությունից. «Անի» (1946—1955)*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965։

37 Ա. Ն. Մնացականյան, *Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունը (1941—1945)*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1947։

ինյանի խմբագրությամբ։ Այս գրքում, հայ մամուլի պատմության մի շարք հարցեր շոշափող ուսումնասիրությունների կողքին, տեղ են գտել նաև Խորհրդային Հայաստանում 20-ական թվականներին լույս տեսած առանձին պարբերականներին նվիրված հոդվածներ (Վ. Ամիրբեկյան՝ «Սովետահայ տեղական մամուլի ծնունդը», Վ. Մովսյան՝ «20-ական թվականների գինվորական պարբերականները», Ս. Իշխանյան՝ «20-ական թվականների հայ գյուղը «Գյուղատնտեսական կյանք» ամսագրի էջերում», Լ. Բալագյան՝ «Պատկոմ»-ը և նրա տեղը մանկական գրականության մեջ»)։ Դարձյալ նույն ժամանակաշրջանին է վերաբերում Վ. Ամիրբեկյանի թեկնածուական դիսերտացիան, որ լույս տեսավ առանձին գրքով («Սովետահայ տեղական մամուլը (1921—1925 թթ.)», ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1963)։ Վ. Սեյանն իր թեկնածուական դիսերտացիայում քննում է հայ երիտասարդական պարբերական մամուլի մի ժամանակահատվածը (1917—1932 թթ.), Ա. Հովսեփյանը՝ Հայաստանի կուսակցական-խորհրդային մամուլի աշխատանքը Հայրենական մեծ պատերազմի առաջին տարիներին (1941—1943 թթ.)։

Մեր հանրապետության մամուլի կազմակերպման ու զարգացման առանձին կողմերին բնդհանուր գծերով անդրադարձել են նաև կուլտուրական հեղափոխության և խորհրդային հայ գրականության հարցերով զբաղվող հետազոտողները։ Գրական մամուլի վերաբերյալ տեղեկություններ ու առանձին համառոտ բնութագրումներ կան «Սովետահայ գրականության պատմության» առաջին հատորում (ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1960), մամուլի և հրատարակչական գործի կազմակերպմանը, իբրև կուլտուրական հեղափոխության իրականացման օղակներից մեկին, անդրադարձել են Կ. Խուդավերդյանը («Культурная революция в Армении (1920—1940 гг.), изд. АН Арм. ССР, 1966), *Վ. Ղազանչյանը («Սովետահայ կուլտուրայի առաջին քայլերը», Հայպետհրատ, 1964) և այլ ուսումնասիրողներ։ Ինչ վերաբերում է հայ ժողովրդի խորհրդային շրջանի պատմության այլևայլ խնդիրներին նվիրված հետազոտություններում պարբերական մամուլին տրված հղումներին, ապա դրանք հպանցիկ բնույթ ունեն. բնականաբար, այդ գրքերում մամուլն օգտագործված է սակ որպես ուսումնասիրության աղբյուրներից մեկը և ոչ թե իբրև բուն հետազոտության նյութ։*

Խորհրդային Հայաստանի պարբերական մամուլի ուսումնասիրության շրջանակները, ցավոք, չընդլայնվեցին. մեր մամուլագիտությունը մասնակի հարցերի շոշափումից վեր չբարձրացավ։ Այս

ընդգծվում մեր պատմաբան-բանասերներին առաջադրվող խնդիրների հրատապությունն ընդգծվում է նաև այն իրողությամբ, որ մենք զգալիորեն ետ ենք մնացել. ինչպես Մոսկվայի ու Լենինգրադի, այնպես էլ միութենական հանրապետությունների գիտական և ուսումնական հաստատություններում ՍՄԿԿ XX համագումարից հետո նշանակալից արդյունքներ են ձեռք բերված խորհրդային շրջանի պարբերական մամուլի ուսումնասիրության առումով՝ թե՛ պատմական, թե՛ տեսական և թե՛ պրոբլեմատիկ առումներով։ Հիշենք, օրինակ, «Партийная и советская печать в борьбе за построение социализма и коммунизма» ծավալուն ուսումնական ձեռնարկը, որ 1966 թ. լույս տեսավ երկրորդ լրացված հրատարակությամբ, «Партийно-советская печать в период за строительство социализма», «Советская печать в наши дни», «Из истории партийно-советской печати Белоруссии» կոլեկտիվ աշխատությունները։ Հրատարակվել են ազգային հանրապետություններում պարբերական մամուլի ակզբնավորման ու զարգացման փուլերին, սոցիալիստական շինարարության առանձին շրջաններում մամուլի կատարած աշխատանքի գիտական լուսաբանմանը նվիրված մի շարք գրքեր[38]։ Բացի այդ, պաշտպանվել են բազմաթիվ թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ, որոնց մեջ քննարկված են Ուկրաինայի, Ադրբեջանի, Վրաստանի, Բելոռուսիայի, Լիտվայի, Ղազախստանի, Մոլդավիայի և այլ հանրապետությունների մամուլի պատմության պրոբլեմները, բացա-

---

38 *Ахмедов Д. Н.* Периодическая печать Дагестана (1900—1940). Махачкала, 1963; *Булацкий Г. В.* Печать Белоруссии в период завершения социалистической реконструкции народного хозяйства республики (1933—1937). Минск, 1960; *Гурин В. Д.* Зарождение советской печати в Киргизии. Фрунзе, 1964; *Дмитриев С. К.* Партийно-советская печать Якутии в первые годы Советской власти (1917—1925). Якутск, 1964; *Дондоков В. Ц.* Возникновение и развитие партийно-советской печати в Бурятии (1918—1937). Улан-Удэ, 1960; *Имашев С. Н.* Зарождение коммунистической печати в Казахстане (1918—1925). Алма-Ата, 1961; *Максимов А. А.* Советская журналистика 20-х годов, Л., 1961; *Марцелов С. В.* Печать Советской Белоруссии (Исторический очерк), Минск, 1967; *Мишурин А. Л., Кузнецов И. В.* История партийно-советской печати. М., 1968; *Сафаров Р.* Печать и вопросы пропаганды идей дружбы народов. Ташкент, 1967; *Стыкалин С. И., Кременская И. К.* Советская сатирическая печать (1917—1963). М., 1963; *Ямпольская Р. М.* Ленинские традиции партийно-советской печати (1917—1924), М., 1966 и т. д.

հայտված է այն կարևոր դերը, որ խաղացել են մեր երկրի տարբեր ժողովուրդների լեզուներով հրատարակված պարբերականները սոցիալիզմի կառուցման համար մղված պայքարում, ցույց է տրված նրանց բաղմակողմանի գործունեությունը ներկա էտապում։ Էլ չենք խոսում պատմա-բանասիրական բնույթի այն մեծ թվով հոդվածների մասին, որ հրատարակվել և շարունակում են լույս տեսնել գիտական հանդեսներում՝ ռուսերեն և ազգային լեզուներով։

Եվ եթե մեզանում, այնուամենայնիվ, որոշ քայլեր արված են Խորհրդային Հայաստանի պարբերական մամուլի պատմության ստեղծման ուղղությամբ, ապա պրոբլեմատիկ բնույթի հետազոտությունները, դժբախտաբար, իսպառ բացակայում են. մենք չունենք կուսակցական կազմակերպությունների գործունեության մեջ, ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում, սոցիալիստական մշակույթի զարգացման գործում և այլ ասպարեզներում պարբերական մամուլի կատարած յուրահատուկ դերը բացահայտող գիտական ուսումնասիրություններ։ Մինչդեռ թեմայի պրոբլեմատիկ հետազոտությունը հնարավորություն է ընձեռում ավելի նպատակասլաց ու համակողմանիորեն բնութագրելու Խորհրդային ժամանակաշրջանում պարբերական մամուլի անցած ուղին, առավել ճշգրտությամբ որոշելու նրա տեղն ու դերը հասարակական-քաղաքական կյանքում։

* * *

Ներկա աշխատությունը նվիրված է սոցիալիզմի կառուցման պայքարում (1920—1936 թթ.) Խորհրդային Հայաստանի պարբերական մամուլի դերի լուսաբանմանը։ Նրանում քննության է առնվում այդ ժամանակաշրջանում մեր հանրապետությունում հրատարակված մոտ երեք հարյուր անուն պարբերականների գաղափարական-կազմակերպչական բաղմակողմանի աշխատանքը՝ ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական ինդուստրացման, գյուղի կոլեկտիվացման և կուլտուրական հեղափոխության իրականացման համար մղված պայքարում։ Սոցիալիստական շինարարության մեջ պարբերական մամուլի դերը բացահայտելուն զուգընթաց՝ ջանացել ենք անդրադարձնել նրա կազմավորման ու զարգացման պատմությունը, տալ կուսակցական, խորհրդային, երիտասարդական, գյուղացիական-գյուղատնտեսական, արհմիութենական, գրական-գեղարվեստական և այլ

պարբերականների ընդհանուր բնութագրությունը: Մեզ զբաղեցրել են նաև խորհրդային հայ մամուլում «Պրավդա»-ի ավանդների արմատավորման, նոր տիպի մամուլի սկզբունքների ձևավորման, բանգյուղթակցային շարժման կազմակերպման և մասամբ էլ հրապարակախոսության հարցերը: Տպագրակի բիբլիոգրաֆիկ տեղեկությունները կազմել ենք բնօրինակների հիման վրա՝ բացի հարկի դիմելով նաև Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլի լիակատար ցուցակ»-ի և Հ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա»-ի տվյալներին, որոնք մի շարք դեպքերում լրացվել կամ շտկվել են՝ սկզբնաղբյուրներին համաձայն:

Հետազոտության ընթացքում եկակա ենք ունեցել Վ. Ի. Լենինի համապատասխան աշխատությունները, ՍՄԿԿ և ՀԿԿ համապատասխան մարմինների ու կոնֆերանսների՝ մամուլի վերաբերյալ որոշումները, ՍՄԿԿ Կենտկոմի, Անդրկոմի և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բանաձևերը, հրահանգներն ու շրջաբերականները, Անդրկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժինների գործունեությունն արտացոլող այն փաստաթղթերը, որ պահվում են ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի արխիվի ֆոնդերում:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ I

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ, ՀԱՆՈՒՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ

Մամուլի անդրանիկ օրգանները խորհրդային Հայաստանում. «Կոմունիստ», *«Коммунист»* և «Աղքատ գյուղացի» թերթերը: Դեկտեմբերից-փետրվար: Մամուլը փետրվարյան հեղափոխության մասին. Զանգեզուրյան ավանտյուրայի դեմ: Խաղաղ-շինարարական աշխատանքի կոչը: Մամուլը հեղկոմներից խորհուրդներին անցնելու անհրաժեշտության մասին: Անդրֆեդերացիայի ստեղծման գաղափարի պրոպագանդան: Խորհրդային Ռուսաստանի օգնության զնահատումը: Ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքի հարցեր: Կուսշինարարության և ագիտացիայի գործնականության խնդիրները մամուլում: Կուսակցական կենտրոնական նոր պարբերականներ. *«Наша Правда»* թերթը, *«Известия Центрального комитета коммунистической партии Армении»* և «Կոմունիստ» հանդեսները: Ընդդեմ տրոցկիստական օպոզիցիայի՝ հանուն կուսակցության միասնականության: Մամուլը և Լենինյան կոչը. Լենինյան ավանդների կենսագործման ուղիով:

Խորհրդայնացման պահին ծայրահեղ ծանր կացության մեջ էր նետված Հայաստանը. համաշխարհային պատերազմի և դաշնակցականների տիրապետության տարիներին քամվել էին երկրի առանց այն էլ նվազած կենսահյութերը: Արդյունաբերության արտադրանքը նախապատերազմյան օրերի համեմատությամբ պակասել էր ավելի քան տաս անգամ, քառապատիկ կրճատվել էին ցանքատարածությունները, հինգ անգամ պակասել էր հացահատիկային կուլտուրաների բերքը, քառասուն անգամ՝ բամբակի արդյունահանումը, անասնապահությունը տալիս էր յոթնապատիկ քիչ եկամուտ... Թուրքերը զավթել և թալանում էին Ալեքսանդրապոլի

դավառը մենշևիկյան Վրաստանը փակել էր խորհրդային Ադրբեջան և Ռուսաստան տանող երկաթուղային հանապարհը և շարունակում էր տիրություն անել Լոռվա մի մասում՝ «Ձեզոր զոռում»... Թուրքական յաթաղանից մազապուրծ քառորդ միլիոն գաղթականներ, 50 հազար որբեր, սովից ու համաճարակներից ուժաքամվող ժողովուրդ, որ սակայն չէր կորցրել ապրելու և վերածնվելու հավատքը...

Այս պայմաններում, ահա, երկրի դեկն իր ձեռքն առավ կոմունիստական կուսակցությունը։ «Ներկա ծանր պայմաններում ու լուրջ բոպեին ընդունելով իշխանության ամբողջ պատասխանատվությունը,— ասված է Հայաստանի հեղափոխական կոմիտեի 1920 թ. նոյեմբերի 29-ի պատմական դեկլարացիայում,— մենք Հայաստանի ժողովրդական ուժերին կոչ ենք անում մեզ աջակցել բանվորա-գյուղացիական իշխանության թշնամիների դեմ կռվելու և կանչում խորհրդային անդուլ, ստեղծագործական աշխատանքի»[1]։

Դեկտեմբերի 2-ին Վ. Ի. Լենինը ողջունեց «իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական խորհրդային Հայաստանին»։ Չորս օր հետո Երևանի աշխատավորների միտինգը պատասխան ողջույնի հեռագիր ուղարկեց առաջնորդին, հավատալով երիտասարդ հանրապետության՝ «համարձակ և խիզախ դեպի ապագան դիմելու» պատրաստակամությունը և հավատարմությունը մեծ Հոկտեմբերի գաղափարներին. «Խիտ ու կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշակների շուրջը, աշխատավորությունը հանձին Ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջամարտիկին, հեղափոխություն, որի ալիքները, խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստան...»։

Եվ այստեղ սկիզբ առավ պատմական մի նոր ընթացք, որը նշանավորվեց մարդկանց հայացքների ու մտածումների, հնօրյա ըմբռնումների, հոգեկան ողջ աշխարհի մեջ կատարվող արմատական տեղաշարժերով, աշխատավորության ստեղծագործ մաքառումներով... Կոմունիստական կուսակցությունը, ղեկավարելով երկրի վերաշինության գործը, հմտորեն օգտագործեց հասարակական ներգործության ամենազորավոր միջոցներից մեկը՝ պարբերական մամուլը, որը դարձավ հայրենիքի ու ժողովրդի սոցիալիստական վերածննդի առաջին և հավատի տարեգիրը և իր էջերում գրոշմեց ու

---

[1] «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պր. 1, էջ 5։

ներունդներին ավանդեց նոր կյանքի կառուցման դժվարին, բայց հախուռն ու հերոսական պայքարի դրվագները։

1

Նոր տիպի մամուլի ծնունդը Հայաստանում համընկավ խորհրդային իշխանության հաստատման առաջին օրերի հետ։ Այդ մամուլի անդրանիկ օրգանը եղավ «Կոմունիստ» հայերեն թերթը։ «Դեկտեմբերի 4-ի այն գիշերը, երբ Խորհրդային Հայաստանի հեղկոմը մտավ Երևան,— հետագայում վերհիշում էր ակադեմիկոս Ժուռնալիստ Եղիա Չուրարը,— այն արդեն կար. բանտից ազատված ընկերները ընկ. Աշոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ բաց էին թողել... «Կոմունիստ»-ի առաջին համարը։ Անկաշկանդ, լեգալ կոմունիստական մամուլի հիմքը դրված էր»[2]։ Երկու օր անց, 1920 թ. դեկտեմբերի 7-ին լույս տեսավ ՀԿԿ Կենտկոմի նոր օրգանի՝ «Коммунист» ռուսերեն թերթի առաջին համարը։ Հաջորդ տարվա հունվարի 8-ից Կենտկոմը ձեռնամուխ եղավ մի նոր պարբերականի՝ «Աղքատ գյուղացի» լրագրի հրատարակության։

Սրանք էին Խորհրդային Հայաստանի առաջին պարբերականները, որոնց լույսընծայումը, սակայն, հարկ եղավ շուտով դադարեցնել՝ դաշնակցականների փետրվարյան հակահեղափոխության պատճառով։ Խռովության ջախջախումից հետո վերսկսվեց այդ թերթերից մեկի՝ «Կոմունիստ»-ի հրատարակությունը, իսկ ռուսերեն «Коммунист»-ն ու «Աղքատ գյուղացի»-ն այլևս լույս չտեսան։ Բայց և այնպես, խորհրդային պարբերական մամուլի սկզբնավորման ակամա ընդհատված պրոցեսը մեր հանրապետությունում շարունակվեց նոր թափով, ավելի ընդլայնվեց ու խորացավ՝ թե՛ ըստ պարբերականների տիպի և թե՛ ըստ տեսակի... Այդ մասին, սակայն, խոսք կլինի քիչ հետո։ Առայժմ անդրադառնանք վերոհիշյալ օրգանների ընդհանուր բնութագրմանը և այն կարևոր հարցերին, որ արծարծվել են նրանց էջերում մինչև 1921 թ. փետրվարյան հակահեղափոխությունն ընկած ժամանակահատվածում։

---

2 «Խորհրդային Հայաստան», 1922, № 128։ «Կոմունիստ»-ը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Երևանի կոմիտեի օրգանն էր։ Առաջին 10—12 համարները խմբագրել է Աշ. Հովհաննիսյանը, այնուհետև, մինչև փետրվարյան խռովությունը, Ե. Չուրարը։ Մի բանի համար լույս է տեսել ռուսերեն նյութերով։

* * *

«Կոմունիստ»-ի մամուլ երկու և կես ամսվա համարների ուսումնասիրությունից ելնելով, կարելի է առանձնացնել այն հիմնական խնդիրները, որոնց հետամուտ էր Բերին իր գոյության առաջին շրջանում և որոնց կենսագործման համար արդասաբեր ջանքեր գործադրեցին խմբագրության սակավաթիվ աշխատակիցները՝ դրսևորելով քաղաքական հրապարակախոսության մեծ ունակություններ և նախանձելի կրքոտություն։ Այդ խնդիրներն էին՝ լուսաբանել և գնահատել Հայաստանի աշխատավորության անցած ուղին 1920 թ. Մայիսյան ապստամբությունից մինչև խորհրդային իշխանության հաստատումն ընկած շրջանում. արժևորել Հայաստանի խորհրդայնացման պատմական նշանակությունը և նպաստել խաղաղ-շինարարական աշխատանքների կազմակերպմանը. աշխարջության և զգոնության կոչել հեղափոխական ուժերին. վերջապես, շարունակել և խորացնել աշխատավոր զանգվածների քաղաքական դաստիարակության, նրանց ինտերնացիոնալ համախմբման այն կարևորագույն գործը, որ սկսել էր բոլշևիկյան մամուլը դեռևս ընդհատակի պայմաններում։

Հայաստանի խորհրդայնացումից հետո, ընդգծում էր «Կոմունիստ»-ը, մեր առաջնահերթ անելիքն այն է, որ վերացնենք իշխանության հին օրգանները՝ նախկին պետական ապարատի փոխարեն ստեղծենք կառավարման նոր սիստեմ. անհրաժեշտ էր հին ապարատը «խորտակել մինչև հիմքը, անմիջապես կառուցելով մեր ոչ միայն ըստ ձևի, այլև ըստ էության բանվորա-գյուղացիական պետական ապարատը, որի առաջին գործը կլինի ըստ կարելույն շուտ ոչնչացնել բուրժուազիայի հզորության տնտեսական հիմքը»[3]։ Հեղկոմի դեկրետներով կազմակերպվեցին մի շարք ժողովրդական կոմիսարիատներ, ժողովրդական տնտեսության խորհուրդ, Արտակարգ հանձնաժողով, ստեղծվեցին ժողովրդական դատարաններ, եկեղեցին անջատվեց պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց և այլն։

Հայաստանի խորհրդայնացման դարակազմիկ իրադարձությամբ, շեշտում էր «Կոմունիստ»-ը, դրվեց «նոր ստեղծագործական սոցիալիստական աշխատանքի հիմքը»[4]. իսկ նոր հասարակարգի կառուցումը պահանջում էր ակտիվ գործունեության կանչել

---

3 «Կոմունիստ», 1920, № 5։

4 Նույն տեղում, № 3։

երկրի բոլոր կարող ուժերին, դարձ տալ աշխատավոր զանգվածների ինքնագործունեության։ Այս պայմաններում, հիշեցնում էր Թերթը, չկար ավելի վտանգավոր բան, քան այն պատրանքով տարվելը, թե՝ խորհրդային իշխանության հռչակումով բոլոր հարցերը լուծվում-ավարտվում են և մնում է լոկ սպասել, որ երկնքից մանանա թափվի. ընդհակառակը՝ դրանով միայն սկսվում է անդուլ, անձնուրաց այն աշխատանքը, առանց որի չի կարելի երևակայել անգամ իսկական ազատագրումը կապիտալի ճիրաններից։ «Անցյալից ժառանգություն մնացած հսկայական դժվարությունները,— գրում էր «Կոմունիստ»-ը,— կարող են վերացվել և հարթվել միայն սիստեմատիկ և համառ աշխատանքով. խորհրդային իշխանությունը անկարող է կախարդական գավազանի մի հարվածով Հայաստանի բազմատանջ աշխատավորության համար երջանիկ և բարեկեցիկ կյանք ստեղծել»[5]։

Ինչպես վկայում են խաղաղ-շինարարական աշխատանքի առաջին քայլերը, բանվորներն ու գյուղացիները խորապես ըմբռնում էին կյանքի այդ մեծ ճշմարտությունը։ Թմրած ու բարոյալքված ուժերը արթնանում էին երկրի վերաշինության մեծ գործի համար, զեկավարվելով այն գիտակցությամբ, թե՝ նոր հասարակարգի «մահու և կյանքի խնդիրն է, որ շարժվեն կանգնած մեքենաները, որ ծխան ծխնելույզները»[6]։ Այստեղ էլ հենց հույժ կարևոր էր դառնում Հայաստանում ևս այնպիսի մի հասարակական նոր երևույթի արմատավորումը, ինչպիսին էր Ռուսաստանում սկսված և Լենինի ու կուսակցության բարձր գնահատությանն արժանացած կոմունիստական աշխատանքի շաբաթօրյակը։ Այդ խնդրին նվիրված առաջին հոդվածը հանրապետության մամուլում «Կոմունիստ»-ի 1920 թ. դեկտեմբերի 24-ի «Շաբաթօրյակները» խորագրով առաջնորդողն է։ Ստեղծված ծանր կացությունից ելնելու, երկիրը վերաշինելու գործավոր լծակներից մեկն էլ Թերթը համարում էր «կոմունիստական աշխատանքը և նրա առաջին, տարրական ու տարերային արտահայտությունը՝ շաբաթօրյակը»։ Հաջորդ օրը, դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ առաջին շաբաթօրյակը Երևանում. «Կոմունիստ»-ը տպագրեց «Բոլորդ գնա՛ք շաբաթօրյակ» առաջնորդողը։

---

5 Նույն տեղում, 1921, № 25։

6 Նույն տեղում, 1920, № 16։

* * *

Առաջին իսկ համարներից «Կոմունիստ»-ը առանձնակի տեղ էր հատկացնում հակահեղափոխական ուժերի ռեստավրացիոն փորձերի բացահայտմանը, սերտորեն զուգակցելով այդ խնդիրը խորհրդային իշխանության գաղափարների պրոպագանդմանը: «Հեղափոխությունը հաղթանակեց Հայաստանում,— գրում էր թերթը արդեն երկրորդ համարում,— անհրաժեշտ է լուրջ հոգ տանել, որ հեղափոխության պարտության մասին քնի մեջ էլ չերազեն բոլոր մութ ուժերը...»: Հեղափոխական ինքնապաշտպանության կոչ անելով՝ «Կոմունիստ»-ը մատնանշում էր այդ ուժերի գործադրած ճիգերը. ժողովրդական ինչքի թալան, Կարմիր բանակը բայքայելու փորձեր, սննդամթերքը ամբարներում թաքցնելու և բանվորներին, բանակին ու որբերին կերակրելու համար իշխանությանը տրամադրելուց հրաժարվելու ակնբախ հանդգնություն,— ահա մի քանիսը այն գործողություններից, նկատում էր թերթը, որոնք իրենց վրա կրում են հակահեղափոխության կնիքը և որոնց դեմ հարկավոր է կռվել «աշխատավորության դիկտատուրայի ձեռքում եղած ամենադաժան միջոցներով»: Այս ամենը, ինչպես և հակախորհրդային առավել բացահայտ պոռթկումները (օրինակ՝ պլակատների այրումը Աստաֆյան փողոցում) վկայում են, պարզաբանում էր ՀԿԿ Կենտկոմի օրգանը, որ «հակահեղափոխության հարցը դրվում է հրապարակի վրա ոչ թե նրա համար, որ խորհրդային իշխանությունը լապտերով հակահեղափոխություն է փնտրում», այլ որովհետև վերջինս «բարեհաճեց ցույց տալ իր պոզերը»[7]: Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում բացատրելով ոչ թե բանվորա-գյուղացիական մասսաների հեղափոխական ըմբոստացմամբ, այլ գրսի ուժերի «ակտիվ միջնորդությամբ», գրում էր «Կոմունիստ»-ը, դաշնակցությունը «իրեն համարում է ժամանակավորապես պարտված մի բանակ, որ նահանջել է ավելի ամուր դիրքեր՝ նոր ուժերով հակահարձակման անցնելու համար»[8]:

Հակահեղափոխությանը նպաստում էին նաև «անգլո-ֆրանսիական կապիտալի օգնությունը», կապերի հաստատումը «Թավրիզի միջոցով անգլիացոց և Թիֆլիսի դաշինների հետ, որոնք հսկայական օգնություն են խոստանում նոր ձեռնարկությանը». և, վերջապես, ընդգծում էր թերթը՝ «եթե այդ բոլորին ավելացնենք նաև այն, որ

---

7 «Կոմունիստ», 1920, № 11։

8 Նույն տեղում, 1921, № 52։

Քեմալի զորքերի կողմից գրավված վայրերը չմաքրելու մասին քաղաքականությունը միանգամայն համապատասխանում է դաշնակցության դավադրական ծրագրերին՝ նոր ավանտյուրայի պատկերը կպարզվի միանգամայն»[9]:

Ի դեպ՝ հատուկ ուշադրության են արժանի «Կոմունիստ»-ում տպագրված այն նյութերը, որոնք վերաբերում են Հայաստանում բեմալական օկուպացիային: Այդ նյութերն արժեքավոր էին մասնավորապես այն առումով, որ քեմալական գործիչների բարձրագոչ «հեղափոխական» ֆրազները համադրում էին զավթված տերիտորիաներում նրանց կատարած իրական գործերի հետ և, այդպիսով, բացահայտում նրանց հետապնդած բուն նպատակներն ու քաղաքական խաբեությունը: 1920 թ. № 12-ում թերթը տպագրեց Թուրքիայի արտաքին գործոց մինիստր Ահմեդ Մուխթարի վերջնագիրը՝ ուղղված Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինին: Քեմալականները բանն այնպես էին ներկայացնում, որ իբր թե զավթողական ոչինչ չկա իրենց գործողությունների մեջ և իրենց ուզածն այն է լոկ, որ ազատագրեն Թուրք բնակչություն ունեցող տերիտորիաները, որտեղ կատարվել են «դաշնակցականների ձեռքով Ձեզ հայտնի դաղանությունները»: «Մեզ լուրեր են հասնում,— հայտնվում էր այնուհետև վերջնագրում,— որ Հայաստանում ռեժիմի փոփոխության հետևանքը (մի փոփոխություն, որ ամենայն հավանականությամբ ժամանակավոր է) Դուք ցանկանում եք հիշյալ դաշինքը (դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի «պայմանագիրը»—Հ. Ֆ.) վերաքննել և վերադարձնել Հայաստանին թուրք բնակչությամբ հողամասերը, մի հանգամանք, որ կծառայե մոտիկ ապագայում այդ հողամասերում բնակվող թուրք բնակչության բնաջնջման նախարանը»:

Շուտով «Կոմունիստ»-ը հրապարակեց Չիչերինի պատասխանը. խորհրդային կառավարությունը մի անգամ ևս հավաստում էր, թե՝ «որպես դեպի Հայաստանը և խորհրդային մյուս հանրապետություններն ունեցած բարի կամքի ապացույց՝ ձեռք կառնվեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի թուրքական բանակը անհապաղ հեռանա Ալեքսանդրապոլի օկրուգից և այն բոլոր վայրերից, որոնք առնչվում են Կարսի օկրուգին հյուսիսից և արևելքից...»: Թերթը միաժամանակ տպագրեց «Արժանի պատասխանը» խորագրով հոդվածը՝ մերկայացնելով Անդորայի կառավարության՝ «Անգլիայի հետ

---

9 Նույն տեղում, № 40:

հաշիվ մաքրելու» պատրվակի տակ Անդրկովկասի տերիտորիալ խնդիրներին ակտիվորեն միջամտելու հնարն գնացող միտումները։ «Միայն Ահմեդ Մուխթարը կարող էր ենթադրել,— գրում էր թերթը,— որ Հայաստանի բանվորա-գյուղացիական հեղափոխությունը «ամենայն հավանականությամբ ժամանակավոր հեղափոխություն է», «միայն Անդորայի կառավարությունը կարող էր հուսալ, որ Տաճկաստանը կարող է ազդել անդրկովկասյան գործերի վրա»։ Խորհրդային կառավարության բռնած դիրքը, նրա քաղաքականությունը, պարզաբանում էր թերթը, «ազատ իրավունք է տալիս Քեմալ փաշային Տաճկաստանի սահմաններում ապացուցելու, թե որչափ այդ երկրի տիրող դասակարգերը շահագրգռված են իրենց հայրենիքի ազատագրման մեջ անգլիական իմպերիալիզմի ճիրաններից»[10]։

Ինչպես հայտնի է, քեմալականները չլացան և չհապաղեցին բազմիցս արձագանքելու Խորհրդային Հայաստանի՝ հարևան ժողովուրդների հետ եղբայրական հարաբերություններ հաստատելու անկեղծ կոչերին՝ ձևացնելով, թե՝ «եղբայրաբար սեղմում են Հայաստանի աշխատավորության մեկնած ձեռքը»։ Բայց այդ ամենը սոսկ ֆրազաբանություն էր, եղբակցնում էր թերթը՝ համեմատելով քեմալականների հավաստիացումներն ու բարձրագոչ խոսքերը այն իրական քաղաքականության հետ, որ վարում էին նրանք Խորհրդային Հայաստանի նկատմամբ։ Ի՞նչ արժեք ունի հեղափոխական կեցվածքով կուրծք ծեծելը, ո՞ւմ են պետք «եղբայրության» մասին մեծ-մեծ խոսքերը, գրում էր «Կոմունիստ»-ը «Փաստեր ու եղրակացություններ» առաջնորդողում, երբ «Քեմալի զորքերը դեռ չեն մաքրել Խորհրդային Հայաստանի հողամասերը»։ «Այդ դեռ բավական չէ,— շարունակում էր թերթը,— նրանք այս ամիս ու կեսվա ընթացքում իրենց գրաված գավառները... ենթարկել են անօրինակ թալանի և ավերածության... Տաճկական զինվորական իշխանությունն իր վարվեցողությամբ տեղական ժողովրդի հետ՝ ապացուցում է, որ նրա վերաբերմունքը հայրոդ բշնամու վերաբերմունք է դեպի պարտված թույլը»։ Այս գնահատականը թերթը տալիս էր ոչ թե ենթադրաբար, ինչպես կուզենային ներկայացնել քեմալական գործիչները, այլ հենվելով իրական ապացույցների ու փաստերի վրա, որ բերված էին Անդորայի կառավարությանն ուղղված Խորհրդային Հայաստանի արտաքին գործոց ժողկոմատի վերջնագրում և

---

10 «Կոմունիստ», 1920, № 19։

խմբագրության ձևերի տակ գանվող այն իրապատում նամակներում, որ ստացվել էին Ալեքսանդրապոլից և շարունակաբար լույս տեսան թերթում։

Այսօր արդեն պարզված է, որ օկուպացված շրջաններում թուրքական զորքերը կոտորել են ավելի քան 60 հազար տղամարդ, կին և երեխա, ավերածությունների ու թալան-կողոպուտի միջոցով հասցնելով մոտ 20 միլիոն ոսկի-ռուբլու վնաս։ Այնպես որ՝ երիցս ճշմարիտ էր «Կոմունիստ»-ը, երբ գրում էր. «Իրականության անողոք փաստերը երևան են հանում քեմալականների հեղափոխական ֆրազների տակ թաքնված նոին դիտավորությունները». «Քեմալի կառավարությունը ոչ միայն անկեղծ չէր, այլ նա յուր բռնած դիրքով ամենամեծ հարվածն է հասցնում բանվորա-գյուղացիական Հայաստանին»[11]։

Խորհրդային Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությունը «Կոմունիստ»-ը համարում էր այն կոնկրետ փորձաքարը, որով ստուգվում էին քեմալականների «հեղափոխական» նկրտումները։ Նախազգուշացնելով, որ «Մոսկվայում կայանալիք կոնֆերենցիայում Անգորայի ներկայացուցիչները պետք է հաշիվ տան խորհրդային իշխանություններին իրենց քայլերի մասին», թերթը գտնում էր, որ անհրաժեշտ է կիրառել հետևյալ չափանիշը. «Խորհրդային Հայաստանը քեմալականների առաջին քննությունն էր, և նա ապացուցեց տաճիկ փաշաների և նորակազմ բուրժուազիայի ներքին հակահեղափոխական էությունը։ Չնայած այն բանին,— հիմնավորում էր թերթն իր եզրակացությունը,— որ Անտանտայի հետ ունեցած կռվում Անգորան կարող է հենվել միայն միջազգային հեղափոխական պրոլետարիատի համակրության և աջակցության վրա, նա չկարողացավ իր դասակարգային շովինիստական տրամները չխրել մեր աշխատավորության մարմնի մեջ, որ պատրաստ էր և ուզում էր նրա հետ միասին ընդհանուր թշնամուն հարվածել»։ «Դիմակները վերջնականապես պատռված են,— գրում էր թերթը,— քեմալականներն ամենացինիկ կերպով վարում են մի քաղաքականություն, որ իսկական շարունակությունն է տաճիկ սուլթանիզմի քաղաքականության՝ փոքր, ճնշված ժողովուրդների նկատմամբ»[12]։

Զգձգելով օկուպացված շրջաններից իրենց զորքերի դուրսբե-

---

11 Նույն տեղում, 1921, № 39։

12 Նույն տեղում, № 46։

ռումը, որի վրա այնպես պնդում էր Խորհրդային Ռուսաստանը, Թուրքական իշխանությունները ոչ միայն ձգտում էին հաղթեպորեն վերջացնել հին հաշիվները հայերի հետ, այլև իրենց ձեռքում պահելով կարևորագույն երկաթուղային հանգույցը՝ Ալեքսանդրապոլը, խափանել ամեն տեսակի օգնություն Խորհրդային Հայաստանի աշխատավորությանը։ «Քեմալի կառավարությունը...,— եղրակացնում էր «Կոմունիստ»-ը,— իր դիրքով հակահեղափոխություն է ուռճացնում Հայաստանում»[13]։

Այս պայմաններում, ահա, բացառիկ նշանակություն էր ստրվում խորհրդային իշխանության բալան խորացնելու և լայնացնելու ուղղությամբ տարվող աշխատանքներին։ «Ունենալով մեր առաջ մեր մեծ ուսուցիչներին, Ռուսաստանի և Ադրբեջանի պրոլետարիատի օրինակը,— գրում էր «Կոմունիստ»-ը,— մենք պետք է բառապատկենք մեր կազմակերպչական *հոանդը։ Ներքին և արտաքին հակահեղափոխության դեմ Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները* մենակ *չեն։ Նրանց հետ է Խորհրդային հանրապետությունների մեծ և հզոր ֆեդերացիան»*[14]։

Վերլուծելով ստեղծված իրադրությունը, փետրվարի 11-ի առաջնորդողում թերթը վճռական պայքարի կոչ էր անում՝ ընդդեմ դավանանքներում սկսված խժդժությունների, միաժամանակ, ի պատասխան խռովության հասունացումը անտեսողների՝ հայտարարելով, թե՝ «դաշնակցական հակահեղափոխությունը Հայաստանում միայն կույրերը կարող են չտեսնել»։ Այնուհետև թերթի հաջորդ համարներում հրապարակվեցին ՀԿԿ Կենտկոմի, Երևանի կոմիտեի, Ռազմա-հեղափոխական կոմիտեի կոչերն ու հրամանները՝ հակահեղափոխության դեմ վճռական ու անողոք կռիվ կազմակերպելու վերաբերյալ։ Խորհրդային մեր հանրապետությունը, գրում էր թերթը, թևակոխեց քաղաքացիական արյունահեղ կռիվների շրջանը, «և դա այն ժամանակ, երբ Հայաստանը ամենից շատ կարիք ունի ներքին խաղաղ աշխատանքի»։ Հավաստիացնելով, որ բանվորա-գյուղացիական իշխանությունը կճնշի «այս հակահեղափոխական ապըստամբությունը ամենաանգութ խստությամբ», թերթը կոչ էր անում բոլոր միջոցներով աջակցել հեղափոխական ուժերին։

Այս առաջնորդողը տպագրված է փետրվարի 18-ին, այն օրը, երբ դաշնակցականները գրավեցին Երևանը։ Դրանից հետո «Կոմունիստ»-ը ժամանակավորապես դադարեց լույս տեսնելուց։

---

13 *«Կոմունիստ», 1921, № 39։*

14 *Նույն տեղում, № 47։*

* * *

Իրենց ագիտացիոն-քաղաքական գործունեության շատ կողմերով այս թերթին համահնչյուն պարբերականներ էին «Коммунист»-ն[15] ու «Ադրատ գյուղացի»-ն[16]։ Սրանք, սակայն, ունեին նաև որոշ յուրահատկություններ, որոնք պայմանավորված էին նրանց առջև դրված խնդիրների սպեցիֆիկ բնույթով։

Նախատեսված լինելով հիմնականում կուսակցական ակտիվի համար, «Коммунист»-ը չուներ մասսայական լրագրի այն հատկանիշները, որոնցով զգալի չափով առանձնանում էր հայերեն համանուն թերթը։ «Коммунист»-ը շատ տեղ էր հատկացնում կուսակցական շինարարության ամենատարբեր խնդիրներին, քաղաքական, գաղափարական և տնտեսական աշխատանքի մեթոդների ու ձևերի քննարկմանը, դատապարտում էր կարիերիզմն ու քաղքենիությունը, անսկզբունքային-հարմարվողական գործելակերպը, ակտիվ, անձնուրաց աշխատանքի կոչելով հանրապետության բոլոր կենսունակ ուժերին։ Եթե մենք ուզում ենք կոմունիստական հասարակարգի բարիքները վայելել, նշում էր թերթը, ապա ոչ մի վայրկյան չպետք է մոռանանք, որ «կոմունիզմի պատվիրաններից մեկն էլ եղել է, կա ու կլինի գաղափարայնությունն ու աշխատանքը և ոչ թե կարիերիզմն ու անաշխատ, բայց լավ եկամուտ բերող պաշտոնը»[17]։

Առաջնահերթ խնդիր էր համարում թերթը կուսակցական աշխատանքի աշխուժացումն ու կատարելագործումը խորհրդային և տնտեսական գործունեության բոլոր օղակներում՝ իրավացիորեն այդ բանին հասնելու կարևոր նախապայմանը տեսնելով գյուղի և քաղաքի աշխատավոր զանգվածների հետ կուսակցության կապերն ամրապնդելու, քաղաքական ներգործության արդյունավետ ուղիներ մշակելու մեջ։ «Կուսակցական աշխատանքն ամեն ինչից բարձր

---

15 «Коммунист»-ը սկսեց լույս տեսնել իբրև ՀԿԿ Կենտկոմի օրգան։ 1921 թ. հունվարից՝ ՀԿԿ Կենտկոմի և ՀՍԽՀ Հեղկոմի օրգան։ Օրաթերթ էր (երբեմն լույս է տեսել օրընդմեջ)։ Մինչև 1921 թ. № 6-ը թերթի տակ ոչ մի ստորագրություն չի դրվել, հաջորդ համարից՝ «խմբագրական կոլեգիա», № 25-ից՝ պատ. խմբագիր՝ Հ. Դյուլի-Քեվխյան։

16 «Ադրատ գյուղացի»-ն ՀԿԿ Կենտկոմի օրգանն էր, լույս էր տեսնում անկանոն պարբերականությամբ, թեև կոչված էր լինելու «ամենօրյա թերթ»։ Պատ. խմբագիրն էր Ե. Զուրարը։

17 «Коммунист», 1920, № 1.

պիտի դասել» խորագրով առաջնորդվում, ընդգծելով ժողովրդական անտեսության վերականգնմանը անհապաղ ձեռնամուխ լինելու անհրաժեշտությունը, թերթը հիշեցնում էր, որ ճշմարիտ ուղուց չշեղվելու համար պիտի կարողանալ «առօրյա գործնական փորձի յուրացմանը զուգահեռ՝ զեկավարվել կուսակցության պայքարի ընթացքում ձեռք բերվող գիտելիքներով»[18]։

«Коммунист»-ը արձագանքում էր Խորհրդային Ռուսաստանում և Ադրբեջանում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, արծարծում բանակի ամրապնդման, արհմիութենական շարժման խնդիրները, տպագրում էր Հեղկոմի դեկրետները։ Թերթն առանձնահատուկ ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ ճշտորեն կիրառվի կուսակցության քաղաքականությունը միջակի նկատմամբ և մշակվեն գյուղի ու քաղաքի աշխատավորների շահերի ներդաշնակությունն ապահովող գործնական միջոցառումներ։ «Մենք պետք է ջանանք,— գրում էր թերթը,— որպեսզի մանր սեփականատեր գյուղացիները հավատով լցվեն խորհրդային իշխանության այն բոլոր ձեռնարկումների նկատմամբ, որոնց նպատակն է հողային հարցի ոչ-հիվանդագին լուծումը և արդյունավետ ժողովրդական անտեսության հիմքերի ստեղծումը»[19]։

Հայաստանում նոր հասարակարգի կառուցման գործի հաջողության կարևորագույն երաշխիքներից մեկը «Коммунист»-ը համարում էր պատմական այն փորձի ուսումնասիրումն ու յուրացումը, որ կուտակել էր Ռուսաստանի պրոլետարիատը «սոցիալիստական շինարարության անցած կարճ ժամանակամիջոցում»։ «Սոցիալական կյանքի նոր հիմքերը դնելիս,— ընդգծում էր թերթը,— այդ փորձից պիտի սովորի նաև երիտասարդ Խորհրդային Հայաստանը, որը Խորհրդային Ֆեդերացիայի բաղկացուցիչ մասերից մեկն է և ամուր, անքակտելի կապված է իր մեծ դաշնակցի հետ»[20]։

«Коммунист»-ի վերջին համարը լույս տեսավ 1921 թ. փետրվարի 17-ին։

Ինչ վերաբերում է «Աղքատ գյուղացի» թերթին, ապա սրա հատկանշական կողմը գյուղում կուսակցության վարած քաղաքականության պարզաբանումն էր, խորհրդային իշխանության դեկրետների, որոշումների մասսայականացման համար տարվող ագի-

---

18 «Коммунист», 1921, № 28։

19 Նույն տեղում, № 7։

20 Նույն տեղում, № 25։

տացիոն-պրոպագանդիստական աշխատանքը։ «Հարկավոր է բյուրերի, աղքատ գյուղացու աչքերը բաց անել»[21]— ա՛յս էր այն գլխավոր նպատակը, որին հետամուտ էր թերթը՝ «Մեր երկրում», «Արար աշխարհում», «Սովետական Ռուսաստանում», «Կյանքը Կարմիր բանակում», «Աշխատանքի ֆրոնտում» և այլ բաժիններում, ինչպես նաև «Կարմիր երիտասարդի թերթիկ»-ներում զետեղվող բազմազան բնույթի նյութերում։

«Աղքատ գյուղացի»-ն էական նշանակություն էր տալիս խորհրդային իշխանության շուրջը գյուղի չքավորների համախմբմանը, նրանց եռանդը երկրի քայքայված ու ավերված տնտեսության վերականգնմանն ի սպաս դնելու ջանքերին։ «Գեղ կայնի՝ գերան կկոտրի»— այսպես էր խորագրված թերթի խմբագրական հոդվածներից մեկը[22], ուր կոչ էր արվում հասարակական միասնության գիտակցություն դրսևորել հայրենի երկրի վերաշինության մեծ գործում։ «Պիտի հաղթենք երկրի ավերածությունը,— ասված էր խմբագրականում։— էս գործում էլ... Հայաստանի բանվորները և գյուղացիները գեղով պիտի կայնեն. թե չէ՝ ջոկ-ջոկ աշխատենք, ամեն մեկս իր հավարունը շինի, ավերածության տակից դուրս չենք գա։ Ճամփաները բանդված են, առուները՝ փչացած, գպրոցները՝ խարխուլ, փայտ, վառելիք չկա՝ որ պարավոզները կամ հիվանդանոցները տաքացնենք։ Էս բոլորը Թաթոսի կամ Մաթոսի համար չէ, այլ սաղ գյուղի, սաղ բանվորա-գյուղացիական երկրի համար է»։ Թերթը այդպիսի «ընկերական աշխատանք» էր համարում շաբաթօրյակները, որոնք արդեն սկսվել էին Հայաստանի մի շարք գյուղերում։

«Աղքատ գյուղացու» համար շատ բնորոշ մի հատկանիշ էր անգրագետ կամ կիսագրագետ զանգվածների լեզվա-մտածողական մակարդակին համապատասխան դեղջկական ոճը, ժողովրդական բառ ու բանի, թևավոր խոսքերի, առածների ու ասացվածքների առատ գործածությունը,— և այն էլ ոչ միայն հոդվածների, նամակ-թղթակցությունների մեջ, այլև, ինչպես արդեն տեսանք, նույնիսկ տարբեր նյութերի խորագրերում։ Այս ամենը ներդաշնակում էր թերթի առջև դրված քաղաքական-ագիտացիոն ընդհանուր խնդիրներին։ Հետագայում, արժեքավորելով «Աղքատ գյուղացու» կատարած քաղաքական-լուսավորական դերը, թերթի խմբագիրը վերհի-

---

21 «Աղքատ գյուղացի», 1921, № 1։

22 Տե՛ս նույն տեղը, № 8։

շում էր. «Փոքրիկ, խոշոր տառերով շարված գյուղացիական մի թերթ էր սա... Կարճ ու կտրուկ հոդվածներ, թունդ գյուղացիական խոսքեր, ռամիկ ոճ և պայքար, անողոք պայքար դաշնակցության դեմ։ Դրաշարները այնպիսի ուրախությամբ էին շարում այդ թերթիկը, որ երբեք չէին տրտնջում արտաժամյա աշխատանքներից։ Ամբողջ տողեր, որ իրենց ոճով անհասկանալի կարող էին լինել գյուղացիների համար, դրաշարներն իրենք էին խմբագրում։ Խմբագրի ուղարկած վերնագրերը փոխում էին, ավելի ագիտացիոն դարձնում։ Կոլեկտիվ ստեղծագործություն էր»[23]։

«Աղբատ գյուղացի»-ն լույս տեսավ մինչև 1921 թ. փետրվարի 16-ը։

2

Փետրվարյան հակահեղափոխության ջախջախումից հետո, ինչպես ակնարկեցինք, վերսկսվեց նաև պարբերական մամուլի ակամա ընդհատված աշխատանքը. 1921 թ. ապրիլի 7-ին, մոտ մեկ ու կես ամսյա դադարից հետո, լույս տեսավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի օրգան «Կոմունիստ»-ի հերթական համարը[24]. որոշ ժամանակ անց կազմակերպվեցին ինչպես նոր կենտրոնական կուսակցական պարբերականներ, այնպես էլ գավառային մի շարք թերթեր, որոնց բնութագրությունը կտանք աշխատության համապատասխան էջերում։

Այս նոր շրջանում, բնականաբար, պարբերական մամուլն առանձնակի կարևորություն էր տալիս փետրվարյան հակահեղափոխության, թերթերից մեկի դիպուկ արտահայտությամբ՝ «այդ արյունալի էպիզոդի» քննությանը, դաշնակցության «պայքարի մեթոդների» քննադատությանը։ Մասնավորապես մեծ տեղ հատկացրեց այդ խնդրին «Կոմունիստ»-ը («Խորհրդային Հայաստան»), որը մինչև 1921 թ. նոյեմբերը միակ կենտրոնական կուսակցական օրգանն էր մեր հանրապետությունում։ Թերթը խնդիր էր դնում ամենուրեք կազմակերպել մասսայական ժողովներ, դասախոսություն-

---

23 «Խորհրդային Հայաստան», 1922, № 128։

24 «Կոմունիստ»-ը 1921 թ. մայիսի 27-ից վերանվանվեց «Խորհրդային Հայաստան», որը շուտով հրատարակվեց իբրև ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Երևանի կոմիտեի և ՀՍԽՀ Կենտգործկոմի օրգան։ Մինչև 1936 թ. պատ. խմբագիրներ եղել են Ա. Կարինյանը, Ա. Մռավյանը, Ե. Ջուրարը, Թ. Մանդալյանը, Դր. Սիմոնյանը, Վ. Երեմյանը, Հ. Հովհաննիսյանը, Ընդ. Վահանյանը, Զ. Աշրաֆյանը, Ա. Ադոյանը, Հովհ. Պողոսյանը։

ների ու գեկուցումների միջոցով պարզաբանել ընթացիկ մոմենտը, բացատրել, թե ի՞նչ վերաբերմունք ունի կուսակցությունը այն բոլոր խնդիրների նկատմամբ, որ հուզում են աշխատավոր ամենալայն զանգվածներին, որանց մեջ «քննական վերաբերմունք մշակել դեպի անցյալ գործերն ու առաջիկա աննկիրները»։ Այս բոլորը, սակայն, «Կոմունիստ»-ը համարում էր պրովոկացիային վերջ տալու ուղղությամբ կատարվելիք աշխատանքի միայն մի մասը, որով սահմանափակվելը կլիներ միակողմանիություն, դյուրահավատ խաբկանք։ Խնդիրը վերջնականապես չէր կարող լուծվել նաև ղեկավարների և սուտ լուրեր տարածողների նկատմամբ գործադրվող բռնությամբ։ «Պրովոկացիայի առաջն առնելու համար,— եզրափակում էր թերթը,— բավական չէ բռնել և պատժել պրովոկատորներին. հարկավոր է վերացնել այն պատճառները, որ նպաստում են նրանց գործի հաջողությանը. իսկ դրա համար անհրաժեշտ է, որ ակներև դառնա մեր խոսքի ու գործի նույնությունը և կարևոր է ամենից առաջ, որ մասսայական բնույթ ստանա և՛ մեր խոսքը, և՛ մեր գործը»[25]։ «Քաղաքացիական կռիվը,— գրում էր «Կոմունիստ»-ը մի այլ առիթով,— մեզ այն դասն ևս տվեց, որ այն շրջանները, ուր խորհրդային իշխանությունն իր տրամադրության տակ գտնված երկու և կես ամսվա ընթացքում որոշ ռեալ գործ էր կատարել աշխատավոր գյուղացիության օգտին, ակտիվ կերպով կռվեցին դաշնակցական հակահեղափոխության դեմ»[26]։

Փետրվարյան խռովության առաջացման հարցը քննարկելիս «Կոմունիստ»-ը, բնականաբար, լուրջ ուշադրություն դարձրեց արևմտահայ գաղթականության շրջանում բացատրական-դաստիարակչական լայն աշխատանք ծավալելու անհրաժեշտության վրա։ Ինչպես սասունցիներն ու մշեցիներն էին վկայում թերթին հղած իրենց հեռագրում՝ Արևմտյան Հայաստանում թուրք իշխանությունների սանձազերծած անլուր կոտորածներից մազապուրծ այն զանգվածները, որ ապաստան էին գտել Արևելյան Հայաստանում, «ենթակա են եղել միշտ մութ ու հակահեղափոխական պրոպագանդային»[27]։ «Դաշնակների վարած հակաբոլշևիկյան կռիվը,— նշում էր թերթը,— գլխավորապես հենվում էր սասունցիների և ընդհանրապես թուրքահայերի ֆիզիկական ուժի վրա»։ «Դա մի վերին աստի-

---

25 «Կոմունիստ», 1921, № 60։

26 Նույն տեղում, № 67։

27 Նույն տեղում, № 80։

ճանի ողբերգական երևույթ էր,—բացատրում էր «Կոմունիստ»-ը,— ...Սուլթանական արյունոտ լծի դեմ վարած կռվում դարբնված սասունցիների քաջությունն ու համառությունը դուրս բերել ճնշված ժողովուրդների ազատարար կարմիր դրոշակի դեմ—այդպիսի այլանդակության ու դահճության հասան դաշնակցական հակահեղափոխականները»[28]։

Նույն այս խնդիրն ավելի հանգամանորեն քննված է «Հրեշավոր թյուրիմացություն» խորագրով հոդվածում[29]։ Անժխտելի ճշմարտություն է, որ արևմտահայ զանգվածներին հուզող հարցերի լուծման միակ իրական ճանապարհը անցնում է Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման ու ամրապնդման պատմական շրջադարձի միջով, ընդգծում էր թերթը, միաժամանակ ցավով արձանագրելով, որ փետրվարյան օրերին այդ զանգվածների հայտաբերած «խոր անդիտությունը» հետևանք էր նաև այն անտարբերության, որ «հանդես էին բերել այդ օրերից առաջ մեր ընկերները դեպի նրանց հուզող խնդիրները»։ Հարկավոր էր անհապաղ վերջ տալ այդ անտարբերությանը, բացատրական-գաղափարակշռական լայն աշխատանք ծավալել տաճկահայ զանգվածների շրջանում։ Դրանով իսկ հնարավոր կդառնար «ոչ միայն փարատել այն հրեշավոր թյուրիմացությունը, որ զենք ծառայից փետրվարյան հակահեղափոխության, այլև շարժման մեջ դնել հեղափոխական մի գործոն, որ նոր դրավական կարող է լինել դալիք հաղթությունների համար»։ Անդրադառնալով էջմիածնի դավառի տաճկահայության համագումարի որոշումներին, «Խորհրդային Հայաստան»-ը նկատում էր. «Այդ որոշումները ցուցադրում են այն, ինչ պիտ լիներ։ Տաճկահայ աշխատավորությունը դալիս է նոր ուժ ներշնչելու իր բանվորա-գյուղացիական հայրենիքին։ Տաճկահայ շինականը, խարազանելով հին ղեկավարներին, կապվում է Խորհրդային Հայաստանի հետ... Զգույշ, չափազանց նուրբ սրտով պիտի մոտենալ այդ շարքաշ և վիրավոր ժողովրդին, ամեն կերպ պետք է բուժել նրա վերքերը, ոգևորել նրա եռանդը...»[30]։

---

28 «Կոմունիստ», 1921, № 81։

29 Տե՛ս նույն տեղը, №№ 67, 68։

30 «Խորհրդային Հայաստան», 1921, № 96։

Ի դեպ՝ Արևմտահայաստանից ներգաղթած, ինչպես և սփյուռքահայ զանգվածների շրջանում տարվող ագիտացիոն-կազմակերպչական աշխատանքներին աջակցելու նպատակով ՀՍԽՀ Արևմտահայ աշխատավորության կենտրոնական վարչությունը, դեռևս 1921 թ. նախ Թիֆլիսում և ապա Երևանում լույս տեսնող «Կարմիր օրեր» լրագրի փոխարեն, 1922—1923 թթ. հրատարակում էր «Նոր Արևելք»

1921 թ. ապրիլի 10-ին Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեն ընդունեց նեռման դեկրետ, որը հրապարակվեց «Կոմունիստ»-ում ապրիլի 12-ին: Նույն համարի «Նեռման մեծ ակտը» խորագրով առաջնորդողում թերթը ընդգծում էր, որ երբեք չի կարելի հավասարություն նշան դնել ավանտյուրան կազմակերպող ու գլխավորող հակահեղափոխականների և բոլոր նրանց միջև, ովքեր եղել են մոլորված ու խաբված: «Գործադրել պայքարի հին զենքերը ուժերի նոր դասավորությամբ շեղոքացած կամ իրենց համակրանքով հետզհետե մեր կողմը թեքվող հասարակական այն տարրերի դեմ, որ գիտակցաբար, թե անգիտակցաբար գործիք են ծառայել դաշնակցականների դավադրության,— գրում էր «Կոմունիստ»-ը,— կնշանակեր չկշռել քաղաքացիական պատերազմի ընթացքում կամ նրա հետևանքով շրջված իրերի նոր փոխհարաբերությունը»: Իհարկե, ընդգծում էր թերթը, «խոսք չի կարող լինել մեր դեմ գործող ուժերի անգիտացման» մասին, սակայն այս հանգամանքը չպետք է արգելակի այնպիսի գործելակերպի կիրառմանը, որը հնարավորություն կտար խաղաղ շինարարական աշխատանքներում ներգրավելու «երկրի բոլոր ստեղծարար կամ տրամադրելի ուժերը՝ գյուղացիության լայն խավերը, աշխատավոր ինտելիգենցիան և աշխատազուրկ գաղթականությունը»:

Երկու շաբաթ անց Հեղկոմն ընդունեց մի նոր դեկրետ՝ այս անգամ ընդհանուր նեռման վերաբերյալ: Այդ միջոցառման նպատակներից մեկն էլ այն էր, որ «խելքի բերվեին» Զանգեզուրում ապաստանած հակահեղափոխական պարագլուխները. անհրաժեշտ էր խուսափել հետագա արյունահեղությունից: Ինչ վերաբերում է աշխատավորական տարրերին, գրում էր «Կոմունիստ»-ը դեկրետին նվիրված առաջնորդողում, ապա նրանց համար «ներողամտության այդ մեծ ակտի նպատակը... առանձնապես պարզ է և աներկբայելի. մոլորված, խաբված գյուղացիներին հողը կանչում է աշխա-

---

պարբերաթերթը: Պատ. խմբագիր՝ Գ. Վարդանյան: Նյութերի մի մասը տպագրվում էր արևմտահայերեն:

Գրեթե նույն նպատակադրումն ուներ նաև 1921 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Երևանում հրատարակված «Մշակ Հայաստանի» հասարակական, տնտեսական, գրական և քաղաքական լրագիրը, որն իրեն համարում էր անկուսակցական թերթ: Խմբագիր-հրատարակիչն էր Դ. Տեր-Ռուբենյանը:

Պետք է նշել, սակայն, որ «Մշակ Հայաստանի»-ն գաղափարապես շատ հեղհեղուկ մի հրատարակություն էր և հստակ պատկերացում չուներ երկրի ներսում կատարվող հասարակական-քաղաքական լուրջ տեղաշարժերի մասին:

տանքի և նրանք պիտի վերադառնան դեպի գութանը։ Նույնը պիտի ասել խաբված, շփոթված թրքահայ գաղթականների, առանձնապես քաջարի սասունցիների մասին—խորհրդային իշխանության համար նրանք խորթ, տաճի որդիներ չեն, այլ հայ աշխատավորության ամենաղժբախտ մասը, հիվանդ, գաղաղած մի ժողովուրդ, որին Հայաստանի բանվորա-գյուղացիական կառավարությունը պարտավոր է խնամել, բուժել նրա վերքերը և տալ ապնիվ, արդյունավետ աշխատանքի հնարավորություն»։ Դեկրետի իմաստը պարզ է բոլոր նրանց համար, ընդգծում էր թերթը, ովքեր այն կդիտեն ու կընկալեն ոչ թե միտումնավոր մոտեցումով, այլ «պայծառ աչքով և չխանգարված ուղեղով»[31]։

* * *

Իր հիմնական խնդիրներից մեկն էլ մամուլը համարում էր կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության այն քաղաքականության պրոպագանդումը, որի նպատակն էր խաղաղությամբ վերջացնել Զանգեզուրի «ցավոտ հարցը», խուսափել նոր քաղաքացիական կռվից, ավելորդ և անիմաստ արյուն չհեղել։ «Մենք... կարող ենք, ուժ, հնար ունենք զենքի ուժով քշելու նրանց նաև Զանգեզուրի լեռներից,— գրում էր «Կոմունիստ»-ը,—... Բայց մենք չենք ցանկանում Զանգեզուրը դարձնել պատերազմական գործողությունների ասպարեզ. թող այդ լավ հասկանան «փրկիչները» և քանի դեռ ուշ չէ՝ վայր դնեն ժողովրդասպան զենքերը»[32]։

Ինչպես հայտնի է, 1921 թ. մայիսի կեսերից Հայաստանի կառավարության և 11-րդ բանակի հրամանատարության հատուկ պատվիրակությունը (Ա. Կարինյան, Միքենիով) բանակցություններ սկսեց Նժդեհի կազմած «Լեռնահայաստանի կառավարության» հետ՝ «կոնֆլիկտի» խաղաղ լուծման նպատակով։ Սակայն բանակցությունները ձգձգվում էին։ Նժդեհը համառում էր, և ակտիվորեն նախապատրաստվում գինված ընդհարման. մի վարքագիծ, որը ոչ միայն խստագույնս դատապարտվում էր միտինգներում ու ժողովներում Հայաստանի աշխատավորության ընդունած բանաձևերում, այլև հանդիմանության էր արժանանում արտասահմանյան հայ առաջադիմական շրջաններում։ Այս հանգամանքը կարևոր համարելով,

---

31 «Կոմունիստ», 1921 № 73։

32 Նույն տեղում, № 70։

«Խորհրդային Հայաստան»-ը արտատպում էր քաղվածքներ սփյուռքահայ մամուլի էջերից՝ ուշադրություն հրավիրելով հատկապես այն երևույթների վրա, որոնց մեջ նոր արյունահեղությունից խուսափելու հորդորներ էին ուղղված Զանգեզուրի «տերերին»։ Այսպես՝ «Հնչակյանների կարծիքը» խորագրի ներքո[33] թերթը ներկայացնում էր Թավրիզում հրատարակվող «Զանգ» լրագրի դիրքավորումը. Զանգեզուրի սպարապետը, գրում էր «Զանգ»-ը, «անօրինակ մի բեմագրություն» է նախապատրաստում, սակայն, ուզում ենք հուսալ, որ նա, «գնահատելով իրերի դրությունը և խոր դիտակցելով այդ դրության լրջությունը, կզոհի իր անձնական նը հանուն ընդհանրական շահերի և օր առաջ կքաշվի ասպարեզից, թողնելով, որ լեռնցի գյուղացիությունը ինքը տնօրինի իր ճակատագիրը... Ուզում ենք հուսա՞լ... Բայց,—հիասթափված ու դառնագին եզրակացնում էր «Զանգ»-ը,—ինչպես երևում է, դժվար թե առանց նոր աղետների ականատես լինելու հնար լինի ջախջախել խմբապետական կապրիզը...»։ Եվ իրոք, «սպարապետ Նժդեհը արդեն բեմ է դուրս եկել»,— ավելացնում էր «Խորհրդային Հայաստան»-ը և նախազգուշացնում՝ ավանտյուրիստների վախճանը, սակայն, ամենևին էլ չի լինի նույնպես բեմական. «Կարմիր բանակը բեմական գործողություններից հեռու է»։

Հունիսի 15-ին Դարալագյազի կարմիր զորամասերի վրա դաշնակցականների հարձակումով սկսվում է «Զանգեզուրի հանգույցը» զենքի ուժով լուծելու շրջանը։ Հունիսի 18-ի համարի «Վերջին ավանտյուրան» խորագրով առաջնորդողում «Խորհրդային Հայաստան»-ը գրում էր. «Մեր հայրենիքը կարոտ է խաղաղ կյանքի, շինարար գործի և անդուլ աշխատանքի։ Դիտակցելով այդ բոլորը, Խորհրդային Հայաստանի կառավարությունը՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդն ամեն բան արել է իր կողմից՝ խաղաղ կերպով դադարեցնելու քաղաքացիական կռիվը». սակայն դաշնակցական «փրկիչները» չկամեցան ունկնդրել խոհեմության ձայնը. նոր արյունահեղության մեղքն ու պատասխանատվությունն ամբողջապես ընկնում է նրանց վրա։ Նույն համարում թերթը հրապարակեց ժողկոմխորհի նախագահ Ա.Լ. Մյասնիկյանի կոչը՝ ուղղված Հայաստանի աշխատավորներին և բոլոր քաղաքացիներին։ «Մե՞նք չէինք, որ ուզում էինք այս կռիվը, բայց մենք ստիպված ենք այժմ ընդունել այն»,— ասված է կոչում։ Կառավարությունը անհրաժեշտ էր հա-

33 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, № 106։

մարում սրել աշխատավորության զգոնությունն ու աշխրջությունը հակահեղափոխություն սերմանելու ամեն տեսակի փորձերի դեմ. «Թող ամեն մի ազնիվ քաղաքացի, յուրաքանչյուր աշխատավոր ինքն աշխատի իր շարքերից հալածելու շշուկներով թունավորող ու շարանենդ տարրերին: Դրանով կհեշտանա մեր ընդհանուր գործը: Աշխատավորությունն իր վերանձնության ու բարյացակամության հետ միաժամանակ գործադրում է նաև խիստ կարգապահություն ու աննկուն հեղափոխական կազմակերպված բազուկ: Մ՚այդ է պահանջում բանվորական հեղափոխության շահը»:

Զանգեզուրյան հակահեղափոխության դեմ պայքարելու շրջանում Երևանում և գավառներում ձեռնարկվեցին մի շարք նախազգուշական միջոցառումներ, որոնց նպատակն էր կանխել դավադրություն, խռովություն կամ պրովոկացիա կազմակերպելու ամեն մի հնարավորություն: Ոմանք, հատկապես մտավորական շրջաններում, չկարողացան ճիշտ ըմբռնել կիրառվող խստությունների իմաստը և սկսեցին այդ ամենը ներկայացնել որպես կառավարության մի «նոր» քաղաքականություն, որը, իբր թե, հակասում է մինչ այդ կիրառվող «դիջումնավոր» կուրսին: Այդպիսի մտայնությունն այնքան ակնառու էր, որ կոմկուսի պաշտոնական օրգանն ստիպված էր հանդես գալ հատուկ առաջնորդող հոդվածով[34] և բացատրել, որ այդ կարգի դատողությունները արդյունք են բացահայտ թյուրիմացության: «Մեր պայքարը «դաշնակցության» դեմ քաղաքական մի պայքար է, որը ամենևին իրավունք չի տալիս մեզ փոփոխել մեր վերաբերմունքը դեպի հայ ինտելիգենցիան: Ոչ մի ռեպրեսիա, ոչ մի հալածանք հայ մտավորականության դեմ չի կարող և չպիտի լինի»: «Չեկան—պրոլետարական հեղափոխության առաջավոր այս պահակախումբը,— ընդգծում էր թերթը,— պիտի կարողանա ժամանակին ձերբակալել բանդիտներին, դավադրություններ կազմակերպող զանազան ժուլիկներին և շաղատաններին: Բայց նա պիտի աչալուրջ հետևի, որ մեր գավառում գործող ընկերները հեղափոխական այդ գործելակերպը չաղավաղեն և չաղճատեն»: Ոչ որ թող չկասկածի, եզրակացնում էր թերթը, որ «ներքին այն քաղաքականությունը, որ ընդգծվել է ընկ. Լենինի հայտնի նամակում և Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ընկ. Ալ. Մարտունու ճառի մեջ, պիտի գործադրվի անշեղ և անփոփոխ»:

---

34 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, № 112:

Զանգեզուրյան ավանդույթների լիկվիդացման ամբողջ ընթացքում, մեկ ամիս, «Խորհրդային Հայաստան»-ի էջերից ամեն օր հնչում էին պայքարի և աշխատանքի կոչեր։ Այդ ոգով տոգորված բազմազան նյութերը, հրապարակախոսական հոդվածները, աշխատավորական ժողովներում ընդունված բանաձևերն ու որոշումները,— հասարակական կարծիքի այդ արտահայտությունները,— սնուցվում էին «Ավանդույթների դեմ» ընդհանուր խորագրի ներքո։ Հրապարակախոսական շնչով ու հարձակողական ոգով էին տոգորված մասնավորապես Ա. Մռավյանի, Ա. Կարինյանի, Ե. Զուբարի ելույթները։ Բացի այդ, թերթը հրապարակեց Զանգեզուրի իշխանությունների հետ Հայաստանի կառավարության պատգամավորության բանակցությունների նյութերը, որոնք հաստատում էին խորհուրդների խաղաղասիրական կամքը և մերկացնում նժդեհականների անհանդուրժողականությունն ու անուղղելի ավանդույթիզմը։ Եթե այս բոլորին ավելացնենք, որ այդ շրջանում թերթի յուրաքանչյուր երկու առաջնորդողից մեկը նվիրված էր զանգեզուրյան հակահեղափոխության լիկվիդացման խնդիրներին, ապա պարզ կդառնա այն կարևոր դերը, որ կատարեց Հայաստանի կոմկուսի կենտրոնական օրգանը այդ լարված ու շիկացած օրերին։ Վճռական ու կրքոտ ելույթներով հանդես եկան նաև «Կարմիր Շիրակ», «Կարմիր Լոռի», «Կարմիր գյուղացի» գավառային թերթերը։ Այսպես՝ միայն վերջինիս չորս համարներում[35] տպագրված է երկու առաջնորդող («Մենք կհաղթենք», «Դաշնակցությունը պետք է վերջնականապես մեռնի») և հինգ հոդված ու նամակ։ Պարբերական մամուլը գրալիորեն նպաստեց աշխատավորության ուժերի մոբիլիզացմանը, զանգեզուրյան ավանդույթների ջախջախման գործին։

«Ավանդույթն խորտակվեց»,— ազդարարում էր «Խորհրդային Հայաստան»-ը հուլիսի 15-ի առաջնորդողում՝ ընդգծելով այդ փաստի կենսական նշանակությունը հանրապետությունում նոր կյանքի կառուցման աշխատանքները ծավալելու տեսակետից։ «Ազատվելով հակահեղափոխական այդ ցավոտ պալարից,— գրում էր թերթը,— մեր երկիրը ստանում է կատարյալ հնարավորություն իր բոլոր կենսական ուժերը, թե՛ մարդկային և թե՛ նյութական, գործադրելու երկրի բազմաթիվ վերքերը բուժելու համար։ Ստեղծագործական համառ աշխատանքի ֆրոնտը այսօրվանից մեր միակ ֆրոնտն է ու մենք նրան ենք տալու մեր բովանդակ ուժերը... Հա-

35 Տե՛ս «Կարմիր գյուղացի», էջմիածին, 1921, №№ 15—18։

կահեղափոխական ավանտյուրան խորտակվել է, կեցցե՛ խաղաղ շինարարական աշխատանքը»։

Նոր ժամանակաշրջան սկսվեց մեր հանրապետության կյանքում, նոր խնդիրներ դրվեցին նաև պարբերական մամուլի առջև։

3

Դեռևս 1921 թ. մայիսմեկյան տոնի առթիվ բոլոր աշխատավորներին ուղղված կոչում ՀԿ(բ)Կ Կենտկոմը և արհեստակցական միությունների խորհուրդը նշում էին այն ողբալի վիճակը, որի մեջ ընկել էր Հայաստանի աշխատավորությունը համաշխարհային սպանդի, բուրժուազիայի տիրապետության և բաղաքացիական կռիվների հետևանքով. «Քայքայված է երկաթուղին։ Թալանված են գյուղերը։ Սովը, ցուրտը և տիֆը խրախճանք են սարքում մեր երկրում, խեղդելով աշխատավոր ժողովրդին։ Մահն ու կործանումը դարան են մտել և սպառնում են մեզ ամեն կողմից»։ Միակ փրկությունը բոլոր կենսունակ ուժերի «հերոսական աշխատանքի մեջ է»։ «Մեծ են մեր առաջ բացված դժվարությունները, բայց մեծ են և բանվորա-գյուղացիական Հայաստանի ուժերը։ Դեպի աշխատա՛նք»։

Այդ հավատով էին տոգորված և նույնպիսի նպատակասլացություն ունեին ինչպես կենտրոնում, այնպես էլ գավառներում հրատարակվող պարբերականները։ Արձագանքելով ամենուրեք սկսված շինարարական աշխատանքներին, մամուլը միաժամանակ ամբողջ կրքով դատապարտում էր խիստ վտանգավոր քաղքենիական այն մտայնությունը, որի կրողներն ու տարածողները ջանում էին կյանքի ծանր պայմանների, պարենային ճգնաժամի մեղքը բարդել խորհրդային իշխանության վրա։ «Քաղքենի մտածողության ներկայացուցիչները,— գրում էր, օրինակ, «Կարմիր Շիրակ»-ը,— պարենավորման մասին խոսելիս կորցնում են իրենց առանց այն էլ թույլ դատողության վերջին մնացորդը և չարաչար մեղանչում ճշմարտության դեմ». նրանք մոռացության են տալիս երկրի քայքայված վիճակի բուն պատճառները։ Դժվար չէ տեսնել այն ընդհանրությունը, նշում էր թերթը, որ գոյություն ունի քաղքենու վերոհիշյալ «սուրբ միամտության» և հակահեղափոխականի «չար դիտավորության» միջև։ Դժվարությունները հաղթահարելու, տնտեսական ծանր կացությունից դուրս գալու միակ երաշխիքը մամուլը

տեսնում էր ամենօրյա ազնիվ ու անձնվեր, ստեղծարար, բարիքներ արտադրող գործունեության մեջ։ «... Աշխատանքն է, անդուլ, համառ, կազմակերպված աշխատանքը մեզ փրկելու մեր դժվար դրությունից,— ընդգծում էր «Կարմիր Շիրակ»-ը նույն հոդվածում և շարունակում.

— Այն գյուղացին, որ իր հույսը չի դնում Պարսկաստանի ցորենի վրա, այլ օրն ի բուն աշխատում է իր այգում, արտում, պատրաստվում է բաղել, հնձել, կալսել՝ ամենամեծ գործն է կատարում։

Այն բանվորը, որ չնայած իր հաճախ անտանելի դրությանը, չի ընկճվում, չի շեղվում, այլ անշեղ, անթերի կատարում է իր ծանր աշխատանքը՝ ամենամեծ հեղափոխականն է։

Այն ուսուցիչը, դրագիրը կամ գործավորը, որ հասկանալով գործի էությունը, անմռունչ տանում է իր ծանր լուծը, հուսալով մոտիկ ապագայի վրա՝ հերոսություն է գործում։

... Բոլորն էլ ուտել են ուզում, առանց ուտելու՝ աշխատանք չի լինիլ։ Բայց առանց աշխատանքի մենք շենք կարող երկար ժամանակ կերակրվել։ Խոսելով ու տրտունջներով մարդը չի սնվում»[39]։

Նույն թվականի ամռանը պարենային ճգնաժամին զումարվեց մի նոր ազետ՝ խոլերան։ Մամուլը իսկական արշավանք նախաձեռնեց «աշխատավոր ժողովրդի գլխին դամոկլյան սրի նման կախված այդ պատուհասի» դեմ։ Մաքրություն պահպանելու, բուժօգնություն կազմակերպելու, սանիտարական գիտելիքներ տարածելու կոչերը չէին իջնում կենտրոնական ու գավառային թերթերի էջերից։ Ոչ միայն այդպիսի հոդվածներով, այլև հրապարակախոսական բնույթի նյութերով, կոնսուլտացիաներով ու դրույցներով, թերացողներին ու անփույթներին ուղղված պարսավանքներով մամուլը աջակցում էր «խոլերայի դեմ կռվող հանձնաժողովին», որը լայն գործունեություն էր ծավալել հանրապետության բոլոր անկյուններում։ «Հերթական դրոհ», «Հարվածային խնդիր», «Կռիվ խոլերայի դեմ»—ահա մի քանիսը այն խորագրերից, որ հաճախակի երևում էին այդ օրերին թերթերում։ «Չպիտ թույլ տալ,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— որ խոլերայի ասպատակությունը կարողանա անել այն, ինչ չկարողացավ անել Զանգեզուրի ապստամբությունը։ Չպետք է թույլ տալ, որ զոհեր տա առանց այն էլ բաղում անդամ զոհված մեր աշխատավորությունը»։ Թերթը կոչ էր անում կազմակերպել «մաքրության շաբաթօրյակներ», «վերցնել ավելը,

---

36 «Կարմիր Շիրակ», Ալեքսանդրապոլ, 1921, № 5։

բահն ու բրիչը և գերեզման փորել խոլերային, որ մահ է բերում մեր ամբողջ նվաճումներին»[37]։

Այնքան մեծ ու ահավոր էր վտանգը, որ մամուլը հիվանդությունների ու վարակի դեմ մղվող պայքարը իր կարևորությամբ հավասարեցնում էր հակահեղափոխական երևույթների նկատմամբ կիրառվող միջոցառումներին՝ համապատասխան մարմինների առջև խնդիր դնելով հրապարակել մաքրության պահպանման վերաբերյալ պարտադիր կանոններ և զանցառուներին պատժել օրենքի ուժով։ Ինչպես դիպուկ նկատել է Ե. Զուբարն իր մի հոդվածում՝ պրոլետարիատի դիկտատուրան «շրջապատված է բուրժուազիայի «ստեղծագործությամբ»,—ավերով ու սովով» և «պրոլետարիատն ու չքավոր գյուղացիությունը պիտի ստեղծեն մի սոցիալիստական երկիր՝ ավերակների կույտից»[38]։ Այդ մեծ առաքելության ջահակիրները, գրում էր հրապարակախոսը մի այլ առիթով, կոմունիստներն են, որոնք իրենց ուսերի ու սրտի վրա են կրում նոր հասարակարգի կառուցման ամբողջ ծանրությունը։ Զորավոր ու աստվածային ուժ ունեն թեև, բայց «երկնքից իջած մարդիկ չեն կոմունիստները։ Հայաստանի աշխատավորության լավագույն, գիտակից, հաճախ ամենաչարքաշ զավակներն են նրանք։ Եվ միշտ նորերն են միանում հին կոմունիստներին։

... Ծանր պայմաններում է ծնվում բանվորա-գյուղացիական Հայաստանը։

Պրոմեթեոսի հերոսությունն ու տոկունությունն է հարկավոր տեղից ցեխի ու մոխրի մեջ խրված հայ գյուղացու սայլը շարժելու համար։

Հայաստանի կոմունիստների սրտերում կա նոր Պրոմեթեոսի—համաշխարհային պրոլետարիատի զորավոր ջահի կայծից։

Եվ սայլը կշարժենք»[39]։

Առհասարակ այդ շրջանի մամուլի համար բնորոշ են հրապարակախոսական կրքոտությունն ու անկեղծ ոգևորությունը, պատկերավոր լեզուն, հատու և ազդեցիկ խոսքը։ Պարբերական մամուլի կարևորագույն ծառայություններից մեկն էլ այն է, որ նա ձգտում էր հրապարակախոսական տարբեր հնարանքներով արտահայտել օրերի շունչն ու ոգին, հաստատակամություն և հավատ ներշնչել

---

37 «Խորհրդային Հայաստան», 1921, № 122։

38 Նույն տեղում, № 160։

39 Նույն տեղում, № 167։

աշխատավոր դանդվածներին այն մեծ գործի հաղթական ավարտի նկատմամբ, հանուն որի իրենց արյունն էին հեղել ժողովրդի լավագույն զավակները և գերմարդկային ճիգեր էին գործադրվում ավերված երկրի բոլոր անկյուններում։

Նոր հասարակարգի կառուցումը պահանջում է տևական ու համառ, համբերատար ու անձնազոհ աշխատանք բոլոր «մանր» ու մեծ ասպարեզներում։ Այս գիտակցությունը չունեցողները կարող են զոհ գնալ բամբասանքներին ու թշնամական բանսարկությունների։ Հրաշքների մասին երազելը լավ բան է, բայց այդպիսի ակնկալություն ունենալուց առաջ հարկ է հաշվի առնել այն իրական պայմանները, նյութական ժառանգությունը, որից ելնելով էլ՝ «կոմունիստները պիտի վերաստեղծեն երկիրը նոր հիմունքներով»։ Այնպես որ՝ հրաշքներն ու ամենօրյա «սև աշխատանքը» սերտ միահյուսված են միմյանց, ավելի շուտ՝ այդ աշխատանքից է, որ պիտի հառնի մեծ հրաշքը՝ սոցիալիստական ապագան, բայց ոչ օրերի ու ամիսների ընթացքում, այլ տարիների ծանր, անդուլ ճիգ ու ջանքով, լարված ու գերբնական երկունքով։ Այս միտքն է ընդգծված «Խորհրդային Հայաստան»-ի 1921 թ. հունիսի 3-ի «Հրաշքներ և ամենօրյա աշխատանք» խորագրով առաջնորդողում, որը հրապարակախոսական փայլուն նմուշներից մեկն է մեր մամուլում։ Թշնամական պրովոկացիան, շարունակում էր թերթը, երկրի ամբողջ ծանր կացության մեղքը աշխատում է բարդել խորհրդային իշխանության վրա, «մոռացության տալով» պարոն կապիտալի «հրաշագործության» հետևանքները՝ «ծայրաստիճան քայքայված ժողովրդա-տնտեսություն, ավերված քաղաքներ ու գյուղեր, խոպանացած դաշտեր...»։ Մեղադրում-քննադատում էին կոմունիստներին այն բանի համար, որ նրանք չեն կարողանում իրականացնել խոստացված հրաշքը։ Քաղքենական տարրերը նույնպես դժգոհում-փնթփնթում էին՝ դարձյալ սպասելով վերահաս ու հապճեպ հրաշագործության՝ իհարկե, չափված և ձևված ըստ իրենց խամրող իդեալների... Նրանց բոլորին թերթը պատասխանում էր վարակիչ հաստատակամությամբ ուղղված այսպիսի խոսքերով. «Մեզ քննադատողները ու հրաշքի սպասողները թող այսօր տեսնեն մեր համառ, անդուլ աշխատանքը, մեր գերագույն ջանքերը,—իսկ վաղը նրանց կկանգնեցնենք նաև հրաշքի առաջ. մեր ընդհանուր աշխատանքի արդյունքը կնմանի հրաշքի, ներկա ավերված դրությունից կոմունիստական աշխատանքով վերաստեղծված երկիրը ինքնին արդեն հրաշք է լինելու»։

Խաղաղ-շինարարական աշխատանքների ծավալման և պետական ապարատի կարգավորման շահերը օրակարգի մեջ դրին հեղկոմներից խորհուրդներին անցնելու խնդիրը։ 1921 թ. նոյեմբերի 19-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի որոշմամբ ստեղծվեց ընտրությունների նախապատրաստման ու անցկացման աշխատանքները ղեկավարող Հանրապետական կենտրոնական հանձնաժողով. հանձնաժողովներ կազմակերպվեցին նաև քաղաքներում ու գավառներում. հաջորդ օրը հրապարակվեց ընտրությունների ժամանակավոր կանոնադրությունը, որն ուժի մեջ էր մնալու մինչև խորհուրդների համահայաստանյան անդրանիկ համագումարը, մինչև սահմանադրության ընդունումը։

Վերոհիշյալ միջոցառումներից դեռ ավելի բան երկու շաբաթ առաջ՝ նոյեմբերի 2-ին «Խորհրդային Հայաստան»-ը տպագրեց «Հասունացած խնդիր» խորագրով առաջնորդող, ուր հիմնավորված է հեղկոմներից խորհուրդներին անցնելու անհրաժեշտությունը։ Հեղկոմները, որոնք կյանքի էին կոչվել հանրապետությունում ստեղծված բացառիկ պայմանների հետևանքով, արդեն կատարել-վերջացրել էին իրենց դերը։ Խորհրդային իշխանության առաջին ամիսները, փետրվարյան հակահեղափոխության շրջանը, դրանից անմիջապես հետո ստեղծված կացությունը, նշում էր թերթը, «բացառիկ ու դժվարին օրեր» էին, ուստի և աշխատավորական զանգվածներին կազմակերպելու, երկիրը կառավարելու համար «հարկավոր էին բացառիկ մեթոդներ և սիստեմ, այն է՝ հեղկոմների սիստեմը»։ Այժմ արդեն արմատապես փոխվել է իրադրությունը, պարզվել է ուժերի փոխհարաբերությունը երկրի ներսում, անցել է քաղաքացիական կռիվների շրջանը, աշխատավորությունը, որ «անվերադարձ կերպով փարել է սովետական իշխանության գրոշակին», ձեռնամուխ է եղել խաղաղ-շինարարական աշխատանքների։ «Այս պայմաններում,— գրում էր թերթը,— արդեն հարկավոր են կառավարելու նոր մեթոդներ, նոր սիստեմ։ Դեռ ավելին՝ հին, հեղկոմային սիստեմը այսօր խոչընդոտ է հանդիսանում մեր շինարար գործին՝ հնարավորություն չտալով ժողովրդական հեղափոխական լայն մասսաներին մասնակից լինել պետության գործին և այդ այն ժամանակ, երբ այդ մասսաներն այս պետությունը համարում են իրենցը»։ Անհրաժեշտ էր դեմոկրատացնել կառավարման մեթոդները, ստեղծել այնպիսի սիստեմ, որը համապատասխանելով

աշխատավոր լայն զանգվածների՝ իշխանության նկատմամբ ցուցաբերած ընդհանուր վերաբերմունքին, ստեղծագործական նախաձեռնության անկաշկանդ դրսևորման հնարավորություն տալ նրանց։

Խորհուրդների առավելության պարզաբանումը, ընտրության կարգի վերաբերյալ կոնսուլտացիաները թերթերը զուգակցում էին խորհրդային իշխանության ամրապնդման ու զարգացման համար շքավոր զանգվածներին ունևոր շերտերի դեմ համախմբելու, դասակարգային ինքնագիտակցությունն արթնացնելու կոչերին, այդպիսով ընտրությունները դիտելով իբրև քաղաքական դաստիարակության կարևոր մի դպրոց։ Պարբերական մամուլում 1921 թ. դեկտեմբեր—1922 թ. հունվար ամիսներին լայնորեն լուսաբանվեցին իշխանության նոր օրգանների անելիքները հողային հարցի կարգավորման, երկրագործության կազմակերպման, աշխատավորության կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման, դպրոցական-լուսավորական աշխատանքների ծավալման և այլ ասպարեզներում[40]։

1922 թ. հունվարի 30-ին բացվեց Հայաստանի բանվորների, գյուղացիների ու կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարը, որը քննարկեց հանրապետության աշխատավորության համար կենսական նշանակություն ունեցող քաղաքական-տնտեսական մի շարք կարևորագույն խնդիրներ։ «Զմնաց ոչ մի քիչ թե շատ խոշոր ու լուրջ հարց...,—նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը համագումարի արդյունքներին նվիրված առաջնորդողում,— որ համագումարի զբաղմունքների նյութ չդառնար։ Պատգամավորները նրանց վերաբերյալ ծանրակշիռ վճիռներ կայացրին»[41]։

Պարբերական մամուլն առաջնահերթ նշանակություն էր տալիս համագումարի քննարկած հարցերի և ընդունած որոշումների մասսայականացմանը։ «Մայրաքաղաքի բանվորից սկսած մինչև

---

40 Ի դեպ՝ 1924 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Երևանի քաղաքային-գավառային գործադիր կոմիտեի տեղեկատու-հրահանգչական բյուրոն հրատարակեց «Տեղեկատու» խորագրով ամսագիր-բյուլետենի 3 համար (№ 2—3-ը՝ միացյալ), նպատակ ունենալով թե՛ պաշտոնական անձանց և թե՛ ընթերցողներին «իրազեկ դարձնելու գործկոմի գործունեությանը» և «վիճակագրական տվյալների միջոցով ներկայացնելու գործկոմի բաժինների աշխատանքների ճշգրիտ պատկերն ու արդյունքները»։ Խմբ. չի նշված։ 34—40 էջ (28×17 սմ), տպաքանակը՝ 400։

41 «Խորհրդային Հայաստան», 1922, № 30։

Ապարանի ու Զանգեզուրի ամենավերջին գյուղի վերջին գյուղացին,— գրում էր կոմկուսի կենտրոնական օրգանը,— բոլորը պիտի ծանոթանան համագումարի աշխատանքների հետ, ուշի-ուշով քննեն բանաձևերը։ Սա մի ամենաանհրաժեշտ ագիտացիոն աշխատանք է։ Միայն այս միջոցով մենք գործնականում կկապենք բանվորներին և մանավանդ գյուղացիներին խորհրդային իշխանության և նրա ընդհանուր քաղաքականության ու առօրյա աշխատանքի հետ»[42]։

Մամուլն առանձնացնում էր մասնավորապես երկու որոշում, որոնք սկզբունքային-քաղաքական խոշոր արժեք ունեին։ Առաջինը ՀՍԽՀ Սահմանադրության ընդունումն էր, պատմական մի երևույթ, որն արժեքավոր էր նաև նրանով, որ խորտակիչ հարված էր հասցրնում այն «անատամ պրովոկացիային», թե՝ «Հայաստանը կոմունիստների ձեռքով իր անկախությունը կորցրել և ծախվել է»[43]։ Մյուս որոշումը վերաբերում էր Անդրֆեդերացիայի կազմակերպմանը։ Հայտնի է, որ մինչ այդ անդրկովկասյան հանրապետություններում արդեն որոշ քայլեր արվել էին տնտեսական միասնականություն հաստատելու ուղղությամբ. 1921 թ. ապրիլին կնքվել էր համաձայնագիր Անդրկովկասի երկաթուղիների միավորման վերաբերյալ, հունիսին համաձայնագիր ստորագրվեց արտաքին առևտրի միավորման մասին. նոյեմբերի 3-ին ֆեդերացիայի կազմակերպման հարցը քննարկվեց ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումում, որն իր ընդունած բանաձևում բազմակողմանիորեն հիմնավորեց անդրկովկասյան հանրապետությունների միավորման անհրաժեշտությունը։ Երկրամասի կուսակցական կազմակերպությունները, Ս. Կիրովի, Ս. Օրջոնիկիձեի և Ա. Մյասնիկյանի ղեկավարությամբ, ձեռնամուխ եղան այդ մեծ գործի նախապատրաստմանը։ Նույն խնդիրը քննության առնվեց նաև նոյեմբերի 7-ին կայացած Անդրկովկասյան կուսակցական երկրային երկրորդ խորհրդակցությունում։

Անդրֆեդերացիայի ստեղծման աշխատանքները, սակայն, նոր թափ ու ընթացք ստացան այն բանից հետո, երբ Վ. Ի. Լենինը, ծանոթանալով ՌԿ(բ)Կ Կենտկոմի հաստատմանը ներկայացված՝ Կովկասյան բյուրոյի պլենումի վերոհիշյալ բանաձևին, գրեց ֆեդերացիայի կազմակերպման վերաբերյալ նախագիծը, որը և 1921 թ.

---

42 «Խորհրդային Հայաստան», 1922, № 34։

43 Նույն տեղում, № 88։

նոյեմբերի 29-ին հաստատվեց Կենտկոմի Քաղբյուրոյում։ Լենինյան այդ նախագիծը դարձավ ֆեդերացիայի կազմակերպման համար Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքների հիմքն ու գործունեության ծրագիրը։ Նախագծում Վ. Ի. Լենինը գրել էր.

«1) Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիան համարել սկզբունքորեն բացարձակապես ճիշտ և անպայման իրագործման ենթակա, սակայն գործնականապես անհապաղ իրագործելու իմաստով վաղաժամ, այսինքն՝ պահանջում է որոշ ժամանակ քննարկման, պրոպագանդայի և սովետական եղանակով ներքևից անցկացնելու համար.

2) Առաջարկել (Կովկասյան բյուրոյի միջոցով) Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Կենտրոնական կոմիտեներին՝ ֆեդերացիայի հարցն ավելի լայնորեն դնել կուսակցության և բանվորական ու գյուղացիական մասսաների քննարկմանը, հատկապես պրոպագանդա մղել ֆեդերացիայի օգտին և այն անցկացնել յուրաքանչյուր հանրապետության խորհուրդների համագումարների միջոցով. մեծ օպոզիցիա լինելու դեպքում ճշտորեն ու ժամանակին տեղեկացնել ՌԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյին»[44]։

Լենինյան այս ցուցումների ոգով էլ ընթանում էր ֆեդերացիայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքն Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում։ Այդ գործում հսկայական դեր կատարեց պարբերական մամուլը։ Խորհուրդների ընտրությունների նախապատրաստման ու անցկացման շրջանում, ինչպես նաև քաղաքային, գավառային ու գավառակային խորհուրդների անդրանիկ նիստերում, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը 1921 թ. դեկտեմբերի 11-ի առաջնորդողում, կենտրոնական տեղերից մեկը պետք է բռնի Անդրֆեդերացիայի խնդիրը, «որի շուրջը պիտի հավաքել գյուղացիական և բանվորական մասսաներին»։ Ըստ որում, թերթը հարկ էր համարում ընդգծել, որ «այդ հարցին մեր ընկերները տեղերում չպիտի մոտենան ընդհանուր ֆրազներով, այլ կոնկրետ կերպով պետք է ապացուցեն, թե ինչու ֆեդերացիան անհրաժեշտություն է մեզ համար թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ ֆինանսական տեսակետից։ Միայն այդ դեպքում կարելի է հարազատ դարձնել ֆեդերացիայի գաղափարը ժողովրդական լայն մասսաներին»։

---

44 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 33, էջ 136։

Դեռևս նոյեմբերի 13-ին «Խորհրդային Հայաստան»-ը տպագրեց Ալ. Մյասնիկյանի՝ «Կովկասյան հանրապետությունների ֆեդերացիան» խորագրով հոդվածը, ուր ականավոր լենինյանը հիմնավորում էր այդպիսի միություն ստեղծելու կենսական անհրաժեշտությունը Անդրկովկասի երեք հանրապետությունների համար։ Հաջորդ երկու համարներում հրատարակվեց նրա զեկուցումը Անդրկովկասի ֆեդերացիայի և ընթացիկ մոմենտի մասին։

Անդրֆեդերացիայի ստեղծման խնդիրը քննարկվում էր աշխատավորական ամենալայն խավերում, ամենուրեք ընդունվում էին բանաձևեր ու որոշումներ, մամուլում լույս էին տեսնում հոդվածներ, զեկուցումներ ու հաղորդումներ։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ Անդրկովկասի ողջ պարբերական մամուլը պարզապես ներծծված էր ֆեդերացիայի ստեղծման գաղափարով։ Ըստ որում, մամուլի գաղափարական աշխատանքի կարևոր դրսևորումներից մեկն էլ այն անողոք պայքարն էր, որ մղում էր նա Անդրֆեդերացիայի կազմակերպման առիթով արտասահմանում բուրժուանացիոնալիստական պրոպագանդայի հրահրած պրովոկացիայի դեմ։ «Բուրժուական երկրներում հյուրընկալված մեր հակառակորդները,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— դաշնակները, մենշևիկները ու մուսավաթականները արդեն այս հարցի շուրջը բարձրացրել են մի սաստիկ վայնասուն, թե Անդրկովկասյան ֆեդերացիայի գաղափարը բանվորա-գյուղացիական մասսաների ցանկությունը չէ և իբր թե այդ Խորհրդային Ռուսաստանի թելադրանքն է»[45]։

Հանդես գալով Անդրֆեդերացիայի ստեղծման դեմ, բուրժուական գաղափարախոսները սարի սուր ծայրն ուղղում էին կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությանը, ձգտելով երկպառակություն սերմանել մի կողմից՝ Անդրկովկասի ժողովուրդների, մյուս կողմից՝ նրանց և ռուս ժողովրդի միջև։ Սակայն այդ փորձերը, ընդգծում էր մամուլը, ի սկզբանե դատապարտված էին ձախողման, քանի որ խորհրդային իշխանության հաստատումից ի վեր Անդրկովկասում ստեղծվել էր ազգային համերաշխություն, իսկ Խորհրդային Ռուսաստանի ռազմական, քաղաքական-տնտեսական և կուլտուրական անշահախնդիր օգնությունը անդրկովկասյան հանրապետություններին է՛լ ավելի էր ամրապնդել հայ,

---

45 «Խորհրդային Հայաստան», 1921, № 256։

վրաց և ադրբեջանական աշխատավորության եղբայրական կապերը ռուս մեծ ժողովրդի հետ։

Եվ բնական է, որ մեր պարբերական մամուլն ուշադրության կենտրոնում էր պահում պրոլետարական ինտերնացիոնալիզմի այնպիսի մի նշանակալից արտահայտություն, ինչպիսին խորհրդային Ռուսաստանի օգնությունն էր Հայաստանին՝ տնտեսական ու քաղաքական դժվարությունները հաղթահարելու, սովի ու համաճարակների առաջն առնելու, խորհրդային իշխանության հիմքերն ամրապնդելու և սոցիալիզմի կառուցման համար նախադրյալներ ստեղծելու գործում։ Առհասարակ պետք է նկատել, որ նոր հասարակարգի կառուցման մեջ ռուս մեծ ժողովրդի առաջատար դերի՝ որպես խորհրդային բոլոր ժողովուրդների ու ազգությունների սոցիալիստական և ազգային վերածննդի կարևոր գործոնի՝ գնահատումն ու արժեքավորումը եղել և այսօր էլ մնում է խորհրդային հայ մամուլի հիմնական խնդիրներից մեկը։

Այդպիսի նպատակադրումն առանձնակի կարևորություն ուներ հատկապես Հայաստանի խորհրդայնացման առաջին տարիներին, երբ «Ռուսաստանի գաղութակալական ձգտումների» վերաբերյալ նկրտումը թե՛ ներքին և թե՛ արտաքին թշնամական պրոպագանդայի հիմնական «կովաններից» մեկն էր՝ հակախորհրդային օրհասական ճիգերի մեջ։ Այդպիսի պնդումն առավել ևս անհեթեթ է հնչում, ընդգծում էր մամուլը, եթե հիշենք, թե ինչպես Ռուսաստանը, ինքը ևս գտնվելով քաղաքական ու տնտեսական չափազանց ծանր կացության մեջ, եղբայրական օգնության ձեռք էր մեկնում նորակազմ խորհրդային հանրապետություններին, այդ թվում և Հայաստանի աշխատավորությանը։ Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 12-ին Վ. Ի. Լենինի կարգադրությամբ խորհրդային Ռուսաստանի ֆինժողկոմատը Հայաստան ուղարկելու համար բաց էր թողել ոսկով հաշված՝ 600 հազար ռուբլի, պարենժողկոմը հատկացրել էր զգալի քանակությամբ հացահատիկ, մանուֆակտուրա և այլն։ Այս օգնությունը պարբերաբար շարունակվում էր նաև հետագայում։ Մի տարվա ընթացքում Ռուսաստանի միայն զրամական օժանդակությունը կազմեց երեք ու կես միլիոն ռուբլի ոսկով, իսկ Հայաստան ուղարկված կենսամթերքների և այլ ապրանքների ծավալը՝ մոտ 3 միլիոն փութ։ Այս փաստերը մամուլը գնահատում է իբրև անշահախնդիր եղբայրական օգնության փայլուն վկայություններ։ «Կողոպտված, հյուծված ու տանջված խորհրդային Ռուսաստանը,— ընդհանրացնում էր «Կոմունիստ»-ը,— տեսնելով հայ գյուղացինե-

բի ծանր կացությունը, որոշում է, եղբայրաբար բաժանել նրա հետ իր առանց այն էլ նվազ պաշարը։ Արդյոք դա ամենաբարձր օրինակը չէ՞ աշխատավորական համերաշխության»[46]։

Մամուլը Ռուսաստանի օգնությունը գնահատում և արժեքավորում էր մի շարք տեսանկյուններից։ Այդ օգնությունը ոչ միայն հնարավորություն էր տալիս զգալի չափով բարելավելու Հայաստանի աշխատավորության առօրյա կարիքները, ոչ միայն նախադրյալներ էր ստեղծում ժողովրդական տնտեսության վերականգնման համար, այլև անգնահատելի դեր էր խաղում բարոյական-քաղաքական առումով, այն ամրապնդում էր հավատը խորհրդային իշխանության նկատմամբ տեղերում, եռանդ ու հաստատակամություն էր ներշնչում մասսաներին՝ սոցիալիստական շինարարության գործում, նպաստում էր նրանց ինտերնացիոնալ դաստիարակությանը և, վերջապես, կարևոր կռվան էր բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսության դեմ մղվող պայքարում։ Գնահատելով այդ եղբայրական օգնությունը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանն իր առաջնորդողներից մեկում եղրակացնում էր. «Հայաստանի աշխատավորությունն արդեն զգում է, որ իր թիկունքում կանգնած է վիթխարի Ռուսաստանի անհաղթելի ուժը և այդ հանգամանքը նոր եռանդ, նոր ավյուն պիտի ներշնչի մեր բանվորա-գյուղացիությանը՝ տասնապատկելու իր ջանքերը շինարարական աշխատանքի ասպարեզում»[47]։ *Ռուսաստանի օգնությունը արժեքավորվում էր իբրև խորհրդային իշխանության ամրապնդման ու հարատևման երաշխիք, համարվում էր խորհրդային հայրենասիրության և սոցիալիստական գաղափարաբանության հիմնաքարերից մեկը։ Այս միտքն իր ուրույն ձևակերպումն ստացավ Էջմիածնի «Կարմիր գյուղացի» թերթում տպագրված «Ռուսաստանի բանվորների օգնությունը Հայաստանի ժողովրդին» խորագրով հոդվածում։ Նշելով, որ Ռուսաստանը արդեն ուղարկել է մեկ ու կես միլիոն ռուբլի ոսկով, մեծ քանակությամբ ալյուր, կտորեղեն, երկրագործական իրեր ու գործիքներ, թերթը երախտիքի լավագույն արտահայտությունը համարում էր Հայաստանի աշխատավորների անունից Ռուսաստանի պրոլետարիատին ուղղված հետևյալ խոսքերը. «...Դու մեզ օգնում ես, որ մենք ոտքի կանգնենք, մենք էլ բարձր կպահենք այն կարմիր դրոշակը, որ առաջին անգամ բարձրացրիր դու։ Մենք ամուր կպահենք*

---

46 «Կոմունիստ», 1921, № 75։

47 Նույն տեղում, № 86։

մեր խորհրդային իշխանությունը Հայաստանում, թույլ չենք տա, որ սրանից հետո ժողովրդի թշնամիները համարձակվեն իրենց անմաքուր ձեռքերով կեղտոտելու մեր սրբազան ու վեհ գաղափարները»[48]։

* * *

Խորհրդային հայ մամուլը աշխատավորությանը դաստիարակում էր փոխադարձ ինտերնացիոնալ պարտքի խոր գիտակցությամբ։ Ըստ որում մամուլի այս աշխատանքն ուներ ոչ միայն գաղափարական-դաստիարակչական բնույթ, այլև որոշակի կազմակերպչական ուղղվածություն։ Այս հանգամանքը շոշափելի դարձավ մասնավորապես 1921թ. աշնանը, երբ անբերրիության հետևանքով Ռուսաստանի մի շարք շրջաններում, հատկապես Պովոլժյում մոլեգնում էր սովը՝ սպառնալով տասնյակ միլիոնավոր մարդկանց։ Ինչպես խորհրդային մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում սկսվեց Ռուսաստանի սովյալներին օգնելու համաժողովրդական կամպանիա, որի կազմակերպման ու լուսաբանման գործում կարևոր դեր խաղաց պարբերական մամուլը։ Դեռևս օգոստոսի վերջերին «Խորհրդային Հայաստան»-ը կոչ էր անում բոլոր միջոցներով անհապաղ արձագանքել «ռուս եղբայրների անծայր կարիքներին». «Պիտի կազմակերպել գավառներում Ռուսաստանի սովյալներին օգնող կոմիտեներ, որոնք ամեն միջոցով դանձեն սովյալներին նվիրաբերվող օգնությունները, պիտի լայն չափով ագիտացիա մղել Հայաստանի աշխատավորության շրջաններում և նրանց գիտակցորեն ոգևորել իրենց այս սրբազան պարտականությամբ»[49]։ Սեպտեմբերի 1-ին հրատարակվեց ՀՍԽՀ Ժողկոմխորհի որոշումը «Խորհրդային Ռուսաստանի սովյալների օգնության Խորհրդային Հայաստանի կենտրոնական հանձնաժողով» ստեղծելու մասին։ Հանձնաժողովներ կազմակերպվեցին նաև տեղերում։ «Սովնարկոմի դեկրետը,— ընդգծում էր «Խորհրդային Հայաստանը»,— արդյունք է բնական անհրաժեշտության, դեկրետը չի հրամայում Ռուսաստանի սովյալների օգտին որևէ մեկին զոհողություն անել։ Չի հրամայում, որովհետև կարիք չկա։ Հայաստանի բանվորները և գյուղացիներն իրենք իրենց բարի աշխատավորական կամքի բեր-

---

48 «Կարմիր գյուղացի», 1921, № 6։

49 «Խորհրդային Հայաստան», 1921, № 156։

մամբ, տարերային կերպով արդեն վաղուց է նվիրաբերություններ են կատարում Ռուսաստանին. Սովետարկոմի դեկրետը գալիս է միայն կազմակերպչական հունի մեջ դնելու հայ ժողովրդի սկսած մեծ գործը»[50]։

«Խորհրդային Հայաստան»-ում, գավառական թերթերում սկսեցին երևալ նոր խորագրեր («Օգնություն սովյալներին», «Հայաստանը սովյալներին», «Սովը Ռուսաստանում և Խորհրդային Հայաստանի աշխատավորները» և այլն), որոնց ներքո պարբերաբար գետեղվում էին բանվորներից, գյուղացիներից, զինվորներից ու մտավորականներից ստացված նվիրատվությունների վերաբերյալ հաղորդումներ, հանրագումարի էին բերվում տարբեր գավառներում սովյալներին օգնող հանձնաժողովների կատարած աշխատանքները, հրապարակվում էին կոչեր, փոքրիկ, բայց ազդեցիկ ոճով գրված հոդվածներ, նամակներ և այլ նյութեր։ Ի դեպ՝ «Խորհրդային Հայաստան» թերթի օգոստոսի 31-ի ամբողջ հատավածը «ծախվեց կամավոր նվիրաբերության վճարով»[51]։

Ուշագրավ է, որ կարևոր նշանակություն տալով օգնության կազմակերպմանը, մամուլը միաժամանակ շեշտում էր այդ երևույթի բարոյական-քաղաքական արժեքը։ Ճիշտ է, նշում էին թերթերը, մեր հանրապետության աշխատավորությունը տնտեսական իր ծանր կացության, ծայրահեղ աղքատության պատճառով շատ բան չի կարողանա անել և նրա հասցրած օգնությունը մի կաթիլ կլինի միայն ռուս եղբայրների ծով կարիքի համեմատությամբ, բայց կարևորն այն է, որ մի՛ անգամ ևս կհավաստվի Հայաստանի բանվորա-գյուղացիական զանգվածների հավատարմությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի մեծ գաղափարին. «Շատ բան չի կարող տալ հայ աշխատավորությունը, սակայն նրա տված չնչին պարենը գալիս է ասելու, որ Հայաստանի աշխատավորությունը անբակտելի բարոյական, եղբայրական կապերով կապված է Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ»[52]։

* * *

1922 թ. մարտի 12-ին Թիֆլիսում բացվեց Անդրկովկասի երեք հանրապետությունների կենտգործկոմների լիազոր կոնֆերանսը,

---

50 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, № 163։

51 Տե՛ս նույն տեղը, № 162։

52 Նույն տեղում, № 163։

ուր կնքվեց Անդրֆեդերացիայի կազմակերպման պայմանագիրը։ Կոնֆերանսի բացմանը նվիրված առաջնորդողում «Խորհրդային Հայաստան»-ը ընդգծում էր այդ ակտի պատմական նշանակությունը անդրկովկասյան հանրապետությունների համար՝ հասարակական-քաղաքական և տնտեսական բոլոր ասպարեզներում։ «Միջազգային քաղաքական անհավասարակշռության, անկայունության այս սուր մոմենտին,— գրում էր թերթը,— մեր հանրապետությունները շնորհիվ ֆեդերացիայի նասպատակում են իրենց ուժերը. ո՞վ կարող է հերքել կամ չընդունել, որ քաղաքական ինքնապաշտպանության տեսակետից ֆեդերացիան հզորագույն ազդակ է։ Հզորագույն է ֆեդերացիայի նշանակությունը նաև մեր ներքին տնտեսական-շինարարական աշխատանքի տեսակետից։ Դա պարզ է բոլոր նրանց համար, ովքեր Անդրկովկասի տնտեսական բարեկարգման հարցերը չեն կապում իրենց խանութի մանր շահերի հետ։ Ֆեդերացիան դառնում է գործավոր փաստ,— շարունակում էր թերթը,— Անդրկովկասը մտնում է քաղաքական-տնտեսական կյանքի նոր դարաշրջան... Էլ իրենց ուժերի գիտակցությամբ՝ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի բանվորա-գյուղացիական մասսաներն այսօր վճռականորեն բացում են իրենց պատմության նոր էջը»[53]։

Դրանից հետո տարբեր առիթներով, հատկապես Անդրֆեդերացիայի կազմակերպման տարելիցներին, Անդրկովկասի պարբերականները, այդ թվում և Հայաստանի թերթերն ու հանդեսները ընդհանրացնում էին տնտեսական, քաղաքական և կուլտուրական համագործակցության շնորհիվ ձեռք բերված նվաճումները, ընդգծելով, որ այդ եղբայրական միությունն է հենց սոցիալիզմի կառուցման կարևորագույն գործոններից մեկը Անդրկովկասում։ Եվ դա ոչ թե հնարովի ու բռնաբռասիկ մի եղրակացություն էր, ինչպես փորձում էին ներկայացնել Անդրկովկասի նախկին տերերը արտասահմանում հրատարակվող իրենց մամուլի էջերում, այլ երկրամասի ժողովուրդների սոցիալիստական վերածննդի շահերով թելադրված կենսական անհրաժեշտություն։ «Անդրկովկասյան առանձին հանրապետությունները,— ֆեդերացիայի երրորդ տարելիցի առթիվ գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— տնտեսապես և քաղաքականապես այնպես են միացած իրար հետ, որ ոչ միայն նրանց կապերի քայքայման, այլ նույնիսկ վերջիններիս թույլ կազմա-

---

53 Նույն տեղում, 1922, № 56։

կերպման դեպքում անգամ խոսք լինել չի կարող սոցիալիզմին անցնելու մասին։ Նույնիսկ ավելին. չի կարելի երևակայել այդ երկրների կուլտուրական և տնտեսական վերելքը՝ առանց փոխադարձ օգնության, փորձերի փոխադարձ հաշվառման, կուլտուրական և տնտեսական բարիքների փոխանակման և այդ երկրների վերածնման ճանապարհին ուժերի ներդաշնակ համագործակցության»[54]։

1922 թվականի վերջին, երբ արդեն հասունացել էր խորհրդային բոլոր հանրապետությունները միավորելու և մեկ միասնական միություն ստեղծելու խնդիրը, Հայաստանի պարբերական մամուլը ևս սկսեց լայնորեն պրոպագանդել ԽՍՀՄ կազմակերպման գաղափարը։ Այդ աշխատանքը նոր թափ ստացավ մասնավորապես Հայաստանի խորհուրդների երկրորդ համագումարից հետո, ուր միաձայն հավանություն տրվեց Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրֆեդերացիայի միավորմամբ ԽՍՀՄ կազմակերպելու նախաձեռնությանը։ Երկրորդ համագումարը, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, «արժանավոր լրջությամբ և անկեղծ հեղափոխական խանդավառությամբ վերաբերվեց քաղաքական այն մեծ խնդրին, որ կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն»[55]։ Այդպիսի միություն ստեղծելու անհրաժեշտությունը, բացատրում էր մամուլը, թելադրվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հանգամանքներով։ «Հարյուրավոր, հազարավոր վերստերով մեկը մյուսից բաժանված բանվորներն ու գյուղացիները,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— այսօր միահոգի կերպով կռում-կոփում են իրենց տնտեսական-քաղաքական միության ամուր պատվանդանը», Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանության, սոցիալիստական շինարարության հաջող կազմակերպման շահերը պահանջում են իրագործել «բոլոր հանրապետությունների բոլոր տնտեսական-արտադրական ուժերի միացումն ու պլանաչափ գործադրությունը»։ Առավել ևս պարզ է, շարունակում էր թերթը, հանրապետությունների միավորման քաղաքական անհրաժեշտությունը. կապիտալիստական աշխարհը միասնական ճակատով է հանդես գալիս խորհուրդների երկրի դեմ. «Մենք գտնվում ենք կապիտալիստական շրջապատման մեջ և եթե ցանկություն ու կամք ունենք դիմանալու միջազգային հեղափոխության այս ծանր մոմենտին, ապա պետք է

54 «Խորհրդային Հայաստան», 1925, № 58։

55 Նույն տեղում, 1922, № 270։

երկաթե միություն ստեղծենք մեր անտեսությունն ամրապնդելու, զարգացնելու համար... Նրանց այդ սև բլոկի բոլոր ինտրիգները խեղդելու համար է, որ պիտի ստեղծենք բանվորա-գյուղացիության սերտ միությունը՝ սկսած Արաքսից մինչև Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը և Դնեպրից մինչև Խաղաղականի ափերը»[56]:

ՍՍՀՄ ստեղծման յուրաքանչյուր տարելիցին, ինչպես և բազմաթիվ այլ առիթներով, թերթերն ու հանդեսները ընդգծում էին այդ պատմական ակտի բացառիկ կարևորությունը մեր հայրենիքի ժողովուրդների ազգային ու սոցիալական վերածննդի իրականացման համար: Ըստ որում, մամուլը միշտ էլ հավատում էր հայ ժողովրդի ինտերնացիոնալ պարտքի խոր գիտակցումը և անձնվեր պատրաստակամությունը՝ «եղբայրական ժողովուրդների հետ միասին նոր եռանդով ու ոգևորությամբ շարունակելու այն մեծ գործը, որի հիմքը դրվել է պատմական Հոկտեմբերին»[57]:

5

Խորհրդային հայ պարբերական մամուլը ոչ միայն պրոպագանդում էր կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը, այլև ամեն կերպ նպաստում նրա գործնական կիրառմանը: «Չպետք է մոռանալ ոչ մի վայրկյան,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը ազգային քաղաքականությանը նվիրված առաջնորդողներից մեկում,— որ մեր երկրում կողք-կողքի ապրում են մի շարք ազգեր: Խորհուրդները վերացրին ազգային կռիվները, խորհուրդները ազգերին չեն բաժանում, այլ միացնում են...»[58]:

Ազգային քաղաքականության կիրառման հարցերին մամուլն ավելի հանգամանորեն սկսեց անդրադառնալ ՌԿ(բ)Կ XII համագումարի ընդունած «Ազգային հարցի մասին» պատմական որոշումից[59] հետո: Ինչպես հայտնի է, ամփոփելով կուսակցության ազգային քաղաքականության անցած ուղին, ձեռք բերված պատմական նվաճումները, համագումարը միաժամանակ ընդգծեց. «Հոկտեմբերյան հեղափոխության առաջադրած ազգային ծրագիրը ճիշտ

---

56 Նույն տեղում, № 281։

57 Նույն տեղում, 1925, № 53։

58 Նույն տեղում, 1922, № 85։

59 Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», I մաս, էջ 906—917։

կենսագործելու համար անհրաժեշտ է դեռ հաղթահարել այն խոչընդոտները, որ մեզ ժառանգություն է թողել ազգային ճնշման անցած ժամանակաշրջանը և որոնք չեն կարող հաղթահարվել կարճ ժամկետում, մեկ հարվածով»: Այդ տխրահռչակ «ժառանգության» բաղկացուցիչ մասերն էին՝

ա) Մեծապետական շովինիզմի մնացուկները, որ արտացոլումն էին հանդիսանում վելիկոռուսների երբեմնի արտոնյալ դրության և գործնականորեն արտահայտվում էին «ռուս խորհրդային շինովնիկների մեծամիտ-արհամարհական և անհոգի-բյուրոկրատական վերաբերմունքով դեպի ազգային հանրապետությունների կարիքներն ու պահանջները»: «Բազմազգ խորհրդային պետությունը,— ընդգծեց համագումարը,— կարող է իսկապես հաստատուն, իսկ ժողովուրդների համագործակցությունը նրա մեջ՝ իսկապես եղբայրական դառնալ միայն այն դեպքում, եթե այդ մնացուկները մեր պետական հիմնարկների պրակտիկայում վերջնականապես ու անդառնալիորեն ոչնչացվեն»: Ուստի, եզրակացնում էր համագումարը, վելիկոռուսական շովինիզմի մնացուկների դեմ վճռականորեն պայքարելը մեր կուսակցության առաջին հերթական խնդիրն է:

բ) Խորհրդային Միության մեջ ապրող ազգերի փաստական, այսինքն տնտեսական և կուլտուրական անհավասարությունը, որն ավելի ակնառու էր դառնում պատմականորեն այնպիսի անդնահատելի մի նվաճման առկայությամբ, ինչպիսին էր մեծ Հոկտեմբերի շնորհիվ ձեռք բերված ազգային իրավական հավասարությունը: Այդ անհավասարության պատճառները թաքնված էին ոչ միայն «հետամնաց ժողովուրդների» պատմական զարգացման յուրահատկությունների, այլև ցարիզմի և ռուսական բուրժուազիայի այն բաղաքականության մեջ, որի նպատակն էր երկրի ծայրամասերը վերածել արդյունաբերական տեսակետից զարգացած կենտրոնական շրջանների կողմից շահագործվող բացառապես հումքային շրջանների: Ռուսական պրոլետարիատը պատմական առաքելություն ուներ նաև այդ անհավասարությունը վերացնելու խնդրում, որը հնարավոր էր իրագործել նրա տեսական օգնությամբ հետ մնացած ազգերին՝ տնտեսական-կուլտուրական բարգավաճման գործում: Անհրաժեշտ էր ազգային հանրապետություններում արմատավորել և զարգացնել արդյունաբերություն, զարկ տալ գյուղատնտեսությանը, նպաստել կուլտուրական շինարարության ծավալմանը: Ուստի, եզրակացնում էր համագումարը, ազգությունների փաստական ան-

հավասարությունը լիկվիդացնելու համար պայքարելը մեր կուսակցության երկրորդ հերթական խնդիրն է։

գ) Նացիոնալիզմի մնացուկները այն ժողովուրդների մեջ, որոնք անցել են ազգային ճնշման ծանր լուծը և դեռ չեն ազատագրվել հին ազգային վիրավորանքների զգացումից։ Այդ մնացուկները դրսևորվում են երկու կերպ. մի դեպքում՝ առաջ բերելով նախկինում ճնշված ժողովուրդների ազգային որոշ խորթացում և անվստահ վերաբերմունք ռուսներից եկող այս կամ այն միջոցառման նկատմամբ, մյուս դեպքում՝ պաշտպանողականից փոխարկվելով հարձակողական նացիոնալիզմի այն հանրապետություններում, որոնց մեջ ապրում են մի քանի ազգություններ, այդպիսով դառնալով թույլ ազգությունների դեմ ուղղված այսպես կոչված տեղական թունդ շովինիզմ, որ «մեծագույն չարիք է»։ Ուստի, եղրակացնում էր համագումարը, նացիոնալիստական մնացուկների դեմ, և, ամենից առաջ, այդ մնացուկների շովինիստական ձևերի դեմ պայքարելը մեր կուսակցության երրորդ հերթական խնդիրն է։

Համագումարի առաջադրած այս սկզբունքների ոգով էլ մամուլը անդրադառնում էր ազգային քաղաքականության գործնականին։ Ըստ որում՝ ազգային լեզուներով հրատարակվող պարբերականների համար այս հարցում ևս ուղենշող արժեք ունեին համագումարի արդյունքներին նվիրված «Պրավդա»-ի ելույթները։ Մի շարք առաջնորդողներում ու հոդվածներում («Մեր համագումարը». «Ազգային խնդիրը և Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը» և այլն) կուսակցության կենտրոնական օրգանը կտրուկ կերպով հանդես էր գալիս ազգային հարցի լուծմանը խոչընդոտող այն երևույթների դեմ, որոնց մասին խոսվել էր համագումարի բարձր ամբիոնից։ «Լենինը,— գրում էր «Պրավդա»-ն,— միշտ անողոքաբար հարվածել է ամեն տեսակի «ռուսնակությունը», կարճատես և բութ այն քաղաքականությունը, որն իր քթից դենը ոչինչ չի տեսնում։ Բառերի մեջ նա ժլատություն չուներ և որակում էր այդ քաղաքականությունը որպես սև-հարյուրակային ստորություն և ստոր սև-հարյուրականություն։ Եվ այս ավանդը, լենինյան այս տրադիցիան մենք պարտավոր ենք առանձնապես պահել-պահպանել այսօր, երբ նրա ստեղծողն ինքը անձամբ չի կարող իր կատաղի եռանդով և փայլուն մտքով հետամղիչ մի հարված տալ բարթուացած քաղքենիությանն ու «անգոյացած» ազգային խնդրի առթիվ լսվող քրթմնջոցներին»։ Խոսելով լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ ձեռք բերված պատմական նվաճումների մասին, «Պրավ-

դա»-ն եզրակացնում էր. «Մեզ, կոմունիստներիս, մեր բանվոր դասակարգին հաջողվեց ի մի զոդել խորհրդային հանրապետություններին, ի միջի այլոց, և այն պատճառով, որ մենք էինք Ռուսաստանում այն միակ կուսակցությունը, որը նշգրիտ կերպով լուծում էր ազգային խնդիրը»[60]:

Ընդգծելով համապատասխան քննարկած ազգային հարցի պատմական արժեքը, «Պրավդա»-ն ավելորդ չէր համարում հիշեցնել, որ ազգերի ինքնորոշման լոզունգը խորհրդային պետության սահմաններում բոլորովին այլ նշանակություն ունի, քան նրա կիրառումը բուրժուական պետությունների նկատմամբ: Սխալվում են նրանք, շարունակում էր թերթը, ովքեր չեն ուզում տեսնել բուրժուական և խորհրդային պետություններում գոյություն ունեցող ազգային խնդիրների միջև եղած սկզբունքային հակադրությունը՝ զբաղվելով «ջայլամային այն հայտարարությամբ, թե իբր ազգային հարցը տակա է միայն բուրժուական տիպի պետություններում»: Ո՛չ, գրում էր «Պրավդա»-ն,— «ազգային խնդիր գոյություն ունի և մեզանում: Տարբերությունը մեր և «նրանց» միջև ոչ թե նրա մեջ է, որ նրանք ունեն ազգային խնդիր, իսկ մենք իբր թե չունենք: Տարբերությունը նրանումն է, որ «նրանք» լուծել այն չեն կարող, իսկ մենք կարող ենք: Եվ մենք այդ խնդիրը կլուծենք»[61]:

Մեր հանրապետությունում ազգային բաղաքականության պրակտիկ կենսագործմանը հաճախակի անդրադառնում էր «Խորհրդային Հայաստան»-ը՝ առանձնահատուկ նշանակություն տալով մեզ մոտ ապրող ազգային փոքրամասնությունների (ադրբեջանցիների, քրդերի, հույների, ասորիների) մեջ տարվող աշխատանքին: Նրանց բաղաքական դաստիարակության, կուլտուր-կենցաղային պահանջմունքների բավարարման խնդիրները նույնքան կարևոր էին համարվում, որքան և նրանց ներգրավումը սոցիալիստական շինարարության ամենատարբեր բնագավառներում: Ավելին՝ նրանց մեջ տարվող աշխատանքներն իրենց կարևորությամբ թերթը հավասարեցնում էր հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող տնտեսական կամպանիաներին, հասկանալի է, ամենևին էլ կամպանիան բնույթ չտալով դրանց[62]:

---

60 Տե՛ս «Правда», 1923, № 89, «Ազգային հարցը և ՌԿ(բ)Կ-ն» առաջնորդող. արտատպված է «Խորհրդային Հայաստան»-ի 1923 թ. № 92-ում:

61 «Правда», 1923, № 92. արտատպված է «Խորհրդային Հայաստան»-ի 1923 թ. № 94-ում:

62 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, № 167:

Ազգային փոքրամասնությունների մեջ հաջող աշխատանք կատարելու համար, նշում էր մամուլը, անհրաժեշտ է նախ և առաջ նկատի առնել նրանց հոգեբանության, կենցաղի, կրոնական նախապաշարումների յուրահատկությունը. ամեն մի միջոցառում, յուրաքանչյուր քայլ այս ասպարեզում անպայմանորեն պիտի բխի ազգային առանձնահատկությունների հաշվառումից և հարմարեցված լինի տվյալ փոքրամասնության չքավոր խավերի շահերին: Հարկավոր է պարզաբանել նրանց խորհրդային իշխանության դեկրետների ու կարևորագույն որոշումների իմաստը, վճռական միջոցներ ձեռնարկել դրագիտության տարածման, առաջավոր տարրերին հասարակական գործունեության ոլորտը ներգրավելու ուղղությամբ: Կենսական նշանակություն էր տալիս մամուլը մասնավորապես ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող հակակրոնական աշխատանքներին, որոնք կապված էին առանձնահատուկ դժվարությունների ու խոչընդոտների հետ: «...Մեր աշխատանքն այս ուղղությամբ կրելով զուտ պրոպագանդայի բնույթ, երբեք ոչ պայքարի,— նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— պիտի նախ և առաջ տանել համակրողների խմբակներում, երիտասարդության և առհասարակ չքավոր գյուղացիության շարքերում»: Քաղաքական-դաստիարակչական աշխատանքը, ինչպես նաև կազմակերպչական միջոցառումների անցկացումը չպետք է սահմանափակել պատահական գործուղումներով, ձեռնահաս ընկերներին միայն առիթից-առիթ տեղերն ուղարկելով: Անհրաժեշտ է պլանավորված, սիստեմատիկ աշխատանք տանել՝ «մտնելով ազգային փոքրամասնության կյանքի բոլոր կողմերը, ծանոթանալով նրանց հոգեկան կյանքի բոլոր պահանջներին և առաջն առնելով բոլոր հակախորհրդային և հակաաշխատավորական տարրերի՝ հաճախ կրոնական քողի տակ թաքնված ոտնձգությունների»[63]:

Մեր հանրապետության մամուլում պարբերաբար հրապարակվում էին Ազգային փոքրամասնությունների խորհրդի հաշվետվությունները, կուսակցության կենտկոմի և գավկոմների՝ ազգային փոքրամասնությունների մեջ աշխատող հրահանգիչների հաղորդումները: Այդ նյութերից տեղեկանում ենք, թե ինչպիսի լայն ծավալ էին ստացել մասնավորապես կուլտուր-լուսավորական աշխատանքները. բացվում էին ազգային լեզուներով դպրոցներ, լիկբեզարաններ, լույս էին տեսնում տպագիր և պատի թերթեր, գործում էին

63 Նույն տեղում:

թատերական խմբեր և այլն։ 1923 թ. նոյեմբերի տվյալներով՝ Հայաստանում կային ազգբնիջանական և ռուսական մեկական մանկապարտեզ, մեկ մանկատուն եզիդի երեխաների համար, 40 ազգբնիջանական, 24 ռուսական, 5 քրդական, 4 հունական և 5 ասորական առաջին աստիճանի դպրոցներ, մեկական երկրորդ աստիճանի ազգբնիջանական և ռուսական դպրոց և 20 լիկեյան ազգբնիջանցիների համար։ Հաջորդ տարի առաջին աստիճանի ազգբնիջանական դպրոցների թիվը հասավ 105-ի, բացվեց նաև բանֆակ[64]։

Հարևան խորհրդային հանրապետություններին նվիրված բաժինների հետ միասին պարբերականներն ունեին նաև «Աշխատանքը ազգային փոքրամասնությունների մեջ» կամ համանման խորագրով բաժիններ, որոնք հարուստ ինֆորմացիա են պարունակում այդ կարևոր ասպարեզում ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ։ Առանձնակի արժեք ունեն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ելույթները, որոնց մեջ ըստ արժանվույն գնահատված է Հայաստանում կատարված իրոք նշանակալից աշխատանքը ազգբնիջանցիների, քրդերի և այլոց շրջանում՝ թե՛ կուլտուրական և թե՛ տնտեսական վիճակն ապահովելու ուղղությամբ։ Այսպես՝ «Քուրդ-եզիդիական կյանք» խորագրի ներքո տպագրված հաղորդումներից մեկում վկայակոչված են ֆրանսիական բարձրագույն կրթություն ստացած մի քուրդ գործչի հետևյալ խոսքերը. «Խորհրդային իրավակարգը գուցե ոչ մի ժողովրդի այնքան պատմական մեծ ու անփոխարինելի բարիք չարավ, որքան քուրդ և եզիդի ժողովրդին. նա բաց արավ մեր մանուկների համար լեզուն, նա բուժեց մեր մարի կույր աչքերը, նա վառեց մեր քաղաքակրթության ջահը... Ես լսեցի քուրդ մանկան բերանից իր մայրենի լեզվի թութուվանքները, ինքույզ մատները մայրենի լեզվի դասագրքի վրա սահեցնելիս։ Այլևս քուրդ ազգը չի մեռնի։ Փա՜ռք քաղաքակրթության ջահընկալ խորհրդային իշխանությանը»[65]։ Նույնքան նշանակալից է Հայաստանում ազգբնիջանական բնակչության մեջ կատարված աշխատանքի գնահատությունը, որ ավել է Անդրիերկոմի օրգան «Ենի ֆիքրը» ազգբնիջաններին թերթը՝ Երևանում ազգբնիջանական մանկավարժական տեխնիկում բացելու վերաբերյալ ՀՍԽՀ Լուսժողկոմատի ընդունած որոշման առթիվ. «Թե՛ այս որոշումը և թե՛ սրանից առաջ Հայաստանի թրքաբնակ վայրերում դպրոցներ բաց անելու

---

64 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, № 257։

65 Նույն տեղում, 1923, № 157։

բացահայտ իրողություններն ապացուցում են,— գրում էր «Ենի Ֆիքրը»-ը,— որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը... թե՛ կուլտուր-կրթական և թե՛ տնտեսական ասպարեզում հարկ եղած զոհողությունը չի դլանում... է՛լ ավելի հիացման արժանի են կառավարության գործ դրած այն կորովի ու անկեղծ ջանքերը, որոնցով նա իսպառ վերացնում է անցյալի ազգային հակամարտությունների ու ատելության մնացորդները և երկու ազգերի փոխհարաբերությունը դնում կատարյալ եղբայրական հողի վրա, նրանց բոլորին էլ հավասարապես լծելով երկրի շինարարական աշխատանքներին»[66]:

Ազգային փոքրամասնությունների մեջ կատարվող աշխատանքը հանդամանալից քննության առնվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1925 թ. հունիսյան պլենումում: Պլենումից առաջ և հետո տպագրված մի շարք առաջնորդողներում, հոդվածներում, պլենումի որոշումները մասսայականացնող նյութերում «Խորհրդային Հայաստան», «Բանվոր», «Ավանդարդ», «Կարմիր ռաշպար» թերթերը, «Կոմունիստ» ամսագիրը և մյուս պարբերականները կոմունիստական կուսակցության ընդհանուր ազգային քաղաքականության ֆոնի վրա նշում էին մեր հանրապետությունում այդ ասպարեզում ձեռք բերված հաջողությունները, միաժամանակ բացահայտելով առանձին վրիպումներն ու թերացումները: Ընդգծելով ազգային փոքրամասնությունների հոգեբանական ու կենցաղային առանձնահատկությունների, ազգային ավանդների համակողմանի ուսումնասիրության, նրանց կուլտուր-տնտեսական պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունը, մամուլն առաջիկա հաջողությունների գրավականը տեսնում էր այն բանի մեջ, որ շարունակենք գործել «Լենինի ավանդների համաձայն»[67]:

Խորհրդային հայ պարբերական մամուլում ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքների, նրանց հուզող խնդիրների վերաբերյալ, հայ հրապարակախոսների ու լրագրողների հետ միասին, ելույթներ էին ունենում նաև Բ. Էֆենդիևը, Ա. Շամիլովը, Ա. Քյարիմովը, Ումարովը և եղբայրական ժողովուրդների այլ ներկայացուցիչներ, որոնք ապրում և աշխատում էին մեր հանրապետությունում:

---

66 «Ենի Ֆիքրը» թերթից կատարված մեջբերումը վերցված է «Խորհրդային Հայաստան»-ի 1925 թ. № 124-ից:

67 «Խորհրդային Հայաստան», 1925, № 143:

Ազգային փոքրամասնությունների մեջ խորհրդային իշխանության գաղափարների տարածման, բազմաբնակ կյանքի աշխուժացման, նոր կենցաղին ու հասարակական հարաբերություններին նրանց հաղորդակից դարձնելու, մի խոսքով՝ նրանց կուլտուրական-բազմաբնակ-տնտեսական առաջընթացը ապահովելու գործում խոշոր դեր կատարեցին մեր հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների լեզուներով հրատարակվող պարբերականները:

1921 թ. կեսերից Երևանում սկսեց լույս տեսնել ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Երևանի քաղկոմի օրգան „Рэнчбэр" («Ռանչպար») թերթը, որ հրատարակվում էր անկանոն պարբերականությամբ և երբեմն էլ երկարատև ընդմիջումներով՝ գրական-ժուռնալիստական ուժերի բացակայության պատճառով: 1923 թ. ապրիլին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը քննեց ազգա-պրոպ բաժնի ապրիլյանական սեկցիայի աշխատանքները բարելավելու հարցը: Որոշվեց ենթարաժնին կից ստեղծել հրատարակչական հանձնաժողով, որը կազմակերպելու էր տեղական նշանակություն ունեցող բրոշյուրների թարգմանության և հրատարակության գործը: Անհրաժեշտ համարվեց նաև «վերսկսել թուրքերեն «Ռանչպար» շաբաթաթերթի հրատարակումը և խնդրել Անդրերկոմին՝ Հայաստան, Կենտկոմի տրամադրության տակ գործուղել ապրիլյանցի գրող մի ընկերոջ՝ թուրքերեն հրատարակությունների գործը ղեկավարելու համար»[68]:

«Ռանչպար»-ը, որի խմբագիրն էր Բալա Էֆենդիևը, ընդհանուր-քաղաքական բնույթի ղյուղացիական պարբերական էր. լույս է տեսել մինչև 1924 թ. կեսերը՝ 400 տպաքանակով[69]:

1925 թ. նոյեմբերի 29-ից սկսեց հրատարակվել ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան „Зэнки" («Զանգու») շաբաթաթերթը, որ լույս էր տեսնում բավականին կանոնավոր պարբերականությամբ և առաջին ամիսներին, իր նախորդ՝ «Ռանչպար»-ի նման, մեծ մասամբ ձրի տարածվում էր հանրապետության ազրբեջանական բնակչության շրջանում: 1926 թ. նոյեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիան որոշեց հանրապետության պարբերականների համար պետությունից ստացված դոտացիայից 12.000 ռուբլի հատկացնել «Զանգի»-ին[70]:

---

68 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 23, թ. 39:

69 Տե՛ս նույն տեղը, ց. 3, գ. 341, թ. 8:

70 Տե՛ս նույն տեղը, գ. 400, թ. 3:

Ինչպես նշել է ականավոր հասարակական գործիչ, ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամ, թերթի խմբագիր Բալա Էֆենդիևը՝ կարճ ժամանակամիջոցում «Զանգի»-ն «նվաճեց Հայաստանի ագրբեջանական գանգվածների համակրանքը... Անգնահատելի է այդ թերթի նշանակությունը. այն ունի զուտ գյուղացիական բնույթ, նրա էջերում մեծ մասամբ հանդես են գալիս գյուղթղթակիցները»[71]:

1927 թ. փետրվարից «Զանգի»-ն սկսում է լույս տեսնել շաբաթը երկու անգամ, 1929 թ. սկզբից դառնում է երկօրյա: Աճում է նաև թերթի տպաքանակը, մեծանում է նրա շուրջ համախմբված թղթակիցների թիվը. 1925 թ. հրատարակվում էր 600 օրինակ, 1926—1927-ին՝ 900, 1928-ի վերջին՝ 2.300: Թղթակիցների թիվը համապատասխանաբար եղել է՝ 100, 300 և 700, իսկ ստացված թղթակցությունների քանակը՝ 985, 1827 և 5000: «Զանգի»-ի խմբագրության ղեկավարությամբ ու աջակցությամբ տեղերում լույս տեսավ ագրբեջաներեն 80 պատի թերթ:

«Զանգի»-ն հետևողական ու անդիջում պայքար ծավալեց նոր կյանքի կառուցման համար. գնալով մեծանում էր նրա կշիռն ու հեղինակությունը մեր հանրապետության ագրբեջանական աշխատավորության շրջանում: Այս թերթի էջերն ու արխիվը աչքի անցկացնելիս, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը իր հոդվածներից մեկում, շատ պարզ երևում է, թե ագրբեջանցի աշխատավորները ինչպես են պայքարում գյուղական միջավայրի ագրուկների դեմ, մերկացնում նրանց արարքները. «Գյուղի կուլակն ու շարշին, մոլլան ու նախկին գորբան արդեն սարսափում են «Զանգի»-ի էջերն «ընկնելուց»..., որը ավյալ անձնավորության համար հավասար է կատարյալ վարկաբեկման գյուղում: Եվ նա շատ անգամ հեռավոր գյուղերից մինչև խմբագրություն է գալիս՝ անձամբ բացատրելու և արդարանալու, որ իրեն «թյուրիմացությամբ» են «Զանգի» գցել», որ ինքը ցանկանում է «մաքրվել» գյուղի հասարակության առաջ և այլն»[72]:

1928 թ. դեկտեմբերին մեր հանրապետությունում լայնորեն նշվեց «Զանգի»-ի հրատարակման 3-րդ տարելիցը: Մամուլում հրապարակվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի, ՀՍԽՀ Կենտգործկոմի, կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեի ողջույնները, Լուսաշխի տանը կայացավ հանդիսավոր նիստ, ուր թերթի անցած ուղու

---

71 Նույն տեղում, ց. 7, գ. 334, թ. 5։

72 «Խորհրդային Հայաստան», 1928, № 134։

մասին զեկուցեց պատասխանատու բարտուղար Ալեքսեր Իրիսալիք։ «Խորհրդային Հայաստան»-ը խմբագրության ողջույնի հետ մեկտեղ տպագրեց նաև հատուկ հոդված՝ բարձր գնահատելով «Զանգի»-ի դերը մեր հանրապետության ազգբնջանական աշխատավորության «հեղափոխական դաստիարակության, նրա կազմակերպման, սոցիալիստական շինարարությանը ակտիվ մասնակից դարձնելու գործում»[73]։

6

Անցումը խաղաղ շինարարության պահանջում էր կազմակերպչորեն ու գաղափարապես ամրապնդել կուսաբջիջները, աշխուժացնել նրանց գործունեությունը, որոնել աշխատավոր զանգվածների վրա ազդելու նոր եղանակներ։ Առանձնակի սրությամբ էր ծառացել գավառային ու գավառակային կազմակերպությունների և կենտրոնի միջև կապ ստեղծելու, կուսակցական ինֆորմացիան կանոնավորելու խնդիրը, որ արծարծվում էր ամենուրեք՝ թե՛ բջիջների ժողովներում ու գավառային կոնֆերանսներում, թե՛ Կենտկոմի հրահանգներում ու շրջաբերականներում և թե՛ պարբերական մամուլում։

Կուսակցության գաղափարական-դաստիարակչական աշխատանքը խորացնելու անհրաժեշտությունը պարբերական մամուլի համար օրակարգի հարց դարձրեց ագիտացիայի և պրոպագանդայի նոր, փոփոխված իրագրությանը համապատասխան ձևեր ու մեթոդներ մշակելու պահանջը։

Կոմունիստական ագիտացիան ու պրոպագանդան համարելով աշխատավորության կազմակերպման ու դաստիարակության, խորհրդային իշխանության շուրջը նրանց համախմբելու կարևոր գործոններից մեկը, դեռևս «Կոմունիստ»-ը առաջին իսկ համարներից սկսեցին ուշադրություն դարձրեց կուսակցության գաղափարական աշխատանքի այդ բնագավառին։ Բավական է հիշատակել, որ Հայաստանի կոմկուսի կենտրոնական օրգանը 1920 թ. դեկտեմբերից 1921 թ. փետրվարն ընկած ժամանակամիջոցում ագիտացիոն-պրոպագանդիստական գործի կազմակերպման ու բարելավման խնդիրներին նվիրել է ավելի քան հարյուր նյութ, այդ թվում՝ բաղմաթիվ առաջնորդողներ, տեսական-բացատրական ու դիսկուսիոն հոդվածներ, դիտողություններ։

---

73 «Խորհրդային Հայաստան», 1928, № 298։

Այդ ամենի մեջ, ինչպես և հետագայում տպագրված նյութերում, կարմիր թելի պես անցնում է կոմունիստական ագիտացիայի գործնականության պահանջը։ Քաղաքական ագիտացիան ոչ մի դեպքում չպետք է հանգեցնել անվերջ միտինգային ճառերի, այն իր արտահայտությունը պիտի գտնի կոմունիստական շինարարության հերթական խնդիրները պարզաբանող զեկուցումների, հոդվածների ու գրույցների մեջ։ «Կոմունիստ»-ը խստիվ դատապարտում էր վերացական-անարյուն ճառաբանությունները, դրանք համարելով «միտինգոմանիայի» արդյունք, մի երևույթ, որի ընթացքում խոսքերի տակ «հաճախ թաղվում է կենդանի հեղափոխական գործը»։ «Խորհրդային իշխանությունը,— գրում էր թերթը,— ապրում է «ոչ միայն բանիվն կոմունիստի», այլև հացիվ. իսկ կոմունիստական կուսակցության հացը, որ սպասում է նրանից աշխատավորությունը, դա կարգավորումն է ու կանոնավորումը կյանքի բոլոր ճյուղերում՝ հօգուտ բանվորների և գյուղացիների»[74]։

Իհարկե, թյուրիմացություն կլիներ մտածել, թե «միտինգոմանիայի» վերոհիշյալ քննադատությունը կամ ագիտացիայի գործնականության պահանջը պարբերականներից դուրս էր մղում ընդհանուր կոմունիստական հայացքների տարածման անհրաժեշտությունը։ Ընդհակառակը, մամուլն անբակտելի միասնության մեջ էր դիտում կոմունիստական ընդհանուր դաղափարների, կոմունիստական կուսակցության, խորհրդային իշխանության քաղաքական-տնտեսական գործելակերպի պրոպագանդման և ագիտացիոն-մասսայական աշխատանքի գործնականության խնդիրները. վերջին հաշվով՝ մեր դաղափարական-պրոպագանդիստական, տնտեսական ամբողջ գործունեությունն էլ հետամուտ էր սոցիալիստական հասարակարգի կառուցման գործնական նպատակների ճիշտ այնպես, ինչպես որ կոնկրետ, ամենօրյա ագիտացիան սոցիալիզմի կառուցման ծրագրի մարմնավորման համար մղվող պայքարի օղակներից մեկն էր։ Երկու դեպքում էլ կենսական նշանակություն ուներ դաղափարական աշխատանքում ընդհուպ մասսաներին մերձենալու խնդիրը։ «Հայաստանի աշխատավոր բնակչության հոծ մեծամասնության կատարյալ անդրագիտության և բուրժուազիայի ու կուլակների կողմից ցույց տրված հակագործողությունների պայմաններում,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— անհրա-

74 «Կոմունիստ», 1920, № 4։

ժեշտ է բոլոր ուժերի լարումն, օգտագործումն բոլոր հնարավորությունների՝ լայն, անդադրում ագիտացիայի ու պրոպագանդայի համար։ Կոմունիզմի գաղափարների պրոպագանդայի հարցեր, խորհրդային իշխանության համար ագիտացիա մղելու հարցեր, կոնկրետ ու գործնական ագիտացիայի հարցեր, որոնք նկատի ունեն աշխատավորության իրական կարիքները և որոնք հաշվի կառնեն նրանց իրականացման կենսական ու անհետաձգելի պայմանները— ահա՝ մեր աշխատանքի գլխավոր հարցերը»[75]։

Հանդես գալով գաղափարական աշխատանքը խորացնելու և արդյունավորելու կոչով, պարբերական մամուլը միաժամանակ քննադատում էր ագիտացիայի նշանակության ու դերի գնահատման մեջ տեղ գտած անընդունելի մտայնության կամ թյուրըմբռնումների զանազան դրսևորումները, որոնք կարելի է հանգեցնել երկու հիմնական միտումների։ Դրանցից մեկի ելակետը հետևյալն էր. քանի դեռ չի վերացված աշխատավորության մասնավորապես գյուղացիության ընդհանուր անգրագիտությունը, չի կարելի մտածել նրա քաղաքական հասունության մասին. ուրեմն և առայժմ վաղաժամ է ագիտացիայի ծավալման խնդիրը առաջադրելը, որովհետև այն, իբրև թե, վերոհիշյալ պատճառով, ի սկզբանե դատապարտված կլինի ձախողման։ Այդպես մտածել, դրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, նշանակում է «չարաչար սխալվել». անգրագիտության վերացումը և աշխատավորության քաղաքական հասունությանը նպաստող միջոցառումները հակադրել միմյանց, միևնույնն է, թե՝ «յոթ տարեկան երեխային համեմատել քառասուն տարեկան մարդու հետ և միանգամայն անտեսել վերջինիս կյանքի փորձառությունը»։ «Այդ երկու աշխատանքները,— շարունակում էր թերթը,— մեկ մեկու չեն խանգարում և կարելի է երկուսն էլ միաժամանակ տանել. այդ տեսակետից պետք է մենք օրինակ վերցնենք Ռուսաստանից։ Այնտեղ ամեն ինչ կատարվում է գրույցի, հարց ու պատասխանի միջոցով։ Այդ մեթոդը Ռուսաստանում արդարացրել է յուր վրա դրված հույսերը, նա պետք է կիրառվի և մեզանում»[76]։

Երկրորդ միտումը հրապարակ եկավ մի փոքր ավելի ուշ։ Ճիշտ է, սրա կողմնակիցները, ի տարբերություն նախորդների, ագիտացիան չէին դիտում իբրև վաղահաս մի պտուղ, նրանք նույնիսկ

---

75 «Խորհրդային Հայաստան», 1921, № 86։

76 Նույն տեղում, 1922, № 5։

գանում էին, թե այն հսկայական գործ է կատարել և մեծ ծառայություններ ունի հեղափոխական հաղթարշավի մեջ... Բայց այդ ամենի մասին նրանք խոսում էին իբրև անցած-գնացած մի փուլի մասին. այժմ արդեն, երբ ավարտվել է հեղափոխության առաջին շրջանը, երբ վերջացել են քաղաքացիական կռիվները, գատում էին նրանք, եկել է «կոմունիզմի պետական պրոպագանդայի» ժամանակը և այլևս «ագիտացիա անելու» կարիք չկա, «ագիտացիոն աշխատանքը այլևս խաղալիք դեր չունի»: Նման կարծիքները գնահատելով իբրև աշխատավոր զանգվածների քաղաքական դաստիարակության և կուսակցության ագիտացիոն գործունեության կարևորության անտեսում, «Խորհրդային Հայաստան»-ը գրում էր. «Խոսել ագիտացիայի խոպան վերացման մասին, նշանակում է խաչ քաշել աշխատավորության կուլտուր-քաղաքական զարգացման վրա և այս ասպարեզը թողնել պատահական անձանց և հոսանքների վնասակար ազդեցության»: Իրադրության փոփոխությունը, երկրի առաջ ծառացած նոր խնդիրները ոչ թե ավելորդ են դարձնում ագիտացիայի դերը, այլ սոսկ պահանջում են նոր բովանդակություն և նպատակասլացություն ներարկել նրան, գտնել մասսաների վրա ներգործելու նոր մեթոդներ: Ավելին, շարունակում էր թերթը, ամեն անգամ, երբ փոխվում են պայմանները, առավել բարդ ու պատասխանատու խնդիրներ են դրվում կոմունիստական ագիտացիայի առջև[77]:

Իր հետևողական, մոբիլիզացնող ելույթներով պարբերական մամուլն զգալի չափով նպաստեց ագիտացիոն աշխատանքներում տեղ գտած թերությունները ու սայթաքումները, խոսքի և գործի միջև նկատվող անջրպետը վերացնելուն, արգասավորեց կուսակցական կազմակերպությունների գործունեությունը: Այս ամենը վկայում է, իհարկե, պարբերական մամուլի ջանքերի նպատակասլացությունը: Այսուհանդերձ, ճիշտ չէր լինի անտեսել, որ իր իսկ՝ մամուլի էջերում ևս, հատկապես տեղական պարբերականներում, երբեմն սպրդում էին ագիտացիայի նշանակության և դերի սխալ ու սխոլաստիկ ըմբռնումներ, այնպիսի կարծիքներ, որոնք ըստ էության համընկնում էին նույն այն տեսակետներին, որոնց դեմ հանդես էր գալիս ինքը՝ մամուլը: Գաղափարական աշխատանքը տնտեսական շինարարության խնդիրներից անջատ դիտելու, ագիտացիան որպես ինքնամփոփ գործոն ներկայացնելու տենդենց էր նկատ-

77 Տե՛ս նույն տեղը, 1923, № 163։

վում, օրինակ, «Կարմիր Շիրակ» թերթի առաջին համարներում։ «Մեր հերթական խնդիրները» խմբագրականում գերադասահատվում, պարզապես բացարձակացվում էր ագիտացիային վերապահված դերը՝ մի կողմ թողնելով նրա ծավալման ու ներդործման համար անհրաժեշտ իրական պայմանների հաշվառման անհրաժեշտությունը։ «Ներկա պայմաններում,— գրում էր թերթը,— ուղիղ, ճշմարիտ հետևողական տարված խոսքն ամենամեծ գործն է...»[78]։

Նման սայթաքումները, իհարկե, առանձնակի, էական արժեք չունեին այն իրոք նշանակալից դերի համեմատությամբ, որ խաղաց պարբերական մամուլը ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքները նպատակասլաց հունի մեջ դնելու գործում։

* * *

Գաղափարական-դաստիարակչական աշխատանքի, այդ թվում և ագիտացիայի ու պրոպագանդայի բարելավման համար անհրաժեշտ էր հետևողականորեն հանդես գալ այնպիսի մի երևույթի դեմ, ինչպիսին ֆրազամոլությունն էր՝ սրան ուղեկցող բազմաթիվ մերժելի աշխատանքային ոճերի ու մեթոդների հետ միասին։ Այս առումով սուր և կրքոտ ելույթներ էր ունենում հատկապես «Պրավդա»-ն, որին հետևում էին տեղային լեզուներով հրատարակվող կուսակցական պարբերականները։ «Պրավդա»-ն քննադատում էր մասնավորապես նոր հասարակական կյանքի կազմակերպմանը խոչընդոտող, տնտեսական-ստեղծագործ աշխատանքը կաշկանդող այնպիսի արատներ, ինչպիսիք էին ժողովամոլությունը, ադմինիստրատորությունը, ֆորմալիզմը, արատաբին ոգեկամը[79]։ «Ո՛չ թե ֆրազա, այլ գո՛ր ծ»,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, արձագանքելով Վ. Ի. Լենինի՝ «Մենք կոչ ենք անում գործողության, գործնական աշխատանքի» պահանջին։ Խոսքերով ու խոստումներով հնարավոր չէ կերակրել մարդկանց։ Վնասից բացի ոչինչ չի կարող տալ իրականության բարդ ու հակասական երևույթների, դժվարությունների, չլուծված խնդիրների անտեսումը, հապճեպորեն ամեն ինչ խոսքով «լուծելու» մոլորությունը։ «Կար ժամանակ,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— երբ «կամաց-կամացը» հանցանք էր մեր կուսակցության համար։ Դա քաղաքացիական կռվի ժամա-

78 «Կարմիր Շիրակ», 1921, № 3։

79 Տե՛ս, օրինակ, «Правда», 1921, № 277։

նակն էր, երբ հարկավոր էր վճռական հարվածով գլխատել դաշնակցությունը։ Դա արդեն արված է։ Այժմ հարկավոր է քայլ առ քայլ, վերշոկ վերշոկի ետևից շինել այս բանդված երկիրը, կազմակերպելով աշխատավորության ուժերը՝ սովին, քաղցին և ագիտությանը հաղթելու համար»[80]։ Թերթը կոչ էր անում զբաղվել իրականության բազմակողմանի հետազոտությամբ, ուժերի և հնարավորությունների առավել արդյունավետ գործադրման նոր ուղիների բռնումով, «տեղական փորձերի վերլուծությամբ և լավ փորձերի ընդօրինակումով ու տարածումով»։ «Շատ ավելի քի՛չ կաբինետային աշխատանք, շատ ավելի քի՛չ կանցելյարշչինա...,— գրում էր թերթը։— Սրա հանդեպ՝ շատ ավելի սե՛ռ կապ մեր երկրի զանազան մասերի հետ, շատ ավելի՛ գիտակցություն տեղական փորձերին, շա՛տ ավելի կենդանի շինարար աշխատանք... Ահա՛ թե ինչ է պահանջում մեր ավերված երկիրը, ահա թե ի՛նչ է հարկավոր մեր բազմատանջ, երիցս բազմատանջ աշխատավորության տնտեսական բարեկեցությունը բարձրացնելու համար»[81]։

Ֆրազամոլության դեմ մղվող պայքարում պարբերական մամուլի հիմնական կովանը խոսքի և գործի համապատասխանության լենինյան պահանջն էր։ Եթե ասված մեծ-մեծ խոսքերը, շռայլ խոստումները չեն ամրապնդվում իրական քայլերով, դրանց կենսագործումն ապահովող հետևողական, հաստատակամ ճիգ ու ջանքով, ապա խոսքը վերածվում է սոսկ ֆրազի, ֆրազը դառնում է արտաքին ոեկլամ, իսկ վերջինս իր հետ բերում է ոչ թե ուժերի համախմբում, այլ ինքնատության հակումն, անտարբերություն, հիասթափություն։ «Մեզ հարկավոր են գործնական մարդիկ, գործին կպչող ու գործի մեջ եփվող աշխատողներ,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը «Ուժերի բաշխումը» խորագրով առաջնորդողում[82]։— Լավ կլիներ, եթե մենք մեկընդմիշտ ընտելանայինք այն մտքին, որ աշխատողը—ճոռոմաբանը կամ շարունակ խոսողը չէ..., այլ իր ճառի հետ միաժամանակ գործ անողն է»։ Միմիայն գործով, «անմիջական, շոր ու սև աշխատանքով» մենք կհասնենք մեր հանրապետության տնտեսական վիճակի, կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման, կկարողանանք «նորմալ դրության հասցնել նրա ողջ կարգն ու սարքը»։ Ուստի և, եզրակացնում էր թերթը, կյանքի բոլոր ասպարեզներում մենք պիտի ջանանք «տարբերել իրարից՝

80 «Խորհրդային Հայաստան», 1921, № 170։

81 Նույն տեղում, № 209։

82 Տե՛ս նույն տեղը, 1922, № 16։

պոռոտախոսին ու գործնական մարդուն։ Պետք է, որ մենք դառնանք իսկական, կյանքի, իրականության մարտնչողին ու աշխատողին խոսքի, բառի ու սոսկ մարի՝ ծեծված, ծանծաղ մարի սպառավորներից»։

Ըստ որում՝ գործնականության, խոսքի և գործի համապատասխանության պահանջը փորձաքար էր համարվում ոչ միայն գեղեցիկ ֆրազներ արտասանողի, այլև նրա համար, ով դարձյալ ճռճռան բառերով «թունդ կերպով քննադատում է մեր այս կամ այն բայլը, շինարարությունը»։ Եթե քննադատողը գործնականում լավ ու նվիրված աշխատող չէ իրեն հատկացված բնագավառում, ապա նրա խոսքը ևս, անկախ իր գեղեցիկ պաճուճանքներից ու արտաքին չքմեղությունից, դարձյալ կհնչի սոսկ իբրև սնամեջ մի ֆրազ՝ նույնքան անպտուղ ու վնասակար, որքան և խոսքն այն մեկի, որն զբաղված է «մեղ փառաբանելով» և «մեծ-մեծ ծրագրերից» շաղակրատելով՝ առանց իր իսկ աշխատանքով մի բար, մի աղյուս ավելացնելու մեր ընդհանուր առաջընթացի ճանապարհին։ «Եթե տեսնում ենք որևէ մեկին...,— կարդում ենք վերոհիշյալ առաջնորդողում,— որ մեծ-մեծ խոսում է, գեղեցիկ ճառեր է արտասանում, նամանավանդ թունդ կերպով քննադատում է մեր այս կամ այն բայլը, շինարարությունը, հարկն է, որպեսզի նրան հարց տանք. «Իսկ դուք ո՞վ կլինեք, որտե՞ղ եք աշխատում։ Հա՛, դուք այսինչ գործարանում եք, հապա ասացե՛ք, տեսնենք, ի՞նչ եք արել դուք այնտեղ...»։ Եթե խոսողը կկարողանա ապացուցանել իր գործնականությունը, դուրս կգա, որ նա լավագույն հոտորն է ու խոշորագույն կազմակերպիչն է. Եթե նա կկմկմա, այն ժամանակ իմացած եղեք, որ ձեր առաջ կանգնած է մի պոռոտախոս, գազրախոս, անպետք մարդ, որին հարկավոր է վանդել հասարակության միջից»։ «Մեզ պետք են գործնական, պատասխանատու մարդիկ,— եզրակացնում էր թերթը։— Մեր բոլոր աշխատողները, գործիչներն ու կազմակերպիչները այդպե՛ս պիտի լինեն։ Սա դասախարակության հարց է, որի մասին լուրջ կերպով պետք է մտածեն մեր կուսակցական կազմակերպությունները, մեր ժողովները, մեր թերթերն ու դպրոցները»։

Ֆրազամոլության դեմ՝ հանուն կոնկրետ ու գործնական աշխատանքի՝ մեծ կրքով հանդես էր գալիս Ա. Մյասնիկյանը, որի հոդվածներն ու ելույթները խորհրդահայ մամուլում և խմբագրություններին ցույց աված պրակտիկ օգնությունը կարևոր դեր խաղացին մեր նոր հրապարակախոսության ձևավորման ընթացքում՝ մասնավորապես նաև մամուլի օրգաններում գործնականության սկզբ-

բունքներն արմատավորելու տեսակետից։ Ինքնին հատկանշական է արդեն, որ գործնականությունն էր կուսակցական և պետական այդ ականավոր գործչի թե՛ գրավոր և թե՛ բանավոր հրապարակախոսության ամենաբնորոշ կողմերից մեկը։ Այս իրողությունը ճիշտ է նկատել ու բնութագրել Դերենիկ Դեմիրճյանը։ Վերհիշելով Ալ. Մյասնիկյանի ելույթներից մեկը, նա գրել է. «Խոսում էր։ Շատ քիչ եմ պատահել այդպիսի խոսողների։ Նա չէր խոսում, կերտում էր։ Պարզ էր արտաբանում՝ անշտապ կշռելով, մեկ-մեկ վերջիր աննելով։ Խոսում էր հանգիստ, արդարամիտ, օրյեկտիվ եղանակով։ Եվ համոզում էր։ Ի՞նչ էր գաղտնիքը։ Մարտունու բոլոր գաղտնիքները պարզ էին.— ա՛յն, որ զգում էիր, որ այս մարդը թե մի բան ասաց, կանի՛ էլ։ Միաժամանակ զգում էիր, որ նրա խոսքի հետև դեռ շատ մեծ բովանդակություն կա։ Գիտեիր, որ այդ մարդը խոսելու համար չի խոսում, այլ մտքեր է փոխանակում բանելով, գործելու ժամին։ Եվ նրա խոսքը թարմ էր, որովհետև գալիս էր գործի փորձից. որովհետև գործի խոսք էր։ Ահա ինչու նա համոզիչ էր և հուսադրող»[83]։

Կոմունիստական ագիտացիայի գործնականության, խոսքի ու գործի համապատասխանության հարցին Ալ. Մյասնիկյանը հանգամանորեն անդրադարձավ «Կոմունիստների աշխատանքը Հայաստանում» փայլուն հոդվածում[84]։ Սուր կերպով դնելով «շոշափելի ագիտացիայի», խորհրդային Ռուսաստանի փորձը ստեղծագործաբար յուրացնելու խնդիրը, նա ամենայն խստությամբ մերժում էր ֆրազամոլությունն ու ձևապաշտությունը. «... Ֆրազան մի կո՛ղմ, ավելք հի՛մքը, գո՛րծը, որ առանց սոսկ ցուցանակի կանի կրկնապատիկ, եռապատիկ ավելի, քան սոսկ խոսքը՝ հաճախ անըմբռնելի, փքուն, առանց բովանդակության...»։ Ֆրազամոլության դեմ իր ելույթներով, զաղափարական-դաստիարակչական աշխատանքներում գործնականության իր պահանջով, սոցիալիստական շինարարության փորձի մեխանիկական ընդօրինակման այպանումով Ալ. Մյասնիկյանն ըստ էության ժխտում-մերժում էր թալմուդիզմը՝ հանուն մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական կիրառման։ «Հայաստանի աշխատավորության առաջապահ գունդն իր ձեռքում ունի այնպիսի մի անգնահատելի զենք, որպիսին մարքսիզմն է,— ընդգծում էր նա։— Իսկ մարքսիզմի հիմնական սկզբունքն ասում է, որ

---

83 «Նոր ակոս», Երևան, 1925, № 5—6—7, էջ 16—17։

84 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, № 81։

չկա մեկընդմիշտ տրված, ձևած ու չափված ֆորմա, դրություն, որ իրա՝ մարքսիզմի հիմունքները պետք է իմանալ կիրառել յուրաքանչյուր շրջապատում, տվյալ պայմաններում և յուրաքանչյուր ժամանակ։ Եվ սխալվում է այն գործիչը, որ իրան համարելով մարքսիստ, տեղի-անտեղի հոլովում է մարքսիզմի լեկսիկոնից վերցրած բառեր՝ անկախ տեղից ու ժամանակից...»[85]։

Ստեղծագործական մոտեցման այսպիսի պահանջ էր առաջադրում Ալ. Մյասնիկյանը նաև մամուլի աշխատողներին։ Նա ինքը ջանք ու նանդ չէր խնայում պարբերականների բարելավման, գաղափարական մակարդակի բարձրացման ու գործնական-կազմակերպչական կողմի ուժեղացման համար։ «Ընկ. Մյասնիկյանը մեծ հետաքրքրությամբ հետևում էր մեր մամուլին և խորհրդային Հայաստանում եղած ժամանակ խոշոր մասնակցություն ուներ նրա աշխատանքներին»[86],— վկայում էր ականավոր հրապարակախոս Ա. Մռավյանը, իսկ Աշ. Հովհաննիսյանը համարում էր նրան «մեր օրերի խոշորագույն հայ հրապարակախոսը»[87]։ Գ. Արոլը, որ 1921—1922 թթ. աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթում, վերհիշում էր, թե ինչպես Ալ. Մյասնիկյանը, պետական-կուսակցական մեծ ու լարված գործերով ծանրաբեռնված լինելով հանդերձ՝ «համարյա ամեն օր հնարավորություն ու ժամանակ էր գտնում անցնելու «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրատուն», «հարցեր էր տալիս թերթի ու խմբագրության դրության մասին, ցուցումներ էր անում թերթի այս կամ այն պակասության առթիվ», «մամուլը անձամբ ղեկավարելու համար ժամանակ չէր խնայում»[88]։

Կոմունիստական կուսակցության, պարբերական մամուլի պայքարը ֆրազամոլության և քաղաքական շաղակրատության դեմ՝ հանուն սոցիալիստական շինարարության խնդիրների գործնական-ստեղծարար քննարկման, ասաիճանաբար տալիս էր իր դրական արդյունքները։ 1922 թ. ամռանը տեղի էին ունենում կուսակցական գավառային կոնֆերանսներ։ Երբ ավարտվեցին Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի կոնֆերանսները, «Խորհրդային Հայաստան»-ը հատուկ առաջնորդողով անդրադարձավ նրանց աշխատանքներին՝ առանձնապես նշելով պատգամավորների ելույթ-

---

85 «Խորհրդային Հայաստան», 1922, № 81։

86 Նույն տեղում, 1925, № 69։

87 Տե՛ս նույն տեղը։

88 «Նոր ակոս», 1925, № 5—6—7։

ներում իշխող գործնականության առողջ ոգին, մի երևույթ, որ Թերթն իրավացիորեն համարում էր կուսակցական կազմակերպությունների հասունացման արդասիք[89]:

* * *

Քաղաքացիական կռիվներից հետո մեր հանրապետությունում, «խորհրդային Հայաստան» թերթից բացի, հրատարակվել են կուսակցական կենտրոնական նաև այլ պարբերականներ: Այսպես՝ «Коммунист» թերթի դադարից կես տարի անց՝ 1921 թ. նոյեմբերի 7-ից սկսեց լույս տեսնել ռուսերեն «Наша Правда» լրագիրը՝ իբրև ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Երևանի կոմիտեի և ՀՍԽՀ ժողկոմխորհի օրգան[90]: Թերթն իր առջև նպատակ էր դրել նպաստել «գյուղատնտեսության առողջացմանը, Հայաստանի արդյունաբերության կանոնավորմանը և մոբիլիզացնել աշխատավորության ուժերը տնտեսական փլուզման դեմ հաջողությամբ կռվելու համար»: «Քանի որ «Наша Правда»-ն Հայաստանի կոմկուսի Կենտկոմի օրգանն է,— գրում էր խմբագրությունը,— մենք թերթի էջերում կարտացոլենք Հայաստանի կուսակցական կյանքը և մասսաների մեջ կանցկացնենք կուսակցության լոզունգները»[91]: Եվ իրոք «Наша Правда»-ն գլալի գործ կատարեց այս ուղղությամբ: Կուսակցական և տնտեսական շինարարության հարցերին նվիրված հոդվածներով թերթում հանդես են եկել Ալ. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը, Պ. Մակինցյանը, Հ. Ադատյանը, Շ. Ամիրխանյանը, Խ. Հովսեփյանը, Ս. Շադունցը և ուրիշներ:

Առանձնակի գնահատության են արժանի «Наша Правда»-ի՝ զինվորական խնդիրներին նվիրված հոդվածները: Թերթը պարբերաբար անդրադառնում էր զորամասերում տարվող կազմակերպչական, գաղափարական, դաստիարակչական աշխատանքներին, լուսաբանում ռազմական ուսուցման ընթացքը, տպագրում էր կարմիրբանակայինների ոտանավորները, նամակները, ուներ «Զինվորական գործ», «Զինթղթակցի անկյուն», «Կարմիրբանակային ստեղ-

---

89 Տե՛ս «խորհրդային Հայաստան», 1922, № 138:

90 «Наша Правда»-ն հրատարակվում էր փոքրադիր ծավալով, 2 կամ 4 էջով, շաբաթական երեք անգամ: Պատ. խմբագիրն էր Ս. Ս. Ռեզցովը: Տպարանակը՝ 600—2000:

91 «Наша Правда», 1921, № 1:

ծագրծություն» բաժինները։ «Наша Правда»-ում զետեղվել են Հայաստանի կոմերիտմիության կենտկոմի և Երևանի կոմիտեի երկշաբաթյա օրգան «Красная молодежь» և «Страничка работницы» թերթիկները։

«Наша Правда»-ն լույս տեսավ շուրջ կես տարի՝ մինչև 1922 թ. մայիսի 1-ը։

1922 թ. հունվարի 25-ին, ՀԿԿ առաջին համագումարի բացման նախօրյակին, հրատարակվեց «Известия Центрального комитета коммунистической партии Армении (большевиков)» հանդեսը[92]։ Ավելի շատ սա կարելի է համարել արտակարգ մի հրատարակություն, քանի որ լույս է տեսել այս միակ համարը, որը, ինչպես վկայում են նրանում զետեղված նյութերը, յուրովի ամփոփում էր ՀԿԿ անդրանիկ համագումարի հրավիրման համար տարված նախապատրաստական աշխատանքները։

Այս առումով ուշագրավ է ՀԿԿ Կենտկոմի հրահանգչական բաժնի հաշվետվությունը, ուր բերված են արժեքավոր և հատկանշական տվյալներ կուսակցականների քանակի, սոցիալական դրության, ազգային պատկանելության, գինվորական պատրաստականության, մասնագիտության, կրթության ու տարիքի վերաբերյալ, ամփոփված են կուսգման արդյունքները։ Հետաքրքրական են Կենտկոմի ագիտ-պրոպ բաժնի հաշվետվությունը, գավկոմների ագիտբաժվարների համահայաստանյան համագումարի հաշվետվությունը, գավկոմների քարտուղարների երկրորդ համագումարի բանաձևը, Կենտկոմի շրջաբերականները տրանսպորտի բարելավման գործում կուսակցականների դերի մասին և մինչև 20 տարեկանը ներառյալ կոմունիստների՝ պարտադիր կարգով կոմերիտմիության շարքերում գտնվելու վերաբերյալ։

Համարում հրապարակված են նաև Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսի բանաձևը, Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետությունների դաշնակցային պայմանագիրը և ՌԿԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի թեզիսները Անդրկովկասում ֆինանսական ռեֆորմի մասին։

Հայաստանի կոմկուսի պատմության և նրա առջև ծառացած նոր խնդիրների լուսաբանման տեսակետից առանձնակի արժեք ու-

---

92 Խմբագիրը չի նշված։ 32 էջ (27×19 սմ), տպարանակի վերաբերյալ տվյալներ չկան։

նեն Ալ. Մյասնիկյանի և Ս. Լուկաշինի հոդվածները։ «Հայաստանի կոմունիստական կուսակցության նշանակությունը» խորագրով հոդվածում Ալ. Մյասնիկյանը, համառոտակի ընդգծելով Հայաստանի կոմունիստների առաջին կոնֆերանսի դերը և Մայիսյան ապըստամբության պատմական արժեքը, բնութագրում է այն հիմնական ուղղությունները, որոնք որոշում են ՀԿԿ գործունեության բովանդակությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո.

ա) Կոմունիստական կուսակցությունը խիստ սահմանազատում մտցրեց մի կողմից՝ բուրժուազիայի, պորտաբույծների և ձրիակերների և մյուս կողմից՝ աշխատավոր զանգվածների միջև և հնարավոր ամեն ինչ արեց վերջիններիս տիրող դասակարգերի խարեություններից ու նոր ազատներից փրկելու համար։

բ) Կոմունիստական կուսակցությունը ճիշտ կերպով դրեց և լուծեց Հայաստանի օրիենտացիայի խնդիրը, մերժեց Եվրոպայի գիշատիչների դիվանագիտությունը և փոքր ժողովուրդների հետ նրանց խաղը, ժողովրդին կողմնորոշելով «սեփական ուժերի, միևնույն դրությունն ունեցողների, այլ երկրների աշխատավորների նկատմամբ»։ «Խորհրդային օրիենտացիան,— ընդգծում էր Ալ. Մյասնիկյանը,— լավագույնն է բոլոր օրիենտացիաների մեջ։ Այդ մենք սովորեցինք կոմունիստների կուսակցության շնորհիվ»։

գ) Դաշն կնքելով Ադրբեջանի և Վրաստանի բանվորների և գյուղացիների հետ, Հայաստանի աշխատավորները կոմունիստների ղեկավարությամբ Կովկասում և իրենց իսկ երկրում հաստատեցին կայուն ազգային խաղաղություն։

դ) Կոմունիստական կուսակցության քաղաքականության շնորհիվ հնարավոր դարձավ ուժերը հավաքել և ձևնամուխ լինել խոր ու արմատական շինարարական աշխատանքի։ «Այժմ նոր Հայաստանը տենդորեն կառուցվում է»։

«Դեպի մեր կուսակցության առաջին համագումարը» խորագրով հոդվածում Ս. Լուկաշինը նշում էր այն խոշոր աշխատանքը, որ կատարել է կուսակցությունը դաշնակցության փետրվարյան հակահեղափոխությունը և դանդեղության ավանդույթը լիկվիդացնելու համար։ Փետրվարից հետո խնդիր էր դրված «քայքայել թշնամու շարքերը ոչ այնքան կարմիր սվիններով, որքան դաշնակցականներին մերկացնելու, նրանց իրական դերի բացահայտման միջոցով»։ Եվ այդ խնդիրը, նկատում էր հեղինակը, մեր կուսակցությունը պատվով կատարեց իր կազմակերպչական ու ստեղծագործական աշխատանքի ընթացքում։ Հոդվածում ընդգծված էր առհա-

սարակ «նացիոնալիզմի թույնի» դեմ վառոդը չոր պահելու անհրաժեշտություններ։

Հայաստանի կոմկուսի և խորհրդային իշխանության առջև, վերջում նշում էր Ս. Լուկաշինը, երկրի անտեսական վերաշինության ասպարեզում այժմ ծառանում են նոր պատասխանատու խնդիրներ, որոնք «պահանջում են մեր կուսակցությունից ուժերի լրիվ ու սիստեմատիկ լարումն. համախմբվածություն, տոկունություն և իր վարած տնտեսական քաղաքականության հետ կապված աշխատանքի նոր մեթոդներ»։

«Известия»-ն ուներ կուսակցական-տեսական պարբերականի միտումներ և կարևոր դեր կարող էր խաղալ, եթե, իհարկե, շարունակվեր նրա հրատարակությունը։ Բայց այդ միակ համարի նյութերն էլ որոշակի արժեք ունեն ինչպես Հայաստանի կոմունիստական կուսակցության, այնպես էլ մեր հանրապետության պարբերական մամուլի պատմության ուսումնասիրման համար։

Այլ բնույթ ուներ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի օրգան «Կոմունիստ» ամսագիրը, որի երեք համարները հրատարակվեցին 1922 թ. վերջին երեք ամիսներին[93]։ Կոմունիստների քաղաքական գաղափարակության խորացման, նրանց ինքնագործունեության զարգացման համար, նշված էր «Մեր նպատակը» խորագրով հոդվածում, անհրաժեշտ է խոր ու շահագրգիռ հետաքրքրություն առաջացնել կուսակցական ամենալայն խավերում «դեպի կուսակցական կյանքն ու պետական շինարարությունը»։ Այդպիսի նպատակադրումով է, ահա, ասպարեզ իջնում «Կոմունիստ»-ը, որ ուններալու է «բացարձակապես մասսայական բնույթ» և ջանալու է ի հայտ բերել ու զարգացնել կուսանդամների «ինքնուրույն մտածելու, գործելու և արտահայտվելու կարողությունները»[94]։

Դժբախտաբար, ամսագիրը կարճ կյանք ունեցավ և չկարողացավ լիովին իրագործել այս կարևոր նպատակադրումը։ Սակայն իր երեք համարներով նա, այնուամենայնիվ, որոշ բայլ կատարեց այդ ուղղությամբ. ընթերցողներին ներկայացրեց Վ. Ի. Լենինի «Մարքսի աշխարհայացքի համառոտ ուրվագծերը», «Կարլ Մարքս (կենսագրական ակնարկներ)» հոդվածները, տպագրեց Ֆ. Էնգելսի համառոտ կենսագրությունը, մի քանի հանրամատչելի գրույց-հոդված-

---

93 «Կոմունիստ»-ը լույս է տեսել «Խմբագրական կոլեգիա» ստորագրությամբ։ 34 էջ (22×15 սմ), տպաքանակը՝ 3000։ № 3-ում զետեղված մի հայտարարությունից պարզվում է, որ ամսագրի քարտուղարն է եղել Ս. Մելիքսեթյանը։

94 «Կոմունիստ», 1922, № 1, էջ 4։

ներ բաղաքական դաստիարակության, տնտեսական խնդիրների, միջազգային հարցերի վերաբերյալ։ Կուսակցական աշխատանքների դրվածքի հետ կոմունիստներին ծանոթացնելու տեսակետից ուշադրավ էին նաև առանձին կազմակերպությունների կյանքը լուսաբանող հաշվետվություններն ու հաղորդագրությունները, որ զետեղվում էին «Կուսակցական կյանք» և «Կուսակցական խրոնիկա» բաժիններում։ «Կոմունիստ»-ում հանդես են եկել Դր. Տեր-Սիմոնյանը, Ա. Մռավյանը, Դ. Դզնունին, Հ. Ազատյանը, Գ. Անտելեպյանը, Գումիզինը և ուրիշներ։

Երևանի գավկոմի օրգանի վերջին համարը լույս տեսավ 1922 թ. դեկտեմբերին։ Նրա հրատարակությունը դադարեցվեց, որովհետև ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշել էր լույս ընծայել ավելի լայն՝ համահայաստանյան մասշտաբի մի նոր կուսակցական հանդես, որը նույնպես կոչվելու էր «Կոմունիստ» և, ըստ նախնական ծրագրի, հրատարակվելու էր ամիսը մեկ անգամ։ Կենտկոմի քարտուղարության 1923 թ. հունվարի 6-ի նիստում որոշվեց «մշտական աշխատակցության համար «Կոմունիստ» ժուռնալին ամրացնել ընկ. ընկ. Ալ. Մյասնիկյանին, Ա. Մռավյանին, Աշ. Հովհաննիսյանին, Ն. Մեհրաբյանին, Ա. Քարամյանին, Հ. Ազատյանին և Ա. Շահուվարյանին»[95]։ Քանի որ Երևանի կազմակերպությունը չուներ այլևս իր առանձին օրգանը, ՀԿ(բ)Կ քաղկոմի պլենումը անհրաժեշտ համարեց, որպեսզի մայրաքաղաքի կուսակցական կյանքը իր լրիվ լուսաբանումը գտնի նոր «Կոմունիստ»-ի էջերում[96]։ Թեև «Կոմունիստ»-ը «միամսյա հանդես» էր լինելու, բայց 1923 թ. հաջողվեց լույս ընծայել սոսկ 4 համար, այն էլ միացյալ թվերով (№№ 1—2 և 3—4)։ Դրանից հետո նրա հրատարակությունը ժամանակավորապես դադարեցվեց՝ ֆինանսական նկատառումներով։

ՀԿ(բ)Կ III համագումարը, որոշելով շարունակել կուսակցական և անկուսակցական մասսաների պահանջներին համապատասխանող քաղաքական-դաստիարակչական և կուլտուր-կրթական աշխատանքի բոլոր ճյուղերին վերաբերող հանրամատչելի գրականության լույսընծայումը, միաժամանակ խնդիր դրեց՝ «ձեռնարկել պարբերական հանդեսի հրատարակության՝ միջին կուսակցականին կուսշինարարության և կուս-դաստիարակչական աշխատանքի ընթացիկ խնդիրներին ծանոթացնելու համար»[97]։

---

95 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 23, թ. 10։

96 Տե՛ս նույն տեղը, թ. 53։

97 «Խորհրդային Հայաստան», 1924, № 111։

1925 թ. փետրվարի 17-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ապրիլաժնում հրավիրված խորհրդակցությունում քննարկվեցին այդպիսի հանդես հրատարակելու նախապատրաստման հետ կապված մի քանի հարցեր (բաժիններ, ծավալ, պարբերականություն և այլն)[98]: Պատվիրվեցին առաջին հոդվածները, կուսինֆորմացիա ուղարկելու համապատասխան ցուցումներ տրվեցին տեղերում աշխատող դեկավար ընկերներին: Վերջապես, նույն թվականի մայիսին լույս տեսավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Երևանի կոմիտեի օրգան «Կոմունիստ» հանդեսի առաջին համարը[99]: Փաստորեն սա ոչ թե նոր պարբերական էր, այլ նախորդ «Կոմունիստ»-ի շարունակությունը, հասկանալի է, նոր պայմաններին համապատասխան: Կենտկոմի մամուլի ենթաբաժինը կուսակցական բոլոր աշխատակիցներին ուղղված շրջաբերականում գրում էր. «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը վաղուց ի վեր անհրաժեշտություն էր զգում ունենալ իր սեփական օրգանը: Հազար ու մի հարց և կուսակցական խնդիրներ կան, որոնք քննության պիտի առնել ու պարզաբանել: Տեղերում աշխատող ընկերների առաջ նորանոր հարցեր են ծագում, որոնք պիտի լուսաբանել: Անհրաժեշտ է, որ այդ օրգանում արտացոլվի մեր կուսակցական ամբողջ աշխատանքը, և այստեղից էլ պատասխանատու կուսակցական մարմինների և ընկերների կողմից ցուցումներ տրվեն տեղերում աշխատող ընկերներին: Ահա այսօր այդ խոշոր բացը ծածկվում է «Կոմունիստ»-ի վերահրատարակությամբ»[100]: Խմբագրության առջև խնդիր էր դրված «Կոմունիստ»-ը դարձնել մասսայական կուսակցական հանդես. «ամեն մի կուսակցական պետք է կարդա և մասնակցի նրան»:

1925 թ. լույս տեսավ «Կոմունիստ»-ի չորս համար (3—4-ը՝ միացյալ), որոնց նյութերը, թե՛ բնույթով և թե՛ մատուցման եղանակով, վկայում են, որ հանդեսը ստիպված էր մասսայականության ուղին: «Մեր անելիքները գյուղում», «Արդյունաբերության բնագավառում», «Կոոպերացիայի ուղիով», «Կուսակ-

98 ՏԼ՚ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 184, թ. 1։

99 Մինչև 1928 թ. օգոստոսը հրատարակվել է հանդեսի 30 համար։ Պատ. խմբագիրներն են եղել Լ. Արիսյանը, Հ. Գյուլի-Քեվխյանը, Հ. Մկրտչյանը, Խ. Մանոյանը, խմբ. կոլեգիայի անդամներ՝ Ա. Բարխուդարյանը, Դ. Դղնունին, Ա. Շահգելդյանը, Ս. Տեր-Պողոսյանը, Մ. Ենգիբարյանը, Ա. Քարամյանը, Ա. Վարդապետյանը, Պ. Թորոսյանը, Հ. Գարրիելյանը։ 62—90 էջ, միացյալ համարները՝ 132—136 էջ (22×15 սմ), տպարանակը՝ 1000—1200։

100 «Կոմունիստ», 1925, № 1, էջ 80։

ցության գործնականը», «Տեղերում» և այլ բաժիններում զետեղված են կուսշինարարության հրատապ խնդիրներին, կուսակցության տնտեսական բաղաքականության պարզաբանմանը և այլ հարցերի նվիրված ուշագրավ շատ հոդվածներ, հաղորդումներ ու նկատառումներ: 1925 թ. օգոստոսից հետո «Կոմունիստ»-ը առժամանակ դադարից լույս տեսնելուց: Հանդեսի հերթական համարը հրատարակվեց հաջորդ տարվա մայիսին:

7

1923 թ. աշնանը Տրոցկին իր համախոհների հետ միասին օպոզիցիոն ելույթներ ունեցավ կուսակցության դեմ: Հանդես գալով «կուսակցական ապարատը ջարդելու» լոզունգով, օպոզիցիան փորձում էր պետապարատի բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի ծանրության կենտրոնը փոխադրել կուսապարատի «բյուրոկրատիզմի» դեմ, կուսակցության երիտասարդ անդամներին հակադրել հիմնական կադրերին ու Կենտկոմին, մեղադրելով վերջիններիս այլասերման մեջ և այլն: Օպոզիցիան ծուռ հայելու մեջ էր ներկայացնում Կենտկոմի ներքին ու արտաքին քաղաքականությունը, տնտեսական միջոցառումները՝ պատնեշելով ֆրակցիաների և խմբավորումների ազատություն: «Մոռացության» տալով ֆրակցիաներն արգելելու վերաբերյալ ՌԿԿ X համագումարի որոշումը, օպոզիցիան ջանում էր կուսակցության միասնականության և միաձուլության լենինյան ըմբռնումը նենգափոխել այն հայացքով, թե իբր կուսակցությունն ամեն տեսակ հոսանքների, ֆրակցիաների ու խմբավորումների դումար է, որոնք օգտվելու էին հավասար իրավունքներից, իսկ Կենտկոմը հանդիսանալու էր ոչ այնքան կուսակցության ղեկավարը, որքան հասարակ մի միջնորդ նրանց միջև:

Սկսվեց համակուսակցական մի դիսկուսիա, որի ընթացքում կարևոր դեր էր վերապահված կուսակցական մամուլին՝ թե՛ կենտրոնում և թե՛ տեղերում: Անգնահատելի է մասնավորապես «Պրավդա»-ի ծառայությունը. երկու ամիս շարունակ լուսաբանելով դիսկուսիայի ընթացքը, կոմկուսի կենտրոնական օրգանը խստագույնս դատապարտում էր օպոզիցիան, մերկացնում նրա գաղափարական ակունքները և հավաստում Կենտկոմի վարած գծի ճշտությունը: «Պրավդա»-ի ելույթները մեծապես օգնեցին կուսկազմակերպություններին տրոցկիզմի դեմ նրանց մղած պայքարում:

Հայաստանում դիսկուսիայի ժամանակ սկզբունքորեն ճիշտ և մարտական դիրք բռնեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Խորհրդային Հայաստան»-ը, որի էջերում արտացոլված է Երևանի, Ալեքսանդրապոլի, Ալավերդու, Ղափանի, Ղարաքիլիսայի և մյուս գավառների կուսակազմակերպությունների անդիջում վերաբերմունքը օպոզիցիայի նկատմամբ: Թերթը տպագրում էր կուսակազմակերպությունների որոշումները, նամակներ, հոդվածներ, ինֆորմացիաներ և բազմաթիվ այլ նյութեր, որոնց մեջ արտահայտված է Կենտկոմի շուրջը համախմբվածության, լենինյան ավանդներին հավատարիմ մնալու անկոտրում կամք և օպոզիցիոներներին հակահարված տալու վճռականություն: Առանձնակի հիշատակության են արժանի 1923 թ. դեկտեմբերի վերջերին և հաջորդ տարվա հունվարի առաջին օրերին տպագրված խմբագրականները («Մեր վիճաբանությունների և անելիքների ուղին», «Հնացե՞լ է արդյոք մեր տակտիկան», «Բանվորական դեմոկրատիա», «Հեռանքներից մեկը», «Արեք կոնկրետ առաջարկներ» և այլն): «Գործնական աշխատանքը,— գրում էր թերթը,— պիտի գերազանցել վերացական վիճաբանությունից, ճառախոսությամբ ջուր ծեծելուց». արոցկիզմի դեմ արդյունավետ պայքար մղելու համար հարկավոր է հիշել հիմնական մի նախապայման՝ «լենինիզմի դիրքը յուրացնելու, լավ մարսելու անհրաժեշտությունը»: Խմբավորումների, ֆրակցիաների գոյությունը, շարունակում էր թերթը, չի կարելի արդարացնել ոչ մի դեմոկրատիկ պատճառաբանությամբ, «ոչ մի դեպքում չի կարելի կուսակցության մի մասը հակադրել մյուսին»: Դիսկուսիայի ընթացքում, եզրափակում էր թերթը, «ուղեցույց պիտի ունենալ կուսակցության տասներորդ համագումարի հետևյալ որոշումը. «Ով դուրս է գալիս քննադատությամբ՝ պիտի հաշվի առնի այն, որ կուսակցությունը շրջապատված է թշնամիներով և պիտի ձգտի իր անմիջական մասնակցությամբ խորհրդային և կուսակցական աշխատանքում ուղղել գործնականում կուսակցության սխալները»»[101]:

Մերկացնելով օպոզիցիոներների հարձակումները Կենտկոմի քաղաքական գծի, տնտեսական գործելակերպի ու տակտիկայի դեմ, «Խորհրդային Հայաստան»-ը բացահայտում էր դրանց դրդապատճառները: «Քննադատություն» տերմինը, նշում էր թերթը, սոսկ մի «անմեղ» քող է, որի տակ կուսակցության թշնամիները

101 «Խորհրդային Հայաստան», 1923, № 287:

փորձում են ծածկել իրենց հետևն գնացող նկրտումները. «Ալդպիսի քննադատությունը քննադատություն չի, այլ՝ դեմագոգիա», «բացասել մեր տակտիկայի ուղիղ լինելը ներքին և արտաքին խնդիրների վերաբերմամբ, դա միևնույնն է, թե խաչ քաշել մեր կուսակցության ծրագրի վրա, հիմնահատակ կերպով կործանել Կոմունիստական ինտերնացիոնալը և առհասարակ լուծել կոմունիստական կուսակցությունը: Իսկ ի՞նչ են ասում այդ մասին կյանքի արվյալները և միջազգային դրությունը: Դրանք բոլորն ապացուցում են մեր կուսակցության ծրագրի և տակտիկայի ուղիղ լինելը»[102]:

Ըստ էության լենինիզմի դեմ Տրոցկու կատարած ոտնձգություններին էր պատասխանում և նրա ղեկավարած օպոզիցիայի մանր-բուրժուական թևերումն էր ընդգծում թևերը, երբ գրում էր. «Եթե ընկ. Լենինն առողջ լիներ՝ լսելով եղած բոլոր առարկությունները, անպայմանորեն կասեր. «Ինձանից ավելի ձախ մի՛ լինեք», և իրոք, ոչ ոք թող չասի, որ Մարքսի վարդապետության էությունն ավելի լավ է ըմբռնել, քան ընկ. Լենինը»[103]:

Ռ(բ)Կ XIII կոնֆերանսը (1924 թ. հունվար) դատապարտեց տրոցկիստական օպոզիցիան: Ինչպես ընդգծված է կոնֆերանսի՝ «Դիսկուսիայի արդյունքների և կուսակցության մեջ մանր-բուրժուական թեքման մասին» բանաձևում՝ «ի դեմս այժմյան օպոզիցիայի մենք մեր առաջ ունենք ոչ միայն բոլշևիզմի ռևիզիայի փորձ, ոչ միայն ուղղակի նահանջ լենինիզմից, այլև պարզորոշ արտահայտված մանրբուրժուական թեքում..., որի դեմ անհրաժեշտ է մեր ամբողջ կուսակցության սիստեմատիկ ու հետևողական պայքարը»[104]:

Պարբերական մամուլի պայքարը մարքսիզմ-լենինիզմի անաղարտության պահպանման, կուսակցության միասնության համար նոր թափով ծավալվեց Վ. Ի. Լենինի մահից հետո: Կուսակցությունը և ժողովուրդը, նշում էր մամուլը, անփոխարինելի կորուստ կրեցին, բայց երբեք չընկճվեցին. հարկավոր է լարել բոլոր ուժերը, հաղթահարել մեծ կորստի ցավը, հանդես գալ միասնաբար, առավել տոկուն ու համախմբված: Լենինի հիշատակի լավագույն հավերժացումը կլինի նրա անմահ գաղափարների կենսագործումը, նրա ավանդներին հավատարիմ մնալը՝ մարդկության պատմական զարգացման մեջ բացված նոր ու անծանոթ ուղիներում:

---

102 Նույն տեղում, Ֆ 288:

103 Նույն տեղում, Ֆ 292:

104 «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մ. I, էջ 999:

Մեր հանրապետության թերթերի ու հանդեսների՝ առաջնորդի հիշատակին նվիրված համարները, մամուլի էջերում բացված «Լենինյան անկյուն»-ները, աշխատավորների նամակները, ոգո միտինգներում ընդունված բանաձևերը ներթափանցված են անսահման սիրով ու երախտագիտությամբ, Լենինի ստեղծած ու կոփած կուսակցության շուրջն ավելի սերտորեն համախմբվելու պատրաստակամությամբ: Կարևոր մոբիլիզացնող նշանակություն ունեցավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի՝ «Կուսակցությանը, բոլոր աշխատավորներին» դիմումի հրապարակումը: Թերթերը տպագրեցին ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի, ՀԿ(բ)Կ Կենտկոմի կոչերը, մարտաշունչ առաջնորդողներ, հրապարակախոսական հակիրճ ու ազդեցիկ ելույթներ, բանաստեղծություններ, հիշողություններ, Լենինի կյանքն ու գործը բնութագրող հոդվածներ, աշխատանքի մարդկանց սրտից բխած հուզիչ խոսքեր...

Միանգամայն բնական էր, որ խորհրդային հայ մամուլում և հրապարակախոսության մեջ առանձնակի ընդգծվում էր մի թեմատիկա, որը կարելի է ձևակերպել այսպես՝ «Լենինը և Հայաստանը»: Թերթերն ու հանդեսները այդ օրերին կրկին անդրադարձան Հայաստանի խորհրդայնացման առթիվ Հեղկոմին հղած Լենինի հեռագրին, Կովկասի կոմունիստներին ուղղված նրա պատմական նամակին, կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության արդյունքներին: Առաջնորդվելով Լենինի պատգամներով, ընդգծում էր մամուլը, Հայաստանի աշխատավորները ձեռք են բերել աչքի ընկնող նվաճումներ:

Ինչպես խորհրդային Միության մամուլն առհասարակ, այնպես էլ Հայաստանի պարբերականները կարևոր նշանակություն էին տալիս լենինյան ժառանգության մասսայականացմանը. արտատպում էին նրա հոդվածներն ու ճառերը, նամակներն ու գրությունները, որոնց մի զգալի մասը հրապարակվում էր առաջին անգամ՝ «Լենինի նոր փաստաթղթերը», «Լենինի չհրատարակված հոդվածները», «Լենինի չհրապարակված նամակները» և այլ խորագրերի ներքո, համապատասխան ծանոթագրություններով ու մեկնաբանությամբ: Ի դեպ՝ լենինյան ժառանգության նոր էջերը պարբերաբար հասարակայնությանը ներկայացնելը գեղեցիկ ավանդույթ դարձավ մամուլի համար, և մինչև 1930-ական թվականների կեսը առաջնորդի ծննդյան կամ մահվան յուրաքանչյուր տարելիցը նշանավորվում էր նաև նրա անվան ու հիշատակի հետ կապված նոր փաստաթղթերի, արխիվային նյութերի հրապարակմամբ:

Ագիտացիոն, բացատրական ու կազմակերպչական մեծ գործ կատարեց պարբերական մամուլը լենինյան կոչի անցկացման ժամանակաշրջանում, երբ կուսակցության մեջ մոտ 250 հազար առաջավոր բանվորներ: Զգալիորեն մեծացավ կոմունիստների թիվը նաև Հայաստանում, մեկ ու կես տարվա ընթացքում աճելով ավելի քան 50 տոկոսով[105]: Մամուլը իր իմաստ և պատմական մեծ արժեք էր տեսնում լենինյան կոչի մեջ՝ մի շարք առումներով: Դա, նախ և առաջ, լավագույն ապացույցն էր բուրժուական գաղափարախոսների այն գուշակությունների սնանկության, թե Լենինի մահից հետո կոմունիստական կուսակցությունը կքայքայվի, կբարոյալքվի: Լենինյան կոչի հաջող իրականացումը գնահատելով իբրև խորհրդային Միության բանվոր դասակարգի պատմության «փառավոր էջերից մեկը», «Լենինյան զորակոչը» առաջնորդողում «Խորհրդային Հայաստան»-ը եզրակացնում էր, որ այդ մասսայական շարժումը դեպի լենինյան կուսակցությունը դալիս է մի անգամ ևս հաստատելու այն ճշմարտությունը, թե շատ են իրոք կոմունիստական կուսակցության հիմքերը բանվոր դասակարգի մեջ, շատ է դրավիչ նրա հեղափոխական հմայքը, մեծ է հավատը դեպի նրա ուժը և կարողությունը[106]: Բանվորների բուռն ձգտումը դեպի կուսակցությունը հաստատումն է նաև այն ճշմարտության, թե՝ «Լենինի ժառանգը հանդիսանում է կոմունիստական կուսակցությունը, որը կոլեկտիվ աշխատանքով պիտի տանի կուսակցության շարունակությունը»[107]: Եվ վերջապես, դա վկայում է, որ «ներքին սուր դիսկուսիայից հետո ոչ թե թուլացել, այլ հզորացել է կոմունիստական կուսակցությունը, որ նրա հմայքն անկուսակցական բանվորների աչքում ավելի մեծացել է»: «... Բանվորների վերաբերմունքը դեպի կուսակցությունը կարելի է համարել լավ բարոմետր կուսակցության կենսունակության, նրա ուժի»[108],— եզրակացնում էր թերթը:

Հայաստանի առաջավոր բանվոր երիտասարդությանը՝ կոմերիտականներին կուսակցության մեջ ընդունելու կոչով հանդես եկավ «Ավանգարդ»-ը: Դրանով, գրում էր թերթը, «այսօր մի ավելորդ անգամ էլ կապացուցվի, որ կոմերիտմիությունը իրոք պրոլետարիատի դասակարգային պայքարը ղեկավարող կոմկուսի հիմ-

105 Տե՛ս «Կոմունիստ», 1925, № 3—4, էջ 11—12:
106 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, № 67:
107 Նույն տեղում, № 27:
108 Նույն տեղում:

նական ուղերձն է. մի կազմակերպություն, որը հեղափոխությանը անընդհատ թարմ ուժեր է մատակարարում»[109]:

Կուսակցության այս նոր մեծ համալրումը կարևոր խնդիրներ դրեց նաև մամուլի առջև: ՌԿ(բ)Կ Կենտկոմն այս կապակցությամբ համապատասխան որոշումներ ընդունեց, շրջաբերականներ ու նամակներ հղեց, որոնք հանդիսացան պարբերական մամուլի առաջիկա աշխատանքի հիմքն ու ծրագիրը («Կուսակցության մեջ հասարակ բանվորներ ընդունելու «Լենինյան կոչի» կապակցությամբ կուսակցական մամուլի կազմակերպչական-դաստիարակչական խնդիրների մասին», «Կուսակցության «Լենինյան կոչի» նոր անդամներին «Պրավդա»-ի շուրջը համախմբելու և նրանց շրջանում «Պրավդա»-ի բաժանորդներ հավաքագրելու մասին», «Լենինյան կոչն օգտագործելու համար մամուլում կիրառվելիք կամպանիայի մասին»): ՌԿ(բ)Կ XIII համագումարը «Մամուլի մասին» հայտնի բանաձևում ընդգծեց, որ բանվորական մամուլի կարևորագույն խնդիրն է՝ սպասարկել լենինյան կոչով ընդունվածներին, դաստիարակել նրանց բոլշևիզմի ոգով, ներգրավել կուսակցական ու հասարակական գործնական աշխատանքի մեջ[110]:

Այս կարևորագույն ցուցումների, ինչպես և ՀԿ(բ)Կ Կենտկոմի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ զգալիորեն բարելավվեց կուսակցական-դաստիարակչական աշխատանքի դրվածքը նաև մեր հանրապետության մամուլում. աշխուժացավ «Խորհրդային Հայաստան»-ի «Կուսակցական կյանք» բաժինը, բարձրացավ «Կոմունիստ» ժուռնալի գաղափարական-տեսական մակարդակը, կուսշինարարության խնդիրներին սկսեցին ավելի շատ ուշադրություն նվիրել «Բանվոր»-ը, «Կարմիր առաջապահ»-ը, «Կարմիր գինվոր»-ը, մյուս պարբերականները:

Կոմունիստական կուսակցության միասնության և լենինիզմի կենսահաստատ ուժի մի նոր հավաստումը եղավ ՌԿ(բ)Կ XIII համագումարը, որն ընդունեց սոցիալիստական շինարարության և քաղաքական-կուլտուրական աշխատանքների հետագա ծավալման վերաբերյալ մի շարք կարևոր որոշումներ (կոոպերացիայի, գյուղում տարվող աշխատանքի, կուսակցական-կազմակերպչական հարցերի, ներքին առևտրի ու ապրանքաշրջանառության, երիտասարդության մեջ տարվող աշխատանքի, մամուլի մասին և այլն): Համա-

---

109 «Ավանգարդ», 1924, № 9։

110 Տե՛ս «Պարտիական և սովետական մամուլի մասին», էջ 421։

գումարը հաստատեց XIII կուսակոնֆերանսի՝ կուսակցական շինարարության և դիսկուսիայի արդյունքների ու կուսակցության մեջ մանր-բուրժուական թեքման վերաբերյալ որոշումները, միահամուռ կերպով դատապարտելով տրոցկիստական օպոզիցիայի պլատֆորմը՝ որպես մարքսիզմից կատարված մանրբուրժուական թեքում և լենինիզմի ուրիպիա։

Սա առաջին համագումարն էր, որ տեղի ունեցավ առաջնորդի մահից հետո։ Համագումարի բացումից երեք օր առաջ այդ խոշոր իրադարձությանը նվիրված խմբագրականում «Խորհրդային Հայաստան»-ը հաստատ համոզմունք էր հայտնում, որ չնայած առաջնորդի բացակայության, համագումարը կընթանա «լենինյան ուղիով, առաջադրված խնդիրները կլուծվեն լենինյան մեթոդներով»։ Դրա երաշխիքն այն է, գրում էր թերթը, որ «Լենինի հանճարը արմատորեն է լուսաբանել պատմական ներկա էտապի խնդիրները, հիմնովին ու հաստատուն դնել աշխատանքի ղեկավար ուղիները. նա թողել է աշխատանքի լենինյան մեթոդի անզուգական զենքեր, թողել է նաև այդ զենքերի լեզուն իմացող, նրանցով կռված և հաղթած կոմունիստական կուսակցությունը—այդ վիթխարի հարստությունն է թողել ընկ. Լենինը»[111]։

«Առանց Լենինի, Լենինի հետ» լոզունգը, գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը համագումարի ավարտին նվիրված առաջնորդողում, իր լավագույն հաստատումը գտավ համագումարի որոշումներում՝ «ի սարսափ և ի հիասթափում թշնամիների»։ «Կապիտալիստական աշխարհի տարիրդիկ, ջլատված ուժերի դեմ ու դիմաց ցցված միաձույլ լենինյան դրանիտ է մեր կուսակցությունը,—ընդգծում էր թերթը,— այդ դրանիտի մեջ չկան ճեղքվածքներ, որտեղից ներս սողոսկի մանր-բուրժուական տարերքի քայքայիչ ջուրն ու քամին. Խորհրդային Միության բանվորների ու գյուղի պրոլետարիատի առաջ, Հոկտեմբերյան հեղափոխությամբ ազատագրված ժողովուրդների ու համայն միջազգային պրոլետարիատի առաջ պարզկերես կանգնած է Լենինի կուսակցությունը»[112]։

Ինքնին՝ Խորհրդային Հայաստանում հրատարակվող պարբերականները զգալի տեղ էին հատկացնում միջազգային հեղափոխական շարժումների, ազգային-ազատագրական պայքարի, միջազգային դրության լուսաբանմանը, ընդգծելով կոմունիստական կուսակ-

---

111 «Խորհրդային Հայաստան», 1924, № 114։

112 Նույն տեղում, № 123։

ցության և խորհրդային կառավարության լենինյան խաղաղասիրական քաղաքականության վճռական նշանակությունը ժողովուրդների հետագա բախտի համար։

Խաղաղ համագործակցության լենինյան սկզբունքից ելնելով՝ մամուլը պրոպագանդում էր կապիտալիստական երկրների հետ նորմալ հարաբերություններ հաստատելու համար խորհրդային Միության գործադրած ջանքերը, դինաթափման խնդրում նրա ցուցաբերած անկոտրում կամքը, միաժամանակ մերկացնելով իմպերիալիստական դիվանագիտության դավերն ու խարդավանքները, միջազգային ռեակցիայի բացահայտ ու թաքուն պրովոկացիաները։ Ճենովայի կոնֆերանսին նվիրված բազմաթիվ խմբագրականներից մեկում «Խորհրդային Հայաստան»-ը ընդգծում էր. «...Կոնֆերանսը վերջացավ կապիտալիստական գիշատիչների ծրագրերի փլուզումով և խորհրդային Ֆեդերացիայի բարոյական խոշոր հաղթանակով, որն անօրինակ բարձրացրեց եվրոպական բանվորության աչքում նրա հմայքը և նրա առաջադրած ծրագրերի փրկարար էությունը վիթխարի ազդանների առաջ կանգնած Եվրոպայի համար»[113]։

Խորհուրդների երկրին ապրեսիվ ձգտումներ վերագրելու իմպերիալիստական պրոպագանդայի նկրտումները որակելով սոսկ իբրև «արևմտյան գազետիչների ողորմելի և անմիտ մի փորձ», «Պրավդա»-ն «Հաշտվելու կամք է պետք» խորագրով հոդվածում, որն արտատպեց նաև «Խորհրդային Հայաստան» թերթը[114], գրում էր. «...Մեղադրական ի՞նչ ապացույցներ կարող են բերել Արևմուտքի այդ ժուռնալիստներն ու քաղաքագետները։ Իհարկե, ոչինչ, բացի անհիմն կասկածներից ու շինծու-վրդովված դատարկ ճառերից։ Իսկ մենք դրանց անհիմն համոզումներին կարող ենք հակադրել խորհրդային հանրապետության հնգամյա ամբողջ պատմությունը. խորհրդային հանրապետությունը ծնվեց հաշտություն բառը շուրթերին և... փոթորկալից իր ամբողջ կյանքի ընթացքում ոչ մի բոպե չի մոռանում իր այդ առաջին ու վեհ նշանաբանը»։

Պարբերականները բազմաթիվ նյութեր, հատկապես առաջնորդողներ նվիրեցին Գենուայում ծավալված հեղափոխական դեպքերին, Լոզանի կոնֆերանսին, խորհրդային ակնառավոր դիվանագետ ու հրապարակախոս Վ. Վորովսկու չարանենգ սպանության և Քերզոնի ուլտիմատումի առթիվ մեր ամբողջ երկրում ծայր առած

---

113 *«Խորհրդային Հայաստան», 1922, № 113։*

114 *Տե՛ս նույն տեղը, № 265։*

համաժողովրդական վրդովմունքի արտահայտություններին... Իմպերիալիստների մոլեգին ատելության և խելահեղ պրովոկացիաների հիմնական պատճառն այն է, բացատրում էր Մամուլը, որ աշխարհում միակ բանվորա-գյուղացիական պետությունը իր գոյությամբ իսկ հեղափոխականացնող ազդեցություն է թողնում երկրագնդի բոլոր աշխատավորների և գաղութային ժողովուրդների վրա. «...Մանչեստրի ջուլհակը, Ուելսի ածխահատը, Եգիպտոսի ֆելլահն ու Հնդկաստանի ռայան, նրանք բոլորը սովորում են Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ազատարար դասերը։ Անգլիական փորձված իմպերիալիստների համար այս փաստը եթերային էություն չունի, այլ ունայ, անմիջական, համառ փաստ է, որ կրծում է բրիտանական իմպերիալիզմի գոյության արմատները»[115]։

Մամուլի էջերում իր վառ արտահայտությունն է գտնում մեր բազմապլան հայրենիքի բանվորա-գյուղացիական զանգվածների՝ իմպերիալիստական ռեակցիայի ոտնձգություններին վճռական հակահարված տալու պատրաստակամությունը։ Նրանք խորապես ըմբռնում և պաշտպանում են կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության քաղաքականությունը միջազգային հարաբերությունների բոլոր ասպարեզներում։ Արտահայտելով մեր հանրապետության աշխատավորների վերաբերմունքը, ՀԿ(բ)Կ կենտրոնական օրգանը խմբագրականներից մեկում ընդհանրացնում էր. «Դժվար է գտնել մի բանվոր, մի գյուղացի, որ չհասկանա, թե խորհրդային Հայաստանի, խորհրդային ողջ Միության արտաքին քաղաքականությունը խաղաղության և անկախության քաղաքականություն է»[116]։

* * *

Այսպիսով, մեր հանրապետության պարբերական մամուլի հիմնական նպատակադրումներից մեկը պայքարն էր հանուն խորհրդային իշխանության ամրապնդման. թերթերն ու հանդեսները մեծ տեղ էին հատկացնում այն խնդիրների պարզաբանմանը, որ ծառացել էին Հայաստանի կուսակցական կազմակերպությունների և աշխատավորության առջև այս ասպարեզում։ Մամուլի օրգաններում բացահայտվում էին դաշնակցական հակահեղափոխության

115 Նույն տեղում, 1923, № 102։
116 Նույն տեղում, 1924, № 232։

խարդավանքները, պայքարի «մեթոդները», ավանտյուրիստական քայլերը: Պարբերականները դպրի դեր կատարեցին ինչպես փեսբրվարյան հակահեղափոխության քննադատության, այնպես էլ զանգվածների ավանտյուրան լիկվիդացնելու գործում՝ ծավալելով ագիտացիոն-պրոպագանդիստական և բացատրական լայն աշխատանք բնակչության ամենատարբեր խավերում: Թերթերի ու հանդեսների էջերում ամբողջ ուժով հնչում էր խաղաղ-ստեղծագործ աշխատանքի կոչը:

Պարբերական մամուլն իր կարևորագույն խնդիրներից մեկն էլ համարում էր կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության սկզբունքների պաշտպանությունն ու պրոպագանդան: Թերթերն ու հանդեսները պարբերաբար-հիմնավորվում էին անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերատիվ միասնության կենսական նշանակությունը, ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրական համագործակցությունը դիտելով իբրև սոցիալիստական-ազգային վերածննդի հիմնական երաշխիքներից մեկը: Պարբերականներն առանձնապես բարձր էին գնահատում ռուս ժողովրդի անշահախնդիր օգնությունը՝ այն համարելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի փայլուն արտահայտություն: Մեր հանրապետության մամուլը ամեն կերպ նպաստում էր ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքների ճիշտ և նպատակասլաց կազմակերպմանը, ինտերնացիոնալիզմի լենինյան սկզբունքների կենսագործմանը:

Պարբերականները, հատկապես կուսակցական թերթերն ու հանդեսները մեծապես օգնեցին կուսաշխատանքի վերակառուցմանը, ագիտացիայի ու պրոպագանդայի գործնականության ուժեղացմանը, կուսբջիջների կազմակերպչական աշխատանքի արդյունավորմանը:

Նշանակալից գործ կատարեց պարբերական մամուլը կուսակցության միասնականության ամրապնդման համար մղված պայքարում. մեր հանրապետության թերթերն ու հանդեսները ևս դատապարտում էին Տրոցկու և նրա համախոհների պառակտողականքայքայիչ նկրտումները՝ կանգնելով լենինյան դիրքերի վրա: Վ. Ի. Լենինի մահից հետո մամուլն ավելի ուժեղացրեց պայքարը լենինիզմի անաղարտության պահպանման, կուսակցության միասնականության ամրապնդման և մեծ առաջնորդի ավանդների անշեղ կիրառման համար:

ԳԼՈՒԽ II

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Նոր տնտեսական քաղաքականության հարցերը մամուլում. պայքար նեպ-ի նիշտ կիրառման համար՝ ընդդեմ մանր-բուրժուական տարերքի: Ոռոգման և կոոպերացիայի խնդիրների արծարծումը մամուլում. կոոպերատիվ պարբերականներ. «Հայաստանի կոոպերացիա», «Հայկոոպի տեղեկատու», «Վերածնունդ», «Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիա»: Գավառային մամուլի ընդհանուր բնութագիրը: Կոմերիտական և զինվորական պարբերականներ: Գյուղացիական և գյուղատնտեսական մամուլը. «Մանկալ» թերթը և «Գյուղատնտեսական կյանք» հանդեսը: Արդյունաբերության կազմակերպման խնդիրներից. արհեստակցական շարժման աշխուժացումը, արհմիութենական մամուլի օրգանները:

1

1921 թ. մարտին ՌԿ(բ)Կ X համագումարը որոշեց պարենամանուրումը փոխարինել պարենհարկով, ազատական կոմունիզմից անցնել նոր տնտեսական քաղաքականության: Պատմական այդ միջոցառումը, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, նպատակ ուներ ճիշտ փոխհարաբերություն հաստատել բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, ամրապնդել նրանց դաշինքը, վերափոխել, վերազատիարակել երկրի բնակչության մեծամասնությունը կազմող մանր գյուղացիությանը՝ ստիճանաբար ներգրավելով նրան սոցիալիստական շինարարության մեջ, ինչպես նաև նախադրյալներ ստեղծել արդյունաբերության վերականգնման, սոցիալիզմի հիմքերի կառուցման համար[1]:

---

1 *Տե՛ս* Վ. Ի. Լենին, *Պարենային հարկի մասին, Երկեր, հ. 32, էջ 419—468։*

Նախապատրաստական որոշ ձեռնարկումներից հետո, 1921 թ. հունիսի 24-ին հրապարակվեց ՀՍԽՀ ժողկոմխորհի դեկրետը «Պարենաուրքի մասին», որով սկսվեց նոր տնտեսական քաղաքականության գործնական կիրառումը մեր հանրապետությունում: Հեռանդական աշխատանք ծավալեց այս ուղղությամբ պարբերական մամուլը, որի էջերը կարևոր դեր խաղացին ինչպես նոր տնտեսական քաղաքականության պարզաբանման, այնպես էլ նրա կիրառման ընթացքում նկատվող խոտորումների, նեպ-ի էության միակողմանի, հաճախ վտանգավոր ըմբռնումների բացահայտման ու քննադատության գործում:

Նեպ-ի հարցերը քննարկելիս, ինչպես և առհասարակ Հայաստանում կոմունիստական քաղաքականության իրագործման խնդիրներին նվիրված էջերում, խորհրդահայ պարբերական մամուլն առաջնորդվում էր Վ. Ի. Լենինի այն պատմական ցուցումներով, որ շարադրված են «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղված նամակում: Սրագրային այդ փաստաթուղթը հրապարակվեց 1921 թ. մայիսի 10-ին[2]: «Ընկեր Լենինը,— գրում էր «Կոմունիստ»-ը,— մեզ խորհուրդ է տալիս, որպես մեր մեծ հեղափոխության ուսուցիչ, վարել... մեղմ, դիջող քաղաքականություն մանր բուրժուազիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ. մենք այդ խորհուրդը ընդունում ենք և կկիրառենք»: «Միևնույն ժամանակ,—շարունակում էր թերթը,—մենք մեր դիջումներում և մեղմության մեջ կլինենք և պիտի լինենք զգաստ, զգույշ և չափավոր»[3]:

Այսպիսի նախազգուշացումն ուներ իր շարժառիթը: Բանն այն է, որ լենինյան հայանի ցուցումները յուրովի ըմբռնվեցին որոշ տատանվող տարրերի կողմից, իսկ դասակարգային հակառակորդները դրանք «մեկնաբանում» էին իրենց ձեռնտու տեսանկյունից՝ ուղղակի հարձակում գործելով սոցիալիստական հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական սկզբունքների վրա: Ահա թե ինչու կոմունիստական կուսակցությունը մամուլի իր օրգանների միջոցով անհրաժեշտ համարեց կրկին հիշեցնել, որ վարելով տեղական պայմանների յուրօրինակությունից բխող համապատասխան գործելակերպ, «Հայաստանի խորհրդային կառավարությունը չի կարող հրաժարվել բանվորա-գյուղացիական հեղափոխության

2 «Կոմունիստ», Երևան, 1921, № 79։

3 Նույն տեղում, № 81։

Լական սկզբունքներից»։ Այս հիշեցումն ուղղված էր բոլոր նրանց, ովքեր «հենվելով կուսակցության կողմից կիրառվող նոր քաղաքականության վրա», ձգտում էին հովանավորել պորտաբույծ սեփականատերերին, գյուղը շահագործողներին, սպեկուլյանտներին։ ««Հակաժողովրդական աջության» այդ հիվանդությունը,— բացատրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— հաճախ հակադրվում է երևույթական «ձախության»։ Եվ իրոք, վերահիշյալ նորօրյա «մենշևիկները», ինչ խոսք, կառչում էին նաև այնպիսի «զորավոր փաստարկներից», ինչպիսիք տեղական իշխանության որոշ օրգանների ձախություններն էին տնտեսական և իրավա-օրենսդրական բաղաքականության կիրառման պրակտիկայում։ «Բանվորա-գյուղացիական պետության համար,— եզրակացնում էր Թերը,— այդ երկու թեքումներն էլ անընդունելի են։ Մեզ համար վնասակար են թե՛ անիմաստ ռեկվիզիցիաներն ու հալածանքները և թե՛ բուրժուաների հովանավորումը»[4]։

Լուրջ խոչընդոտներ էին հարուցում նաև թալմուդիզմն ու «հեղափոխական տատակերությունը». կուսակցական և պետական գործունեության առանձին օղակներում ոմանք չկարողացան անհապաղ և մինչև վերջ ըմբռնել Ռուսաստանի փորձը տնտեսագործարար յուրացնելու այն վճռական պահանջը, որ Վ. Ի. Լենինը ձևակերպել էր այսպես. «...Ամենից ավելի կարևոր է, որ Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց հանրապետությունների դրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌԽՖՍՀ դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[5]։ Լենինյան այս կարևորագույն պահանջի պարզաբանմանն ու հետևողական կիրառմանը մեծ ուշադրություն էր նվիրում Ալ. Մյասնիկյանը՝ իր ելույթներում և հոդվածներում հաճախակի անդրադառնալով Ռուսաստանի փորձի «բառացի ընդօրինակության» փաստերին, ընդգծելով այդ երևույթի վնասակարությունը։ «Այսօրվա Հայաստանում,— գրում էր նա,— պետք է կիրառել խորհրդային կարգերը, պետք է ուժեղացնել կոմունիստական շարժման տաղմերը, բայց առանց բառացի ընդօրինակության, առանց անպատճառ կրկնելու այն ամենը, որ տեղի է ունեցել Ռուսաստա-

---

4 *«Խորհրդային Հայաստան», 1921, № 102։*

5 *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 402։*

նում, որովհետև մեծ Ռուսաստանի կարմիր գոտին մեր վտիտ մարմնի համար շատ երկար կլինի, ինչպես հոր գոտին Սասունցի Դավթի մեջքին։ Եվ դա կլինի ծիծաղելի։ Եվ դա անօգուտ է, ինչպես այդ մենք տեսնում ենք։ Եվ դա, ավելին, նույնիսկ վնասակար է»[6]։

* * *

Պարբերական մամուլը բացատրում-պարզաբանում էր այն կարևորագույն նշանակությունը, որ ուներ նոր տնտեսական քաղաքականության իրագործումը մեր հանրապետության գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն աշխուժացնելու, պարենավորման ճգնաժամը հաղթահարելու, բանվոր դասակարգի ու չքավոր գյուղացիության դաշինքն ամրապնդելու, աշխատավորության բարեկեցությունն ապահովելու համար։ ««Պարենավորման տուրքի» հարցը,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— մեզ մոտ, Հայաստանում պիտի ունենա նույնքան կարևոր նշանակություն, ինչպես և Ռուսաստանում»։ Եվ ապա, նշելով, որ կառավարությունը ձեռք է առնում բոլոր միջոցները՝ քանդված տունները կարգի բերելու, ոռոգումը կազմակերպելու ուղղությամբ, սերմացու և երկրագործական գործիքներ է ուղարկում գյուղերը, թերթն ընդգծում էր պարենհարկի հաջող անցկացման համար տեղերում լայն նախապատրաստական աշխատանք տանելու անհրաժեշտությունը. «Մենք կարծում ենք, որ խորհրդային իշխանության տեղական օրգանները պիտի օր առաջ լայնորեն բացատրեն և բացեն գրված խոսքերը ամենալայն շրջաններում և մշակեն ավելի հարմար և բնակչության ուժերին համապատասխան ձևեր»[7]։

Ըստ որում՝ մամուլը հորդորում էր նկատի ունենալ պարենհարկի կիրառման որոշ յուրահատկությունները մեր հանրապետությունում։ Նախ՝ ընդհանուր առմամբ այստեղ պարենհարկի չափերն ավելի նվազ էին, քան Ռուսաստանում, որովհետև կառավարությունը հաշվի էր առնում Հայաստանի գյուղատնտեսության ծայրաստիճան քայքայված վիճակը և չքավոր հողագործների ու գաղթականության վատթարագույն կենսապայմանները։ Այնուհետև՝ Հայաստանում խորհրդային իշխանությունը օրենքով չէր հաստատել հացահատիկների և առհասարակ գյուղատնտեսական արտադրանքների պետական մենաշնորհ։ Այդ չի նշանակում, սակայն, հիշեցնում էր մամուլը, թե «Հայաստանում չի կիրառվել գյուղացու

6 «Խորհրդային Հայաստան», 1922, № 81։

7 Նույն տեղում, 1921, № 103։

արտադրության ավելցուկների ստացումն հօգուտ պետության». բաղաքացիական կռվի ծանր պայմաններում խորհրդային իշխանությունը ստիպված էր մասնակի դեպքերում կատարել ռեկվիզիցիաներ՝ «Կարմիր բանակի պետքերի համար», «մի հանգամանք,— բացատրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— որ չի մտել խորհրդային իշխանության ծրագրի մեջ Հայաստանում» և «անշուշտ ծանր է եղել գյուղացիության համար»։ Ներկայումս կիրառվող պարենհարկը, շարունակում էր թերթը, «միանգամայն հաշվի է առնում գյուղացու շահերը։ Մասնավորապես և հատկապես չքավոր գյուղացիությունը, որոշ ստիճանից ցած, միանգամայն ազատվում է տուրքից»[8]։

Պարբերական մամուլը ելնում էր այն իրողությունից, որ պարենհարկի կիրառումը միանգամայն նոր և պատասխանատու խնդիրներ է դնում տեղական տնտեսական ու հողագործական օրգանների, խորհրդային մարմինների և առանձնապես կուսակցական կազմակերպությունների առջև։ «Պարենտուրքի ամբողջ ծանրությունը և բարդությունը գործնականի մեջն է,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը «Պարենավորման աշխատանքը» խորագրով առաջնորդողում։—Անհրաժեշտ է հաշվի առնել գյուղացու մանրբուրժուական հոգեբանությունը, դուրս կորզել նրան սպեկուլյանտի ճիրաններից։ Երբ տնտեսական մարմինները, որ կոչված են տեղերում կազմակերպելու ապրանքների պետական փոխանակությունը, չեն կարողանում ի հայտ բերել անհրաժեշտ ճկունություն և ձեռներեցություն՝ սպեկուլյանտները հանդիսատ կերպով տեսնում են իրենց սև գործը»։ Պարենհարկային ապարատների աշխատողների առաջին պարտականությունն է լինելու՝ ճիշտ կերպով հաշվի առնել յուրաքանչյուր գյուղական տնտեսության մթերքների քանակը։ Խոշոր տնելիքներ ունի նաև Հայկոոպը։ Մեծ իրավունքներ տալով Հայկոոպին, կառավարությունը դրել է նրա վրա կարևոր պարտականություն՝ «պետությունից ստացած ապրանքները գյուղացիների հետ փոխանակել պետության կարիքների համար»։ Ճիշտ է, առայժմ պետությունը ի վիճակի չէ առատորեն ապրանքներ մատակարարելու գյուղին, բայց և այնպես, ընդգծում էր թերթը, «տրված Հայկոոպի տեղական օրգանները պետք է կարողանան այն ձևով շրջանառության մեջ ձգել, որ սպեկուլյանտի քիթը տրորեն, նրա ոտը գյուղից կտրեն»[9]։

---

8 Նույն տեղում, № 124։

9 Նույն տեղում, № 164։

ՀՍԽՀ ԺողԿոմխորհի պարենհարկի մասին դեկրետով, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, նոր շրջան է սկսվում խորհրդային իշխանության և Հայաստանի գյուղացիության փոխհարաբերությունների մեջ. մի հանգամանք, որ պարտավորեցնում է համապատասխանորեն վերակառուցել նաև կուսակցական կազմակերպությունների ագիտացիոն և մասսայական-կազմակերպչական աշխատանքը: Այստեղ հիմնականը պիտի լինի գյուղացիության ամենալայն շրջաններում այն գիտակցության ներարկումը, թե այս նոր միջոցառումը նպատակ ունի ամրապնդելու խորհրդային իշխանությունը, բանվորների և աշխատավոր գյուղացիության դաշինքը, պայմաններ ստեղծելու ժողովրդական տնտեսության հաջող վերականգնման համար: «Մեր ագիտացիան էլ պետք է փոխի իր բովանդակությունը, իր ձևերը,—գրում էր Թերթը,—կոմունիստական ագիտացիան էլ պիտի մտնի նոր շրջան. նա պետք է լինի տնտեսական ագիտացիա, պետք է գործ ունենա թվերի, ապյուսակների հետ, որպեսզի կոնկրետ կերպով կարողանա մատերիալիստ գյուղացուն հասկանալի դարձնել խորհրդային իշխանության տնտեսական նախաձեռնությունների գերազանցությունը և դյուրությունը գյուղացիության համար...»[10]:

Բնական է, որ մամուլը չէր կարող սահմանափակվել սոսկ բացատրական աշխատանքը ծավալելու, կոմունիստական ագիտացիայի բովանդակությունն ու ձևերը նոր տնտեսական քաղաքականության շահերին համապատասխանեցնելու անհրաժեշտությունն ընդգծելով: Միակողմանի ու պակասավոր կլիներ նրա գործունեությունը, եթե այդ ամենը չզուգակցվեր ոչ միայն պարենտուրքն իրականացնող մարմիններին, այլև առաջին հերթին կուսակցական կազմակերպություններին ու բոլոր կոմունիստներին գործնական ակտիվ աշխատանքի ներգրավելու ուղղությամբ գործադրվող ջանքերի հետ: ՀՍԽՀ ԺողԿոմխորհի դեկրետի հրապարակումից հետո ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Երևանի կազմակերպությունից 28 կոմունիստներ ուղարկվեցին գավառները: Այդ առթիվ տպագրված «Պարենտուրքի ֆրոնտը» հոդվածում «Խորհրդային Հայաստան» թերթն անդրադարձավ այն նոր պատասխանատու խնդիրներին, որ ծառանում էին յուրաքանչյուր կոմունիստի առջև կյանքի և աշխատանքի նոր պայմանների թելադրմամբ: Կոմունիստը, նշում էր թերթը, որ կոչված է ուղղություն տալու պարենտուրքի տեղական

10 «Խորհրդային Հայաստան», 1921, № 119:

օրգանների գործունեության, «առաջին անգամն է հանդես գալիս գյուղական լայն մասսաների առջև՝ իբրև տնտեսական ֆրոնտի գինվոր»։ Նա պիտի կարողանա կազմակերպչական նոր թափ ու եռանդ դրսևորել, ի հայտ բերել «լավ բանվորա-գյուղացիական տանտիրոջ, տնտեսության գլուխ կանգնած մարդու ընդունակություններ. նա պիտի կարողանա բավարարել խորհրդային պետության կարիքները՝ չխախտելով մանր-բուրժուական տնտեսության շահերը»[11]։ *Դա նախ և առաջ կուսակցական ներքին կարգապահության խնդիր էր։* «*Մեր դիսցիպլինայի ամենագլխավոր հիմնաքարը,—ընդգծում էր Թերթը,—պիտի կազմի նոր տնտեսական քաղաքականության ամրոցական բաբոնումը կուսակցական մասսաների կողմից և նրա գործնական ու մասսայական գործադրումը կյանքի մեջ*»[12]։

Այս չափանիշով էլ հենց պարբերական մամուլն անդրադառնում էր կուսակցության մեջ նկատվող այն տատանումներին ու շեղումներին, որոնք զգալի չափով հետևանք էին մանր-բուրժուական տարերքի ներգործության և կուսակցության որոշ անդամների մարքս-լենինյան անբավարար կոփվածության։ «*Նոր տնտեսական քաղաքականությունը,—գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,—շատ դժվարին ճանապարհ է մանավանդ Հայաստանում։ Որևէ միջոցներ անելով բուրժուազիային, անհրաժեշտ է ստեղծել սոցիալիստական տնտեսության հիմքեր ազքատիկ գյուղացիական մեր երկրում։ Սա դժվար է իբրև տնտեսական խնդիր, բայց դժվարին է ու վտանգավոր մեր կուսակցության համար իբրև հասարակական հոգեբանական փոխանցման մի շրջան, երբ մեր կուսակցության որոշ տարրերը կենթարկվեն մանր-բուրժուազիայի ազդեցությանը*»։

Այդ ազդեցության հետևանք էր համարում մամուլը միակողմանի, ըստ էության խեղաթյուրված այն ըմբռնումը, որի կրողները,—մեծ մասամբ գյուղացիական մանր-բուրժուական տարրերի և գյուղից չկտրված բանվորության հետ կապված կուսակցականներ,—«մեր նոր տնտեսական քաղաքականությունից հասկացել են և ընդունել այն, ինչ որ կոմպրոմիս է մանր-բուրժուական տարրերի հետ»։ Այդպես վարվել՝ նշանակում էր ըստ էության չըմբռնել կուսակցության կիրառած այդ վիթխարի միջոցառման իմաստը, նեղացնել ու սահմանափակել այն վերջնական նպատակը, հանուն որի կուսակցությունը իր լենինյան հանճարով մշակել ու կիրառում

---

11 *Նույն տեղում, № 150։*

12 *Նույն տեղում, № 221։*

էր իր նոր տնտեսական քաղաքականությունը։ Նրանք կորցնում են զարգացման հեռանկարները, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, «նոր տնտեսական քաղաքականության մեջ չեն կարողանում տեսնել այն կետերը, ճանապարհները, որոնցով գյուղացիությունը և բանվորությունը ընթանալու են դեպի կոմունիզմ»[13]։ Մի այլ առիթով թերթն ընդգծում էր, որ «տնտեսական նոր քաղաքականությունը «կոմպրոմիսների» գործելակերպ չէ, ինչպես կարծում են շատերը, այլ ավելի կատարելագործված և նպատակահարմար մի գենմ, որի միջոցով մենմ պիտի ամրացնենմ խորհրդային հայրենիքի տնտեսական շենմը»[14]։

Նեպ-ի հակառակորդների տեսակետների հերքումը մամուլը տեսնում էր այն գրական արդյունքների մեջ, որ ավել էր այդ քաղաքականության ճիշտ կիրառումը անցած ժամանակամիջոցում։

Պակաս վտանգավոր չէր նաև այն մտայնությունը, որն ի հայտ էր գալիս «ձախության» կերպարանքով։ Ճիշտ է, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, «ընկերներից շատերն իրոր տնալիտիկ կերպով են վերաբերվում այս վերջին մի քանի ամսվա տնտեսական արմատական փոփոխություններին, ըմբռնում այդ փոփոխությունների էությունը, իմաստը», սակայն չպետք է տեսնել և այն, որ ոմանք «հոռետես են և արամադիր են փնտրել մեր նոր քաղաքականության մեջ ինչ-որ տարօրինակ, անհասկանալի զիջումներ հօդուտ բուրժուազիայի, շեղումներ կուսակցական ծրագրից, բուրժուազիայի տնտեսական հաղթանակը և այլն և այլն»։ Այդպես կարծողները, շարունակում էր թերթը, գերի են դառնում «ռևիզիոնիստական մրտածելակերպին», չկարողանալով հասկանալ, որ «հանուն մեր վերջնական նպատակի՝ կոմունիզմի, կոմունիստական կուսակցությունը, որպես կյանքի և ոչ թե դոգմայի կուսակցություն, կարող է ժամանակավոր տակտիկական շեղումներ, զիջումներ անել, թողնելով անխախտ մեր ծրագրի կմախքը, պրոլետարիատի դիկտատուրան և կոմունիստական հանրակարգը»[15]։

Անդրադառնալով նույն այս խնդրին, Ալ. Մյասնիկյանն ասում էր. «Տնտեսական նոր քաղաքականությունը կիրառելու դեպքում մենք պետք է մեր կուսակցության շարքերում անողոք պայքար վարենք այսպես կոչված ձախ կոմունիզմի կամ, ինչպես ընկ. Լենինն

---

13 «Խորհրդային Հայաստան», 1921, № 171։

14 Նույն տեղում, 1922, № 278։

15 Նույն տեղում, 1921, № 218։

է ասում, կոմունիզմի պարտիզանշինայի դեմ»[16]։ Ալ. Մյասնիկյանը մատնանշում էր նոր տնտեսական քաղաքականությունը կիրառելիս Հայաստանի ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մարմինների սխալներն ու վրիպումները։ «Վերցնենք պարենտուրքի հարցը,— ասում էր նա։— Կենտրոնը հաճախ փոփոխության է ենթարկել պարենտուրքի չափը. նա հրատարակել է այնպիսի դեկրետներ, որոնցից մեկը վերացրել է մյուսի որոշումները և այլն։ Այդ բոլորը ստեղծում է խառնաշփոթություն, մթություն, անորոշություն։ Այնուհետև՝ մենք հանդիպում ենք մի շարք սխալների, երբ մենք մասսայական ճնշումներ ենք գործադրում տուրք չվճարողների նկատմամբ։ Այդ չպիտի լինի։ Մասսայական ճնշումները միայն անբավականություն են առաջացնում գյուղացիների մեջ և ոչ մի արդյունք չեն տալիս... Մեր մի ուրիշ սխալն այն է, որ մենք արդյունարերության շատ ճյուղերում դեռ չենք հրաժարվել տնտեսագործական սիստեմից։ Դեռ մինչև օրս էլ կատարվում են դրավումներ, անտեղի պետականացումներ և այլն, որոնք անցյալի ժառանգությունն են։ Այս առաջարկում էլ մենք պետք է անցնենք տրնտեսական նոր քաղաքականության համահավասար կիրառմանը, մասնավոր նախաձեռնության քաջալերմանը և այլն»[17]։

Իր առաջնորդողներից մեկում «Наша Правда» թերթը, ի մի բերելով նեպ-ի առաջին ամիսների արդյունքները, ընդգծում էր. «Արդեն այժմ ակնառու է, թե որքան ճիշտ էր կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության վերցրած նոր կուրսը»։ Միաժամանակ թերթը նշում էր, որ դեռևս մեծ վնաս են հասցնում այն ծուռ ու սխալ պատկերացումները, պրակտիկայում նկատվող ձախությունները, որոնք արտահայտվում են իբրև աշխատանքի հնացած, ժամանակավրեպ մեթոդների մնացուկներ։ «Այնտեղ,— գրում էր «Наша Правда»-ն,— ուր նոր տնտեսական քաղաքականությունը կիրառվում է ոչ թե սարսափի մեթոդով, այլ խղճի մտոք՝ հաշվի առնելով պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքական շահերն ու մեր երկրի տնտեսական շահերը՝ ակնառու են նոր կուրսի բոլոր օգուտները»։ «Բայց,—շարունակում էր թերթը,— ամենուրեք և բոլորի կողմից չէ, որ այդ նոր կուրսն ըմբռնվում է ճիշտ կերպով և կիրառվում անվերապահորեն։ Կարուկ շրջադարձը

16 Նույն տեղում, № 223։

17 Նույն տեղում։

դեռ ոչ բոլորին է բավարար չափով թափահարել։ Շատերը շարունակում են մտածել ու իրենց գործն անել ըստ «հնոց կարգի»[18]։ Պարզ է, որ թերթն ի նկատի ուներ այն խոտորումները, որոնց դեմ այդքան կրքոտությամբ խոսում էր Ալ. Մյասնիկյանը։

Նոր տնտեսական քաղաքականությունը ներթափանցում էր կյանքի բոլոր ոլորտները, այս կամ այն կերպ շոշափելով հասարակության բոլոր խավերի շահերը, անդրադառնալով տնտեսական և հասարակական հարաբերությունների բոլոր կողմերի վրա։ «Վերջին ութ ամսվա ընթացքում,— գրում էր «Արհեստակցական շարժում» բանվորական թերթը՝ նկատի ունենալով կուսակցության X համագումարից հետո անցած ժամանակաշրջանը,— խորհրդային հանրապետությունների առաջ կանգնած խոշորագույն խնդիրը տնտեսական նոր քաղաքականության կուրսն է հանդիսացել։ Բանվորա-գյուղացիական մասսաների մեջ ոչ մի հարց այսօր այնքան կենդանի հետաքրքրություն չի առաջացնում, ինչքան այդ նոր քաղաքականությունը»։ Եվ ապա, նշելով այն նոր վերաբերմունքը, որ դրսևորում էր խորհրդային իշխանությունը ինչպես հողագործության, արդյունաբերության, տարիֆային, ֆինանսական ու առևտրական հարցերում, այնպես էլ արտաքին փոխհարաբերություններում, թերթն ընդգծում էր այս առթիվ որոշ անկայուն տարրերի մեջ առաջացած սխալ պատկերացումների և «ձախ» մտորումների վնասակարությունը. նեպ-ի կիրառումով կոմունիզմի կառուցման շահերին իբր թե դավաճանելու և բուրժուական կարգերի վերականգնման վերաբերյալ նկրտումները կամա թե ակամա փաստորեն համընկնում էին այն գնահատությանը, որ տալիս էին բուրժուական պրոպագանդիստներն արտասահմանում նոր տնտեսական քաղաքականությանը։ Միակ տարբերությունն այն էր, որ եթե առաջիններն այդ անում էին «կոմունիզմի անունից», «սրտացավությամբ», ապա վերջիններս իրենց եզրակացությունները ձևակերպում էին ուղղակի թշնամական դիրքերից։ «Մինչև անցյալ տարվա վերջը և ներկա 1921 թ. սկզբից վարած տնտեսական քաղաքականության երկու կուրսերի մեջ տարբերությունն այնքան մեծ է,— շարունակում էր թերթը,— որ ոմանք ներկա քաղաքականությունը հակակոմունիստական են համարում, իսկ արևմտյան բուրժուազիան մեծ գոհունակությամբ հայտարարում է, որ իրենց նոր տնտեսական քաղաքականությամբ խորհրդային հանրապետությունները հրա-

---

18 «Наша Правда», Երևան, 1921, № 6։

ժարվում են կոմունիզմից, նրա անպտղությունը երևան հանում»[19]։

Նոր տնտեսական քաղաքականության կիրառումը, սակայն, տալիս էր իր դրական արդյունքները, որոնք Հայաստանում միայն պարենհարկի գանձման ասպարեզում արտահայտվեցին նրանում, որ 1921 թվականին, չնայած ծանր ու դժվարին պայմաններին, կառավարությունն ստացավ 175 հազար փութ հացահատիկ[20]։ Սա, անշուշտ, զգալի արդյունք էր, եթե նկատի ունենանք մեր հանրապետության այն ժամանակվա հնարավորություններն ու պահանջները։ Նշելով ազգարնակչության ցույց տված ինքնաբուխ աջակցությունն այդ կենսական միջոցառմանը, ՀՍԽՀ պարենավորման ժողկոմատն իր հաշվետվության մեջ ընդգծում էր, որ նման գիտակից վերաբերմունքը «ամենալավ ապացույց է խորհրդային իշխանության բարձր ժողովրդականության»[21]։

Պարենհարկի հաջող անցկացմանն զգալի չափով նպաստեց գավառական պարբերական մամուլը թե՛ ագիտացիոն-բացատրական և թե՛ կազմակերպչական աշխատանքով։ Մասնավորապես հիշատակության արժանի են «Կարմիր գյուղացի», «Կարմիր Լոռի», «Կարմիր Շիրակ» թերթերը, որոնք պարզ, հասանելի տեղական բարբառով գրված փոքրիկ հոդվածներով, դիպուկ առաջնորդողներով, գյուղացիների նամակներով, կոչերով, նկարագրական ու ինֆորմացիոն նյութերով հորդորում էին գիտակից ու կազմակերպված վերաբերմունք ցուցաբերել, ամեն կերպ աջակցելով բնական տուրքի գանձման համար նպաստավոր մթնոլորտի ստեղծմանը։ Գավառական մամուլը պարբերաբար հանդես էր գալիս պարենտուրքի գանձումը ձախողելու նպատակով տեղերում տարածվող զանազան պրովոկացիաների դեմ։ Այսպես՝ անդրադառնալով Զանգեզուրում շրջող այն լուրերին, թե տուրքը «կոմունիստները հավաքում են, որ ուղարկեն Երևան՝ Մյասնիկյանի և նրա ընկերների համար», «Կարմիր ռաշպար» թերթը կոչ էր անում չհավատալ այդ և դրա նման գրպարտություններին և պարզաբանում էր. «Խորհրդային իշխանությունը ձեզանից վերցնում է ավելը և նորից տալիս ձեզ. ինչպես ասում են՝ աջ գրպանից ձախն է գցում։ Այնպես որ՝ դուք ոչինչ չեք կորցնում։ Դուք գիտեք, որ այս տարի մորեխը ոչընչացրել է Տեղվա, Հալիձորի ողջ ցանքսերը և քաղաքի շրջանի, Ղա-

---

19 «Արհեստակցական շարժում», Երևան, 1921, № 7։

20 Տե՛ս «ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվությունը», Երևան, 1923, էջ 89։

21 Նույն տեղում, էջ 91։

փանի ցանքսերի կես մասը, և Զանգեզուրից միայն Սիսիանն է ազատ մնացել։ Խորհրդային իշխանությունը մորեխից ազատ մնացած տեղերից հավաքում է և տալիս վնասված տեղերին, որ նրանց ցելերը անսերմ չմնան... Ուրեմն ցո՛ւյց տվեք ձեր քաղաքացիական վեհ ու ազնիվ պարարը...»[22]։

Պարբերական մամուլն իրավացիորեն շեշտ դնում էր գյուղական աշխատավորության գիտակցության բարձրացման, կառավարության անցկացրած միջոցառումներին խորապես ըմբռնված վերաբերմունք ցույց տալու անհրաժեշտության վրա։ Եթե գյուղացիությունը պարզորոշ պատկերացում ունի, թե ինչ նպատակներ է հետապնդում բնական տուրքի դանձումը, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, «ապա հաջողության գրավականներից մեկը և ամենակարևորը կատարված է։ Խորհրդային իշխանության հաղթանակներից մեկը հենց նրանումն է կայանում, որ հանրապետության ամեն մի քաղաքացի... գիտակցաբար վերաբերվի դեպի պարենտուրքը»[23]։

Գործի հաջողությունը, սակայն, միայն աշխատավորության գիտակից վերաբերմունքով և պարենհարկը վճարելու պատրաստակամությամբ չէր պայմանավորված. անհրաժեշտ էր երբեք չթուլացնել կազմակերպչական կոնկրետ աշխատանքը, հսկողության տակ առնել և աջակցել պարենհարկային տեղական մարմիններին ու գործակալներին։ Արձանագրելով, որ 1922 թ. «պարենտուրքի կամպանիան սկսվեց չտեսնված խանդավառությամբ», ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը միաժամանակ զգուշացնում էր. «Հոգեբանորեն շատ հեշտ բացատրելի և հնարավոր է, որ գյուղացիության ընդհանրապես բարյացակամ վերաբերմունքը, պարենտուրք հանձնելու պատրաստակամությունը տեսնելով՝ տեղական գործիչները թուլացնեն դանձման թափը»։ Նման մոտեցումը համարելով «կորստաբեր, վտանգավոր հոգեբանություն», թերթը եզրակացնում էր. «Քաղաքականապես ապահովված է պարենտուրքը, բայց պետք է ուժեղացնել ապարատը»[24]։ *Հոկտեմբերի 29-ի առաջնորդողում, ուրախությամբ հայտնելով, որ պարենտուրքի դանձումը հանրապետությունում կատարված է 130 տոկոսով, «Խորհրդային Հայաստան»-ը իբրև ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակալից հան-*

---

22 «Կարմիր ռաշպար», Գորիս, 1922, № 33։

23 «Խորհրդային Հայաստան», 1922, № 149։

24 Նույն տեղում, № 208։

ղամանք էր գնահատում այդ կարևոր փաստը. պարենաբերի մուծումները գավառական կենտրոններում վերածվում են «գյուղացիության քաղաքական համակրանքի ցույցերի՝ խորհրդային իշխանության հանդեպ»։ Այդ ամենի մեջ թերթը ճիշտ կերպով նկատում էր կոմունիստական խոսքի և գործի ներդաշնակության պակասը. «Ոչ թե մեր լոկ խոսքով, ագիտացիայով, այլ կոմունիստական խոսքի և գործի նույնությամբ բաղամական գիտակցության եկած Հայաստանի աշխատավորությունը եկավ այս տարի էլ անտեսապես ապահովելու խորհրդային իշխանությունը, ապահովելու ինքն իրեն» (ընդգծումն իմն է—Հ. Ֆ.)։

Նեպ-ի պայմաններում, երբ թույլատրվում էր մասնավոր կապիտալի աշխուժացում և խրախուսվում մասնավոր նախաձեռնությունը, առանձնակի սրությամբ էր դրվում գյուղական շքավորության հետ կուսակցական կապմակերպությունների կապերն ամրապնդելու խնդիրը։ Այս պահանջը, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, վճռական կարևորություն է ստանում մանավանդ «Հայաստանի նման մի երկրում, ուր խճողված են հողային հարաբերությունները, ուր չկա գյուղատնտեսական վիճակագրություն». այնպես պիտի վարել այդ քաղաքականությունը, որ այն «բնական ընթացք առնի և չցամաքեցնի նոր-նոր ուժի կանգնող չունևոր գյուղացիության տնտեսական աղբյուրները»[25]։ Տնտեսական և հասարակական հարաբերությունների զարգացման բարդ ու հակասական ընթացքը թելադրում էր առավել ուշադրությամբ վերաբերվել աշխատավոր զանգվածների առօրյա հոգսերին ու պահանջներին, հաշվի առնել նրանց տրամադրությունն ու մտորումները՝ այդ ամենը միախառնելով հասարակության ոչ-հիվանդագին, բնականոն առաջընթացի գլխավոր հունի մեջ. «Նոր տնտեսական քաղաքականությունը, կյանքի կոչելով երկրի բոլոր կենսունակ և աշխատունակ ուժերը, մեզ վրա դնում է պարտականություն՝ միշտ մասսայի հետ, նրա առօրյա կյանքում հասունացած հարցերին տալ համապատասխան լուծում, լինի դա գործարանի արտադրության կամ վար ու ցանքի ասպարեզում»[26]։

Այդ շրջանում պարբերականների խմբագրությունները մտահոգված էին որքան կարելի է շատ տեղեկություններ ստանալ գյուղացիությանը հուզող ամենատարբեր հարցերի մասին, ջանում էին

---

25 Նույն տեղում, № 219։

26 Նույն տեղում, № 114։

արտացոլել գյուղի իրական պատկերը։ Այս ուղղությամբ ակտիվ ու հետևողական էր գործում մասնավորապես հանրապետության կենտրոնական գյուղացիական «Մաճկալ» թերթը։ Ելնելով այն իրողությունից, որ նոր կյանքի ծնունդը տեղի է ունենում բուռն, բարդ ու լարված պայքարի պայմաններում, թերթը առաջնակարգ նշանակություն էր տալիս գյուղերում կատարվող օրինազանցությունների, չքավորության շահագործման փաստերի, բոլոր տեսակի անարդարությունների բացահայտմանը, օրենքի ուշադրությունը բևեռելով նեպ-ի պայմաններում սնվող բացասական երևույթների վրա։ Խմբագրությունը, բնականաբար, ակտիվ աջակցություն էր կանչում գյուղի չքավոր, ունեցվուրկ տարրերին։ «Չկարծեք,— գրում էր թերթը,— որ խորհրդային իշխանություն հաստատված-չհաստատված աշխարհիս բոլոր անարդարությունները, անօրինականությունները վերացան։ Խորհրդային իշխանությունը էնքան էլ միամիտ չէ, որ այդպիսի հեքիաթներ պատմի, կամ էլ տեսակ հեքիաթների հավատա»։ Եվ ահա բոլոր չարիքները վերացնելու համար մղած իր պայքարում, նշում էր թերթը, խորհրդային իշխանությունը մեծապես զգում է հենց իրենց՝ աշխատավորների օգնության կարիքը։ Գյուղացին ի՛նքը ամենից լավ կարող է տեսնել ու լսել «այն բոլոր անօրինությունները, անարդարությունները, որ կատարվում են մեր խուլ, հեռավոր գյուղերում»։ Սակայն միայն տեսնելն ու լսելը քիչ է. հարկավոր է այդ բոլորի մասին տեղյակ պահել խորհրդային իշխանությանը, որն անողոք ու անխնա է նման երևույթների ամեն մի դրսևորման հանդեպ։ Եվ այստեղ արդեն աշխատավոր գյուղացիության հավատարիմ օգնականը կարող է լինել լրագիրը։ «Թող այսուհետև,— հորդորում էր թերթը,— մեր գյուղացիք ամեն մի անօրինություն, որ կտեսնեն, ամեն մի անարդարություն, որ կլսեն՝ հայտնեն «Մաճկալին»։ «Մաճկալը» կլինի նրանց բերանը իշխանության առաջ», որը լսում է նրանց ձայնը՝ «ուշադրությամբ, սիրով ու հավատով»[27]։

«Մաճկալ»-ի գյուղական թղթակցությունների մեջ սուր կերպով դրվում էր մասնավորատեսակ վաշխառուների դեմ միջոցներ ձեռնարկելու հարցը։ 1922 թ. հուլիսին թերթում լույս տեսան այդ բովանդակությամբ մի շարք նյութեր։ «Խորհրդային Հայաստան»-ը համապատասխան մարմինների ուշադրությունը հրավիրեց այդ թղթակցությունների վրա, որոնք վկայում էին «մի վերին աստի-

---

27 «Մաճկալ», 1922, № 5։

ճանի ուշադրավ ու այլանդակ երևույթի մասին. դա չքավոր գյուղացիների շահագործումն է գյուղական վաշխառուների կողմից»[28]: Նշելով, որ «չունևորների տնտեսական ուժեղացման խնդիրը նոր տնտեսական քաղաքականության փուլում ընդունում է պետական սիստեմատիկ օժանդակության բնույթ՝ ի հաշիվ պետության պահեստների և ոչ թե ունևոր գյուղացիության հորերի», ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը միաժամանակ հարկ համարեց հիշեցնել, որ դա չի նշանակում, թե՝ «վերանում է կամ վերացել է խորհրդային իշխանության միջամտության անհրաժեշտությունը չքավորների և ունևորների փոխհարաբերությունների մեջ». մի հանգամանք, որի անտեսումը պայմաններ կստեղծեր գյուղական ունևոր տարրերի վաշխառուական «սխրագործությունների» համար: Դժբախտաբար, նշում էր թերթը, խորհրդային իշխանության նյութական հնարավորությունները դեռևս սահմանափակ են և նա չի կարողանում լիովին ապահովել արտադրության միջոցների նկատմամբ չքավոր գյուղացիության ներկայացրած պահանջները, և շատերը ստիպված դիմում են ունևոր խավերի «օգնությանը». իսկ այդ «լավությունը» սրանք անում են վաշխառուին հատուկ այնպիսի «սատանայական պայմաններով», որ «վերջ ի վերջո չքավորներին դնում են ճորտային դրության մեջ և արմատից կտրում գյուղացիության մեծամասնությունը կազմող չքավոր տարրերի տնտեսական զարգացման հնարավորությունը»: Այստեղ է ահա, որ խորհրդային իշխանությունն ամբողջ վճռականությամբ ասելու է իր պարտադրիչ խոսքը. «Արտադրողական ուժերը գյուղում պետք է զարգացնել, բայց ո՛չ չքավորների շահագործման գնով»:

Հիմք ընդունելով գյուղական չքավորության տրամադրությունն ու ակնկալությունները, որ այնպես ընդգծված արտահայտվում էին գավառական մամուլում և «Մաճկալ»-ում տպագրվող թղթակցություններում, «Խորհրդային Հայաստան»-ը գրում էր. «Չքավոր գյուղացիությունն ունի այն գիտակցությունը, որ խորհրդային կարգերում անթույլատրելի են վաշխառուական սխրագործությունները. իշխանությունը այդ գիտակցությունը պետք է գինի օրենքներով, ուր պիտի պարզ և որոշ ասված լինի, թե ո՛ր պայմանները համարվում են վաշխառուական և չպիտի իրագործվեն»[29]:

ՌԿ(բ)Կ XI համագումարին տված Կենտկոմի քաղաքական հաշ-

---

28 «Խորհրդային Հայաստան», 1922, № 161:

29 Նույն տեղում:

վեստվությյան մեջ Վ. Ի. Լենինը, խոսելով նեպ-ի արդյունքների մասին, նշեց. «... Մենք մի տարի նահանջում էինք։ Այժմ մենք պետք է ասենք կուսակցության անունից՝ բավակա՛ն է։ Մենք հասել ենք այն նպատակին, որը հետապնդում էր այդ նահանջը։ Այդ շրջանը վերջանում է կամ վերջացել է։ Այժմ առաջ է մղվում ուրիշ նպատակ՝ ուժերի վերախմբավորումը»[30]։ Սկսվում էր տնտեսական բնագավառում մասնավոր կապիտալի դեմ հարձակման նախապատրաստության շրջանը։

Այդպիսի դիրքորոշման անցավ նաև պարբերական մամուլը։ Ինչպես ցույց տվեց մեկ տարվա փորձը, ընդհանրացնում էր «Խորհրդային Հայաստան»-ը, անցնելով նեպ-ին՝ «մենք չենք սխալվել», այն տվել է իր դրական արդյունքները. այդ հանգամանքը, սակայն, «երբեք չպիտի շլացնի մեզ»։ Շատ վտանգավոր է այն իրողության անտեսումը, որ «նեպ-ի հետևանքով ստեղծվել է սոցիալական մի տարր, որը ճգնում է օգտագործել նոր կացությունը իր դրության բարելավման համար»։ Դրանք նեպմաններն են, «նոր բուրժուազիայի» խմբակցությունները, որոնք նպաստում են սպեկուլյացիայի ծաղկմանը՝ խարխլելով մեր ամբողջ տնտեսության հիմքերը։ «Թույլ չէ այդ տարրը,— շարունակում էր թերթը,— նա ունի դրամ, ունի հանդ ու չափազանց ամուր ջղեր»։ Նեպմանների վերոհիշյալ գործողությունները որակելով իբրև «ապիրատան ոստնձգություններ», թերթը նույնանուն առաջնորդողում օրակարգի խնդիր էր համարում «սանձարձակ սպեկուլյանտների» զսպումն ու «գայլային ախորժակի չափավորումը». այդ միջոցառումները «ավելի առողջ ընթացք կտան մեր երկրի տնտեսական կյանքին»[31]։

Այսպես ուրեմն՝ նոր տնտեսական քաղաքականության դրական արդյունքները հավաստելու հետ մեկտեղ, ավելին՝ նեպ-ի ճիշտ կենսագործմանը խոչընդոտող հոգեբանական, գաղափարական և առօրյա պատնեշների դեմ պայքարելով հանդերձ՝ պարբերական մամուլը մոռացության չէր տալիս այն բացասական երևույթները, որ ի հայտ եկան իբրև ձեռք բերված հաջողությունների ուղեկիցներ։ Այդ երևույթների դեմ մղվող հետևողական պայքարում էլ հենց դրսևորվեց մամուլի դաստիարակչական-կազմակերպչական կարևոր դերը ժողովրդական տնտեսության վերականգնման հետագա խնդիրների լուծման ընթացքում։

---

30 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 329։

31 «Խորհրդային Հայաստան», 1922, № 278։

2

Հայաստանում խաղաղ-շինարարական աշխատանքների առաջին իսկ քայլերը զուգորդվեցին ոռոգման ասպարեզում ձեռնարկվող միջոցառումներին։ Ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին գրած հայտնի նամակում՝ «ոռոգումը ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթագի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[32]։ Խորհրդային իշխանություն հաստատելուց և խաղաղ պայմաններ ստեղծելուց հետո, գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, բնականաբար «մեր ուշադրությունը կենտրոնացավ երկրի ոռոգման խնդրի վրա»[33]։ Արդեն 1922 թ. վերջին, գնահատելով ձեռք բերված հաջողությունները, «Գյուղատնտեսական կյանք» հանդեսը նկատում էր. «Ամենախոշոր գործը, շհաշված սերմանման հաջող կամպանիան, կատարված է ոռոգման ասպարեզում։ Թե՛ պետական օրգաններն և թե՛ հասարակական խավերն ու կուսակցական շրջանները հսկայական եռանդ ու աշխատանք են թափում այս գործի լայն չափով կազմակերպման շուրջը»[34]։ «Այսօր արդեն 390 ջրաբաշխական առուներից մեծ մասը վերանորոգված է»,— մի քանի ամիս անց հայտնում էր «Խորհրդային Հայաստան»-ը[35]։ Միաժամանակ մի շարք վայրերում սկսվել էին նոր ջրանցքների շինարարության աշխատանքները, հիդրոկայանների կառուցումը ևս դրված էր օրակարգի մեջ...

Ոռոգման կարևորությունն ու անհրաժեշտությունը մամուլը հիմնավորում էր՝ ելնելով հանրապետության գյուղատնտեսության իրական վիճակից և նկատի ունենալով նրա զարգացման հեռանկարները։ Սակավահողությունը, մշակման եղանակի և գյուղատնտեսական տեխնիկայի հետամնացությունը մի կողմից, ոռոգման բացակայության պատճառով անօգտագործելի մնացած զգալի չափերի հասնող հողային տարածությունները մյուս կողմից, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, հրամայաբար պահանջում են «ավելացնել այդ հողային ֆոնդը, ավելի արդյունավետ դարձնել ներ-

---

32 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 404։

33 «Խորհրդային Հայաստան», 1923, № 118։

34 «Գյուղատնտեսական կյանք», 1922, № 3, էջ 2։

35 «Խորհրդային Հայաստան», 1923, № 118։

կային շահագործվող հողերը». այլ խոսքով ասած՝ «մեր տնտեսական գործունեության գլխավոր առարկան պիտի դարձնել ոռոգման գործը», մի խնդիր, որ ծառանում է այսօր իբրև «հարվածայիններից հարվածայինը»[36]։

«Արցունքի հովտից դեպի ջրանցքների երկիր, ուր աշխատանքն է թագավորում»— այս պաթետիկ կոչը,— որ այդ տարիներին համանման ձևակերպումներով հաճախակի երևում էր պարբերական մամուլի էջերում՝ թե՛ ջրանցքների կառուցման ընթացքում և թե՛ շահագործման հանձնելու հանդիսավոր պահերին,— լենինյան պատգամի յուրովի արձագանքն էր և միաժամանակ համաժողովրդական խանդավառության արտահայտություններից մեկը։ 1922 թվի նոյեմբերի 29-ին հանդիսավոր պայմաններում բացվեց Էջմիածնի ջրանցքը, որին տրվեց Վ. Ի. Լենինի անունը։ Մամուլը ողջունելով արձագանքից այդ նշանակալից իրադարձությանը՝ պատմական տրիթով մի անգամ ևս ընդգծելով ոռոգման հարցի լուծման կարևորությունը երկրի վերաշինության ընդհանուր աշխատանքներում։ «Խորհրդային Հայաստան»-ի նույն օրվա համարի նյութերի մի զգալի մասը նվիրված էր Էջմիածնի ջրանցքին, որ ոռոգելու էր մոտ 2000 հեկտար հողատարածություն։ Թերթը շինարարության ավարտը դնահատեց իբրև Հայաստանի աշխատավորության ձեռք բերած «մեծ հաղթանակ», մանավանդ եթե նկատի ունենանք, որ «այդ աշխատանքը տեղի ունեցավ և ի կատար ածվեց սովի, քաղցի և ավերածության շրջանում»։

Ջրատար ցանցի վերանորոգման նուն աշխատանքներ էին ծավալված նաև Զանգիբասարում, Ապարանում, Վեդիբասարում, Զանգեզուրում և հանրապետության այլ շրջաններում։ Մաքրվում էր Արազդայանի ջրանցքների համակարգը, որ ոռոգում էր մոտ 10 հազար դեսյատին սեահող. նախապատրաստվում էր Էջելիարի ջրանցքը՝ Արաքսին զուգահեռ ընթացքով՝ մոտ 25 վերստ երկարությամբ, որով նախատեսվում էր ոռոգել 5—6 հազար դեսյատին հողատարածություն. մի փոքր պակաս կարողություն էր ունենալու Սարդարաբադի նոր (փոքր) ջրանցքը և այլն։ «Այս չոր թվերի բովանդակությունը,— ընդհանրացնում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— բավական մեծ է». այդ ջրանցքների շնորհիվ հնարավոր կլինի բամբակի մշակությունը 1922 թ. համեմատությամբ ավելաց-

36 «Խորհրդային Հայաստան», 1922, № 246։

նել մոտ 10 անգամ[37]։ Էջմիածնի և Մամրիի ջրանցքների շահագործմամբ, ինչպես նաև մի շարք ջրատար առուների կանոնավորման շնորհիվ, մի այլ առիթով նշում էր նույն թերթը, հնարավոր եղավ վարելահողերի տարածությունը ընդարձակել 40 հազար դեսյատինով. Շիրակի ջրանցքի ավարտով դրան կավելանա ևս 15 հազար դեսյատին։ «Ընկեր Լենինը,— կրկնակում էր իր հաշվարկումները ՀԿ(բ)Կ կենտրոնական օրգանը,— այսօր հանգիստ կարող է լինել. Հայաստանի աշխատավորությունը կոմունիստների ղեկավարությամբ մաս-մաս կատարում է իր մեծ ուսուցչի պատգամը...»[38]։

Պարբերական մամուլը ոչ միայն պրոպագանդում էր ոռոգման լենինյան գաղափարները, այլև նպաստում կոնկրետ աշխատանքների ծավալմանը։ Նշանակալից էին հատկապես «Խորհրդային Հայաստան», «Շիրակի ռանչպար» (հետագայում «Բանվոր»), «Մահկալ», «Կարմիր ուղի» թերթերի գործադրած ջանքերը, որոնք լավագույնս դրսևորվեցին Շիրակի ջրանցքի՝ հանրապետության այն օրերի խոշորագույն կառույցներից մեկի շինարարության ընթացքում։ Թերթերը բացել էին «Ջրանցքի ֆոնդ», կազմակերպում էին օգնության շաբաթներ։ Ջրանցքը հայտարարվեց համաժողովրդական կառույց։ «Յուրաքանչյուր բանվորական կազմակերպություն, գյուղական համայնք,— Շիրակում և մյուս գավառներում,— պարտավոր են աջակցել Խորհրդային Հայաստանում կատարվող այդ անդրանիկ մեծ գործի հաջողությանը։ Նրա նշանակությունը գավառային չէ, այլ հանրապետական,— նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— եթե վաղը Շիրակի պատմական ամբարները նորից լցվեն հացով, ապա նրա բարերար ազդեցությունը պիտի զգացվի նաև Լոռում, Ապարանում, Դարալագյազում։ Ահա թե ինչու մեր բոլոր գավառներում պիտի կատարել ագիտացիա շիրակցիներին օգնության հասնելու համար»[39]։ Զգալի դեր կատարեց մասնավորապես «Շիրակի ռանչպար»-ը։ Այն երազանքը, հիշեցնում էր թերթը, որ ունի մեր գյուղացիությունը և որը երկար ժամանակ դուրս չի եկել սոսկ խոսքի շրջանակներից, այսօր դառնում է իրականություն՝ կառավարության և աշխատավորության միասնական ջանքերով. ոչ ոք իրավունք չունի անմասն մնալ այդ մեծ գործի մեջ. յուրաքանչյուր ոք պետք է քրտինքի մի կաթիլ ավելացնի ջրանցքով հորդացող ապագա ջրերին։ Հողի աշխատավորը շատ է հուսախաբ

37 Տե՛ս նույն տեղը, 1923, № 19։

38 Նույն տեղում, № 104։

39 Նույն տեղում, 1922, № 151։

եղել, երկար սպասել. բայց հիմա փոխվել են ժամանակները և վերականգնվել է հավատը, որն արդեն ամրապնդվում է շինարարական կոնկրետ, իրական բայլերով[40]:

1925 թ. հունիսի 21-ին գործարկվեց Շիրակի ջրանցքը՝ այն օրերի հռչակավոր «Շիր-կանալը»: Պարբերականները, որ ուղղման հարցերին անդրադառնալիս առանձնակի ուշադրություն էին նվիրում Շիրակի ջրանցքին, պատկերում կառուցման ընթացքը, փառաբանում աշխատանքի հերոսներին, այդ համաժողովրդական ցնծության օրերին հեղեղված էին «շիրկանալյան» նյութերով (բանաստեղծություն, ակնարկ, հրապարակախոսական հոդված, նկարագրական-բացատրական թղթակցություն, անտեսական բնույթի վերլուծություններ, ողջույններ և այլն): Թերթերը ապագրվում էին հանդիսավոր ձևավորումներով, լրացուցիչ էջերով: Ջրանցքի գործարկման օրը «Բանվոր»-ը լույս տեսավ հատուկ հրատարակությամբ: Տաս էջից բաղկացած այդ համարը (2 էջը՝ ռուսերեն) լրիվի ամփոփումը եղավ այն բազմակողմանի աշխատանքի, որ ծավալել էր թերթը համաժողովրդական այդ կառույցի իրականացման ընթացքում: «Ջրանցքի ավարտումով,— ընդգծում էր «Բանվոր»-ը,— կատարեցինք Լենինի խոշոր պատգամներից մեկը: Շիրջրանցքը բանվորների և գյուղացիների միության ճշգրտ երաշխիքն է:

Նույն այդ հանդիսությանն էր նվիրված «Խորհրդային Հայաստան»-ի հունիսի 21-ի 6 էջանոց համարը: Այդ խոշոր իրադարձությանը մեծ թվով նյութեր հատկացրին «Ավանգարդ»-ը, «Մաճկալ»-ը և մյուս պարբերականները: Ինչպես որ պոեզիայում սկզբնավորվում էր «շիրկանալյան մոտիվը», այնպես էլ այդ օրերի մամուլը հատկանշվում էր «շիրկանալյան էջեր»-ով: «Շիրակի ջրանցքի կառուցման պատմությունը,— ընդհանրացնում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը վերոհիշյալ համարի առաջնորդողում,— Խորհրդային Հայաստանի կազմակերպման ու բարձրացման պատմությունն է: Խիզա՞խ նախաձեռնություն... Աղքատիկ, չնչին նյութական միջոցներ, բայց համառ կամք, աննկուն եռանդ—այս էր մեր բարոյական ու նյութական կապիտալը 1921—1922 թվին և այդ կապիտալով էլ սկսվեց Շիրակի ջրանցքի կառուցումը...»: Պատահական չէր բարոյական կապիտալի հիշատակությունը, որը թերթը համարում էր անգնահատելի ու անկապտելի մի հարստություն, ամենաղորավոր մի-

40 Տե՛ս «Շիրակի ռանչպար», 1922, № 47:

ջոցը՝ աղքատությունից և հետամնացությունից դեպի սոցիալիզմ կատարվող պատմական անցման ուղիներում։

Ռուսման հարցերին զուգընթաց մամուլում որոշ չափով քննարկվում էր էլեկտրիֆիկացման խնդիրը։ Սկզբնական շրջանում մանր էլեկտրակայանների կառուցումը սերտորեն կապակցվում էր մեքենայական ջրմուղների միջոցով ոռոգելի հողատարածություններն ավելացնելու հեռանկարի հետ, ապա նաև արդյունաբերական ու կենցաղային կարիքների համար օգտագործելու նպատակն էր առաջադրվում։ 1923 թ. մայիսի 31-ին Ժողկոմխորհը հավանություն տվեց Երևանի նոր ջրա-էլեկտրական կայանի կառուցման նախագծին, Լոռու գավգործկոմը միջոցներ էր խնդրում Ջալալ-օղլիում էլեկտրակայանի վերանորոգման աշխատանքներն ավարտելու համար, Ղարաքիլիսայի գավգործկոմը ձեռնարկել էր ջրմուղի անցկացմանը և էլեկտրակայանի կառուցմանը, Նոր Բայազետում ստեղծվել էր էլեկտրակայանի շինարարության հատուկ կոմիտե և այլն։ Թվարկելով այս փաստերը, «Խորհրդային Հայաստան»-ը ուրախությամբ նկատում էր, որ երկիրը մի նոր երկունքի շրջան է ապրում՝ «էլեկտրացավ»-ի մեջ է. «Լավ ցավ է, թո՛ղ մեր բոլոր գավառները վարակվեն այս ցավով,— կոչ էր անում թերթը և հույս հայտնում, որ «հանրապետության ամենափոքրիկ համայնքն անդամ եթե ոչ այսօր, գոնե կարճ ժամանակից հետո միջոցներ ձեռք կառնի իր մոտ ևս էլեկտրականություն անցկացնելու համար»[41]։ Ամեն օր հանրապետության տարբեր գավառներից ու գյուղերից դիմումներ էին ստացվում տեղերում փոքրիկ էլեկտրակայաններ կառուցելու համար միջոցներ տրամադրելու վերաբերյալ, ըստ որում՝ «գյուղացիք, բացի մեքենայի ծախսերից՝ մնացած ծախսերն իրենց վրա էին առնում»։ «Իհարկե, մենք չենք կարող չողջունել մեր գյուղացիության նախաձեռնության ոգու այս արթնացումը»,— գրում էր թերթը, միաժամանակ հորդորելով այդ աշխատանքն առաջ տանել ծրագրված ու հաշվենկատ կերպով, թույլ չտալով միջոցների փոշիացում, անսիստեմ և ինքնակամ լուծումներ. ամեն մի ծրագիր հարկավոր է համաձայնեցնել Բարձրագույն տեխնիկական հանձնաժողովի հետ, «որի գլուխն է անցել մեր ականավոր ժամանակակիցներից մեկը, նկարիչ-ճարտարապետ ակադեմիկոս Ալ. Թաման-

41 «Խորհրդային Հայաստան», 1923, № 131։

յանը»։ «Պլանաչափությունն ու հաշիվը,— եզրակացնում էր թերթը,— մեր կառավարությանը հնարավորություն կտան հավասարել նոանդը, ամուր սեղմել բռունցքը՝ մեր երկրի էլեկտրիֆիկացիայի հարցն ավելի լրիվ չափով լուծելու համար»[42]։

* * *

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին պարբերական մամուլն զգալի դեր խաղաց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի ամրապնդման, քաղաքի և գյուղի զոդման այնպիսի մի կարևոր օղակի կազմակերպման ու զարգացման գործում, ինչպիսին էր կոոպերացիան, իր բոլոր ձևերով ու տեսակներով։

Կոոպերացիայի հարցերը պատշաճ տեղ ունեին «Խորհրդային Հայաստան» թերթում։ Տարբեր տիպերով դրանց անդրադարձել են նաև «Մաճկալ»-ը, «Գյուղատնտեսական կյանք»-ը, «Կոմունիստ» հանդեսը, «Նորք»-ը, կոմերիտական ու արհմիութենական պարբերականները, տեղական մամուլի օրգանները։ Ինքնին հասկանալի է, որ առանձնակի դեր էր վերապահված, այսպես կոչված՝ կոոպերատիվ մամուլին, որին կանդրադառնանք քիչ հետո։

Առայժմ նշենք միայն, որ կոոպերացիայի հարցերի քննարկումը մամուլում հետևողական ու պարբերական ընույթ ստացավ ԲԿ(բ)Կ XII կոնֆերանսից հետո, ուր ընդունվեց «Կուսակցության խնդիրները կոոպերացիայում» բանաձևը[43]։ Բանաձևի պարզաբանմանը և այդ առնչությամբ Հայաստանում տարվող աշխատանքների վերակառուցման հարցերին «Խորհրդային Հայաստան»-ը նվիրեց հատուկ առաջնորդող[44], որով և ըստ էության սկսվում է կոոպերատիվ շարժման խնդիրների հանդամանալից արծարծումը հանրապետության մամուլում։ Ընդգծելով կոնֆերանսում ընդունված բանաձևի նշանակությունը, թերթը գրում էր. «... Թե՛ Ռուսաստանում, թե՛ մեզ մոտ կոոպերատիվ մի շարք խնդիրների շուրջը կուսակցության մեջ տարբեր կարծիքներ կային։ Համառուսական կոնֆերանսի բանաձևը վերջ է դնում այդ տարակարծիքությանը և հրավիրում է ամբողջ կուսակցությանը՝ մի գծով կոոպերատիվ աշխա-

---

42 «Խորհրդային Հայաստան», 1924, № 157։

43 Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մ. I, էջ 851—856։

44 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, № 185։

տանքներին հաջող ընթացք տալ». իսկ դա շատ կարևոր և հասունացած հարց է, «որովհետև եթե մեր նոր տնտեսական քաղաքականությունը մի միջոց է բանվորության և գյուղացիության դաշինքը տնտեսական հողի վրա ամրացնելու—կոոպերացիան ամենահարմար միջոցն է այդ նպատակին հասնելու»:

Գյուղատնտեսության կոոպերացման խնդիրը, որին նույնպես կոնֆերանսը հատուկ ուշադրություն էր նվիրել, ուրույն տեսանկյունից է քննարկված «Կոմունայից դեպի կոոպերացիան» հոդվածում[45]: Գյուղատնտեսական կոոպերացիային, նշում էր Թերթը, տրվում է «մեծ առավելություն և լայն արտոնություններ». հողօգտագործման ամենարդյունելի եղանակը բնկերական կամ կոոպերատիվ ձևն է, քանի որ՝ «ներկա պայմաններում գյուղացիական մանր տնտեսությունը կգորանա միայն այն դեպքում, երբ դուրս գալով իր կղզիացած դրությունից՝ ձգտի միանալու և անգամ ձուլվելու իր նմանների հետ՝ կոոպերացիայի—համագործակցության միջոցով»: «Խորհրդային Հայաստան»-ը ընդգծում էր այն էական տարբերությունը, որ գոյություն ունի գյուղատնտեսական կոոպերացիայի և երկրագործական կոմունայի միջև. եթե կոմունան, ի մի ձուլելով շքավոր գյուղացիների տնտեսությունները, ստեղծում է միասնական, կոմունիստական տնտեսություն՝ դրանից բխող հանրային կենցաղով և նոր սովորույթներով, ապա կոոպերացիան հողը դարձնում է տնտեսական արդյունաբեր ձեռնարկ: Ամենևին չժխտելով կոմունայի դերը, նրա հասարակական-քաղաքական արժեքը, Թերթը նշում էր կոոպերացիայի առավել ընդգրկող և շահավետ բնույթը՝ տնտեսական զարգացման նոր պայմաններում. «...Ռազմական կոմունիզմի շրջանում, մասնագրավման քաղաքականության օրերին, մանր-գյուղացիությունը հոգեբանորեն խուսափելով կոմունայից, ամուր կառչում էր իր թպչափ հողից և ողորմելի տնտեսությունից, այժմ՝ ամենակարող «ՆԷՊ»-ի տիրապետության ժամանակ՝ նա փարվում է գյուղատնտեսական կոոպերացիային, որ նրանից չպահանջելով նյութական խոշոր զոհաբերություն, շշնջում է նրա ականջին «ոսկի հույսեր»». կոմունային փոխարինելու եկող կոոպերացիան «ձգտում է բարձրացնել երկրագործությունը՝ դարձնելով նրան կենսունակ և արդյունավետ»: Միայն այս ճանապարհով կարելի էր հասնել կոմունայի վերածննդին, որ լինելու էր կոոպերացիայի զարգացման ու կատարելագործման

---

45 Տե՛ս նույն տեղը, Ա՝ 217:

բնական արդյունքը։ «Սոցիալիստական կոմունան,— նկարագրում էր Թերթը,— դիջում է իր դիրքերը գյուղատնտեսական կոոպերացիային, որ պատրաստում է խորհրդային երկրագործին կոմունայի երկրորդ գալստյանը փառաբանելու պրոլետարիատի նոր հաղթանակը»։

Կոոպերացումը ոչ միայն նպաստում էր գյուղատնտեսության վերականգնմանը, այլև ուներ խոշոր քաղաքական նշանակություն. կոոպերացիան էր այն հիմնական միջոցը, որը հնարավորություն կտար կազմակերպված ձևով շքավոր և միջակ գյուղացիությանը ներգրավելու երկրի ընդհանուր սոցիալիստական շինարարության մեջ։ Ահա թե ինչու, գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, «տեղերում գործող մեր կուսակցական ընկերները, գյուղում թե գավառական կենտրոնում պիտի լծվեն կոոպերատիվ շինարարության, իբրև հարազատ, սեփական գործի»[46]։ Այս ոգով անցավ այն աշխատանքը, որ ծավալեց պարբերական մամուլը կոոպերատորների համահայաստանյան անդրանիկ համագումարի նախապատրաստման ու անցկացման շրջանում և դրանից անմիջապես հետո։ Ինչպես ցույց տվեց համագումարը, նշում էր մամուլը, «մեր կոոպերացիան չի կարող լինել զուտ սպառողական կարիքների ծառայող, «էժան կարտոշկա մատակարարող» մի կազմակերպություն, այլ... պետք է իր վրա վերցնի մեր գերազանցապես գյուղացիական երկրի բազմապիսի պահանջները»։ Իրականում հենց այդպիսի տեղեկություններ էլ գրանցվորում են տեղերում կազմակերպված ու արագորեն զորացող կոոպերատիվ ընկերությունները, որոնք «իրերի բնական ընթացքով ստանում են ունիվերսալ բնույթ»[47]։

Կոոպերատիվ շարժման հարցերը քննարկելիս մամուլը միշտ հիշեցնում էր պատրանքներով տարվելու վնասակարությունը, կոչ անելով ելնել երկրի իրական պայմաններից և համապատասխանորեն ագիտացիոն-բացատրական և մասսայական-կազմակերպչական համբերատար աշխատանք ծավալել աղքատակչության ամենալայն խավերում։ Հաշվի չառնել կոնկրետ շահագրգռվածության մոմենտը, անտեսել համապատասխան նյութական խթանների դերը՝ կնշանակեր թղթի վրա թողնել այն բոլոր լավ ու գեղեցիկ որոշումները, որ ընդունվում էին կոոպերացիայի կազմակերպման ու զարգացման վերաբերյալ։ Նշելով, որ արդեն ժամանակն է «ագ-

---

46 «Խորհրդային Հայաստան», 1923, № 58։

47 Նույն տեղում, № 107։

բարային բաղաքականությունից անցնելու գյուղատնտեսական արտադրողական քաղաքականության», «Գյուղատնտեսական կյանք» ամսագիրն ընդծում էր. «Սկզբունքով լինելով ինտեգրալ կոոպերացիայի բացարձակ կողմնակիցներ, մենք, այնուամենայնիվ, չենք կարող անալ կյանքն ու գյուղացու հոգեբանությունը հաշվի չառնել։ Մենք գիտենք, որ հարկադրական միջոցներով կվաններ գյուղացիությունը կոոպերացիայից։ Գյուղացին, դեկավարվելով բացառապես նեղ անձնական-տնտեսական շահերով, կգնա դեպի կոոպերացիան, եթե սա կպահի իր շահերը»[48]։

Ճիշտ և նպատակասլաց աշխատանքն ասպիճանաբար տալիս էր իր արդյունքները։ «Մեր գավառական թղթակիցները,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— Էջմիածնի գավառից և այլ վայրերից, նույնիսկ հեռու ընկած Նոր Բայազետից հաղորդում են, որ ազգաբնակչությունը չտեսնված հետաքրքրություն և շահագրգիռ վերաբերմունք է ցույց տալիս դեպի կոոպերացիան։ Սա,— եզրակացնում էր թերթը,— և՛ ուրախալի, և՛ բնական երևույթ է... Մասսաների հորձանքը դեպի կոոպերացիա, կոոպերացիայի արմատացումը մեր գյուղացիական երկրում մեր հետագա խոշորագույն հաղթանակների գրավականն է»[49]։

Կոոպերատիվ շինարարությանը մեծ տեղ էր հատկացնում «Մաճկալ»-ը, որի էջերում, սկսած 1924 թ. վերջերից՝ բազմակողմանի քննության են առնվում գյուղական զանգվածներին կոոպերացիայի տարբեր ձևերի մեջ ներգրավելու խնդիրները։ Արագորեն աճում էր գյուղական կոոպերացիայի վերաբերյալ «Մաճկալ»-ում լույս տեսնող թղթակցությունների թիվը. արդեն 1926 թ. կեսերին, ինչպես ցույց են տվել խմբագրության կատարած հաշվումները՝ միայն սպառողական կոոպերացիային նվիրված թղթակցությունները կազմում էին թերթում տպագրվող նյութերի մոտ 20 տոկոսը[50]։ Ելնելով այն ճշմարիտ ըմբռնումից, թե՝ «առանց կոոպերացիայի գյուղացիությունը չի կարող երբեք իր դրությունը բարելավել», «Մաճկալ»-ը սկզբից ևեթ քիչ չանքեր չգործադրեց, որպեսզի «գյուղացիք օր առաջ հասկանան իրենց օգուտները և կոոպերացիա կազմեն»[51]։ 1925—1926 թթ. «Մաճկալ»-ը հրատարակում էր «Դեպի կոոպերացիա» հավելվածը. երկու էջանոց այդ թերթիկում, որն ու-

48 «Գյուղատնտեսական կյանք», 1923, № 8—9, էջ 2։

49 «Խորհրդային Հայաստան», 1924, № 59։

50 Տե՛ս «Մաճկալ», 1926, № 64։

51 Նույն տեղում, 1924, № 27։

ներ «Միությունը ուժ է» նշանաբանը, գետեղվում էին թվեր ու ավյալներ, ուշագրավ տեղեկություններ, հակիրճ, բայց գիպուկ բղթակցություններ Հայաստանի գյուղերում կոոպերատիվ շինարարության ընթացքի, մասնավորապես սպառողական կոոպերացիայի կազմակերպման վերաբերյալ։

* * *

Այժմ համառոտակի բնութագրենք կոոպերատիվ պարբերականները։ Ինչպես հայտնի է, 1919 թվականից լույս էր տեսնում «Հայաստանի կոոպերացիա» ամսագիրը, որը խորհրդային օրոր հիմնովին վերափոխվեց՝ ձեռք բերելով բոլորովին նոր ուղղություն և նպատակասլացություն։ Այս նոր «Հայաստանի կոոպերացիա» հանդեսը մինչև 1924 թ. հոկտեմբերը եղել է Հայկոոպի օրգանը[52]։ Կոոպերատիվ շարժման ծավալման կապակցությամբ անհրաժեշտություն առաջացավ ավելի գործնական բնույթ տալ Հայկոոպի այս հրատարակությանը. 1924 թ. նոյեմբերից «Հայաստանի կոոպերացիա»-ն արմատապես վերակառուցվեց հրատարակչական առումով. ճիշտ է, անվանումը նույնը մնաց, բայց լույս էր տեսնում արդեն իբրև երկշաբթյա հանդես (կոչվում էր երկշաբթաթերթ) և սպասարկում էր կոոպերատիվ ավելի ընդարձակ մի ցանցի. այն Հայկոոպի, Երևանի ու Լենինականի բանկոոպների օրգանն էր[53]։

«Հայաստանի կոոպերացիա» ամսագիրը և նույնանուն երկշաբթաթերթը զգալի տեղ են հատկացրել կոոպերատիվ շարժման պատմության հարցերին, արծարծել ներկայի խնդիրները, գրել պարզացման հեռանկարների մասին։ Նրանց էջերում որոշ չափով արտացոլված է նաև կոոպերատիվ շարժման ընթացքը Անդրկովկասում, Ռուսաստանում և մյուս հանրապետություններում։ Հատուկ բաժիններ կամ համարներ են նվիրվել կոոպերատորների միջազգային օրվան։ Ուշագրավ են նաև կոոպերացիայի կազմակերպման ու ղեկավարման խնդիրներին վերաբերող բանավիճային նյու-

---

52 «Հայաստանի կոոպերացիա»-ն լույս էր տեսնում անկանոն պարբերականությամբ, հաճախ մի քանի միացյալ համարներով։ Խմբագիր՝ Մ. Ղազարյան։ 32--72 էջ (33×24 սմ), տպաքանակը՝ 300։

53 Երկշաբթաթերթը լույս էր տեսնում Խմբագրական կոլեգիա ստորագրությամբ։ Ունեցել է միացյալ համարներ։ 16—32 էջ (35×25 սմ), տպաքանակը՝ 1000—1200։ 1925 թ. չափը փոքրացավ, փոխարենը ավելացավ էջերի թիվը՝ 40—70։ 1927—1928 թթ. կոչվել է «Կոոպերացիա», այնուհետև՝ «Գեղի կոոպերացիա»։

թերը, կոնսուլտացիոն հոդվածները, լավագույն կոոպերատորների փորձը լուսաբանող հաղորդումները։ Տնտեսական և գործնական բնույթի հոդվածներով հաճախակի հանդես են եկել Պ. Ստամբոլցյանը, Պ. Ֆոլյանը, Գ. Նազարյանը, Հ. Բալյանը և կոոպերատիվ այլ գործիչներ։

«Հայաստանի կոոպերացիա»-ն հրապարակում էր կուսակցության և կառավարության որոշումները ու թեզիսները կոոպերացիայի մասին, Հայկոոպի վարչության հաշվետվությունները, տեղեկություններ առանձին բաժինների գործունեության, դների փոփոխության և այլնի վերաբերյալ, մի բան, որ առաջ արվում էր հատուկ ինֆորմացիոն հրատարակության՝ «Հայկոոպի տեղեկատու» երկշաբաթաթերթի միջոցով[54]։ Դրանից էլ առաջ լույս էր տեսել Հայկոոպի մի այլ հրատարակություն՝ «Վերածնունդ» տնտեսական, հասարակական, գրական և կոոպերատիվ ամսագրի միակ համարը, որտեղ գրքի թվով նյութեր կան՝ նվիրված կոոպերացիայի վերակազմության խնդիրներին[55]։

Հայաստանի գյուղացիական կոոպերացիայի առաջին համագումարի նախօրեին լույս տեսավ մի նոր պարբերական՝ «Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիա» ամսագիրը՝ իբրև գյուղատնտեսական կոոպերատիվների միության օրգան։ Ինչպես նշում էր խմբագրությունը՝ այն «գյուղատնտեսական կոոպերացիայի առաջին գրավոր խոսքն» էր Հայաստանում և լիներու էր «տեսական և գործնական խնդիրների լուսաբանության, կոոպերատիվ միավորների գործունեության արտահայտիչը՝ նվիրված առավելապես գյուղական տնտեսության և կոոպերացիայի պրակտիկայի ուսումնասիրության»[56]։

---

54 «Հայկոոպի տեղեկատու»-ն լույս էր տեսնում 1922 թ. հունվարի 1-ից, իբրև գերատեսչական-պաշտոնական տեղեկատու բյուլետեն։ Խմբագիր՝ Թ. Ավդալբեկյան։ 16 էջ (31×23 սմ), տպաքանակը՝ 1000։

55 «Վերածնունդ»-ի համարն ունի «1921 թ. հունվար-ապրիլ» թվագրությունը. ամսագրի նյութերն սկսել էին շարել հունվարից և հաջորդ ամսին այն արդեն պետք է հրատարակվեր, բայց փետրվարյան իրադարձությունների ժամանակ աշխատանքն ընդհատվում է և վերսկսվում կարմիր զորամասերի կողմից Երևանը վերազրավելուց հետո։ «Վերածնունդ»-ի հրատարակիչը Հայկոոպն էր, խմբագիրը՝ Դ. Անանունը։ 96 էջ (26×17 սմ), տպաքանակի մասին տվյալներ չկան։

56 «Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիա», № 1, 1924 թ. սեպտեմբեր։ Դժվարանալի, չհաջողվեց գտնել այս հանդեսի այլ համարներ և դժվարանում ենք ասել՝ արդյո՞ք շարունակվել է նրա հրատարակությունը, թե ոչ։ Լույս է տեսել «խմբագրական կոլեգիա» ստորագրությամբ։ 68 էջ (28×18 սմ), տպաքանակի մասին տվյալներ չունենք։

Հայաստանի պարբերական մամուլը կոոպերացիային նվիրված ելույթներում առաջնորդվում էր Վ. Ի. Լենինի ծրագրային ցուցումներով ու խորհուրդներով։ Թերթերի ու հանդեսների բազմաթիվ հոդվածներում, խմբագրականներում և այլ նյութերում հաճախակի վկայակոչվում էին առաջնորդի մտքերն ու ելակետային ասույթները կոոպերացիայի նշանակության, նրա կազմակերպման, կատարելագործման ու վերջնական նպատակների վերաբերյալ։ Կոոպերացիայի լենինյան գաղափարների մասսայականացումը մամուլը համարում էր իր առաջնահերթ խնդիրներից մեկը։ Այդ գաղափարների մոբիլիզացնող ուժը գործող միջոց էր ոչ միայն կուսակցական կազմակերպությունների, այլև մամուլի գինանոցում։ Անգնահատելի դեր կատարեց մասնավորապես «Կոոպերացիայի մասին» հանձարեղ հոդվածը։ «Երբ մարդիկ խոսում են կոոպերացիայի նկատմամբ Լենինի ունեցած վերաբերմունքի մասին,—ընդհանրացնում էր «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթը,—կամ երբ պետք եղած դեպքում մատնանշում են Իլյիչի մտքերը. որպեսզի իրենց եզրակացությունները, հոդվածներն ու թեզիսները հիմնավորեն նրանցով, երբ ցանկանում են... պաշտպանել կոոպերացիան կամ ցույց տալ նրա մեծությունը, բոլոր այս դեպքերում անմիջապես դիմում են միակ անսպառ, կարող և հարազատ աղբյուրին՝ Իլյիչի «Կոոպերացիայի մասին» հոդվածին. քիչ կոոպերատոր, քիչ կոմունիստ կգտնվի, որ այդ հոդվածը անգիր չիմանա»[57]։ Նույն պարբերականը մի այլ առիթով գրում էր. «Մեր մեծ առաջնորդն իր մահվան նախօրյակին արտասանեց մի նոր խոսք ևս՝ կոոպերացիա, և այդ խոսքը լուրջ մտահոգության առարկա դարձավ նրա օրինական և արժանավոր ժառանգ՝ Ռուսաստանի կոմունիստական կուսակցության համար։ ՌԿ(բ)Կ XIII համագումարը անգնահատելի մեկնաբանություն տվեց Իլյիչի նոր ավանդին, և Հայաստանի կոմկուսը ևս միացավ այդ կոչին։ Հայաստանի պրոլետարիատը և գյուղացիությունը, որոնք ընթանում են Լենինի գծած ուղիներով, պետք է զգայունորեն ունկնդրեն կուսակցության համագումարի ձայնին...»[58]։

Համագումարն առանձնակի ուշադրություն նվիրեց կոոպերացիայի զարգացման խնդիրներին ԽՍՀՄ ազգային հանրապետու-

---

57 «Հայաստանի կոոպերացիա», 1925, № 1—2։

58 Նույն տեղում, 1924, № 1։

թյուններում՝ «նկատի ունենալով կոոպերացիայի տնտեսական, ինչպես և կուլտուրական վիթխարի նշանակությունը»[59]:

Կոոպերացիայի հարցերը լուծելիս, շեշտում էր մամուլը, կարևորն այն է, որ հաշվի առնվեն իրական պայմաններն ու հանգամանքները, ցուցաբերվի ստեղծագործական մոտեցում, ըմբռնվի և կիրառվի կուսակցության որոշումների ոգին և ոչ թե տառը: «Վերից թելադրվող մեռած սխեմատիզմից խուսափելով և կուսակցության հրահանգներով ու բանաձևերով ղեկավարվելով՝ մենք պետք է հնարավորություն տանք գյուղացիական մասսային, որ ազատ կերպով ընտրի կոոպերացման այս կամ այն ձևը»[60],— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը: «Գյուղատնտեսական կյանք» հանդեսը «Կոմկուսի XIV կոնֆերանսը և գյուղատնտեսական կոոպերացիայի նոր խնդիրները» հոդվածում ընդհանրացնում էր. «... Ամենակարևորը և էականը գյուղի և քաղաքի կապի ամրապնդումն է, գյուղատնտեսության զարգացումը և գյուղատնտեսության մեջ սոցիալիստական էլեմենտներ մտցնելու խնդիրները»: Այս առումով էլ վճռական նշանակություն են ձեռք բերում գյուղատնտեսական կոոպերացիայի ծավալումն ու կատարելագործումը. «Գյուղատնտեսության զարգացումը կոոպերացիայի միջոցով տանելով՝ մենք գնում ենք այն մեծ տան հիմքերը, որ կաչվում է սոցիալիզմ»[61]:

Կոոպերացիայի մասին լենինյան ուսմունքի պրոպագանդմանը և կուսակցության որոշումների մասսայականացմանը զուգընթաց պարբերական մամուլն ուշադրություն էր բևեռում կոոպերացիայի կազմակերպման ու զարգացման գործում թույլ տրվող սխալների, վրիպումների, առանձին օղակներում նկատվող թերացումների վրա: Թերթերում ու հանդեսներում հաճախակի տպագրվում էին քննադատական հոդվածներ, դիտողություններ, արձանագրվում էին սխալներն ու թերությունները: Ինչ խոսք, այս ամենը շատ կարևոր էր և մեծապես գնահատելի: Մամուլի ելույթները, սակայն, առավել նպատակասլաց ու արդյունավետ կդառնային, եթե ըստ ամենայնի բացահայտվեին թերությունների պատճառները, մատնանշվեին դրանց վերացման ուղիները: Հանրապետության պարբե-

59 «ՍՄԿՊ-ն... բանաձևերում և որոշումներում», մաս II, էջ 52։
60 «Խորհրդային Հայաստան», 1924, № 154։
61 «Գյուղատնտեսական կյանք», 1925, № 6։

բանվորների աշխատանքն այս ոգով վերակառուցելու տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ «Խորհրդային Հայաստան»-ի՝ կոոպերատիվ շարժման մեջ մամուլի դերի գնահատության և նրա առաջիկա խնդիրներին նվիրված հոդվածը։ «Մեր մամուլի ուշադիր վերաբերմունքը և քննադատությունը գեղի կոոպերացիայի թերություններն ու բացերը,— գրում էր թերթը,— անշուշտ խոշոր դեր են կատարում կոոպերացիայի առողջացման գործում։ Սակայն շատ հաճախ քննադատությունները կրում են միայն փաստեր արձանագրելու բնույթ և ուրիշ ոչինչ... Չհերքելով, որ այդ բոլոր փաստերը մեծ մասամբ ճիշտ են,— եզրակացնում էր թերթը,— մենք կցանկանայինք, որ մամուլը պարզեր նաև կոոպերացիայի թերությունների ու բացերի պատճառները»[62]։

Ամենանարար հաղթահարելով այս միակողմանիությունը, թերթերն ու հանդեսները անմիջական, ներգործուն միջամտությամբ նպաստում էին կոոպերացիայի վերաբերյալ կուսակցության նախագծումների իրականացմանը։

3

Խորհրդային Հայ պարբերական մամուլի պատմության ուշադրությամբ ու ինքնատիպ էջերից են ՀԿ(բ)Կ Կենտկոմի և գավկոմների նախաձեռնությամբ ծնունդ առած տեղական մամուլի օրգանները։ Նյութական և հրատարակչական ծայրահեղ աննպաստ պայմաններում լույս տեսնող այդ թերթերն ու թերթիկները կոչված էին նպաստելու դյուղի շքավորության քաղաքական ինքնագիտակցության արթնացմանը, խորհրդային իշխանության հիմքերի ամրապնդմանը և դյուղատնտեսական ընթացիկ աշխատանքների կազմակերպմանը։

Ինչպես խորհրդային բոլոր հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում տեղական մամուլի կազմավորման ու բարելավման համար կարևոր նշանակություն ունեցավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1921 թ. ապրիլի 4-ի շրջաբերականը «Տեղական թերթերի ծրագրի մասին»[63]։ Բացահայտելով նահանգային ու գավառային պարբերականներում տեղ գտած ընդհանուր բնույթի մի շարք թերություններ (թույլ մասնակցություն տեղական կյանքի գործնական շինարարության, ընդհանուր, վերացական դատողությունների գերակշռու-

62 «Խորհրդային Հայաստան», 1925, № 125։

63 Տե՛ս «Պարտիական և սովետական մամուլի մասին», էջ 318—323։

թյուն՝ նյութերի կոնկրետ բովանդակության համեմատությամբ, անբավարար կապ մասսաների հետ), Կենտկոմը նշեց կոնկրետ միջոցառումներ, որոնց կենսագործումով հնարավոր կլիներ բարելավել պարբերական մամուլի դրությունը տեղերում։

Հիմք ընդունելով վերոհիշյալ փաստաթուղթը և ելնելով մեր հանրապետության զավառական մամուլի իրական վիճակից ու զարգացման շահերից, ՀԿ(բ)Կ Կենտկոմը մշակեց մանրամասն ցուցումներ, որոնք ամփոփվեցին «Հրահանգներ զավառական թերթերը բարվոք հիմքերի վրա դնելու մասին» շրջաբերականում[64]։ Տեղական անտեսական փորձի լիակատար հաշվառման անհրաժեշտությունը մի կողմից, աշխատավոր զանգվածների ինքնուրույնությունն արթնացնելու և նրանց ակտիվորեն սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու շահերը մյուս կողմից, նշում էր Կենտկոմը, ամենայն որությամբ օրակարգի մեջ են դնում թերթերի որակի բարելավմանը «կուսակցական ամբողջ ապարատով մասնակցություն ունենալու» հարցը։ Ըստ որում՝ ինչպես կուսակցական կազմակերպությունները, այնպես էլ թերթերի խմբագրությունները պետք է նկատի ունենին, որ զավառական մամուլի բովանդակությունը կանխորոշվում է հետևյալ կենսական խնդիրների արծարծումով. ա) Կուսակցության ազդեցության ուժեղացում բանվորա-գյուղացիական լայն զանգվածների վրա և խորհրդային իշխանության նկատմամբ նրանց ունեցած վստահության ամրապնդում. բ) Արտադրողական հոգեբանության դաստիարակություն և երկրագործական ու տեխնիկական տարրական գիտելիքների տարածում. գ) Տեղական անտեսական փորձի հաշվառում և մասսայականացում. դ) Սոցիալիստական շինարարության հարցերի պարզաբանում։

Այնուհետև, տեղական մամուլի գործունեությունը բարելավելու նպատակով, շրջաբերականը տալիս էր մեթոդական բնույթի մի շարք ցուցումներ՝ ընդհանուր դատողությունների վրա կառուցվող ագիտացիան փոխարինել «տեղական կյանքի փաստերից կազմված ագիտացիայով». տնտեսական հարցեր արծարծելիս անուշադրության չմատնել անձնական շահագրգռվածության սկզբունքը. ցուցադրելով մեր իրականության «պայծառ գծերը», երբեք չկոծկել «մութ կողմերը». պարզաբանել կառավարության դեկրետներն ու որոշումները. քննարկել Կարմիր բանակի կազմակերպման ու ամ-

64 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, № 192։

բանդման հետ կապված խնդիրները. մեծ տեղ հատկացնել տեղական թղթակցություններին և, վերջապես, հատուկ ուշադրություն դարձնել նյութերի լեզվի ու ոճի վրա։

* * *

1921 թ. ապրիլի 24-ից սկսեց լույս տեսնել էջմիածնի գավկոմի և գավհեղկոմի օրգան «Կարմիր գյուղացի» թերթը[65], որն սկզբից ևեթ ուներ այն ըմբռնումը, թե ինքը «պետք է դրազվի գեղջկաղանցորին տեղական գավառական կյանքի համար անհրաժեշտ լուծում պահանջող խնդիրներով». գավառի բազաբական-տնտեսական կյանքի կանոնավորման, այստեղ գործարար-հեղափոխական մթնոլորտ ստեղծելու ընդհանուր աշխատանքի մեջ, ընդգծում էր խմբագրությունը, մեծ ու պատասխանատու դեր է վերապահվում գրավոր խոսքին[66]։

«Կարմիր գյուղացի»-ն լույս տեսավ մոտ մեկ տարի և շնչած ընդհանրապես գավառական մամուլին հատուկ մի շարք թերություններին, որոշակի ջանքեր ներդրեց գյուղական նոր հասարակայնության ձևավորման գործում։ Այդ նպատակին էին ծառայում նաև նրա էջերում հաճախակի երևացող «Աշխատավոր կնոջ թերթիկ»-ն ու «Կարմիր երիտասարդի թերթիկ»-ը։ 1922 թ. հունվարի 22-ին և 24-ին էջմիածնում հրատարակվեցին նաև երիտասարդական մամուլի օրվան նվիրված «Կարմիր երիտասարդ» թերթիկի երկու համարները՝ իբրև կոմերիտմիության գավկոմի օրգան։

1921 թ. մայիսի 18-ից հրատարակվում էր ՀԿ(բ)Կ Լոռվա գավառային և հեղափոխական կոմիտեների օրգան «Կարմիր Լոռի»-ն[67]։ «Էս թերթով,— գրում էր խմբագրությունը,— մենք պետք է աշխա-

---

65 «Կարմիր գյուղացի»-ն չուներ կանոնավոր պարբերականություն, լույս էր տեսնում 3—4 օրը, երբեմն էլ շաբաթը մեկ կամ ամիսը երկու-երեք անգամ՝ 500 օրինակ տպաքանակով։ Հրատարակվում էր անստորագիր, բայց հայտնի է, որ խմբագրել են Ա. Շահգելդյանը, Լ. Թովմասյանը, Ա. Մուրադյանը և Հ. Բաննահյանը։

66 Տե՛ս «Կարմիր գյուղացի», էջմիածին, 1921, № 1։

67 1922 թ. փետրվարի 12-ից՝ գավկոմի և խորհուրդների օրգան։ «Կարմիր Լոռի»-ն նույնպես լույս էր տեսնում ոչ կանոնավոր պարբերականությամբ. սկզբում 10—12 օրը կամ շաբաթը մեկ, հետո՝ 3—4 օրը մեկ։ Մինչև 1922 թ. սկիզբն ուներ երկու էջ, դրանից հետո հաճախակի լույս էին տեսնում 4 էջանոց համարներ։ Տպաքանակը՝ 300։ Թերթը սկզբում, կարճ ժամանակով, խմբագրել են Կ. Ղազարյանն ու Գ. Մեհրարյանը, այնուհետև՝ Սիմակ Սահակյանը (Մաճկալ Շմավոն)։

տենք գյուղացի ժողովրդին հասկանալի լեզվով ու ձևով հասկացնել նրան, թե ի՞նչ է էս խորհրդային կարգերի իմաստն ու միտքը... Ի՞նչ է կոմունիստական կուսակցությունը, ի՞նչ բան է ինքը՝ կոմունիզմը, ի՞նչ ճանապարհներով և ինչպիսի գործերով պետք է հասնենք էն լուսաշող ու փառավոր ապագային, որ կոչվում է սոցիալիզմի թագավորություն»[68]: «Կարմիր Լոռի»-ն աչքի էր ընկնում առօրյա խնդիրների գործնական ու մատչելի արծարծումով. խմբագրությունը հիմնականում հաջողությամբ էր օգտվում տեղական խոսակցական լեզվից, ժողովրդական բառ ու բանից: «Կարմիր Լոռի»-ում զետեղվել են մի քանի թերթիկներ՝ կոմերիտմիության գավկոմի օրգան «Լոռվա կարմիր երիտասարդ»-ը, «Լոռվա աշխատավոր կնոջ թերթիկ»-ը, «Հնձվոնի թերթիկ»-ը և «Красный Лори»-ն, որն սպասարկում էր գավառի ռուս աշխատավորությանը:

Տպագրական մեքենա և որոշ քանակությամբ տառեր ձեռք բերելուց հետո մամուլի իր օրգանն է հրատարակում ՀԿ(բ)Կ Նոր Բայազետի գավկոմը. 1921 թ. ամռանն այստեղ լույս են տեսնում «Աղքատ գյուղացի» թերթի մի քանի համարները: Հոկտեմբերին սրան փոխարինելու է գալիս «Ռանչպար»-ը[69], որն ոգալի դեր խաղաց գավառի չքավոր գյուղացիության քաղաքական դաստիարակության գործում: Թերթն ագիտացիոն-կազմակերպչական աշխատանք էր ծավալում պարենհարկի դանձման, խորհուրդների ընտրության[70] կամպանիաներում, անդրադառնում էր գպրոցական շինարարության, գյուղատնտեսության վերականգնման, առողջապահության խնդիրներին և այլն: «Ռանչպար»-ի հրատարակման հետ կապված մի քանի մանրամասներ, որ վերհիշում է թերթի խմբագիրը, լրացնում են մեր պատկերացումները գավառական մամուլի կազմակերպման դժվարին, բայց խանդավառ, ռոմանտիկ օրերի մասին.

---

68 «Կարմիր Լոռի», Ջալալ-օղլի, 1921, № 4:

69 «Ռանչպար»-ը շաբաթաթերթ էր համարվում, բայց կանոնավոր պարբերականություն չուներ. լույս էր տեսնում 2 էջով, երբեմն ունեցել է նաև 4 էջանոց համարներ: Հրատարակվել է շուրջ մեկ ու կես տարի: Խմբագիրն էր Վ. Ծովյանը (Խերանյան), որը թերթի տպագրության կազմակերպման մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդել մամուլի պատմաբան Վ. Ամիրբեկյանին (տե՛ս «Սովետահայ տեղական մամուլը», Երևան, 1964, էջ 24—25:

70 Ինչպես հաղորդում է Վ. Ծովյանը, 1922 թ. սկզբին, ընտրական կամպանիայի ընթացքում, Նոր Բայազետում հրատարակվում էր «Սովետներ» անունով թերթը, որը լույս տեսավ ընդամենը երեք կամ չորս համար (տե՛ս Վ. Ծովյան, Այն տարիներին, Երևան, 1968, էջ 132):

«Թերթը տպագրվում էր հարթ մեքենայի վրա և անիվը պտտեցվում էր ձեռքով։ Թերթի լույս տեսնելու օրը գավառային կոմիտեի բոլոր աշխատակիցները՝ սկսած քարտուղարից մինչև ցրիչը, իրենց մասնակցությունն էին ցույց տալիս մեքենայի անիվը պտտեցնելու աշխատանքին։ Խմբագրության ոչ մի աշխատող վարձատրություն չէր ստանում, հեղինակային հոնորար գոյություն չուներ»։

1921 թ. սկզբին, բավական անկանոն պարբերականությամբ, Իջևանում լույս տեսան ՀԿ(բ)Կ գավկոմի և գավգործկոմի օրգան «Մուրճ ու մանգ» թերթի մի քանի համարները։ Դրանք երկու էջանոց, տպագրական առումով անփույթ կազմված թերթիկներ էին, որ մեծ մասամբ լցված էին կուսբջիջների նիստերի բանաձևերով ու արձանագրություններով։ Երկար ժամանակ չէր հաջողվում կանոնավորել թերթի հրատարակությունը՝ աշխատակիցների ու թղթակիցների բացակայության պատճառով։ Մինչև հունիս ամիսը հաջողվեց հրատարակել հազիվ 5 համար։ Կուսբջիջներին ուղղված շրջաբերականում հայտնելով, որ չնայած երկար ժամանակ է, ինչ ձևնարկված է թերթի հրատարակությունը, բայց չի հաջողվում կանոնավորել նրա լույսընծայումը, գավկոմը գրում էր. «Որպեսզի թերթը դառնա հետաքրքիր և մեր գավառի կյանքի հայելին և կանոնավոր կերպով լույս տեսնի, հարկավոր է, որ լայն մասսաները... թերթին նյութ մատակարարեն։ Յուրաքանչյուր կոմունիստ պետք է լինի և՛ ընթերցող, և՛ աշխատակցող (գրող) մեր թերթին»։ Գավկոմը բոլոր կոմբջիջներին առաջարկեց արձանագրությունների հետ մեկտեղ ուղարկել նաև «նյութեր և գրվածքներ մեր թերթում տպելու համար»[71]։ Ամռան վերջերից թերթի աշխատանքներում նկատվեց որոշ բարելավում։ Տպագրվում էին տեղերից ստացված թղթակցություններ, հոդվածներ, նամակներ՝ գավառում ծավալվող գյուղատնտեսական աշխատանքների վերաբերյալ։ Հրատարակվեց «Երիտասարդ մանկալ» էջը։

1923 թվականից «Մուրճ ու մանգ»-ը սկսեց լույս տեսնել գավառական նոր կենտրոնում՝ Դիլիջանում, Վ. Հովսեփյանի խմբագրությամբ։ Կանոնավորվեց պարբերականությունը, համեմատաբար հարուստ ու բազմազան դարձավ թերթը նաև բովանդակության, նյութերի մատուցման ձևի տեսակետից... Սակայն շուտով վրա հասած ֆինանսական դժվարությունները անհնար դարձրին նաև այս պարբերականի հետագա գոյությունը. նույն թվականի մարտ ամ-

---

71 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 483, թ. 108։

սից հարկ եղավ դադարեցնել «Մուրճ ու մանգ»-ի հրատարակությունը[72]։

1921 թ. էջմիածնում լույս տեսան «Դեպի խորհուրդները», 1923 թ. Մեղրիում՝ «Կարմիր ուղի» լրագրերի մի քանի համարներ։ Հայաստանի տարբեր գավառներում հրատարակվել են նաև միօրյա թերթեր ու թերթիկներ։

* * *

Մեր հանրապետության գավառական մամուլի մեջ առանձնակի արժեք ունեն Ալեքսանդրապոլում և Գորիսում հրատարակված պարբերականները։ Տեղական կյանքի առավել բազմակողմանի ու հետևողական արտացոլմանը զուգահեռ սրանք ի հայտ են բերել նաև մի շարք այնպիսի հատկանիշներ, որ շատ կողմերով բնորոշ են գավառական մամուլի ընդհանուր բնութագրման տեսակետից։ Ուստի և արժե համառոտակի կանգ առնել այդ պարբերականների հրատարակման հետ կապված հարցերի վրա և անդրադառնալ նրանց գործունեության էական կողմերին։

Ալեքսանդրապոլում դեռևս թուրքական օկուպացիայի օրերին լույս էր տեսնում երեք թերթ («Կոմունիստ»[73], «Պրոլետար»[74], «Բանվորի խոսք»[75])։ Զավթիչների հարկադիր հեռացումից հետո նախաձեռնվեց նոր պարբերականի հրատարակությունը. 1921 թ. հունիսի 1-ին լույս տեսավ ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավկոմի և գավհեղկոմի օրգան «Կարմիր Շիրակ»-ի[76] անդրանիկ համարը։ Աստի-

---

72 Տե՛ս նույն տեղը, ց. 2, գ. 455, թ. 46։

73 «Կոմունիստ»-ը Հայաստանի կոմկուսի Ալեքսանդրապոլի շրջկոմի (գավկոմի) օրգանն էր, առաջին լեգալ կոմունիստական թերթը Հայաստանում։ Լույս է տեսել 1920 թ. նոյեմբերի 21-ից մինչև 1921 թ. հունվարի 25-ը։ Պատ. խմբագիրն էր գավկոմի քարտուղարության անդամ և ագիտ-պրոպ բաժնի վարիչ Արշալույս Արշարունին։

74 «Պրոլետար»-ը Հայաստանի կոմկուսի Ալեքսանդրապոլի կոմիտեի օրգանն էր։ Հրատարակվել է 1921 թ. փետրվար-ապրիլ ամիսներին։ Պատ. խմբ՝. Ա. Արշարունի։

75 «Բանվորի խոսք»-ը Ալեքսանդրապոլի բանվորական ակումբի օրգանն էր։ Ստորագրված է՝ խմբագրություն։ 4—8 էջ (44×32 սմ), տպաքանակը չի նշված։ Մեր տեսած վերջին՝ 4-րդ համարը հրատարակվել է 1921 թ. ապրիլի 23-ին։

76 «Կարմիր Շիրակ»-ը շաբաթաթերթ էր, լույս էր տեսնում կանոնավոր պարբերականությամբ, մի հանգամանք, որ դրեթե բացառություն է գավառական մամուլի պատմության մեջ։ Այնուամենայնիվ, «մի քանի տեխնիկական անհարմարությունների պատճառով» թերթը օգոստոսի սկզբից մինչև սեպտեմբերի 25-ը լույս չի տեսնում (տե՛ս «Կարմիր Շիրակ», 1921, № 18)։ Պատ. խմբագիրն էր Հ. Գյուլի-Քեվխյանը։ Տպաքանակը՝ 650—950։

ճանաչար հաղթահարելով առաջին շրջանում նկատվող վերացականությունն ու բաղաբական վերամբարձությունը, «Կարմիր Շիրակ»-ը շուտով սկսեց տպագրել կոնկրետ բովանդակությամբ և տեղական կյանքի փաստերով հագեցած այնպիսի նյութեր, որոնք զգալի չափով նպաստում էին որոշ խավերում նկատվող «տակավին պահպանողական հոգեբանության տարրերի» վերացմանը, հեղափոխական ավանդների տարածմանն ու արմատավորմանը:

«Կարմիր Շիրակ»-ը զգալի տեղ էր հատկացնում կուսակցական աշխատանքի լուսաբանմանը, լայն ինֆորմացիա էր տալիս խորհրդային Ռուսաստանում և Անդրկովկասում ծավալված տնտեսական շինարարության մասին, ընթերցողներին էր հաղորդում միջազգային կյանքում, մասնավորապես Մերձավոր Արևելքում խմորվող կարևոր իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունները: Թերթի համար հատկանշական էր նաև մի այլ հանգամանք. արծարծելով բազմաթիվ պրակտիկ խնդիրներ, խմբագրությունն ամեն կերպ ջանում էր պահպանել ընթերցողների հետ հաղորդակցվելու գործարար տոնը, հնարավորին չափ մատչելի և դյուրմբռնելի լինել ամենալայն զանգվածներին: Եվ պատահական չէր թերթի աշխատակիցներին ու թղթակիցներին բազմիցս արված այն հիշեցումը, թե՝ «գյուղացին կամ մեր երկրի բանվորը չոր ու ցամաք դատողությունները չեն սիրում, նրանց սրտին ու խելքին վերացական հասկացողությունները քիչ բան են ասում»[77]:

Ի տարբերություն դավառական մյուս թերթերի՝ «Կարմիր Շիրակ»-ը հաճախակի անդրադառնում էր բանվորությանը հուզող խնդիրներին. թերթում պարբերաբար գործում էր Կյանքը երկաթուղիների վրա բաժինը: Ամիսը երկու-երեք անգամ թերթն իր էջերից մեկը կամ առանձին անկյուն էր հատկացնում «Հեղափոխության ուղի» խորագրով թերթիկին, որը Հայաստանի երկաթուղային տրանսպորտի աշխատողների Ալեքսանդրապոլի շրջանի արհմիության կոմիտեի օրգանն էր: Նույն պարբերականությամբ «Կարմիր Շիրակ»-ը վնտեղում էր նաև կոմերիտմիության գավկոմի օրգան «Կարմիր երիտասարդ» թերթիկը:

«Կարմիր Շիրակ»-ը լույս տեսավ մոտ 9 ամիս՝ մինչև 1922 թ. փետրվարի սկիզբը: Այս թերթին փոխարինելու եկավ, ավելի ճիշտ՝ նրա շարունակությունը հանդիսացավ «Շիրակի ռանչպար»-ը, որ

---

77 «Կարմիր Շիրակ», 1921, № 5:

սկսեց հրատարակվել 1922 թ. մարտի 20-ից[78]։ Սա ևս, նախորդի նման, ձգտում էր արտացոլել գավառի կյանքը, աջակցել հասարակական նոր հարաբերությունների ձևավորմանը։ Եվ այդ բանը նրան հաջողվում էր ավելի, քան իր նախորդին։ Դրան նպաստում էր մի կողմից թերթի պարբերականության ավելացումը, մյուս կողմից՝ տեղերի հետ կապի ամրապնդումն ու ընդլայնումը։ Հենց դա էլ «Շիրակի ռանչպար»-ը օրաթերթ դարձնելու հիմք հանդիսացավ։ Այդ առթիվ գրած հոդվածում թերթի խմբագիրը նշում էր. թեև «Շիրակի ռանչպար»-ը սկսեց հրատարակվել «մի երկու աշխատակիցներով և բաժանորդներով», բայց «հետզհետե մեծացավ, լայնացավ, ստիճանաբար հետաքրքրեց, գրավեց աշխատավորական լայն մասսաները և այժմ համարյա ամեն մեկ գյուղում, գավառի ամենախուլ անկյուններում նա ունի յուր սեփական թղթակիցներն ու աշխատակիցները և տասնյակներով գրություններ և հոդվածներ է ստանում...»[79]։ Նման հաջողություն արգասիք էր այն հետևողական ջանքերի, որ գործադրում էր խմբագրությունը՝ կյանքի վերածելու համար գավառական մամուլի կոչման իր հետևյալ ճշմարիտ ըմբռնումը. «Ամեն տեղ Հայաստանում և մասնավորապես մեր գավառում թերթը պետք է տեղական բնույթ կրի, գյուղացիների, բանվորների սրտին մոտիկ և հասկանալի լինի, պետք է շոշափի, լուծի, պարզաբանի մեր իրականության ցավոտ հարցերը, խնդիրները, հետաքրքրություն առաջ բերի լայն անկուսակցական մասսաների մեջ»[80]։

Սա չէր նշանակում, իհարկե, թե «Շիրակի ռանչպար»-ը ժրխտում էր ընդհանուր քաղաքական բնույթի ելույթների, միջազգային խնդիրներին վերաբերող նյութերի անհրաժեշտությունը թերթի էջերում. բայց խմբագրությունը լավ էր հասկանում, որ դա պիտի անել մտածված ու նպատակասլաց կերպով. այդ կարգի նյութերի դնեղումը գավառական մամուլում պիտի լինի ո՞չ թե պարզապես թերթի էջերը լցնելու հնար և դրանով իսկ՝ պատահական ընտրության արդյունք, այլ պետք է բխի յուրաքանչյուր գավառում տարածվող քաղաքական պրովոկացիաները մերկացնելու, մասսաների

---

78 «Շիրակի ռանչպար»-ը ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավկոմի և գործադիր կոմիտեի եռօրյա օրգանն էր։ Խմբագիր՝ Հ. Բաննահյան։ Տպաքանակը՝ 400—600։ 1923 թ. հունվարից դարձավ երկօրյա, իսկ փետրվարի 1-ից՝ օրաթերթ։ Համապատասխանորեն ավելացավ նաև տպաքանակը՝ հասնելով մինչև 1200-ի։

79 «Շիրակի ռանչպար», 1923, № 12։

80 Նույն տեղում, 1922, № 10։

աշխարհայացքի առողջ ձևավորմանը նպաստելու, քաղաքական խնդիրների և միջազգային հարցերի նկատմամբ հետզհետե մեծացող նրանց հետաքրքրասիրությունը բավարարելու անհրաժեշտությունից։ Այսպիսի ճիշտ ըմբռնումից ելնելով էլ «Շիրակի ռանչպար»-ը առարկում էր այն միակողմանի ու տենդենցիոզ կարծիքներին, որ երբեմն արտահայտվում էին գավառական մամուլի բնույթին վերաբերող խորհրդածություններում։ Ուշագրավ են այս առումով այն նկատառումները, որ հայտնել է թերթը «Խորհրդային Հայաստան»-ում տպագրված «Մեր մամուլի ցավերը» խորագրով հոդվածի[81] առթիվ։ Ճիշտ կերպով սրելով գավառական մամուլում տեղական կյանքի արտացոլման պահանջը, նկատում էր «Շիրակի ռանչպար»-ը, հոդվածագիրն այնպես էր ձևակերպել իր մտքերը, որ ակամա ստացվում էր այն տպավորությունը, թե նա, վերջին հաշվով, մերժում է գավառական թերթերում միջազգային հարաբերությունների, ընդհանուր քաղաքական խնդիրների արծարծումը՝ թեկուզ և սահմանափակ չափով։ «Մեր գավառական մամուլը գրում է ամեն բանի մասին, խառնում է իրար և՛ Անգլիայի, և՛ Ֆրանսիայի, և՛ Իտալիայի շահերը, զուշակություններ է անում Հյուսիսային Ամերիկայի նախագահի ապագա քայլերի մասին...»,— այս և նման արտահայտություններն ունեն որոշ արհամարհական շեշտ։ «Գյուղացին հիմա շատ է հետաքրքրվում, թե ի՞նչ է կատարվում մյուս երկրներում,— պատասխանում էր «Շիրակի ռանչպար»-ը,— նա դիտե պատերազմի փորձից հետո, որ իր տնտեսության դրությունը կապված է մյուս աշխարհների անցուդարձի հետ». բացի այդ, «... Ալեքսոլում շատ պրովոկացիաներ են տարածվում բոլոր քաղաքական հարցերի շուրջը։ Բա որ թերթում այդ հարցերի մասին չգրես, էլ ինչպե՞ս կարող ես գյուղացու միտքը բացել, նրան լուսավորել»[82]։

Այսպես ուրեմն, մի կողմից՝ շեշտված տեղական բնույթ, գավառի առջև կանգնած կոնկրետ տնտեսական-շինարարական խնդիրների հետևողական արծարծում, մյուս կողմից՝ քաղաքական և միջազգային հարցերի լուսաբանություն, բայց այնպես, որ դրանք էլ, վերջին հաշվով, ծառային առաջին և կարևորագույն խնդրի կատարմանը,— այս էր գավառական մամուլի դերի ճշմարիտ ըմբռնումը, որ ուներ «Շիրակի ռանչպար»-ը և որը ուսանելի էր ու արդա-

81 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1923, № 21։

82 «Շիրակի ռանչպար», 1923, № 16։

սաբեր հանրապետության ողջ տեղական մամուլի համար։ Լուսաբանելով գավառի առօրյան, արձագանքելով այնպիսի գործնական խնդիրների, ինչպիսիք էին գարնանացանի և սերմանման կամպանիաները, պարենհարկի գանձումը, սովյալներին ու անապատան երեխաներին օգնելը, դպրոցական գործի կազմակերպումը և այլն, թերթը մերկացնում էր նաև բաղաքական պրովոկացիաները, անդրադառնում միջազգային իմպերիալիզմի դավերին, դիվանագիտական խաղերին։

«Շիրակի ռանչպար»-ը օրինակելի գավառային թերթի համարում ուներ ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս. ՀԿ(բ)Կ Կենտկոմին ուղղած իր մի գրությամբ ՌԿ(բ)Կ Անդրկովկասի ագիտպրոպ բաժինը «Շիրակի ռանչպար»-ը գնահատել է որպես «լավագույններից մեկը Անդրկովկասի բոլոր գավառական թերթերի մեջ»[83]։

1923 թ. փետրվար-մարտ ամիսներին «Շիրակի ռանչպար»-ի էջերում երևաց բանվորներին և գյուղացիներին ուղղված մի ազդհայտարարություն[84], որով խմբագրությունը յուրովի մրցույթ էր հայտարարում՝ թերթի անունը փոխելու համար։ «Շիրակի ռանչպար» անվանումը հարմար էր այնքան ժամանակ, քանի դեռ թերթն ուներ գերազանցապես գյուղացիական բնույթ. բայց հետզհետե նրա էջերում ավելի ու ավելի շատ էին տեղ գտնում քաղաքի բանվորների կյանքն ու երկաթուղային տրանսպորտի հոդսերն արտահայտող նյութեր, ուստի և թերթի անունն այլևս չէր համապատասխանում ոչ նրա ուղղությանը, և ոչ էլ բովանդակությանը։ Նախքան անվանափոխությունը, խմբագրությունը որոշեց «հարցնել բանվորներին և գյուղացիներին, թե ի՞նչ նոր անուն են ուզում դնել իրենց թերթին»։ Վերջին անգամ թերթն իր հին անվանումով հրատարակվեց 1923 թ. մայիսի 1-ին. դա «Շիրակի ռանչպար»-ի 172-րդ համարն էր։ Մայիսի 5-ին, մամուլի օրը, թերթը լույս տեսավ նոր՝ «Բանվոր» խորագրով[85]։ Խմբագրությունը ճիշտ կողմնորոշում ըն-

---

83 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 438, թ. 88։

84 Տե՛ս «Շիրակի ռանչպար», 1923, №№ 29, 30, 35։

85 «Բանվոր»-ը սկսեց լույս տեսնել իբրև ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավկոմի, գավգործկոմի, գավպրոֆբյուրոյի և երկաթուղայինների արհմիության բաժանմունքի օրգան։ Հրատարակվում էր 2—3 օրը մեկ, 1924 թ. հունվարի 1-ից, հարյուր համարից հետո, դարձավ երկօրյա, փետրվարի 29-ից՝ կարճ ժամանակով՝ օրաթերթ, հետո՝ շաբաթաթերթ և այլն։ Առաջին երկու տարում տպաքանակը՝ 1250—1500։ Մինչև 1936 թ. թերթը խմբագրել են Աշ. Հախումյանը, Եր. Խոջամիրյանը, Վ. Ծովյանը, Տ. Խորունին, Հմ. Ոսկանյանը (Սիրաս), Վ. Օհանյանը։

դունեց՝ հետևելով այն սկզբունքին, թե՝ «Բանվոր»-ը աշխատում է բանվորա-գյուղացիական մասսաների մեջ, հավասարապես բավարարելու է երկու տարրերի պահանջներին. թերթի ուղղությունը պետք է լինի բանվորա-գյուղացիական»[86]:

Եվ իրոք, ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին թերթը պատշաճ ուշադրություն էր նվիրում թե՛ գյուղատնտեսության և թե՛ արդյունաբերության ու տրանսպորտի խնդիրներին, գյուղի ուսումնասիրության, հասարակական ուժերի փոխհարաբերության ճիշտ կազմակերպման, բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման հարցերի քննության կուգահեռ արտացոլելով նաև կուլտուր-լուսավորական աշխատանքների և նոր կենցաղի ձևավորման ընթացքը գավառում:

Ինչպես արդեն նշեցինք, «Բանվոր»-ը մեծ ուշադրություն նվիրեց Շիրակի ջրանցքի շինարարությանը: Առանձնակի վաստակ ունի «Բանվոր»-ը քաղաքում տեքստիլ արդյունաբերության կազմակերպման գործում: Թերթում մշտապես երևում էին Տեքստիլ գործարանում, Տեքստիլ գործարանի անկյուն և այլ բաժիններ, որոնցում տպագրված բազմազան ու բազմապիսի նյութերն աչքի էին ընկնում գործարար բնույթով, արտադրանքի քանակի ավելացման ու որակի բարելավման մտահոգությամբ թելադրված հարցադրումներով. թերթը սատար էր կանգնում առաջավոր փորձի տարածմանը, հաճախակի ստուգայցեր կազմակերպելով՝ քննադատության կրակի տակ էր առնում նա մնացող արատավորումները: «Բանվոր»-ը իրավամբ կարելի է համարել լենտեքսթիլի ամենաառանցքային շիֆը:

Մյուս կարևոր բնագավառը, որ միշտ եղել է «Բանվոր»-ի տեսադաշտում, երկաթուղային տրանսպորտն էր: Ինչպես արդեն հիշատակել ենք՝ «Կարմիր Շիրակ»-ում մինչև 1922 թ. փետրվարը զետեղվում էր երկաթուղայիններին արհմիության օրգան «Հեղափոխության ուղի» թերթիկը, որը նույն թվականի մարտից վերածվեց ինքնուրույն հրատարակության. սկսեց լույս տեսնել «Կարմիր ուղի» թերթը (խմբ.՝ Թ. Մանդալյան): Սակայն «Բանվոր»-ի տպարիզ գալու պահին այն դադարել էր ինքնուրույն հրատարակություն լինելուց և միայն որոշ ժամանակ անց, այս անգամ արդեն իրև առանձին էջ՝ զետեղվում էր անդրերկաթուղայինների օրգան «Гудок» թերթում: Երկաթուղային տրանսպորտի Լենինականի բաժանմունքի աշխատանքների լուսաբանումը, այսպիսով, հիմնականում

86 «Բանվոր», 1924, № 113:

ատանձնից «Բանվոր»-ը։ Սկզբում Բանվորական բաժնում, հետագայում նաև Դեպոյի բանվորները, Փաստեր և դիտողություններ և այլ խորագրերի ներքո թերթը պարբերաբար հաղորդագրություններ, ահազանգող թղթակցություններ, ակնարկներ էր զետեղում երկաթուղայինների աշխատանքի, շոգեքարշերի վերանորոգման, բանվոր-ծառայողների կուլտուր-կենցաղային սպասարկման և բազմաթիվ այլ խնդիրների վերաբերյալ։

Նշանակալից է մասնավորապես «Բանվոր»-ի նախաձեռնությունը հնագույն և առաջավոր մեքենավարների դրվատման, նրանց աշխատանքային փորձն ու ավանդները մասսայականացնելու ուղղությամբ։ 1924 թ. սկզբից թերթում բացվեց Մեքենավարների մրցում խորագրով անկյունը, որտեղ տպագրվում էին առաջավորներին նվիրված փոքրիկ բնութագրություններ, երբեմն ակնարկային ոճով՝ ցույց էր տրվում նրանց կյանքի ուղին, աշխատանքային ազնիվ վաստակը։ Ինքնին հասկանալի է, որ այս նյութերն ունեին նաև դաստիարակչական նշանակություն և յուրովի շաղկապում էին հայրերի հեղափոխական ավանդները երիտասարդ սերնդի նորօրյա ջանքերին։ Նման նպատակասլացությամբ էին աչքի ընկնում նաև Մայիսյան ապստամբությանը, նրա հերոսների հիշատակին նվիրված նյութերը, հոդվածները, հիշողություններն ու վկայությունները, որ պարբերաբար, անկախ հոբելյանական տարելիցներից, տպագրում էր «Բանվոր»-ը։ Այդ նյութերը, որ ժամանակին ունեցել են որոշակի ճանաչողական-դաստիարակչական նշանակություն, այսօր ձեռք են բերել նաև պատմա-գիտական արժեք։

Աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության և նրանց աշխարհայացքի ընդլայնմանը հետամուտ՝ «Բանվոր»-ը պատշաճ տեղ էր հատկացնում խորհրդային մյուս հանրապետությունների բանվորների և գյուղացիների խաղաղ-շինարարական ջանքերի պատկերմանը, մոռացության չտալով նաև կապիտալի երկրներում մղվող դասակարգային պայքարի դրվագներն ու միջազգային հարաբերություններում տեղի ունեցող կարևորագույն ընթացիկ իրադարձությունները։

«Բանվոր»-ը բացառիկ տեղ ունի մեր հանրապետության գավառական մամուլի պատմության մեջ։ Երբ նա հրապարակ իջավ, տեղական թերթերի մեծ մասն արդեն դադարել էր, մնացածներն էլ, բացառությամբ «Կարմիր ռաշպար»-ի, վերջին օրերն էին ապրում. անհաշվարկային սիստեմին անցնելը բավականին ծանր ֆինանսական կացության մեջ դրեց մամուլը։ Ինչպես նկատում

էր «Խորհրդային Հայաստան»-ը խմբագիրների անդրկովկասյան խորհրդակցության տոթիվ գրված առաջնորդողում՝ «տնտեսական միջոցների սղության պատճառով մենք ստիպված եղանք հրաժարվել մի շարք պարբերականներից»[87]: Այս իրադրության մեջ ավելի պատասխանատու էին դառնում «Բանվոր»-ի վրա դրված խնդիրները: Սակայն ինքը՝ «Բանվոր»-ը ևս հանդիպում էր ֆինանսական-տեխնիկական լուրջ խոչընդոտների: 1925 թ. կեսերին թերթի վիճակը ճգնաժամային էր. հուլիսի 31-ին Լենինականի գավկոմի բարտուղարը Հայաստանի կոմկուսի Կենտկոմ ուղարկեց հետևյալ բովանդակությամբ մի գրություն. «Լենգավկոմը խնդրում է միջնորդել Հայաստանի ժողկոմխորհի առաջ՝ «Բանվոր»-ին դոտացիա բաց թողնելու համար, նկատի ունենալով թերթի նյութական ծայրաստիճան անմխիթար վիճակը»[88]: Գրությանը կցված էր այդ ծանր կացությունն արտահայտող մի նախահաշիվ՝ թերթի միամսյա ծախսերի և մուտքերի վերաբերյալ[89]. թերթի վրա կատարված ծախսերը գրեթե չորս անգամ գերազանցում էին բաժանորդագրությունից և հատավաճառից ստացված եկամուտները, որ չէին ծածկում նույնիսկ տրվող աշխատավարձը. ոռճիկ ստանում էին երեք հոգի՝ պատասխանատու քարտուղարը, բաշխիչը և ցրիչը, բոլորը միասին՝ 184 ռուբլի, մինչդեռ եկամուտը հասնում էր ընդամենը 162 ռուբլու: Շատ մեծ էին տպագրական ծախսերը՝ 449 ռ. 40 կոպ. (շարվածք, էջկապ, թուղթ, տպագրություն և այլն):

Լենինականում տեղի ունեցած տարերային մեծ աղետը՝ երկրաշարժը ստիպեց հիմնովին վերանայել տեղական բյուջեի բաշխման հարցը: Ստեղծված պայմաններում պարզապես անհնար դարձավ թերթի ֆինանսավորումը: Եվ ահա, 1926 թ. ապրիլի 7-ին ՀԿ(բ)Կ Լենինականի գավկոմի նախագահությունը որոշեց դադարեցնել «Բանվոր»-ի հրատարակությունը, միաժամանակ խնդրելով Կենտկոմից՝ բաց թողնել 1200 ռուբլի՝ Պետհրատի պարտքը փակելու համար, ինչպես նաև ընդլայնել «Խորհրդային Հայաստան» թերթում Լենինականին հատկացվող բաժինը: «Բանվոր» թերթի թղթակիցներին առաջարկվեց կապվել «Խորհրդային Հայաստան»-ի և

87 «Խորհրդային Հայաստան», 1923, № 129:
88 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 70, թ. 19:
89 Տե՛ս նույն տեղը, թ. 20—21:

«Մաճկալ»-ի հետ[90]։ Ավելի քան վեց ամիս գավառի աշխատավորությունը զրկվեց իր տպագիր օրգանից։

Այս վիճակը, սակայն, երկար շարունակվել չէր կարող։ Երկրաշարժի պատճառած ավերածությունը պահանջում էր, որպեսզի Լենինականի աշխատավորությունը եռանդով ձեռնամուխ լինի քաղաքի ու բանվված գյուղերի վերաշինությանը։ Եվ կրկին զգացվեց թերթի անհրաժեշտությունը։ Գավառային կոմիտեն որոշեց 1926 թ. նոյեմբերից վերսկսել «Բանվոր»-ի հրատարակությունը[91]։ Ազնտի օրերին, գրում էր «Բանվոր»-ը նոյեմբերի 11-ին, գավառի բանվորներն ու գյուղացիներն «ավելի շոշափելի կերպով զգացին համայն Միության աշխատավորության համերաշխությունը» և «նոր եռանդով, նոր ոգևորությամբ անցնում են իրենց քաղաքի և ավերված գյուղերի վերականգնման գործին... Կանգ առած հասարակական կյանքը պիտի հոսի ավելի ևս մեծ թափով։ Ահա հենց այսպիսի պայմաններում է, որ թերթն իբրև կոլեկտիվ ղեկավար և կոլեկտիվ կազմակերպիչ՝ ևս առավել մեծ նշանակություն պիտի ստանա... «Բանվոր»-ը մեծ անելիքներ ունի—ուստի նա պե՛տք է որ ապրի»։ Խմբագրությունը կոչ արեց աշխատավորությանը, հասարակական բոլոր ուժերին՝ համախմբվել թերթի շուրջը և «ցույց տալ իրենց եռանդուն և ուժեղ մասնակցությունը»։ Վերահրատարակությունից հետո «Բանվոր»-ը իրոք աչքի ընկնող դեր խաղաց Լենինականի վերաշինության, ավելի ճիշտ՝ նոր քաղաքի կառուցման համար աշխատավորության ուժերի մոբիլիզացման գործում։

* * *

Քաղաքացիական կռիվները վերջանալուց հետո, 1921 թ. հուլիսից Զանգեզուրը ևս ունեցավ իր լրագիրը՝ գավհեղկոմի օրգան «Խորհրդային Զանգեզուր»-ը, որ հրատարակվեց շուրջ չորս ամիս, անկանոն պարբերականությամբ[92]։ Թերթի համարների մեծ մասը նվիրված էր Զանգեզուրում ապաստանած «նժդեհականների» գործելակերպի մերկացմանը և նրանց դեմ կարմիրբանակային զորամասերի ու տեղի բոլշևիկների մղած պայքարի արժեքավորմանը։

---

90 Տե՛ս նույն տեղը, ց. 6, գ. 209, թ. 5։

91 Տե՛ս նույն տեղը, գ. 177, թ. 12։

92 Նախորդ տարվա դեկտեմբերին Գորիսում լույս էր տեսել «Կարմիր Զանգեզուր» խորագրով թերթի մի քանի համար։ Դժբախտաբար, մեզ չհաջողվեց գտնել դրանցից և ոչ մեկը։

1921 թ. նոյեմբերից այս լրագրին փոխարինելու է գալիս «Կարմիր ռաշպար»[93]-ը, որը «Բանվոր»-ի հետ միասին ամենաերկարակյաց գավառային թերթն էր Հայաստանում։ «Կարմիր ռաշպար»-ը հրատարակվեց 10 տարի՝ հանդիսանալով մեր հանրապետության հեռավոր ու խոշոր շրջաններից մեկի աշխատավորության գործերի ու մաքառումների, Զանգեզուրում տեղի ունեցած վերափոխումների տարեգիրը։ «Կարմիր ռաշպար»-ում զետեղվում էին կոմերիմիության գավկոմի օրգան «Երիտասարդ ռաշպար» թերթիկը և «Զանգեզուրի պատկում» էջը։

«Կարմիր ռաշպար»-ը առաջին իսկ համարներից հատուկ կբրքռտություն հանդես բերեց թշնամական տարրերի կողմից գավառում տարածվող պրովոկացիոն լուրերը հերքելու, աշխատավոր գյուղացիության մեջ խորհրդային իշխանության անսասանության նկատմամբ հավատը ամրապնդելու գործում։ Թերթի այդ ելույթները ոչ միայն զաղափարական-դաստիարակչական նշանակություն ունեին, այլև զգալի չափով նպաստեցին կազմակերպչական տրամադրությունների հաղթահարմանը, դասալքության դեմ մղվող պայքարի և խաղաղ-շինարարական աշխատանքների կազմակերպմանը։ Պատասխանելով խորհրդային կարգերի մոտալուտ վերացման և նախկին տերերի անխուսափելի վերադարձի մասին այն «պոչավոր պրովոկացիային», որի նպատակն էր «խանգարել Զանգեզուրի ազատ և հյուծված գյուղացիության ազատ ու խաղաղ կյանքը և մեղվաջան աշխատանքը», թերթը գրում էր. «Մեր երկիրը ո՞չ դաշնակներն են գալու, ո՞չ էլ անգլիացիները, ֆրանսիացիները և ո՞չ էլ մարսեցիները։ Ո՞չ մի ուժ չի կարող այլևս սարսափելի լինել մեզ համար և երերել խորհրդային իշխանության հիմքերը...»[94]։ Նոր կարգերի ամրության գրավականը թերթը համարում էր ազնիվ ու նվիրված աշխատանքը բոլոր ասպարեզներում. յուրաքանչյուր հիմնարկ ու կազմակերպություն, ամեն մի անհատ պիտի ունենա իր տեղն ու դերը. քայքայված տնտեսության վերականգնման, լուսավորության տարածման, բարեկեցիկ կյանքի հիմքերն ստեղծելու շահերը պահանջում են, գրում էր թերթը, որ երբեք և ոչ մի օրակում չլինի «ոչ մի գործադանցություն (սաբոտաժ), ոչ մի ծուլու-

---

93 «Կարմիր ռաշպար»-ը ՀԿ(բ)Կ Զանգեզուրի կոմիտեի և հեղկոմի օրգանն էր։ Սկզբնական շրջանում լույս է տեսել խմբագրական կոլեգիա ստորագրությամբ։ Խմբագրել են՝ Գ. Ղազարյանը, Ս. Օթյանը, Հ. Մկրտչյանը, Բ. Ներսիսյանը, Առաքելյանը։ Տպաքանակը սկզբում՝ 200—500, 1925 թվականից կրկնապատկվում է։

94 «Կարմիր ռաշպար», 1922, № 15։

թյուն, բմահաճույք ու կամակորություն և շեղումն գործելակերպի և առաջադրված նպատակակետի մեջ». «Պետք է յուրաքանչյուր աղնիվ քաղաքացի, որ ծառայում է խորհրդային որևէ հիմնարկության մեջ՝ քաջ գիտակցի, որ ինքն ունի քաղաքացիական մեծ պարտականություն. այն է՝ ծառայել իր քայքայված հայրենիքի վերաշինության գործին»[95]։

«Կարմիր ռաշպար»-ի ընդհանուր բնութագրման տեսակետից կարևոր է նշել նաև թերթի հետևողական ջանքերը անգրագիտության վերացման, գավառում դպրոցական գործի կազմակերպման, սնոտիապաշտության ճիրաններից աշխատավոր զանգվածներին ազատագրելու ուղղությամբ։ «Գյուղացուն հոգևկան սնունդ տալը» համարելով իր հիմնական պարտականություններից մեկը, խմբագրությունն ամեն կերպ ջանում էր, որ «Կարմիր ռաշպար»-ը օրգանական կապ պահպանի գյուղերի կուլտուրական կենտրոնների՝ կոմբջիջների, դպրոցների, խրճիթ-ընթերցարանների, գյուղփոխգնության կոմիտեների և գյուղխորհուրդների հետ՝ տալով նրանց աշխատանքների ճշգրիտ պատկերը[96]։

1923 թ. կեսերից (հուլիսի 29-ից) «Կարմիր ռաշպար»-ն սկսեց լույս տեսնել Գյուղացիական թերթ ենթանվանումով։ Այդ պահից սկսած՝ Կուսակցական, Դպրոցական, Առողջապահական և այլ բաժինների կողքին առանձնապես աչքի են ընկնում և թերթի ծավալի մեծ մասն են բռնում Զանգեզուրում, Մեր գյուղերում, Կոոպերացիա բաժինները։ «Կարմիր ռաշպար»-ը ասելիքնաբար ձեռք էր բերում մասսայական-գյուղացիական լրագրի հատկանիշներ։ Ինչպես նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը 1924 թ. սկզբներին՝ «այժմ մեզանում «Մաճկալ»-ից հետո, որպես գյուղացիական թերթ, երկրորդ տեղն է բռնում Զանգեզուրում հրատարակվող «Կարմիր ռաշպար»-ը։ Մնացած գավառներում, բացի Լենինականից, թերթեր չունենք՝ մամուլի աշխատանքների կենտրոնացման հետևանքով»[97]։ Սրանով էլ հենց պիտի բացատրել այն մեծ ուշադրությունը, որ ցուցաբերում էին «Կարմիր ռաշպար»-ի բարելավման նկատմամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմն ու հանրապետության մամուլի կենտրոնական օրգանները։ Կենտկոմի ագիտաբաժինը «Կարմիր ռաշպար»-ի վերաբերյալ կազմած մի գրությամբ պարտավորեցրեց գավկոմին՝ «լրագիրը դարձ-

95 Նույն տեղում, № 5։

96 Տե՛ս նույն տեղը, 1923, № 31։

97 «Խորհրդային Հայաստան», 1924, № 114։

նել հույժ ուշադրության առարկա»[98]։ ՀԿ(բ)Կ Զանգեզուրի գավկոմն սկսեց ավելի մոտիկից զբաղվել իր թերթով։ Խմբագրությունը ևս քիչ ջանքեր չգործադրեց լրագրի բովանդակությունը բարելավելու և հարստացնելու, թղթակցական ակտիվ ստեղծելու, ընթերցողների հետ կապերն ուժեղացնելու համար։ Ճիշտ է, դեռևս շատ բան կար անելու, բայց արդեն 1924 թ. սկզբներից որոշակի բարելավում էր նկատվում խմբագրության աշխատանքներում, մասնավորապես լրագրի գյուղացիական բնույթի արդարացման տեսակետից։ Հետագա մեկ-երկու տարում թերթն ավելի խորացրեց այս ասպարեզում ձեռք բերված հաջողությունները։ Այս հանգամանքը ժամանակին նշվել է նաև մամուլի կենտրոնական օրգաններում։ Այսպես՝ պարբերական մամուլի հիմնական խնդիրներից մեկը համարելով «մի կողմից՝ կատարված աշխատանքների պատկերի ցուցադրումը և ընդօրինակման գործին նպաստելը, մյուս կողմից՝ գյուղի շարունակական ուսումնասիրությունը», «Խորհրդային Հայաստան»-ը մամուլի տեսություններից մեկում նշում էր, որ «Կարմիր ռաշպար»-ը այս ուղղությամբ «խոշոր քայլերով առաջ է գնում»[99]։ Թերթի 1925—1926 թթ. գործունեությունը բնութագրող մի հոդվածում «Կոմունիստ» հանդեսը, արձանագրելով, որ «Կարմիր ռաշպար»-ը դեռևս հարկ եղած ուշադրությունը չի դարձնում գյուղատնտեսական դիտելիքների տարածմանը, միաժամանակ նշում էր. «Շատ ավելի բավարար հիմքերի վրա է դրված գյուղ-բաժինը։ Այս բաժինը ոչ միայն իր ծավալով բավական մեծ է, որը մեր «Կարմիր ռաշպար»-ի համար դրական երևույթ է, այլև կարողանում է բավականին բաղմակողմանիորեն պարզաբանել Զանգեզուրի գյուղական կյանքը»[100]։

1924 թ. դեկտեմբերի 26-ին Համ Կ(բ)Կ Անդրերկրամը հատուկ որոշում ընդունեց գյուղացիական թերթերի ուղղության ու բնույթի վերաբերյալ։ Ելնելով այդ որոշումից, ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի ենթաբաժինը մեր հանրապետության միակ գավառային գյուղացիական լրագրի՝ «Կարմիր ռաշպար»-ի աշխատանքների բարելավման նպատակով մշակեց մանրամասն միջոցառումներ, նշելով այն կոնկրետ խնդիրները, որ Անդրերկրամի վերոհիշյալ որոշման համապատասխան՝ դրվում էին թերթի առջև.— Այսուհետև ևս մնալով գյուղացիական շարաթաթերթ, «Կարմիր ռաշպար»-ը միաժամա-

98 Տե՛ս ՄԱԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 455, թ. 77։

99 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, № 197։

100 Տե՛ս «Կոմունիստ», 1926, № 5։

նակ, Զանգեզուրի տնտեսական պայմանների թելադրանքով՝ պետք է ունենա առանձին Բանվորական բաժին՝ պղնձահանքերի բանվորներին սպասարկելու համար. թերթի բաժնեգինը չպետք է անցնի ամենկան 20 կոպեկից. խմբագրությունը պիտի ջանա գնտեղել այնպիսի նյութեր, որոնք թե՛ բովանդակությամբ և թե՛ լեզվով մատչելի լինեն կիսագրագետ ու անգրագետ գյուղացիներին և հարմար՝ խրճիթ-ընթերցարաններում բարձրաձայն կարդալու համար. անհրաժեշտ է ընդլայնել Տեղեկատու բաժինը, տպագրել քաղաքական դեպքերի շաբաթական ամփոփումներ, մասնագիտական բնույթի կոնսուլտացիոն նյութեր: Այդ նպատակով թերթի շուրջը պիտի համախմբել տեղական այն մասնագետներին, որոնք կկարողանան գրել «բժշկական, գյուղատնտեսական, իրավաբանական փոքրիկ հոդվածներ՝ տեղական պահանջների համաձայն»:

Այս առաջարկները Կենտկոմի մամուլի ենթաբաժինը «Կարմիր ռաշպար»-ի խմբագրությանն ուղարկեց 1925 թ. հունվարի 16-ին[101]: Հաջորդ գրությամբ (հունվարի 28) ենթաբաժինը, վերոհիշյալ խնդիրների տեսանկյունից քննարկելով «Կարմիր ռաշպար»-ի նույն տարվա երկրորդ համարը, մասնավորապես պահանջում էր «լայն աշխատանք տանել, որ թերթը դառնա մասսաների սեփականություն, լայնացնել թղթակիցների ցանցը թե՛ գյուղերում և թե՛, մանավանդ, հանքերի բանվորների մեջ... և, որ գլխավորներից մեկն է, ուժեղացնել «Կուսակցական կյանք»-ը»[102]:

1925 թ. սկզբներից խմբագրությունը ձեռնամուխ եղավ թերթի աշխատանքների հիմնովին վերակառուցմանը՝ կուսակցական վերադաս օրգանների վերոհիշյալ պահանջներին համապատասխան: Ստեղծվեց խմբագրական նոր կոլեգիա, որն իր անդրանիկ նիստում[103] քննարկեց թերթի բարելավման հարցը, առանձնակի կարևորություն տալով կուսակցական և գյուղատնտեսական բաժինների աշխատանքների ուժեղացմանը: Որոշվեց հատուկ հարցաթերթիկներով անցկացնել բանգյուղթղթակիցների հաշվառում և ապահովել նրանց դեկավարությունը նամակագրության միջոցով: Կոլեգիան նպատակահարմար գտավ այսուհետև ունենալ հատուկ երկու բաժնի վարիչներ, որոնք պարտադիր կերպով մասնակցելու

---

101 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 204, թ. 2:

102 Նույն տեղում, թ. 3:

103 Նիստի արձանագրությունը տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվում, ֆ. 1, ց. 4, գ. 302, թ. 79:

էին կոլեգիայի նիստերին՝ օգտվելով վճռական ձայնի իրավունքից։ Կուսաբաժինը վարելու էր Մ. Գարագաշը, գյուղատնտեսական բաժինը՝ Ա. Բակունցը։

«Կարմիր ռաշպար»-ի աշխատանքների բարելավման համար կարևոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի ազգային մամուլի ենթաբաժնի 1925 թ. հոկտեմբերի 26-ի նիստի որոշումը, որը պարտավորեցնում էր ՀԿ(բ)Կ մամուլի բաժնին՝ «ապահովել «Կարմիր ռաշպար»-ի լրիվ անցումը գյուղացիական տիպի»[104]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության՝ ագիտպրոպ աշխատանքներին նվիրված արձանագրության հավելվածում «Կարմիր ռաշպար»-ին վերաբերող առաջարկների մեջ նշվում էր. «Փոխել թերթի բնույթը՝ դարձնելով այն մասսայական-գյուղացիական լրագիր»[105]։ «Կարմիր ռաշպար»-ն ունենալու էր հետևյալ հիմնական բաժինները՝ Գյուղատնտեսական, Կուսակցական, Իրավաբանական խորհուրդներ (հարցեր և պատասխաններ), Առողջապահություն, Քաղաքական ու հասարակական տեսություն (հեռագրերի փոխարեն), Բանվորական կյանք։

4

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին զարգացման ուրույն ճանապարհ անցավ Հայաստանի կոմերիտական-երիտասարդական մամուլը։ Այս շրջանը կարելի է բաժանել երկու հատվածի՝ մինչև 1923 թ. մայիսը և դրանից հետո, երբ սկսեց լույս տեսնել «Ավանգարդ»-ը։

1921 թ. հունվարի 19-ին «Կոմունիստ» թերթում, իբրև առանձին էջ, զետեղվեց Հայաստանի կոմունիստական երիտասարդության միության կենտկոմի և Երևանի գավառային կոմիտեի օրգան «Երիտասարդ կոմունիստ»-ի առաջին համարը։ Նույն թվականի մայիսի 1-ից՝ չորրորդ համարից, «Երիտասարդ կոմունիստ»-ը վերածվեց առանձին հրատարակության[106]։ Այսպես շարունակվեց

104 Տե՛ս Մշի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 199, թ. 22։

105 Նույն տեղում, ց. 11, գ. 138, թ. 22, 23։

106 «Երիտասարդ կոմունիստ»-ը խմբագրել են Ն. Խերանյանը, Տ. Խորունին, Հ. Եկավյանը։ Սկզբում եղել է շաբաթաթերթ, ապա լույս է տեսել 3 օրը մեկ, հետո՝ դարձյալ շաբաթաթերթ և այլն. առհասարակ ունեցել է անկանոն պարբերականություն։ Տպաքանակը՝ 500—1000։

շարջ մեկ տարի. 1922 թ. ապրիլի վերջին ընդհատվեց թերթի ինքնուրույն հրատարակությունը՝ «տնտեսական նկատառումներով»: ՀԿ(բ)Կ Կենտկոմի ապիտրաժնի որոշմամբ[107] «Երիտասարդ կոմունիստ»-ի տերթական 15-րդ համարը դարձյալ դեռևս վերջից կուսակցության կենտրոնական լրագրում՝ մայիսի 23-ին՝ իբրև էջիկ: Խմբագրությունը թղթակիցներին ու ընթերցողներին տեղեկացնում էր. «Մեր թերթի առանձին գոյությունը, մի շարք աննպաստ պայմանների շնորհիվ, չկարողացանք պահպանել: Այսուհետև մեզ տեղ է տրվում տեղումս հրատարակվող «Խորհրդային Հայաստան» և «Մաճկալ» թերթերում՝ մի շաբաթ մեկում և մի շաբաթ մյուսում: Գյուղացի ընկերները թող արտահայտվեն իրենց գյուղացիական թերթ «Մաճկալ»-ով, իսկ մնացած ընդհանուր ու զանազան քաղաքական, թե տնտեսական, միության (կոմերիտմիության—Հ. Ֆ.) վերաբերյալ խնդիրները կարծարծենք «Խորհրդային Հայաստան»-ով»: Այսպիսով՝ սկիզբ դրվեց նաև «Մաճկալ»-ում «Երիտասարդ մաճկալ» էջի հրատարակությանը: Շուտով «Երիտասարդ կոմունիստ»-ը վերականգնեց իր ինքնուրույն գոյությունը, սակայն «Երիտասարդ մաճկալ» էջը ևս չդադարեց: 1923 թ. ապրիլից «Երիտասարդ մաճկալ»-ը դարձավ ինքնուրույն հրատարակություն և լույս տեսավ 29 համար, նախ որպես ՀԿԵՄ Երևանի գավառային կոմիտեի, իսկ հաջորդ տարվա մայիսից՝ ՀԿԵՄ Կենտկոմի և Երևանի կոմիտեի օրգան: 1922 թվին միևնույն «Երիտասարդ բանվոր» խորագրով երկու թերթերի առանձին համարներ լույս տեսան Երևանում և Ալեքսանդրապոլում: 1923 թ. հունվար—սեպտեմբեր ամիսներին Նոր Բայազետում հրատարակվեցին կոմերիտմիության գավկոմի օրգան «Կարմիր երիտասարդ» թերթի 15 համարները:

1921 թ. հունվար-փետրվար ամիսներին «Կարմիր երիտասարդի թերթիկ»-ի 4 համար լույս տեսավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Աղքատ գյուղացի» թերթում: 1921—1922 թթ. «Наша правда» թերթում հրատարակվեցին «Красная молодежь»-ի 13 համարները՝ իբրև ՀԿԵՄ Կենտկոմի և Երևանի կոմիտեի օրգան:

1921—1923 թթ. հանրապետության բոլոր գավառային թերթերն ունեին կոմերիտական-երիտասարդական էջեր, որոնք հրատարակվում էին որպես ՀԿԵՄ գավկոմների օրգաններ: Ինչպես արդեն նշել ենք գավառական մամուլը քննարկելիս՝ էջմիածնի «Կարմիր

107 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ.1, ց.1, գ.486, թ.91:

գյուղացի» լրագրում զետեղվում էր «Կարմիր երիտասարդի բերթիկ»-ը (1922 թվին որոշ համարներ ունեցել են առանձին հրատարակություն), «Շիրակի ռանչպար»-ում՝ «Կարմիր երիտասարդ»-ը (նույնպես ունեցել է առանձին հրատարակություն), «Բանվոր»-ում՝ «Երիտասարդ բանվոր»-ը, Գորիսի «Կարմիր ռաշպար»-ում՝ «Երիտասարդ ռաշպար»-ը և «Զանգեզուրի պատկում»-ը, «Կարմիր Լոռի»-ում՝ «Լոռվա կարմիր երիտասարդ»-ը և այլն։ Ճիշտ էր նկատում Ե. Զուբարը, թե՝ «Խորհրդային իշխանության առաջին օրերից երիտասարդ կոմունիստներն ունեցել են իրենց էջը մեր բոլոր թերթերում։ Կրտսեր եղբոր և վաղվա փոխանորդի իրավունքով դրանք իբրև «ձրի հավելված» կպել են թե՛ «Կոմունիստ»-ին, թե՛ «Աղքատ գյուղացուն», թե՛ «Խորհրդային Հայաստան»-ին և թե՛ բոլոր պավառական թերթերին»[108]։

Հայաստանում կոմերիտական-երիտասարդական մամուլի ըստկրզբնավորման ու զարգացման գործում, այդ շրջանում, մեծ երախտիք ունեն Ն. Խերանյանը, Հ. Դանիելյանը (Յամփրթ), Կ. Շահբազյանը, Հ. Եկավյանը, Հ. Գաբրիելյանը, Լ. Արիսյանը, Հ. Սոխակյանը, Ս. Ադոյանը, Գ. Շաղդամյանը, Հ. Վարդանյանը, Գումեդինը, Տ. Խորունին, Վ. Ալազանը, Գ. Պարիսը և ուրիշներ։

Երիտասարդական մամուլի էջերում, սկզբնական շրջանում, արծարծվում էին գերազանցորեն կազմակերպչական բնույթի խնդիրներ։ Այնտեղ ավելի շատ կարելի է գտնել կոմերիտմիության մեջ համախմբվելու մասին կոչ-հորդորներ, քան թե երիտասարդության դաստիարակությանը վերաբերող կոնկրետ նյութեր։ Զգալի տեղ են բռնում շրջաբերականները, հրահանգները, բանաձևերն ու որոշումները, որոնք նույնպես մեծ մասամբ շոշափում էին կազմակերպչական հարցեր[109]։

---

108 «Խորհրդային Հայաստան», 1923, № 93։

109 Հրահանգչական-կազմակերպչական աշխատանքները կանոնավորելու նպատակով ՀԿԵՄ Կենտկոմը ձեռնարկեց հատուկ «Բյուլետեն»-ի հրատարակության։ 1921 թ. հուլիս-օգոստոս ամիսներին լույս տեսավ «Բյուլետեն»-ի երեք համար՝ կենտկոմի քաղլուսբաժնի վարիչ Ն. Խերանյանի խմբագրությամբ։ 16 էջանոց փոքրիկ գրքույկներ էին դրանք, որոնց հրապարակ գալը խմբագրությունը բացատրում էր հետևյալ կերպ. կոմերիտական կազմակերպությունների ստեղծման, նրանց աշխատանքների ծավալման, երիտասարդական միության հերթական խնդիրների ճիշտ ըմբռնման շահերը պահանջում էին, որպեսզի «մշակված թեզիսները, հրահանգները, շրջաբերականները ամփոփված լինեն մի տեղ և ծառայեն իբրև ձեռնարկ մեր միության յուրաքանչյուր գործչի համար» (տե՛ս «Բյուլետեն Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության կենտրոնական կոմիտեի», 1921, № 2)։

Աստիճանաբար կոմերիտական տպագիր օրգանները լայնացնում էին ընդգրկման շրջանակները, շոշափելով այնպիսի հարցեր, որոնք կենսական նշանակություն ունեին երիտասարդությանը նոր կյանքի կառուցման մեջ ակտիվորեն ներգրավելու տեսակետից։ «Մեր թերթերը,— գրում էր «Երիտասարդ կոմունիստ»-ը,— պետք է լինեն շատ պարզ, որոշ, հասկանալի, կարճ ու բովանդակալից, գործնականից բխող, մեր կատարած յուրաքանչյուր գործի մեկնաբանը, մեր նպատակների արտահայտիչը»[110]։

Կոմերիտական մամուլն իր գործունեությունը ծավալում էր հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) Երիտասարդության ներգրավումը կոմերիմիության մեջ, նրա համախմբումը կոմունիստական կուսակցության շուրջը։ Այստեղ կարևոր դեր էր վերապահվում ոչ միայն կոմունիստական գաղափարների, խորհրդային իշխանության ձեռնարկումների պրոպագանդմանը, այլև պատանիների ու աղջիկների դաստիարակմանը ավագ սերնդի հեղափոխական տրադիցիաներով (հիշենք, օրինակ «Երիտասարդ կոմունիստ»-ում տպագրված հոդվածները Կ. Լիբկնեխտի, Ա. Բուդաղյանի մասին, Բաքվի կոմխարների սպանության չորրորդ տարելիցին նվիրված համարը և այլն)։

բ) Հնարավորին չափ լայն տեղեկությունների հաղորդումը ինչպես Ռուսաստանի և խորհրդային այլ հանրապետությունների կոմերիտական կյանքի, այնպես էլ արտասահմանյան երկրների երիտասարդության առօրյայի ու պայքարի վերաբերյալ («Միության կյանքը Ռուսաստանում», «Խորհրդային ֆեդերացիա», «Բուրժուական երկրներում» և այլ բաժինները)։

գ) Պայքարը կրոնական հաշիշի դեմ և անգրագիտության վերացման խնդիրների արծարծումը. կոմերիտական թերթերն ու էջիկները ունեին այս ասպարեզում իրենց վրա դրված պարտականությունների այնպիսի ըմբռնում, ինչպիսին ցուցարերում էր, օրինակ, Նոր Բայազետի «Կարմիր երիտասարդ»-ը. «Այս փոքրիկ թերթիկը մեր կազմակերպության համար մեծ նշանակություն ունի... Նա՛ է, որ պիտի մտնի երիտասարդ մասսայի մեջ, դուրս վանդի այնտեղից սուտն ու կեղծիքը և նրա տեղ տարածի գիտությունն ու լուսավորությունը»[111]։

110 «Երիտասարդ կոմունիստ», Երևան, 1921, № 23։

111 «Կարմիր երիտասարդ», Նոր Բայազետ, 1923, № 1։

* * *

Հայաստանի կոմերիտական մամուլի պատմության մեջ նոր էջ է սկսվում «Ավանգարդ»-ի հրատարակությամբ։ Առաջին համարը լույս տեսավ մամուլի օրը՝ 1923 թ. մայիսի 5-ին[112]։ Մեր հանրապետության երիտասարդությունն ունեցավ իր նոր կենտրոնական լրագիրը, որին վիճակված էր կարևոր դեր խաղալու հանրապետության քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքում սոցիալիզմի կառուցման բոլոր փուլերում։ Ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում լույս տեսավ «Ավանգարդ»-ի մոտ 150 համար։

Հաղթահարելով կազմակերպչական և ֆինանսական-տեխնիկական մի շարք դժվարություններ, «Ավանգարդ»-ն ստիպված կարողացավ ստեղծել իր թղթակցային ակտիվը, բարձրացնել երիտասարդությանը հուզող մի շարք կենսական հարցեր։ Եթե մինչև այդ կոմերիտական մամուլը, ինչպես նշել ենք, իր ուշադրությունը գլխավորապես բևեռում էր կոմերիտական-կազմակերպչական բնույթի խնդիրների վրա, ապա «Ավանգարդ»-ի հրատարակությամբ սկսված նոր փուլը Հայաստանի երիտասարդական մամուլի մեջ «վստահորեն կոմունիստական դաստիարակության շրջան կարելի է համարել»[113]։ Այս բնութագրումը, սակայն, ամենևին չէր նշանակում կազմակերպչական աշխատանքի անտեսում։ Թերթից պահանջվում էր սերտորեն շաղկապել իր գործունեության այդ երկու կողմերը և շտաբվելով դաստիարակության ու բարոյականության վերաբերյալ վերացական-վերամբարձ քարոզներով՝ կատարել այնպիսի կոնկրետ աշխատանքներ, որոնք «անմիջապես կապ ունեն մեծ գործի ու «մանր խնդիրների» հետ»[114]։

Այսպիսի հարցադրումն առավել ևս տեղին էր, եթե չմոռա-

---

112 «Ավանգարդ»-ը սկսեց լույս տեսնել իբրև ՌԿԵՄ Անդրկովկասյան երկրային կոմիտեի և ՀԿԵՄ Կենտրոնական կոմիտեի օրգան, այնուհետև՝ օրգան ՀԿԵՄ Կենտկոմի և Երևանի կոմիտեի։ Մինչև 1930 թ. հրատարակվել է որպես շաբաթաթերթ, 1930 թ. հունվարի 1-ից դարձավ օրաթերթ, 1935 թ. հունիսից լույս էր տեսնում երկու օրը մեկ։ Տպաքանակը առաջին տարիներին տատանվել է 800—1500-ի միջև, 1930 թվականից՝ 18000—25000-ի միջև։ 1923—1936 թթ. թերթի խմբագիրներն են եղել Հ. Դարբինյանը, Ե. Զուրաբը, Հ. Եկավյանը, Հ. Դանիելյանը (Յամփերթ), Շ. Ազնավուրյանը, Տ. Խորունին, Հմ. Հովհաննիսյանը, Ռ. Շիրոյանը, Ստ. Կուրտիկյանը, Հ. Միրզոյանը։

113 «Ավանգարդ», 1924, № 26։

114 Նույն տեղում։

նանք, որ շատերն այդ ժամանակ թերթից պահանջում էին զրաղվել միայն կոմերիտական կազմակերպությունների ներքին կյանքի հարցերով՝ տպագրելով որոշումներ, բանաձևեր, հրահանգներ և այլն։ Չժխտելով նման բնույթի նյութերի հրատարակման անհրաժեշտությունը, խմբագրությունը ճիշտ կերպով ընդգծում էր, որ դրանով սահմանափակվելը թերթը կվերածեր կրավորական մի օրգանի՝ զրկելով մարտունակությունից և երիտասարդության կոլեկտիվ կազմակերպիչը լինելու հնարավորությունից։ «Մեր թերթը բյուլետեն չի,— նկատում էր խմբագրությունը։— Նա մեր ներքին կյանքն արտացոլող օրգանը լինելով, պետք է առաջնորդող հանդիսանա իր հոդվածներով ու ցուցումներով. սակայն այդ հոդվածներն ու ցուցումները պետք է զերծ պահել «գիտական» փքունությունից և ընդհանուր խոսքերից ու դատողություններից։ Հարկավոր է հոդվածների ուղղությունը հարմարեցնել մեր տեղական կազմակերպություններին, օգտագործելով մի գավառի հաջողությունները մյուսներին ցուցումներ տալու համար»[115]։

Կոմերիտական մամուլի դերի այսպիսի ճշմարիտ ըմբռնման մեկ այլ, ավելի խտացված ու ելակետային արժեք ունեցող արտահայտությունը մենք գտնում ենք «Իլյիչը և երիտասարդական մամուլը» խորագրով խմբագրական հոդվածում[116]։ Կոմերիտական մամուլի սրբազան պարտականությունն է, ընդգծում էր թերթը, աջակցել այն ավանդների կենսագործմանը, որ «Վլադիմիր Իլյիչն է դրել երիտասարդության և ողջ բանվոր դասակարգի առաջ»։ Այդ մամուլը պետք է «սովորեցնի երիտասարդությանն ապրել ու գործել այնպես, ինչպես Վլադիմիր Իլյիչը...». իսկ դրա համար երիտասարդական մամուլը ինքը ևս պետք է «մինչև ուղն ու ծուծը տոգորվի Վլադիմիր Իլյիչի գաղափարներով ու ձգտումներով»։

1923—1925 թվականները կարելի է համարել «Ավանգարդ»-ի զարգացման առաջին շրջանը։ Թերթի բնույթի, ընդգրկման շրջանակների, նրա առջև դրված խնդիրների կոնկրետացմանն ու հստակեցմանը զուգընթաց՝ սկսում է կանոնավորվել թղթակիցների հետ տարվող աշխատանքը, զգալի քայլեր են արվում տպաքանակի ավելացման, բովանդակության հարստացման, տպագրվող նյութերի ժուռնալիստական որակի բարելավման ուղղությամբ։ Այդ շրջանում «Ավանգարդ»-ում երևում են մի շարք բաժիններ ու խորագրեր,

115 Նույն տեղում, № 15։
116 Տե՛ս նույն տեղը, № 27։

որոնք պատկերացում են տալիս թերթի արծարծած խնդիրների բազմազանության մասին («Կոմսոմոլիստական աշխարհ», «Պայքար նոր գյուղի համար», «Դեպի նոր կենցաղ», «Գրականություն և արվեստ», «Օրինակելի երիտասարդների մրցանակ», «Երիտասարդ բանվորություն», «Կոմսոմոլը խրճիթ-ընթերցարանում» և այլն)։ «Ավանդարդ»-ը պարբերաբար անդրադառնում էր Ռուսաստանի և Հայաստանի կոմերիտմիության անցյալի հերոսական դրվագներին, պատկոմական շարժման կազմակերպման, երիտասարդության ռազմական ուսուցման, սպորտի հարցերին։ Աստիճանաբար կուսակցում էր աշխատանքի դրական փորձ, ստեղծվում էին կոմերիտական մամուլի նոր ավանդներ, որոնք զարգացվելու, հարստացվելու և բազմապատկվելու էին թերթի գործունեության հետագա շրջաններում։ Այնուամենայնիվ, ինչպես ճիշտ կերպով նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը, ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին «Ավանդարդ»-ը խոշոր դեր խաղաց «երիտասարդության կազմակերպման ու դաստիարակման գործում»[117]։ Այդ դերն ավելի ակնառու կդառնա, եթե նկատի առնենք, որ մինչև 1925 թ. վերջերը կուսակցական մամուլը պատշաճ ուշադրություն չէր դարձնում կոմերիտմիության ղեկավարման խնդիրների լուսաբանմանը։ Ի դեպ՝ այս դիտողությունը վերաբերում է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի կուսակցական մամուլին։

Այս բացը շոշափելի դարձավ առանձնապես այն ժամանակ, երբ կոմերիտական թերթերը, հետզհետե ստանալով մասսայական բնույթ, ավելի ու ավելի քիչ հնարավորություն ունեցան անհրաժեշտ ծավալով ու խորությամբ զբաղվելու կոմերիտական կազմակերպությունների ղեկավարության այսպես ասած՝ «մասնագիտական» խնդիրներով։ Ելնելով ստեղծված իրադրությունից, ՌԿ(բ)Կ Անդրկոմը 1925 թ. հոկտեմբերի 24-ին որոշեց ուժեղացնել կուսակցական թերթերի կողմից կոմերիտմիությանը ցույց տրվող ղեկավարությունը. անհրաժեշտ համարվեց «կուսակցական-խորհրդային թերթերում կազմակերպել մշտապես գործող երիտասարդական բաժիններ, իսկ որտեղ որ հնարավոր է՝ առանձին էջեր հատկացնել այդ բաժնին»։ Նորաստեղծ բաժինների հիմնական խնդիրն էր՝ «ապահովել ԼԿԵՄ համապատասխան կոմիտեների կողմից կոմերիտական աշխատանքի ղեկավարումը մամուլի միջոցով»։ Երիտասարդական բաժիններն ու էջերը անհրաժեշտ նյութերով ապա-

---

117 «Խորհրդային Հայաստան», 1925, № 207։

հովելու պարտականությունը դնելով ԼԿՆՄ կենտկոմների վրա, Անդրկովկասը պարտադրեց կուսակցական կոմիտեներին ու մամուլի օրգաններին՝ բոլոր միջոցներով աջակցել նրանց։ Կատ որում, կարևոր նշանակություն ունեցավ այն նախազգուշացումը, թե՝ «կոմերիտական բաժիններն ու էջերկները ոչ մի դեպքում չպետք է լցվեն պաշտոնական նյութերով (բանաձևեր, շրջաբերականներ և այլն) և միայն լրագրային եղանակով (հոդվածներ, նոթեր և այլն) պետք է ղեկավարեն կոմերիտմիության աշխատանքն ու այդ մասին տեղյակ պահեն կուսակցական հասարակայնությանը»[118]։

* * *

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին առաջին քայլերն է անում մեր հանրապետության մանկա-պատանեական պարբերական մամուլը։ 1922 թ. Երևանում հրատարակվեց պատկոմական կազմակերպության կենտրոնական և Երևանի կոմիտեների օրգան «Պատկոմ» շաբաթաթերթը, հաջորդ տարի Ալեքսանդրապոլում՝ դավառային պատանի շաբաթի օրգան նույնանուն երկշաբաթաթերթը։ 1923 թ. մայիսից Երևանում սկսեց լույս տեսնել «Պատկոմ» ամսագիրը[119], որը գոյատևեց մինչև հաջորդ տարվա վերջը։ 1924-ին հրատարակվեցին նաև Լենինի անվան պատկոմական կազմակերպության կենտրոնական և Երևանի կոմիտեների օրգան «Պատանի լենինական» թերթի միակ համարը Երևանում և «Պատկեն» միօրյա թերթը՝ Ղարաքիլիսայում։

1925 թ. հունիսի 4-ից սկսեց լույս տեսնել «Պիոներ-ղեկ»-ը[120], իսկ երկու ամիս անց ասպարեզ իջավ «Պիոներ»-ը[121]։ Այսպիսով՝

---

118 Տե՛ս Մկի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4, դ. 303, թ. 87—88։

119 «Պատկոմ»-ը լույս էր տեսնում իբրև Սոցդասավարչության կենտրոնական շաբաթի (խորհրդի) օրգան։ Խմբագիրն էր Տ. Մուշեղյանը։ 48 էջ (28×20 և 30×22 սմ)։

120 «Պիոներ-ղեկ»-ը ԼԿՆՄ Կենտկոմին կից պատանի պիոներների կենտրոնական բյուրոյի օրգանն էր. հետագայում դարձավ Պատանեական ակտիվի ամսաթերթ։ Առաջին խմբագիրն եղել է Արտ. Բզնունին, վերջում՝ Ա. Հարենցը։ 8—32 էջ (27×17, 42×33, 30×22 սմ)։ Հետագայում կոչվել է «Կոլվար», վերջում՝ «Ջոկատավար», օրգան ԼԿՆՄ Կենտկոմի. Ղեկավար ակտիվի ամսագիր։ Պատ. խմբագիր՝ Ս. Սարգսյան։

121 «Պիոներ»-ը նույնպես սկսեց հրատարակվել իբրև Պատանի պիոներների կենտրոնական բյուրոյի օրգան. 1927 թ. դարձավ նաև Լուսժողկոմատի օրգանը։ Առաջին խմբագիրը եղել է Արտ. Բզնունին։ 10—32 էջ (32×23 սմ)։ 1929 թ. սկսեց լույս տեսնել «Հոկտեմբերիկ»-ը. հրատ. Լուսժողկոմատի. Մանկական պատկերազարդ ամսագիր ցածր դասարանի աշակերտների համար։ Մինչև 1936 թ. պատ. խմբագիրներ եղել են՝ Սերիկ Դավթյանը, Հ. Հայրապետյանը, Արաքսը։

մեկի փոխարեն Հայաստանի պատանեկությունն ունեցավ երկու հանդես։ Նույն թվականից սկսեց հրատարակվել նաև «Պիոներ կանչ» թերթը[122]։ Ըստ որում՝ զգալի էին տպաքանակի և պարբերականության մեջ եղած տեղաշարժերը։ «Պատկում»-ը լույս էր տեսնում 1000—1200 օրինակ, 2—3 ամիսը մեկ անգամ[123], մինչդեռ «Պիոներ-դեկ»-ն ուներ երկշաբաթյա պարբերականություն և 3000—4000 տպաքանակ (հետագա տարիներին հասավ 9000-ի), իսկ «Պիոներ»-ը ամսագիր էր և հրատարակվում էր 3000—4500 տպաքանակով։ «Պիոներ-կանչ»-ը լույս էր տեսնում 3500—4000 օրինակով։ Եթե նկատի առնենք նաև ծավալային (ընդհանուր էջաքանակի) տարբերությունները, ապա կարող ենք ասել, որ մանկա-պատանեկան պարբերական մամուլի ներթափանցման ոլորտն ընդլայնվեց մոտ տաս անգամ։

Առավել կտրուկ, սակայն, բովանդակության հարստացման և շոշափվող խնդիրների բազմազանության տեսակետից կատարված առաջընթացն էր։ «Պատկում»-ը կոչված էր նպաստելու նոր սերնդի բարոյա-քաղաքական դաստիարակությանը, կռվելու անտիապաշտության դեմ, զարգացնելու պատանեկության մեջ «գեղարվեստական ճաշակ և ստեղծագործական ընդունակություններ», լուսաբանելու պատկոմական կազմակերպությունների կյանքը, տարածելու «լույս և գիտություն»։ Այս կարևոր խնդիրները «Պատկում»-ը միայն մասամբ կարողացավ կատարել՝ մի կողմից հրատարակչական փորձի պակասի, մյուս կողմից՝ մանկավարժության մեջ այն ժամանակ լայնորեն տարածված «ձախ» ըմբռնումների, գեհիկ սոցիոլոգիական մոտեցման պատճառով։ Այս երևույթը, իհարկե, միանգամից չվերացավ. սակայն իրողություն է և այն, որ «Պիոներ» ամսագրում դրա հետքերը համենայն դեպս ավելի պակաս էին նշմարվում։

Օգտագործելով «Պատկում»-ի փորձը և զարգացնելով նախախորհրդային շրջանի հայ մանկա-պատանեկան մամուլի առողջ ավանդները, «Պիոներ»-ը լրացրեց այն, ինչ չէր հասցրել անել իր

---

122 «Պիոներ կանչ»-ը ևս Պատանի պիոներների կենտրոնական բյուրոյի օրգանն էր։ Ուներ Պիոներական և աշակերտական շաբաթաթերթ ենթանվանումը։ Մեզ հետաքրքրող շրջանում պատ. խմբագիրներ եղել են Հր. Միրզոյանը, Բ. Շահումյանը, Ա. Հարենցը, Ս. Սարգսյանը։

123 Թեև «Պատկում»-ն ուներ Պատանեկական պատկերազարդ ամսագիր ենթանվանումը, բայց հրատարակված համարների ընդհանուր թիվը վկայում է, որ այն ոչ թե ամսագիր է եղել, այլ ունեցել է անկանոն պարբերականություն։

նախորդը, միաժամանակ դպրոցական տեղ հատկացնելով պատանիների աշխատանքային ու ֆիզիկական դաստիարակության, հասարակական նոր ըմբռնումների արմատավորման հարցերին. իսկ «Պիոներ-ղեկ»-ի հրատարակությունը հնարավորություն տվեց հատուկ ուշադրություն դարձնելու պիոներական շարժման կազմակերպմանն ու ղեկավարմանը: Այս պարբերականը կոչված էր լինելու «առաջին հերթին կոլմարի, օգակավարի ձեռնարկը», «պիոներ ակտիվիստի ուղեցույցը»[124]: ՌԿԼԵՄ Կենտկոմի մամուլի բաժինը, 1925 թ. սեպտեմբերին ընդունելով «Պիոներ-ղեկ»-ի նախորդ երեք ամսվա համարները, նշեց, որ խմբագրությունը «հիմնականում ճիշտ դիծ է վերցրել և ժամանակին արծարծում է պիոներական գործնական աշխատանքի խնդիրները»[125]: Միաժամանակ արվեցին մի շարք դիտողություններ ու առաջարկներ: Մասնավորապես անհրաժեշտ համարվեց բացել «Գրական-գեղարվեստական», «Ժամանց», «Կոլմարի զրույցներ» բաժինները և «Պատանի թղթակցի անկյուն»: Հաջորդ տարվա սկզբից դպրոցական բարելավվեց «Պիոներ-ղեկ»-ի աշխատանքը:

Անապատատան պատանիների ու աղջիկների դաստիարակության, նրանց խնամքի և ուսուցման հարցերին էին նվիրված «Նոր Արշալույս»-ը[126], «Անապատատան Երեխա»-ն[127] և մի քանի միօրյա հրատարակություններ:

Հայաստանում մանկա-պատանեկան մամուլի կազմակերպման ու զարգացման գործին առաջին տարիներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Արտ. Բզնունին, Տ. Մուշեղյանը, Մ. Դուրգարյանը, Ա. Շավարշյանը, Ա. Արզումանյանը, Հ. Հովհաննիսյանը, Սիմակը, Ս. Դավթյանը, Աթ. Խնկոյանը, Հ. Հայրապետյանը և ուրիշներ:

---

124 «Պիոներ-ղեկ», 1925, № 1:

125 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 303, թ. 92—95:

126 «Նոր Արշալույս»-ը հրատարակում էր Ամերիկայի որբերի խնամատարական բաժանմունքը: Մենք տեսել ենք միայն № 1-ը, որը տպագրվել է 1926 թ. մայիսին, Լենինականում: Խմբագիրը չի նշված: 16 էջ (25×18 սմ), տպարանակը՝ 1000:

127 «Անապատատան Երեխա»-ն լույս տեսավ 1926 թ. Երևանում, Հայաստանի անապատատան երեխաների բարեկամների ընկերության վարչության հրատարակությամբ՝ մեկ համար: Խմբագիրը չի նշված: 26 էջ (34×26 սմ), տպարանակը՝ 2000:

5

Հայաստանում Կարմիր բանակի կազմակերպմանը զուգընթաց իր սկզբնավորումն է առնում զինվորական մամուլը: 1920 թ. դեկտեմբերի 22-ից սկսեց լույս տեսնել ՀՍԽՀ Կարմիր բանակի քաղաքաժնի օրգան «Կարմիր բանակ» հնգօրյա թերթը, որը հաջորդ տարվա հունիսից վերանվանվեց «Կարմիր զինվոր»:

Կարմիր բանակի առանձնահատկություններին, նրա դերին ու խնդիրներին նվիրված հոդվածների, ընդհանուր պրոպագանդիստական բնույթի նյութերի հետ մեկտեղ թերթում տպագրվում էին բանակային կյանքը, զինվորների առօրյան արտացոլող բազմազան հաղորդումներ, ռազմական ուսումնառության, շնչության, զորացրվողների՝ գյուղում կատարելիք դերի վերաբերյալ ցուցումներ, զինվորական հրամաններ ու հրահանգներ, միտինգների բանաձևեր, նամակներ:

Որոշակի տեղ էր հատկացնում «Կարմիր զինվոր»-ը քաղաքական խնդիրների, միջազգային հարաբերությունների, Ռուսաստանի և Անդրկովկասի ներքին ու արտաքին կացության մեկնաբանմանը, Անդրֆեդերացիայի նշանակությանը, հեղափոխական ու զինվորական շարժումներին նվիրված նյութերին, հիշողություններին և այլն:

«Կարմիր զինվոր»-ը այն կենտրոնն էր, որի շուրջը համախմբվում էին զինվորական թղթակիցները: Խմբագրության ջանքերով զորամասերում ստեղծվեցին գրական խմբակներ: «Կարմիր զինվոր»-ը մեծ հեղինակություն ուներ և շատ սիրված էր բանակայիններ կողմից, որոնք ամեն կերպ աջակցում էին իրենց թերթին: Ամենևին էլ պատահական չէր «Խորհրդային Հայաստան»-ի այն եզրակացությունը, թե՝ «Կարմիր բանակի մամուլը դառել է իրենց՝ մարտիկների հարազատ ստեղծագործությունը և նրա պահանջը մտել է մարտիկների սովորական առօրյա կարիքների շարքը»[128]: Առանձնապես նշանակալից էին «Կարմիր զինվոր»-ի ջանքերը անգրագիտության վերացման ուղղությամբ. «նա ամենայն ուժով կռիվ է մղել բանակի անգրագիտության դեմ, զարկ է տվել քաղլուսաշխատանքներին, սեր է զարթեցրել դեպի գրականությունը, ուժեղացրել է կրթա-դաստիարակչական գործը»[129]:

Ճիշտ է, «Կարմիր զինվոր»-ը անդրադառնում էր նաև ռազմա-

---

128 «Խորհրդային Հայաստան», 1922, № 273:

129 Նույն տեղում, № 287:

կան ուսուցման խնդիրներին, տպագրում այսպես ասած՝ մասնագիտական հոդվածներ, բայց դրանք որակ չէին կազմում և չէին էլ կարող, քանի որ թերթը ձգտում էր ունենալ մասսայական բնույթ։ Գնալով ավելի էր զգացվում հրամանատարական կազմի, հատկապես նրա միջին մասի համար նախատեսված հայերեն պարբերականի կարիքը, մանավանդ, որ նրանց ճնշող մեծամասնությունը զրկված էր ռուսերեն մասնագիտական գրականությունից օգտվելու հնարավորությունից՝ լեզվին չտիրապետելու պատճառով։ Այդ բացը միայն մասամբ էին լրացնում Հայկական հրաձիգ դիվիզիայի քաղբաժնի հրատարակչական-խմբագրական կոլեգիայի ջանքերով թարգմանված ռազմա-քաղաքական բրոշյուրներն ու մասնակի հրատարակությունները։ Բացի այդ, զինվորական պարապմունքների ընթացքում հրամկազմի առջև ծագում էին մի շարք այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը պահանջում էր տեղում կատարվող գործնական աշխատանքների ընդհանրացում, ռազմական գիտելիքների ուսուցման ու տարածման ասպարեզում ձեռք բերված փորձի փոխանակում։ Այս պահանջների ծնունդն էր, ահա, Հայկական հրաձիգ դիվիզիայի քաղբաժնի ռազմա-քաղաքական ամսագիր «Կարմիր մարտիկ»-ը, որ սկսեց լույս տեսնել 1923 թ. հունվարից։ «Զափտալանց հաճախ,— գրում էր Վ. Մովյանը ամսագրի նպատակներին նվիրված իր հոդվածում,— մենք լսում ենք դանդաղներ զորամասերում աշխատող մեր ընկերներից, որ հայերեն ղեկավարող ձեռնարկներ չկան. տրվում են սիստեմատիկ պարապմունքների թեմաներ, անց են կացվում հարվածային կամպանիաներ, բայց քաղաքական ղեկավար օրգանները դժվարանում են կոնկրետացնող նյութեր ուղարկել ընկերների աշխատանքը արդյունավետ դարձնելու համար։ «Կարմիր մարտիկ»-ը պետք է վերջ տա այդ աննորմալ դրությանը, պարբերակելով իր էջերում քաղբաժնի աշխատանքների ամսական ծրագրերում հիշատակված նյութերի բովանդակությունը և դյուրություն ընձեռելով զորամասերին իրենց աշխատանքների ընթացքում»[130]։ Ամսագիրն ուներ հետևյալ բաժինները՝ Ռազմական, Ագիտացիա և պրոպագանդա, Քաղաքական ժամ, Կուսկազմակերպչական աշխատանք, Հեղափոխության օրացույց (կարևոր իրադարձություններին ու տարեթվերին նվիրված նյութեր), Գրքերի դարակ (ընթերցելու համար հանձնարարվող գրքերի, թերթերի ու հանդեսների ցանկեր), Սանդուս աշխատանքներ, Առողջա-

130 «Կարմիր մարտիկ», 1923, № 1։

պահական, Տնտեսական: «Կարմիր մարտիկ»-ը որոշ տեղ էր հատկացնում կուսակցության տնտեսական բաղաքականության, առանձնապես գյուղում տարվող աշխատանքների պարզաբանմանը, նկատելի ունենալով այն նպատակադրումը, որպեսզի զորացրվելուց հետո յուրաքանչյուր կարմիրբանակային հասարակական ակտիվ ուժ դառնա իրենց գյուղում:

«Կարմիր մարտիկ»-ը լույս տեսավ ընդամենը չորս համար (№ 3—4-ը՝ միացյալ): Ապրիլ ամսից հետո քաղաքաժինն ստիպված էր դադարեցնել ամսագրի հրատարակությունը՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով[131]: Մոտ երկամյա ընդմիջումից հետո նրան փոխարինելու եկավ ռազմա-քաղաքական նոր ամսագիր «Պահակ»-ը, որը 1925 թ. մարտ ամսից վերանվանվեց «Հեղափոխության պահակ»:

Շարունակելով իր նախորդի գործը՝ ռազմա-քաղաքական ուսուցման տապարեզում առաջադրված նոր խնդիրներին համապատասխան, այս պարբերականը հասավ պրոֆեսիոնալ և հրատարակչական համեմատաբար ավելի բարձր մակարդակի: Բացի այդ, նրա հրատարակությունը տևեց ավելի երկար՝ 7 ամիս: Վերոհիշյալ բաժիններին այստեղ ավելացան նորերը՝ Ինքնակրթություն, Կապը աշխատավորության հետ, Ռազմական դպրոցում, Մեր ամբիոնը (բանավիճային հոդվածներ զինվորությունում կատարվող ռազմա-քաղաքական աշխատանքների շուրջը), Գրական-գեղարվեստական: Ամսագիրը լույս էր տեսնում 48—56 էջ ծավալով, 500 օրինակ տպաքանակով: Առաջին չորս համարները հրատարակվել են Երևանում, վերջին երեքը՝ Ղարաբիլիսայում:

Վերոհիշյալ պարբերականները նպաստեցին Կարմիր բանակ զորակոչված երիտասարդության դաստիարակությանը հայրենիքին, սոցիալիզմի գործին նվիրվածության ոգով:

Խորհրդահայ զինվորական մամուլի կազմակերպման և խմբագրման գործում ակնառու վաստակ ունեն Հ. Լազյանը, Հ. Հովսեփյանը, Գ. Կարիրը, Ա. Լալայանը, Ե. Զուրարը, Վ. Ծովյանը, Մ. Դավթյանը և ուրիշներ: Վերոհիշյալ պարբերականների էջերում հանդես են եկել Ալ. Մյասնիկյանը, Հ. Բժշկյանը (Գայ), Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը, Ս. Խանոյանը, Ավ. Նուրիջանյանը, Հ. Ապատ-

131 Տե՛ս «Պահակ», 1925, № 1:

յանը, ռազմական գործի ճանաչված շատ մասնագետներ ու քաղաշխատողներ[132]։

* * *

Ավելորդ չի լինի այստեղ հիշատակել, որ մեր Հանրապետության մյուս պարբերականները ևս մոռացության չեն տվել Կարմիր բանակի կազմակերպման ու ամրապնդման հարցերը. խորհրդային իշխանության առաջին ամիսներին՝ հայերեն ու ռուսերեն «Կոմունիստ» թերթերը, այնուհետև «Խորհրդային Հայաստան»-ը, «Наша Правда»-ն, գավառական լրագրերը առանձին անկյուններ էին հատկացնում զինվորական կյանքին, տպագրում էին պրոպագանդիստական հոդվածներ, առաջնորդողներ, նամակներ, կոչեր, հաղորդումներ և այլ բնույթի նյութեր, բացատրելով նոր տիպի բանակի դերը ներքին հակահեղափոխության դեմ մղվող պայքարում և երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու գործում։

Հատկանշական է, որ Կարմիր բանակի բնույթի ու առանձնահատկությունների, հին բանակից նրա ունեցած որակական տարբերության բացահայտումը, Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական կռիվներում դրսևորված անօրինակ հերոսության փառաբանումը խորհրդահայ մամուլում զուգորդվում էր դասալքության ու բանդիտիզմի առանձին երևույթների դեմ մղվող պայքարում համաժողովրդական միասնություն դրսևորելու հորդորներին։ «Կարմիր բանակը,— գրում էր Հ. Լազյանը «Դասալքությունը և խորհրդային իշխանությունը» խորագրով հոդվածում,— դա առաջին և վերջին բանակն է աշխարհում։ Նրա վերջին հրամանն է՝ նիզակի փոխարինումը զութանի և մուրճի։ Այդպիսի բանակում չեն կարող և չպետք է լինեն դասալիքներ»[133]։ Մեր Հանրապետությունում անցկացվում էին «Կարմիր բանակի շարքեր», դասալքության ու բանդիտիզմի դեմ պայքարի կամպանիաներ, որոնց ընթացքում առանձնակի ակտիվություն էր դրսևորում պարբերական մամուլը։ Այսպես՝ 1921 թ. հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 16-ը «Խորհրդային Հայաստան»-ը բանդիտիզմի դեմ, չհաշված առանձին հոդվածները, կոչերն ու այլ կարգի նյութերը, տպագրեց երեք ա-

---

132 Խորհրդահայ զինվորական մամուլի մասին ավելի մանրամասն տե՛ս Վ. Մովսեսի «Քսանական թվականների զինվորական պարբերականները» հոդվածում («Հայ պարբերական մամուլի պատմությունից», պր. I, Երևան, 1963, էջ 127—148)։

133 «Կոմունիստ», 1920, № 5։

առաջնորդող («Կոչնչացնել», «Պետք է ոչնչացնել», «Կռիվ բանդիտիզմի դեմ»)։ Դասալքությունը դատապարտող մյուս նյութերից կարելի է նշել «Ի՞նչ է Կարմիր բանակը և ո՞վ է դասալիքը», «Հին ու նոր բանակը», «Լցրեք մեր բանակի շարքերը» հոդվածները, ինչպես և «Մեր Հերոս Կարմիր բանակը», «Պետք է վերջ տալ դասալքությանը» առաջնորդողները։ Համանման բնույթի նյութեր լույս են տեսնում նաև գավառային թերթերում։ 1922 թ. մարտի 3-ից պարբերական մամուլում լայնորեն անցկացվեց «Կարմիր բանակի շաբաթ», որի ընթացքում տպագրված նյութերի թիվը հասնում է մի քանի տասնյակի։

Առաջնորդողներից մեկում «Խորհրդային Հայաստան»-ը, փոխառնելով լենինյան հայտնի բնորոշումը արհմիությունների վերաբերյալ, Կարմիր բանակը ևս դիպուկ կերպով համարում էր «կոմունիզմի դպրոց», դրանով իսկ շեշտելով բանակայինների քաղաքական-կուլտուրական մակարդակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների կարևորությունը։ Գյուղի և քաղաքի տասնյակ հազարավոր աշխատավորներ, որում էր թերթը, գալով Կարմիր բանակ՝ «փաստորեն մտնում են կոմունիստական դպրոցներ, որտեղ բացի զինվորական տեխնիկային և պատերազմական արվեստին ծանոթանալուց՝ ուսումնասիրում և ձեռք են բերում նաև կոմունիզմի, հասարակական ու բնական գիտությունների, գեղարվեստների, գրականության և գիտության այլ ճյուղերի մասին հմտություն և որոշակի պատրաստություն... Որոշ ժամանակ զորանոցում ծառայող և հետո տուն վերադարձող կարմիր զինվորը պետք է փաստորեն դառնա իր գյուղի և շրջանի համար սոցիալիստ ուսուցիչ՝ տարված կոմունիզմի լուսավոր գաղափարներով և աշխատի իր համոզմունքներով համակել ողջ շրջապատը»[134]։

6

Խորհրդայնացումից անմիջապես հետո Հայաստանում ամենայն սրությամբ ծառացավ գյուղացիական լրագիր ունենալու պահանջը։ Ինչպես նշեցինք, արդեն 1921 թ. հունվարի 8-ից հրատարակվում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Կարմիր գյուղացի» թերթը, որն իր գործն սկսեց ընդհանուր-քաղաքական խնդիրների արծարծումից և նոր-նոր միայն քայլեր էր անում կենտրոնական գյուղա-

---

134 «Խորհրդային Հայաստան», 1922, № 50։

ցիական լրագիր դառնալու ուղղությամբ, երբ փետրվարյան հակահեղափոխության հետևանքով դադարից լույս տեսնելուց։ Նույն թվականի ամռանը այն վերակենդանացնելու մի փորձ արվեց. հրապարակ իջավ «Կարմիր դութան»-ը, որի հրատարակությունը, դրժբախտաբար, շատ շուտով նույնպես հարկ եղավ ընդհատել՝ «ոչ նպաստավոր հանգամանքների պատճառով»[135]։

Կենտրոնական գյուղացիական թերթ ստեղծելու վճռական քայլ հանդիսացավ «Մաճկալ»-ի հիմնադրումը. այն սկսեց լույս տեսնել 1922 թ. մայիսի 14-ից՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի հրատարակությամբ[136]։

Ողջունելով գյուղացիական նոր լրագրի ծնունդը, «Խորհրդային Հայաստան»-ը ընդգծում էր. այս նոր պարբերականը, «որի հանդես գալով մեզ մոտ մի շատ կարևոր բաց է լցվում», «մեր ներկա իրականության մեջ մեծ դեր ունի խաղալիք»[137]։

Իր առջև դրված խնդիրներով ու նպատակներով «Մաճկալ»-ը ուշագրավ երևույթ էր մեր իրականության մեջ։ «Հայաստանի գյուղացին այնքան եռանդ ու տոկունություն ունի, որ քարից էլ հաց կհանի,— ընդգծում էր խմբագրությունը թերթի խնդիրներին նվիրված առաջնորդողում,— միայն թե չլինի «մտքի ու մարմնի ոջիլը», միայն թե վերացվի տգիտությունը, ագրատությունը և կեղտոտությունը։ Սրանց դեմ է, որ կռվելու է «Մաճկալ» գյուղացիական թերթը». «աշխատավորության միակ հարազատ ու հասկանալի իշխանությունը» բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանությունն է, որը և Հայաստանը կդարձնի «լուսավորված և ազատ աշխա-

---

135 Տե՛ս նույն տեղը, 1922, № 108։

136 «Մաճկալ»-ը լույս էր տեսնում սկզբում որպես շաբաթաթերթ (առաջին ամիսներին որոշ չափով խախտվել է այս պարբերականությունը՝ առանձին համարներ հրատարակվել են 10—12-օրյա ընդմիջումներով). 1923 թ. հոկտեմբերի 5-ից դառնում է երկօրյա, հոկտեմբերի 18-ից՝ օրաթերթ. մի տարի անց լույս է տեսնում դարձյալ շաբաթը երեք անգամ (երբեմն նաև 4—5 համար). 1925 թ. հունվարի 18-ից վերածվում է շաբաթաթերթի. 1926—1929 թթ. եղել է եռօրյա, 1930—1931 թթ.՝ երկօրյա։

«Մաճկալ»-ը խմբագրել են Ե. Զուրարը, Մ. Զոլախյանը, Հ. Բաննահյանը, Գ. Ղազարյանը, Է. Զոփուրյանը, Ա. Հախումյանը, Հ. Հովհաննիսյանը։ Թերթի աշքի ընկնող աշխատակիցներն էին Պ. Ցոլյանը, Կ. Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), Ա. Տոնյանը, Իս. Տեր-Ներսիսյանը, Ալ. Մարգարյանը, գյուղատնտեսության ճանաչված մասնագետները։ «Մաճկալ»-ի մասսայականացման, հեղինակության բարձրացման գործում անուրանալի ավանդ են ներդրել Աթաբեկ Խնկոյանը (Խնկո-Ապեր), որին անվանում էին «Մաճկալ»-ի բանաստեղծ, Սիմակը, Ակսել Բակունցը, Վախթանգ Անանյանը և ուրիշներ։

137 «Խորհրդային Հայաստան», 1922, № 108։

տանքի երկիր». իսկ ինչ վերաբերում է գյուղերում ու գավառներում իշխանության տեղական մարմինների և գյուղացիների միջև երբեմն առաջացող կոնֆլիկտներին, բացատրում էր Թերթը, ապա դրանց պատճառը «կա՛մ անբարեխիղճ ու ոգեկտ պաշտոնյաներն են. կա՛մ գյուղացիների անհասկաց լինելը խորհրդային կառավարության այս կամ այն կարգադրության մասին»։ Այս հանգամանքից էլ խմբագրությունը բխեցնում էր իր կարևոր անելիքներից մեկը. «Մաճկալ»-ը իր ճիպոտով լա՛վ կշփփացնի մեղավորներին ու անդգամ կբացատրի դեկրետները...»։ Թերթը հրապարակ էր իջնում առգրված այն հավատով, թե՝ «իր սկսած գործը Հայաստանի բոլոր աշխատավոր գյուղացիների ու նրանց կարիքների մասին բոլոր անկեղծ մտածողների գործն է»[138]։

Կառավարության դեկրետներին, ժողկոմատների որոշումներին ու միջոցառումներին նվիրված հանրամատչելի բացատրական հոդվածներով, գյուղատնտեսական, առողջապահական ու կենցաղային թեմաներով գրված պարզ, թեղ որ երբեմն պարզունակ, գրույցներով, նոր կյանքի համար արթնացող ամենապայծ զանգվածներին հուզող խնդիրների գործնական արծարծումով «Մաճկալ»-ը իրական հետաքրքրություն հարուցեց՝ ստիպելով հայկական գյուղի հասարակական ոլորտը։ Գավառներից ստացված առաջին թղթակցություններն երևալը լրագրի էջերում,— նյութեր, որոնք պատմում էին գյուղացու աշխատանքային ու հանապազօրյա հոգսերի ու հրճվանքների մասին՝ մեծ մասամբ ժողովրդական խոսվածքով, բնական-անկաշկանդ մտածելակերպով,— միանգամից համակրանքի մթնոլորտ ստեղծեց «Մաճկալ»-ի շուրջը։

1922 թ. վերջերին, անտհաշվարկային սիստեմին անցնելու հետևանքով, զգալի չափով վատացավ նաև «Մաճկալ»-ի ֆինանսական կացությունը. Թերթը կանգնած էր փակվելու վտանգի առջև։ Քննելով խմբագրության դիմումը պարբերականի ֆինանսական ծանր դրության մասին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի բարտուղարությունը 1923 թ. հունվարի 6-ին որոշեց.

ա) Առաջարկել հողժողկոմատին, պարենժողկոմատին և ԺՏԽ-ին՝ ժամանակին և անվերապահորեն ֆինանսավորել «Մաճկալ» լրագիրը։

բ) «Մաճկալ»-ը դարձնել վճարովի և պարտավորեցնել Կենտ-

---

138 «Մաճկալ», 1922, № 1։

կամի ագիտ-պրոպ բաժնին՝ սկսել թերթի բաժանորդագրության կամպանիան[139]։

Այս պայմաններում, սակայն, խիստ կարևոր էր, որ խմբագրությունն իրազեկ լիներ, թե ինչ կարծիք ունեն, ինչպիսի ցանկություններ ու պահանջներ են առաջադրում ընթերցողներն իրենց թերթին։ Ուստի և ամենևին էլ հազվադեպ չէին թերթի էջերում այսօրինակ կոչ-հորդորները. «Գյուղական ուսուցիչնե՛ր, կոմունիստ ու կոմսոմոլիստ հրահանգիչնե՛ր, գյուղի դրագետնե՛ր, «Մաճկալ»-ի աշխատակիցնե՛ր, դուք գյուղերում «Մաճկալ»-ի հոդվածները կարդում եք անդրադետ կամ կիսադրագետ գյուղացիներին. հապա շարժվե՛ք, գրե՛ք մեզ, թե ի՞նչը չի հասկանում գյուղացին «Մաճկալ»-ից։ Գրեցեք ձեր սեփական կարծիքը»[140]։

«Մաճկալ»-ի բովանդակության բարելավման ու հարստացման, աշխատավորության հետ կապերն ամրապնդելու, թերթի դաղափարական և ժուռնալիստական մակարդակը բարձրացնելու գործում վճռական դեր խաղաց այն պահանջների կատարումը, որ կոմունիստական կուսակցությունն առաջադրեց մասնավորապես գյուղացիական պարբերական մամուլին՝ իր մի շարք կարևոր փաստաթղթերում։

ՌԿ(բ)Կ XIII համագումարի «Մամուլի մասին» բանաձևի և Կենտկոմի հետագա որոշումների տեսանկյունից քննելով «Մաճկալ»-ի աշխատանքների բարելավման հարցը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտ-պրոպ կոլեգիան 1924 թ. նոյեմբերի 21-ի նիստում մշակեց այսպիսի միջոցառումներ. ա) Թերթը ապահովել թղթով և բարձրորակ հրատարակության համար անհրաժեշտ այլ նյութերով. բ) Ընդլայնել բաժանորդագրությունը. գ) Բարձրացնել բաժնի վարիչների աշխատավարձը. դ) Մի շարք պատասխանատու աշխատողների խնդրել հանդես գալ «Մաճկալ»-ում՝ թերթը մասսայականացնելու նպատակով. ե) Առաջարկել բոլոր գավկոմներին և խորհրդային օրգաններին՝ սերտ կապ պահպանել «Մաճկալ»-ի հետ, պարբերաբար տեղեկություններ ուղարկելով թերթին իրենց բոլոր որոշումների, կատարած աշխատանքի և ծրագրերի վերաբերյալ[141]։

ՀամԿ(բ)Կ Անդրերկրամը գյուղացիական պարբերական մամուլի վիճակը բարելավելու մասին որոշման մեջ (1924 թ. դեկտեմբերի

---

139 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 23, թ. 5։

140 «Մաճկալ», 1924, № 3։

141 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 274, թ. 8։

12) պարտավորեցրեց անդրկովկասյան հանրապետությունների կենտկոմներին՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ թերթերի աշխատանքը գյուղում կուսակցության հերթական խնդիրների մակարդակին բարձրացնելու ուղղությամբ։ 1925 թ. հունվարի 15-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը Անդրիրկոմի մամուլի բաժնին տեղեկացնում էր, որ վերոհիշյալ որոշման կենսագործման համար կատարված է հետևյալը.

1. «Մանկալ»-ը վերածվել է շաբաթաթերթի՝ 8 էջ ծավալով։

2. Լեզուն և ոճը հարմարեցված, մատչելի են դարձված կիսագրագետ մասսաներին։

3. Բաժանորդագինը 50 կոպեկից իջեցված է 20-ի։

4. Լրագիրն ունենալու է հետևյալ հիմնական բաժինները՝ Գյուղատնտեսական, Գյուղբրիգադների, Շաբաթական քաղաքական տեսության, Հայաստանի և խորհրդային Միության տնտեսական շինարարության և քաղաքական կյանքի ընդհանուր տեսության, Տեղեկատու-ինֆորմացիոն։

5. Գյուղթղթակիցների կազմակերպման և թերթի հետ նրանց կապն ապահովելու նպատակով հրահանգված է շրջաններում ու գավառներում կազմակերպել գյուղթղթակիցների բյուրոներ, անցկացնել խորհրդակցություններ[142]։

«Մանկալ»-ի խմբագրությունը ջանում էր հնարավորին չափ շատ տեղեկություններ ստանալ գյուղացիությանը հուզող ամենատարբեր հարցերի վերաբերյալ, թերթի էջերում արտացոլել, հանրության սեփականությունը դարձնել ընդօրինակման արժանի գործերը, ինչպես և բացահայտել թերությունները ու սխալները՝ ուշադրություն բևեռելով շլածված խնդիրների վրա։ ««Մանկալ»-ի թղթակիցնե՛ր,— գրում էր թերթը,— ձեր վրա մեծ պարտականություն կա դրված. ձեր ձեռքին ուժ կա, զենք կա, դրիչն է այդ ուժն ու զենքը. ձեր պարտքն է այդ զենքը գյուղի աշխատավորներին ծառայեցնել... «Մանկալ»-ի թղթակի՛ց, դու «Մանկալ»-ի աչքն ու ականջն ես գյուղում, դու գյուղի բոլոր չունևորների ու կեղեքվածների պաշտպանն ես։ Ուրեմն գործի՛ անցիր, օգնի՛ր գյուղացիներին, որ նրանց խնդիրը «Մանկալ»-ին հասնի»[143]։

Այս ամենին զուգընթաց՝ թերթը հնարավորության սահմաններում ձգտում էր ընթերցողներին տեղյակ պահել խորհրդային

---

142 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 204, թ. 1։

143 «Մանկալ», 1924, № 50։

մյուս հանրապետություններում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, արտասահմանյան երկրների աշխատավորների, մասնավորապես գյուղացիների կյանքի ու պայքարի դրվագներին (խորհրդային երկրներում, Ի՞նչ են գրում ուրիշ թերթերը, Կապիտալի երկրներում բաժինները), հույժներ էր ունենում խորհրդային կառավարության արտաքին քաղաքականության, ազգային-ազատագրական շարժումների, միջազգային կյանքի տարբեր խնդիրների վերաբերյալ՝ նվիրելով դրանց մեծ մասամբ առաջնորդող հոդվածներ։ «Մաճկալ»-ը, ճիշտ կերպով նկատում էր «խորհրդային Հայաստան»-ը՝ «գյուղացու համար դարձել է հանրագիտական բառարան, որի մեջ նա գտնում է ամեն ինչի համար բավարար բացատրություն»[144]։

Իր ծրագրի կենսագործմանը հետամուտ՝ «Մաճկալ»-ը ծավալեց քաղաքական-լուսավորական լայն գործունեություն, նպաստելով գյուղական զանգվածների մտահորիզոնի ընդլայնմանը, նրանց նոր աշխարհայացքի կազմավորմանը, բարոյա-հասարակական նոր չափանիշների պատվաստմանը՝ աշխատանքային, առօրյա, կենցաղային և ընդհանրապես հասարակական ամենաբազմազան փոխհարաբերություններում։ Այս նպատակներին էին ծառայում նաև «Մաճկալ»-ում զետեղված՝ առանձին թերթիկներն ու էջիկները («Աշխատավոր կնոջ թերթիկ», «Երիտասարդ մանկալ», «Կարմիր զինվոր» և այլն), որոնք գալիս էին առավել արդյունավետ դարձնելու թերթի աշխատանքը գյուղական երիտասարդության, դեղջկուհիների և կարմիրբանակայինների շրջանում։ Նոր օրենքներ, «Մաճկալ»-ի պատասխանները բաժիններում թերթը պարբերաբար անդրադառնում էր գյուղերից ստացվող հարցումներին՝ տպագրելով սոցիալիստական այս կամ այն օրենքն ու օրինաչափությունը բացատրող-պարզաբանող նյութեր՝ հոդվածներ, գրույց-կոնսուլտացիաներ, նամակներ և այլն։ «Մաճկալ»-ը առաջնորդվում էր այն ճշմարիտ ըմբռնումով, թե՝ «խորհրդային օրենքները ուժեղ են մեկ նրանով, որ աշխատավոր գյուղացու շահն են պաշտպանում, մեկ էլ նրանով, որ ամեն մի աշխատավոր գյուղացի վերից-վար, լայնից ու բոյից հասկանում է բանվորա-գյուղացիական կառավարության դրած օրենքները»[145]։ ««Մաճկալ»-ը գյուղացու ամենամոտ զրուցակիցն է,— գրում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աշոտ Հով-

---

144 «Խորհրդային Հայաստան», 1927, № 50։

145 «Մաճկալ», 1922, № 18։

Հանդիսությանը թերթի 500-րդ համարի լույսընծայման առթիվ հղած ողջույնի մեջ։— Շաբաթը երկու անգամ նա մտնում է աշխատավոր գյուղացու խրճիթը, խորհուրդներ տալիս բատրակին, չքավոր ու միջակ գյուղացուն՝ նրանց տնտեսության, կենցաղի ու անելիքների մասին։

«Մաճկալ»-ի հինգհարյուրերորդ համարը, սա նշանակում է ծանոթի հինգ հարյուր հանդիպում, հինգ հարյուր այցելություն։ Իսկ հինգ հարյուր հանդիպումը, հինգ հարյուր այցելությունը բավական է ծանոթությունը թշնամություն կամ, ընդհակառակը, բարեկամություն դարձնելու համար։

Այն փաստը,— եզրակացնում էր Աշոտ Հովհաննիսյանը,— որ «Մաճկալ»-ի բաժանորդների թիվը գնալով աճել է, նշան է, որ նա ընդարձակել է իր ծանոթների ու զրուցակիցների շրջանը, նշան է, որ իր հանդիպումն ու զրույցը գյուղացու հետ նա դարձրել է բարեկամության իսկական աղբյուր»[146]։

«Մաճկալ»-ը իր հիմնական խնդիրներից մեկը համարում էր գյուղատնտեսական գիտելիքների տարածումը, որով կարելի էր նպաստել հողօգտագործման պարզունակ միջոցների փոխարինմանը առավել արդյունավետ եղանակներով։ Առաջին իսկ համարներից թերթում երևան եկավ ուշադրավ մի խորագիր՝ «Մաճկալ»-ի խորհուրդները։ Ինչպե՞ս անել, ի՞նչ ձևով աշխատել, որպեսզի հնարավոր լինի լավ կազմակերպել տնտեսությունը, ավելի շատ բերք ու անասնամթերք ստանալ,— այս հարցերին էին պատասխանում այդ բաժնում զետեղված նյութերը։ Ճիշտ է, դրանք սկզբում կազմված էին հապճեպ, համառոտ ու կցկտուր էին, բայց շուտով խմբագրությունը կարողացավ լայն հունի մեջ դնել այդ կարևոր գործը։ Արդեն 24-րդ համարում «Մաճկալ»-ն իր ընթերցողներին հայտնում էր, թե այսուհետև ունենալու է հատուկ Գյուղատնտեսական բաժին, որտեղ «շարունակաբար մեր գյուղացիների առաջ բացվելու են գյուղատնտեսական օգտակար գիտելիքներ»։ Աշխատակցության հրավիրելով մասնագետներին, թերթը գրում էր, որ գյուղացին «պիտի սովորի լավ կուլել բնության պատահարների, երաշտի, հիվանդությունների և այլ չարիքների դեմ՝ երկրից սովը վերացնելու համար»։ Շուտով այս բաժինը դարձավ ամենահիմնականը «Մաճկալ»-ում և հաճախ զբաղեցնում էր թերթի ամբողջ մի էջը։ Այստեղ տպագրվող գյուղատնտեսական հանրամատչելի զրույցներն ու

146 «Խորհրդային Հայաստան», 1927, № 18։

մասնագիտական խորհուրդները, առաջավոր տնտեսությունների փորձի պարզաբանումները գործնական մեծ օգնություն ցույց տվին գյուղացիությանը։ «Մաճկալ»-ի «մասսայական և գյուղատնտեսական երեսները խոշոր դեր են խաղում գյուղի աշխատավոր մասսաների ակտիվությունը կազմակերպելու տեսակետից»,— նշել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը թերթի մասին ընդունած որոշումներից մեկում[147]։

Սկզբից ևեթ «Մաճկալ»-ը, իբրև կենսական անհրաժեշտություն, գյուղի կոմունիստներին առաջադրեց գյուղատնտեսական դիտելիքներով զինվելու պահանջը («բոլշևիկներին դարձնել գյուղատնտես-ագրոնոմներ»[148])։ Միայն խելացի ու արդյունավետ գործնական աշխատանքը, տնտեսությունը վարելու նոր եղանակներ կիրառելիս ցուցաբերվող անձնական օրինակը, ընդգծում էր թերթը, հնարավորություն կտան կոմունիստ-գյուղացուն՝ ծավալելու դաստիարակչական-կազմակերպչական համապատասխան աշխատանք գյուղի վերակառուցման գործում։ Ըստ որում՝ բացատրական-պրոպագանդիստական նպատակով «Մաճկալ»-ը օգտագործում էր նաև «Պրավդա»-ի «Կուսակցությունը և գյուղը» բաժնում զետեղված նյութերը, որոնցում ըստ ամենայնի պատասխան էր տրվում այն հարցին, թե «ինչ պիտի անի կոմունիստ-հողագործը»։ «Կոմունիստ գյուղացին պիտի ղեկավարի կոոպերացիան, ձեռք բերի միջակ գյուղացու վստահությունը, օգնի գյուղի առաջ գնալուն, անցնի հողից օգտվելու նոր ձևերին,— գրում էր թերթը, ապա, վկայակոչելով «Պրավդա»-ին՝ շարունակում.— Մեզանում սովորաբար կարծում են, որ ինչքան շատ կոմունիստներ զբաղված լինեն զանազան պաշտոններում, այնքան ավելի մեծ կլինի կուսակցության ազդեցությունը գյուղի վրա. դա բոլորովին սխալ է»[149]։

Աստիճանաբար «Մաճկալ»-ն իր ուշադրության ոլորտի մեջ առավ գյուղական կուսակցական բջիջների աշխատանքը։ Արդեն 1924 թ. աշնանը թերթում բացվեց Կուսակցությունը գյուղում նոր բաժինը, որը նպատակ ուներ՝ ա) գյուղի կոմբջիջներին հաղորդակից դարձնել մեկմյանց գրական փորձին. բ) անկուսակցական գյուղացիներին տեղյակ պահել կոմբջիջների աշխատանքներին. գ) օժանդակել գյուղի աշխատավորության հետ կուսակցության կապերի հետագա ամրապնդմանը։

147 Տե՛ս «Մաճկալ», 1929, № 36։
148 Տե՛ս նույն տեղը, 1922, №4։
149 Տե՛ս նույն տեղը, 1924, № 41։

Նույն թվականից սկսած «Մաճկալ»-ը անդրադառնում էր նաև բատրակների կազմակերպման, նրանց աշխատանքի և իրավունքների պաշտպանության խնդիրներին՝ Գյուղի մշակների (բատրակների) կյանքից բաժնում։ 1927 թ. նոյեմբերից շաբաթը մեկ անգամ սկսեց լույս տեսնել «Մաճկալ»-ի հավելված «Բատրակ» թերթիկը՝ իբրև Գյուղանտառի արհմիության կենտրոնական վարչության օրգան, որի էջերում բատրակների առօրյա հոգսերի ու պահանջների արտահայտության հետ միասին տպագրվում էին նաև բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդմանը նվիրված նյութեր։ Այս խնդիրը, սակայն, «Մաճկալ»-ը ավելի մոտիկից քննում էր Բանվորների մոտ խորագրով բաժնում, որը թերթի էջերում սկսեց երևալ 1926 թ. նոյեմբերի վերջերից։ Բանվորա-գյուղացիական դաշինքի, շինարարական աշխատանքի, քաղաքի և գյուղի կապերն ամրապնդելու հարցերն այստեղ արծարծվում էին Հայաստանի, ինչպես նաև ողջ Միության արդյունաբերության նվաճումների պրոպագանդման լայն ֆոնի վրա։ Հետզհետե կարիք զգացվեց «Մաճկալ»-ում ունենալու հանրապետության առանձին խոշոր ձեռնարկությունների և ընդհանրապես՝ արդյունաբերության ձեռք բերած հաջողություններն ու զարգացման հեռանկարներն արտացոլող մի բաժին, որը և բացվեց 1927 թվականին՝ Մեր արդյունաբերությունը խորագրի ներքո։

Նշանակալից դեր խաղաց «Մաճկալ»-ը կուլտուր-լուսավորական ասպարեզում։ Անգրագիտության վերացում, նոր կենցաղի արմատավորում, առողջապահական տարրական գիտելիքների մասսայականացում, դպրոցական գործի վերակառուցում, հակակրոնական պայքար, գեղջկուհու ազատագրում նահապետական կապանքներից,— ահա այն հիմնական խնդիրները, որոնց հետամուտ էր թերթը։

Մենք համառոտակի նշեցինք «Մաճկալ»-ի կատարած աշխատանքը իր գոյության առաջին հնգամյակում՝ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին։ Պակաս ուշագրավ և նշանակալից չի եղել թերթի գործունեության նաև հաջորդ շրջանը, որի առանձին կողմերին կանդրադառնանք աշխատության համապատասխան էջերում. սակայն, իբրև ընդհանուր գնահատություն, այստեղ իսկ ուզում ենք նշել հետևյալը. «Մաճկալ»-ի գոյատևման ընթացքում լույս տեսած ավելի քան հազար համարներում անփոփված է Խորհրդային Հայաստանի գյուղի առաջին տասնամյակին վերաբերող հարուստ և ընդգրկման շրջանակներով շատ բազմազան

մի նյութ, որը որոշակի արժեք ունի այսօր հայ գյուղացիության պատմության այդ շրջանի ուսումնասիրության համար՝ թե՛ հասարակական, թե՛ սոցիոլոգիական, և թե՛ հոգեբանական տեսակետից։

7

Գյուղատնտեսության վերականգնման ուղղությամբ ձեռնարկված առաջին իսկ միջոցառումների կիրառման պահին սուր կերպով զգացվեց հատուկ գյուղատնտեսական պարբերական ունենալու պահանջը։ Ճիշտ է, «Մաճկալ»-ը, ինչպես նշվեց, զգալի տեղ էր հատկացնում նաև ագրոտեխնիկական գիտելիքների տարածմանը, հողի մշակության նոր եղանակների արմատավորմանը, գյուղատնտեսության զարգացման ուղիների քննարկմանը, բայց չպետք է մոռանալ, որ այդ լրագիրը, այնուհանդերձ, իր բնույթով ոչ թե գյուղատնտեսական, այլ գյուղացիական մասսայական-քաղաքական պարբերական էր. նրա ուշադրությունը, բնականաբար, բևեռված էր հիմնականում գյուղական կյանքի հասարակական-քաղաքական կազմակերպման խնդիրների վրա։ Այդպես էր մանավանդ թերթի հրատարակման առաջին տարիներին։

Ըստ էության նույն նպատակամղումն ունեին նաև գյուղի և գյուղատնտեսության վերաբերյալ «Խորհրդային Հայաստան»-ի հոդվածները, մամուլի մյուս օրգաններում տպագրված համապատասխան նյութերը։ Գավառական մամուլը ևս ի վիճակի չէր զբաղվելու մասնագիտական վերլուծություններով, թեև նրա էջերում տեղ էին գտնում ավյալ գավառի տնտեսական կացությանը նվիրված ուշագրավ դիտողություններ ու կոնկրետ առաջարկներ։ Վերջին հաշվով՝ այդ օրգաններն էլ չէին կարող վերածվել զուտ մասնագիտական պարբերականների, քանի որ նրանց առջև դրված էին ավելի լայն բնույթի խնդիրներ։

Մինչդեռ ժողովրդական տնտեսության վերականգնման շահերը հրամայաբար պահանջում էին մասնագիտական առումով հանդամանորեն քննել հանրապետության կլիմայական, աշխարհագրական, հողային պայմանները, գյուղատնտեսության տարբեր ճյուղերի իրական վիճակը, զարգացման հեռանկարները, հողաշինարարության հասունացած խնդիրները, գյուղատնտեսությունը վարելու նոր մեթոդների ու եղանակների արմատավորման հարցերը։ Եվ ամենևին էլ պատահական չէր, որ պաշտոնական շրջաններում ու մամուլի էջերում առանձին հանդով արծարծվում էր գյուղատնտ-

սական հատուկ պարբերական հրատարակելու խնդիրը։ Մասնավորապես «Խորհրդային Հայաստան»-ում 1922 թ. մարտ ամսից սկսած տպագրվեցին մի շարք հոդվածներ ու առաջարկություններ, որոնց հեղինակները, հիմնականում մասնագետ-գյուղատնտեսներ, չնայած մի շարք մասնակի տարաձայնություններին, միասնական էին իրենց վերջնական եզրակացության մեջ՝ գտնելով, որ Հայաստանում մասնագիտական գյուղատնտեսական պարբերական հրատարակելու անհրաժեշտությունը կասկածից վեր է։ Նրանց դատողություններն ու փաստարկները հանգում էին հետևյալին. «Ընդհանուր բնույթ կրող պարբերական մամուլը, որքան էլ ուղենա, չի կարող իր էջերը նվիրել միայն և հատկապես գյուղատնտեսական հարցերին, նույնիսկ եթե այդ մամուլը ամենաառաջնակարգ նշանակություն տալիս լինի նրանց։ Նպատակահարմար էլ չի ամեն մի մասնագիտական հարց արծարծել [այդ] մամուլում։ Դրանից տուժում է թե՛ մամուլը և թե՛ հարցի մասնագիտական բնույթը։ Դրա համար հարկավոր է ունենալ մասնագիտական մամուլ։ Առանց այդ մամուլի մենք գյուղատնտեսական ասպարեզում մի քայլ անգամ առաջ գնալ չենք կարող...»[150]։

Նոր պարբերականի անհրաժեշտության հիմնավորումները զուգակցվում էին նախապատրաստական միջոցառումների հետ, որոնց նախաձեռնողը հանդիսացավ հանրապետության հողժողկոմատը։ Եվ վերջապես, 1922 թ. նոյեմբերի 15-ից սկսեց լույս տեսնել ակնկալվող պարբերականը, որն անվանվեց «Գյուղատնտեսական կյանք»[151]։ Թե ինչ նպատակ էր հետապնդում, ինչպիսի խնդիրներ

---

150 «Խորհրդային Հայաստան», 1922, № 237։

151 «Գյուղատնտեսական կյանք»-ը, որն ուներ Երկշաբաթաթերթ ենթանվանումը, հրատարակվում էր իբրև ՀՍԽՀ Հողագործության ժողովրդական կոմիսարիատի և բամբակագործական կոմիտեի օրգան։ 24 էջ (28×20 սմ), տպաքանակը՝ 400—600։ Ունեցել է միացյալ համարներ։

1925 թ. հունվարից դարձավ ամսագիր և հրատարակվում էր իբրև Հողժողկոմատի, Հողանատոի արհմիության կենտրոնական վարչության, իսկ նույն տարվա № 4-ից՝ նաև Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների միության օրգան։ Համապատասխանորեն աճեց ծավալը՝ 50—80 էջ (31×24 սմ), տպաքանակը մնաց նույնը։ Հաջորդ տարվանից ստանում է նոր ենթանվանում՝ Գյուղատնտեսության բաղամականության, էկոնոմիկայի և տեխնիկայի ամսագիր, օրգան՝ Հողժողկոմատի, Հայշրտնտեսության և Հայգյուղկոոպի (1927 թ. № 12-ից՝ նաև Հայգյուղբանկի). տպաքանակն ավելացավ՝ հասնելով 800-ի։ 1929 թ. սկզբին լույս տեսան ամսագրի վերջին երկու համարները։ Խմբագիրներ են եղել Ա. Երզընկյանը, Ս. Շաղունցը, խմբ. կոլեգիայի անդամներ՝ Խ. Ավդալբեկյանը, Պ. Քալանթարյանը, Իս. Տեր-Ներսիսյանը։

էր դրել իր առջև այս նոր պարբերականը, ընդգծված է «Գյուղատնտեսական մամուլի դերը» խմբագրականում և հոդվածում Ա. Երզնկյանի «Մեր «Գյուղատնտեսական կյանք»-ը» հոդվածում: Ճիշտ է, արդեն ասիճանաբար սկսել էր վերածնվել Հայաստանի ծայրասաստիճան թայրայված ու կազմալույծ գյուղատնտեսությունը, բայց ցավալի իրողություն էր և այն, որ տնտեսության այդ ճյուղը դեռևս գտնվում էր չափազանց պրիմիտիվ մակարդակի վրա: «Մեր գյուղացիությունը,— նշում էր Ա. Երզնկյանը,— յուր տնտեսությունը տանում է դեռ այն ձևով, ինչ ձևով նա տանում էր Քսենոֆոնտի օրերում»: Անհրաժեշտ էր գյուղացիությանը ծանոթացնել հողի մշակության նոր մեթոդներին, զինել նրան «տնտեսության լավագույն ձևերի անհրաժեշտ գիտելիքներով», ամբողջ հողագործությունը դնել գիտական հիմքերի վրա. այս էր հասարակական ունեցվածքը հարստացնելու կարևոր նախապայմաններից մեկը և դրան նպաստելու էր կոչված մասնագիտական բնույթի այս նոր պարբերականը[152]: «Մեր օրգանը,— ասված էր վերոհիշյալ խմբագրականում,— ընդհանուր առմամբ քաղաքական-հասարակական օրգան չէ՝ իր դերի համաչնապարփակ նշանակությամբ ու իմաստով: Նա մասնագիտական մի օրգան է, որ պիտի ընդգրկի մեր տնտեսական կյանքի մի բնագավառը՝ իր բոլոր երևույթներով ու էջերով»:

Սա չէր նշանակում, իհարկե, թե մասնագիտական մամուլը, մասնավորապես «Գյուղատնտեսական կյանք»-ը մի կողմ էր կանգնելու ընդհանուր հասարակական-քաղաքական մթնոլորտից, մի հանգամանք, որ պարբերականը կվերածեր սխոլաստիկ քրեստոմատիայի: Ընդհակառակը, իր իսկ բնույթով մասնագիտական մամուլը կոչված էր խոշոր դեր խաղալու նաև հասարակական առումով կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծման տեսակետից: Կոնկրետացնելով այս ըմբռնումը «Գյուղատնտեսական կյանք»-ի վերաբերյալ, խմբագրությունն ավելացնում էր. այս պարբերականը՝ «բեռնավորված իր ընդգրկած բնագավառի երևույթները մասնագիտորեն դիտած և ուսումնասիրած ավյալներով՝ դալիս է նպաստելու և լուծելու հանուր տնտեսա-քաղաքական կյանքի շահագրգիռ բազմաթիվ հարցեր»:

«Գյուղատնտեսական կյանք»-ը կարողացավ ասիճանաբար իր շուրջը համախմբել որակյալ հեղինակային ակտիվ. չկար գյու-

152 Տե՛ս «Գյուղատնտեսական կյանք», 1922, № 1, էջ 2։

զատնտեսության ասպարեզի որևէ աչքի ընկնող մասնագետ, որ հանդես չգար պարբերականի էջերում տեսական-գործնական արժեք ունեցող հարցերի քննարկմամբ, օգտակար առաջարկներով, գյուղատնտեսական գիտելիքների տարածմանը նվիրված զրույցներով և այլն։ Մասնագիտական բնույթի արժեքավոր հոդվածներ են գրել Պ. Քալանթարյանը, Խ. Երիցյանը, Ս. Արովյանը, Խ. Ավդալբեկյանը, Կ. Մելիք-Շահնազարյանը, Իս. Տեր-Ներսիսյանը, Ս. Թադևոսյանը և ուրիշներ։ Ուշադրավ են պարբերականի էլուլիները հանրապետության գյուղատնտեսության շրջանացման, տարբեր կուլտուրաների մշակության բարելավման, անասնային և չրային տնտեսությունների կարգավորման, անասնապահության ընդլայնման, ոռոգման գործի կազմակերպման, վնասատուների դեմ մղվող պայքարի և կենսական այլ խնդիրների վերաբերյալ։ Հանդեսն անդրադառնում էր նաև միջգյուղային և ներքին հողաբաժանության, առհասարակ հողաշինարարության հարցերին։ Հատկանշական է այս առումով Ս. Շադունցին ուղղված Ալ. Մյասնիկյանի նամակի և խմբագրության կողմից գրված «Մեր պատասխանը» հոդվածի տպագրության փաստը[153]։ 1925 թ. սկզբին «Մարտակոչ» թերթում լույս տեսան Հայաստանում հողաշինարարական աշխատանքների վերաբերյալ մի քանի խիստ քննադատական հոդվածներ, որոնց շարձագանքեցին ոչ հանրապետության Հողժողկոմատը և ոչ էլ մամուլը։ Եվ ահա Ալ. Մյասնիկյանը, իր ողբերգական մահվան նախօրյակին, ներքին մի անհանգստությամբ, հակիրճ նամակով խնդրեց հողժողկոմի տեղակալ Ս. Շադունցին՝ տեղյակ պահել իրեն հողաբաժանության անցկացման վիճակի և ձեռնարկված միջոցառումների մասին. «Կատարվա՞ծ է միջգյուղյան և ներքին հողաբաժանություն Հայաստանում.— եթե այո, ապա լրի՞վ է կատարված թե՛ մեկը և թե՛ մյուսը. իսկ եթե բնավ չի կատարված, ապա որո՞նք են պատճառները»։ Ալ. Մյասնիկյանը, ցավով նշում էր խմբագրությունը, չատացավ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանը։ «Թող ընկ. Մյասնիկյանի նամակը,— հորդորում էր հանդեսը,— էլ ավելի շարժի տեղերի գործիչների հետաքրքրությունը դեպի մեր հողաշինարարական աշխատանքները, թող այդ հարցում նրանք ավելի զգույշ, ավելի ուշադիր լինեն դեպի շքավոր գյուղացիության շահերը և էլ ավելի վճռական, որպեսզի ընկ. Մյասնիկյանի մահվան տարեդարձին պատասխան տրվի նրա հարցերին»։

153 Տե՛ս «Գյուղատնտեսական կյանք», 1925, № 4, էջ 3—4։

«Գյուղատնտեսական կյանք»-ում զգալի տեղ է հատկացված հանրապետության գավառների ուսումնասիրությանը, գյուղատնտեսության տարբեր ճյուղերի իրական վիճակի պարզաբանմանը, զարգացման հեռանկարների որոշմանը, ինչպես նաև գյուղական նոր իրականության մեջ կատարվող տնտեսական փոփոխությունների և սոցիալ-քաղաքական երևույթների քննարկմանը։ Հանդեսի այդ աշխատանքն ավելի սիստեմատիկ բնույթ ստացավ առանձնապես 1925—1926 թվականներին։ Այդ նյութերի մեջ ճանաչողական արժեքով և հետազոտական բնույթով առանձնանում են մասնավորապես Ա. Կարինյանի հանգամանալից ակնարկները («Զանգեզուր», «Դարալագյազ» և այլն)։ Գիտական, հրապարակախոսական ելույթներով, տնտեսական քաղաքականությանը նվիրված վերլուծություններով և ընդհանուր-հասարակական բնույթի հոդվածներով հանդես են եկել նաև Ա. Երզնկյանը, Ա. Մռավյանը, Ռ. Դաշտոյանը, Հ. Աղաջանյանը, Ս. Շադունցը և ուրիշներ։

Հանդեսը, իր կոչման համաձայն, ընդհանրացնում էր գյուղատնտեսության կազմակերպման ասպարեզում ձեռք բերված փորձը։ Նրա էջերում արտացոլված է Հողժողկոմատի աշխատանքը, տպագրված են կարևոր միջոցառումների ծրագրեր։ Խորհրդային Ռուսաստանի հողժողկոմատում բաժնում տպագրվում էին հաղորդումներ և արժեքավոր տեղեկություններ՝ գյուղատնտեսության ղեկավարման, ագրո-տեխնիկական պրոպագանդայի կազմակերպման ուսանելի փորձի մասին և այլն։ Ուսուցողական նպատակ էին հետապնդում նաև գյուղատնտեսական նորությունների, հողօգտագործման արդյունավետ մեթոդների կիրառման վերաբերյալ կոնսուլտացիոն բնույթի այն նյութերը, որ արտատպվում էին Ռուսաստանում, Անդրկովկասում և այլ հանրապետություններում հրատարակվող գյուղատնտեսական մամուլից («Сельское и лесное хозяйство», «О земле», «Новая деревня», «Сельскохозяйственная жизнь» և այլն)։ Առանձին տեղ էր հատկացնում հանդեսը արտասահմանում՝ Եվրոպայում ու Ամերիկայում լույս տեսած մասնագիտական գրքերի, նշանավոր գիտնականների հետազոտությունների արդյունքների և փորձարարական աշխատանքների վերաբերյալ համառոտ հաղորդումներին, որոնք զետեղվում էին այդ նպատակի համար բացված Գյուղատնտեսական գիտական գրակաբուրյունից բաժնում։ Պարբերաբար դրախոսվում-պրոպագանդվում էին նաև «Գյուղացու գրադարան» մատենաշարով լույս տեսնող գրքույկները։ Ի դեպ՝ այս մատենաշարը հիմնադրվեց «Գյու-

զատնտեսական կյանք»-ի խմբագրության նախաձեռնությամբ։ 1924—1926 թթ. «Գյուղացու գրադարան» մատենաշարով լույս տեսավ 33 անուն գրքույկ՝ 90 մամուլ ընդհանուր ծավալով, 107 հազար տպաքանակով[154]։

Գյուղում տեղի ունեցող հասարակական-քաղաքական և տնտեսական արմատական փոփոխություններին զուգընթաց՝ հանդեսը պարտավորված էր զգում բատ էության լուսաբանելու նաև հանրապետությունում ծավալված գործնական աշխատանքները, խրախուսելու առաջավորներին, տարածելու նրանց փորձը։ «Մեր պրակտիկայի ուղիղ լուսաբանությունը,— նկատում էր խմբագրությունը,— պահանջում է սերտ կապ հասատակ տեղերի հետ, այն էլ ոչ միայն զավառային գյուղատնտեսի հետ (այդ պարտադիր է), այլև գյուղացու հետ, հենց իրեն՝ գյուղական տնտեսարարի հետ»[155]։ Այս ուղղությամբ գործադրված ջանքերի շնորհիվ զգալի չափով մեծացավ հանդեսի հեղինակային ակտիվը, ավելի բազմազան խնդիրներ արծարծվեցին, գործնական նոր առաջարկներ արվեցին... Միայն 1926 թ. տպագրվեց հետազոտական, քննական ու նկարագրական 214 հոդված, որոնց մեջ լուսաբանված են գյուղատնտեսության տարբեր ճյուղերին և գյուղում տարվող քաղաքականությանը վերաբերող մի շարք կարևոր խնդիրներ (գյուղատնտեսական քաղաքականությանն ու ընդհանուր տնտեսական հարցերին նվիրված էր 37 հոդված, արտադրական կոոպերացիային ու վարկին՝ 18, գիտական հետազոտությանն ու փորձին՝ 20, հողային հարցին, անասնապահությանն ու կաթնատնտեսությանը՝ 14-ական հոդված, անտառային տնտեսությանը՝ 11, բույսերի պաշտպանությանը, այգեգործությանն ու ծխախոտի մշակությանը՝ 7-ական հոդված և այլն)[156]։

Աստիճանաբար բարելավվեց նաև հանդեսի հրատարակության որակը. ճաշակավորվում էր ձևավորումը, նյութերն ստանում էին ավելի հստակ դասավորություն, ճոխանում էին բաժինները, նոր խորագրեր էին երևան գալիս, կատարելագործվում էր տպագրության տեխնիկան... Բայց առաջին համարների անշուք հրատարակությունն էլ ամենևին չի կարող նսեմացնել այն եռանդուն ջանքերի արժեքը, որ ներդրեց այս պարբերականը նոր գյուղի համար մղված պայքարում և որոնք գնալով դարձան առավել սևեռուն ու

154 Տե՛ս «Գյուղատնտեսական կյանք», 1927, № 1, էջ 3։

155 Նույն տեղում, 1926, № 1, էջ 6։

156 Տե՛ս նույն տեղը, 1927, № 1, էջ 3։

նպատակասլաց։ Հայրենի հողի մեծ երգիչ Ակսել Բակունցը, որ սերտորեն կապված էր ամսագրի հետ և հանդես էր գալիս նրա էջերում գյուղատնտեսության զարգացման հարցերին նվիրված արժեքավոր հոդվածներով, նկատել է. «... Երբ թերթում ենք «Գյուղատնտեսական կյանք»-ի առաջին համարները՝ հասարակ թղթի վրա, տառերը խառնիխուռն, տիպը շտապ ու աղքատ, երբ թերթում ենք առանց շապիկ այդ համարները,—այդ տարիների եռուզեռը, ապատագրված երկրի կամքը՝ ավերակները վերականգնելու, տնտեսությունը բարձրացնելու ճիգեր թափելու—այդ ամենը հիմա էլ զգացվում են անպաճույճ այդ համարներից»[157]։ Հանդեսի հինգերորդ տարելիցի առթիվ խմբագրությանը հղած իր խոսքում Ա. Կարինյանը բարձր գնահատելով նրա վաստակը, եզրակացնում էր. «Գյուղատնտեսական կյանք»-ը առանձին տեղ է գրավում մեր պարբերականների շարքում։ Դա մի հանդես է, որ նվիրված է անմիջապես մեր գյուղի և գյուղացիության ուսումնասիրությանը»[158]։ Նշելով «Գյուղատնտեսական կյանք»-ում արծարծված խնդիրների կարևորությունը հանրապետության գյուղատնտեսության առաջընթացն ապահովելու գործում, «Խորհրդային Հայաստան»-ը իրավամբ այդ հանդեսին հատկացնում էր «շատ կարևոր տեղ մեր պարբերական մամուլի մեջ»[159]։

8

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին որոշ տեղաշարժ է նկատվում նաև արդյունաբերության մեջ. զգալի աշխուժացում են ապրում գինու-կոնյակի-սպիրտի, կաշեգործական ձեռնարկությունները, արհեստագործությունը, պոլիգրաֆիան, երկաթուղային տրանսպորտը և այլն։ 1924 թ. կեսերից սկսվեցին Ղափանի պղնձահանքերի և գործարանի, էլեկտրակայանի վերականգնման աշխատանքները, կառուցվում էր Լենինականի տեքստիլ գործարանը, փոքրիկ արտադրական ձեռնարկություններ և արհեստանոցներ էին բացվել նաև հանրապետության այլ վայրերում։ Աստիճանաբար ավելանում էին արդյունաբերության մեջ ներդրվող միջոցները, տավարանում էին հանրապետության բանվոր դասակարգի շարքերը...

---

157 Նույն տեղում, № 10—11, էջ 122։

158 Նույն տեղում, № 1, էջ 62։

159 «Խորհրդային Հայաստան», 1927, № 252։

Բնականաբար, պարբերական մամուլը չէր կարող աչքաթող անել արդյունաբերության կազմակերպման ու զարգացման հարցերը։ Սկզբից ևեթ մամուլը սկզբունքային նշանակություն էր տալիս բանվորության կազմակերպվածությունն ամրապնդելու և երկրի տնտեսական վերածնման մեջ նրա ամենաակտիվ մասնակցությունն ապահովելու խնդրին։ Սխալվում են նրանք, նշում էր դեռևս «Կոմունիստ»-ը, ովքեր, պատճառաբանելով, թե Հայաստանը տրնտեսապես հետամնաց երկիր է, չունի խոշոր ինդուստրիալ արդյունաբերություն և բանվոր դասակարգն էլ սակավաթիվ է ու թույլ, առաջարկում են սպասել այնքան ժամանակ, մինչև որ այդ դասակարգը «կհասունանա», «պատրաստ» կլինի տնտեսական լայնածավալ գործունեության, և դրանից հետո միայն զբաղվել նրան վերաբերող հարցերի քննությամբ։ Այդպես վարվելով, գրում էր թերթը, «մենք կգործենք խոշոր մենշևիկական սխալ»[160]։ Այն իրողությունը, նշում էր մամուլը, որ Հայաստանը գյուղացիական երկիր է, ամենևին չի նշանակում, թե անուշադրության պիտի մատնել արդյունաբերության կազմակերպման ու զարգացման խնդիրը. այդպիսի մատնության հետևանքն կնշանակեր ջատագովել հետամնացությունն ու աղքատությունը, քանի որ բուն գյուղատնտեսության վերելքի շահերն իսկ պահանջում են արդյունաբերության որոշակի զարգացում։ Այն հարցը, թե անհրաժե՞շտ է արդյոք արդյունաբերությունը մեր երկրի համար, գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— «միայն մի պատասխան ունի—ո՛չ միայն անհրաժեշտ է, այլև առանց արդյունաբերության մեր հանրապետությունը չի՛ կարող շնչել»[161]։ «Դեպի արդյունաբերություն», «Մետաղը հարություն պիտի առնի», «Հայաստանի հանքային դանձերի մասին», «Պիտի սկսել» խորագրով առաջնորդողներում, բազմաթիվ հոդվածներում, տնտեսագիտական բնույթի վերլուծություններում թերթը հանդամանորեն քննարկում էր հանրապետության ռեսուրսներին համապատասխան արդյունաբերություն կազմակերպելու, նախկին ձեռնարկությունները վերականգնելու, նորերն ստեղծելու, ինչպես և բանվորական ուժի արդյունավետ օգտագործման, միութենական ու հանրապետական շահերի զուգորդման և բազմաթիվ այլ հարցեր, որոնք ունեին գործնական կարևոր նշանակություն։

Գյուղատնտեսության մատակարարած հումքի արդյունաբերական մշակման կարևորությունն ընդգծելով, մամուլը անդրադառ-

160 «Կոմունիստ», 1921, № 57։

161 «Խորհրդային Հայաստան», 1923, № 200։

նում էր Զանգեզուրի պղնձահանքերի արտադրական կարողությունների վերականգնման, հիդրոկայանների կառուցման խնդիրներին։ Բարձր գնահատելով Խորհրդային Ռուսաստանի և անդրկովկասյան հանրապետությունների օգնությունը, մամուլը նշում էր, որ Հայաստանում արդյունաբերությունը, մասնավորապես տեքստիլ, պղնձի ու պեմզայի արտադրությունը զարգացնելու համար «շատ լայն ու բարեհաջող հորիզոններ են բացված». հարկավոր է առավել նպատակահարմարությամբ ծավալել կազմակերպչական-արտադրական աշխատանքները. մենք չենք կարող բավարարվել սոսկ վերականգնելով հանքերն ու գործարանները՝ «նախապատերազմյան պատկերով ու չափով». «նախկին մասնագիտական ցիրուցան փիլնաշիական պղնձարդյունաբերության փոխարեն այժմ հիմնում ենք մի կենտրոնից ամբողջական ծրագրով կառավարվող Զանգեզուրի պղնձարդյունաբերությունը... Զանգեզուրի պղինձը հարություն՝ ստի առնի»[162]։

Մեր հանրապետության պարբերականները կարևոր դեր էին վերապահում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աշխատանքային կարգապահության ամրապնդմանը, հումքի և աշխատաժամանակի խնայողությանը, աշխատավարձի կարգավորմանը, արտադրության գիտական կազմակերպմանը,—հարցեր, որոնց հատուկ նշանակություն էր տալիս կուսակցությունն իր համապատասխան որոշումներում և որոնք լայնորեն քննարկվում էին նաև միութենական մամուլում։ Ոմանք Հայաստանում այդ ամենին արձագանքելը համարում էին ավելորդ հապճեպություն, առաջարկելով սպասել այնքան ժամանակ, մինչև որ այստեղ էլ կստեղծվեր բուռն զարգացող արդյունաբերություն, իսկական արդյունաբերական մթնոլորտ։ Պարզ է, որ չէր կարելի համաձայնվել այդպիսի սխալատիպ առաջարկի հետ։ Անբացատրելի սխալ կլիներ պնդել,— առարկում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— թե՝ «այդ խնդիրները մեզ մոտ կարևոր նշանակություն չունեն»։ Այդպես մտածողները, նկատում էր թերթը, մատնանշում են, թե մենք ունենք ընդամենը «մի երկաթուղի, մի երկու հանք, մի քանի գործարան», բայց մոռանում են, որ «լրջորեն և երկար ժամանակով արդյունաբերություն ստեղծելու ճանապարհ ենք բռնել...». և եթե ուզում ենք այդ ուղիով առաջ շարժվել, ուրեմն պետք է անհապաղ «գործի անցնենք», քննենք-ուսումնասիրենք «մեր դեռևս փոքր, սաղմնա-

162 Նույն տեղում, 1924, № 152։

յին արդյունաբերության զարգացման հարցերը ամբողջությամբ ու բոլոր մանրամասնություններով» և «բանվորական խելքով, բանվորության կազմակերպված ինքնագործունեության միջոցով» առաջ տանենք, բարձրացնենք արդյունաբերությունը՝ «ի շահ սոցիալիստական տնտեսության ու պետության զորեղացման»[163]։

Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման շահերը պահանջում էին նույնպիսի համակողմանիությամբ ուսումնասիրել հանրապետության բնական ռեսուրսները և արտադրողական ուժերը՝ ընդհանրապես. «Մենք ամենից առաջ պետք է գիտենանք, պետք է աշխատենք մեր հինգ մատի պես ճանաչել մեր երկիրը. նրա բնական հատկությունները և ժողովրդին՝ իրրև արտադրողական ուժի»[164]։ Կարևոր նշանակություն էր տալիս մամուլը արտադրական խորհրդակցությունների կազմակերպմանը՝ կոչ անելով օգտագործել Միության առաջավոր ձեռնարկությունների փորձը։

Արտադրողական ուժերի համակողմանի ուսումնասիրությանն ու ճիշտ տեղաբաշխմանը, հանրապետության ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման կազմակերպմանը,— կուսակցական պարբերականների, գյուղատնտեսական ու արդյունաբերական գերատեսչական մամուլի հետ միասին,—նպաստում էին ՀՍԽ Տնտեսական խորհրդի և Պետպլանի օրգան «Экономический Вестник ССР Армении» հանդեսը, ինչպես նաև վիճակագրական բնույթի հրատարակությունները («Աղդարար», «Բյուլետեն Հայաստանի Կենտրոնական վիճակագրության վարչության», «Գյուղատնտեսական բյուլետեն» և այլն)։

1923 թ. Խորհրդային Միության ողջ պարբերական մամուլը («Պրավդա»-ից սկսած մինչև գավառական թերթերը) ծավալեց ժամանակի խնայողության կամպանիա։ Ստեղծվեց «Ժամանակի լիգա», որն իր բջիջներն ուներ արտադրական ձեռնարկություններում և պետական հիմնարկներում։ Լիգան հրապարակում էր կանոնադրություններ, աշխատանքային ռեժիմի վերաբերյալ հանձնարարականներ՝ նպատակ ունենալով կարգավորել ժամանակի հաշվառումը, ժամանակի բաշխումը և ժամանակի տնտեսումը։ Մոսկվայի «Ժամանակի լիգա»-ն հրատարակում էր նույնիսկ իր օրգանը՝ «Ժամանակ» թերթը...

---

163 «Խորհրդային Հայաստան», 1924, № 236։

164 Նույն տեղում, 1923, № 243։

1923 թ. սեպտեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմի կոմբջիջում կազմվեց Հայաստանում «Ժամանակի լիգա»-ի ստեղծումը նախապատրաստող հանձնախումբ՝ Հ. Ագաթյանի նախագահությամբ։ Հանձնախումբը «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակեց «Ժամանակի լիգա»-ի անդամներին ուղղված տասը պատգամները, որոնցից վերջինն ասում էր՝ «Հիշի՛ր, ժամանակը ամեն ինչ է. ժամանակը պրոգրես է, ժամանակը կոմունիզմ է, կյանք և երջանկություն»[165]։ Ժամանակի խնայողության կամպանիային ձեռնամուխ եղան թերթերի «Բանվորական բաժին»-ները։ Խնայեցեք ժամանակը, Պայքար ժամանակի համար և այլ խորագրերի ներքո զետեղվում էին աղյուսակներ, կոչեր, թերթերը հորդորում էին թղթակիցներին խարազանել բոլոր նրանց, ովքեր «ժամանակի վատ դասավորությամբ ստիպում են ուրիշին սպասել զուր տեղը և այդպիսով գողանալ ուրիշի ժամանակը»։

Ժամանակի խնայողության կամպանիան ուղղակիորեն առընչվում էր պետական ապարատի պարզեցման, ճկունացման ու կատարելագործման համար մղվող պայքարին։ Քննադատելով հիմնարկներում տեղ գտած դանդաղաշարժությունը, բյուրոկրատական ձգձգումներն ու ավելորդ, ձևական գրագրությունը, մամուլը նշում էր, որ «գործունեության այդպիսի եղանակը հարվածում է խորհրդային իշխանության հեղինակությանը և փաստորեն նշանակում է արհամարհել բանվորա-գյուղացիական զանգվածների անմիջական շահերը. այն ժամանակ, երբ խորհրդային իշխանությունը ոգի ի բոին աշխատում է տնտեսապես և կուլտուրապես աշխատավորական մասսաների կյանքն ապահովել ու բարձրացնել, և երբ ամեն մի ավելորդ ժամ ոսկի է, այդպիսի գործունեությունը անթույլատրելի է և պարզապես հանցագործություն։ Այդպիսի դանդաղկոտությունն ու ձգձգելու քաղաքականությունը ֆեոդալական կարգերին է հատուկ, խորհրդային կարգերում ընդհակառակը՝ ամեն մի գործողություն պիտի կատարվի կարճ, կտրուկ և արագ կերպով»[166]։ Գրագրության մոլուցքը, կենդանի գործը թղթի կույտերի մեջ թաղելու «հիվանդությունը» զգալի չափով հետևանք է այն բանի, բացատրում էր մամուլը, որ առանձին պաշտոնյաների մեջ մարած է ինքնուրույնության ոգին, և նրանք ջանում են ամեն կերպ խուսափել այս կամ այն հարցի լուծման պատասխանատվու-

165 Տե՛ս նույն տեղը, № 203։
166 Նույն տեղում, 1922, № 87։

թյունն իրենց վրա վերցնելուց. մյուս կողմից՝ իր բացասական դերն է կատարում նաև այն հանգամանքը, երբ պաշտոնատար անձանց աշխատանքը չափվում և գնահատվում է ոչ այնքան նրանց գործի իրական արդյունքով, որքան այդ գործի շուրջն ստեղծված «փաստաթղթային հաշվեկշռով»։

* * *

Ինքնին հասկանալի է արդեն, որ արդյունաբերության կազմակերպման հարցերին անդրադառնալիս՝ մամուլն առաջնակարգ նշանակություն էր տալիս արհմիութենական շարժման խնդիրների համակողմանի քննարկմանը, արհմիությունների աշխուժացման, ամրապնդման ու ընդլայնման ուղղությամբ հանրապետությունում ծավալվող աշխատանքների լուսաբանմանը։ Մամուլի գործունեությունն այս առպարեզում ըստ էության սկսվեց ՌԿ(բ)Կ X համագումարից հետո, որտեղ խստագույնս դատապարտվեցին «Բանվորական օպոզիցիա»-ի, օպորտունիստական մյուս խմբերի արոցկիստական հայացքները արհմիությունների դերի ու խնդիրների վերաբերյալ և ընդունվեց լենինյան դիրքորոշում։ Համագումարը արհմիությունները համարեց կոմունիզմի դպրոց, մերժեց արոցկիստների պահանջած «ռազմականացման» ու վարչարարության սկզբունքները, արհմիությունները կուսակցությանը հակադրելու, նրա ղեկավարությունից զրկելու նկրտումները։ Արհմիությունների գլխավոր խնդիրը համարվեց կազմակերպչական-տնտեսական և դաստիարակչական գործունեության ծավալումը։

Հայաստանի պարբերական մամուլը հանդես էր գալիս մասնավորապես այն վտանգավոր մտայնության դեմ, որն արտահայտվում էր այսպիսի շարլոն ձևակերպումով. «Ի՞նչ պրոֆմիություններ Հայաստանում. այս երկրում գոյություն կարող չեն ունենալ զորավոր արտադրողական միություններ»։ Այսպիսի մտածողությունը համարելով առնվազն «անհասկացության հետևանք», մամուլը կոչ էր անում ուժեղացնել կոմունիստների մասնակցությունն ու ղեկավար դերը արհմիություններում։ «Արհմիությունների մեջ աշխատելը և արհմիությունների դերը բնավ չեն պայմանավորվում նրանց «զորավոր» լինելով». ընդհակառակը, այդ հանգամանքը հենց հրամայական է դարձնում արհմիություններին ավելի լուրջ ու համակողմանի ուշադրություն նվիրելու պահանջը[167]։ «Պրո-

167 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1921, № 130։

ֆեսիոնալ միությունները և կոմունիստական կուսակցությունը» խորագրով առաջնորդողում «Խորհրդային Հայաստան»-ը ընդգծում էր, որ կուսակցական կազմակերպությունները կոչված են ճիշտ հունի մեջ դնելու արհեստակցական շարժման ընթացքը «տնտեսական նոր քաղաքականության շնորհիվ ստեղծված բարդ հարաբերությունների այս շրջանում»[168]*։ «Չպիտի մոռանալ գլխավորը,—մի այլ առիթով նշում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը.— կոմունիստական կուսակցության երկաթե կորիզը կազմում է բանվորությունը, որքան էլ բիչ լինի նրա թիվը Հայաստանի գյուղացիական մասսաների հետ համեմատած». ահա թե ինչու՝ «պրոֆեսիոնալ աշխատանքը չպիտի համարվի լոկ պրոֆգործիչների պարտականություն։ Ամբողջ կուսակցությունը և նրա տեղական մարմիններն ուշադրության պերիֆերիայից դեպի կենտրոնը պիտի տեղափոխեն պրոֆմիությունները»*[169]*։*

Արհեստակցական միությունների կազմակերպմանն ու զարգացմանը զուգընթաց ձևավորվում է նաև արհմիութենական մամուլը։ Պոլիգրաֆիստների արհմիութենական հարցերին զգալի տեղ էր հատկացնում «Տպագրական բանվոր»-ը[170]։

1921 թ. հոկտեմբերից սկսեց լույս տեսնել «Արհեստակցական շարժում» *պարբերականը՝ Հայաստանի արտադրողական արհեստակցական միությունների խորհրդի օրգանը, որը թե՛ բնույթով, թե՛ բովանդակությամբ և թե՛ արծարծած խնդիրների յուրահատ-*

---

168 *Նույն տեղում, 1922, № 74։*

169 *Նույն տեղում, № 200։*

170 *«Տպագրական բանվոր»-ը լույս էր տեսնում 1922 թվականից՝ իբրև Երևանի տպարանի կոմերիտական բջջի օրգան։ Հետագայում դարձավ նաև տպագրիչների արհմիության կենտրոնական վարչության օրգանը։ Սկզբում պատի լրագիր էր, № 11-ից՝ տպագիր։ Առաջին խմբագիրն էր Վահրամ Դարուզյանը (Ալազան)։ 1925 և 1926 թվականներին «Տպագրական բանվոր» խորագրով հրատարակվեցին նույնանուն թերթի գրական, գեղարվեստական և քաղաքական պատկերազարդ հավելվածի համարները (պատասխանատու խմբագիր՝ Վահրամ Ալազան։ 20—48 էջ, 35×25 սմ, տպաքանակը՝ 500—1000)։ 1927 թվից լույս էր տեսնում Պետհրատի տպարանի կուսակցական, ԼԿԵՄ կոլեկտիվների և արհկոմիտեի օրգան «Տպագրիչ» տասնօրյա թերթը (պատ. խմբ.՝ Հր. Կոթողյան)։ 1935 թ. հունվարից սկսեց հրատարակվել Հայաստանի տպագրիչների արհմիության օրգան «Հարվածային տպագրիչ» հանդեսը։ Խմբագրական կոլեգիայի նախագահ՝ Գ. Հովսեփյան, անդամներ՝ Վ. Սարոյան, Մ. Մարգարյան, Տրիբուն (Գևորգ Տեր-Տրիբունյան), Ա. Հանեսոզլյան, Գ. Հարությունյան, Մ. Ղազարյան, Լ. Պապիկյան, Վ. Դավթյան։ 18—30 էջ (27×18 սմ), տպաքանակը՝ 1000։*

կությամբ լիակատար արհեստակցական հրատարակություն էր՝ հանրապետական հնչեղությամբ[171]։

«Արհեստակցական շարժում»-ը, որին ակտիվորեն աշխատակցում էին Հ. Ազատյանը, Ալ. Իսահակյանը, Խ. Հովսեփյանը, Ա. Խաչյանը և ուրիշներ, արտացոլել է արհմիությունների կազմակերպման ու ակտիվացման ընթացքը, տեղերում կատարվող աշխատանքը, լուսաբանել է պրոֆակտիվիստների գործունեությունը, քննարկել արհեստակցական շարժման հասունացած խնդիրները նէպ-ի պայմաններում։ Պարբերականի ուշադրության կենտրոնում էին արդյունաբերության տարբեր ճյուղերում բանվորների արտադրական ուսուցումը կազմակերպելու, նրանց ստեղծագործական նախաձեռնությունը խթանելու, արհմիութենական ճյուղային խորհրդակցություններում գործարար մթնոլորտ ստեղծելու և արտադրական-կազմակերպչական այլ կարևոր հարցեր։ Արհմիությունները, նշում էր շաբաթաթերթը, ոչ թե վերացական գիտությունների սեմինարներ են, այլ մասսաների աշխատանքային դաստիարակության գործնական մեթոդների մշակման ու կիրառման այն օղակները, որոնց օգնությամբ հնարավոր կլինի շաղկապել հասարակական և անհատական շահագրգռությունները[172]։

«Արհեստակցական շարժում»-ին փոխարինելու եկավ «Աշխատանք»-ը, որի առաջին համարը լույս տեսավ 1922 թ. հոկտեմբերի 15-ին[173]։ Այս պարբերականը շարունակում էր ծառայել նույն նպատակին, ինչին հետամուտ էր իր նախորդը. տարբերությունն այն էր, որ սա ավելի շատ էր ուշադրություն նվիրում անգրագիտության վերացման, խորհուրդների և արհմիությունների փոխհարաբերության, սոցիալական ապահովագրության խնդիրներին։ 1923 թ. կեսերից, ֆինանսական դժվարությունների պատճառով, «Աշխատանք»-ի հրատարակությունը կրում էր էպիզոդիկ բնույթ, այն

---

171 «Արհեստակցական շարժում»-ը թեև անվանվում էր շաբաթաթերթ, բայց ունեցել է անկանոն պարբերականություն (շաբաթը մեկ, 10 օրը մեկ, ամիսը երկու անգամ և այլն)։ Պատ. խմբագիր՝ Ալ. Իսահակյան։ 8—10—12—22 էջ (34×26 սմ), տպաքանակը՝ 1500—2000։ Մեզ հայտնի վերջին համարը լույս է տեսել 1922 թ. փետրվարի 24-ին։

172 Տե՛ս «Արհեստակցական շարժում», 1922, № 2։

173 «Աշխատանք»-ը Հայաստանի արհմիությունների խորհրդի օրգանն էր։ Պատ. խմբագիրն էր Հարութիկ Գասպարյանը։ 8—16 էջ (34×28 սմ), տպաքանակը՝ 1000։ Առաջին համարները լույս էին տեսնում շաբաթը մեկ անգամ, բայց շուտով պարբերականությունը դարձավ խիստ անկանոն։

ըստ էության դադարից լույս տեսնելուց. «Աշխատանք»-ը չորս ամիսը մեկ հաղիվ է երևում ասպարեզի վրա, նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը և շարունակում՝ եթե դրան ավելացնենք, որ մեղանում գրեթե բացակայում է արհմիութենական գրականությունը, իսկ «նոր տնտեսական քաղաքականությունը պահանջում է մեղանից կրկնապատկել և բառապատկել մեր աշխատանքների թափը կուլտ-կրթական ասպարեզում», ապա պարզ կդառնա հրատարակչական գործը վերակենդանացնելու և կանոնավորելու ամբողջ կարևորությունը[174]։

1924 թ. նոյեմբերից վերսկսվում է «Աշխատանք»-ի հրատարակությունը՝ իբրև Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի, Աշխժողկոմատի և Լենինականի երկաթուղային բաժանմունքի արհշրջկոմի օրգան[175]։ Այս «Աշխատանք»-ը ձգտում էր ընթանալ զգալի աշխուժացում և վերելք ապրող արհմիութենական կյանքին համաքայլ, արտադրական-կազմակերպչական հարցերի կողքին մեծ տեղ էր հատկացնում բանվորների շահերի պաշտպանության, ադմինիստրացիայի հետ փոխհարաբերության, աշխատանքային կարգապահության, ինչպես նաև կուլտուր-կենցաղային խնդիրների լուսաբանմանը։

1924 թ. լույս են տեսնում Դիլիջանի դավարհմիությունների օրգան «Աշխատանք» ամսաթերթի երկու համարները, որոնք թեև առանձնակի արժեք չունեն իրենց բովանդակությամբ, բայց նշանակալից են նրանով, որ, ինչքան մեզ է հայտնի՝ տեղական արհեստակցական պարբերականի առաջին նմուշներն են մեր հանրապետությունում։ Նոր Բայազետի Ձկնորսական բաժնին կից կոմբջիջը, ձկնորսների միությունը և փոստ-հեռագրական դավտեղկոմը 1925 թվականից լույս էին ընծայում «Ձկնորս բանվոր» երկշաբաթ-

---

174 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1923, № 235։

175 Թեև այս «Աշխատանք»-ը իրեն համարում էր նոր օրգան, բայց ըստ էության եղել է նախորդի շարունակությունը։ Երկշաբաթաթերթ էր կոչվում, սակայն պարբերականությունը հաճախ խախտվել է, ունեցել է միացյալ համարներ։ Խմբագրական կոլեգիայի մեջ մտնում էին Հ. Աղատյանը, Ե. Ջուբարը և Հ. Պետրոսյանը։ Վերջինս հետագայում եղել է խմբագիր։ Լույս է տեսել մինչև 1929 թ. ներառյալ։ Խմբագրական կոլեգիայի անդամներ են եղել նաև Խ. Դեմիրճյանը, Հ. Բաղդասարյանը, Վ. Այվազյանը, Հ. Տանինը։ 24 էջ (33×25 սմ), տպաքանակը՝ 800—3500։ 1927 թվականից «Աշխատանք»-ի շապիկները ձևավորում էին Հ. Կոչոյանն ու Մ. Սարյանը։ Հարկ է նշել նաև Հ. Տ. Ավագյանի դիպուկ ծաղրանկարները։

յա տպագիր պատի լրագիրը[176], իսկ 1926 թ. հուլիսի 1-ից՝ «բատրակների և ձկնորս բանվորների թերթ» «Գեղարքունիք»-ը, որը հրատարակվեց շուրջ մեկ տարի՝ 250 օրինակ տպարանակով[177]։

Արհեստակցական շարժման կազմակերպման ու զարգացման համար կարևոր էր, որ ինչպես արհմիութենական ակտիվը, այնպես էլ շարքային անդամները ժամանակին տեղյակ լինեին Աշխժողկոմատի դեկրետներին ու հրահանգներին, սոցիալական ապահովագրության, աշխատանքի պաշտպանության, առհասարակ աշխատանքային օրենսդրության վերաբերյալ որոշումներին։ Պակաս կարևոր չէր նաև ժողկոմատի համապատասխան բաժինների հաշվետվությունների, աշխատանքի բորսային, տարիֆային և կոնֆլիկտային հարցերին նվիրված նյութերի հրապարակումը։ Իհարկե, մամուլի օրգանները, մասնավորապես արհեստակցական պարբերականները, այս կամ այն կերպ անդրադառնում էին այդ ամենին, սակայն՝ պաշտոնական նյութերի տպագրումը ամենևին էլ չէր մտնում նրանց անմիջական պարտականությունների մեջ։ Դրա համար ստեղծված էր հատուկ պարբերական՝ «Աշխատանքի տեղեկատու» ամսագիրը, որ սկսեց լույս տեսնել 1923 թ. հունվարից[178]։

Ժողովրդական տնտեսության վերականգնման առաջին տարիներին արհմիութենական շարժումը մեր հանրապետությունում ձեռք բերեց զգալի հաջողություններ, որոնք ավելի քան նշանակալից էին, եթե նկատի ունենանք ընդհանուր տնտեսական և այլ կարգի դժվարություններ։ Ինչպես նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը՝ «ծանր, աղքատիկ պայմաններում, առանց փորձված բանվոր մասսաների, առանց մշտական աշխատողների պատրաստ կադրերի, մեր պրոֆմիությունները այս երկու-երեք տարվա ընթացքում կարողացել են ոտի կանգնել և իրենց արժանի տեղը գրավել մեր քաղաքական-պետական կյանքում». արհեստակցական միությունները գործնականում ապացուցեցին իրենց կարևորությունը՝ ձեռք բերելով «ամենալայն ժողովրդականություն» և ամենաթերահավատներին անգամ համոզեցին, որ «պրոֆեսիոնալ միությունը դատարկ

---

176 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 199, թ. 39—40։

177 Տե՛ս նույն տեղը, ց. 9, գ. 364, թ. 7։

178 «Աշխատանքի տեղեկատու»-ն մինչև 1926 թ. հրատարակվում էր իբրև Անդրֆեդերացիայի Աշխժողկոմատի Հայաստանի լիազորի վարչության օրգան։ Այնուհետև վերանվանվել է «Աշխօրենսդրության տեղեկատու» և լույս է տեսել որպես ՀՍԽՀ Աշխժողկոմատի օրգան։ 24—45 էջ (22×16 սմ), տպարանակի մասին տվյալներ չեն պահպանվել։ Ունեցել է միացյալ համարներ։

հնչյուն չէ և ոչ էլ «կապիտալի» կազմակերպություն», այլ բանվոր դասակարգի կազմակերպման ու դաստիարակության գործիք միջոց է, իսկական կոմունիզմի դպրոց[179]։

Պարբերական մամուլը 1924 թ. սկզբներից զգալի տեղ էր հատկացնում արտադրության առաջավորների, հին բանվորների հասարակական մեծարմանը, նրանց վաստակի գնահատմանն ու փորձի տարածմանը։ Այսպես՝ «Խորհրդային Հայաստան»-ի «Բանվորական բաժին»-ը փետրվար ամսից բաց արեց Լավ վարպետների մրցում ենթաբաժինը, ուր տպագրվում էին փոքրիկ, երբեմն էլ ակնարկատիպ թղթակցություններ առաջավոր վարպետների կյանքի ու աշխատանքային գործունեության մասին։ Երկու ամսվա ընթացքում թերթում մեծարվեցին մոտ 20 առաջավոր վարպետներ, որոնք աշխատում էին Երևանի դեպոյում, «Արարատ» գործարանում, հեռագրա-հեռախոսային ցանցում, կաշվի արդյունաբերության մեջ, տպարանում և այլ ձեռնարկություններում։ Նույն նպատակն էր հետապնդում «Բանվոր» թերթում բացված Մեքենավարների մրցում ենթաբաժինը, որն իր մշտական տեղն ուներ գրեթե յուրաքանչյուր համարում։ Թերթն ընթերցողներին կոչ էր անում ուշադրությամբ կարդալ այդ նյութերը, հայտնել իրենց կարծիքը, թղթակցություններ ուղարկել այն ընկերների մասին, ովքեր արժանի են մեծարման[180]։ «Ավանգարդ»-ը տպագրում էր աշխատանքի երիտասարդ էնտուզիաստներին նվիրված ուշագրավ նյութեր։ Նույնը, ճիշտ է, ոչ այդպիսի հետևողականությամբ ու ծրագրված կերպով, անում էին նաև հանրապետության մյուս պարբերականները։

Մեծարելով վարպետներին, աշխատանքի վետերաններին, մամուլն այդ ուրիշով բարձրացնում էր նրանց արժանի փոխարինողներ պատրաստելու, երիտասարդությանը մասնագիտական կրթություն տալու հարցը։ «Հայաստանի լեռնագործության, շինարարական գործի, տեքստիլ արդյունաբերության և այլ արտադրական ձեռնարկությունների ու գյուղատնտեսության զարգացումը,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— սերտորեն կապված է բանվորական որակյալ ուժերի պատրաստման հետ»։ Թերթն առաջարկում էր կազմակերպել երիտասարդության պրոֆտեխնիկական ուսուցումը Երևանում, Լենինականում, Ղափանում և այլուր[181]։ Իրերի

179 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1923, № 99։
180 Տե՛ս «Բանվոր», 1924, № 116։
181 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, № 270։

պատմական բերումով, դիպուկ կերպով նկատում էր թերթը դեռևս 1922 թ., «պրոլետարիատը ավելի շատ հեղափոխության մասնագետներ է տվել, քան թե մասնագետ հեղափոխականներ», մի «բաց», որը «պետք է լրացնել բանվոր երիտասարդության շարքերից մասնագետներ պատրաստելով»[182]։

Արհմիութենական խնդիրների քննարկումը մամուլում ավելի լայն ծավալ ստացավ հատկապես 1924 թ. կեսերից, երբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ հանրապետական և մյուս թերթերում բացվեց հատուկ արհեստակցական բաժին[183]։

* * *

1925 թ. նոյեմբերի 30-ին բացվեց ՀԿ(բ)Կ IV համագումարը, որի նախապատրաստմանը մեծ տեղ հատկացրեց նաև պարբերական մամուլը՝ ունենալով այն հիմնական նյութերը, թե Հայաստանի կոմունիստների համաժողովը կոչված է հանրագումարելու ժողովրդական տնտեսության վերականգնման բոլոր ասպարեզներում ձեռք բերված արդյունքները և նշելու զարգացման առաջիկա ուղիները։ ՀԿ(բ)Կ IV համագումարի նախօրյակին խորհրդի ներքո տպագրվեցին այս ոգով գրված բազմաթիվ հոդվածներ, նամակներ, քննական վերլուծություններ, ամփոփիչ նյութեր։

Ինչպես նշվեց Կենտկոմի հաշվետվության մեջ՝ հանրապետության ժողովրդական տնտեսությունը 1925 թվականին «ընդհանուր առմամբ ավարտեց իր վերականգնման պրոցեսը»։ Զգալի հաջողությունների հասավ գյուղատնտեսությունը. ցանքատարածությունները 1919 թ. համեմատությամբ մեծացել էին ավելի քան երեք ու կես անգամ և կազմում էին 1913 թ. մակարդակի 85,5 տոկոսը. ընդհուպ նախապատերազմյան չափերին էր մոտեցել ինչպես հիմնական կուլտուրաների բերքատվությունը, այնպես էլ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը՝ իր արժեքային արտահայտությամբ. տարեց-տարի ավելանում էին պետության կողմից գյուղատնտեսության մեջ կատարվող կապիտալ ներդրումները, որոնց չափը միայն 1924—1925 տնտեսական տարում կազմեց արդեն 1.740 հազար ռուբլի. նույն ժամանակամիջոցում շքավոր և միջակ գյուղացիությանը բաց թողնվեց 4.416 հազար ռուբլու պետական վարկ։

---

182 «Խորհրդային Հայաստան», 1922, № 241։

183 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 274, թ. 6։

Արդյունաբերության վերականգնմանը զուգընթաց հիմնադրվում էին մի շարք նոր ձեռնարկություններ (տեքստիլ, քիմիական, շինանյութերի արտադրության, էլեկտրաէներգիայի և այլն)։ Նշանակալից հաջողություններ ձեռք բերվեցին պղնձարդյունաբերության, գինեգործության, կաշեգործության, պոլիգրաֆ արդյունաբերության, երկաթուղային տրանսպորտի և այլ ճյուղերի զարգացման բնագավառներում։ Անշեղորեն աճում էր հանրապետության բանվոր-ծառայողների թիվը, ընդլայնվում էր ապրանքաշրջանառությունը, ծավալվում էր բնակարանային շինարարությունը։ Անհամեմատ մեծացել էր դպրոցական և առողջապահական հիմնարկների ցանցը. միայն Առողջապահության ժողկոմատի կատարած ծախսումները 1921 թ. 117.134 ռուբլու դիմաց 1924—1925 տնտեսական տարում կազմում էին արդեն 1.124.124 ռուբլի, աճելով ավելի քան 9 անգամ։

Պարբերական մամուլն ամփոփում էր ժողովրդական տնտեսության վերականգնման ասպարեզում ձեռք բերված արդյունքները, դրվատում աշխատավոր զանգվածների անդուլ ջանքերը, կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ նրանց մղած համառ ու անձնվեր պայքարը հանուն երկրի վերաշինության, հանուն նոր հասարակարգի կառուցման։ «Ծանր, բազմապիսի խոչընդոտներով լի աշխատանքի մի շրջան էր շինարարության այս հինգ տարին,— ընդհանրացնում էր «Խորհրդային Հայաստան»-ը։ —Պետք է հաղթահարվեին նյութական և կազմակերպչական մեծ դժվարություններ, կուլտուրական-տեխնիկական հետամնացության բազմապիսի թերություններ, հայտնի և գաղտնի թշնամիների դիմադրությունը... Բոկոտն, սոված և կիսագրագետ բանվորա-գյուղացիական Հայաստանի երկաթե կամքը փշրեց հաղարավոր արգելքների շղթան և իր սոցիալիստական շինարարության հիմքերը դրավ ամրակուռ ժայռերի վրա»[184]։

* * *

Այսպիսով, մեր հանրապետության պարբերական մամուլը նպատակասլաց ջանքեր գործադրեց խաղաղ-շինարարական աշխատանքների ծավալման ուղղությամբ. այստեղ կարևոր էր նոր տնտեսական քաղաքականության պարզաբանումը, մանր-բուր-

184 «Խորհրդային Հայաստան», 1925, № 273։

ժուական հոգեբանության հաղթահարումը, ոոոզման ու կոոպերացիայի նշանակության պրոպագանդան։ Մամուլն զգալի չափով օգնեց այդ ասպարեզում տարվող գործնական աշխատանքների կազմակերպմանը։ Որոշակի դեր խաղացին կոոպերատիվ պարբերականները։ Տնտեսական խնդիրների քննարկումը, առանձնապես գյուղատնտեսության կազմակերպման հարցերը մեծ տեղ ունեին գավառային թերթերում, «Մաճկալ»-ում և «Գյուղատնտեսական կյանք» հանդեսում։ Մամուլն արծարծում էր նաև արդյունաբերության վերականգնման, արհեստակցական շարժման աշխուժացման ու առողջացման խնդիրները. հիմնադրվեց և իր առաջին քայլերն արեց արհեստակցական մամուլը։ Պրոպագանդիստական-դաստիարակչական որոշակի աշխատանք կատարեցին երիտասարդական ու զինվորական պարբերականները։

ԳԼՈՒԽ III

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ, ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ

ՌԿ(բ)Կ Անդրեևկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի ենթաբաժինների (բաժինների) գործունեությունը: Մամուլի ցցնաժամի հաղթահարումը. մամուլի պետական ցանցի ստեղծումը: Անդրկովկասի և Հայաստանի մամուլի ցուցահանդեսները: Պարբերական մամուլը և թղթակցային շարժման կազմակերպումը. թերթերի «Կուսակցական կյանք» և «Բանվորական կյանք» բաժինները: Թղթակցային շարժման վերակառուցումը:

1

1921 թ. դեկտեմբերին ՌԿ(բ)Կ Կենտկոմը մամուլի հրատարակման համառուսաստանյան պլան մշակելու համար ստեղծեց հատուկ մի հանձնաժողով, որն իր աշխատանքներն ավարտեց հաջորդ տարվա հունվարի կեսերին: Շուտով Կենտկոմի կազմբյուրոն հաստատեց հանձնաժողովի մշակած առաջարկները՝ թերթերի պետական ցանց ստեղծելու վերաբերյալ: Նրա մեջ չէին մտնում արհմիութենական, զինվորական, նեղ մասնագիտական և գերատեսչական պարբերական հրատարակությունները: Պետական ցանցում ներառնվեց 232 անուն թերթ, որից 158-ը՝ նահանգային (այդ թվում՝ 20 գյուղացիական և 11 կոմերիտական լրագրեր) և 74-ը գավառային: 51 թերթ լույս էր տեսնելու Ռուսաստանի մյուս ժողովուրդների լեզուներով[1]:

Թերթերի վերոհիշյալ ցանցը որոշելիս նկատի էր առնվում միայն ՌՍՖՍՀ տերիտորիան: Կազմբյուրոն առաջարկեց Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմին և ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյին՝ կար-

---

[1] *Տե՛ս* «Партийная и советская печать в борьбе за построение социализма и коммунизма», М., 1966, *էջ 66—67։*

գավոռել կուսակցական ու սովետական պարբերական մամուլի հրատարակման գործը, թերթերի համանման ցանց սահմանել Ուկրաինայում և Անդրկովկասում։ Այստեղ մամուլի կազմակերպման և ղեկավարման գործն իր ձեռքն էր վերցրել նախ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն, ապա՝ Անդրբերկոմը, որն այդ կարևոր աշխատանքը մինչև 1924 թ. հունիս ամիսն իրականացնում էր մամուլի ենթաբաժնի միջոցով։

Այդ ենթաբաժնի գործունեության բնութագրման տեսակետից կարևոր է այստեղ վերհիշել այն դժվարին կացությունը, որի մեջ ընկել էր մեր երկրի պարբերական մամուլը նոր տնտեսական քաղաքականության կիրառման առաջին շրջանում, տնտեսաշվարկային սիստեմին անցնելու հետևանքով։ Ընդհանուր մի երևույթ էր դա, որ, մի փոքր շուտ կամ ուշ, իր արտահայտությունը գտավ խորհրդային բոլոր հանրապետություններում։ 1921 թ. վերջերին և հաջորդ տարվա սկզբին վիճակն այնքան ծանրացավ, որ ՌԿ(բ)Կ XI համագումարը «Մամուլի և պրոպագանդի մասին» բանաձևում արձանագրեց. «Կուսակցական-սովետական մամուլը ամենածանր ճգնաժամային դրության մեջ է»[2]։ Ճգնաժամի բնորոշ գծերից մեկն էլ թերթերի քանակի շեշտակի կրճատումն էր և իրենց գոյությունը պահպանած օրգանների տպաքանակի նվազումը՝ դրամական միջոցների բացակայության, թղթի սակավության ու թանկության, տպարանական ծախսերի անչափ մեծության հետևանքով։ Եվ իրոք, եթե 1921 թ. վերջերին երկրում լույս էր տեսնում 883 թերթ՝ 2 միլիոն 660 հազար ընդհանուր տպաքանակով, ապա հաջորդ տարվա հունիսին նրանց թիվը կրճատվեց մոտ 2 ու կես անգամ՝ մնաց ընդամենը 360 թերթ, մեկ միլիոնից մի փոքր ավելի ընդհանուր տպաքանակով։ Կրճատումների մեծագույն մասը բաժին ընկավ գավառական մամուլին[3]։ «Պրավդա»-ն և «Իզվեստիա»-ն Մամուլը նոր տնտեսական քաղաքականության նիրաններում խորագրի ներքո տպագրեցին մի շարք հոդվածներ, որոնցում բերված են թվական ու փաստական բնորոշ տվյալներ մամուլի ճգնաժամի վերաբերյալ։

Այս պայմաններում, դեռևս 1922 թ. սկզբին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը ընդունեց մի որոշում, որի համաձայն «փակվելու էին գավառներում լույս տեսնող թերթերը և նրանց փո-

2 «Պարտիական և սովետական մամուլի մասին», էջ 339։

3 Տե՛ս «Партийная и советская печать в борьбе за построение социализма и коммунизма», էջ 339։

խարեն հրատարակվելու էր հանրապետության գյուղական կյանքը բազմակողմանիորեն արտացոլող հատուկ մի լրագիր»[4]։ Այսպիսի օրգանի կազմակերպման գործը, սակայն, ձգձգվում էր կադրերի բացակայության և ֆինանսա-տեխնիկական մի շարք դժվարությունների պատճառով։ Ուստի Կենտկոմը առայժմ թույլատրեց գավկոմներին՝ շարունակելու իրենց թերթերի հրատարակությունը, միաժամանակ պահանջելով բարելավել նրանց աշխատանքը տեղական կյանքի արտացոլման և գյուղատնտեսական գիտելիքների տարածման ուղղությամբ, ուժեղացնել կապը մասսաների հետ։

Ճիշտ է, նույն թվականի մայիսից սկսեց լույս տեսնել կենտրոնական գյուղացիական լրագիր «Մաճկալ»-ը, բայց, այնուամենայնիվ, որոշ գավառական թերթեր, թեև բավական անկանոն պարբերականությամբ և փոքր տպաքանակով, շարունակում էին լույս տեսնել։ Այս հանգամանքը բացատրվում էր մի կողմից նրանով, որ «Մաճկալ»-ը դեռևս չէր կարողանում իր տեսադաշտի մեջ առնել հանրապետության բոլոր գավառները՝ տեղերի ու կենտրոնի միջև անբավարար կապի պատճառով, մյուս կողմից՝ իրենց օրգաններն ունենալու գավկոմների եռանդուն ջանքերով։ Այսուհանդերձ, 1923 թ. կեսերից հարկ եղավ դրանց գոյությունը ևս դադարեցնել։ Բացառություն էին կազմում միայն «Բանվոր»-ը և «Կարմիր ռազմար»-ը, որոնցից առաջինը հարատևում է մինչև օրս, իսկ երկրորդը լույս տեսավ մեկ տասնամյակ։ Ի դեպ, այս թերթերը ևս զերծ չմնացին «ճգնաժամային հարվածներից»։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանին վերաբերող արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, թե սկզբունքային ու հետևողական ինչ հսկայական աշխատանք է տարել Ռ(բ)Կ Անդրերկրամը երկրամասի բազմալեզու պարբերական մամուլի կազմակերպման ու զարգացման ուղղությամբ։ Այս ասպարեզում մեծ է Ա. Մյասնիկյանի ծառայությունը։ Անդրերկրամի աշխատանքները գլխավորելու առաջին իսկ պահից նա հատուկ ուշադրություն էր նվիրում պարբերական մամուլին[5]։

---

4 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 486, թ. 25։

5 Անդրկովկասի պարբերական մամուլի պատմության մեջ Ա. Մյասնիկյանի կատարած բացառիկ դերի, եռանդուն ու ոգեշունչ աշխատանքի մասին բազմաթիվ վկայություններ կան նրա հիշատակին նվիրված այն հոդվածներում ու հիշողություններում, որ լույս տեսան մասնավորապես «Заря Востока» թերթի 1925 թ. մարտի վերջին համարներում։ Տալով այդ նյութերի տեսությունը, «ետոհրդային

Դեռևս ՌԿ(բ)Կ անդրկովկասյան կազմակերպությունների անդրանիկ համագումարում (1922 թ. փետրվար) Ալ. Մյասնիկյանն ամենայն սրությամբ դրեց կուսակցական և խորհրդային մամուլի կազմակերպման ու կատարելագործման, տպագիր օրգանների աշխատանքի վերակառուցման, նոր պարբերականների ստեղծման հարցերը՝ Անդրկովկասում սոցիալիստական շինարարության և աշխատավորների գաղափարական-կուլտուրական դաստիարակության նոր խնդիրներին համապատասխան[6]։ Համագումարին տված «Կուսակցական շինարարության մասին» զեկուցման մեջ, նշելով մամուլի նկատմամբ ղեկավարությունն ուժեղացնելու անհրաժեշտությունը, Մյասնիկյանն ընդգծում էր. «Հարցի այս կողմի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել։ Այս տեսակետից 1919 թ. VIII կուսակցական համագումարի որոշումները մնում են անխախտ, բայց մենք ասում ենք միայն, թե ինչպես պետք է աշխատել տվյալ մոմենտին»։ Դավառային թերթերին անդրադառնալուց հետո, նա իր զեկուցման մեջ առանձնակի տեղ հատկացրեց հանրապետական կենտրոններում ու անդրկովկասյան ընդհանուր կենտրոնում կուսակցական-խորհրդային մամուլի զարգացման գործնական խնդիրներին։

1922 թ. օգոստոսին Անդրերկոմի պլենումը հատուկ բանաձև ընդունեց մամուլի մասին։ Տպագիր խոսքի դերի և նշանակության վերաբերյալ ընդհանուր դրույթներից հետո բանաձևը նշում էր այն առանձնահատկությունները, որոնք հաշվի առնելով պետք է ընտրվեին մամուլի կազմակերպման ու ղեկավարման ձևերն ու մեթոդները Անդրկովկասում։ Այդ առանձնահատկություններից հիմնականները հետևյալներն էին՝ 1) տեղական ազգային-կուլտու-

---

Հայաստան»-ը նշում էր. դրանց մեջ առանձնապես շեշտված է, թե Ալ. Մյասնիկյանը «Անդրկովկասյան մամուլի կազմակերպման գործում խոշոր դեր էր կատարում և փաստորեն նրա ղեկավարն էր» (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, № 70)։ Իր ողբերգական մահից երկու օր առաջ՝ 1925 թ. մարտի 20-ին Ալ. Մյասնիկյանը, որ արդեն խմբագրում էր Անդրերկոմի օրգան «Заря Востока» և «Մարտակոչ» թերթերը, որպես խմբագիր տպագրության ստորագրեց նաև «Кавказский большевик» ամսագրի անդրանիկ համարը։ Խորհրդանշական է նաև, որ Ալ. Մյասնիկյանի ստորագրած վերջին կուսակցական փաստաթուղթը նույնպես վերաբերում էր մամուլին. դա Անդրկովկասյան հանրապետությունների կենտկոմներին, գավկոմներին ու շրջկոմներին ուղղված՝ Անդրերկոմի 1925 թ. մարտի 21-ի շրջաբերականն էր «Անդրկովկասյան մամուլի ցուցահանդես կազմակերպելու մասին»։ Հաջորդ օրը նա զոհ դնաց ինքնաթիռային աղետին։

6 Տե՛ս Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 409—410։

բական և կենցաղային պայմանների բազմազանությունը. 2) գյուղացիության գերակշռությունը երկրամասում, հետամնաց ֆեոդալական-ճորտատիրական տնտեսաձևերի բազմաթիվ մնացորդների առկայությունը, արհեստավորների և մանր քաղքենիության գերակշռությունը քաղաքներում և 3) կենտրոնից Անդրկովկասի հեռու ընկած լինելը[7]:

Այնուհետև, անհրաժեշտ ցուցումներ տալով ինչպես երկրամասային մասշտաբի պարբերականների ստեղծման, նրանց բնույթի և ուղղության, այնպես էլ հանրապետական ու տեղական թերթերի վերաբերյալ, պլենումը հատուկ ուշադրություն նվիրեց նեպ-ի պայմաններում մամուլի հրատարակման ու տարածման, պարբերականների ֆինանսավորման գործը կարգավորելու խնդիրներին, նկատի ունենալով մասնավորապես այն դժվարագույն վիճակը, որի մեջ ընկել էր մամուլը տնտեսաշվարկային սիստեմին անցնելու կապակցությամբ: Անդրերկոմը, այս առիթով, ելնելով Ռ.Կ(բ)Կ XI համագումարի որոշումներից, հարկ համարեց ընդգծել առանձնապես հետևյալը. «Հրատարակչական գործում կիրառելով տնտեսաշվարկի և վճարովիության սկզբունքը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաստատապես ըմբռնել և այն, որ կուսակցական հրատարակությունը չի ծածկի իր ծախսերը, օգուտ չի բերի և ըստ էության չի էլ կարող այդ անել: Լայն ագիտացիան և մասսաների քաղաքական լուսավորությունը այնպիսի հույժ կարևոր խնդիրներ են, որոնց համար հարկ չկա դրամ ափսոսալ և որոնց չի կարելի մոտենալ նեղ-առևտրական տեսակետից: Այս նկատառումով էլ հրատարակության հիմնական աղբյուրը ոչ թե թերթերի ու գրքերի վաճառքից ստացված եկամուտը պիտի լինի, այլ կենտրոնական կուսակցական կազմակերպությունների կողմից արվող դրամական հատկացումները»:

Հրատարակության համար միջոցներ հայթայթելու ուղիներ էին համարվում նաև՝ ա) թերթերի բաժանորդագրության և գրադարանների համալրման նպատակով կուսակցական անդամավճարներից կատարվող մասնահանումները, որ թողնվում էին տեղերում՝ ի տնօրինություն կուսբջիջների. բ) արհմիությունների կնքած կոլեկտիվ պայմանագրերի մեջ հատուկ կետի ներմուծումը՝ կուլտուր-լուսավորական նպատակների համար տնտեսական մարմինների և ձեռնարկությունների վարչությունների կողմից աշխա-

---

7 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 483, թ. 41։

տավարձի ֆոնդից որոշակի տոկոս մասնահանելու վերաբերյալ։

Ղեկավար կուսակցական կազմակերպությունները պարտավոր էին սահմանել խիստ վերահսկողություն, որպեսզի վերոհիշյալ միջոցներով կատարված հայթայթումները ծախսվեն բացառապես նախատեսված նպատակների համար[8]։

Անդրերկոմը մոտիկից հետևում էր թերթերի, ամսագրերի ու հրատարակչությունների աշխատանքին, ժամանակին բացահայտում թույլ տրվող սխալներն ու վրիպումները, կոնկրետ միջոցառումներ մշակում դրանց վերացման համար, գրաղվում էր ժուռնալիստների նոր կադրեր պատրաստելու, նրանց գաղափարական-պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելու խնդիրներով։ Այս ամենը առանձնակի արժեք էր ստանում մանավանդ այն պատճառով, որ նոր տնտեսական քաղաքականության պայմաններում աշխուժություն էր դրսևորում բուրժուական գաղափարախոսությունը՝ ջանալով ներթափանցել նաև մամուլի ոլորտ։ Նման փորձերի դեմ էր ուղղված ՌԿ(բ)Կ Անդրերկոմի 1923 թ. ապրիլի սկզբին ընդունած որոշումներից մեկը[9], որ ուղարկվեց հանրապետական բոլոր կենտկոմներին, շրջանային կոմիտեներին և կուսակցական ու խորհրդային թերթերի խմբագրություններին։ «Ըստ երևույթին տնտեսական նոր քաղաքականությունը ստիճանաբար ճնշում է գործադրում նաև մեր գրականության վրա»— նախազգուշացնում էր Անդրերկոմը՝ մատնանշելով «Голос трудовой Абхазии» և «Рабочая правда» (Թիֆլիս) թերթերում լույս տեսած մի քանի ֆելիետոններ, որոնք հիշեցնում էին «բուլվարային թերթերի խրթբրթանքները» և սոսկ ծառայում էին այն բանին, որ «հրճվանք պատճառեն բորսայի սպեկուլյանտներին, բամբասասեր քաղքենիներին, շոյելով նրանց սրտերն ու մտքերը»։ Խստագույնս դատապարտելով «կոմունիստական էթիկայի տեսակետից անթույլատրելի», խորհրդային ժուռնալիստիկայի ոգուն անհարիր այդ մեղանչումները, Երկրային կոմիտեն վճռականորեն դնում էր թերթերի խմբագրությունների պատասխանատվությունը բարձրացնելու, նրանց գործունեության վրա կուսակցական կազմակերպությունների վերահսկողությունն ուժեղացնելու խնդիրը։ Անդրերկոմը կուսկազմակերպություններից պահանջում էր՝ 1) Աչալուրջ հետևել, որպեսզի բանվորա-գյուղացիական մամուլում չսպրդի «բուրժուա-

---

8 Տե՛ս ՄԿԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 1, դ. 483, թ. 42։

9 Տե՛ս «Заря Востока», 1923, № 75.

կան կամ բուլվարային լրագրական թույնի ոչ մի հետք». 2) Մշտապես հետևել ու հսկել, որպեսզի մամուլի էջերը «չկեղտոտվեն խծբծանքներով, որոնք միանգամայն ներհակ են կուսակցության կրթիչ աշխատանքին». 3) Լրագրային բոլոր աշխատողներին ներշնչել այն միտքը, թե մեր մամուլը պետք է բարձր կանգնած լինի «անձնական հաշիվներից ու էժանագին քննադատությունից»:

Պարբերական մամուլի առողջացման, ամրապնդման ու զարգացման տեսակետից պակաս վտանգավոր չէր նաև մի այլ երևույթ, որի դեմ նույնպես ամենայն վճռականությամբ հանդես եկավ Անդրիրկոմը: 1923 թ. գարնանը ստացվեցին մի շարք ահազանգեր այն մասին, որ թերթերի խմբագրությունները, աշխատակիցներն ու թղթակիցները, որոնք քննադատում-բացահայտում են այս կամ այն խորհրդային, հատկապես տնտեսական օրգանների աշխատանքում նկատվող թերություններն ու սխալները, անհիմն կերպով «մշակվում» են վերջիններիս կողմից՝ «հաճախ անթույլատրելի ձևերով, անպատշաճ մեթոդներով»: Քննարկելով բողոքները և լրացուցիչ ստուգումներ անցկացնելով՝ Երկրային կոմիտեն Ա. Մյասնիկյանի ստորագրությամբ հատուկ շրջաբերական հղեց անդրկովկասյան հանրապետությունների կենտկոմներին, շրջանային ու մայրաքաղաքային կոմիտեներին և կուսակցական-խորհրդային թերթերի խմբագրություններին[10]: Մամուլի քննադատական ելույթներին նման վերաբերմունք ցուցաբերելը, նշում էր Անդրիրկոմը, լրջորեն կարող է խանգարել խորհրդային-տնտեսական օրգանների գործունեության բարելավմանը, ինչպես նաև մամուլի սկզբունքայնությունն ու մարտունակությունը բարձրացնելու վերաբերյալ կուսակցության պահանջների կենսագործմանը:

Երկրային կոմիտեն պահանջում էր կենտրոնական և շրջանային կոմիտեներից՝ մշտապես, մոտիկից տեղյակ լինել մամուլի օրգանների ամենօրյա աշխատանքին, խմբագրությունների և խորհրդային, տնտեսական ու այլ կազմակերպությունների միջև ծագած կոնֆլիկտներին. կուսակցական կոմիտեները պարտավոր են պարբերաբար լսելու խմբագրական կոլեգիաների հաշվեղեկույցները մամուլի օրգանների աշխատանքի և նրանց գործունեությունն արգելակող հանգամանքների մասին. համապատասխան մարմինները մանրամասնորեն քննության պիտի առնեն թղթակիցների հետապնդման ու հալածանքի բոլոր դեպքերը՝ մեղավորներին

10 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1923, № 102։

ենթարկելով կրկնակի պատասխանատվության՝ և՛ կուսակցական գծով, և՛ ընդհանուր բաղաքացիական կարգով՝ դատական մարմինների միջոցով։

Անդրկովկասի մամուլի ընդհանուր ղեկավարությունն ու կոորդինացիան, ինչպես նշվեց, մինչև 1924 թ. հունիս ամիսը գործնականում իրականացվում էր Անդրիերկոմի մամուլի ենթաբաժնի կողմից։ Սակայն գնալով ավելի նշանակալից էր դառնում մամուլի դերը ոչ միայն իբրև պետական ապարատի բարելավման, տնտեսության բարձրացման ու կուլտուրական հեղափոխության հաղթահարման գործում աշխատավորական լայն զանգվածներին անմիջականորեն ներգրավելու արդյունավետ մի միջոցի, այլև որպես իր իսկ՝ կուսակցության ամրապնդման ու համախմբման գործիքի։

Ռ.Կ(բ)Կ Կենտկոմը իջեցրեց մամուլի ղեկավարությամբ զբաղվող կուսակցական օրգաններին ուժեղացնելու վերաբերյալ հատուկ մի հրահանգ, որի համաձայն էլ Անդրիերկոմը 1924 թ. հունիսի 17-ի որոշմամբ անհրաժեշտ համարեց մամուլի ենթաբաժինը վերակառուցել՝ դարձնելով ինքնուրույն բաժին։ Սրա հիմնական պարտականությունն էր՝ ապահովել մամուլի ասպարեզում կուսակցական գծի և հերթական հանձնարարությունների կիրառումը, ուսումնասիրել Անդրկովկասի մամուլը, սահմանել յուրաքանչյուր պարբերականի բնույթը, ստեղծել մամուլի ցանց, կարգավորել կադրերի ընտրության ու դաստիարակության գործը[11]։

* * *

Մամուլի կուսակցական ղեկավարությունն ուժեղացնելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկվեցին նաև առանձին հանրապետություններում։ 1924 թ. դեկտեմբերի վերջին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտաբաժնին կից, որը մինչ այդ իրագործում էր մամուլի ղեկավարությունը, ստեղծվեց Մամուլի ենթաբաժին[12]։ Ենթաբաժինն սկսեց գործել հաջորդ տարվա հունվարի 1-ից. նրա առաջին վարիչն էր Կարո Համդիլյանը, որին նոյեմբերի 25-ից փոխարինեց Լ. Արիսյանը։ Մամուլի ենթաբաժինը ձեռնամուխ եղավ այն խնդիրների կատարմանը, որ դրեց նրա առջև հանրապետությունների կոմկուսների կենտկոմների ագիտաբաժինների՝ 1924 թ.

---

11 Տե՛ս ՄԼի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 303, թ. 2։

12 Տե՛ս նույն տեղը, գ. 308, թ. 111։

դեկտեմբերին կայացած խորհրդակցությունը։ Դրանք էին՝ պարբերական հրատարակությունների և ընթերցողների կազմի ուսումնասիրություն, թերթերի բաժինների վերակառուցում, թղթակիցների ու ժուռնալիստների հաշվառում, տարբեր կազմակերպությունների և գերատեսչությունների կողմից հրատարակվող հանդեսների ուսումնասիրում ու կրճատում, պատի թերթերի ղեկավարության ուժեղացում, լենինիզմի, կուսակցության պատմության, ինչպես նաև երիտասարդական շարժման վերաբերյալ գրականության անհապաղ հրատարակման կազմակերպում և տպագրական գործի ուսումնասիրում ու հրատարակչությունների կենտրոնացում։

Մամուլի ենթաբաժինն իր գործունեության վերաբերյալ եռամսյա հաշվետվություններ էր ներկայացնում Անդրբիկոմի մամուլի բաժնին և ՌԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի ազգային մամուլի ենթաբաժնին՝ կատարված աշխատանքների հետ միասին տեղյակ պահելով նաև դժվարությունների ու խոչընդոտների մասին։ Այսպես՝ 1925 թ. հոկտեմբերին ՌԿ(բ)Կ Կենտկոմ ներկայացրած իր զեկուցագրում[13] մանրամասն տեղեկություններ հաղորդելով հանրապետությունում լույս տեսնող պարբերականների տպաքանակի, հաճախականության, ծավալի, հեղինակային կազմի վերաբերյալ, ինչպես նաև հանդեսների աշխատանքում նկատվող զուգահեռականությունը վերացնելու, գերատեսչական մամուլի օրգանները կրճատելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի ենթաբաժինը միաժամանակ նշում էր, որ «խիստ անբավարար է թերթերի ֆինանսական վիճակը. նրանք բոլորն էլ իրենց գոյությունը պահպանում են դոտացիայի շնորհիվ... Տպարանը տեխնիկապես ի վիճակի չէ բավարարելու մեր կարիքները. տառատեսակներն ու մեքենաները չեն բավականացնում, այդ պատճառով էլ ամբողջ գործը խիստ արգելակվում է...»։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի ազգային մամուլի ենթաբաժինը մոտիկից զբաղվում էր հանրապետություններում մամուլի ղեկավարման խնդիրներով՝ պարբերաբար լսելով հաշվետվություններ տեղերում կատարվող աշխատանքների մասին, անհրաժեշտության դեպքում անելով նաև կառուցվածքային բնույթի փոփոխություններ մտցնելու առաջարկներ։ 1925 թ. հոկտեմբերի վերջին վերոհիշյալ ենթաբաժինը լսեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի ենթա-

---

13 Տե՛ս նույն տեղը, գ. 295, թթ. 43—50։

բաժնի վարիչի հաղորդում-զեկուցումը և հանրապետությունում պարբերական մամուլի ուսումնասիրման ու գնահատման գործը բարելավելու տեսակետից նպատակահարմար գտավ հարց հարուցել ենթաբաժինը վերածելու ինքնուրույն բաժնի[14]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը, անդրադառնալով այդ խնդրին, նույն թվականի դեկտեմբերին համապատասխան որոշում ընդունեց. կազմակերպվեց մամուլի ինքնուրույն բաժին, որին կից ստեղծվեց մամուլի կոլեգիա հետևյալ կազմով՝ Լ. Արիսյան, Ա. Շահսուվարյան, Ա. Կարինյան, Կ. Ղազարյան և Գ. Մեհրաբյան[15]։ Մամուլի բաժիններ ստեղծվեցին նաև Վրաստանի ու Ադրբեջանի կոմկուսների կենտկոմներում։

Ագիտ-պրոպ բաժիններից մամուլի ենթաբաժինների այս առանձնացումն ու ինքնուրույնացումը առաջին օրերին որոշ անհարթություններ հարուցեցին գաղափարական խնդիրներով զբաղվող այդ երկու բաժինների փոխհարաբերություններում՝ ֆունկցիաների և գործողության ոլորտների հարցում հստակության ու պարզորոշության բացակայության պատճառով։ Հարկ եղավ, որպեսզի Անդրերկոմն այս կապակցությամբ ընդուներ հատուկ որոշում[16], որի մեջ տրվեցին համապատասխան պարզաբանումներ. 1) Մամուլի բաժինը ինքնուրույն է և անմիջապես ենթարկվում է համապատասխան կենտկոմի քարտուղարությանը և ղեկավարվում Անդրերկոմի մամուլի բաժնի կողմից։ 2) Մամուլի և ագիտ-պրոպ բաժինների միջև պիտի գոյություն ունենա փոխադարձ սերտ կապ, ըստ որում՝ մամուլի բաժնի վարիչը մտնում է ագիտ-պրոպ բաժնի կոլեգիայի կազմում՝ օգտվելով նրա անդամի իրավունքներից։

Այս որոշումը մեծապես նպաստեց նորաստեղծ մամուլի բաժինների գործունեության արդյունավետ ծավալմանը։ Այս առումով կարևոր նշանակություն ունեցան նաև ՀԿ(բ)Կ, Ադրբ. Կ(բ)Կ և ՎԿ(բ)Կ կենտկոմների մամուլի բաժինների միջև ստեղծված սերտ կապերն ու փոխադարձ կոնսուլտացիաները, որոնք կրում էին փորձի փոխանակման բնույթ[17]։

Ինչպես ամբողջ Անդրֆեդերացիայի, այնպես էլ առանձին հանրապետությունների պարբերական հրատարակությունների ուսումնասիրման յուրովի խթան հանդիսացան մամուլի ցուցահան-

---

14 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 199, թ. 22։

15 Տե՛ս նույն տեղը, ց. 6, գ. 155, թ. 1։

16 Տե՛ս նույն տեղը, գ. 183, թ. 5։

17 Այդ մասին ուշագրավ նյութեր կան ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվում (տե՛ս ֆ. 1, ց. 7, գ. 398)։

դեմները, որոնց նախապատրաստման ընթացքում հարուստ նյութ հավաքվեց առանձին թերթերի ու հանդեսների վերաբերյալ (տպարանակը, պարբերականությունը, ծավալը, ձևավորումը, անցած ուղին, թղթակիցների թիվը, հեղինակային կազմը և այլն)։ ԽՍՀՄ Կենտգործկոմի երրորդ նստաշրջանը Թիֆլիսում գումարվելու առնչությամբ Անդրերկոմը 1923 թ. սեպտեմբերի վերջին որոշեց նստաշրջանի օրերին բաց անել անդրկովկասյան մամուլի ցուցահանդես[18]։ Հանրապետական կենտկոմներին, հրատարակչություններին, պարբերականների խմբագրություններին հղած շրջաբերականում Երկրային կոմիտեն պահանջում էր ուղարկել համապատասխան նյութեր և տվյալներ՝ ըստ նախօրոք կազմված մանրամասն հարցացուցակի։ Ստեղծվեց ցուցահանդեսը կազմակերպող հանձնաժողով, որը պարբերաբար քննարկում էր նախապատրաստական աշխատանքների ընթացքը և անհրաժեշտ ցուցումներ տալիս։ Այդ հանձնաժողովը լիազորեց Գ. Քացախյանին՝ հավաքել Անդրկովկասում հրատարակվող և հրատարակված բոլոր պլակատները, թերթիկներն ու կոչերը[19]։ Ցուցահանդեսին նախապատրաստվելու համար Հ(բ)Կ Կենտկոմը ակտիվ աշխատանքի ներգրավեց ականավոր բանաստեղծ և մամուլի գործիչ Գ. Լևոնյանին, որին տրված մանդատի մեջ ասված էր. «Խնդրում ենք կուսակցական և խորհրդային բոլոր կազմակերպություններին՝ ամեն կարգի օգնություն ցույց տալ ընկ. Գ. Լևոնյանին»[20]։ Որոշ ժամանակ անց վերոհիշյալ հանձնաժողովը Հ. Գյուլի-Քևխյանի, Ե. Զուբարի, Դ. Դզնունու, Էփրիկի և Գ. Լևոնյանի մասնակցությամբ քննեց Հայաստանի տաղավարի կազմակերպման հարցը[21]։

Համապատասխան միջոցներ ձեռնարկվեցին նաև Վրաստանում և Ադրբեջանում։ Աշխատանքն արագ թափով ընթանում էր։ Սակայն շուտով հայտնի դարձավ, որ ԽՍՀՄ Կենտգործկոմի նստաշրջանը կայանալու է Մոսկվայում։ Անդրերկոմը 1923 թ. հոկտեմբերի 20-ին հատուկ գրությամբ հայտնեց, որ ցուցահանդեսի բացումը հետաձգվում է մինչև խորհուրդների առաջիկա անդրկովկասյան համագումարը, միաժամանակ պահանջելով շարունակել նյութերի հավաքումն ու կարգավորումը[22]։

---

18 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 437, թ. 4։
19 Տե՛ս նույն տեղը, թ. 33։
20 Տե՛ս նույն տեղը, թ. 32։
21 Տե՛ս նույն տեղը, թ. 43։
22 Տե՛ս նույն տեղը, թ. 38։

Անդրկովկասի մամուլի ցուցահանդեսը բացվեց 1924 թ. հունվարին։ Ցուցադրված նյութերը բավական հարուստ տեղեկություններ էին հաղորդում Անդրֆեդերացիայի տերիտորիայում ինչպես նախքան խորհրդայնացումը, այնպես էլ հետո լույս տեսած պարբերականների, թռուցիկների, թերթիկների, կոչերի և այլ հրատարակությունների վերաբերյալ[23]։

Այս ցուցահանդեսի կազմակերպումով, սակայն, չավարտվեց Անդրկովկասի մամուլի ուսումնասիրման գործը։ Այն յուրատեսակ հիմք և սկիզբ հանդիսացավ մամուլի բազմակողմանի հետազոտումը նոր թափով ծավալելու համար։ Այդ աշխատանքը վարելու նպատակով Երկրային կոմիտեն ստեղծեց Անդրկովկասի պարբերական մամուլը հետազոտող հանձնաժողով. 1924 թ. հուլիսի 21-ի նիստում ընտրվեց հատուկ ենթահանձնաժողով, որը երեք շաբաթվա ընթացքում ավարտելու էր թերթերի և հանդեսների հետազոտությունը՝ նրանց բնույթի, գաղափարական կայունության և առաջադրված խնդիրների կատարողականի տեսանկյունից։ Ենթահանձնաժողովի մեջ մտնում էին՝ Հ. Նազարեթյանը (նախագահ), Ա. Մյասնիկյանը, Կիկնաձեն, Ռ. Ախունդովը, Աշ. Հովհաննիսյանը և Մ. Էսսենը[24]։ Նույն նիստում ընտրվեց նաև մամուլի ֆինանսական դրությունն ուսումնասիրող ենթահանձնաժողով։

Անդրկովկասի պարբերական մամուլն ուսումնասիրող հանձնաժողովը կարճ ժամանակում հանգամանալից տվյալներ ձեռք բերեց այդ օրերին հրատարակվող 56 անուն պարբերականների վերաբերյալ, որոնցից 23-ը լույս էր տեսնում Ադրբեջանում, 21-ը՝ Վրաստանում և 12-ը՝ Հայաստանում[25]։ Բազմակողմանիորեն ուսումնասիրելով հավաքված տվյալները, հանձնաժողովն իր եզրակացություններն ու առաջարկները քննարկման ներկայացրեց Անդրբերկոմի նախագահությանը, որը և 1924 թ. սեպտեմբերի 24-ի նիստում որոշում կայացրեց պարբերական մամուլի ֆինանսավորման սկզբունքների մասին[26]։ Նախագահությունը նպատակահարմար գտավ Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի հաշվին դոտացիա բաց թողնել մի շարք հանրապետական թերթերի ու հանդեսների, այդ թվում՝ «Խորհրդային Հայաստան»-ին, «Մաճկալ»-ին, «Ավանգարդ»-ին և «Բանվոր»-ին։ Մյուս բոլոր թերթերն ու հանդեսները

---

23 Մանրամասն տվյալները տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, № 30։

24 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 347, թ. 9։

25 Տե՛ս նույն տեղը, թ. 10։

26 Տե՛ս նույն տեղը, ց. 4, գ. 28, թ. 123—124։

հանվեցին պետական մատակարարման սիստեմից. նրանց հրատարակության ապահովումը հանձնվեց տեղական մարմիններին։ Անհրաժեշտ համարվեց նաև կարմիրբանակային թերթերի միաձուլումը գյուղացիական թերթերին (վրացական «Միթելի արմիելի»-ն՝ «Միցիս մուշա»-ի և հայկական «Կարմիր զինվոր»-ը՝ «Մաճկալ»-ի հետ)։ Միաժամանակ առաջարկվեց բոլոր թերթերին առավելագույն չափով կրճատել ծախսերը։

Ֆինանսական դժվարություններին այդ ժամանակ գումարվում էր նաև թղթի սակավությունը, որ սուր կերպով զգացվում էր ամբողջ Միության մասշտաբով։ Զգալի նյութական միջոցներ էր կլանում գերատեսչական մամուլը, որը 1923 թ սկսած մեծ չափով աճում ու ուռճանում էր Ռուսաստանի մարզերում ու նահանգներում, ինչպես և տարբեր հանրապետություններում։ Այդ հրատարակությունների սիստեմավորումը, զուգահեռների ու վերակրկնությունների վերացումը հնարավորություն կտար ոչ միայն խուսափելու նյութական զերածախսումներից, այլև խնայողաբար օգտագործելու թղթի պաշարները՝ տրամադրելով դրանք առավել կարևոր հրատարակությունների, որոնք շատ հաճախ անելանելի վիճակի մեջ էին ընկնում թղթի անբավարար մատակարարման հետևանքով։ Գերատեսչական մամուլի «չափազանց աճումը,—նշում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմը 1924 թ. մարտի 26-ին ընդունած իր որոշման մեջ,— տեղի է ունենում ի հաշիվ և ի վնաս ընդհանուր մամուլի»։ Ուստի և Կենտկոմը մամուլի բաժիններից (ենթաբաժիններից) պահանջեց ամեն կերպ կրճատել գերատեսչական մամուլը, պարտավորեցնելով նախօրոք հետազոտել ավյալ հանրապետության մեջ, մարզում կամ նահանգում գոյություն ունեցող համապատասխան հրատարակությունները՝ նրանց տնտեսական դրվածքի տեսակետից[27]։

Այս ուղղությամբ զգալի աշխատանք կատարվեց նաև Անդրկովկասում։ Հանրապետական կոմկուսների կենտկոմների մամուլի ենթաբաժիններին հանձնարարվեց ուսումնասիրել-նախապատրաստել հարցը և ներկայացնել կենտկոմների քննությանը։ 1925 թ. փետրվարի 14-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը, լսելով մամուլի ենթաբաժնի զեկուցումը, համապատասխան որոշում կայացրեց հանրապետությունում գերատեսչական մամուլի դրվածքի և նրա հրատարակման մեջ անհրաժեշտ վերակառուցումներ

---

27 Տե՛ս «Պարտիական և սովետական մամուլի մասին», էջ 412, ինչպես նաև՝ ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 300, թ. 12։

մտցնելու վերաբերյալ։ Մասնավորապես որոշվեց՝ շարունակել «Հայաստանի աշխատավորուհու», «Պատկոմ»-ի, «Նոր ակոս»-ի, «Պահակ»-ի, «Կոոպերացիա»-ի, «Աշխատանք»-ի, «Աղդարար»-ի, «Экономический Вестник»-ի հրատարակությունը. «Հայդյուղկոոպերացիա»-ն միացնել «Գյուղատնտեսական կյանք»-ին, «Վերելք»-ը՝ «Նորք»-ին. դադարեցնել «Երդավգործկոմի տեղեկագրի» և «Տպագրական բանվոր»-ի հրատարակությունը[28]։ Միաժամանակ գերատեսչություններին և համապատասխան կազմակերպություններին հանձնարարվեց շարունակել հրատարակչական ծախսերի կրճատման նոր ուղիների որոնումը։ Նույն ոգով որոշումներ ընդունեցին նաև Վրաստանի ու Ադրբեջանի կոմկուսների կենտկոմները։ Ընդհանուր առմամբ Անդրֆեդերացիայի սահմաններում լույս տեսնող 98 անուն գերատեսչական օրգաններից 52-ի հրատարակությունը դադարեցվեց[29]։ Այս և մի շարք այլ միջոցառումների կիրառումը հնարավորություն տվեց զգալի չափով մեղմացնելու այն տաղնապալի վիճակը, որ ստեղծվել էր կարևորագույն պարբերականների հրատարակության համար՝ թղթի պակասի և ֆինանսավորման դժվարությունների պատճառով[30]։

Անդրկովկասյան մամուլի ցուցահանդեսին նախապատրաստվելու ընթացքում տարված աշխատանքը և լրացուցիչ պրպտումները նախադրյալներ ստեղծեցին Հայաստանում ևս նման մի ցուցահանդես կազմակերպելու, ինչպես նաև մամուլի աշխատողների հանրապետական խորհրդակցություն անցկացնելու համար։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1925 թ. ապրիլի 10-ի որոշմամբ[31] ստեղծվեց ցուցահանդեսը նախապատրաստող հանձնաժողով, որի մեջ մտնում էին Կ. Համդիլյանը, Ս. Մելիքսեթյանը, Հ. Պետրոսյանը, Մ. Զոլախյանը, Գ. Քացախյանը, Հ. Հովհաննիսյանը և Վ. Հարությունյանը։ Միաժամանակ որոշվեց գավառներում անցկացնել

---

28 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 204, թ. 19, 50—51։

29 Տե՛ս նույն տեղը, ց. 10, գ. 283, թ. 36։

30 Նշելով 1924 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի պարբերական մամուլի հրատարակման վրա կատարված ծախսերի և ֆինանսավորման միջև առաջացած խոշոր խզումը (ամենամսյա դեֆիցիտը հասնում էր 12 հազար ռուբլու), ՀԿ(բ)Կ Կենտկոմը Անդրբկոմին ուղղված գրություններից մեկում տեղեկացնում էր, որ «բավարար պաշարների բացակայության հետևանքով շատ հաճախ հարկ է լինում թերթերի համար թուղթ գնել պատահական փոքր մասնաբաժիններով՝ գոյություն ունեցող գներից կրկնակի թանկ արժեքով» (տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 308, թ. 201)։

31 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 302, թ. 74։

բանդյուղթղթակիցների, զինվորական մամուլի և պատի թերթերի աշխատողների հավաքներ։

Մամուլի աշխատողների համահայաստանյան առաջին համագումարը բացվեց 1925 թ. ապրիլի 25-ին։ Այն առիթ հանդիսացավ նաև, որ անցկացվի հանրապետության պրոֆեսիոնալ ժուռնալիստների հաշվառում. նրանց թիվն այդ ժամանակ հասնում էր 150-ի։ Համագումարը քննարկեց մամուլի առջև դրված հիմնական խնդիրները տնտեսական, քաղաքական և կուլտուր-լուսավորական ասպարեզներում, ինչպես նաև բանդյուղթղթակցական շարժման հետ կապված մի քանի հարցեր։

Նշանակալից իրադարձություն էր Հայաստանի մամուլի ցուցահանդեսը, որը բացվեց նույն թվականի մայիսի 10-ին և գործեց մինչև ամսի 20-ը։ Ցուցահանդեսին իրենց հրատարակություններով մասնակցում էին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտբաժինը, Պետհրատը, դավկոմները, արհմիությունները, կոմերիտմիությունը, Հայկոոպը, Հողագործության ու Առողջապահության ժողկոմատները, Վիճակագրական վարչությունը։ Ցուցահանդեսն ուներ հետևյալ բաժինները՝ 1) «Խորհրդային Հայաստան». 2) «Մաճկալ»-ը և իր հրատարակությունները. 3) Կոմերիտական մամուլ. 4) Խորհրդային տարիներին լույս տեսած այլ հրատարակություններ. 5) Հրատարակչական տեխնիկա. 6) Գավառային պատի լրագրեր։

Ցուցահանդես հաճախեց ավելի քան 10 հազար մարդ[32]։ Այնտեղ հավաքված նյութերի համադրումը հնարավորություն տվեց ավելի հստակ տեսնելու պարբերական մամուլի իրական վիճակը, ամփոփելու ստաքանակի ու տարածման, պարբերականների բնույթի վերաբերյալ ավյալները, որոնց հիման վրա կարելի կլիներ որոշ հետևություններ անել մամուլի զարգացման հեռանկարների մասին։

Հանրապետության մամուլն ըստ տեսակի ուներ հետևյալ պատկերը[33]. քաղաքային և գյուղական զարգացած ու միջին խավերին սպասարկող հրատարակությունները կազմում էին 29,42 տոկոս, գրական-գեղարվեստականը՝ 12,5, զուտ գյուղացիականը՝ 20,65, բանվորականն ու կիսագյուղացիականը՝ 16,03, երիտասարդականը՝ 12,28, կոոպերատիվը՝ 4,05, նոր եկեղեցականը՝ 4, զինվորականը՝ 1,07 տոկոս։

---

32 Տե՛ս նույն տեղը, գ. 295, թ. 49—50։

33 Տվյալները վերցված են «Կոմունիստ» հանդեսից, Երևան, 1925, № 2, էջ 125—126։

1921 թ. համեմատությամբ ամբողջ մամուլի տպաքանակն ավելացել էր հազար տոկոսով։ Պարբերականներից, հրատարակության առաջին տարվա հետ համեմատած, «Խորհրդային Հայաստան»-ի տպաքանակն աճել էր 700 տոկոսով, «Մաճկալ»-ինը՝ 800, «Ավանդարդ»-ինը՝ 400 տոկոսով։ Պարզ է, որ համապատասխանորեն մեծացել էր նաև յուրաքանչյուր շնչին ընկնող պարբերականների թիվը. այսպես՝ եթե 1921 թ. Հանրապետության ազգաբնակչության մոտ 700 հոգուն ընկնում էր մեկ թերթ, ապա 1925 թ. 34 շնչին էր հասնում մեկ թերթ։ Հանրապետությունում օրական սպառվում էր 32 հազար օրինակ թերթ, որից միայն 4600-ն էր ստացվում դրսից, իսկ մնացածը տպագրվում էր տեղում։ Հայաստանում հրատարակվող ամբողջ մամուլի 98,3 տոկոսը հայերեն էր, մնացած 1,7 տոկոսը՝ ռուսերեն և ադրբեջաներեն. 92,6 տոկոսը տարածվում էր Հանրապետության սահմաններում, 7,4 տոկոսը գնում էր խորհրդային այլ հանրապետություններ և արտասահման[34]։ Ըստ որում՝ Հայաստանում սպառվող հրատարակությունների 57,5 տոկոսը բաժին էր ընկնում գյուղական ընթերցողներին, քաղաքային ընթերցողները կազմում էին 42,5 տոկոս։

Որոշ ժամանակ անց ամբողջացվեց նաև Հանրապետությունում լույս տեսնող թերթերի և հանդեսների կայուն ցանցի ստեղծումը։ Ինչպես հաղորդում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժինը ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած իր զեկուցագրում[35], Հայաստանի թերթերը բաժանվում էին երկու կատեգորիայի։ Առաջինի մեջ մտցված

---

34 Կարծում ենք, ավելորդ չի լինի հիշատակել արտասահմանում և Խորհրդային Միությունում առանձին թերթերի տարածման վերաբերյալ մեզ հասած մի քանի տվյալներ. «Խորհրդային Հայաստան»-ը պաշտոնապես արտասահման է առաքվել 1922 թ.՝ 55 օրինակ, այն էլ միայն Պարսկաստան. 1923 թ.՝ 100 օրինակ (Պարսկաստան՝ 38, Ֆրանսիա՝ 1, Գերմանիա և Ավստրիա՝ 50, Ամերիկա՝ 11). 1924 թ.՝ 545 (Պարսկաստան՝ 63, Սիրիա՝ 3, Եգիպտոս՝ 3, Պաղեստին՝ 2, Հընդկաստան՝ 2, Ֆրանսիա՝ 47, Ավստրիա և Գերմանիա՝ 17, Անգլիա՝ 4, Ամերիկա՝ 243, Բալկանյան երկրներ՝ 15, Կիպրոս՝ 1, Կ. Պոլիս՝ 75 և այլն). 1925 թ.՝ 879 օրինակ (տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 300, թ. 27)։

1925 թ. հոկտեմբեր ամսվա տվյալներով «Բանվոր»-ը, «Մաճկալ»-ը և «Կարմիր ռազմարար»-ը համապատասխանաբար տարածվել են. Երևանում՝ 64, 502 և 66 օրինակ, Թիֆլիսում՝ 20, 20 և 28 օրինակ, Բաքվում՝ 1, 5 և 11 օրինակ, Անդրֆեդերացիայի այլ վայրերում՝ 943, 2541 և 285 օրինակ, Անդրկովկասից դուրս՝ 72, 398 և 88 օրինակ (տե՛ս նույն տեղը, գ. 207, թթ. 29, 42, 56)։

35 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 10, գ. 283, թ. 36։

էին «Խորհրդային Հայաստան»-ը, «Մաճկալ»-ը, «Ավանգարդ»-ը, «Կարմիր դինվոր»-ը, «Զանգի»-ն (ադրբեջաներեն)։ Երկրորդ կատեգորիային պատկանում էին «Կարմիր ռաշպար»-ը և «Բանվոր»-ը։

Համկ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիան 1926 թ. հունիսի 1-ին, լսելով Անդրերկոմի մամուլի բաժնի վարիչ Սուտիրինի հաղորդումը և Արշ. Արշարունու հարակից զեկուցումը[36], նշեց ինչպես Անդրերկոմի, այնպես էլ հանրապետական կոմկուսների կենտկոմների մամուլի բաժինների դրական աշխատանքը՝ պարբերականների կազմակերպման ու ճիշտ ղեկավարման ուղղությամբ։

2

Մեր երկրի պարբերական մամուլի ժողովրդայնության և մասսայականության լավագույն արտահայտություններից մեկն էր բանգյուղթղթակցական շարժումը, որն սկիզբ առնելով քաղաքի ու գյուղի աշխատավորության ստեղծագործական նախաձեռնության ու եռանդի ակունքներից՝ դարձավ նոր տիպի մամուլի զարգացման կարևոր մի լծակը նրա առաջընթացի բոլոր փուլերում։ Արդեն 1924 թ. Խորհրդային Միության մեջ կար 100 հազար բանվոր և գյուղացի թղթակից. հաջորդ տարի այդ թիվն ավելի քան կրկնապատկվեց, հասնելով 216 հազարի։

Լինելով նաև աշխատավորության գրագիտության և ընդհանուր կուլտուրական մակարդակի աստիճանական բարձրացման վկայություններից մեկը, բանգյուղթղթակցական շարժումն իր հերթին խթանում էր գրագիտության տարածմանը, ժողովրդի ամե-

---

36 Այդ ժամանակ Ա. Արշարունին աշխատում էր Համկ(բ)Կ Կենտկոմում՝ իբրև մամուլի բաժնի ազգային մամուլի ենթաբաժնի պետի տեղակալ։ Նախքան Անդրերկոմի մամուլի բաժնի հաշվետվության քննարկումը նա հարցը նախապատրաստելու համար եղել էր Բաքվում ու Թիֆլիսում, ծանոթացել Անդրկովկասի մամուլի վիճակին և կազմել իր հանգամանալից զեկուցումը։ Ի դեպ՝ Ա. Արշարունին Անդրկովկասի խորհրդային շրջանի պարբերական մամուլի առաջին հետազոտողներից է։ Նրա գրչին են պատկանում Համկ(բ)Կ XIV համագումարի, XV կոնֆերանսի և XV համագումարի նախօրյակներին Կենտկոմի որոշմամբ լույս տեսած «Печать СССР» ժողովածուների «Ազգային մամուլը» բաժինները, որոնցում իրենց տեղն են գտել նաև Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում հրատարակված պարբերականները։

նալայն խավերի քաղաքական զարթոնքին. քաղաքի ու գյուղի աշխատավորներն արդեն ոչ միայն ձգտում էին հասու լինել աշխարհի անցուդարձին, իրենց ընկերների ձեռք բերած նվաճումներին, այլև ներքին պահանջ էին զգում պատմել ուրիշներին իրենց գյուղի կամ գործարանի մասին, ուշադրություն հրավիրել աշխատանքում հանդիպող դժվարությունների և խոչընդոտների վրա: Շատ բանդյուղթղթակիցներ հետապնդում դարձան մամուլի աչքի ընկնող կազմակերպիչներ, խմբագրությունների պատասխանատու աշխատողներ, կուսակցական, պետական ու հասարակական գործիչներ: Քիչ չեն նաև այն դրողները, որոնք իբրև թղթակից են սկսել իրենց ուղին:

Կուսակցությունն սկզբից ևեթ մեծ ուշադրություն է նվիրել բանդյուղթղթակցական շարժման կազմակերպման հարցերին: Փարձի փոխանակման նպատակով ՌԿ(բ)Կ Կենտկոմը հրավիրեց բանդյուղթղթակիցների համամիութենական երկու խորհրդակցություն: Նույնպիսի միջոցառումներ ձեռնարկվեցին տեղերում: 1924 թ. սկսեց լույս տեսնել «Рабкор» (շուտով՝ «Рабселькор») կենտրոնական ամսագիրը: 1925 թ. հունիսի 1-ին Կենտկոմն ընդունեց «Բանդյուղթղթակցային շարժման մասին» որոշումը, ուր շարադրված են կուսակցության կողմից այդ շարժման ղեկավարությունը բարելավելու սկզբունքները: Կուսակցության հիմնական խնդիրն է, ասված էր որոշման մեջ, քաղաքականապես դաստիարակել բանվոր և գյուղացի թղթակիցներին, նրանց դարձնելով կուսակցության գործարար օգնականը խորհրդային ապարատի բարելավման աշխատանքում, բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ մղվող պայքարում: Բանդյուղթղթակցային շարժման ծավալմանը խթանեց Կենտկոմի այն առաջադրանքը, թե՝ «բանթղթակցական և գյուղթղթակցական կազմակերպությունները պետք է դառնան կոմունիզմի դպրոց»[37]:

* * *

Աշխատավոր զանգվածների հետ պարբերականների կապերն ամրապնդելու և ընդլայնելու, տպագիր խոսքի ազդեցության ուժն ու ներգործության ոլորտը մեծացնելու պահանջը խորհրդային Հա-

---

37 Տե՛ս «Պարտիական և սովետական մամուլի մասին», էջ 474:

յաստանում նույնպես ուղեկցել է մամուլի կազմավորման ու զարգացման ընթացքին։ Պատահական չէ, որ յուրաքանչյուր պարբերական, հրապարակ իջնելով՝ ակտիվ աշխատակցության էր կանչում տեղական կարող ուժերին։ Ըստ որում՝ կարևոր նշանակություն էր տրվում այն հանգամանքին, որ «մասսաների ապրումների արթնանալը, ձգտումը դեպի լույս անմիջականորեն, իրենց խոսքով և ձևով արձանագրվեն» մեր պարբերականներում. «Պետք է ոտքի կանգնեցնել մեր կուսակցական և խորհրդային ապարատը և սկսել լայն ագիտացիա Հայաստանի բոլոր վայրերում։ Պետք է ստեղծել բանվորական և գյուղացիական կորեսպոնդենտներ, այնպես, ինչպես այդ վաղուց ունեն ռուսական «Պրավդան» և «Բեդնոտան», Մոսկվայի «Ռաբոչայա գազետան»»[38]։

Ձեռնարկելով հանրապետական գյուղացիական լրագրի՝ «Մաճկալ»-ի հրատարակությանը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը այդ պարբերականի կենսունակության նախապայմանը տեսնում էր տեղերի հետ սերտորեն կապվելու և թղթակցային լայն ակտիվ ստեղծելու մեջ։ Դեռևս լրագրի անդրանիկ համարը լույս տեսնելուց առաջ Կենտկոմը գավկոմներին ուղարկված շրջաբերականում[39] առաջարկեց ստեղծել թղթակիցների այնպիսի ցանց, որ հնարավոր լինի «ժամանակին նյութ հայթայթել թերթի համար»։ 1922 թ. հունիսին Կենտկոմը նորից անդրադարձավ այդ կարևոր հարցին՝ գավկոմների ագիտաբաժինների վարիչներին և գավմասի քարտուղարներին հրահանգելով պաշտոնապես, իբրև կուսակցական պարտականության կատարում, թղթակցել թերթին[40]։ Կենտկոմը բոլոր պաշտոնական թղթակիցներից պահանջեց շաբաթը մեկ նյութեր ուղարկել «Մաճկալ»-ին իրենց գավառներից. ըստ որում՝ նրանք պարտավոր էին ոչ միայն իրենք գրել, այլև հետևել, որ գրեն նաև ուրիշները, հատկապես չքավոր գյուղացիներն ու կոմերիտականները, կապ պահպանել նրանց և խմբագրության միջև։ Կենտկոմը մեծ վստահություն էր ցուցաբերում վերոհիշյալ «պաշտոնական թղթակիցներին», իրավունք վերապահելով նրանց՝ նախապես ստուգել մյուս թղթակիցների գրածները և նոր միայն ուղարկել թերթի խմբագրություն, «բացի այն թղթակցություններից, որոնք չեն համապատաս-

38 «Խորհրդային Հայաստան», 1922, № 287։
39 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 483, թ. 120։
40 Տե՛ս նույն տեղը, թ. 5։

խանում իրականության և թյուրիմացությունների տեղիք կարող են տալ»։

Մի փոքր առաջ անցնելով նշենք, սակայն, որ Կենտկոմի վերոհիշյալ ցուցումը, որը թելադրված էր թղթակցային շարժման առաջին իսկ քայլերը առողջ հիմքերի վրա դնելու մտահոգությամբ, հետագա տարիներին խեղաթյուրվում էր որոշ գավառային կուսակցական ղեկավարների կողմից՝ թղթակիցների կազմակերպմանն ու դաստիարակությանը խթանող գործոնից վերածվելով լուրջ խոչընդոտի։ 1924 թ. վերջերից հաճախակի դարձան ահազանգերն այն մասին, թե մի քանի գավկոմների ագիտաբաժիններում կամ գավգործկոմներում նախապես իրենց նկատառումների համաձայն «մշակում» են թղթակիցների գրածը՝ նախքան խմբագրություններին ուղարկելը։

Այս կարգի «պաշտոնական կաշկանդումները» մեծ վնաս էին հասցնում թղթակցային շարժմանը և հակասում էին կուսակցության ցուցումներին։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի ենթաբաժինը Նոր Բայազետի և Էջմիածնի գավկոմների ագիտաբաժիններին ուղարկած իր գրությամբ[41], մատնանշելով նրանց սխալները, վճռաբար պահանջում էր. «Ոչ մի դեպքում թղթակիցն այն համոզումը չպետք է ունենա, որ իր թղթակցությունը թերթին ուղարկելուց առաջ այս կամ այն հիմնարկության քննությունից պետք է անցնի»։

Սա չէր նշանակում, իհարկե, թե գավկոմների ագիտաբաժինները ազատ պիտի զգային իրենց՝ թղթակիցներին ցուցումներ տալու, նրանց գործունեության մեջ տեղ գտած սխալները շտկելու, գրագիտությունն ու պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելու խնդիրներով զբաղվելու պարտականությունից։ Բայց այդ բոլորին հարկ էր տալ ոչ թե «պաշտոնական» տեսք ու ձև (հոդվածի վրա մակագրել՝ «Նայված է», կամ պաշտոնական առաքման գրություն հղել խմբագրությանը՝ «Սրբագրելուց և ուղղելուց հետո՝ ուղարկում ենք տպագրելու» և այլն), այլ ամեն ինչ անել ընկերական կարգով, թղթակցի մասնակցությամբ։ «Աշխատեցեք այդ ուղղումները կոլեկտիվ կերպով անել,— կարդում ենք վերոհիշյալ գրության մեջ,— հավաքեցեք շրջանային ու գավառային թղթակիցների խորհրդակցություններ, գրելու արվեստի մասին զեկուցումներ արեք, ցույց տվեք, թե ինչի՛ մասին և ինչպե՛ս պետք է գրել, սովորեցրեք գրել այն խնդիրների մասին, որոնք այժմեական են և կա-

41 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 204, թ. 18։

բևոր։ Այս կերպ միայն մենք կարող ենք նոր-նոր թղթակիցներ առաջ քաշել և նրանց մասսայականորեն դաստիարակել ու սովորեցնել»։

* * *

Թղթակցական շարժման կազմակերպման խնդիրը սերտորեն շաղկապվում էր պարբերական մամուլի մասսայականության ապահովման, բանվորների ու գյուղացիների նամակների հրատարակման, կուսակցական ու տնտեսական ղեկավարներին մամուլի աշխատանքներին մասնակից դարձնելու անհրաժեշտության հետ։ Վերջին հանգամանքն առանձնակի սրությամբ ընդգծվում էր հատկապես կուսակցական մամուլի բարելավման, նրա դաստիարակչական-կազմակերպչական դերի ուժեղացման առնչությամբ։ «Յուրաքանչյուր ընկեր, անկախ յուր պաշտոնից, ինչքան էլ այն պատասխանատու լինի, պիտի կուսակցական պարտականություն զգա կուսակցական մամուլի հանդեպ»,— նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը դեռևս 1921 թվականին. մամուլին շաշխատակցելը չի կարելի արդարացնել ոչ մի պատճառաբանությամբ, ո՛չ «ժամանակ չունեմ» և ո՛չ էլ «ժուռնալիստ չեմ» ասելով։ Ինչքան էլ ժամանակը սուղ լինի, կարելի է «շաբաթական երկու ժամ նվիրել գրիչ շարժելուն, հաստատ հավատացած լինելով, որ այդ մի հոդվածը ոչ պակաս արդյունք և ազդեցություն կունենա, քան 15 կարիներատային բյուրոկրատիկ «ցիրկուլյարները»»[42]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1922 թ. օգոստոսի 16-ի գրությամբ բոլոր ժողկոմատներից պահանջեց պարբերաբար ուղարկել կոլեգիաների և նախագահությունների նիստերի արձանագրության ընդօրինակումները՝ իրենց գործունեությունը մամուլում ժամանակին լուսաբանելու նպատակով[43]։

ՀԿ(բ)Կ II համագումարը (1923 թ. մարտ) Կենտկոմի քարտուղար Աշ. Հովհաննիսյանի զեկուցման առթիվ ընդունած «Կոմունիստական կրթության խնդիրների մասին» որոշման մեջ, անհրաժեշտ համարելով կուսակցական մամուլի քննության դնել բոլոր հիմնական օրինագծերն ու ղեկավարող որոշումների նախագծերը, միաժամանակ պարտավորեցրեց «կուսակցական, խորհրդային և պրոֆեսիոնալ պատասխանատու ղեկավարներին՝ լուսաբանել կոմունիստական մամուլում իրենց հանձնված հիմնարկության կյանքի

---

42 «Խորհրդային Հայաստան», 1921, № 226։

43 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 483, թ. 28։

ընթացիկ խնդիրները»[44]։ Այս պարտականության մասին Կենտկոմը կրկին հիշեցրեց բոլոր դավկոմներին ուղղված 1923 թ. ապրիլի 8-ի շրջաբերականում[45]։

Ինքնին հասկանալի է, իհարկե, որ չէր բացառվում մամուլին զեկավար ընկերների մասնակցության նշանակությունը. այն դիտվում էր իբրև պարբերականների ուժեղացման, նրանց կազմակերպչական-դաստիարակչական ֆունկցիայի առավել արդյունավետ դրսևորման կարևոր գործոններից մեկը, որը գալիս էր լրացնելու-ամբողջացնելու մամուլի մասսայականության ապահովման, թղթակցային ակտիվ ստեղծելու, առհասարակ մամուլը ընդհանուր ուշադրության կենտրոն դարձնելու ջանքերը։ Մեր հանրապետության պարբերական մամուլը, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, կոչված է ընդգրկելու «երկրի ամբողջ շինարարությունը» և արտահայտելու «մեր բովանդակ ստեղծագործական թափը բոլոր ճյուղերում ու ասպարեզներում—տնտեսական, կուսակցական, խորհրդային, կուլտուրական». «իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում,— շարունակում էր թերթը,—երբ այդ բոլոր «ֆրոնտների», «գեներալները», «ենթասպաներն» ու «շարքային զինվորները» գնահատեն մամուլի դերը և իրենց աշխատակցությամբ աշխուժացնեն այն»[46]։

Առաջնահերթ էր համարվում մասնավորապես տեղերում ծավալվող կուսակցական աշխատանքների արտացոլումը պարբերական մամուլում, առանձնապես Հայաստանի կոմկուսի կենտրոնական օրգանում։ Սկզբնական ամիսներին «Խորհրդային Հայաստան»-ը դավառներից ստացվող սակավաթիվ կուսինֆորմացիան տպագրում էր տարեբայնորեն, զրկված լինելով հաղորդվող տեղեկություններն ու տվյալները ստուգելու հնարավորությունից։ Այդպիսի պայմաններում միշտ չէ, որ երաշխավորված էր այդ նյութերի հավաստիությունը, երբեմն թերթի էջերում սպրդում էին պատահական ու հակասական ինֆորմացիաներ։ Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի Տեղեկատու ենթաբաժինն իր վրա վերցրեց թերթին համապատասխան կուսինֆորմացիա մատակարարելու պարտականությունը։ Խմբագրին ուղղված 1921 թ. հուլիսի 29-ի գրությամբ տեղեկացնե-

---

44 «Խորհրդային Հայաստան», 1923, № 77։

45 ՏԼ՚ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 408, թ. 6։

46 «Խորհրդային Հայաստան», 1922, № 269։

լով այդ մասին, ենթաբաժինը միաժամանակ հրահանգից այսուհետև «առանց բաժնի վարիչի կամ քարտուղարի սաորագրության ոչ մի ինֆորմացիա, ինչպես և [գավկոմների] առանձին բաժինների զեկուցումները չտպագրել Թերթում»[47]:

Ինչպես հիշեցնում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1922 թ. օգոստոսին գավկոմներին հղած շրջաբերական-նամակում[48], Թերթի էջերում խիստ անբավարար էր լուսաբանվում «տեղերի փորձը»: «Այս անթույլատրելի բացի պատասխանատվությունը,—ասվում էր շրջաբերականում,—ամբողջովին ընկնում է գավկոմների վրա»: Բանն այն է, որ գավկոմների զեկավարների շրջանում այն համոզումը կար, թե գավառական Թերթերի գոյությունը ազատում է իրենց «կենտրոնական մամուլին աշխատակցելու կուսակցական պարտականությունից»: Նրանք հաշվի չէին առնում խնդիրների և մասշտաբների այն տարբերությունը, որ առկա էր այդ երկու պարբերականների միջև, իսկ «գավառական Թերթերի խմբագիրները ջանում էին այդ երկուսը իրար խառնել՝ ի վնաս թե՛ մեկին, թե՛ մյուսին»: Նկատված Թերությունները, սխալներն ու բացերը վերացնելու նպատակով Կենտկոմն առաջարկում էր՝ ա) կանոնավոր կապ ստեղծել գավառային կազմակերպությունների և «Խորհրդային Հայաստանի» միջև. բ) յուրաքանչյուր գավկոմ համապատասխան մի ընկերոջ պետք է նշանակի պատասխանատու Թղթակից, որի պարտականությունների՝ իբրև կուսակցական հանձնարարության՝ կատարմանը հետևելու է գավկոմի քարտուղարը՝ անձնական պատասխանատվությամբ. գ) պատասխանատու Թղթակիցներ պիտի տա նաև Հայկական միացյալ բրիգադի քաղբաժինը՝ մեկն իր կողմից և մեկական ամեն մի զորամասից:

Ատրճանաբար կանոնավորվում էր գավառներից կուսինֆորմացիայի հայթայթման գործը, Երևանի կազմակերպություններից նույնպես ստացվում էին ուշագրավ հաղորդումներ: Սակայն դրանք մեծ մասամբ տալիս էին կուսկազմակերպությունների ընդհանուր նկարագիրը (ավյալներ կուսանդամների Թվի, սոցիալական կազմի վերաբերյալ, նիստերի արձանագրություններ, հաշվառման Թերթիկներ և այլն): Սա, իհարկե, նույնպես կարևոր էր և արժեքավոր, բայց միայն առաջին քայլն էր. կուսակցական շինարարության խնդիրների քննարկումը Թերթում դեռևս ըստ էության չէր ծավալվել:

---

47 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 206, թ. 22:

48 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, № 188:

1923 թ. դարնանը «Խորհրդային Հայաստան»-ում կազմակերպվեց «Կուսակցական կյանք» բաժինը, որը կոչված էր դառնալու կուսաշխատանքի բոլոր օղակների «անդրադարձման հայելին», «ամբողջ կուսակցական կյանքի փորձի ուսումնասիրման լաբորատորիա», «մի ֆոկուս, ուր միանալու էին մեր կազմակերպությունների բոլոր թելերը»։ Առանձնապես շեշտը դրվում էր աշխատանքի դրական փորձի ուսումնասիրման ու տարածման անհրաժեշտության վրա. «Կուսակցական կյանք» բաժինը, նշում էր խմբագրությունը, աջակցելու է լավագույն կազմակերպչական ձևերը մի բջջից մյուսը փոխադրելուն, մասսայականացնելու է ընդօրինակման արժանի ամեն մի «մանրուք», «անդրադարձնելու է բջիջների ինքնագործունեությունը, որ հաճախ մեծ հետևանքներ է ունենում, բայց մնում է միայն մի բջջի սեփականություն»։ Ճիշտ է, թերթը որոշ հաջողության հասել է հանրապետության «կուսակցական առօրյայի» լուսաբանման գործում, նշում էր խմբագրությունը, բայց դեռևս շատ բան կա անելու այդ ասպարեզում. Նորակազմ բաժնի արդյունավետ աշխատանքն ապահովելու համար առաջարկվում էր իրագործել հետևյալը. ա) գավկոմների ինֆորմատորներին նշանակել բաժնի մշտական թղթակիցներ, որոնք քարտուղարների ղեկավարությամբ պարտավոր են կապ պահպանել թերթի հետ իրենց ամբողջ աշխատանքի ընթացքում. բ) Կենտկոմի հրահանգիչները տեղերում կատարած իրենց հետազոտությունների արդյունքներն ու դիտողությունները պիտի ամփոփեն առանձին թղթակցությունների մեջ՝ այդպիսով նպաստելով կազմակերպչական աշխատանքների լուսաբանմանը. գ) յուրաքանչյուր գավկոմի քարտուղար կամ ագիտ-բաժնի վարիչ պարտավորված պիտի զգա ամիսը առնվազն 2—3 հոդված ուղարկել թերթին «մեր կուսակցական գծի հիմնական խնդիրների շուրջը՝ հաստատված տեղերի փորձով և հետագա աշխատանքի համար եզրակացություններով»[49]։

1923 թ. սեպտեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմը շրջաբերական նամակով[50] դիմեց գավկոմներին՝ պարտավորեցնելով յուրաքանչյուր ամիս որոշակի տողաքանակով թղթակցություններ առաքել կենտրոնական օրգանի «Կուսակցական կյանք» բաժնին. այսպես՝ Երևանի գավկոմը պետք է կազմակերպեր ամսական 1600 տող թղ-

---

49 «Խորհրդային Հայաստան», 1923, № 93։

50 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 408, թ. 37։

թակցություն, Ալեքսոլինը՝ 800, Դիլիջանի, Լոռու, Զանգեզուրի գավկոմները՝ 600-ական տող, Էջմիածնի, Նոր Բայազետի, Ղարաբիլիսայի և Դարալագյազի գավկոմները՝ 400-ական տող, Մեղրիինը՝ 200 տող։ Այս պարտականությունը կատարելու համար նշանակվում էին մշտական թղթակիցներ գավառային կոմիտեի անդամներից կամ գրելու ընդունակ այլ ընկերներից (ցանկալի էր համարվում, որ նրանք լինեն գավառի տարբեր շրջաններից)։ Գործի կազմակերպման պատասխանատվությունը դրվեց գավկոմների քարտուղարների վրա։

1924 թ. փետրվարի 7-ի շրջաբերականում Կենտկոմը նորից հիշեցրեց այդ մասին[51]։ Մի տարի անց գավառային կոմիտեներն ստացան ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի ենթաբաժնի և «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրության ցուցումը, որով դարձյալ շեշտվում էր թերթերում կուսակցական բաժինների աշխատանքն ակտիվացնելու անհրաժեշտությունը. պիտի ջանալ առավել հանգամանորեն արծարծել կուսակցական համագումարների, կոնֆերանսների ու խորհրդակցությունների քննարկած խնդիրները, մանավանդ որ դեռևս չկա «կուսակցական շրջանային և գավառական ակտիվի համար համապատասխան գրականություն, իսկ ռուսերեն գրականությունը մեծամասնության համար անմատչելի է»։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը համապատասխան միջոցներ ձեռնարկեց թերթի աշխատանքների բարելավման, խմբագրությունը կարող ուժերով համալրելու, նոր բաժիններ ստեղծելու, թղթակցային ակտիվն ընդլայնելու, տպաքանակն ավելացնելու ուղղությամբ։ Այս մասին ՀԿ(բ)Կ III համագումարում (1924 թ. մայիսի 5—10) ունեցած իրենց ելույթներում խոսեցին մասնավորապես Ս. Լուկաշինը և Ա. Մռավյանը։ «Այստեղ մեղադրանքներ կան,— իր եզրափակման խոսքում ասաց Ս. Լուկաշինը,— որ մեր կենտրոնական «Խորհրդային Հայաստան» լրագիրը իր կոչման բարձրության վրա չի կանգնած։ Ճիշտ է, որ այդ լրագիրը իդեալական չէ, բայց չի կարելի ժխտել այն, որ նա ավելի լավ է, քան թե անցյալ տարի։ Հապա ասացե՛ք, խնդրեմ, մի՞թե կենտրոնական կոմիտեի կողմից քիչ աշխատանք է թափվել լրագիրը բարձրացնելու համար. քանի՞ անգամ ենք մենք խմբագրական կազմը փոխել, փորձ փորձի ետևից կատարել. տասնյակ ժամեր ենք մենք նվիրել այդ գործին»[52]։

51 Տե՛ս նույն տեղը, գ. 455, թ. 81։

52 Նույն տեղում, ց. 3, գ. 8, թ. 29։

Չնայած թերթի խմբագիրները «հարկադրված էին միաժամանակ մի շարք պատասխանատու գործեր վարել,— նշում էր Ս. Մռավյանը,— ինչպես ընկ. Զուբարը, որ միաժամանակ խմբագիր էր թե՛ «Մաճկալ»-ին և թե՛ «Վերելք»-ին, ընկ. Գյուլի-Թևվխյանը նույնպես տանում էր մի շարք պատասխանատու գործեր, ես էլ իմ հերթին ծանրաբեռնված եմ դարձյալ նման գործերով և վարում եմ [թերթի] մի քանի պատասխանատու բաժիններ,— այնուամենայնիվ, մեր թերթում նկատելի առաջադիմություն ենք ունեցել, իրագործելով այն, ինչ որ կենտրոնական կոմիտեի պլենումը անցյալ ամռան մեր առաջը դրեց կատարելու»[53]:

Պարզ է, իհարկե, որ նրանք անդրադարձան նաև «Խորհրդային Հայաստան»-ի թերություններին ու բացերին: Կենտկոմի կազմակերպչական հաշվետվության առթիվ ընդունած բանաձևում[54] համագումարը նշեց, որ անհրաժեշտ է այսուհետև ևս «լուրջ ուշադրություն դարձնել կուսակցության կենտրոնական օրգանին, պատշաճ բարձրության վրա դնել այն, կուսակցության բոլոր դրական ուժերին այդ օրգանին աշխատակցությունի կանչելով, կուսակցական կյանքի բոլոր կողմերը նրա էջերում մանրամասն կերպով արտացոլելով և խորհրդային շինարարության բոլոր կարևորագույն հարցերը նրա էջերում լուսաբանելով»:

«Խորհրդային Հայաստան»-ի խմբագրական կոլեգիայի 1924 թ. հոկտեմբերի 8-ի նիստում, որի ընդունած որոշումները քննության առնվեցին և հաստատվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության կողմից[55], վճռվեց նախապատրաստվել հանդիսավոր կերպով նշելու թերթի 1000-րդ համարի լույսընծայումը, այդ կապակցությամբ սկսելով տպաքանակը բարձրացնելու կամպանիա: Բաժանորդագրություն անցկացնելու համար երկու հոգի գործուղվում են Հյուսիսային Կովկաս և Անդրկասպյան շրջան, իջեցվում է բաժանորդագրության արժեքը Բաքվի և Լենինականի բանվորության համար: Որոշվեց խմբագրությանն առընթեր հիմնել բանթղթակիցների դասընթացներ: Կոլեգիան նպատակահարմար գտավ «այսուհետև Մոսկվայում ունենալ մնայուն թղթակից» և օգտվելով Ս. Մռավյանի գործուղումից, հանձնարարեց նրան՝ «հարկ եղածը կարգադրել»: Որոշվեց միացնել կուսակցական և գավառական բաժինները և նոր բաժնի վարիչ հրավիրել Հ. Եկավյանին, գրախոսու-

53 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 8, թթ. 15—16:

54 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, № 111:

55 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 347, թ. 19:

թյան բաժնում նշանակել Դ. Դզնունուն և Գ. Աբովին։ Թերթի պատասխանատու քարտուղար ընտրվեց Է. Զոփուրյանը։ Անհրաժեշտ համարվեց շաբաթը չորս անգամ թերթում տալ հատուկ տնտեսական բաժին. ըստ որում՝ այլ պարբերականներից արտատպվող նյութերը տպագրվելու էին ոչ թե անփոփոխ թարգմանությամբ, այլ դրանց հիման վրա կազմված ինքնուրույն հոդվածների ձևով։ Շաբաթական հինգ անգամ տեղ էր տրվելու «Բանվորական բաժնին» և մի ամբողջական էջ էլ հատկացվելու էր գավառական կյանքին։

Այս որոշումներն զգալի չափով նպաստեցին հանրապետության կենտրոնական օրգանի գործունեության հետագա բարելավմանը։

* * *

Բանգյուղթղթակցային շարժման հաջող կազմակերպման համար էական նշանակություն ուներ նոր տիպի ժուռնալիստիկայի սկզբունքների պարզաբանումն ու թղթակցային ունակությունների պատվաստումը աշխատավորական ամենալայն զանգվածների մեջ։ Անհրաժեշտ էր հաղթահարել ոչ միայն կազմակերպչական, այլև հոգեբանական բնույթի մի շարք դժվարություններ, արմատավորելով այն գիտակցությունն ու ըմբռնումը, թե «լրագրությունը ընտրյալների սեփականությունը չէ»[56]։ Մամուլի խնդիրներն ու պարտականությունները նոր հասարակարգի կառուցման բոլոր ճակատամասերում, նրա կոչման ու կազմակերպման նորօրյա սկզբունքները արմատապես փոխել էին բուն «ժուռնալիստիկա» հասկացությունը։ «Պետք է հրաժարվել այն կորստաբեր մտքից,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— թե լրագրությունը 3—4 պրոֆեսիոնալների գործը և մենաշնորհն է...»։ Նոր տիպի ժուռնալիստիկայի կարևորագույն հատկանիշներից էին համարվում՝ սերտ կապը աշխատավոր զանգվածների ամենօրյա կյանքի ու պայքարի հետ, կենսական հարցերի արծարծումը, ճշմարտացիությունն ու սկզբունքայնությունը և, վերջապես, մասսայականությունը։ Հիշեցնելով, որ «պրոֆեսիոնալ ժուռնալիստները» կարողանում են գրել «իրենց չտեսած, չլսած և... հաճախ չհասկացած բաների մասին», թերթն ընդգծում էր. «Բանվորական թղթակցու-

56 «Խորհրդային Հայաստան», 1922, № 179։

թյունը բխում է անմիջական կյանքից, կոնկրետ փաստերից և կոնկրետ եղրակացություն է հանում և կոնկրետ պատասխան պահանջում»[57]։

Բանվորական և գյուղացիական առաջին թղթակցություններն իրենց հետ բերում էին նաև լեզվա-մտածողական և ոճական նոր տարրեր, որոնք առաջին հայացքից ոմանց թվում էին «շատ գռեհիկ», պրոֆեսիոնալ ժուռնալիստիկայի ոգուն անհարիր մի բան։ Ելնելով այս «մաքրամտություններից», երբեմն արվում էին այդ թղթակցությունները կոկելու, «ճաշակավորելու» այնպիսի առաջարկներ, որոնց ընդունումը կհանգեցներ շաբլոնի, զրկելով այդ նյութերը ժողովրդական տարերքից, անմիջականությունից՝ տեղերում հասունացող հարցերի, մտահոգությունների ու հայեցակետերի կենդանի, շատ անգամ կոլորիտային արտահայտությունները փոխարինելով կաբինետային անձուկ ու վերամբարձ ձևակերպումներով։ Այս առթիվ անդրադառնալով «Մաճկալ»-ում տպագրված գյուղական թղթակցություններին, որոնց երևալը անհիմն դժգոհություն առաջացրեց մի շարք վայ-քննադատների շրջանում, «Խորհրդային Հայաստան»-ը նշում էր. նրանք «այնքան են կուրացել, որ... ընդունակ չեն տեսնելու հեղափոխական արտահայտություններից մեկը՝ գյուղացիական ժուռնալիզմը», որը «ակտիվ և ակտուալ ժուռնալիզմ է. նա իր գրած բոլոր հարցերին մոտենում է գործնականորեն... «Մաճկալ»-ի գյուղական աշխատակիցները գրում են ո՛չ գրած լինելու հաճույքի և ո՛չ էլ փողի համար։ Նրանք գրում են իրենց գործի և գործելու համար։ Թերթը նրանց համար իրենց գյուղական, տնտեսական ու քաղաքական շինարար աշխատանքի մի ճյուղը, ավելի ճիշտ՝ ազդակն է...»[58]։

1923 թ. սկզբներին «Խորհրդային Հայաստան»-ում ստեղծվեց «Բանվորական կյանք» բաժինը, որը երկար տարիներ վարում էր Բանվոր Սահակը (Սահակ Կիրակոսյան)։ Բաժինը նոանդուն աշխատանք ծավալեց բանվորների մեջ լրագրության նկատմամբ հետաքրքրություն և սեր արթնացնելու, նրանց թերթի շուրջը համախմբելու ուղղությամբ։ Ճիշտ է, առաջին ամիսներին «Բանվորական կյանք» խորագիրը հազվադեպ էր երևում թերթի էջերում, թղթակցություններն էլ ստացվում էին բացառապես Երևանի մեկերկու ձեռնարկություններից, սակայն շուտով, հատկապես մայիս

57 «Խորհրդային Հայաստան», 1922, № 179։
58 Նույն տեղում, № 159։

ամսից, լայն թափ են ստանում բաժնի կազմակերպչական-դաստիարակչական-ուսուցողական աշխատանքները։ Թերթն սկսեց թղթակցություններ ստանալ Ալավերդուց, Ալեքսանդրապոլից, Ղարաքիլիսայից, Սանահնից, երկաթուղային մի շարք կայարաններից։ Ամիսը երկու-երեք անգամ ժողովներ ու հավաքներ էին անցկացվում գործարաններում ու արհեստանոցներում, հաճախակի զեկուցումներ էին կազմակերպվում բանթղթակիցների համար։ Բաժինն օրական ստանում էր 10—15 թղթակցություն, որոնց մեծ մասը տպագրվում էր թերթում։

«Բանվորական կյանք» բաժնում պարբերաբար զետեղվում էին կոնսուլտացիոն բնույթի հոդվածներ, խորհուրդներ էին տրվում թղթակիցներին, թե ինչի մասին և ինչպես պիտի գրել, ընդլայնել իրենց աշխարհայացքը, բարձրացնել պրոֆեսիոնալ մակարդակը։ Բավական է նշել, որ մինչև 1923 թ. վերջը, վեց ամսում, «Մեր խորհուրդները», «Ի՞նչ պիտի անի բանվոր թղթակիցը», «Զրույց բանվոր թղթակիցների հետ» և այլ խորագրերի ներքո տպագրվեց այդ կարգի ավելի քան 100 նյութ։ Թերթը հորդորում էր բանվոր թղթակիցներին՝ հեռու մնալ մանր-մունր անձնական հաշիվներից, միշտ նկատի ունենալ բարձրացվող այս կամ այն հարցի հասարակական արժեքն ու նշանակությունը. յուրաքանչյուր որ գրիչ վերցնելուց առաջ պետք է լրջորեն մտածի, թե «արդյոք գրվելիք թղթակցությունը օգտակար կարո՞ղ է լինել բանվորությանը, նրա կուսակցությանը և կառավարությանը՝ կոմունիստական շինարարության դժվարին գործի համար»[59]։ Այս տեսակետից եթե մոտենանք, նշում էր թերթը, կտեսնենք, որ կան շատ այնպիսի հարցեր, որոնք երկար ժամանակ չեն կորցնում իրենց «համն ու հոտը» և առատ նյութ են տալիս բանթղթակցին,— ավյալ ձեռնարկության մեջ կատարվող ստեղծագործ աշխատանքն ու բանվորների կենցաղը (ո՞նց է ապրում բանվորը, նրա ընտանիքը, ի՞նչ է կարդում, քանի՞ ժամ է հանգստանում, գնո՞ւմ է թատրոն, թե՞ եկեղեցի է հաճախում և այլն), աշխատանքի արտադրողականության բարձրացումն ու բանվորների դրության բարելավումը, աշխատանքային հերոսությունը, կուսաբջիջների և տեղկոմների գործունեությունը, ժողովրդական տնտեսության վերականգնմանն ու զարգացմանը խոչընդոտող երևույթների մերկացումը (բյուրոկրատիզմ, հափշտակություն, անտարբերություն և այլն)։ Ըստ որում՝ այս ամենի

59 Նույն տեղում, 1923, № 249։

մասին հարկավոր է գրել կոնկրետ ու փաստացի թղթակցություններ՝ ջանալով չկրկնել ուրիշներին, հետու մնալ շաբլոնից։ «Յուրաքանչյուր թղթակից,— խորհուրդ էր տալիս Թերթը,— պիտի աշխատի գրել այնպես, ինչպես նրա միտքն ու սիրտն է թելադրում, յուրատեսակ, իր լեզվով, իր բնույթի համեմատ... Եկեք միասին ասենք՝ հետո՛ւ մեզանից ընդհանուր դատողություններ և բարձրաձայն բառեր։ Շատ փաստ, շատ վարժություն, շատ պարապմունք»[60]։

Շուտով բանվորական թղթակցությունների այնպիսի հոսք սկսվեց, որ «Խորհրդային Հայաստան»-ը կարողացավ ամբողջական էջեր հատկացնել «Բանվորական կյանք» բաժնին։ Թղթակիցներն արծարծում էին արտադրության կազմակերպման, աշխատավարձի կարգավորման, ադմինիստրացիայի և բանվորների փոխհարաբերության հարցերն ու կենցաղային այլ խնդիրներ։ Խմբագրությունն առանձնակի արժեք էր տալիս այն նյութերին, որոնց մեջ քննադատվում էին թերությունները ու սխալները և նշվում դրանց վերացման միջոցները։ Այդպես վարվող թղթակիցը, նշում էր Թերթը, նման է «այն բանվորին, որ ամեն անգամ փոքրիկ մուրճով ամեն կողմից փորձում է իր մեքենան՝ տեսնելու համար, թե արդյոք ամեն ինչ ամո՞ւր է, իր տեղը պի՞նդ է նստած, թե՝ թուլացել է...». որովհետև, շարունակում էր Թերթը, «առողջ լինելու ամենառաջին միջոցը սիրող աչքով հիվանդությունները տեսնելն կատելը, ցույց տալն է և խնամող ձեռքով բժշկելն է»[61]։ Այս պատկերավոր համեմատության մեջ խտացված է խորհրդային մամուլի գործունեության, այդ թվում և թղթակցային շարժման ամենահիմնական սկզբունքներից մեկը։

Խրախուսելով քննադատական, մերկացնող թղթակցությունները, Թերթն առանձնակի ուշադրություն էր հրավիրում երկու հանգամանքի վրա, որոնք կարևոր էին թղթակցային շարժման ճիշտ կազմակերպման ու հետագա ծավալման համար։ Առաջինը թղթակցությունների ճշմարտացիության խնդիրն էր. սխալ, հորինված թղթակցությունները «ունքը շինելու փոխարեն կարող են աչքն էլ հանել», «մարդկանց ու բանվորական թերթի պատվի հետ խաղալ»։ Դրա համար էլ, խորհուրդ էր տալիս Թերթը իր բանվոր թղթակցին՝ «նախքան այդպիսի դեպքերի մասին գրելու համար գրիչ վերցնելը՝

60 «Խորհրդային Հայաստան», 1923, № 252։

61 Նույն տեղում, № 129։

յոթն անգամ չափիր, հետո գրիր»։ Մյուս պահանջն այն էր, որ ոչ մի դեպքում անպատասխան չթողնվեն թղթակիցների արդարացի քննադատական ելույթները. քննադատվող կազմակերպությունները, հիմնարկները, նրանց ղեկավարները պարտավոր են հայտնել թերթին, թե ինչ միջոցներ են ձեռնարկում բացահայտված թերությունները վերացնելու համար. «Լռել՝ նշանակում է արհամարհել բանվորի խոսքը, բանվորական մամուլի արժեքը»[62]։

Այս կապակցությամբ առանձին կարևորություն էր ստանում մի կողմից՝ թղթակիցների սկզբունքայնության, հետևողականության և մարտունակության բարձրացումը, մյուս կողմից՝ անողոք պայքարը քննադատությունը ճնշելու, թղթակիցներին հալածելու, նրանց նկատմամբ վրեժխնդիր լինելու փորձերի դեմ։ «Բանվոր թղթակիցը պետք է համարձակ լինի,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը։— Բանվոր թղթակիցը զինվոր է։ Իսկ մեր ո՞ր զինվորն է, որ կվարանի կռվի դաշտ դուրս գալ, երբ բանվորա-գյուղացիական իշխանությանը վտանգ է սպառնում»[63]։ Բանթղթակիցների շրջանում առաջացած մտորումների, թղթակցի պարտականությունների ու դերի վերաբերյալ ըմբռնումների յուրովի արտահայտությունն էր բանթղթակիցներից մեկի «Գրելը քիչ է» խորագրով նամակը[64]։ Թերթին նյութեր ուղարկելով, թղթակցելով դեռևս չի ավարտվում մեր գործը, իր գրչակից ընկերներին էր դիմում նա, մենք «պետք է նաև ուշի-ուշով հետևենք, որ մեր մատնանշած վատը վերանա, ցանկալին իրականանա, հանցագործը պատժվի, ազնիվը խրախուսվի, անփույթը մեջտեղից վերանա, բարեխիղճը գնահատվի, դիտությունն արժանապես վարձատրվի... Ճշմարիտ գրող լինելով հանդերձ՝ պետք է լինել դիմադրող, պայքարող, գրածը կյանքի մեջ անցկացնող»։ Բանվոր թղթակցից պահանջվում է «երևան հանել մեծ համառություն». չպետք է ընկրկել տարբեր միջոցներով կատարվող ճնշումների, ոտնձգությունների կամ հարձակումների առաջ, պետք է դիմադրել թղթակցին չեզոքացնելու փորձերին։ Պատահական չէ, որ սոցիալիստական տնտեսության տաղանդավոր կազմակերպիչ Ս. Օրջոնիկիձեն իր ելույթներից մեկում բանթղթակիցներին անվանում էր «տոկուն ռազմիկներ»։ «Ոչ ոքի համար այնքան ծանր չէ կռվելը,— ասում էր նա,— որքան

62 Նույն տեղում։

63 Նույն տեղում, № 242։

64 Տե՛ս նույն տեղը, № 281։

բանթղթակիցների համար։ Դժվար կլինի այդ ուղղությամբ աշխատելը, բայց աշխատել պետք է։ Մենք բոլորս էլ պիտի տանենք աշխատանքը՝ և՛ մեր մամուլը, և՛ կուսակցությունը, և՛ խորհրդային հանրապետությունների այն բոլոր ազնիվ բաղաքացիները, որոնք կռվում են մեր իշխանության հաստատունության համար»[65]։

Եվ իրոք, բանգյուղթղթակցային շարժումը ծավալվում էր դասակարգային սուր պայքարի պայմաններում։ Նեպմանները, անուղղելի բյուրոկրատները, կուլակային տարրերը, խորհրդային իշխանության բոլոր հակառակորդները, միջոցների մեջ խարուքյուն չդնելով՝ ջանում էին փակել թղթակիցների բերանը, թույլ չտալ, որ ջրի երես հանվեն ապօրինություններն ու զանցանքները։ Նրանց օրհասական ճիգերը առավել ակնառու դարձան մանավանդ այն բանից հետո, երբ միութենական մի շարք կոմխարհատներին կից ստեղծվեցին հատուկ «Հետաքննության բյուրոներ», որոնք գնալով թերթերում տպագրված թղթակցությունների հետքերով՝ օրենքի խստությամբ պատժում էին մեղավորներին։ Ի դեպ՝ այդպիսի մի հանձնաժողով «Խորհրդային Հայաստան»-ի «Բանվորական կյանք» բաժնի նախաձեռնությամբ դեռևս 1923 թ. աշնանը ստեղծվել էր նաև ՀՍԽՀ Աշխատանքի ժողկոմատին առընթեր։

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեցին բանգյուղթղթակիցներին հետապնդելու և հալածելու փորձերի դեմ, հանցավորների համար սահմանվեցին խստագույն պատժաչափեր։ Թղթակցի սպանությունը օրենքով որակվեց իբրև հակահեղափոխական գործողություն։ 1924 թ. վերջերին բանգյուղթղթակիցներին հալածելու դեպքերը հաճախակի դարձան Անդրկովկասում, Հայաստանի գյուղերում, քաղաքների մի շարք ձեռնարկություններում, գերատեսչական հիմնարկներում։ ՌԿ(բ)Կ Անդրերկրամը Ալ. Մյասնիկյանի սաորագրությամբ հատուկ մի շրջաբերական[66] հղեց հանրապետական կենտկոմներին՝ պահանջելով մամուլում, կուսակազմակերպություններում, արհմիություններում, ամենուրեք հանդես գալ ի պաշտպանություն բանվոր և գյուղացի թղթակիցների։

ՀԿ(բ)Կ Կենտկոմն իր հերթին նման բովանդակությամբ շրջաբերական ուղարկեց գավկոմներին։ Շրջաբերականը հրատարակվեց նաև մամուլում[67]։ Մինչ այդ, 1924 թ. դեկտեմբերի սկզբին Լոռի—Փամբակի գավառի Վորոնցովկա գյուղում կուլակներն սպանել էին

---

65 «Խորհրդային Հայաստան», 1924, № 92։

66 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 303, թ. 30։

67 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, №5։

կոմերիտական գյուղթղթակից 19-ամյա Դավիթ Սաչկովին[68]։ «Խորհրդային Հայաստան»-ը դեկտեմբերի 9-ին հրատարակեց «Գյուղթղթակցի սպանություն Հայաստանում» խորագրով առաջնորդողը, ուր բացատրված էին թղթակիցների դեմ սկսվող հալածանքի ու հաշվեհարդարի պատճառները։ Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում ուռճացել, ինչ-որ չափով ամրացել են կուլակային տարրերը, որոնք փորձում են վերականգնել իրենց վաղեմի ազդեցությունը գյուղում. «Ահա կուլակների այդ ձգտումների դեմ է, որ գյուղի հեղափոխական ուժերը կռիվ են մղում, և այդ կռվի ձևերից մեկը և ամենակարևորը մամուլն է, գյուղական թղթակիցների կատարած անխնա մերկացումները»։ Նշելով, որ այդ կռվի առաջին զոհը Հայաստանում եղավ Սաչկովը, թերթը զգաստության և աչալրջության կոչ էր անում, պահանջելով այնպիսի միջոցների դիմել, որ «հենց բնում խեղդվի նման հարձակման կարելիությունն ուրիշ վայրերում»։

Պարբերականները լուսաբանում էին Սաչկովի գործով մեղադրվածների հրապարակային դատավարության ընթացքը՝ միաժամանակ լայն կամպանիա ծավալելով ի պաշտպանություն բանգյուղթղթակիցների։ Կարևոր էր համարվում, մասնավորապես, թղթակիցների կատարած մերկացումների շուտափույթ քննությունը դատական և ԲԳՏ մարմինների կողմից. հապաղումն ու ձգձգումը պատճառ և առիթ էին դառնում, որ քննադատվածներն ու մերկացվածները ոչ միայն փորձեն թաքցնել-կոծկել իրենց զանցանքների հետքերը, այլև զանազան միջոցներով զրպարտեն, հալածեն թղթակցությունների հեղինակներին։ Պահանջելով կենսագործել թղթակիցներին պաշտպանելու վերաբերյալ կուսակցության հրահանգները, «Խորհրդային Հայաստան»-ը հիշեցնում էր այն օրենքների խստությունը, որոնցով պատժվում է մամուլի «այդ առաջապահ զինվորների» դեմ կատարված ամեն մի ոտնձգություն[69]։

* * *

1925 թ. կեսերից թղթակցային շարժումն արմատապես վերակառուցվեց. եթե սկզբնական շրջանում բանգյուղթղթակիցները նշանակվում կամ ընտրվում էին համապատասխան կուսակցական

68 Մանրամասնությունները տե՛ս ՀԿ(բ)Կ Կենտկոմի հրահանգիչ Լուշնիկովի՝ «Об убийстве комсомолиста Сачкова Давида» զեկուցագրում (ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 206, թթ. 1—5)։

69 «Խորհրդային Հայաստան», 1925, № 167։

մարմինների կամ հիմնարկ-ձեռնարկությունների բջիջների կողմից,— մի բան, որ անխուսափելի էր շարժումն սկզբնավորելու համար,— ապա այժմ կազմակերպական այդ ձևն արդեն չէր արդարացնում իրեն, ավելին՝ խոչընդոտում էր շարժման հետագա ծավալմանը, մի կողմից՝ բերելով բյուրոկրատական վերաբերմունքի տարրեր, մյուս կողմից՝ սահմանափակ շրջանակների մեջ դնելով թղթակիցների նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը։ Վատագ կար, որ բանգյուղթղթակցական խմբակները կարող են վերածվել նեղ-«մասնագիտական» կազմակերպությունների։

Նոր պայմաններում որոշվեց թղթակցային շարժման մեջ կիրառել լրիվ կամավորության սկզբունքը. բանգյուղթղթակիցների կազմակերպման առավել ճիշտ ու կենսական ձևը համարվեց խմբագրություններին կից այնպիսի խմբակների ու բյուրոների ստեղծումը, որոնք միավորում են ավյալ թերթի թղթակիցներին։ Ըստ որում, պարբերական մամուլը ուշադրություն էր հրավիրում տեղական կուսակազմակերպություններում նկատվող երկու կարգի ծայրահեղությունների վրա։ Ընդգծելով թղթակիցների «մանդատային սիստեմի» վերացման և կամավորության սկզբունքի հաստատման կարևորությունը, «Խորհրդային Հայաստան»-ը նկատում էր, որ ոչ միշտ և ոչ ամենուրեք են ճիշտ ըմբռնվում և կիրառվում կուսակցության պահանջները. մի դեպքում «մեր ընկերներն ու բջիջների քարտուղարները խառնվում են թղթակիցների անմիջական աշխատանքների մեջ. նրանք հսկողի ու քննիչի վերաբերմունք են ցույց տալիս թղթակիցներին», մյուս դեպքում՝ «մեր կազմակերպությունները, թերևս թղթակիցների շարժման ու աշխատանքի կամավոր լինելու փաստից ելնելով, ամենևին ուշադրություն չեն դարձնում նրան»։ Թերթը շեշտում էր կուսակազմակերպությունների կողմից թղթակցային շարժման «նուրբ ու ճկուն ղեկավարությունն ապահովելու» անհրաժեշտությունը[70]։

Հարկավոր էր հաղթահարել նաև թղթակիցների որոշ շրջաններում, մասնավորապես երիտասարդության մեջ տարածված այն սխալ մտայնությունը, թե «մասսայական թղթակիցների շարժման անմիջական նպատակակետն է՝ առաջացնել նոր ժուռնալիստների, նոր գրողների ու դրականագետների կադրեր»։ Բայց չէ՞ որ այդ դեպքում «մասսայական թղթակիցների շարժումը կկորցներ կուսակցությանը և խորհրդային իշխանությանն անմիջորեն օժանդակող

70 «Խորհրդային Հայաստան», 1925, № 108։

ու սոցիալիստական շինարարությանը մասնակցող լայն, մասսայական, ուրույն գործոնի իր բնույթը»[71]։ Ելնելով վերոհիշյալ սխալ ըմբռնումից և թղթակցային շարժումը ներկայացնելով լոկ իբրև «կուլտուրական մի շարժում, որ շփումն ունի գրական խնդիրների հետ», ոմանք նույնիսկ ցանկալի էին համարում, որ «թղթակիցների դեկավարման գործն իր վրա վերցնի պրոլետարդողների միությունը»[72]։

Այդպիսի մատնությունը համարելով «վտանգավոր տենդենց», «խորհրդային Հայաստան»-ը մի անգամ ևս ընդգծեց. «Բանգյուղթղթակիցների մասսայական շարժումը խորհրդային հասարակայնության կամավոր սկզբունքների վրա հիմնված կազմակերպություն է, որի նկատմամբ կուսակցությունն իր դեկավարությունն իրագործում է բացառապես թերթերի խմբագրությունների միջոցով»[73]։

1925 թ. ընթացքում մի շարք գավառներում (Լոռի—Փամբակ, Ստեփանավան, Նոր Բայազետ, Դիլիջան) տեղի ունեցան բանգյուղթղթակիցների հավաքներ ու խորհրդակցություններ, հանգամանորեն քննարկվեցին թղթակիցների աշխատանքը բարելավելու և կոորդինացնելու, պատի լրագրերի որակը բարձրացնելու, թղթակցային շարժումը ծավալելու, պարբերականների տարածմանը նպաստելու և այլ կարևոր խնդիրներ, որոնց վերաբերյալ ընդունվեցին համապատասխան որոշումներ ու բանաձևեր[74]։ Թղթակիցների քաղաքական դաստիարակությունը ապահովելու և պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելու նպատակով անցկացվում էին սեմինար պարապմունքներ, ստեղծվում էին ուսումնական խմբակներ։

Կուսակցական կազմակերպությունների ու խմբագրությունների համատեղ ջանքերով որոշակի պարզություն մտցվեց հանրապետության թղթակցային շարժման մեջ, կարգավորվեց հաշվառման գործը։ Վերականգնման շրջանի վերջում Երևանի, Լենինականի, Էջմիածնի, Նոր Բայազետի և Լոռի—Փամբակի գավառներում արդեն գործում էր գյուղթղթակիցների 130, բանվոր թղթակիցների 15 խմբակ։ Այս 145 խմբակներում ընդգրկված էր 2688 թղթա-

---

71 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 7, գ. 399, թ. 10։

72 «Գյուղ-գրող», Նոր Բայազետ, 1925, № 1։

73 «Խորհրդային Հայաստան», 1925, № 251։

74 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 302, թթ. 17—19, 87—88, 100—101, ց. 5, գ. 174, թ. 9, 16 և այլն։

կից[75]։ 20-ական թթ. աշխի ընկան բազմաթիվ բանդյուղթեղթակիցներ՝ Մ. Մկրտչյանը, Մ. Հովհաննիսյանը, Ե. Վահրադյանը (Գրաշար Ենգոր), Ա. Սահակյանը (Հրացայտ), Վ. Խաչիկոզլյանը (հետագայում ՀՍԽՀ Աշխատանքի ժողկոմ), Ա. Թամազյանը, Ա. Պետրոսյանը (Մկրատ, Արտիկ, Բատրակ), Արս. Սարգսյանը, Մ. Ավետիսյանը, Ե. Խառատյանը, Մ. Ամիրխանյանը, Հ. Ավագյանը, Թ. Մեհրաբյանը և շատ ուրիշներ։

1926 թ. մայիսի 5-ին գումարվեց բանվորական, գյուղացիական, զինվորական և երիտասարդ թղթակիցների Համահայաստանյան առաջին խորհրդակցությունը։ Ամփոփելով անցած ուղու արդյունքները, խորհրդակցությունն ընդգծեց մամուլի շուրջը համախմբված թղթակիցների խոշոր ծառայությունը ժողովրդական տընտեսության վերականգնման համար աշխատավորների մոբիլիզացման, նրանց կուլտուր-քաղաքական դաստիարակության գործում։

* * *

Պարբերական մամուլի հետ մեկտեղ զարգանում, կազմակերպչորեն ամրապնդվում ու ընդլայնվում էին նաև մասսայական ներգործության այնպիսի օղակներ, ինչպիսիք էին գրքի տպագրությունը, ռադիոն ու հեռագրական գործակալությունը։ Ուշագրավ է, որ պարբերականներին միութենական և տեղական նյութեր մատակարարելուց բացի, Հայաստանի հեռագրական գործակալությունը հանրապետության բոլոր գավառներում, տեղական գործկոմների հետ միասին, լույս էր ընծայում պատի լրագրեր, դրանցում զետեղելով խորհրդային կառավարության ներքին ու արտաքին քաղաքականությանը և միջազգային իրադարձություններին նվիրված հաղորդագրություններ։ Նշենք նաև, որ ՀՀԳ-ն («Արմենտա») 1921 թ. հրատարակեց «Պատի լրագիր» խորագրով տպագիր օրգանի 25 համար։

1921 թ. կեսերին կազմակերպվում է Պետական հրատարակչությունը, որը շուտով հանձնվում է ՀՍԽՀ Լուսժողկոմատին՝ իբրև նրա բաժիններից մեկը։ Երկու տարի անց այն դառնում է ինքնուրույն միավոր և անցնում տնտեսահաշվարկային սիստեմի։ 1925 թ. սկզբին Պետհրատն ուներ արդեն 4 տպարան։ 1921 թ. հուլիսից մինչև 1926 թ. մարտը միայն Պետհրատի գծով լույս էր տեսել 349

---

75 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 156։

անուն գիրք և 7 պարբերական՝ 2.461,5 մամուլ ծավալով և 1. 974,600 օրինակ տպաքանակով[76]։ Զգալի թիվ էին կազմում քաղաքական գրքերը, լենինյան հրատարակությունները, դասագրքերը, գիտական և գեղարվեստական երկերը։

Հետագա տարիներին ավելի ծավալվեց ու ընդլայնվեց գրքի տպագրության գործը մեր Հանրապետությունում։ 1929 թ. հուլիսին, իբրև կուլտուրական ճակատի նշանակալից հաղթանակներից մեկը՝ մամուլը և հասարակայնությունը նշեցին 1000-րդ գրքի լույսընծայումը Հայպետհրատի կողմից։ Հրատարակչական համապատասխան գործունեություն էին ծավալել նաև Հողժողկոմատը, Հայկոոպը, Առժողկոմատը և ՀԱՄԽ-ը։

Պարբերական մամուլի հետ միասին գիրքը ևս դարձել էր աշխատավոր զանգվածների քաղաքական լուսավորության և գաղափարական դաստիարակության կարևոր գործոններից մեկը։

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին մեր հանրապետության պարբերական մամուլի գործունեությունը հատկանշվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Այդ ժամանակաշրջանը հանդիսացավ Խորհրդային Հայաստանում պարբերական մամուլի սկզբնավորման ու զարգացման առաջին էտապը։ Ելնելով պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում մամուլին առաջադրված նոր խնդիրների լենինյան ըմբռնումից, մեր հանրապետության թերթերն ու հանդեսները ծավալեցին ագիտացիոն, պրոպագանդիստական և կազմակերպչական լայն աշխատանք, դարձան հասարակական ներգործության կարևոր լծակներից մեկը։

2. Պարբերական մամուլը մեծապես նպաստեց աշխատավորության ուժերի մոբիլիզացմանը ներքին հակահեղափոխության դեմ մղված պայքարում, դաշնակցության փետրվարյան և զանգեզուրյան ավանտյուրան չախչախելու գործում։

3. Պարբերական մամուլը զգալի դեր խաղաց կուսաշխատանքի կազմակերպման, գաղափարական ներգործության մեթոդների

---

76 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան. 1920—1925», Երևան, 1926, էջ 321։*

ու ձևերի կատարելագործման, արդյունքների մերկացման գործում՝ հանուն կուսակցության շարքերի լենինյան համախմբվածության հետագա ամրապնդման:

4. Պարբերական մամուլը սկսեցին ուշադրություն նվիրեց աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության հարցերին. պրոպագանդեց և պաշտպանեց կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությունը, ընդգծեց Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ ստեղծման պատմական նշանակությունը, ցույց տվեցին մեր հայրենիքի ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբվածությունը, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությունը:

5. Պարբերական մամուլը հանգամանորեն քննարկեց տնտեսական շինարարության խնդիրները, որոշակի դեր խաղալով ինչպես նոր տնտեսական քաղաքականության սկզբունքների պարզաբանման ու կիրառման, այնպես էլ ոռոգման, կոոպերացիայի. գյուղատնտեսության ասպարեզներում տարվող աշխատանքների կազմակերպման գործում: Համապատասխանաբար հիմնվեցին և լայն գործունեություն ծավալեցին կոոպերատիվ, գյուղացիական-գյուղատնտեսական, արհմիութենական մամուլի օրգանները, ինչպես նաև գավառային թերթերը, երիտասարդական ու զինվորական պարբերականները:

6. Պարբերական մամուլի սկզբնավորման և զարգացման ընթացքը ղեկավարվում էր ՌԿ(բ)Կ Անդրերկրամի և ՀԿԿ Կենտկոմի մամուլի բաժինների կողմից: Այդ բաժինները կարևորագույն դեր կատարեցին ինչպես մամուլի կազմակերպումը և ծավալումը նիշա հունի մեջ դնելու, բանգյուղջրակցային շարժումը խթանելու, այնպես էլ պարբերականների աշխատանքում տեղ գտած թերությունները ու սխալները վերացնելու, ժուռնալիստների գաղափարական-պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելու և մամուլի ֆինանսական-հրատարակչական բազան ամրապնդելու գործում: Այս ամենը հիմք ստեղծեցին մեր հանրապետության պարբերական մամուլի հետագա զարգացումն ու բարելավումն ապահովելու համար:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՅՔԱՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ

ԳԼՈՒԽ I

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

Մամուլը սոցիալիստական ինդուստրացման ուղիների և մեթոդների մասին: Պայքար օպոզիցիաների դեմ՝ հանուն կուսակցության միասնության: Դաղափարական պայքարի հարցերը մամուլում. կուսակցական նոր պարբերականներ. «Լենինյան ուղի», «Կուսակցական շինարարություն», «Պրոպագանդիստ», «Կոմունիստ» («Կուսաշխատող»), «Ագիտատորի բլոկնոտ»: Կոմերիտական աշխատանքի բարելավումը. «Երիտասարդ բոլշևիկ» հանդեսը: Մամուլը և խնայողության ռեժիմը. պայքար արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար: Մամուլը և ինքնաքննադատության լոզունգը. պայքար բյուրոկրատիզմի դեմ: Առաջին ենգամյակի խնդիրների քննարկումը մամուլում. մամուլը և սոցիալիստական մրցությունը. «Սոցիալիստական արշավ» բերքը, զորձարանային բերքեր: Տեխնիկայի տիրապետման հարցերը մամուլում. նոր հրատարակություններ. «Տեխնիկայի տիրապետման համար», «Առողջ տրանսպորտ», «Տիրապետենք տեխնիկային»: Առաջին ենգամյակի արդյունքների գնահատումը:

1

1925 թ. դեկտեմբերին ՀամԿ(բ)Կ XIV համագումարը, ջախջախիչ հարված հասցնելով զինովևյան-կամենևյան օպոզիցիային, ընդունեց երկրի ինդուստրացման լենինյան կուրսը: Սոցիալիստական ինդուստրացումը դարձավ կուսակցության տնտեսական քաղաքականության հիմքը: Համագումարը, ելնելով Վ. Ի. Լենինի այն հիմնական դրույթից, թե մեր երկիրն ունի անհրաժեշտ ամեն ինչ՝ «լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար»[1], կուսակցության գլխավոր խնդիրը պայքարը հա-

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր, հ. 33, էջ 556։*

նուն ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության հաղթանակի։ Մեր երկրում սոցիալիզմի լիակատար կառուցման հնարավորությունների և հեռանկարի հարցում մերժելով օպոզիցիայի կապիտուլյանտական պլանները և տրոցկիստական-մենշևիկյան նկրտումները, համագումարն անհրաժեշտ համարեց ծավալել սոցիալիստական ինդուստրացումը և ամրապնդել բանվոր դասակարգի դաշինքը միջակի հետ՝ հենվելով չքավորության վրա, պայքարելով գյուղի կապիտալիստական տարրերի դեմ։ Տնտեսական ամբողջ շինարարությունը պետք է տանել այն հունով, ընդգծեց համագումարը, որպեսզի ԽՍՀՄ-ը մեքենաներ ու սարքավորում ներմուծող երկրից վերածվի այդպիսիք արտադրող երկրի. մի հանգամանք, որ կապահովի ԽՍՀՄ-ը կապիտալիստական շրջապատման պայմաններում կապիտալիստական տնտեսության կցորդը դառնալու վտանգից և հնարավորություն կտա ստեղծելու այնպիսի «ինքնուրույն տնտեսական միավոր, որը կառուցվում է սոցիալիստականորեն և, իր տնտեսական աճման շնորհիվ, ընդունակ է ծառայել որպես հզոր միջոց՝ հեղափոխականացնելու բոլոր երկրների բանվորներին և գաղութների ու կիսագաղութների ճնշված ժողովուրդներին»[2]։

XIV համագումարը, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, առաջադրեց «սոցիալիստական շինարարության մի ամբողջ ծրագիր», որի իրագործման համար «պահանջվում է իմաստուն, շրջահայաց ու համարձակ լենինյան քաղաքականություն»։ «Մեր թշնամիները,— շարունակում էր թերթը,— թող իսկի չարախինդ ենթադրություններ չանեն վերջին դիսկուսիայի առթիվ։ Պողպատե բոլշևիկյան կուսակցությունը հաստատուն, վստահ քայլերով, հաղթահարելով արտաքին ու ներքին բոլոր դժվարությունները, առաջնորդում է Խորհրդային Միությանը դեպի նորանոր գրավումներ սոցիալիստական շինարարության մեջ...»[3]։

Մեր հանրապետության պարբերական մամուլը ևս իր հիմնական խնդիրներից մեկն էր համարում համագումարի որոշումների մասսայականացումը թե՛ կուսակցական և թե՛ անկուսակցական ամենալայն շրջաններում։ Թերթերում ու հանդեսներում պարբերաբար տպագրվում էին տեսական-պրոպագանդիստական ինքնուրույն և թարգմանական հոդվածներ, կուսակցական

---

2 «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 247։

3 «Խորհրդային Հայաստան», 1926, № 16։

բջիջներում ու աշխատավորական կոլեկտիվներում ընդունված բանաձևեր, զեկուցման թեզիսներ և այլն։ Մամուլը հետևում էր, որպեսզի տեղերում ճիշտ ու բազմակողմանի լուսաբանվեն համագումարում արծարծված խնդիրները, պրոպագանդիստական աշխատանքներում ներգրավվեն պատրաստված ու կայուն ընկերներ, այդ ամենը համարելով գաղափարական ճակատի կարևորագույն օղակներից մեկը։ Բավական է նշել, որ համագումարի որոշումների մասսայականացման հարցերին «Խորհրդային Հայաստան»-ը նվիրեց վեց առաջնորդող և նույնքան էլ հոդված-դիտողություններ, «Ավանգարդ»-ը՝ չորս առաջնորդող և մի շարք թղթակցություններ, «Մաճկալ»-ը՝ բազմաթիվ հաղորդումներ, «Կոմունիստ» հանդեսը՝ կոնսուլտացիոն նյութեր և այլն։ Մամուլը ճիշտ կերպով գտնում էր, որ այդ ուղղությամբ տարվող աշխատանքն արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, եթե «յուրաքանչյուր հարցի քննությունը թե՛ ըստ ձևի և թե՛ ըստ բովանդակության համապատասխանի աուդիտորիայի պահանջներին» և «տվյալ հարցը սերտորեն կապվի տվյալ կազմակերպությանը հուզող խնդիրների հետ»։

Ամփոփելով որոշումների մասսայականացման առաջին արդյունքները, «Խորհրդային Հայաստան»-ը արձանագրում էր, որ պարբերականների խմբագրություններում ստացված բազմաթիվ զեկույցները տեղերից, ժողովների, մանավանդ կուսբջիջների բանաձևերը պերճախոս կերպով վկայում են, որ Հայաստանի կոմկուսը ևս «առողջ է, ամուր և ամբողջովին կողմնակից XIV համագումարի որոշումներին»[4]։ «Ինչպես ողջ համամիութենական տնտեսության, այնպես և Հայաստանի էկոնոմիկայի զարգացումը,— նշում էր թերթը ՀԿ(բ)Կ V համագումարի բացման առթիվ գրված խմբագրականում,— պիտի ընթանա խիստ պլանաչափ ուղիով. այդ զարգացման հիմնական տենդենցը պիտի լինի մեր երկրի ինդուստրացումը...»[5]։

Անհրաժեշտ է հայտնաբերել արտադրության կազմակերպման ու ծավալման ուղիները, խնդիր էր դնում ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը, գտնել նոր հնարավորություններ և «երկրի արտադրողական ուժերը զարգացնելով՝ մեկընդմիշտ ապահովել սոցիալիզմի

---

4 Նույն տեղում, № 54։

5 Նույն տեղում, 1927, № 259։

հաղթանակը մեղանում»[6]։ «Բանվոր» թերթը մի շարք հոդվածներում բացատրում էր այն կարևոր նշանակությունը, որ ուներ ինդուստրացումը նաև գյուղատնտեսության հետագա զարգացման համար։ Ինդուստրացումը, նկատում էր թերթը, գյուղին կտա մեքենաներ, տրակտորներ և դրանց հետ միասին՝ լայն գործածության ապրանքներ։ Որքան ավելի քաղաքը արտադրի գյուղատնտեսության համար անհրաժեշտ գործիքներ, այնքան ավելի գյուղը կկարողանա զարգացնել գյուղատնտեսության ապրանքայնությունը. մյուս կողմից՝ որքան գյուղը էժան և բարձր որակի հում նյութեր մատակարարի արդյունաբերությանը, այնքան քաղաքը կարտադրի գյուղի համար էժան գնով ապրանքներ։ «Հետևաբար,— եզրակացնում էր թերթը,— երկրի ինդուստրացումը միատեսակ օգուտ է բերում թե՛ քաղաքին և թե՛ գյուղին»[7]։

Գյուղացիության և բանվոր դասակարգի փոխհարաբերության խնդիրը սուր կերպով ծառացավ ինդուստրացման համար անհրաժեշտ կուտակումներ ստեղծելու ուղիների առնչությամբ։ Պարբերական մամուլը պաշտպանում և պրոպագանդում էր կուսակցության մշակած ճիշտ քաղաքականությունը, քննադատելով տրոցկիստական-զինովևական օպոզիցիայի առաջարկած «դեղատոմսը», որը հղի էր կործանարար հետևանքներով թե՛ բանվոր դասակարգի և թե՛ գյուղի աշխատավորության համար։ Օպոզիցիոն բլոկը, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, դատում է այսպես՝ «կուտակումներ կանենք գյուղացիությանը ճնշելու միջոցով. միջոցները գյուղատնտեսությունից կքաշենք դեպի արդյունաբերությունը՝ հարկերը ավելացնելու, արդյունաբերական ապրանքների գները բարձրացնելու, չքավոր ու միջակ տնտեսություններին տրվող օգնությունը թուլացնելու միջոցով և այլն»։ Կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը, շարունակում էր թերթը, «կտրուկ ու հաստատ կերպով պատասխանում են՝ արդյունաբերության համար այդ ձևով կուտակում անելու մասին խոսք անգամ լինել չի կարող։ Այդ տեսակ ինդուստրացումը բոլորովին կքայքայի քաղաքի ու գյուղի մերձեցման գործը։ Այդ ճանապարհն անպետք է, հակալենինյան, ոչ բոլշևիկյան»[8]։

Խորհրդային Միությունը, նշում էր մամուլը, ավարտելով «արտադրական իր հին բազայի վերականգնումը», «թևակոխել է մի

---

6 «Խորհրդային Հայաստան», 1927, № 268։

7 «Բանվոր», 1926, № 456։

8 «Խորհրդային Հայաստան», 1927, № 13։

նոր էպոխա, որն ինդուստրալիզացիայի, սոցիալիզմի մեքենայական բազան զարգացնելու դարաշրջան է»։ Այս նոր շրջանում ծանր ինդուստրիայի, արտադրության միջոցների արտադրության տեմպերն ավելի բարձր է, քան թեթև արդյունաբերությանը։ Այս հիմնական, գլխավոր ուղին սոցիալիզմի «ամուր բազայի կառուցման միակ և իսկական ուղին է, ընկ. Լենինի նշանառած սոցիալիզմի շինարարության ուղին»։ Սակայն դրա հետ միասին, հիշեցնում-ընդգծում էր մամուլը, ինդուստրացման լենինյան կուրսը ամենևին չի ենթադրում գյուղացիության շահերի անտեսում, քամահրում. ընդհակառակը, արդյունաբերության վերելքի հետ միաժամանակ «կատարվում է գյուղատնտեսության զարգացումը, որը հոդատարության կենտրոնական խնդիր է կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության համար». «Մեր երկրի ինդուստրալիզացիան, հակառակ կապիտալիստական երկրների օրինակին՝ գյուղացիական տնտեսության վերելքի զորավոր ազդակ է և ոչ երբեք նրա քայքայման, ավերման ազդակ (այդպես է կապիտալիստական ստաբիլիզացիայի ուղին)»[9]։

Համկ(բ)կ XIV համագումարի և XV կոնֆերանսի որոշումների նշանաբանով՝ մամուլը պրոպագանդում էր կուսակցության մշակած ինդուստրացման քաղաքականությունը և մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության լենինյան տեսությունը, բացատրում էր սոցիալիստական ինդուստրացման ուղիների ու մեթոդների յուրահատկությունները և արմատական տարբերությունը կապիտալիստականի համեմատությամբ։ Այսպես՝ հիշեցնելով, որ մեքենայական արտադրության առաջխաղացումն առանց նոր, լրացուցիչ միջոցների առհասարակ անհնարին է, «Խորհրդային Հայաստան»-ը գրում էր. «Իր տնտեսության այդ պահանջը բուրժուազիան նրանով է բավարարում, որ թալանում է բանվոր դասակարգին, նրա հետ միասին թալանում է նաև գյուղացուն, իր թալանը հրեշային չափերի հասցնելով գաղութներում»։ Բոլորի համար էլ ակնհայտ է, շարունակում էր թերթը, որ խորհրդային իշխանության բնույթն ու ոգին խոպառ բացառում են այդպիսի անմարդկային հնարավորություններից «օգտվելու» իրավունքը։ Մյուս կողմից՝ անհնար է նաև «բուրժուական երկրներում փոխառություն կնքելը»։ Եվ ահա, այս պայմաններում, «կուտակման հիմնական աղբյուրը մեզ համար խնայողությունն է, այսինքն՝ մեր

---

9 Նույն տեղում, № 17։

պետական տնտեսությունից ստացվող զուտ վաստակի աստիճանական աճումը»[10]։ Մամուլը ինդուստրացման համար միջոցներ խնայելու և սոցիալիստական կուտակման կարևորագույն նախադրյալները համարում էր՝ «նախ և առաջ այն, որ մենք վոնդեցինք պարազիտային, ոչինչ չարտադրող դասակարգերի հիմնական մասսային. երկրորդ՝ այն, որ մենք մեր վզից թոթափեցինք ցարական ու պատերազմական ահագին պարտքերը և երրորդ՝ այն, որ արդյունաբերությունից, պետական առևտրից ու բանկերից ստացվող հասույթները հավաքվում են ոչ թե բուրժուազիայի ու կալվածատերերի ձեռքում, այլ պրոլետարական պետության»[11]։

Բացառելով կուտակման բուրժուական մեթոդները և «դրսի օգնությունը», գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, մենք պետք է մեկընդմիշտ ըմբռնենք հետևյալ ճշմարտությունը. «Միայն մեր միջոցներով, հենվելով պրոլետարիատի և գյուղացիության վրա, բարձրացնել մեր տնտեսությունը և երկիրն ինդուստրացնել՝ ահա մեր երկրում սոցիալիզմ կառուցելու նախապայմանները»։ Այնուհետև, անդրադառնալով 1926 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի՝ տնտեսական շինարարության հերթական խնդիրներին նվիրված բանաձևին, թերթը նշում էր, որ մեր հանրապետությունում հարկավոր է հոդ տանել մասնավորապես պղնձահանքերի շահագործումն ավելացնելու, արդյունաբերությունը գիտության վերջին խոսքով մեքենայացնելու, նոր հանքային հարստությունների ուսումնասիրությունը ծավալելու, էլեկտրիֆիկացման աշխատանքներն արագացնելու, նոր գործարաններ կառուցելու մասին, մոռացության չտալով, իհարկե, «գյուղատնտեսության արտադրանքների զարգացման, նրա մեքենայացման և կոոպերացման խնդիրները»։ Այս առաջադրանքների հաջող լուծումով, եզրափակում էր թերթը, «մենք ևս կավելացնենք մի հիմնաքար սոցիալիզմի կառուցման գործին, որը ձեռնարկել է Խորհրդային Միության պրոլետարիատը՝ կոմունիստական կուսակցության իմաստուն ղեկավարությամբ»[12]։

* * *

Հայաստանի պարբերական մամուլը հատուկ ուշադրություն նվիրեց կուսակցության միասնականության պահպանման վերա-

10 «Խորհրդային Հայաստան», 1926, № 205։

11 Նույն տեղում, 1927, № 13։

12 Նույն տեղում, 1926, № 299։

բերյալ ՀամԿ(բ)Կ XIV համագումարի որոշման մասսայականացմանը, ընդգծելով օպոզիցիայի դեմ կուսակցության տարած հաղթանակի նշանակությունը մեր երկրում սոցիալիզմի կառուցման հետագա բախտի համար։ «Վլադիմիր Իլյիչը քանիցս, մանավանդ ներկուսակցական դիսկուսիաների ու ճգնաժամերի ժամանակ,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը իր մի առաջնորդողում,— շեշտել է կուսակցության միասնականության կարևորությունը». և համագումարի այս որոշումն էլ հենց, եզրակացնում էր թերթը, «բխում է կուսակցության միասնականության համար մղվելիք պայքարի ընդհանուր այն խնդրից, որ մեզ ավանդ է թողել ընկ. Լենինը»[13]։

Դեռևս համագումարի բացման օրը ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը խորին համոզմունքով գրում էր. «XIV կուսակցական համագումարը իր կոլեկտիվ հեղինակությամբ վճռականորեն վերջ կտա նկատվող հիվանդագին թեքումներին և հաստատուն որոշումներով կապահովի կուսակցության հետագա ընթացքը լենինյան փորձված ռելսերի վրա»[14]։ Համագումարի հինգերորդ օրը թերթը տպեց «Նոր օպոզիցիայի պարտությունը» խորագրով առաջնորդողը։ Ընդգծելով, որ «ջախջախիչ փաստերով անվերապահ կերպով պարզվել է այն հանգամանքը, որ օպոզիցիան ոչ սկզբունք ունի և ոչ էլ հիմք», թերթը աներկբայորեն նկատում էր. «Կենտրոնական կոմիտեի պաշտոնական զեկուցողները դեռ իրենց վերջին խոսքը չեն ասել, Կենտկոմի գործունեության մասին դեռևս բանաձև չի ընդունված, սակայն արդեն իսկ պարզ ու որոշ է համագումարի պատգամավորների ճնշող մեծամասնության տրամադրությունը, նրանց հեղափոխական լենինյան ըմբռնումն ու հաստատ կամքը։ Համագումարը մի՛ է, համագումարը հաստատ ու անշեղ կանգնած է լենինիզմի հառագայթներով լուսավորված հանապարհին...»[15]։

Միանգամայն հատկանշական է այն հանգամանքը, որ մամուլը ոչ թե կուսակցական ականավոր անհատ գործիչներին էր վերագրում օպոզիցիան ջախջախելու պատմական ծառայությունը, այլ ամբողջ համագումարին՝ այն համարելով «լենինիզմի մեկնության բարձրագույն և ամենահեղինակավոր օրգանը», «պրոլետարական կուսակցության հավաքական միտքը»[16]։ Ի հակակշիռ օպո-

---

13 Նույն տեղում, № 17։

14 Նույն տեղում, 1925, № 288։

15 Նույն տեղում, № 294։

16 Նույն տեղում, № 293։

զիցիայի տարածած այն լուրերի, որ իբր իր պարտությունը զուտ ձևական է և հետևանք սոսկ բվեարկության մեխանիկական ապարատի գործադրման, մամուլն ընդգծում էր օպոզիցիայի տեսակետների սնանկությունը սկզբունքային-գաղափարական տեսակետից. «Համագումարի մեծամասնությունը,— փաստարկում էր «Խորհրդային Հայաստան»-ը «Լենինիզմի դրոշի տակ» խորագրով առաջնորդողում[17],— տարավ հաղթանակ ոչ թե իր ֆիզիկական գերակշռությամբ, այլ քաղաքական-գաղափարական իր հետևողականությամբ, իր հավատարմությամբ լենինիզմի մարտական ավանդներին... Եվ նախկին օպոզիցիաների նման,— շարունակում էր թերթը,— նոր օպոզիցիան էլ փառավուրկ վիճակի դատապարտվեց. օպոզիցիայի գեներալները մնացին առանց զորքի: Ամբողջ կուսակցությունը, մեկ մարդու նման, իր վստահությունն է հայտնում համագումարին, նրա հետևողական լենինյան ուղեգծին»:

Թե՛ օպոզիցիայի վարքագծի քաղաքական գնահատման տեսակետից և թե՛ համագումարի որոշումների պատմական նշանակությունն ընդգծելու առումով պարբերական մամուլը կարևոր էր համարում հիշեցնել նաև այն նկրտումների փլուզումը, որ բաժին ընկավ օպոզիցիայի դիրքավորման հետ որոշակի հույսեր կապող միջազգային ռեակցիային: «Պրոլետարական հեղափոխության բազմաթիվ և բազմատեսակ թշնամիները,— գրում էր «Բանվոր» թերթը համագումարի ավարտման առթիվ՝ «Լենինյան ուղիով դեպի հաղթանակ» խորագրով խմբագրականում[18],— սրատարուի հետևում էին մի քանի օրվա ընթացքում համագումարում տեղի ունեցած տարաձայնությունների շուրջ վիճաբանություններին և անհամբեր սպասում էին, որ վերջապես այդ պողպատյա կուսակցության շարքերում ճեղքվածք պիտի առաջանա, որի հետևանքը կլինի թե՛ Խորհրդային Միության և թե՛ համաշխարհային հեղափոխության կործանման սկիզբը»: Այդ պատրանքները, սակայն, շարունակում էր թերթը, ի սկզբանե դատապարտված էին ձախողման և արդյունք էին լոկ «փոքրիկ» «թյուրիմացության». իրենց հաշիվներն անելիս նրանց աչքից պարզապես «վրիպել» էր իրենց հոգուն և ուղեղին անմատչելի այն իրողությունը, որ «ՌԿԿ-ն միաձուլված է իր հանճարեղ ուսուցիչ և ղեկավար մեծ Իլյիչի ուսմունքի ցեմենտով, որ այդ ուսմունքը՝ լենինիզմը իր ամբողջ էությամբ մի դրավական է ՌԿԿ միասնականության համար»: Ի դեպ՝

17 «Խորհրդային Հայաստան», 1926, № 2:

18 Տե՛ս «Բանվոր», 1926, № 424:

խորհրդահայ մամուլն ուշադրություն էր հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ, ձայնակցելով իմպերիալիստական պրոպագանդային, արտասահմանի դաշնակցական թերթերը ևս «քիչ թուղթ չեն մրոտել մեր կուսակցության XIV համագումարի շուրջը»։ Մամուլի տեսություններից մեկում համապատասխան քաղվածքներ բերելով «Հառաջ», «Հուսաբեր» և «Հայրենիք» պարբերականներից, «Խորհրդային Հայաստան»-ը բացահայտում էր նրանց «ղառանցային մտամոլորությունը» «բոլշևիկյան ռեժիմի շուտափույթ փլուզման» վերաբերյալ։ Իհարկե, ինքնին հասկանալի է արդեն, հիշեցնում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը, որ նրանց «ծակ փիլիսոփայությունները» միանգամայն արհամարհելի ու անարժեք բաներ են Խորհրդային Հայաստանի բանվորա-գյուղացիական զանգվածների համար, որոնք «միայն կուշտ կծիծաղեն դաշնակցական ցնդած ու մոլորված մտքի վրա», բայց հարկավոր է չմոռանալ գաղութահայ աշխատավորությանը, որ կարող է ընկնել խաբեության այդ նոր ծուղակը։ Ահա թե ինչու, խնդիր էր դնում թերթը, գաղութահայ հեղափոխական կազմակերպություններն ու մամուլը պետք է իրենց ուժեղ ձայնը բարձրացնեն, թույլ չտալով, որ այդ ամենը «հալած յուղի տեղ ընդունվի»[19]։ Հարկ է նշել, որ սփյուռքահայ առաջադիմական մամուլը որոշակի կրքոտությամբ հանդես եկավ դաշնակցության դեմ նաև այս հարցում, աշխատավորների մեջ ամրապնդելով հույսն ու հավատը Խորհրդային Հայաստանի նկատմամբ։ Եվ հատկանշական է առհասարակ, որ խորհրդային պարբերականները, որոնց մի մասն առաքվում էր արտասահման, իրենց սկզբունքային հոդվածներով, սոցիալիստական շինարարության ընթացքի ճշմարիտ լուսաբանությամբ զգալի օգնություն ցույց տվին սփյուռքի հեղափոխական ուժերին՝ ճիշտ կողմնորոշվելու և փաստերից հերքումներով շեղոքացնելու դաշնակցական և ընդհանրապես բուրժուական պրոպագանդայի ներգործությունը[20]։

---

19 «Խորհրդային Հայաստան», 1926, № 65։

20 Խորհրդային Հայաստանի իրականությունը սփյուռքի աշխատավորությանը ներկայացնելու առումով նշանակալից գործ կատարեցին մասնավորապես Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) կենտրոնական վարչության օրգան հանդիսացող «Հրավիրակ» և «ՀՕԿ-ի տեղեկատու» պարբերականները։ 1925 թ. հրատարակվեցին «Հրավիրակ»-ի 2 համարները, 1926-ին՝ № 3-ը։ Խմբագիրը չի նշված։ 32—36—52 էջ (32×23 սմ), տպաքանակը՝ 1250։ 1928 թ. լույս տեսավ «ՀՕԿ-ի տեղեկատու»-ի № 1-ը (96 էջ, 30×22 սմ, տպաքանակը՝ 1800)։

«Հրավիրակ»-ը դալիս էր լրացնելու և ամրողջացնելու մայր-հայրենիքից սփյուռքի համար կատարված ձեռնարկումները (գեղարվեստական բացիկների,

Միասնականության և կուսակրոնության հարցը՝ կապված սոցիալիզմի կառուցման հնարավորության վերաբերյալ կուսակցության դիրքորոշման հետ, մամուլը կրկին սուր կերպով արծարծեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ 1926 թ. հուլիսյան և հոկտեմբերյան միացյալ պլենումների և կուսակցության XV կոնֆերանսի համապատասխան որոշումների մասսայականացման առիթով։ Դատապարտելով կուսակցության մեջ մենշևիկյան թևքում հանդիսացող տրոցկիստական-զինովևյան «զինվորիկների» ֆրակցիոն ելույթներն ու արարքները, պարբերական մամուլը մատնանշում էր վտանգներով հղի այն զարիթափը, որով դեպի անդունդ էր գլորվում «նոր օպոզիցիան»։ Պարբերականները վկայակոչում էին այն բազմաթիվ բանաձևերը, որոնցով տեղական կուսակցական կազմակերպությունները «մեկ մարդու նման դատապարտում են «նոր օպոզիցիայի» ղեկավարների հակակուսակցական, կազմալուծող ելույթները». «Նոր օպոզիցիան,—նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— անտառներում ժողովներ սարքելով, ամբողջ Միության սահմաններում ֆրակցիոն կապեր հաստատելով և իր նամակներն ու պլատֆորման տարածելով, անկասկած, խաղացել է կրակի հետ»[21]։ Ընդգծելով, որ օպոզիցիայի դեմ «ողջ կուսակցության մեջ առաջացել է միահամուռ մի շարժում», ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը այդ միասնականության աղբյուրը տեսնում էր մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության նկատմամբ եղած հավատի ու համոզվածության մեջ. այստե՞ղ էր կուսակցության ուժը, նրա հեղինակության երաշխիքը աշխատավոր զանգ-

---

լուսանկարների, ալբոմների առաքումներ, լիազոր-պատգամավորությունների այցելություններ և այլն), որոնց նպատակն էր «բոլոր տեսակի առարկություններին ու տատանումներին վերջ տալ ո՛չ թե առասպելական զրույցներով, այլ ներկայացնելով հայ աշխատավորական զանգվածներին և առհասարակ հայ ժողովրդին Խորհրդային Հայաստանի ներկա ոլոր և ընթացիկ՝ թե՛ շինարար և թե՛ կուլտուրակրթական բազմաթիվ աշխատանքները...» (№ 1, էջ 1)։

«ՀՕԿ-ի տեղեկատու»-ն նույնպես իր նպատակադրումների մեջ շեշտում էր այս կողմը։ Նշելով, որ դաշնակցությունը, «շարունակ սխալ, աղճատված և բացորոշապես կեղծված տեղեկություններ մատակարարելով, աշխատում է մեռցնել դաղութահայ մասսայի մեջ այն տաք հետաքրքրությունը, որ նա հայտնաբերում է դեպի Խորհրդային Հայրենիքը», խմբագրությունն ընդգծում էր. «... Անհրաժեշտ է դառնում ստեղծել մեր «Տեղեկատու»-ի միջոցով մի օղակ, որով դաղութահայ մասսաները կապված կլինեն Խորհրդային Հայաստանում կատարվող աշխատանքներին սերտ կերպով և կստանան ճշգրիտ տեղեկություններ այդ աշխատանքների մասին» (№ 1, էջ 3)։

21 «Խորհրդային Հայաստան», 1926, № 184։

վածների շրջանում. այդ հիմնական հարցն էր, որ օպոզիցիան դրսևորեց իր պառակտիչ վարքագիծը, դաղափարական-գործնական իր ողջ սնանկությունը։ Օպոզիցիան «հանաք չի անում», շարունակում էր թերթը, այլ բոլոր անթույլատրելի միջոցներով ձգտում է իր դիծն առաջ տանել. լցված հոռետես տրամադրությամբ դեպի սոցիալիստական շինարարությունը (օպոզիցիոներ Ռադեկը հեգնորեն այդ անվանում է սոցիալիզմի կառուցում «մի գավառում»), թերագնահատելով այդ ասպարեզում ձեռք բերված ակներև արդյունքները, մեծամտորեն խախտելով կուսակարգապահությունը՝ «նոր օպոզիցիայի» առաջնորդների «վիրավորված մեծությունը» նրբորեն՝ ջանում է սրողել այն իրողությունը, որ «տվյալ պայմաններում հակակուսակցական ամեն մի քայլ փաստորեն ուղղված է խորհրդային իշխանության հիմքերի դեմ, որ այդ ամեն մի քայլը ջուր է ածում մեր արտաքին ու ներքին թշնամիների ջրաղացին»[22]։ Օպոզիցիոներները փորձում են սավեր գցել այն ամբողջ դրական աշխատանքի վրա, որ կատարել և կատարում է կուսակցությունը՝ հանուն սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի իրագործման. նրանք ցանկանում են «տեսական մարդանքներով» շեղել կուսակցության ուշադրությունը սոցիալիստական շինարարության հասունացած, հրատապ խնդիրների գործնական լուծումից։ «Մեզ հարկավոր է ո՛չ թե դիսկուսիա,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,—այլ համառ շինարար աշխատանք. մենք չենք ուզում ծամծմել կասկածելի թարմության այն դարմանը, որ հին և նոր օպոզիցիան է մեզ հրամցնում՝ «նոր ծրագրերի», «անխառն լենինիզմի» անվան տակ։ Այս ծրագրերը լենինիզմի հիմքերի ուսիզիա են նշանակում, հրաժարումն այն ամբողջ փորձված բաղաքականությունից, որ կուսակցությունն է կիրառում այս վերջին տարիների ընթացքում»[23]։ Ընդգծելով, որ Խորհրդային Միությունում սոցիալիզմի կառուցման հնարավորության հարցում դրսևորած իր կապիտուլյանտական վարքագծով օպոզիցիան «համաձայն չէ Լենինի հետ, համաձայն չէ կուսակցության հետ», մամուլը վկայակոչում էր ՀամԿ(բ)Կ XV կոնֆերանսի՝ այդ առթիվ ընդունած բանաձևը և եզրակացնում՝ «... Մենք սկսել ենք կառուցել սոցիալիզմը և մենք կկառուցենք սոցիալիզմը մեր երկրում, մեր ներքին ուժերով—այսպե՛ս պատասխանեց XV կոնֆերանսը սո-

---

22 Նույն տեղում, № 232։

23 Նույն տեղում, № 236։

ցիալիզմի կառուցմանը չհավատացողներին, և այդ պատասխանը կոմունիստական կուսակցության, ԽՍՀՄ բազմազգ պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության կամքի արտահայտությունն է[24]։ Որոշ ժամանակ անց, ամփոփելով ինդուստրացման փոխառության անցկացման արդյունքները մեր հանրապետությունում և հիշեցնելով, որ 400 հազարի փոխարեն իրացվել է 485 հազար ռուբլու փոխառություն, մամուլն այս իրողությանը տալիս էր սկզբունքային նշանակություն՝ գրելով. «Այս ցույց է տալիս, որ նաև Խորհրդային Հայաստանի բանվորն ու գյուղացին իր սրտին շատ մոտ է ընդունում մեր երկրի և ամբողջ Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության հիմքի՝ ինդուստրիայի զարգացման աշխատանքը»[25]։

Մեր հանրապետության պարբերականներում, առաջնորդողներից ու տեսական հոդվածներից բացի, տպագրվում էին կուսակցական ակտիվների ժողովների բանաձևերը, որոնցում միահամուռ հավանություն էր տրվում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ 1926 թ. հուլիսյան ու հոկտեմբերյան և 1927 հուլիս-օգոստոսյան ու հոկտեմբերյան միացյալ պլենումների համապատասխան որոշումներին, խստագույնս դատապարտվում էր օպոզիցիայի վարքագիծը՝ թե՛ համամիութենական և թե՛ տեղական մասշտաբով։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի V պլենումը (1927 թ. հուլիս), լսելով ՀՍԽՀ ԺողԿոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանի հաղորդումը տրոցկիստական-զինովևյան միացյալ օպոզիցիայի ելույթի մասին, իր հավատարմությունը հայտնեց ՀամԿ(բ)Կ լենինյան Կենտկոմի վարած քաղաքականությանը։ Պլենումը միաժամանակ ընդգծեց տեղական օպոզիցիոներների դեմ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտությունը։ Բանն այն է, որ դրանից քիչ առաջ, հունիսի 27-ին, Երևանի ակտիվի ժողովում, ինչպես «Խորհրդային Հայաստանն» է նշում «Օպոզիցիան մեղանում» խորագրով առաջնորդողում[26], տեղական օպոզիցիան «վերջապես «խիզախեց» ելույթ ունենալ»։ Այդ ելույթը, նկատում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը, «ոչ միայն ապացույց հանդիսացավ այն փաստի, որ համամիութենական օպոզիցիան մեղանում որոշ, թեկուզ չնչին ու աննշան, կողմնակիցներ ունի, այլ որ դրանք կապված են Մոսկվայում և Թիֆլիսում աշխա-

---

24 «Երիտասարդ բոլշևիկ», 1926, № 1—2, էջ 51։

25 «Խորհրդային Հայաստան», 1927, № 217։

26 Տե՛ս նույն տեղը, № 151։

տող իրենց գաղափարական զինակիցների հետ ու խլուրդային աշխատանք են կատարում մեր կազմակերպության մեջ»: Օպոզիցիան, հանձին ակտիվ տրոցկիստ Ռ. Սաֆրազբեկյանի, հանդես եկավ նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում, շարադրելով եոյակի (Ռ. Սաֆրազբեկյան, Գ. Փիրգուլյան, Պ. Ղազարյան) «դեկլարացիան», որը հուլիսի 20-ին հրապարակվեց «Խորհրդային Հայաստան»-ում: Նույն համարում Թերթը տպագրեց «Օպոզիցիոն ուղղությունների դեմ» խորագրով առաջնորդողը՝ հանգամանորեն վերլուծելով և քննադատելով «դեկլարացիայի» հակակուսակցական էությունը: Ճիշտ էր նկատում Թերթը, թե՝ «կիրառվող կազմակերպչական եղրակացություններին զուգընթաց՝ քաղաքական-գաղափարական լայն աշխատանք պիտի ծավալել կուսակցական մասսաների մեջ, բացատրելով միջազգային բարդ կացությունը, միութենական օպոզիցիայի նոր հարձակումների իմաստը և այլն»: Այս խնդրի հաջող կատարմանը զգալի չափով նպաստեց հենց ինքը՝ պարբերական մամուլը:

Հայաստանում ևս կուսակցական կազմակերպություններն ամենուրեք մերժում էին «նոր օպոզիցիայի» պլատֆորմը, հանդես էին գալիս հանուն կուսակցության լենինյան միասնության, պաշտպանում սոցիալիստական շինարարության հեռանկարների վերաբերյալ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի մշակած գիծը: Երևանում տեղի ունեցող դիսկուսիոն ժողովների առթիվ գրված խմբագրականներից մեկում «Խորհրդային Հայաստան»-ը նկատում էր. «Չեղավ մի բջիջ, ուր օպոզիցիան կարողանար ստանալ ձայների թեկուզ քիչ թե շատ աչքի ընկնող թիվ... Շարքային բանվորները վառ փաստերով հերքում էին այն զրպարտությունները, որ օպոզիցիան անում էր կուսակցության հասցեին»: Եվ ամենևին էլ պատահական չէ, եզրափակում էր Թերթը, որ «օպոզիցիան բանվորական բջիջներում միայն երկու ձայն հավաքեց»[27]: Օպոզիցիան դատապարտող որոշումներ ընդունեցին Երևանի մեխանիկական, կաշվի, «Արարատ» գործարանների, տպարանների, ավտոդարաժի և մի շարք այլ հիմնարկ-ձեռնարկությունների կուսակազմակերպությունների միացյալ ժողովը, Լենինականի քաղաքային, երկաթգծի և զորամասերի կազմակերպությունների միացյալ ժողովը, ՀԿ(բ)Կ Դիլիջանի կազմակերպության ընդհանուր ժողովը և այլն:

---

27 Նույն տեղում, № 217:

Օպոզիցիոներները ծանր պարտություն կրեցին ինչպես 1927 թ. հոկտեմբերյան համակուսակցական դիսկուսիայի ժամանակ, այնպես էլ ՀԿ(բ)Կ V համագումարի նախապատրաստման ընթացքում տեղի ունեցած դիսկուսիոն ժողովներում։ Նույն բախտին արժանացավ օպոզիցիան նաև կոմերիտմիության մեջ։ «Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը,— նշում էր «Ավանդարդ»-ը «Լենինյան դիրքերի վրա» խորագրով առաջնորդողում,—քաղաքական հասունության իր քննությունը տվեց հաջողությամբ... Օպոզիցիան խայտառակ պարտություն կրեց ամենուրեք, ամբողջ Հայաստանի կոմսոմոլում շահեց 12—13 ձայն... Քսաներկու հազարանոց Հայաստանի կոմսոմոլի բանակը նորից ցույց տվեց, որ ինքը եղել է ու կլինի միշտ բոլշևիկյան կուսակցության հետ, լենինյան դիրքերի վրա»[28]։

Օպոզիցիայի տեսակետների մերկացմանը խորհրդահայ մամուլը զգալի տեղ հատկացրեց նաև 1928 թ. առաջին ամիսներին։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի հաշվումներով՝ միայն հունվար ամսին Հայաստանում հրատարակվող վեց թերթերը («Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանդարդ», «Բանվոր», «Կարմիր ռազմար», «Կարմիր զինվոր») այդ թեմայով տպագրել են 67 հոդված, որից 15-ը՝ ինքնուրույն, 5-ը՝ թարգմանական, 32-ը՝ միութենական մասշտաբի և 15-ը՝ տեղական օպոզիցիոներների դեմ[29]։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը «ապացուցել է ու միշտ էլ կապացուցի,— հավաստիացնում էր Կենտկոմի օրգանը,— որ նա ետ չի մնացել և չի էլ մնա մյուս մեր կազմակերպություններից և վճռականորեն կպայքարի ամեն կարգի ու տիպի օպոզիցիաների գործելակերպի դեմ՝ հանուն մեր կուսակցության երկաթյա շարքերի միասնականության»[30]։

2

Օպոզիցիաների դեմ մղված պայքարի շրջանում և դրանից հետո պարբերական մամուլում ավելի հաճախակի էին բարձրացվում գաղափարական աշխատանքի բարելավման հարցերը։ Մամուլն ամբողջ սրությամբ դնում էր մարքս-լենինյան ուսմունքին խորապես տիրապետելու խնդիրը՝ ելնելով ՀամԿ(բ)Կ XV համագումարի

28 «Ավանդարդ», 1927, № 97։

29 Տե՛ս Մշի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 11, գ. 269, թ. 2։

30 «Խորհրդային Հայաստան», 1927, № 196։

այն ցուցումից, թե՝ «ՀամԿ(բ)Կ-ի, որպես դիկտատուրայի հիմնական լծակի, ուղղություն տվող դերը կարող է պահպանվել, ապահովվել և ուժեղացվել միայն կուսակցության շարքերի լենինյան համախմբվածության և պրոլետարական կարգապահության հիման վրա, նրա անդամների գաղափարական-տեսական և կուլտուրական մակարդակի անընդհատ բարձրացմամբ...»[31]։

Մամուլն ընդգծում էր, որ սոցիալիստական շինարարության ներկա փուլում, բնականաբար, «իդեոլոգիական ֆրոնտը մեր կուսակցության համար դառնում է մեր ընդհանուր աշխատանքի կարևորագույն բնագավառներից մեկը»[32]։ Հրամայական պահանջ էր դարձել, որպեսզի «կուսակցության ամեն մի անդամ յուրացնի լենինիզմի հիմնական սկզբունքները, հեղափոխական մարքսիզմի ոգին և պատկերացնի մեր կուսակցության պատմությունը, նրա ստրատեգիան ու տակտիկան». «Այլևս միայն հեղափոխական էնտուզիազմը և կազմակերպչական ընդունակությունները բավական չեն։ Մեր շինարարության և դասակարգային փոխհարաբերությունների բարդ պայմաններում ամեն մի կոմունիստ պետք է զրահավորված լինի գիտելիքներով»[33]։

Կուսակցության կազմակերպչական գործունեությունը սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ էր բարելավել գաղափարական-դաստիարակչական աշխատանքի որակը, ապահովել լենինիզմի, կուսակցության բարձրագույն օրգանների որոշումների, կուսակցության պատմության խոր ուսումնասիրումը։ Ելնելով այս ճշմարիտ դրույթից, պարբերական մամուլը խստորեն քննադատում էր «գործամոլության» մտայնությունը, որի կրողները «թերագնահատում էին թեորիայի դերն ու արժեքը պրակտիկայի համար»։ Դա ի վերջո հասցնում է կոմանդպարծության, որը «նույնպես պակաս վտանգավոր չէ»։ «Կան ընկերներ,— նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը «Սպառազինվե՛նք մարքսիզմ-լենինիզմի զենքերով» խորագրով առաջնորդողում,— որոնք իրենց արդեն կատարելագործված են համարում տեսականապես և այլևս այդ ուղղությամբ մտահոգվելը՝ բոլորովին ավելորդ։ Առանց այդպիսի սնապարծության այրելու, ոչնչացնելու,— եզրակացնում էր թերթը,—

31 «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 556։

32 «Խորհրդային Հայաստան», 1927, № 177։

33 Նույն տեղում, № 234։

ետ մնալուց բացի, հեռու չի կարելի գնալ»։ Մյուս կողմից, ընդգծում էր մամուլը, գաղափարական-տեսական դաստիարակությունն այնպիսի լուրջ և բարդ խնդիր է, որ ամեն մի մակերեսային ու հապճեպ մոտեցում կարող է մեծ վնաս հասցնել կուսակցության ամբողջ գործունեությանը։ Ուստի անհրաժեշտ է հիմնովին բարելավել կուսուսուցման ողջ սիստեմը, համառ ու տքնաջան աշխատանքով «ավելի լավ և ամուր զրահավորվել մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով». «Այժմ այն ժամանակն է, որ կցկտուր ցիտատներով, երկրորդական աղբյուրներով անհնար է այնպես ընդլայնել մտավոր հորիզոնը, որպեսզի կարողանաս բավարարել լայն մասսաների աճող պահանջները, ղեկավարել նրանց՝ մեր երկրի սոցիալիստական վերակառուցման մեծ աշխատանքներում։ Այսպես սուր և կտրուկ է դրվում այժմ հարցը»[34]։

Այդ շրջանում խորհրդահայ պարբերականները հետևողական պայքար ծավալեցին դաշնակցական գաղափարախոսության դեմ՝ մերկացնելով այդ կուսակցության հակահեղափոխական էությունը և արտասահմանյան երկրներում իմպերիալիզմին ծառայագրվելու նրա վարքագիծը։ Մյուս կողմից, նշում էր մամուլը, չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ երկրի ներսում ևս, դասակարգային պայքարի սրման պայմաններում, «բուրժուական և մանր-բուրժուական տարրերը աստիճանարար աճող ակտիվություն են ցուցաբերում», իսկ դրան զուգընթաց՝ «բուրժուական և մանր-բուրժուական իդեոլոգիաները, որոշ աշխուժացում ստանալով, ճիգեր են անում ներս թափանցելու աշխատավորական մասսաների մեջ»։ «...Դաշնակցական և մենշևիկյան իդեոլոգիաները,— նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը իր մի առաջնորդողում[35],— հաճախ իրարից փետուրներ փոխառնելով, փորձում են աշխատավորական մասսաների մեջ խարիսխ գցել... Դրան օբյեկտիվորեն նպաստում է մեր տեղական օպոզիցիան՝ լենինյան ուսմունքը խեղաթյուրող իր տեսակետներով և իր կազմակերպչական քայքայիչ աշխատանքով։ Նա դառնում է մի խողովակ, որով նացիոնալիզմն ու սպեցիֆիզմը կարող են ներս թափանցել մեր կուսակցության ու կոմերիտ կազմակերպության շարքերը։ Ուստի, եզրակացնում էր թերթը, գաղափարական պայքարը մեղանում պետք է սուր ծայրով ուղղել թե՛ ներկուսակցական հակալենինյան տրա-

---

34 «Խորհրդային Հայաստան», 1929, № 230։

35 Տե՛ս նույն տեղը, 1927, № 177։

մագրությունների ու հոսանքների և թե՛ բուրժուա-նացիոնալիստա կան գաղափարախոսության ամեն տեսակ դրսևորումների դեմ։ Մեկ այլ խմբագրականում, մատնանշելով նացիոնալիստական գաղափարախոսության՝ աշխուժություն ցուցաբերելու փորձերը, «որի կրողներն են մի կողմից՝ դաշնակցությունը, մյուս կողմից՝ սպեցիֆիկ-մենշևիզմը», թերթը դարձյալ ընդգծում էր, թե՝ «այս երկու հոսանքների իդեոլոգիայի ջրաղացին օբյեկտիվորեն ջուր է լցնում տրոցկիզմը՝ որպես մեր կուսակցությունը քայքայել ձգտող մի հոսանք»[36]։ Այդ կապն ու հոգեհարազատությունը չէր թաքցնում նաև դաշնակցական մամուլը։ Անդրադառնալով այդ առթիվ «Դրոշակ»-ի ու «Հայրենիք»-ի հոլյաններին և համապատասխան քաղվածքներ անելով, «Խորհրդային Հայաստան»-ը նկատում էր. «Դաշնակները բառացիորեն կրկնում են այն, ինչ որ օպոզիցիան շպրտում է լենինյան կուսակցության հասցեին։ Նրանք որոշակի կերպով ասում են, որ այս ամենը շատ ուղիղ և ճշմարիտ է և որ իրանք՝ դաշնակները օպոզիցիայից դեռ շատ առաջ էին կանգնած նույն այդ ճանապարհի վրա։ Մնում է, ուրեմն,— եզրակացնում էր թերթը,— որ օպոզիցիոներները ձեռք մեկնեն դաշնակներին»[37]։ Նրանց այս բացահայտ նկրտումներից ելնելով էլ, ահա, խորհրդահայ մամուլը զոնում էր, որ «դաշնակցության դեմ իդեոլոգիական պայքարը պահանջում է ճակատի ընդլայնում...», «աջ-օպորտունիստական և տրոցկիստական տրամադրությունների» հետևողական քննադատություն[38]։

Ինչ վերաբերում է «Հայաստանի ապագան փրկելու» և «բոլշևիկներու բռնապետությունն ազատագրելու» այն դոնկիխոտական հանդգին, որ վատնում էր դաշնակցությունը իմպերիալիստական խաժամուժի հանախորշերում, նկատում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը, ապա խորհուրդ կտանք աչքի առաջ ունենալ մեր հետևյալ պարզ ու որոշակի հիշեցումը. «Անշեղ, անընդհատ ու համառ կերպով կշարունակվի Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարության մեծ գործը, իսկ նեղ օրերի համար մենք ունենք կոփված, պատրաստի զենքեր, որոնք խփում են ոչ պակաս շեշ-

36 «Խորհրդային Հայաստան», 1927, № 208։
37 Նույն տեղում, № 258։
38 «Նոր ուղի», 1930, № 4—5, էջ 70։

տակի, քան այն գենքերը, որ դաշնակցական նախկին մարդկանց ձեռքը կարող են տալ իմպերիալիստական բեռիները»[39]։

Դաշնակցության դեմ մղվող պայքարի առումով խորհրդահայ պարբերական մամուլը կարևոր էր համարում ընդգծել այն խոր համակրանքն ու հարազատ զգացմունքները, որ տածում են սովետահայ աշխատավոր զանգվածները Խորհրդային Հայաստանի, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և կոմունիստական կուսակցության նկատմամբ։ Այս հարցին նվիրված նյութերի մեջ ուշագրավ է հատկապես «Հոկտեմբերյան հեղափոխության տասնյամակը և գաղութահայ աշխատավորությունը» խորագրով հոդվածը[40]։ Նշելով, որ դաշնակցական գործիչները «սարսափում են գաղութահայ աշխատավորության աճող համակրանքից՝ դեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը և կոմունիստական կուսակցությունը», ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանն իր այդ խմբագրականում ընդգծում էր, որ խորհրդային իրականությունը խեղաթյուրելու և վարկաբեկելու բոլոր ճիգերն ապարդյուն են և ի սկզբանե դատապարտված ձախողման։ Եվ այլ կերպ էլ չի կարող լինել, շարունակում էր թերթը, քանի որ Խորհրդային Հայաստանի իրականության մեջ սովետքի հայ աշխատավորը տեսնում է պատմության քառուղիներում երիցս խաչված հայ աշխատավոր ժողովրդի հոգևոր և տնտեսական վերածննդի պատկերը և իր ու իր զավակների ապագան իրավացիորեն շաղկապում մայր-հայրենիքի հետագա բարգավաճման ու հարատևման հետ։ Ուստի և հաստատվում է այն օրինաչափությունը, թե՝ «Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարության ամեն մի նոր տարին, մեր երկրի տնտեսական և կուլտուրական ամեն մի նոր նվաճում դաշնակցության... համար նոր դերեղմանաքարեր են բերում»։ Այս առումով նպատակասլաց և դիպուկ էր նաև մեր հանրապետությունում ծավալված սոցիալիստական շինարարությունը ծուռ հայելու մեջ ներկայացնելու դաշնակցական մամուլի ապարդյուն փորձերի քննադատությունը, որ տրված է «Հայրենիք»-ի, «Հուսաբեր»-ի և «Դրոշակ»-ի «տեսաբանների» դեմ «Լենինյան ուղի» հանդեսի մի շարք նյութերում[41]։

Մի փոքր առաջ անցնելով, նշենք, որ դաշնակցության վար-

---

39 «Խորհրդային Հայաստան», 1926, № 46։

40 Տե՛ս նույն տեղը, 1927, № 263։

41 Տե՛ս, օրինակ, «Լենինյան ուղի», 1928, № 1—2, էջ 104—116, № 3—4, էջ 82—101։

քաղծի հակախորհրդային էությունը և նրա դաղափարական պայքարի մեթոդների սնանկությունը բացահայտելու համար մամուլը դիպուկ կերպով օգտագործեց նաև ներգաղթի խնդիրը։ Քանի դեռ մենք հնարավորություն չունեինք մասսայական ներգաղթ կազմակերպելու, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, դաշնակցությունը մեղադրում էր մեզ իբր թե դաղութահայության հանդեպ ունեցած «անտարբերության» մեջ։ Դրանով նա ջանում էր նախ ներկայացնել իրեն իբրև դաղութահայ աշխատավորության շահերի արտահայտիչ, աշխատավորություն, որն իրոք ձգտում էր իր օջախը վառել հայրենի հողում, և ապա՝ փորձում վարկաբեկել խորհրդային իշխանությանը, որն, իբր, չի ուզում ընդառաջ գնալ արտասահմանի հայ գանգվածների այդ բուռն ձգտմանը։ «Բացե՞ք դռները», —աղաղակել է դաշնակցական երախը թերթերի էջերից և ամբիոններից, շատ լավ հաշվի առնելով մի կողմից գաղթական մասսաների ցանկությունը՝ կապիտալիստական դերությունից խորհրդային Հայաստան փոխադրվելու, և մյուս կողմից՝ տեղյակ լինելով, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը օբյեկտիվորեն հնարավորություն չունի մասսայական ներգաղթի առջև խորհրդային երկրի դռները բաց անելու»[42]։ Բայց այս անգամ ևս դաշնակցությունը սխալ հաշիվներ էր արել, ընդգծում էր թերթը. շուտով սկսված մասսայական ներգաղթը «հայկական մարտական նացիոնալիզմի ձեռքից խլեց քաղաքական դեմագոգիայի բանուկ զենքերից մեկը»։ Եվ այդ ժամանակ դաշնակցությունն անհապաղ դեն նետեց դաղութահայության «սրտացավ բարեկամի» շղարշը իր «ամոթիած երեսից», թե՛ փոխելով իր երգի հին եղանակը և թե՛ գործնական քայլերով վերաապացուցելով իր ով լինելը։ «Սկզբում, երբ մենք դեռ չէինք ստեղծել բոլոր հնարավորությունները մասսայական ներգաղթի համար,— գրում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը «Այրվում է հողը դաշնակների ոտքի տակ» խորագրով առաջնորդողում,— դաշնակներն օրն ի բուն գոռում էին, թե «Հայաստանի կառավարությունը փակել է դռները», թե նա «չի ուզում տեսնել արտասահմանի հայության ծով թշվառությունը» և այլն և այլն։ Բայց,—շարունակում էր թերթը,—բավական էր ներգաղթի կազմակերպման առաջին իսկ լուրը և դաշնակները գործի դրին մաուզերիզմի բոլոր պրիոմները, պրովոկացիան ու մատնությունը, սպառնալիքները և տեռորը՝ ներգաղթին ակտիվ օժանդակողների

---

42 «Խորհրդային Հայաստան», 1932, № 8։

դեմ, դիմելով նույնիսկ մահափորձի խորհրդային Հայաստանի ներկայացուցիչի նկատմամբ»[43]։ Սա արդեն ինքնասպանության նման մի բան էր դաշնակցության համար, ճիշտ կերպով նկատում էր մամուլը, քանի որ ամենամոլորված մարդիկ անգամ ակամա համեմատության մեջ էին դնում նրա երեկվա խոսքն ու այսօրվա գործելակերպը և պարզորեն տեսնում, որ «տարիներ շարունակ... դաշնակցության հանած աղմուկը ներգաղթի առթիվ հանդիսացել է բացարձակ քաղաքական փարիսեցություն և սատնորեն կշռված քաղաքական հաշվի խնդիր»[44]։

Դաշնակցության գաղափարախոսության ու քաղաքականության դեմ սուր և կրքոտ ելույթներ ունեցան հատկապես կուսակցական պարբերականները («Խորհրդային Հայաստան», «Կոմունիստ», «Լենինյան ուղի»), «Երիտասարդ բոլշևիկ»-ը, «Ավանդարդ»-ը, «Մաճկալ»-ը, «Նոր ուղի»-ն և մի քանի այլ թերթեր ու հանդեսներ։ Նրանցում տպագրված մի շարք խմբագրականներում, հոդվածներում, մամուլի տեսություններում և այլ նյութերում բացահայտված են դաշնակցության հակահեղափոխական էությունը, նրա ծախվածությունը արտասահմանի հակախորհրդային ուժերին, մերկացված են դաշնակցական մամուլի՝ Խորհրդային Հայաստանը և ԽՍՀՄ-ը վարկաբեկելու փորձերը։ Բնորոշ է, որ այդ ելույթները մեծ մասամբ տոգորված են հրապարակախոսական կրքով, ունեն գաղափարական-քաղաքական սուր հագեցվածություն (օրինակ՝ «Խորհրդային Հայաստան»-ում տպագրված «Նախկին մարդկանց ելույթները», «Անկման ճահիճներում», «Զգո՛ւշ, կայրվի՛ք» խորագրով առաջնորդողները[45])։ Դաշնակցության դեմ ուղղված հոդվածներով այդ շրջանում հաճախակի հանդես էին գալիս Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը, Աշ. Հովհաննիսյանը, Հ. Ալատյանը, Ե. Զուբարը, Շ. Ամիրխանյանը, Ա. Ադոյանը, Կ. Համդիլյանը, Ա. Բզնունին, Պ. Ֆոլյանը և շատ ուրիշ հասարակական գործիչներ ու հրապարակախոսներ։

* * *

Գաղափարական պայքարի արդյունավետությունը բարձրացնելու, մարքս-լենինյան տեսությունը սոցիալիստական շինարա-

---

43 «Խորհրդային Հայաստան», 1933, № 7։

44 Նույն տեղում, 1932, № 8։

45 Տե՛ս նույն տեղը, 1926, №№ 46, 140, 1928, № 52։

բության պրակտիկայի հետ սերտորեն շաղկապելու շահերը հրամայաբար պահանջում էին բարելավել ու կատարելագործել կուսակցական ողջ աշխատանքի մեթոդներն ու ձևերը։ Եվ պատահական չէ, որ մամուլը ևս, հատկապես կուսակցական պարբերականները սկսեցին ավելի մեծ տեղ տալ կուսշինարարության հարցերին։ Նոր խնդիրներին համապատասխան՝ վերակառուցվեցին Թերթերի «Կուսակցական բաժին»-ները, ճշտվեցին առանձին պարբերականների ֆունկցիաներն ու բնույթը։ Այսպես՝ «Խորհրդային Հայաստան»-ի «Կուսակցական կյանք» բաժինն աշխուժացնելու և ուժեղացնելու, նրա նկատմամբ անմիջական կուսակցական ղեկավարությունն ապահովելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիան 1927 թ. հունվարի 10-ին որոշեց «Թերթի այդ բաժնի աշխատանքներն ի տնօրինություն հանձնել Կենտկոմի կուսինֆորմացիայի բաժնի վարիչին»[46]։ Հաջորդ տարվա ապրիլին ՀԿ(բ)Կ Երքազկոմի քարտուղարությունը, քննելով «Խորհրդային Հայաստան» Թերթում քաղաքի կուսկազմակերպությունների գործունեության արտացոլումն ընդլայնելու հարցը, որոշեց՝ ա) առաջարկել խմբագրությանը ամեն օր Թերթում առանձին տեղ հատկացնել կուսբաժնին. բ) խնդրել Կենտկոմին՝ մամուլի բաժնի միջոցով պարբերաբար համապատասխան ցուցումներ տալ խմբագրությանը ինչպես կուսբաժնի հերթական անելիքների, այնպես էլ նրա բնույթի վերաբերյալ. գ) հանձնարարել քաղկոմի կազմբաժնին՝ ինֆորմացիայի գործը վարել այնպես, որ կուսակցական կյանքը լիովին արտացոլվի մամուլի էջերում[47]։

1928 թ. կեսերից «Խորհրդային Հայաստան»-ի «Կուսակցական բաժին»-ը դարձավ Թերթի ամենահիմնական և առաջատար բաժինը։ Այստեղ զետեղվում էին քաղաքային ու գյուղական կուսկազմակերպությունների աշխատանքը լուսաբանող նյութերը, ամփոփվում էր կուսշինարարության ասպարեզում ձեռք բերված դրական փորձը, բարձրացվում էին կադրերի ընտրության, տեղաբաշխման և ուսուցման խնդիրները, մասսայական աշխատանքի կազմակերպման հարցերը և այլն։ Բաժինը հետևում էր կուսակցական հանձնարարությունների կատարման ընթացքին, պրոպագանդում կուսաշխատանքի օրինակելի ձևերն ու մեթոդները, բացատրում կուսկազմակերպությունների և արտադրական ձեռնարկություննե-

---

46 *ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 8, գ. 152, թ. 10։*

47 *Տե՛ս նույն տեղը, ց. 11, գ. 49, թ. 22։*

րի դիրեկտորների փոխհարաբերության կարգը, բացահայտում մի կողմից՝ անհարկի վարչարարության, մյուս կողմից՝ «անտարբեր թողության» վնասակարությունը՝ առանձին կուսակցամակերպիչների պրակտիկայում։ 1932 թ. մայիսին թերթն իր էջերում անցկացրեց «Կուսակցամակերպիչների հանրապետական հնգակա խորհրդակցություն». այդ նպատակի համար ամեն անգամ առանձնացվում էր թերթի մի ամբողջ էջ, որտեղ տպագրվում էին տարբեր ձեռնարկություններից ու շրջաններից ստացվող նյութեր՝ կուսաշխատանքների ստորին օղակները ամրացնելու վերաբերյալ կոնկրետ հաղորդումներով ու գործնական առաջարկներով։ Այդ նյութերն զգալի չափով նպաստեցին տեղերում կուսաշխատանքների աշխուժացմանը և դրական փորձի տարածմանը։

Կուսշինարարության հարցերի քննարկումը մամուլում բարելավելու և ընդլայնելու առնչությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիան 1928 թ. հունվարի 12-ի որոշմամբ անհրաժեշտ համարեց փոխել նաև «Կոմունիստ» հանդեսի բնույթը՝ այն առումով, որ հրատարակվող նյութերը նախատեսված լինեն ինչպես կուսակցական, այնպես էլ արհմիութենական, խորհրդային, կոոպերատիվ լայն ակտիվի համար[48]։ Նույն թվականի հունվարի 25-ին մամուլի բաժինն այդ առթիվ հատուկ շրջաբերական հղեց ՀԿ(բ)Կ բոլոր գավկոմների ագիտ-պրոպ բաժիններին՝ պարտավորեցնելով աջակցել խմբագրության աշխատանքների բարելավմանը, տեղերի հետ կապերի ամրապնդմանը, կուսշինարարության բազմակողմանի լուսաբանմանը ամսագրի էջերում[49]։ Այս միջոցառումները նկատելի կերպով բարելավեցին ամսագրի որակը. հրատարակության վերջին տարում «Կոմունիստ»-ը ավելի հաճախակի ու հանգամանորեն էր անդրադառնում կուսաշխատանքի ոճի, կադրերի դաստիարակության, կուսակցամակերպիչների պատասխանատվության բարձրացման հարցերին։

Գաղափարական պայքարն արդյունավետ ու նպատակասլաց դարձնելու, առհասարակ կուսակցության ներքին ու արտաքին քաղաքականությունն ավելի բազմակողմանիորեն պրոպագանդելու շահերը պահանջում էին ոչ միայն համապատասխանաբար վերակառուցել հրապարակի վրա եղած պարբերականների աշխատանքը, սրել ու կոփել հասարակական ներգործության այդ զենքերը, այլև

48 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 11, գ. 349, թ. 1։
49 Նույն տեղում, ց. 10, գ. 284, թ. 3։

ստեղծել նորերը։ 1928 թ. սկզբներից ՀԿ(բ)Կ Կենտկոմի հրատարակությամբ սկսեց լույս տեսնել «Լենինյան ուղի» հանդեսը[50]։ Խմբագրությունը նշում էր, որ հանդեսի աշխատանքները ծավալվելու են երեք հիմնական ուղղությամբ. ա) Աջակցել հանրապետության կուսակազմակերպությանը «իդեոլոգիական պայքարի ու կուլտուրական հեղափոխության ֆրոնտներում». «Մեր բոլշևիկյան պայքարի դիծը դաշնակիզմի, հայկական սմենովչինականության, սպեցիֆիզմի, մենշևիզմի ու տրոցկիզմի դեմ է՛լ ավելի ուժեղացնելու մարտական գործին ծառայելու, մեր հարվածներն ավելի հատու և սիստեմատիկ դարձնելու համար է, որ ձեռնարկում ենք «Լենինյան ուղի»-ի հրատարակությունը». բ) Լինել «կուսակցության տնտեսական քաղաքականության հարազատ արտահայտիչը», քանի որ «աճող սոցիալիզմի և նրա հակառակորդ տարրերի պայքարը հատուկ ուժգնությամբ տեղի է ունենում հատկապես տնտեսական հողի վրա». մի հանգամանք, որ «պարտադրում է մեր կուսակցությանը հատուկ ուշադրություն նվիրել ժողովրդատնտեսության սոցիալիստական տարրերի ուժեղացման և հմուտ ղեկավարման գործին՝ քաղաքում և գյուղում». գ) Սատար կանգնել կուսակցության շարքերի լենինյան միասնությանը, նպաստել «կուսանդամների տեսական-քաղաքական մակարդակի բարձրացմանը»[51]։

Այս հիմնական նպատակներին հետամուտ՝ «Լենինյան ուղի»-ն զգալի դեր խաղաց կուսակցության անդամների և առհասարակ աշխատավորության գաղափարական-քաղաքական դաստիարակության գործում, ծավալեց պրոպագանդիստական-կազմակերպչական լայն գործունեություն։ Բալշևիկին ընդարձակ էր ամսագրի հետաքրքրությունների շրջանակը. պայքար կուսակցության

---

50 «Լենինյան ուղին» ուներ Քաղաքական, տնտեսական և կուլտուրական ամսագիր ենթանվանումը։ Առաջին համարը, որը միացյալ էր (1—2), լույս տեսավ փետրվար-մարտին։ 1929 թվականից հրատարակվում էր իբրև ՀԿ(բ)Կ Կենտկոմի քաղաքական-տնտեսական ամսագիր։ Մինչև 1933 թ. մայիսը պատ. խմբագիրներ եղել են Ե. Զուրարը, Հ. Կոստանյանը, Ա. Ամատունին, խմբ. կոլեգիայի անդամներ՝ Ա. Մռավյանը, Լ. Արիսյանը, Հ. Ազատյանը, Շ. Ամիրխանյանը, Ա. Խանջյանը, Ս. Կասյանը, Թ. Մանդալյանը, Հ. Եկավյանը, Ս. Վարդանյանը, Ս. Շահվերդյանը, Դր. Սիմոնյանը, Վ. Կոստանյանը, Հմ. Հովհաննիսյանը, Ա. Ադոյանը, Պապիկ Մկրտչյանը, Ս. Գրիգորյանը, Պ. Պետրոսյանը, Ա. Արզումանյանը, Ա. Բրզնունին։ Հաճախ հրատարակվել է միասնական համարներով։ 78—164 էջ (26×17 սմ), տպաքանակը՝ 800—1500։

51 «Լենինյան ուղի», 1928, № 1—2, էջ 1—2։

գծից կատարվող շեղումների դեմ, դաշնակցական գաղափարախոսության քննադատություն, կոմունիստական կուսակցության տնտեսական բաղաքականության հանդամանալից պարզաբանում, կուլտուրական հեղափոխության խնդիրների արծարծում, կուսշինարարության փորձի ընդհանրացում, գիտական նվաճումների մասսայականացում և, վերջապես, հանրապետությունում հրատարակվող մամուլի քննարկում՝ հատուկ տեսությունների ձևով։ Հանդեսն անդրադառնում էր նաև Հայաստանի հեղափոխական շարժումների պատմությանը, միջազգային կոմունիստական շարժման, գործադուլային պայքարի, դիվանագիտության հարցերին։ Այս ամենը նպաստում էր ընթերցողների քաղաքական մտահորիզոնի ընդլայնմանը, բարձրացնում նրանց տեսական պատրաստականությունը։ Վերոհիշյալ արծարծումներին համապատասխան՝ ամսագիրն ուներ հետևյալ բաժինները՝ Հասարակական-քաղաքական, Իդեոլոգիական, Կուսակցական շինարարություն, Տնտեսական, Գիտական, Աշխատանքը գյուղում, Դիսկուսիոն, Մեր գիտական և հասարակական հիմնարկները, Գրախոսություն։

«Լենինյան ուղի»-ն պրոպագանդում էր Համկ(բ)կ և Հկ(բ)կ համագումարների և Կենտկոմի պլենումների որոշումները, սոցիալիստական ինդուստրացման և գյուղի կոլեկտիվացման՝ կուսակցության մշակած գլխավոր գիծը, աջակցելով նրա կենսագործմանը։ Այս առումով ուշադրավ են հատկապես ինքնաքննադատության ծավալման, բյուրոկրատիզմի դեմ պայքարն ուժեղացնելու, խնայողության ռեժիմի կիրառման, կոլեկտիվացման ժամանակ թույլ տրված սխալների շտկման վերաբերյալ ամսագրի ունեցած հոդվածները, որոնց կանդրադառնանք աշխատության համապատասխան էջերում։

Ուշագրավ են «Լենինյան ուղի»-ում զետեղված մամուլի տեսությունները, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում մեր հանրապետության պարբերական մամուլի պատմությունն ստեղծելու համար, քանի որ զգալի չափով պատկերացում են տալիս ոչ միայն առանձին օրգանների աշխատանքի, այլև առհասարակ մամուլի դերի ու խնդիրների վերաբերյալ այդ ժամանակ գոյություն ունեցած ըմբռնումների մասին։ Հանդեսն անդրադարձել է «Կոմունիստ», «Экономический вестник Армении», «Երիտասարդ բոլշևիկ», «Գրական դիրքերում», «Նոր ուղի», «Անաստված», «Սոցիալիստական ագրոնոմիա» և այլ պարբերականների առանձին համարներին, անելով մի շարք արժեքավոր դիտողություններ։

«Լենինյան ուղի»-ն հիմնականում տեսական բնույթ ուներ, ուստի և, բնականաբար, չէր կարող հանդամանորեն արծարծել կուսաշխատանքի հետ կապված գործնական խնդիրները։ Այդ նպատակի համար 1932 թ. կեսերից սկսեց հրատարակվել առանձին պարբերական՝ «Կուսակցական շինարարություն» հանդեսը[52], որն իր բնույթով դալիս էր շարունակելու 1928 թ. ընդհատված «Կոմունիստ»-ի աշխատանքը. այս ամսագիրը ևս նախատեսված էր միջին և ստորին կուսակցական ակտիվի համար։ «Կուսակցական շինարարություն»-ը լուսաբանում էր տեղական կուսկազմակերպությունների աշխատանքը, մասսաների կազմակերպման ու դաստիարակության գործում նրանց ձեռք բերած հաջողությունները, վերլուծում և ընդհանրացնում էր դրական փորձը, քննադատում աշխատանքի մերժելի ձևերն ու մեթոդները, արծարծում էր կուսկազմակերպիչների ճիշտ ընտրության, դաստիարակության և առաջքաշման հարցերը, տպագրում կոնսուլտացիոն հոդվածներ։ Բացի այդ, ամսագիրը հրապարակում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումները, հրահանգներն ու շրջաբերականները, տալիս էր կուսակցական աշխատանքի լայն ինֆորմացիա։ Հանդեսի բնույթի և արծարծած խնդիրների մասին ընդհանուր պատկերացում տալու համար հիշատակենք թեկուզ և նրա էջերում պարբերաբար տեղ գտած հիմնական բաժինները՝ Կուսաշխատանքն արտադրության մեջ, Կուսաշխատանքը գյուղում, Հենակետային բջիջները, Մարքսլենինյան դաստիարակություն, Կուսստորին օղակներում, Կուսաշխատանքը տրանսպորտում, Կուսկադրեր, ՀԿ(բ)Կ Կենտկոմում։ Ամսագրին աշխատակցում էր հիմնականում հանրապետության միջին և ստորին կուսակտիվը։

Կոմունիստների քաղուսուցմանը նպաստելու[53], պրոպագանդիստներին, ագիտատորներին, կուսկաբինետների աշխատողներին օգնելու նպատակով 1934—1935 թթ. հրատարակվում էր «Պրո-

---

52 «Կուսակցական շինարարություն»-ը ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Երևանի քաղաքային կոմիտեի օրգանն էր։ Պատ. խմբագիրն էր Ս. Գրիգորյանը, խմբագրական կոլեգիայի կազմի մեջ եղել են՝ Ա. Ադոյանը, Ա. Արզումանյանը, Հ. Թաթարյանը, Ա. Ղազարյանը, Հ. Մոկացյանը, Ռ. Վինչբերգը, Վ. Տարախչյանը։ 50—70 էջ (23×15 սմ), տպաքանակը՝ 1250—1350։ Ունեցել է միացյալ համարներ։

53 Դեռևս 1931 թ. Պետհրատը թարգմանաբար լույս ընծայեց տարրական կուսակցական դպրոցների ունկնդիրների համար Համ Կ(բ)Կ Կենտկոմի և Մոսկվայի կոմիտեի հրատարակած «Կուսուսուցման ուղեցույց» խորագրով ժուռնալ-դասագրքի հինգ համարները՝ 5000 օրինակ տպաքանակով։

պագանդիստ» հանդեսը[54]։ «Պրոպագանդիստ»-ը արծարծում էր մարքս-լենինյան ուսուցման կազմակերպման ու ղեկավարման հարցերը՝ ինչպես գործարանների, տրանսպորտի ու շինարարության, այնպես էլ խորհրդատեսությունների, կոլտնտեսությունների ու գիտական-հասարակական հիմնարկների կուսակազմակերպություններում, անդրադառնում էր կուսուսուցման մեթոդական խնդիրներին (ուսման պլանների կազմում, դասագրքերի ու գրականության օգտագործում և այլն)։ Հանդեսում տպագրվում էին կոնսուլտացիաներ մարքս-լենինյան տեսության, կուսակցության ընթացիկ քաղաքականության, միջազգային հեղափոխական շարժումների կարևորագույն խնդիրների շուրջը։ Խմբագրությունը սերտ կապի մեջ էր կուսակցական ուսուցման ցանցի ունկնդիրների, ագիտատորների ու պրոպագանդիստների հետ և պարբերականի էջերում տեղ էր տալիս նրանց հուզող հարցերին։ «Պրոպագանդիստ»-ը զգալի աջակցություն ցույց տվեց կուսակցական կադրերի պատրաստմանը, նրանց մարքս-լենինյան ուսուցումը կազմակերպելուն, կուսաշխատանքի որակի բարելավմանը։

1935 թ. հուլիսին ՀամԿ(բ)Կ Անդրկոմը քննարկեց հանրապետական կուսակցական հանդեսների հարցը և ընդունեց համապատասխան որոշում[55]։ Երկրային կոմիտեն ընդգծեց, որ անդրկովկասյան հանրապետություններում հրատարակվող կուսակցական պարբերականները («Большевик», «Պարտիա մշնեբլոբա», «Ֆիրքե Իշչիսի» և «Պրոպագանդիստ») լուրջ օգնություն են ցույց տալիս կուսակցական կազմակերպություններին և կուսակտիվին՝ նրանց ամենօրյա աշխատանքում, լուսաբանում են կուսակցական և հասարակական-քաղաքական կյանքի կենսական հարցերը, առանձին կուսակազմակերպությունների գործունեությունը, պրոպագանդում են կուսակցության որոշումները և այլն։ Միաժամանակ Անդրերկոմը նշեց մի շարք թերություններ, որոնցից հիմնականները համարեց՝ ա) «Թարգմանական նյութերի՝ առատ և տեղական փոր-

---

54 «Պրոպագանդիստ»-ը ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդայի բաժնի օրգանն էր։ Առաջին համարը լույս է տեսել 1934 թ. դեկտեմբերին, հրատարակվել է մինչև 1935 թ. հուլիսը։ Պատ. խմբագիրն էր Վ. Դաստակյանը, խմբ. կոլեգիայի անդամներ էին Նշան Մակինցը, Ս. Հարությունյանը, պատ. քարտուղարն էր Ասուր Վենկառնը (Աս. Ասատրյան)։ 72—120 էջ (25×17 սմ), տպաքանակը՝ 2000—4000։ Ունեցել է միացյալ համարներ։

55 Տե՛ս «Պրոպագանդիստ», 1935, № 7, էջ 58—59։

ձը լուսաբանող ինքնուրույն հոդվածների ու թղթակցությունների բիչ լինելը (առանձնապես «Պրոպագանդիստ»-ում)». բ) «Ներկուսակցական աշխատանքի հարցերի, կուսակցական կադրերի աճման, «կուսակցական տնտեսության» կարգավորման, կուսակցական պրոպագանդայի և ագիտացիայի հարցերի անբավարար լուսաբանումը («Պարտիիս մշեններլորա», «Ֆիրբն Իշչիսի»)». գ) «Ժուռնալների սիստեմատիկ ուշ լույս տեսնելը, որի հետևանքով նրանցում տպագրված նյութերն զգալի չափով կորցնում են իրենց ակտուալությունն ու հնանում են և այլն»:

Անդրերկոմն առաջարկեց հանրապետական կուսակցական հանդեսների խմբագրություններին՝ «ուժեղացնել կուսակցական կյանքի հարցերի լուսաբանումը, լայնորեն կազմակերպել տեղական կուսկազմակերպությունների աշխատանքի փորձի փոխանակումը, կուսակցական աշխատանքի օրինակելի գրվածքի ցուցադրումը և այլն, կրճատել թարգմանական հոդվածների թիվը՝ հօգուտ տեղական ինքնուրույն նյութերի ավելացման»: Ցուցում տրվեց հանրապետական կենտկոմներին՝ միջոցներ ձեռնարկել ժուռնալները ժամանակին (յուրաքանչյուր ամսվա 15-ից ոչ ուշ) լույս ընծայելու համար և արգելել միացյալ համարների հրատարակումը՝ առանց Կենտկոմի բյուրոյի հատուկ թույլտվության:

Անդրերկոմն անհրաժեշտ համարեց վերակազմել «Պրոպագանդիստ» հանդեսը և հրատարակել իբրև ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոր օրգան, որը «լուսաբանելու է կուսակցական շինարարության ընդհանուր հարցերը («Партработник Закавказья» ժուռնալի տիպի)»: Այս առաջարկի համաձայն՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմը քննության առավ «Պրոպագանդիստ»-ի վերակազմման հարցը և որոշեց առաջիկայում հրատարակել նոր ամսագիր: Նշանակվեց պատասխանատու խմբագիր, հաստատվեցին խմբագրական կոլեգիայի անդամներ: Կենտկոմը նոր հանդեսի հիմնական խնդիրները համարեց՝ «կուսակցական-կազմակերպչական, պրոպագանդիստական, ագիտատորական աշխատանքի ակտուալ հարցերի սիստեմատիկ լուսաբանումը. տեղական կազմակերպությունների փորձի լայն փոխանակումը. կուսակցական աշխատանքի գրվածքի լավագույն օրինակների ցուցադրումը (կուսակցական կադրերի պատրաստում, «կուսակցական տնտեսության» կանոնավորում, կուսակցական օրերի կազմակերպում, կուսդպրոցների, խմբակների.

պրոպագանդիստների ու պրոպագանդիստների դպրոցների, կուսակրինեների աշխատանք, ագիտատորների, գրույց կազմակերպողների՝ թերթերի ընթերցողների հետ տարվող աշխատանք, ԼԿԵՄ կազմակերպությունների կուսակցական ղեկավարություն). ընդհանուր-քաղաքական կարևորագույն հարցերի սիստեմատիկ լուսաբանումը. կուսակցության որոշումների մասսայականացումը և հակակուսակցական խմբավորումների դեմ կուսակցության մղած պայքարի պատմության լուսաբանումը»[56]։

Այս խնդիրների կատարմանը ձեռնամուխ եղավ, ահա, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոր օրգան «Կոմունիստ» ամսագիրը[57], որը 1936 թ. սեպտեմբերից վերանվանվեց «Կուսաշխատող»[58]։ Գրեթե միաժամանակ սկսեց լույս տեսնել «Ագիտատորի բլոկնոտ» երկշաբաթյա պարբերականը[59], որը տպագրում էր նյութեր, թվական տվյալներ, հիշարժան տարելիցներին նվիրված հաղորդումներ, միջազգային կյանքի տեսություններ՝ ագիտատորներին և պրոպագանդիստներին օգնելու նպատակով[60]։ Նշենք նաև, որ դեռևս 1934 թ. Լենինականում հրատարակվել էին «Պրոպագանդիստ» փոքրածավալ պարբերականի 5 համարները[61]։

---

56 «Պրոպագանդիստ», 1935, № 7, էջ 59—60։

57 «Կոմունիստ»-ի առաջին համարը լույս տեսավ 1935 թ. հոկտեմբերին։ Պատ. խմբագիր՝ Հ. Հովհաննիսյան, խմբ. կոլեգիայի մեջ մտնում էին նաև՝ Լ. Աբիսյանը, Վ. Գուրգենյանը, Վ. Դաստակյանը, Մ. Լոկշինան, Գ. Մատուրովը, Մ. Ենգիբարյանը։ 38—105 էջ (25×17 սմ), տպաքանակը՝ 1800—3000։ 1936 թ. 4—5-րդ միացյալ համարից՝ օրգան ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Երևանի քաղաքային կոմիտեի. պատ. խմբագիր՝ Ա. Ղազարյան։

58 «Կուսաշխատող»-ը ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Երևանի քաղաքային կոմիտեի օրգանն էր։ Առաջին պատ. խմբագիրն էր Գ. Սահակյանը, խմբ. կոլեգիայի անդամներն էին Մ. Դանիելյանը, Հովհ. Պողոսյանը, Գ. Շաղդամյանը, Ա. Ղազարյանը։ 75—120 էջ (22×14 սմ), տպաքանակը՝ 1600—1925։

59 «Ագիտատորի բլոկնոտ»-ը ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուսակցական պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի հրատարակությունն էր։ 1936 թ. լույս տեսավ 7 համար։ Պատ. խմբագիրն էր Գ. Շաղդամյանը։ 48—140 էջ (19×12 սմ), տպաքանակը՝ 3000—6000։

60 Նույն տիպի հրատարակություն էր ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի քարտուղարության որոշմամբ 1933 թ. սեպտեմբերից լույս տեսնող «Ագիտատոր-պրոպագանդիստի բլոկնոտ» երկամսյա պարբերականը։ Մեզ ծանոթ է միայն № 1-ը։ Խմբագիր՝ Ա. Մարգարյան։ 27 էջ (17×11 սմ), տպաքանակը՝ 1300։

61 «Պրոպագանդիստ»-ը ՀԿ(բ)Կ Լենինականի քաղկոմին կից կուսուսուցիչների օրգանն էր։ Պատ. խմբագիր՝ Ե. Սարգսյան։ 8 էջ (30×22 սմ), տպաքանակը՝ 2000։ № 4—5-ը միացյալ։

* * *

Պարբերական մամուլը էական նշանակություն էր տալիս կոմերիմիության աշխատանքների բարելավման, երիտասարդության գաղափարական դաստիարակության խնդիրներին՝ առաջնորդվելով ՀամԿ(բ)Կ XIV համագումարի հայտնի ցուցումով, թե՝ «անհրաժեշտ է առաջին տեղը դնել տնտեսական աճման կապակցությամբ մասսաների նոր պահանջների և կոմերիմիության աշխատանքի մեթոդների, ձևերի ու բովանդակության միջև եղած անհամապատասխանությունը։ Աշխատանքը այդ պահանջներին հարմարեցնելը, այսպիսով, կոմերիտական շարժման կենտրոնական պրոբլեմն է ընթացիկ բեկման ժամանակաշրջանում»[62]։ Այդ անհամապատասխանության հիմնական արտահայտությունն այն է, նշում էր համագումարը, որ «պրոպագանդան և ագիտացիան, բջիջների օրակարգն ու ամենօրյա աշխատանքը բավականաչափ կապված չեն նյութական բարեկեցության հասնելու աճող ձգտման պահանջմունքների հետ. կապն անձնականի և հասարակականի միջև չի դրված աշխատանքի կենտրոնում. պրիոմներն ու մեթոդները չեն համապատասխանում ակտիվության աճմանը (բյուրոկրատիզմի տարրերի առկայությունը ապարատում) և այլն»[63]։

Կոմերիմիության խնդիրներին անդրադառնալիս՝ պարբերական մամուլը շեշտը դնում էր խոսքի և գործի միասնության լենինյան սկզբունքի կիրառման, անձնական և հասարակական շահերի ներդաշնակության հասնելու, երիտասարդությանը հեղափոխական ավանդներով դաստիարակելու, նրա գաղափարական-քաղաքական կուլտուրայությունն ուժեղացնելու, աշխարհայացքի ձևավորումը ճիշտ հունով տանելու անհրաժեշտության վրա։ «... Չի կարելի այլևս բավականանալ ընդհանուր խոսքերով և անորոշ, թեկուզ և չափազանց «կրակոտ» ու «վճռական» հայտարարություններով,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը «Միշտ հառնդուն և տոկուն» խորագրով առաջնորդողում։—Հարկավոր է աշխատանք, անդուլ ու համառ աշխատանք։ Հարկավոր է շրջապատի մանրակրկիտ ուսումնասիրություն։ Հարկավոր է գիտության կարևորագույն գենքերի յուրացում, որովհետև միմիայն զինված՝ այդպես կարող կլինի նոր երիտասարդությունը կանգնել հին գվարդիայի

---

62 «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 293—294։

63 Նույն տեղում, էջ 295։

կողքին և մշտապես վառ պահել սոցիալիստական դարբնոցի կրակը»։ Ահա թե ինչու, եղրակացնում էր թերթը, երիտասարդության քաղաքական և կուլտուրական դաստիարակության խնդիրները «միշտ պիտի դրավեն առաջին տեղը կոմերիմիության բոլոր աշխատանքների մեջ»[64]։

Այսպես կոչված «կոմերիտական մկրատի», այսինքն՝ ստեղծված նոր պայմանների և աշխատանքի հին ձևերի ու մեթոդների միջև եղած խզումը վերացնելու ուղղությամբ զգալի ջանքեր գործադրեց կոմերիտական մամուլը՝ ինքը ևս վերակառուցելով իր աշխատանքը։ Սկսած 1926 թ. սկզբից, «Ավանգարդ»-ն ավելի սերտացրեց կապերը հանրապետության կոմերիտական կազմակերպությունների հետ. խմբագրությունը հաճախակի հրավիրում էր ընթերցողների հավաքներ, հաշիվ էր տալիս իր կատարածի և առաջիկա անելիքների մասին, ուշադրությամբ հաշվի էր առնում քննադատական դիտողություններն ու առաջարկները, հրապարակում դրանք «Ավանգարդ»-ը ընթերցողների դատարանի առաջ ընդհանուր խորագրի ներքո։ 1930 թվականից Հայաստանի կոմերիտմիության կենտրոնական օրգանը դարձավ օրաթերթ, ավելացավ նաև տպաքանակը։

«Ավանգարդ»-ը կարևոր տեղ էր հատկացնում երիտասարդությանը կոմունիստական կուսակցության շուրջը համախմբելու, կոմերիտմիության նկատմամբ կուսակցական ղեկավարությունն ուժեղացնելու հարցերին։ Թերթը բազմիցս հավատել է կոմերիտմիության նվիրվածությունը Համկ(բ)կ լենինյան Կենտկոմին, հավատարմությունը բոլշևիզմին, մեր հայրենիքի հեղափոխական հին սերնդի հայրենասիրական ու ինտերնացիոնալիստական ավանդներին, ընդգծել է սոցիալիզմի կառուցման գործին նվիրվելու նրա անձնուրաց պատրաստակամությունը։ «Բոլշևիկյան սերունդների միասնականությունը,— կարդում ենք թերթի առաջնորդողներից մեկում,— հեղափոխական հին գվարդիայի անմիջական ղեկավարությունը, նրա երկար տարիների պայքարի փորձը, մարտական բոլշևիզմի տրադիցիաները եղել են մեր աշխատանքի և պայքարի հիմնական ուղեցույցը և գլխավոր երաշխիքը մեր նվաճումների և հաղթանակների։ Ահա թե ինչու կոմերիտմիությունը միշտ վճռական հարվածներ է տվել բոլոր տեսակի փորձերին, որոնք ձգտել են թերագնահատել կուսակցության ղեկավարությունը, հակադրել

---

64 «Խորհրդային Հայաստան», 1926, № 35։

բոլշևիկյան սերունդները միմյանց, քարոզել ավանգարդիզմի թեորիան և այլն»[65]։

«Ավանգարդը»-ը մոտիկից հետևում էր կոմերիտական քաղուսուցման խմբակների աշխատանքին, տպագրում պարապմունքների ծրագրերն ու պլանները, մեթոդական ցուցումներ էր տալիս, լուսաբանում էր լավագույն քաղխմբակների փորձը, քննադատում ձևական մոտեցման փաստերը[66]։ 1930 թ. ապրիլից թերթում բացվեց Տեսական ուսուցման անկյուն, ուր զետեղվում էին տեսական բնույթի հոդվածներ (մեծ մասամբ թարգմանական)։ Տպագրելով այս բաժնի առաջին հոդվածը («Մարքսիզմ-լենինիզմը պրոլետարիատի աշխարհայացքն է»), խմբագրությունը միաժամանակ ծանուցեց. «Ավանգարդ»-ը կազմակերպում է հեռակա կոնսուլտացիա իր ընթերցողների, մասնավորապես տեսական հոդվածներ ընթերցողների համար գանազան հարցերի շուրջ։ Ընկերները պետք է գրեն ինչպես այն կետերի մասին, որոնք մութ են տեսական հոդվածներում, նույնպես և այն հարցերի մասին, որոնց համար ցանկանում են պատասխան ստանալ... Հարցերը և պատասխանները պարբերաբար կտպվեն «Ավանգարդ»-ում»[67]։ Սա իրոք գործնական օգնություն էր երիտասարդության քաղուսուցմանը։ 1934 թ. դեկտեմբերից բացվեց նաև Պրոպագանդիստի անկյուն։

* * *

Երիտասարդության մարքս-լենինյան դաստիարակության, կոմերիտական աշխատանքների ճիշտ կազմակերպման, կոմերիտմիությանը սոցիալիստական շինարարության մեջ ավելի ակտիվորեն ներգրավելու գործում մեր հանրապետությունում զգալի դեր խաղաց նաև «Երիտասարդ բոլշևիկ» ամսագիրը, որ սկսեց լույս տեսնել 1926 թ. նոյեմբերից[68]։ «Երիտասարդ բոլշևիկ»-ը մասնա-

---

65 «Ավանգարդ», 1930, № 23։

66 ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմը 1934 թ. մարտի 10-ին և հոկտեմբերի 23-ին հրատարակեց «Քաղուսուցման ֆրոնտում» խորագրով թերթի երկու բացառիկ համարները, որոնցում արծարծվում են կոմերիտական քաղուսուցման կազմակերպման մի քանի գործնական խնդիրներ։

67 «Ավանգարդ», 1930, № 88։

68 «Երիտասարդ բոլշևիկ»-ը ՀԼԿԵՄ Կենտրոնական և Երևանի քաղաքային կոմիտեների օրգանն էր. 1928 թ. № 1-ից ուներ Գրական-գեղարվեստական, քաղաքական-տնտեսական և կոմերիտական ամսագիր, 1929—1931-ին՝ Կոմերիտական, քաղաքական-տնտեսական և գրական ամսագիր ենթանվանումը։ Պատասխանատու խմբագիրներ եղել են Յամփրթը (Հովհաննես Տեր-Դանիելյան), Հ. Հովհաննիսյանը, Ա. Արզումանյանը, Ն. Մեհրաբյանը, Ստ. Կուրտիկյանը, Հր. Միր-

յական-երիտասարդական հանդես էր՝ նախատեսված հիմնականում կոմերիտական ստորին ակտիվի համար և կոչված էր լինելու առաջին հերթին նրա «գործնական աշխատանքների խորհրդատուն և ուղեցույցը»։ Հայաստանի միակ երիտասարդական այս ամսագիրը, ծանուցում էր խմբագրությունը, «Ավանգարդ» թերթի հետ միասին «պետք է հանդիսանա սոցիալիստական շինարարության ճակատում աշխատավոր երիտասարդության կոլեկտիվ պրոպագանդիստն ու կազմակերպիչը», «խարազանի երկչոտներին և տատանվողներին և խրախուսանքի ապդու խոսք ասի բոլոր նրանց, ովքեր աջակցում են կուսակցությանը սոցիալիզմի կառուցման գործում»[69]։

«Երիտասարդ բոլշևիկ»-ի 7 տարվա համարների ուսումնասիրությունից ակներև է դառնում, որ խմբագրության աշխատանքն ընթացել է երեք հիմնական ուղղություններով.

ա) Կոմերիտական-կազմակերպչական հարցերի, առհասարակ կոմերիտական շինարարության խնդիրների քննարկում՝ կապված տեղերում տարվող աշխատանքի բարելավման, սոցիալիստական շինարարության առաջադրած նոր խնդիրներին համապատասխան՝ երիտասարդության շրջանում աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների արդյունավետ կիրառման հետ («Կոմերիտական շինարարության խնդիրներ», «Կոմսոմոլի աշխատանքի թեորիան և պրակտիկան» բաժինները). հանդեսը տպագրում էր ինչպես ընդհանուր-դիրեկտիվային բնույթի հոդվածներ, ցուցում-հրահանգներ և այլ կարգի նյութեր, այնպես էլ՝ կոնսուլտացիաներ, դրական փորձն ընդհանրացնող հաղորդումներ, կոմերիտական կարգապահությունը խախտելու, հասարակական հանձնարարություններից խուսափելու փաստերը, կազմակերպչական-դաստիարակչական աշխատանքներում տեղ գտած սխալները քննադատող նյութեր։

բ) Կոմերիտականների գաղափարական-քաղաքական դաստիարակության, մարքս-լենինյան տեսական պատրաստականության խնդիրների քննարկումը՝ կապված սոցիալիստական շինարարության տարբեր բնագավառներում երիտասարդության ակտիվ

դոյանը, պատ. քարտուղար՝ Գուրգեն Սարյանը. տարբեր տարիներին խմբ. կոլեգիայի անդամներ էին Լ. Արիսյանը, Ն. Դաբաղյանը, Լ. Մարտիրոսյանը, Ա. Քարամյանը, Ամատունին, Հ. Եկավյանը, Տ. Խորունին, Օվանեսովը։ 106—184 էջ (26×18 սմ), տպաքանակը՝ 1100—2500։ Հրատարակվել է մինչև 1933 թ. հոկտեմբերը։ Ունեցել է միացյալ համարներ։

69 «Երիտասարդ բոլշևիկ», 1926, № 1։

մասնակցությունն ապահովելու հետ, և այդ առնչությամբ՝ քաղաքական-տնտեսական կամպանիաների լայն լուսաբանում («Կուսակցության գլխավոր դծի համար», «Հակալենինյան թեքումների դեմ», «Քաղաքական-տնտեսական» բաժինները). ամսագիրը դիտեղում էր մարքս-լենինյան ուսմունքի առանձին պրոբլեմներին նվիրված պրոպագանդիստական հոդվածներ, տրոցկիստական-զինովևյան օպոզիցիայի, աջ և «ձախ» թեքումների հակալենինյան էությունը մերկացնող նյութեր, կոմերիտական քաղաքական ուսուցման կազմակերպմանը վերաբերող հոդվածներ. լուսաբանում էր ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի ու միջազգային երիտասարդական հեղափոխական շարժումների դրվագները, ընդգծում սերունդների ճիշտ փոխհարաբերության, հեղափոխական ավանդների պահպանման ու զարգացման անհրաժեշտությունը, անդրադառնում կոմերիմիության անելիքներին՝ խնայողության ռեժիմի կիրառման, ինքնաքննադատության ծավալման, սոցմրցման կազմակերպման ասպարեզներում և այլն։

դ) Կուլտուրական հեղափոխության իրագործման մեջ կոմերիմիությանը և առհասարակ երիտասարդությանը վերապահված դերի, նրա առջև ծառացած խնդիրների քննարկում՝ կապված նոր սերնդի ընդհանուր մտավոր զարգացման, գործնական գիտելիքների յուրացման, երիտասարդ քաղաքացու հասարակական-բարոյական կերպարի ձևավորման հետ («Գրական», «Գիտական», «Կենցաղային վերակառուցման ուղիով», «Հակակրոնական պայքարի ֆրոնտում» և այլ բաժիններ). հրատարակության առաջին շրջանում (1926—1928 թթ.) հանդեսում մեծ տեղ ուներ հատկապես գրական-գեղարվեստական բաժինը, ուր լայնորեն տպագրվում էին երիտասարդ և սկսնակ գրողների գործերը։ Թարգմանաբար հրատարակվել են նաև Հ. Բարբյուսի «Չար աչքը» պատմվածքը, հատվածներ Մ. Գորկու «Իմ համալսարանները», Դ. Ֆուրմանովի «Չապաև», Ա. Ֆադեևի «Չախչախում», Անդրե Մարտիի «Սև ծովի ապստամբությունը» գրքերից։ Նշենք, սակայն, որ 1929 թ. սկսած այս բաժինը թուլացավ, փոքրացավ և ի վերջո վերանվանվեց «Գրական էջ»։ Ճիշտ է, գրախոսություններ և գրական-քննադատական բնույթի նյութեր առաջվա պես տպագրվում էին, բայց գրական ստեղծագործությունների հրապարակումը խիստ սահմանափակվեց։ Խմբագրությունը որոշ չափով վերակառուցեց ամսագրի աշխա-

տանքները, նրան տալով մասսայական կոմերիտական պարբերականի բնույթ։ Այս հանգամանքը հնարավորություն էր տալիս և միաժամանակ պարտավորեցնում ավելի խոր ու ծավալուն լուսաբանելու «կոմերիմիության հերթական խնդիրները, աշխատանքի փորձը», ավելի շատ տեղ հատկացնելու «ընթացիկ քաղաքական կյանքին, կուսակցության հերթական խնդիրների և լոզունգների լուսաբանմանը, միջազգային կացության, տնտեսական-կուլտուրական հարցերին»[70]։ Այս ուղղությամբ էլ ընթացավ հանդեսի հետագա աշխատանքը։

Մեր հանրապետության երիտասարդության ու սովորող պատանեկության քաղաքական դաստիարակությանը և հասարակագիտական ուսուցմանը նպաստեցին «Երիտասարդ հարվածային» խորագրով ժուռնալ-դասագրքի պարբերական հրատարակությունները, որ իրագործում էր Պետհրատի «Ժուռնալ-դասագրքերի խմբագրություն»-ը 1931—1932 թվականներին։ 4—5 մամուլ ծավալով և 5000—7000 տպաքանակով լույս տեսնող այդ գրքույկները դալիս էին լրացնելու և ավելի ամբողջական ու նպատակասլաց դարձնելու այդ տարիներին գործածության մեջ եղած հասարակագիտական դասագրքերը, դյուրացնելու նախատեսված ուսումնական ծրագրի յուրացումը, աշխատող և սովորող երիտասարդությանը հաղորդակից դարձնելու սոցիալիստական շինարարության ընթացիկ խնդիրներին, միջազգային իրադրությանը, հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումներին։

3

Սոցիալիստական ինդուստրացման խնդիրները քննարկելիս պարբերական մամուլը հատուկ ուշադրություն էր դարձնում այս ասպարեզում կուսակցության քաղաքականության կենսագործման հետ առնչվող այնպիսի կարևոր միջոցառումների պարզաբանմանն ու կիրառմանը, ինչպիսիք էին՝ խնայողության ռեժիմը, արդյունաբերության ռացիոնալիզացիան, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ինքնարժեքի և դների իջեցումը, արտադրա-

---

70 «Երիտասարդ բոլշևիկ», 1929, № 1—2։

կան խորհրդակցությունները, աշխատանքային կարգապահությունը, կատարման ստուգումը։ Այս ամենը սոցիալիստական կուտակման կարևոր օղակներն էին, երկրի ինդուստրացման հիմքը, ինչպես նշեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1926 թ. ապրիլյան պլենումը՝ «Տնտեսական դրության և տնտեսական քաղաքականության մասին» բանաձևում[71]։

Հայաստանում լույս տեսնող թերթերն ու հանդեսները այս խնդիրներին անդրադառնալիս ելակետ էին ընդունում ՀամԿ(բ)Կ համագումարների, Կենտկոմի պլենումների համապատասխան որոշումներն ու ցուցումները, Վ. Ի. Լենինի «Ինչպես վերակազմել բանդյուղտեսչությունը», «Լավ է քիչ, բայց լավ», «Շաբաթօրյակների մասին» ծրագրային հոդվածները, նրա այն գրություններն ու նամակները, որոնք առաջին անգամ մամուլում հրապարակվեցին հենց այդ տարիներին։

«Պարբերական մամուլի դրվածքը՝ խնայողության ռեժիմի համար պայքար մղելու կապակցությամբ» որոշման մեջ[72] ՀամԿոմկուսի Կենտկոմը բացահայտեց մամուլի աշխատանքում առկա թերությունները (բանդյուղթղթակիցների անբավարար ներգրավում խնայողության ռեժիմի կամպանիայում, արտադրական խորհրդակցությունների թույլ լուսաբանում, աշխատանքային կարգապահության և արտադրողականության բարձրացման հարցերի անբավարար քննարկումը, նվաճումների հաշվառման բացակայություն, ստանձնած պարտավորությունների կատարման ոչ հետևողական ստուգում և այլն)։ Միաժամանակ խմբագրությունների առջև խնդիր դրվեց՝ ավելի խորացնել և համակողմանի դարձնել խնայողության ռեժիմի կիրառման հարցերի քննությունը։ Կենտկոմը մասնավորապես անհրաժեշտ համարեց՝

1. Կոնկրետացնել մամուլի ելույթների բովանդակությունը՝ ընդհանուր ագիտացիայից անցնելով խնայողության արդյունքների լուսաբանմանը, իրական նվաճումների հաշվառմանը, շինծու կրճատումների մերկացմանը։

2. Հետևողականորեն առաջնություն տալ տնտեսության առավելագույն խոշոր հարցերին։

3. Հատուկ ուշադրություն նվիրել բանվորական լայն մասսաներին և բանթղթակիցներին կամպանիայի մեջ ներգրավելուն։

---

71 «ՍՄԿՊ-Ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 329—340։

72 Տե՛ս «Պարտիական և սովետական մամուլի մասին», էջ 495—498։

4. Անխնա, առանց դեմքին ու դիրքին նայելու, մերկացնել «շարիքների կոնկրետ կրողներին», այն անձանց, ովքեր մեղավոր են անտնտեսվարության, թափթփվածության, վատնումների մեջ։

5. Վճռականորեն պայքարել խնայողության ռեժիմի նկատմամբ այնպիսի միակողմանի մոտեցման դեմ, որն «արտահայտվում է աշխատավարձից կտրելու, բանվորների կենցաղային կարիքների ուղղությամբ ծախքերի հոդվածները սեղմելու, կոլեկտիվ պայմանագրերը չկատարելու և կրճատելու փորձերի մեջ և այլն»։

6. Անհաշտ պայքար մղել խնայողությունը արտադրանքի որակն իջեցնելու հաշվին կատարելու դեմ։

Համկ(բ)կ Կենտկոմի այս, ինչպես նաև վերոհիշյալ որոշման մեջ նշված մյուս պահանջների ոգով վերակառուցելով իրենց աշխատանքը, Խորհրդային Միության պարբերականները ավելի գործնականորեն սկսեցին զբաղվել խնայողության ռեժիմի հարցերով։

Զգալի դեր խաղաց նաև աղգային մամուլը։ Մեր հանրապետության թերթերն ու հանդեսները ևս ձեռնամուխ եղան Համկ(բ)կ Կենտկոմի ցուցումով 1926 թ. գարնանից անցկացված խնայողության ռեժիմի կամպանիային։ Մամուլը բացատրում էր այն կարևոր նշանակությունը, որ ուներ այդ միջոցառումը սոցիալիստական կուտակումն ավելացնելու և ինդուստրացման տեմպերն արագացնելու տեսակետից։ Ըստ որում՝ մամուլը կարևոր էր համարում հիշեցնել, որ այնպիսի մի կենսական միջոցառում, ինչպիսին «խնայելու, տնտեսելու երկաթե ռեժիմի հաստատումն է», չի կարող դիտվել և ընկալվել իբրև նեղ-գերատեսչական ինչ-որ քայլ, որ բխում է սոսկ պլանավորող մարմինների շահագրգռությունից։ «Տնտեսման համար մղվող պայքարը,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— հասարակական գործ է՝ այս բառի ամենալայն իմաստով։ Չկա մի բանվոր, մի գյուղացի կամ ծառայող, որի շահերը սերտ կերպով կապված չլինեն այս պայքարի հետ... Ամբողջ երկրի, հետևապես և ամեն մի աշխատավոր մարդու բարեկեցությունը միայն այն ժամանակ կարելի է պահպանել և բարելավել, երբ աշխատանքի բոլոր ասպարեզներում վերջ տանք անիմաստ նպատակներով կատարվող ծախսերին։ Այս պետք է ամեն մի աշխատավորի համար օրենք լինի»[73]։

---

[73] «Խորհրդային Հայաստան», 1926, № 63։

խնայողության ռեժիմի պարզաբանմանը և նրա կիրառման խնդիրներին դպրի տեղ են հատկացրել հանրապետության բոլոր պարբերականները, հատկապես թերթերը։ 1926 թ. մայիս ամսից մինչև տարեվերջ «Խորհրդային Հայաստան»-ում տպագրվել է 6 առաջնորդող, 108 հոդված և թղթակցություն, «Մաճկալ»-ում՝ 4 խմբագրական, 10 հոդված, 20 գյուղթղթակցություն և 12 կոչ, «Ավանդարդ»-ում՝ 2 առաջնորդող, 10 հոդված, 31 զանազան ինֆորմացիաներ, պատանի թղթակիցների 13 հաղորդում և այլն[74]։

Խնայողության ռեժիմի կամպանիային թերթերի մասնակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժինը խմբագրություններին ուղղված շրջաբերականում (1926 թ. հունիսի 4) հանձնարարեց.

ա) Վերահսկիչ հանձնաժողովի հետ համատեղ մշակել խնայողության ռեժիմի կիրառման ուղղությամբ կատարվող աշխատանքների լուսաբանման կարգը։

բ) Տպագրել նյութեր Բանգյուղտեսչության և Վերահսկիչ հանձնաժողովի ձեռնարկած միջոցառումների մասին։

գ) Խնայողության ռեժիմի բաժինը ղեկավարելու համար առանձնացնել հատուկ աշխատող՝ համաձայնեցնելով նրա թեկնածությունը Վերահսկիչ հանձնաժողովի հետ[75]։

Ամփոփելով առաջին ամիսներին պարբերականների կատարած աշխատանքը, մամուլի բաժինը մեկ այլ շրջաբերականում (1926 թ. հունիսի 26) խմբագրությունների ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ թերթերում «ավելի մեծ տեղ են բռնում ընդհանուր բնույթ կրող և հեռանկարային հոդվածները», իսկ «կամպանիայի գործնական արդյունքներն անհրաժեշտ չափով չեն լուսաբանվում»։ Այս թերությունը վերացնելու նպատակով խմբագրություններին առաջարկվեց «Խնայողության ռեժիմ» բաժնում «որոշ տեղ հատկացնել կամպանիայի հաշվառմանը»։ Մամուլի բաժինը խորհուրդ էր տալիս Կամպանիայի արդյունքները վերատառությամբ այնուհետև պարբերաբար զետեղել ինֆորմացիա Հայաստանի և ընդհանրապես Խորհրդային Միության արդյունաբերության, առևտրի, կոոպերացիայի և գյուղատնտեսության մեջ խնայողության ռեժիմի կիրառման շնորհիվ ձեռք բերված նվաճումների մասին։ Շրջաբերականը խմբագրություններից պահան-

---

74 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 156, թ. 38։

75 Տե՛ս նույն տեղը, ց. 7, գ. 403, թ. 7։

ջում էր նաև «ավելի մեծ ուշադրություն դարձնել աշխատանքային դիսցիպլինայի վրա, որի մասին տեղեկությունները հաղվագյուտ են». թերթերը, օգտագործելով բանդյուղթղթակիցներին, պետք է առաջիկայում ավելի համարձակորեն հայտնաբերեն «թափթփվածության, անպատասխանատվության դեպքերը», մոռացության չտալով, սակայն, որ «մերկացումները տպագրելիս, պետք է կոնկրետ կերպով մատնանշել, թե որտե՞ղ և ո՞վ է դատապարտվում»[76]:

Պարբերականների աշխատանքում նկատվող թերությունները վերացնելու և խմբագրությունների պատասխանատվությունը բարձրացնելու առումով կարևոր նշանակություն ունեցան «Պրավդա»-ի այն ելույթները, որոնք նվիրված էին մամուլի դերին խնայողության ռեժիմի կենսագործման ասպարեզում: Խնայողության ռեժիմի ոչ ճիշտ կիրառման համար, ընդգծում-հիշեցնում էր «Պրավդա»-ն, հավասարապես պատասխանատու են ինչպես պետական ու հասարակական կազմակերպությունները, այնպես էլ պարբերական մամուլը. մինչդեռ վերջինս հաճախ է տեղ տալիս մանր, երբեմն էլ շտուգված փաստերին, հարկ եղած չափով հաշվի չի առնում տվյալ ձեռնարկության նվաճումները, իսկ որոշ թերթերում «կամպանիան ընդունել է տնտեսավարների վրա հարձակվելու բնույթ, նկատվում է ձգտում դեպի սենսացիան»[77]:

Մեր հանրապետության պարբերական մամուլը, հաղթահարելով սեփական թերությունները ու վրիպումները, միևնույն ժամանակ բացահայտում էր այն սխալները, խոտորումներն ու միակողմանի ըմբռնումները, որ արտահայտվում էին խնայողության ռեժիմի պարզաբանման ու կիրառման ընթացքում:

Հարկավոր էր, նախ և առաջ, վերացնել որոշ հիմնարկ-ձեռնարկների ղեկավարների շրջանում արմատավորված այն ոչ ճիշտ մտայնությունը, թե իբր Հայաստանում «ոչինչ չունենք մենք անելու խնայողության ռեժիմի ասպարեզում և այդ ամբողջ կամպանիան համարյա թե մեզ չի վերաբերում», քանի որ այստեղ «առանց այն էլ ամեն բան ենթարկված է խիստ խնայողության»: Այդպես տրամաբանել, նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը, նշանակում է միակողմանի և ոչ սկզբունքային մոտեցում ցուցաբերել խնայողության ռեժիմի հարցում, անտեսելով այն էական դերը, որ խաղալու է այդ միջոցառումը արտադրության կազմակերպումը բարելավելու, չօգտագործվող ռեզերվները ի հայտ բե-

76 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 7, գ. 403, թ. 10:

77 «Правда», 17 июля 1926 г.

բելու և մեր առաջընթացի ճանապարհին հանդիպող թերություններն ու սխալները բացահայտելու-վերացնելու գործում։ «Ճիշտ է այն,— նկատում էր թերթը,— որ մենք, որպես փոքր և ոչ հարուստ երկիր՝ առհասարակ քիչ ունենք մեր տրամադրության տակ դումարներ և հետևապես քիչ ենք ծախսում և զգուշությամբ. բայց այդ դեռևս չի նշանակում, թե այդ մեր ունեցած քիչը մենք օգտագործում ենք ամբողջովին նպատակահարմար ու ավելորդ ծախսեր չենք կատարում։ Այդպես մտածել՝ նշանակում է լավատեսությամբ տարվել և մոռացության տալ մեր թերությունները, որոնք, երբ որոնելու լինենք՝ քիչ չեն լինի»։ Ահա հարցին այս տեսակետից մոտենալիս, եզրակացնում էր թերթը, ակնհայտ է դառնում, որ այդ «մեծ ու պատասխանատու գործում» իր անելիք բաժինն ունի նաև «փոքրիկ Խորհրդային Հայաստանը». մի՞թե, ուրեմն, «համարյա թե մեզ չի վերաբերում» այն հեռանկարը, որ «խնայողության ռեժիմի կամպանիան կանոնավոր կերպով կազմակերպելու դեպքում Խորհրդային Հայաստանի պետական և կոոպերատիվ-հասարակական հիմնարկների ու կազմակերպությունների դանձարկղը կհարբեցնա հարյուր հազարավոր ռուբլիներով»[78]։

Անդրադառնալով նույն խնդրին, «Երիտասարդ բոլշևիկ»-ը գրում էր. «Հայաստանը իր ազգաբնակչությամբ մոտավորապես կազմում է Խորհրդային Միության 1/150 մասը, իսկ տնտեսության տեսակարար կշռով՝ ավելի պակաս. եթե Միության մասշտաբով կատարված յուրաքանչյուր 150 մլն. ռուբլու խնայողությունից գոնե կես միլիոնը բաժին ընկնի Հայաստանին, այդ արդեն փոքրիկ գործ չի լինի, այդ արդեն նշանակում է, որ մենք իսկապես կատարում ենք մեր առաջ դրված խնդիրները»։ Այնուհետև հոդվածը մատնանշում է կոմերիտմիության անելիքները խնայողության ռեժիմի ճիշտ կիրառման ապարեզում. հիմնականն այն է, որ կոմերիտմիության ներկա սերունդը «իր համար փորձ ձեռք բերի տնտեսական ճակատում մղվող պայքարի դժվարություններում», սկզբունքային առումով ճիշտ կողմնորոշվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, խուսափի հախուռն ու չկշռադատված քայլերից, տարբերի կարևորը երկրորդականից, մի խոսքով՝ «տասը չափի՝ մեկ կտրի»։ «...Չպետք է շտապել և անզգույշ լինել,— խորհուրդ էր տալիս հոդվածը,— պետք է աշխատել սկսել նրանից, որը գլխավորն է, բայց պետք է աշխատանքի ձեռնարկել լավ մտածե-

---

78 «Խորհրդային Հայաստան», 1926, № 112։

լով և ինչպես հարկն է, որովհետև ավելի հեշտ է կործանել, քան թե կառուցել»[79]։

Խնայողության ռեժիմի կիրառումը չի կարող ճիշտ ընթանալ և սպասված արդյունքը չի տա, նշում էր մամուլը, եթե այն չշաղկապվի «մեր տնտեսական քաղաքականության հերթական-հրատապ խնդիրների հետ», չդառնա «ինդուստրացման գաղափարի շատ ավելի մեծ շղթայի անրաժանելի օղակը»։ «Շատ-շատերը,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— ենթադրում, սահմանափակում են խնայողության ռեժիմի լողունգի իմաստը, հավասարեցնելով հասարակ փող «ետ գցելու» հասկացողության...»։ Իհարկե, ծախսերը կրճատելով՝ փող տնտեսելն ինքնին կարևոր է, բայց դա հարցի մի կողմն է միայն, և սոսկ դրանով սահմանափակվել՝ կնշանակեր միակողմանի մոտեցում ցուցաբերել խնայողության ռեժիմի գաղափարին, «չտեսնել հարցի երկրորդ, սկզբունքային, այսպես ասած՝ «որակային» կողմը, չտեսնել, որ խնայողության ռեժիմը կոչված է արագացնելու մեր ամբողջ հսկայական տնտեսական և պետական ապարատի բարելավման, որակավորման և կատարելագործման գործը»։ Եվ այստեղ է հենց, որ «խնայողության և անտնտեսվարության հարցը դառնում է մեր առաջադիմության և նահանջի հարց, միջոցների խնայողությունն ստանում է սկզբունքային, սոցիալիզմի և կապիտալիզմի միջև պայքարի և սոցիալիզմի հաղթանակի նշանակություն»[80]։

Թյուրըմբռնման հետևանք է նաև այն, նշում էր մամուլը, որ մի շարք տեղերում «խնայողության լողունգի տակ կարծես միայն շատաների կրճատում է հասկացվում»[81]։ Բացի այդ, գյուղերում աշխատող ընկերներից ոմանք էլ այն սխալ մտայնությունն ունեն, թե՝ «խնայողության ռեժիմը՝ այդ գլխավորապես և բացառապես քաղաքի համար է, որտեղ կան պետական ապարատ, արդյունաբերություն և տնտեսական հիմնարկներ, իսկ գյուղում գրեթե ոչինչ չկա խնայողություն անելու համար»[82]։

Խնայողության ռեժիմը գյուղում կիրառելու հարցերին հաճախակի անդրադառնում էին «Մաճկալ», «Կարմիր ռաշպար» և «Զանգի» թերթերը։ Սրանց ելույթների արդյունավետությունը բար-

---

79 «Երիտասարդ բոլշևիկ», 1927, № 1։

80 «Խորհրդային Հայաստան», 1926, № 124։

81 Նույն տեղում, № 122։

82 Նույն տեղում, 1927, № 70։

ձրացնելու տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի՝ խմբագրություններին ուղղված այն շրջաբերականը, որը պարտավորեցնում էր վճռականորեն հանդես գալ «ձևական մոտեցում ցուցաբերողների և գլխավորապես նրանց դեմ, ովքեր խնայողության ռեժիմի համար մղվող պայքարը ձգտում են վարել ամենաթույլ դիմադրության ճանապարհով, կրճատելով կուլտուր-լուսավորական կարիքներին, դպրոցական շինարարությանը հատկացվող ծախսերը»[83]։

Մամուլը հաճախ էր հանդես գալիս նաև խնայողության ռեժիմին ժամանակավոր կամպանիայի բնույթ տալու տենդենցների դեմ՝ բացատրելով-պարզաբանելով, որ դա այնպիսի մի միջոցառում է, որ ուղեկցելու է սոցիալիզմի կառուցման ամբողջ ընթացքին։ «Կոմունիստ» հանդեսը ցավով էր արձանագրում, որ խնայողության ռեժիմի հետ կապված հարցերի կոլեկտիվ քննարկումը, հաստատությունների և ձեռնարկությունների ընդհանուր ժողովներում սկզբունքային շրջանում որոշ աշխուժություն ապրելուց հետո, նկատելիորեն թուլացավ, քանի որ այդ գործը համարվեց ընթացիկ-կամպանիոն մի բան[84]։ «Խորհրդային Հայաստան»-ը, պատկերավոր համեմատություն անելով, որպես «շատ կոպիտ սխալ» որակեց այն մտայնությունը, թե իբր «խնայողության ռեժիմը «սուղ պայմաններից բխող» մի ժամանակավոր միջոցառում է, որը «մեծ պասի» պես պիտի պահվի, մինչև «լավ ժամանակները»...»[85]։

Խնայողությունը չպետք է լինի ինքնանպատակ, ղեկուշացնում էր պարբերական մամուլը. այս հարցում հապճեպ ու անհաշվենկատ մոտեցումը, հատկապես արդյունաբերական ձեռնարկություններում, կարող է հանգեցնել նրան, որ ավելի շատ միջոցներ վատնվեն. այդ տեսակ «խնայողության» հետևանքը կարող է շատ թանկ նստել տվյալ ձեռնարկության վրա։ Կան տնտեսվարներ, նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը, «որոնք, ինչպես մամուլում գրվել է, «խնայելու» մտքով էժան, բայց վատ հում նյութեր, վատ գործիքներ են գնել, որի հետևանքով ստիպված պիտի լինեն հետագայում ավելի մեծ ծախսեր անել»։ Այդպիսի «խնայողներին» թերթը միանգամայն տեղին հիշեցնում էր անգլիական այն առածը, թե՝ «Ես այնքան հարուստ չեմ, որ էժան բան գնեմ»[86]։

---

83 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 172, թ. 56։

84 Տե՛ս «Կոմունիստ», 1926, № 3—4, էջ 18։

85 «Խորհրդային Հայաստան», 1926, № 124։

86 Նույն տեղում։

* * *

Հետևելով կուսակցության ցուցումներին, մամուլը պարբերաբար արծարծում էր արտադրական խորհրդակցությունների բարելավման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման, ռացիոնալիզացիայի, աշխատանքային կարգապահության հետ կապված խնդիրները։

«Խորհրդային Հայաստան», «Բանվոր», «Ավանդարդ» և մյուս թերթերում, «Կոմունիստ», «Լենինյան ուղի», «Երիտասարդ բոլշևիկ» հանդեսներում տպագրված նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ ասպարեզներում պարբերական մամուլի աշխատանքն ընթացել է երկու հիմնական ուղղություններով. թերթերն ու հանդեսները մի կողմից պարզաբանում-պրոպագանդում էին այդ միջոցառումներից յուրաքանչյուրի նշանակությունը սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրների լուծման տեսանկյունից, մյուս կողմից՝ քննարկում դրանց կիրառման գործնական հարցերը արտադրական կոնկրետ ձեռնարկություններում, մեծ մասամբ ուշադրությունը բևեռելով թերությունների, վրիպումների և չլուծված խնդիրների վրա, դրանով իսկ կատարելով որոշակի կազմակերպչական ֆունկցիա։ Մամուլի օրգաններում բացված էին համապատասխան բաժիններ, որոնցում զետեղված հոդվածները, թղթակցությունները, նամակները, կոչերն ու առաջարկությունները արժեքավոր, բազմակողմանի ու կոնկրետ նյութ կարող են տալ Հայաստանի արդյունաբերության պատմությունը հետազոտողին։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի հաշվումների համաձայն, օրինակ, միայն 1927 թ. նոյեմբեր ամսին արդյունաբերական ռացիոնալիզացիայի վերաբերյալ հանրապետության վեց թերթերում («Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանդարդ», «Բանվոր», «Կարմիր գինվոր», Կարմիր ռաշպար») հրատարակվել է 122 նյութ[87]։ Ուշադրավ են «Արտադրական խորհրդակցությունների ստուգատես»-ի ընթացքին և արդյունքների ամփոփմանը նվիրված նյութերը «Խորհրդային Հայաստան» թերթում։ Դրանք վկայում են բանվորների ստեղծագործական նախաձեռնության աճի և ինքնագործունեության լայն ծավալման մասին. միայն «Արարատ» գործարանի բանվորներն ստուգատեսի ընթացքում արեցին 450 առաջարկություն, որից 100-ը, ինչպես պարզել է ստուգատեսի հանձ-

87 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1. ց. 11, գ. 269, թ. 5։

նաժողովը, անմիջապես վերաբերում էին գործարանում գոյություն ունեցող բացերին ու թերություններին։ Առաջարկությունների թերթիկներն իրենց դիտողություններով հանձնաժողովին ներկայացրին՝ Հայբամբակկոմում՝ 137, Կարբիդի գործարանում՝ 52, Առաջին կաշեգործարանում՝ 51 բանվորներ և այլն։ «Սա մի խոշոր նվաճում է»,— իրավացիորեն ընդգծում էր թերթը[88]։

Կարևոր նշանակություն տալով «բանվորների ինքնագործունեության և ձեռներեցության բարձրացմանը», մամուլը ճիշտ կերպով շեշտում էր, որ արդյունաբերական արտադրանքի «ինֆլյացիայի իջեցումը հետևանք է լինելու աշխատանքի ռացիոնալիզացիայի, արտադրողականության բարձրացման և սոցիալիստական դիսցիպլինայի ուժեղացման»[89]։ Համկ(բ)կ Կենտկոմի 1928 թ. նոյեմբերյան պլենումի որոշումներից ելնելով՝ մամուլը հաճախակի հիշեցնում էր այն ճշմարտությունը, թե՝ «աշխատանքի արտադրողականության բարձրացումը էապես կապված է աշխատանքային դիսցիպլինայի հետ», որը «սոցիալիստական շինարարության հաղթանակի ամենակարևոր պայմաններից մեկն է»[90]։

Լուրջ խնդիրներ էին դրված պարբերական մամուլի առջև գների իջեցման ասպարեզում, որին հատուկ ուշադրություն նվիրվեց Համկ(բ)կ XV կոնֆերանսի և Կենտկոմի 1927 թ. փետրվարյան պլենումի բանաձևերում։ Հկ(բ)կ Կենտկոմի նախագահությունը մամուլի օրգաններին պարտավորեցրեց ավելի շատ ուշադրություն նվիրել գների իջեցման խնդրին, լուսաբանել ու պարզաբանել կուսակցության համապատասխան որոշումները մասնավորապես «Խորհրդային Հայաստան»-ի, «Մաճկալ»-ի, «Կոմունիստ»-ի, «Ավանդարդ»-ի և «Երիտասարդ բոլշևիկ»-ի էջերում[91]։ Այս պարբերականներում, ինչպես և հանրապետության մյուս թերթերում ու հանդեսներում բացվեց Պայքար գներն իջեցնելու համար խորագրով նոր բաժինը, որտեղ կոնկրետ կերպով լուսաբանվում էր այդ ուղղությամբ հանրապետությունում տարվող աշխատանքների ընթացքը, ամփոփվում էին ձեռք բերված արդյունքները, բացահայտվում սխալներն ու խեղաթյուրումները։

88 «Խորհրդային Հայաստան», 1929, № 75։
89 Նույն տեղում, № 67։
90 Նույն տեղում, № 57։
91 Տե՛ս նույն տեղը, 1927, № 57։

Սոցիալիստական շինարարության հաջող իրականացման վճռական գործոններից մեկը կուսակցությունը համարում էր քննադատության և ինքնաքննադատության ծավալումը, պետապարատի էժանացումն ու ճկունացումը, անողոք պայքարը բյուրոկրատիզմի ամեն մի դրսևորման դեմ։ Այս խնդիրների կատարման գործում կարևոր դեր խաղաց պարբերական մամուլը։

Մեր հանրապետության թերթերն ու հանդեսները նախ և առաջ մատնանշում էին բյուրոկրատիզմի պատճառած վնասները, որոնք իրենց բացասական հետևանքներով վերածվում էին հասարակական-քաղաքական մեծ չարիքի՝ խաթարելով սոցիալիստական շինարարության բնական ընթացքը։ Բյուրոկրատիզմը, նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը՝ վկայակոչելով Ն. Կրուպսկայայի ասույթը,— «քսամնելի մի երևույթ է, որ կործանում է ամեն մի կենդանի նախաձեռնություն, այլանդակում է բոլոր միջոցառումները, բոլոր դեկրետներն ու կարգադրությունները». «ի՞նչ արժեն լավ օրենքները, դեղեցիկ որոշումները, եթե գործող ապարատը վատ է, կոպիտ է, անուշադիր կամ բյուրոկրատ»[92]։ Ելնելով բյուրոկրատիզմի դեմ պայքարն ուժեղացնելու վերաբերյալ Համկ(բ)Կ XV կոնֆերանսի ցուցումներից, մամուլը հիշեցնում էր, որ հենց բյուրոկրատիզմն է այն խոշոր արգելքը, որ «թույլ չի տալիս մեր ապարատին՝ լինել ճկուն, թեթև և էժան», իսկ դրա պատճառով էլ՝ երկրի կառավարման մեջ «մասսաների մասնակցությունը չեղոքանում է, և այդ պայմաններում չափազանց դժվարանում է սոցիալիզմի կառուցումը»[93]։

Բյուրոկրատիզմը սնող պատճառների և դրանց դեմ պայքարն ուժեղացնելու հարցերն արծարծելիս պարբերական մամուլը շեշտում-ընդգծում էր կառավարման նախկին և խորհրդային սիստեմների արմատական-սկզբունքային տարբերությունը։ Ի հակադրություն բուրժուական տիպի կառավարությունների, ընդգծում էր «Երիտասարդ բոլշևիկ» հանդեսը, խորհրդային իշխանության համար «խիստ կենտրոնացված բյուրոկրատական սանդուղքը, ձևապաշտությունը, ձգձգումը և դեպի բանվորներն ու գյուղացիներն ունեցած անսիրտ վերաբերմունքը ոչ միայն անհասկանալի և ան-

92 «Խորհրդային Հայաստան», 1925, № 178։

93 Նույն տեղում, 1926, № 283։

հարկավոր երևույթներ են, այլև միանգամայն վնասակար և շատ վտանգավոր»: Եվ ուրիշ կերպ չի էլ կարող լինել, քանի որ՝ «խորհրդային ապարատի բյուրոկրատիզմը չի բխում խորհրդային իշխանության սոցիալ-դասակարգային բնույթից. մեր վարչական և տնտեսական հաստատություններում բյուրոկրատական խեղաթյուրումները ժառանգություն են մնացել նախկին ապարատից, որը մենք կործանել ենք և վերակառուցել նորից իր հիմնական և գլխավոր մասերով, բայց ոչ ամբողջովին»[94]:

Բյուրոկրատիզմի դեմ պայքարի հաջողության հիմնական գրավականը մամուլը տեսնում էր այդ գործում աշխատավորական ամենալայն զանգվածների ակտիվ մասնակցությունն ապահովելու մեջ: Այս կապակցությամբ մեր հանրապետության պարբերականները ևս հաճախակի դիմում էին Վ. Ի. Լենինի այն ավանդներին, որոնք, ինչպես գրում էր «Խորհրդային Հայաստանը», «բանալի են հանդիսանում կուսակցության և պետության առաջ դրված բարդ պրոբլեմների լուծման համար»[95]: Ինչպես մամուլին, այնպես էլ կուսակցական-խորհրդային կազմակերպություններին կողմնորոշելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը վկայակոչում էր սոցիալիստական պետության մեծ հիմնադրի ասույթները բյուրոկրատիզմն արմատախիլ անելու մեթոդների վերաբերյալ. «...Ուրիշ ի՞նչ ձևով կարելի է վերջ տալ բյուրոկրատիզմին, եթե ոչ բանվորներին ու գյուղացիներին ներգրավելով... Եթե մենք ուզում ենք պայքարել բյուրոկրատիզմի դեմ, ապա մենք պետք է այդ գործին ներգրավենք ներքնախավերին: Մենք պետք է իմանանք, թե ինչ փորձ է եղել այսինչ ֆաբրիկայում կամ գործարանում, նրանց կողմից ի՞նչ է արված այսինչ բյուրոկրատին վանդելու համար...»[96]: Այս պայմաններում առանձնակի արժեք և հնչեղություն էր ստանում պարբերական մամուլին Վ. Ի. Լենինի առաջադրած այն խնդիրը, թե «մասսաներին կյանքի բոլոր ասպարեզներից վերցված կենդանի, կոնկրետ օրինակների ու կերպարների վրա դաստիարակելու» հետ մեկտեղ հարկավոր է «գործնական անխնա, ճշմարիտ-հեղափոխական պատերազմ» հայտարարել «չարիքի կոնկրետ կրողների դեմ»[97]:

---

94 «Երիտասարդ բոլշևիկ», 1927, № 5—6, էջ 103—104:
95 «Խորհրդային Հայաստան», 1927, № 49:
96 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 535:
97 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 109:

Բյուրոկրատիզմի հաղթահարման, պետապարատի կապը աշխատավոր զանգվածների հետ ամրապնդելու արդյունավետ միջոցներից մեկն էլ բանվորների և գյուղացիների առաջքաշումն էր ղեկավար աշխատանքի, այն մարդկանց, ովքեր, «վերջերս միայն թողնելով դաղգյահն ու մաճը», իրենց նոր պարտականության կատարմանն են ձեռնամուխ լինում «առողջ բնազդով ու սոցիալիստական շինարարության մեծ կամքով»։ Այսօրինակ միջոցառումը, որի «դաղափարը բաղմիցս պարզաբանված է ընկ. Լենինի և մեր կուսակցության կողմից», բացատրում էր «Բանվոր» թերթը,—«ունի հսկայական նշանակություն մեր հեղափոխության և սոցիալիստական շինարարության տեսակետից»[98]։ Առաջքաշման այդ սիստեմը «խորհրդային Հայաստան» թերթը դիպուկ կերպով բնորոշեց իբրև «լավագույն հակաթույն բյուրոկրատիզմի դեմ»։ Ճիշտ է, այդ նոր ղեկավար կադրերը շատ անգամ «չեն ունենում բավականաչափ գիտելիքներ ու փորձառություն, բայց կոփվելով, անհրաժեշտ վարժություններ ձեռք բերելով՝ նրանք հաճախ մեծ աշխատանք են կատարում»[99]։ Կոչ անելով ամենուրեք աջակցել պետապարատի թարմացմանն ու ճկունացմանը, մամուլը միաժամանակ նշում էր, թե որքան կարևոր է նոր առաջքաշվածներին ընկերական հոգատարությամբ շրջապատելը, նրանց թերություններն ու վրիպումները բարեկամաբար ուղղելը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ «իրենց պաշտոնին պինդ կպած չինովնիկական էլեմենտներն ու անուղղելի բյուրոկրատները» ջանում են ամեն մի առաջքաշվածի շուրջն ստեղծել «այնպիսի պայմաններ, որ նա ընկնի, սայթաքի, սայթաքելով ձախողի մեր կուսակցության քաղաքականությունը»։ Բայց այդպիսի մոտեցումն արդեն մամուլը ճշմարիտ կերպով բնութագրում էր իբրև «անհանդուրժելի և հակահեղափոխական արարք», որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է ստանա արժանի հակահարված և ամենախիստ պատիժը[100]։

Այդքան մեծ նշանակություն տալով բանվորների առաջքաշմանը, մամուլը միաժամանակ զգուշացնում էր ձևական ու հապճեպ մոտեցումից։ «Առաջքաշման խնդիրը,— գրում էր «Խորհրդային Հայաստանը»,— մեզ համար ձևական հարց չէ... Պիտի խու-

98 «Բանվոր», 1927, № 30։

99 «Խորհրդային Հայաստան», 1927, № 15։

100 Տե՛ս նույն տեղը, 1929, № 187։

տալիս նրան ֆորմալ նշանակություն տալուց՝ «Բանվոր է, առաջ քաշենք». ո՛չ, պիտի իմանալ, թե ի՞նչ բանվոր է, ո՞ւր պիտի ուղարկել, արդյոք օգտավետ կլինի՞, թե ոչ, լուրջ կերպով ուսումնասիրել նրա ընդունակությունները, բանվորական կայունությունը»[101]: Խոշոր դեր էր վերապահվում այստեղ արհմիություններին, որոնք պարտավոր էին ոչ միայն հետևելու, որպեսզի առաջքաշվածների համար ստեղծվեն աշխատանքի բարենպաստ պայմաններ, այլև ժամանակին կանխելու թույլ տրված սխալները, կոլեկտիվ հսկողություն սահմանելու՝ նպատակ ունենալով ապահովել այդ կարևոր միջոցառման ճիշտ կիրառումը տեղերում: Հետևողական ուշադրություն էր նվիրում այս հարցին հատկապես ՀԱՄԽ-ի օրգան «Աշխատանք» երկշաբաթաթերթը, որի էջերում 1927 թ. ապրիլից բացվեց Մեր առաջքաշվածները բաժինը. այստեղ տպագրվող հոդվածներն ու թղթակցությունները պատմում էին բանվոր-առաջքաշվածների գործունեության, ձեռք բերած հաջողությունների, աշխատանքի ոճի մասին, բացահայտում սխալ առաջքաշման փաստերը: «Աշխատանք»-ը հիմնականում արհմիությունների թույլ հսկողության հետևանք էր համարում այն երևույթը, որ առաջքաշումները շատ տեղերում «կրել են անսիստեմ, անկազմակերպ, հաճախ նաև պատահական բնույթ»: Դատապարտվում էր նաև այն պրակտիկան, երբ «այս կամ այն ընկերոջ առաջքաշելը պատասխանատու աշխատանքի մեծ մասամբ կատարվում է վերևից, մասսան այդ մասին իմանում է վերջում». իսկ դա հանգեցնում է նրան, որ «առաջքաշվածն ամենակարճ ժամանակում կորցնում է իր բոլոր կապերը մասսայից և երբեմն իր մասին կազմում է «մեծ կարծիք»»: «Աշխատանք»-ը գտնում էր, որ այդպիսի դեպքերը կանխելու համար պետք է «առաջքաշվածների թեկնածությունները քննության առնել կոլեկտիվներում», հսկել, որպեսզի նրանք «չկտրվեն մասսայից»: Այս կերպ միայն կարելի էր առաջքաշումը դարձնել «սովետական ապարատի առողջացման և բյուրոկրատիզմին վերջ տալու ամենալավ միջոցներից մեկը»[102]:

Բյուրոկրատիզմի դեմ ունեցած կռվի թերներում պարբերական մամուլն սկզբունքային նշանակություն էր տալիս այն բանին, որպեսզի պայքարը տարվի կազմակերպված և մտածված ձևով, այնպես, որ թշնամական տարրերը չկարողանան օգտվել առիթից և

101 Նույն տեղում, 1927, № 223:
102 «Աշխատանք», 1927, № 4, էջ 2:

վարկաբեկել կառավարման խորհրդային սիստեմը։ Բյուրոկրատիզմի դեմ ձայն բարձրացնող յուրաքանչյուր ազնիվ քաղաքացի, գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, այդ հարցում ևս պետք է առաջնորդվի լենինյան ըմբռնումներով, որպեսզի «չհայտնաբերվի վնասակար պեսիմիզմ, ավելորդ ջղայնություն, անզգուշություն... ու չվնասվի գործը»։ Բյուրոկրատիզմի արմատները փնտրելով «երկրի տնտեսական ու կուլտուրական հետամնացության մեջ,— շարունակում էր թերթը,—Լենինը չի ընկնում ո՛չ պեսիմիզմի և ո՛չ պանիկայի մեջ, չի անվանում մեր պետությունը ոչ-պրոլետարական, այլ առաջարկում է.—

«Յոթն անգամ չափիր և մեկ անգամ կտրիր», «լավ է քիչ, բայց լավ», «լավ է երկու, նույնիսկ երեք տարուց հետո, քան այժմ, շտապով ու հապճեպ»։

Այդպես և միայն այդպես,—եզրակացնում էր թերթը,—հնարավոր է ու կարելի կռվել բյուրոկրատիզմի դեմ, քանի որ ավելի հեշտ է քանդել, հաճախ չգիտակցելով, քան կառուցել, ստեղծագործել և կազմակերպել»[103]։

Նույնպիսի զգոնության էր կոչում «Երիտասարդ բոլշևիկ» հանդեսը կոմերիտմիությանը, որը «բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարում ևս կոչված էր լինելու իսկական մարտիկ»։ Իհարկե, գրում էր կոմերիտմիության կենտկոմի օրգանը, կասկած չի կարող լինել, որ «նրան, ով պայքարում է բյուրոկրատիզմի դեմ և պետական-տնտեսական ապարատի բարելավման համար՝ կհովանավորեն ու կպաշտպանեն մեր կուսակցությունը, մեր միությունը, խորհրդային արդարադատությունը և մեր ամբողջ հասարակայնությունը». բայց կասկածից վեր է նաև այն, որ «ամբողջ պայքարն ու աշխատանքը պետք է կատարել կուսակցության անմիջական ղեկավարությամբ և զգույշ լինել ամենափոքր չափով անգամ չվտանգելու պետապարատի ուժեղությունը»։ Սա, իհարկե, չի նշանակում, թե հարկավոր է ինչ-որ տեղ մաղաչափ անգամ զիջում անել բյուրոկրատիզմին։ Ընդհակառակը, պետապարատի ամրապնդման շահերն են հենց պահանջում վերին աստիճանի անողոք լինել բյուրոկրատիզմի և նրա «մեծ ու փոքր արբանյակների» հանդեպ։ «Պետք է միշտ հիշել Լենինի այն խոսքերը,— ընդգծում էր վերջում հանդեսը,—թե՝ «առանց պետապարատի մենք վաղուց էինք կործանվել. առանց պետապարատի բարելավման համար-

---

103 «Խորհրդային Հայաստան», 1927, № 17։

սիստեմատիկ պայքար մղելու՝ մինչև սոցիալիզմի բազան ստեղծելը մենք կկործանվենք»»[104]։

Բյուրոկրատական քաշքշուկի, անպատասխանատվության, անփութության, աշխատավորների պահանջ-առաջարկների նկատմամբ անհոգի վերաբերմունքի դեմ ուղղված նյութերն ամենից շատ դիտեղվում էին թերթերի «Բանվորական բաժին»-ներում։ Արժեքավորն այն էր, որ այդ նյութերը մեծ մասամբ ունեին կոնկրետ բովանդակություն, նպատակասլաց հասցեագրումներ և հաճախ էլ աչքի էին դարնում իրենց դիպուկ ու խոսուն խորագրերով («Մժեղներին տեսնողը փղին չի տեսնում», «20 ոտնաչափ տարածությունը 35 օրում», «Ակումբում մկներ են խաղում», «Գրություն № 87-ի մահը» և այլն)։ Այս կարգի նյութերը խորհրդահայ պարբերականներում ավելի հաճախ սկսեցին երևալ հատկապես այն բանից հետո, երբ հրապարակվեց ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի նամակը բյուրոկրատիզմի դեմ պայքարելու մասին։ 1927 թ. դեկտեմբերի 14-ի նիստում ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիան, մի շարք այլ հարցերի հետ, քննարկեց նաև բյուրոկրատիզմի դեմ մամուլի ելույթներն ուժեղացնելու խնդիրը. մասնավորապես անհրաժեշտ համարվեց «Խորհրդային Հայաստան» թերթում առանձնացնել «Բյուրոկրատիզմի դեմ պայքարի» մշտական մի բաժին[105]։ Բյուրոկրատիզմի դեմ սկսեցին ավելի շատ գրել քաղաքի և գյուղի աշխատավորները, մի հանգամանք, որն զգալի չափով բարձրացրեց մամուլի ելույթների արդյունավետությունն ու հասարակական հնչեղությունը։ Իր հաշվետվություններից մեկում ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժինը միանգամայն խրախուսելի էր համարում այն իրողությունը, որ հանրապետության թերթերում աշխատավորների, մեծ մասամբ բանվորների գրած թղթակցությունները ոչ միայն հաստատում-տարածում էին ձեռք բերված դրական արդյունքներն ու փորձը, այլև քննադատում առօրյայում նկատվող ամենատարբեր բնույթի թերությունները, մեծ ու փոքր սխալները։ «Այս նյութերը,— նկատում էր մամուլի բաժինը,—հաճախ նույնանում են բյուրոկրատիզմի դեմ մղվող աշխատանքներին... Եվ այս հանգամանքն առանձնակի հետաքրքրություն է մտցնում այդ նյութերի մեջ»[106]։

---

104 «Երիտասարդ բոլշևիկ», 1927, № 3—4, էջ 69։
105 Տե՛ս Մշի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 8, գ. 139, թ. 52։
106 Նույն տեղում, ց. 11, գ. 269, թ. 7։

* * *

Սոցիալիստական շինարարության կազմակերպման կարևոր լծակներից մեկն էլ բոլշևիկյան քննադատության և ինքնաքննադատության լոզունգն էր, որի հետագա ծավալման ու խորացման համար էական նշանակություն ունեցան «Կուսակցության բոլոր անդամներին, բոլոր բանվորներին» ուղղված Համկ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. հունիսի 3-ի դիմումը և XVI կոնֆերանսի՝ «Բյուրոկրատիզմի դեմ մղած պայքարի հանրագումարների և մոտակա խնդիրների մասին» որոշումը[107]։

Ինքնաքննադատության լոզունգի իրականացման գործիք և անփոխարինելի միջոց էր պարբերական մամուլը։ Ավելին՝ ինչպես դիպուկ նկատել է Մ. Կալինինը՝ «եթե ինքնաքննադատությունից դուրս հանենք մամուլը, ապա ինքնաքննադատությունը կնվազի 9—10 անգամ. երբ մենք ասում ենք ինքնաքննադատություն, մեզանում դա կապվում է մամուլի հետ»[108]։

Ազգային լեզուներով հրատարակվող, այդ թվում և հայերեն պարբերականների համար սկզբունքային և ուղենշող արժեք ունեցան ինքնաքննադատության խնդիրներին նվիրված «Պրավդա»-ի ելույթները, մասնավորապես առաջնորդող հոդվածները, որոնց մեծ մասն արտատպվում էր։ Կուսակցության կենտրոնական օրգանն ընդգծում էր ինքնաքննադատության ստեղծագործական, մասսայական բնույթը, խստագույնս դատապարտում քննադատությունը չհանդուրժողներին կամ այդ լոզունգի էությունը գուշակացնողներին։

«Պրավդա»-ի այդ ելույթները մեծապես օգնեցին պարբերական մամուլին՝ ճիշտ կերպով դնելու և լուծելու ինքնաքննադատության լոզունգի կիրառման հետ կապված մի շարք կարևոր հարցեր։ Մեր հանրապետությունում հրատարակվող թերթերն ու հանդեսները, մասնավորապես կուսակցական կենտրոնական օրգանները նախ և առաջ շեշտում էին, որ ինքնաքննադատությունը ցանկալի արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, եթե ապահովվի նրա ստեղծագործական բնույթը, մասսայականությունը։ «Մենք ընդհուպ զբաղված ենք սոցիալիզմի կառուցման հրատապ խնդիրներով,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,—իսկ սոցիալիստական շինարարությունը՝ դա ամենալայն մասսաների ստեղծագործությունն է։ Ինքնաքննադատության կոչ անել՝ նշանակում

107 Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 745—765։
108 «Правда», 13 сентября 1929 г.

է բանվորա-գյուղացիական մասսաներին ամենաակտիվ կերպով նոր հասարակարգի ստեղծման գործին մասնակից անել»[109]։ «Ինքնաքննադատությունն առանց մասսաների մասնակցության սոսկ ծաղրանք է... Սա մեր կուսակցության լոզունգի բյուրոկրատացումն է»,— դիպուկ կերպով նկատում էր Թերթը և ապա շարունակում՝ «բյուրոկրատիզմը, քաշքշուկը, պատասխանատվության զգացումի բացակայությունը, անտանելի աշխատանքը, մեքենականությունը, անկարգապահությունը, մորթապաշտությունը, խնամիությունը, կոմսնապարծությունը, բուրժուական իդեոլոգիան ու տրադիցիաները և այլ խայտառակ բացերը, որոնք մեր սոցիալիստական շինարարության արագ ընթացքը կասեցնում են, կարող են վերացվել միայն մասսաների ակտիվ մասնակցությամբ՝ ինքնաքննադատության միջոցով»[110]։ Դրանով իսկ Թերթը միաժամանակ հիշեցնում էր, թե որքան լայն ու ընդգրկող պիտի լինեն քննադատության ու ինքնաքննադատության շրջանակները, որոնց կամա թե ակամա սահմանափակումը կարող էր հանգեցնել վնասակար միակողմանիության և ամբողջ գործը կանգնեցնել փակուղու առջև։

Այս առումով ուշագրավ են մամուլի ելույթները այսպես կոչված՝ «հեղափոխական զգուշավորության» դիրքերից բխող այն մտավախության դրսևորումների դեմ, թե՝ թշնամին կօգտագործի մեր ինքնամերկացումները։ Այս հարցում ևս ավագային մամուլի ուղեցույցը «Պրավդա»-ն էր, որը ժամանակին կանխեց և խիստ հակահարված տվեց կուսակցության ոգուն և պատմությանը հակասող այդ թյուրըմբռնմանը, որն ամենևին էլ «ջուրը չէր դարձնում դեպի սոցիալիստական շինարարության ջրաղացը»։ Սկզբունքային նշանակություն ունեցավ այս տեսակետից հատկապես «Ինքնաքննադատության մասին» առաջնորդողը, որն արտատպվեց նաև «Խորհրդային Հայաստան» Թերթում[111]։ «Մեր մամուլը և, մանավանդ, կենտրոնական ու խոշոր արդյունաբերական շրջանների մամուլը,— ասված էր այդ հոդվածում,— այնպես պարզորոշ ու ցայտուն է արտահայտում դեպի ինքնաքննադատությունը բռնած մեր կուրսը, որ մեր արտասահմանյան թշնամիներն ու հակառակորդները այդ մամուլում երևացող մերկացումներն ամեն կերպ աշխա-

---

109 «Խորհրդային Հայաստան», 1928, № 199։

110 Նույն տեղում, № 163։

111 Տե՛ս «Правда», 23 марта 1928 г., արտատպված է «Խորհրդային Հայաստան»-ի 1928 թ. մարտի 25-ի համարում։

տում են օգտագործել իրենց սեփական նպատակների համար։ Նրանք հաճախ արտատպում են մեր առանձին մերկացուցիչ հոդվածները, հրամցնելով այդպիսիները որպես խորհրդային ապարատների սիստեմը բռնած «քայքայման մի ապացույց»։ Սակայն դա չպետք է շփոթության մատնի մեզ, շարունակում էր կուսակցության կենտրոնական օրգանը՝ կոչ անելով մամուլի էջերում ավելի համարձակ ու հետևողականորեն ծավալել առողջ ինքնաքննադատությունը. որպեսզի հաջողությամբ պրակվի այն հակայական բաղմակողմանի աշխատանքը, որին ձեռնարկել է մեր կուսակցությունը սոցիալիզմի շինարարության համար, ընդգծում էր «Պրավդա»-ն՝ «մեզ քննադատություն է հարկավոր, ոչ թե «կողմնակի» մի քննադատություն, որ պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիներից է գալիս, այլ բանվորներից և աշխատավոր մասսաներից բխող ինքնաքննադատություն, որովհետև մեր պրոլետարական իշխանությունն այդ մասսաներից է քաղում այն բոլոր ուժերը, որ անհրաժեշտ են նրան սոցիալիստական շինարարության համար և թշնամիներին հակահարված տալու համար»։

Հետևելով իրենց համախոհներին, նշում էր խորհրդահայ մամուլը, դաշնակցական գաղափարախոսներն ու պարբերականները ևս ամեն կերպ ջանում են օգտագործել «այն նյութերը, որ տալիս են կուսակցական ղեկավար մարմինների դոկումենտներն ու մեր թերթերը՝ կատարված սխալների ու աղավաղումների, նրանց բացասական հետևանքների մասին»[112]. ո՞վ չգիտե, սակայն, որ դա բուրժուազիայի գաղափարական սնանկացած զինապահեստի արդեն վաղուց հայտնի և բավականաչափ վարկաբեկված մեթոդներից մեկն է, որը չի կարող ո՛չ մոլորեցնել մեր իրականությանը քիչ թե շատ ծանոթ ընթերցողին, և ո՛չ էլ դույզն ինչ կասեցնել բոլշևիկյան քննադատության ու ինքնաքննադատության հետագա ծավալումը։ «Միանգամայն հասկանալի է,— ընդգծում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— որ մեր բոլշևիկյան անխնա ինքնաքննադատությունը բուրժուական հակահեղափոխական մամուլի աղարտված ծուռ հայելում երևում է, ցույց է տրվում իբրև Համկոմկուսի քաղաքականության պարտություն...»[113]։ Մինչդեռ ընդհակառակը, շեշտում էր նույն թերթը մի այլ առիթով, մեր սխալների ու թերությունների բացահայտ և սուր քննադատությունը մեր իսկ կուսակ-

---

112 «Խորհրդային Հայաստան», 1930, № 124։

113 Նույն տեղում։

ցության ու մամուլի կողմից՝ շատ բնական ու առողջ մի երևույթ է, որը երբեք էլ չի կարող տեղավորվել իրենց քաղաքական-գաղափարական ճգնաժամն ու պրակտիկ գործունեության ձախողումը սքողել ջանացող «տեսաբանների» մթագնած դիտակցության մեջ. այնպես որ՝ մեր ինքնաքննադատության բացահայտած փաստերը մեր դեմ օգտագործելու դաշնակցական պրոպագանդայի ճիգերը շատ են հիշեցնում այն հայտնի և բավականին ծիծաղելի կացությունը, երբ «հիվանդն սկսում է դատողություններ անել առողջ երևույթի մասին»[114]:

Կարևոր է նշել այստեղ, որ վերոհիշյալ մտավախությունը մերժելիս մեր պարբերականների համար համոզիչ կռվան էր այն սկզբունքային տարբերության ընդգծումը, որ գոյություն ուներ հեղափոխական մամուլի նպատակադրման մեջ՝ պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումից առաջ և հետո: «Մեր մամուլի քննադատական խոսքն իր նպատակով և ձևով հիմնովին տարբեր է մինչ-հոկտեմբերյանից,— բացատրում էր «Կոմունիստ» հանդեսը:— Այն ժամանակ բանվորական մամուլը հին կարգերը խարազանում էր ու անխնա հարվածում՝ նրան տապալելու, ջախջախելու նպատակով: Այդպես չէ այժմ: Խորհրդային մամուլը քննադատում է ու պիտի խարազանի խորհրդային ապարատի թերությունները, բացերը՝ նրանց վերացնելու, խորհրդային ապարատն ավելի առողջացնելու և ուժեղացնելու համար: Խորհրդային մամուլը մի կամուրջ է, որի միջոցով բանվորա-գյուղացիական մասսաները հնարավորություն են ստանում ավելի սերտորեն կապվելու և մասնակցելու խորհրդային շինարարության, սոցիալիզմի կառուցման գործին»: Ահա թե ինչու անհրաժեշտ է ամեն կերպ խրախուսել մամուլի քննադատական ելույթները, «բոլոր թերթերում բացել համապատասխան բաժիններ, գործի կոչել բանվորագյուղթղթակիցների շարքերը»: «Ամենևին պիտի չքաշվել ու չվախենալ քննադատող խոսքից,— շարունակում էր ամսագիրը,— առողջ քննադատությունը մեր հաջողությունների ամենամեծ շարժիչ ուժն է, ու նա խոշոր հեղափոխական նշանակություն կարող է ունենալ մեր կյանքում»[115]:

Պարբերական մամուլը հարկ էր համարում կասկածամիտներին ու մտավախություն ունեցողներին հիշեցնել, որ ինքնաքնա-

---

114 *Նույն տեղում, 1927, № 173։*

115 *«Կոմունիստ», 1928, № 4—5, էջ 19։*

դատության պահանջն ամենևին էլ նոր ու արտառոց մի բան չէ մեր կուսակցության համար. ով ծանոթ է բոլշևիկների անցած ուղուն, նա չի կարող անտեսել, որ կոմունիստական կուսակցության ամբողջ պատմությունը լավագույնս վկայում է ինքնաքննադատական ոգու արգասավորությունը հեղափոխական առաջընթացի բոլոր փուլերում։ Այդ պահանջն առանձնակի կարևորություն և նոր բովանդակություն է ստանում հատկապես պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումից հետո, նշում էր «Խորհրդային Հայաստան» թերթը՝ պարզաբանելով ինքնաքննադատության լոզունգի վերաբերյալ կուսակցության դիրքորոշումը. հանդիսանալով այդ դիկտատուրայի միակ ղեկավարող ուժը, բոլշևիկյան կուսակցությունը չի կարող կենսականորեն շահագրգռված չլինել սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում ի հայտ եկող սխալների ու թերությունների շուտափույթ վերացման մեջ. որքան էլ մեծ ու աննախադեպ լինեն նվաճումները, այնուամենայնիվ, «դափնիների վրա հանգչելը» օրդանապես անհարիր է այն կուսակցությանը, որն իր գերագույն նպատակն է համարում աշխատավոր զանգվածների նյութական և հոգևոր հարաճուն պահանջմունքների բավարարումը։ Ով ուզում է իսկապես նպաստել սոցիալիստական շինարարության ուղիով մեր առաջընթացին, շարունակում էր թերթը, նա իրավունք չունի անգործության մատնելու բոլշևիկյան ինքնաքննադատության հզոր զենքը, քանի որ մեր բոլոր սխալներն ու թերությունները «կարող են վերացվել ու սրբագրվել ոչ թե օպոզիցիայի դեղատոմսերով, որոնք պատրաստվել են սոցիալ-դեմոկրատիայի դեղատանը, այլ միասնական ու միակամ լենինյան բոլշևիկյան կուսակցության և նրա ղեկավարությամբ գործող մարտնչող պրոլետարների ու աշխատավորների ուղեղով, կամքով և նրանց նվիրված աշխատանքով»[116]։

Ինքնաքննադատությունը, նշում էր մամուլը, «լինելով սոցիալիզմի գործնական կառուցման ամենահատու զենքը, միաժամանակ այն միջոցն է, որի կիրառման հիման վրա մեր լայն մասսաները սովորում են ու դաստիարակվում, նրա բովով անցած նորանոր մարտիկներ են ասպարեզ ելնում»։ Ինքնին հասկանալի է, ուրեմն, որ ինքնաքննադատության ճնշման ամեն մի փաստ անխուսափելիորեն վերածվում է սոցիալիզմի դեմ ուղղված ոտնձգության և հենց այդ տեսակետից էլ պետք է գնահատվի ու դատապարտվի։

116 «Խորհրդային Հայաստան», 1928, № 93։

Անտեսել, արհամարհել կամ ճնշել ինքնաքննադատությունը՝ նշանակում է «չլուծել սոցիալիստական վերակառուցման խոշորագույն պրոբլեմները», «անտեսել լայն մասսաներին մոբիլիզացնելու այնքան կարևոր խնդիրը», «թերագնահատել նրանց հսկայական ուժն ու ստեղծագործական ունակությունները»։ Հենց այստեղ էլ պիտի փնտրել այն դրդապատճառները, բացատրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, որոնք աջ օպոզիցիային այդքան վճռականորեն դուրս են բերում ինքնաքննադատության լոզունգի դեմ։ Ահա թե ինչու «ինքնաքննադատության՝ սոցիալիզմի կառուցման կարևորագույն մեթոդի ճնշման ու հալածման դեպքերը կուսակցությունը միանգամայն իրավացի կերպով որակում է որպես աջ օպորտունիստական թեքման կոնկրետ արտահայտություն. ահա թե ինչու ինքնաքննադատության լայն ու վճռական ծավալման համար մեր մղած համառ պայքարը խարսխվում է աջ թեքման դեմ տարվող համակուսակցական պայքարին, կազմում նրա անբաժան մասը»[117]։

Երբ մամուլում սկսեցին ավելի հաճախակի երևալ քննադատական բնույթի նյութեր, ոմանք տրտնջացին, թե ժամանակից շուտ, հետևապես անտեղի ու ավելորդ է մամուլի ցուցաբերած այդպիսի հախուռն ու հապճեպ ակտիվությունը. «Ինքնաքննադատության կարևորությունը դեռ չի մասսայականացված, մեր ժողովուրդը, մանավանդ գյուղական վայրերում, դեռ գաղափար չունի այդ մասին, իսկ թերթերն սկսել են արդեն ոմբակոծել»,—դժգոհում էին նրանք։ Նախ հարկավոր է լրիվ, մինչև վերջ մասսայականացնել ինքնաքննադատության լոզունգը և ապա նոր սկսել դրա գործնական կիրառումը,—այս էր այդպես մտածողների տեսակետը, որը «Խորհրդային Հայաստան» թերթը ճիշտ կերպով համարեց միակողմանի, սխոլաստիկ ու մեխանիկական պատկերացումների հետևանք։ Որ ինքնաքննադատության կարևորությունը պետք է ավելի խորը բացատրել ու մասսայականացնել, նշում էր թերթը, դա ինքնին հասկանալի ու միանգամայն ճիշտ պահանջ է, բայց չի կարելի դրանից ելնելով՝ չտեսնել-ժխտել այն ամենը, ինչ արված է ու արվում է ինքնաքննադատության լոզունգը աշխատավոր զանգվածներին հասցնելու ասպարեզում։ Այդ բանի լավագույն ապացույցներից մեկը ինքնաքննադատության բաժինների առկայությունն է «մեր բոլոր թերթերում». «Տեսեք որքա՜ն են գրում

117 Նույն տեղում, 1929, № 214։

թեկուզ և... գյուղական վայրերից, որքա՞ն կարևոր մերկացումներ ու դիտողություններ են արվում»[118]։ «Խորհրդային Հայաստան»-ը հիմնովին սխալ էր համարում նաև այն միտումը, թե՝ «չպիտի ամբակոծեն թերթերը, մինչև բոլորն անխտիր դաղափար կազմեն ինքնաքննադատության մասին». «դրա համար հատուկ կուրսեր կամ դպրոցներ հո չպիտի՞ բացվեն,— առարկում էր թերթը։—Հենց այդ աշխատանքի ասպարեզ ներդրավելով է, որ «դաղափար չունեցողներին» պետք է դաղափար կազմել տանք»[119]։

1928 թ. մայիսի 15-ից «Խորհրդային Հայաստան»-ում սկսեցին լույս տեսնել «Բանդյուղտեսչության թերթիկ»-ները՝ Ինքնաքննադատություն-մասսաների հսկողություն ընդհանուր խորագրով։ Բացատրելով այդ նոր ձեռնարկման կարևորությունը, խմբագրությունն ընդգծում էր, որ ««Թերթիկը», որպես մասսաների ինքնաքննադատության ու հսկողության օրգան, առանձնապես արժեքավոր կլինի միայն այն ժամանակ, երբ մենք կարողանանք լիովին կենսագործել Համկոմկուսի ԿԿՀ վերջին պլենումի հետևյալ դիրեկտիվները. «Անհրաժեշտ է ջանալ, որ թերթիկներում չմատնանշվեն մանր-մունր թերություններ, այլ տրվեն մեր շինարարության հիմնական բնագավառների թերությունների լուրջ ու հիմնավորված քննադատությունները՝ մեր նվաճումների հետ միասին, այսպիսով երևան հանելով մեր լավ աշխատանքների առանձին դեպքերը, որոնց օրինակին արժե հետևել։ Միաժամանակ անհրաժեշտ է ջանալ, որ այս կամ այն բացը քննադատող բանվորը և գյուղացին առաջադրեն նաև դրանք վերացնելու միջոցները»[120]։ Նույն թվականի 7 ամիսների ընթացքում «Խորհրդային Հայաստան»-ում լեռնեղվեցին 20-ից ավելի «ԲԳՏ թերթիկ»-ներ. հաջորդ տարում այդ քանակը գրեթե կրկնապատկվեց։ «Թերթիկ»-ներում տպագրված է մոտ 700 նյութ՝ թղթակցություն, նամակ, ռեպլիկ, ֆելիետոն և այլն։ Զգալի թիվ են կազմում նաև քննադատական մոտիվներով կատարված դիպուկ ծաղրանկարները, որոնցով հաճախ հանդես էր գալիս Հ. Տ. Ավագյանը։

Սկզբնական շրջանում, ինչպես «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրությունն էր նշում Անդրերկում ուղարկած հաշվետվության մեջ՝ «Թերթիկ»-ը մասսայական չէր, որովհետև նրան մասնակցում էին, այն էլ պատահական կերպով, լոկ հիմնարկների աշխատա-

118 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1928, № 189։

119 Նույն տեղում։

120 Նույն տեղում, № 112։

կիցները, մեծ մասամբ տպագրվում էին խմբագրության կամ ԲԳՏ մարմինների աշխատողների գրածները[121]։ Այս հանգամանքը կարող էր լուրջ թերության վերածվել և ձախողել ամբողջ գործը, եթե խմբագրությունը շուտով «Թերթիկ»-ի աշխատանքներում չներգրավեր մասնագիտական թղթակիցներին։ Ստիպողաբար բարելավվեց նաև «Թերթիկ»-ում տպագրվող նյութերի բովանդակությունը. ոչ էական, մանր-մունր թերությունների, պատահական վրիպումների փոխարեն՝ ավելի հաճախ էին քննադատության կրակի տակ առնվում անտնտեսավարության ու բյուրոկրատիզմի վնասակար դրսևորումները, կամայականության փաստերը։ Ըստ որում՝ խմբագրությունը ջանում էր որքան հնարավոր է ավելի դիպուկ ու նպատակասլաց դարձնել «Թերթիկ»-ի ելույթները, ընտրել այնպիսի վերնագրեր, որոնք առաջին իսկ հայացքից ուշադրություն գրավեն, հետաքրքրեն ընթերցողին։ Ահա դրանցից մի քանիսը. «Մնաք բարով, 8000 ռուբլի», ««Անվերջ» ձմեռը և բամբակի սերմը» (1928, № 135), «Զարարատիկ կես կոպեկ» (№ 142), «Բյուրոկրատը և նրա պատիժը» (№ 148), «Յոթ փաստ և մի հարց» (№ 176), «Վարկեր... թափթփվածության համար», «Մեծ խայտառակություն փոքրիկ կոոպերատիվում» (№ 181), «Գայլին սովորեցրին ասել «Ա», ասաց՝ «Այծ»» (№ 289) և այլն։ «Թերթիկ»-ի քննադատական ելույթների արդյունավետության տեսակետից կարևոր էր նաև այն, որ ԲԳՏ-ն հետևում է, Մեր քննադատության արդյունքները, ինքնաքննադատության նախնական արդյունքները խորագրերի ներքո պարբերաբար զետեղվում էին հիմնարկ-ձեռնարկների ղեկավարներից ստացված պատասխանները՝ թերությունները վերացնելու նպատակով ձեռք առնված միջոցների մասին։

1933 թ. մարտի 21-ից «Խորհրդային Հայաստան»-ում զետեղվում էր «ԿՎՀ—ԲԳՏ-ի թերթիկ»-ը, որն ղեկավարելու դեր խաղաց հատկապես գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպված անցկացնելու, գյուղում տեղ գտած բյուրոկրատիզմի երևույթները մերկացնելու գործում։ «Սոցիալիստական շինարարության տվյալ էտապում,— գրում էր խմբագրությունը «Թերթիկ»-ի հրատարակման առթիվ,— բյուրոկրատը դասակարգային թշնամու գործակալն է, անկախ նրանից, թե կուլակ է նա ի՞նքը, թե կաշառված է կուլակության կողմից. միանգամայն պարզ է, որ կուլակը փորձում է ամեն կերպ հրահրել բյուրոկրատիզմն ապարատի բոլոր օղակնե-

121 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1. ց. 13, գ. 344, թ. 21։

ում, օգտագործելով այդ ամենը խորհրդային իշխանության ձեռնարկումների և գլխավորապես կոլտնտեսությունների դեմ իր մղած պայքարում»[122]: *Այս տեսանկյունից էլ հենց «ԿՎՀ—ԲԳՏ-ի թերթիկ»-ում բարձրացվում էին աշխատանքային կարգապահության ամրապնդման, հանրային սեփականության պահպանման, բերքի բաշխման հետ կապված խնդիրները, բացահայտվում այն թերություններն ու սխալները, որոնք խանգարում էին պետական պարտավորությունների կատարմանը:*

Ինքնաքննադատության լոզունգի գործնական կիրառման համար լայն աշխատանք ծավալեցին նաև հանրապետության մյուս պարբերականները, հատկապես «Բանվոր» և «Ավանգարդ» թերթերը: «Բանվոր»-ում նույնպես 1928 թ. կեսերից սկսած ամիսը 3—4 անգամ տպագրվում էին նպատակային էջեր՝ Պրոլետարական մասսաների հսկողության տակ *ընդհանուր խորագրով: Թերթը բացահայտում-քննադատում էր արդյունաբերության և քաղաքաշինության մեջ առկա թերությունները, արծարծում բանվորների սննդի բարելավման, կենցաղային ու կուլտուրական պահանջմունքները պատշաճ կերպով բարելավելու հարցերը, հանդես էր գալիս բյուրոկրատիզմի և պետական-հանրային սեփականության վատնումների ու հափշտակումների դեմ*[123]:

Առանձնակի ակտիվություն հանդես բերեց «Ավանգարդ»-ը: Ինքնաքննադատության հարվածների տակ, «Թեթև հեծելազորը» գրոհում է, Պայքար աշխատանքային դիսցիպլինայի համար, Գրոհենք բյուրոկրատիզմի դեմ *և այլ խորագրերի ներքո թերթը պարբերաբար տպագրում էր քննադատական նյութեր, թղթակցություններ, նամակներ, որոնք մեծ մասամբ աչքի են ընկնում իրենց կոնկրետությամբ, դիպուկ բնութագրումներով, հրատապ հարցադրումներով: Այդ էջերում ու բաժիններում հաճախակի գետեղվում էին Հովհ. Շավարշի կատարած ծաղրանկարները: Թերթն ամփոփում էր հանրապետության քաղաքներում ու շրջաններում գործող կոմերիտական «Թեթև հեծելազոր»-ների ստուգման արդյունքները, խարազանում նրանց հայտնաբերած բյուրոկրատիզմի, աշխատանքային կարգապահության խախտման, երիտասարդության հոգսերի նկատմամբ անհոգի վերաբերմունքի փաստերը. ուշադրությունից չէին վրիպում նաև կոմերիտական ապարատում նկատ-*

---

122 *«Խորհրդային Հայաստան», 1933, № 66:*

123 *Տե՛ս «Բանվոր», 1928, №№ 74, 75, 76, 79, 82, 84, 90, 93 և այլն:*

վող թերություններն ու սխալները։ Արդյունավետ էին մասնավորապես խմբագրության «Բանվորական բաժնի» կազմակերպած ստուգայցերը Լենինականի տեքստիլ գործարանում, դեպոյում, Ալավերդու հանքերում[124]։ Ստուգման արդյունքները հրապարակվում էին թերթում՝ առանձին էջով կամ բաժիններով։

1931 թ. հունվարից «Ավանգարդ»-ի 4-րդ էջի անկյունում սկսեցին զետեղվել «Թերև հեծելազոր»-ի թերթիկ»-ները։ Խմբագրությունը զգալի աշխատանք կատարեց առանձին շրջաններում, արդյունաբերական ձեռնարկություններում, հիմնարկներում «Թերթև հեծելազորային» ջոկատներ ու խմբեր ստեղծելու, նրանց գործունեությունը բարելավելու, ԲԴՏ մարմինների հետ համագործակցությունը կարգավորելու ուղղությամբ։ Կարևոր նշանակություն ունեցան «Ավանգարդ»-ի ելույթները «Թերթև հեծելազոր»-ի ջոկատների աշխատանքում նկատվող թերությունների, այդ շարժման էության ու սկզբունքների թյուրըմբռնումների դեմ։ ««Թերև հեծելազորային» շարժումը,— ընդգծում էր թերթը,—լայն կամավորության, ինքնագործունեության և նախաձեռնության վրա կառուցվող շարժում է», չի կարելի այն սահմանափակել-խցկել «շոր-պաշտոնական» շրջանակների մեջ, զրպարտություններով ու նախապես կազմված սխեմատիկ հրահանգավորումներով կանխորոշել նրա ընթացքն ու արդյունքները. մի խոսքով՝ անհանդուրժելի է, դիպուկ կերպով նկատում էր թերթը, երբ «բյուրոկրատիզմի դեմ ուղղված շարժումը բյուրոկրատական աղավաղման է ենթարկվում»[125]։

«Թերթև հեծելազոր»-ի համամիութենական ռեյդի առթիվ 1934 թ. հրատարակվեց ՀԼԿԵՄ Երևանի քաղաքային կոմիտեի օրգան «Գրոն» թերթիկի մի քանի համար (Պատ. խմբ.՝ Ա. Թադևոսյան)։

Առհասարակ պարբերական մամուլը հատուկ ուշադրություն էր դարձնում ինքնաքննադատության լոզունգի գոհհկացման ու աղավաղման փաստերին, ամենայն խստությամբ հանդես էր գալիս մասսաների քննադատությունը արհամարհելու կամ ճնշելու փորձերի դեմ։ «Բացահայտ կերպով, իհարկե, այժմ ոչ ոք դեմ չէ ինքնաքննադատության լոզունգին և մասսաների հսկողությանը,— նկատում էր «Բանվոր»-ը առաջնորդողներից մեկում,— բայց մեր հիմնարկներում կան չափազանց մեծ թվով մարդիկ, որոնք մտա-

---

124 Տե՛ս «Ավանգարդ», 1928, №№ 72, 74, 79, 87, 91, 93։

125 Նույն տեղում, 1929, № 68։

ծում են այսպես. «Քննադատեցեք և հսկեցեք՝ որքան ուզում եք, դա այժմ մոդա է, իսկ մենք մեր գործը գիտենք»։ Սա,— եզրակացնում էր թերթը,— բյուրոկրատիզմի և չինովնիկության ամենավատթարագույն տեսակն է»[126]։ Բայց առանձին պիտեր, նշում էր մամուլը, երբեմն ավելի հեռուն են գնում, ոչ միայն անհրաժեշտ պայմաններ չեն ստեղծում ինքնաքննադատության ծավալման համար, այլև «ավելի տեղյակ ու համարձակ քննադատների բերանն են փակում, առանց այլևայլության դասում են խառնակիչների շարքը և դուրս են գցում հիմնարկությունից»։ Այս երևույթը որակելով իբրև «ինքնաքննադատությունը ճնշելու բյուրոկրատական փորձ», «Խորհրդային Հայաստան»-ը ճիշտ կերպով գտնում էր, որ դրա առաջն առնելու համար անհրաժեշտ է «էլ ավելի վճռաբար ու համարձակ ծավալել ինքնաքննադատությունը ներքևից», խիստ պատասխանատվության կանչել բոլոր նրանց, ովքեր «գիտակցաբար թե անգիտակցաբար ճնշում են ինքնաքննադատությունը»[127]։

Պակաս վնասակար չէ և այն, նշում էր մամուլը, երբ առերևույթ իբր թե ուշադրություն են դարձնում ինքնաքննադատությանը, «զեկուցումներ են լսվում», «բանաձևեր են հանվում», բայց իրականում ճնշվում-հալածվում է քննադատական ճշմարիտ խոսքը. երբեք չպետք է մոռանալ, որ այնտեղ, ուր այդպիսի «քամելյոնական» մոտեցում են ցուցաբերել ինքնաքննադատությանը և մասսաների հսկողությանը՝ «սոցիալիզմի գործնական կառուցման մարտական հեղափոխական լոզունգը կորցրել է իր ստեղծարար նշանակությունը, վարկաբեկվել է»[128]։

Պարբերական մամուլը ժամանակին կանխեց նաև ինքնաքննադատության թերագնահատման կամ թուլացման այն դրսևորումները, որ նկատելի դարձան մասնավորապես սոցիալիստական մրցության ծավալման առաջին ամիսներին։ Բանն այն է, որ «սոցիալիստական մրցության սկսումով ոմանք կարծեցին, թե ինքնաքննադատությունն արդեն վերջանում է և սկսվում է նոր լոզունգի կիրառումը»։ Այդպես մտածողները, նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը, ելնում են այն սխալ պատկերացումից, թե ինքնաքննադատության լոզունգը կամպանիան բնույթ ունի և անտեսում են նրա ստեղծագործական ոգին[129]։

---

126 «Բանվոր», 1929, № 32։

127 «Խորհրդային Հայաստան», 1929, № 220։

128 Նույն տեղում, № 221։

129 Նույն տեղում, № 214։

Ինքնին հասկանալի և շատ բնական է, որ պարբերական մամուլն ինքնաքննադատաբար էր մոտենում նաև իր սեփական աշխատանքին։ Եթե ինքնաքննադատության լոզունգի կիրառման առաջին շրջանում ինչ-որ չափով դեռևս անխուսափելի էին անճշտությունները ու սխալները, ապա հետագայում արդեն պարզապես անհանդուրժելի էին այդպիսի վրիպումները մամուլի էջերում։ «Ամենագլխավոր թերությունը,— նշում էր «Լենինյան ուղի»-ն,— որ երբեմն նկատվում է, այդ այն է, որ երբեմն տպագրվում են սխալ կամ մանր ու չնչին փաստերի հիման վրա կազմված ու սենսացիայի և տնտեսավարների վարկաբեկման ձգտող հոդվածներ։ Թերթերի խմբագրությունները պետք է շատ զգույշ լինեն, որպեսզի չտպագրվեն այդ տեսակի հոդվածներ և թղթակցություններ»[130]։ Ոչ մի դեպքում մամուլի էջերը չպետք է տրամադրել այն մարդկանց, ովքեր փորձում են օգտվել քննադատելու իրավունքից՝ «այս կամ այն հիմնարկությանը, այս կամ այն աշխատողին շահադիտական նպատակներով վարկաբեկելու համար», մանավանդ որ, հիշեցնում էր նույն ամսագիրը մի այլ առիթով, «եղել են դեպքեր, երբ հեղափոխական օրինականությունն ամենակոպիտ կերպով խախտվել է. օրինակ՝ այս կամ այն պաշտոնյան հեռացվել է գործից, հանվել է աշխատանքից լոկ այն փաստի հիման վրա, որ նրա մասին թերթում լույս է տեսել «մերկացնող» թղթակցություն՝ առանց վերջինիս բովանդակությունը ստուգելու, առանց համապատասխան քննություն կատարելու, առանց «մերկացվողի» բացատրությունները լսելու»։ Այս երևույթի հետևանքը, եզրակացնում էր հանդեսը, անխուսափելիորեն լինում է «դարձյալ ինքնաքննադատության լոզունգի վարկաբեկումը»։ Ահա թե ինչու խմբագրությունները ոչ միայն զգոն և շրջահայաց պիտի լինեն քննադատական նյութեր տպագրելիս, այլև հարկ եղած դեպքում չպետք է խուսափեն ինքնաքննադատությունից, սեփական վրիպումները խոստովանելուց՝ չվախենալով «թերթի բարձր հեղինակության» սասանումից. այդպիսի «վախը», կեղծ ինքնասիրության հոգեբանությունը, որ բխում է «միանգամայն նայիվ և թյուր տեսակետից», «պետք է արմատախիլ անել»[131]։

Մամուլի քննադատական ելույթների առթիվ հաճախ էր դրվում թղթակցությունների նախնական ստուգման խնդիրը։ Ըստ

130 «Լենինյան ուղի», 1928, № 8—9, էջ 72։
131 Նույն տեղում, 1929, № 4—5, էջ 50։

որում՝ այստեղ առկա էր երկու տարբեր կարծիք, իրար հակադիր երկու տեսակետ. մեկի կողմնակիցները պահանջում էին ամեն մի հոդված կամ թղթակցություն անպայմանորեն նախապես քննել-ստուգել և նոր միայն հրապարակել, իսկ մյուսները, ընդհակառակը, գտնում էին, որ ստացվող բոլոր նյութերն էլ հարկավոր է տպագրել՝ առանց որևէ ստուգման։ Անդրադառնալով այս հարցին, «Լենինյան ուղի»-ն երկու տեսակետներն էլ համարում էր ծայրահեղություն՝ շեշտը դնելով խմբագրությունների ճկուն և բանիմաց աշխատանքի կազմակերպման վրա։ «Ամեն ինչ նախօրոք ստուգել անկարելի է,—բացատրում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը,—որովհետև այդ դեպքում լրագրերը հետ կմնան և ինքնաբննադատությունը կկորցնի իր նշանակությունը. մյուս կողմից էլ՝ տպել այն ամենը, ինչ որ գրում են և այն էլ առանց որևէ ստուգման՝ նույնպես անկարելի է, վնասակար և վտանգավոր։ Այստեղ անհրաժեշտ է վարպետ և պատասխանատու ղեկավարություն մեր լրագրերի խմբագրությունների կողմից»։ Այս պահանջն ավելի անհրաժեշտ ու կարևոր է դառնում, եթե նկատի ունենանք մանավանդ, որ մամուլի օրգանները պարտավոր են դրել «ոչ միայն այն թերությունների և սխալների մասին, որոնք արդեն տեղի են ունեցել և տվել են բացասական արդյունքներ», այլև տպագրել «կանխիչ և կանխատեսող հոդվածներ»[132]։

5

1927 թ. դեկտեմբերին ՀամԿ(բ)Կ XV համագումարը հանձնարարեց Կենտկոմին՝ մշակել ժողովրդական տնտեսության զարգացման 5-ամյա պլանի դիրեկտիվները և քննարկել կուսակցական, խորհրդային, արհմիութենական կազմակերպություններում, աշխատավորների ամենալայն շրջաններում։ Ջախջախելով աջ օպորտունիստների կապիտուլյանտական դիմադրությունը, կուսակցությունը ձեռնարկեց ժողովրդական տնտեսության տեխնիկական վերազինման համապատասխան բազայի ստեղծման և սոցիալիստական էկոնոմիկայի կառուցման նպատակին ուղղված պլանի մշակմանը։ Հաջորդ տարվա վերջերին Խորհրդային Միության բոլոր թերթերը հրապարակեցին 5-ամյա պլանի կոնտրոլ թվերը, որոնք դրվեցին համաժողովրդական քննարկման։ 1929 թ. մարտին

---

132 «Լենինյան ուղի», 1928, № 8—9, էջ 73։

ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Աշխատանքի ու պաշտպանության խորհրդի համատեղ նիստում, որին մասնակցում էին հանրապետությունների ներկայացուցիչներն ու մամուլի աշխատողները, քննության առնվեց 5-ամյա պլանի նախագիծը և որոշվեց հաստատման երաշխավորել նրա օպտիմալ տարբերակը: Կուսակցության XVI կոնֆերանսում քննարկվելուց հետո՝ հնգամյա պլանը 1929 թ. մայիսին հաստատվեց Խորհուրդների V համագումարում և ստացավ օրենքի ուժ:

Այս ամբողջ ժամանակաշրջանում արդյունավետ աշխատանք կատարեց Խորհրդային Միության ողջ պարբերական մամուլը, որը «չթուլացող ուշադրությամբ հետամուտ էր ինչպես պլանի կազմման ընթացքին, այնպես էլ աշխատավորական կոլեկտիվների կողմից նրա քննարկմանը»[133]: Անդրադառնալով 5-ամյա պլանի հաստատումից հետո պարբերական մամուլի անելիքներին, «Պրավդա»-ն ընդգծեց, որ «այժմ հնգամյակը աշխատանքի առանցք է լինելու ամեն մի թերթի համար, սկսած «Պրավդա»-ից մինչև գյուղական պատի լրագիրը»[134]:

Մեր հանրապետությունում ևս 5-ամյա պլանի խնդիրները, դերն ու նշանակությունը պարզաբանելու և պրոպագանդելու գործում,— քաղաքական այդ կարևոր աշխատանքում,— խոշոր ծառայություն մատուցեց պարբերական մամուլը: Դեռևս 1928 թ. սկզբներից թերթերն ու հանդեսները տպագրում էին բազմաթիվ և բազմազան բնույթի նպատակային նյութեր՝ ինֆորմացիայից սկսած մինչև առաջնորդողներն ու հատուկ էջերը, խոսուն թվերով ու մատչելի փաստարկումներով լուսաբանելով այն հեռանկարները, որ բացում էր հնգամյակը արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրական շինարարության ամենատարբեր ասպարեզներում: Ըստ որում՝ այդ ամենը արվում էր օգտագործելով լրագրային բոլոր ժանրերը, կիրառելով ժուռնալիստական տարբեր ձևեր ու հնարանքներ: Այդ նյութերում դժվար չէ գտնել և՛ պրոպագանդիստական-բացատրական բնույթի հանդամանալից հոդվածներ ու զրույցներ, և՛ հրապարակախոսական պաթոսով շնչող խմբագրականներ, և՛ արտաքուստ «չոր», բայց ըստ էության խոսուն ու տպավորիչ աղյուսակներ ու դիագրամներ, և՛ կոլեկտիվների ժողովներում ընդունված ողջույնի բանաձևեր ու կոնկրետ առա-

133 «Партийная и советская печать в борьбе за построение социализма и коммунизма», стр. 140.

134 «Правда», 1 июня 1929 г.

ջարկ-պարտավորություններ, և՛ աշխատավորական նամակներ ու մտորումներ... Մի խոսքով՝ մամուլը գործի էր դրել իր բոլոր միջոցներն ու հնարավորությունները՝ մասսաների միտքն ու ջանքերը մոբիլիզացնելու, նրանց ստեղծագործական խանդավառությունը բորբոքելու համար։

Պարբերական մամուլն սկզբունքային նշանակություն էր տալիս 5-ամյա պլանների պարզաբանմանը այն տեսանկյունից, թե ինչպիսի կարևորություն ունեին կուսակցության նախագծումները ազգային հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական զարգացման արագ տեմպերն ապահովելու գործում, միաժամանակ ընդգծելով այդ պլանների համամիութենական, համընդհանուր բնույթը՝ իբրև ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության միասնական ծրագրի, որը մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների շահերը ներդաշնակում է միևնույն վերջնական նպատակի մեջ։ Այս ոգով էր ներթափանցված ամբողջ Խորհրդային Միության, այդ թվում և մեր հանրապետության պարբերական մամուլը։ «Խորհրդային Հայաստանի տնտեսական շինարարության հերթական խնդիրները բնորոշելիս և նրա հիմնական ուղիներն ուրվագծելիս,— պարզաբանում էր ՀԿ(բ)Կ կենտրոնական օրգանը,— անհրաժեշտ է իբրև նկատի ունենալ Խորհրդային Միության զարգացման գլխավոր ուղին, այն է՝ երկրի ինդուստրալիզացիան և մանր գյուղացիական տնտեսության կոոպերացումն ու կոլեկտիվացումը։ Մեր երկրի զարգացման կոնկրետ պլանը մշակելիս պետք է հենվել Խորհրդային Միության և Անդրկովկասի ժողովրդական տնտեսության զարգացման կոնկրետ ծրագրի վրա։ Առանց այդ շաղկապված ծրագրի ոչ մի խոսք չի կարող լինել ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման մասին»[135]։ Թերթերն ու հանդեսները ընդգծում էին սոցիալիստական շինարարության ինտերնացիոնալ բնույթը, ազգային հանրապետությունների ուժերի և հնարավորությունների կոնսոլիդացիայի անհրաժեշտությունը՝ փոխադարձ օգնության, համագործակցության, ընդհանուր շահերի հաշվառման սկզբունքի և վերջնական նպատակի միասնականության հիմքի վրա։ Չպետք է մոռանալ հրթեք,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, որ «ազգային հանրապետությունների արդյունաբերության ու գյուղական տնտեսության զարգացումը, բարձրացնելով տեղական աշխատավորության նյութական բարեկեցությունը, միա-

135 «Խորհրդային Հայաստան», 1929, № 21։

ժամանակ նպատակ ունի ամրացնելու ողջ Խորհրդային Միության ինդուստրացումը՝ պրոլետարիատի դիկտատուրայի ու սոցիալիզմի նյութական այդ բազան»: Բայց դա, շարունակում էր Թերթը, բնավ էլ չի նշանակում, թե ինչ-որ չափով տուժելու է ազգային հանրապետությունների տնտեսական կամ կուլտուրական զարգացումը, թե նրանք ետ են մնալու ընդհանուր մակարդակից: Այդպես մոտենալ հարցին, կնշանակեր խաչ քաշել կուսակցության ծրագրումների սոցիալիստական բնույթի վրա: Ընդհակառակը, հիշեցնում էր Թերթը, XV համագումարն իր ընդունած որոշման մեջ «հատկապես ընդգծում է, որ հնգամյա ծրագիրը պետք է առանձին ուշադրություն դարձնի ազգային հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու վրա՝ «նպատակ դնելով ավելի արագ տեմպով զարգացնել նրանց էկոնոմիկան և կուլտուրան»»[136]:

Վերոհիշյալ ճիշտ ըմբռնումից ելնելով էլ, ահա, խորհրդահայ պարբերական մամուլը ձեռնամուխ եղավ ինչպես ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյակի, այնպես էլ նրա բաղկացուցիչ մասը կազմող ՀՍԽՀ 5-ամյա պլանի քննարկմանն ու պարզաբանմանը: Ինչպես հայտնի է, ՀԿ(բ)Կ VI համագումարը (1929 թ. հունվար) հավանություն տվեց հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման 5-ամյա պլանի նախագծին, միաժամանակ անհրաժեշտ համարելով մինչև նրա վերջնական ընդունումն ու հաստատումը, որ կատարվեց Խորհուրդների VI համագումարում (1929 թ. ապրիլ), համաժողովրդական քննարկման դնել՝ կուսակցական ու բանվորական լայն մասսաների ամենաակտիվ մասնակցությամբ:

Այս հանգամանքին կարևոր և սկզբունքային նշանակություն էր տալիս մամուլը՝ 5-ամյա պլանի կազմումը համարելով «խիստ դժվարին և պատասխանատու գործ, որ իր բոլոր մանրամասնություններում պահանջում է լուրջ գիտական հիմնավորում, հստակ դասակարգային դիծ և բոլոր նյութական միջոցների մանրազնին հաշվառում»: Բոլոր ժողկոմատների պատասխանատու աշխատողները, խնդիր էր դնում «Խորհրդային Հայաստան»-ը, պարտավոր են մամուլի էջերում և մասսայական ժողովներում քննարկման դնել իրենց մշակած տնտեսական ծրագրերը, որոնց շուրջ պետք է սկսել մտքերի ակտիվ փոխանակություն. «Չպետք է լինի մի գործա-

136 Նույն տեղում, 1928, № 27:

բան, որի բանվորությունը գեկույցներ չլսի հնգամյակի մասին»։ Թերթն ընդգծում էր այդ միջոցառման կարևորությունն ու արդյունավետությունը թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական տեսակետից. տնտեսական խնդիրների մասսայական քննությունը նախ՝ «բանվորության ստեղծագործող ուժերի մոբիլիզացիայից զատ՝ նպաստում է ինքնաքննադատության ծավալմանը, մաքսիմալ չափով ճշտում է մեր տնտեսական պլանները և, իրոք, նրանց իրագործումը դարձնում մասսաների անմիջական գործը». և ապա՝ դրանով «մենք միաժամանակ դիմակալերծ ենք անում այն աջ թերման տարրերին, որոնք իրենց սխալ և հերյուրած հայտարարություններով փորձում են մասսաների մեջ շփոթ առաջ բերել, պընդելով, թե իբր մենք «թալանում ենք գյուղը», կամ անհրաժեշտ աջակցություն չենք ցույց տալիս շքավորական-միջակային տնտեսություններին»[137]։

5-ամյա պլանով նախատեսվում էր մեր Հանրապետությունում գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության, էլեկտրիֆիկացիայի, շինանյութերի արդյունահանման զարգացում և ընդլայնում, կառուցվելու էին ծանր ինդուստրիայի նոր ձեռնարկություններ Ալավերդում, Ղափանում, Ղարաբիլիսայում, Դավալուում, կոլտնտեսությունների մեջ էր ընդգրկվելու գյուղացիական տնտեսությունների 17 տոկոսը։ Հայաստանին հատկացվում էր 277 մլն ռուբլի, որից 118 միլիոնը՝ արդյունաբերության մեջ ներդնելու համար։ Արդյունաբերության համախառն արտադրանքն ավելանալու էր 4 անգամ, այդ թվում արտադրության միջոցների արտադրությունը՝ ավելի քան 5,5 անգամ։

Պարբերական մամուլը հանգամանորեն լուսաբանում էր այս ամենը՝ հատուկ հոդվածներ, զրույցներ, պրոպագանդիստական նյութեր նվիրելով ժողովրդական տնտեսության յուրաքանչյուր ճյուղի զարգացման հեռանկարների բնութագրմանը։ Հնգամյակին նվիրված պարբերաբար գործող բաժիններ բացվեցին «Խորհրդային Հայաստան»-ում, «Բանվոր»-ում, «Մաճկալ»-ում, «Ավանգարդ»-ում, «Լենինյան ուղի»-ում, «Աշխատանք»-ում և մյուս թերթերում ու ամսագրերում։ Մամուլի էջերում հանդես էին գալիս պետական-հասարակական գործիչները, արդյունաբերության և գյուղատնտեսության գեկավար աշխատողները, մասնագետները, կուլտուրայի գործիչները, բանվորներն ու գյուղի աշխատավորնե-

137 «Խորհրդային Հայաստան», 1929, № 58։

ը, թղթակիցները։ Բնորոշ է, որ այդ նյութերում զարգացման հեռանկարները գծագրվում էին ժողովրդական տնտեսության անցած ուղու ամփոփումների և ներկա վիճակի բնութագրումների համայնապատկերի վրա։ Առհասարակ կարելի է ասել, որ հնգամյակը յուրովի մի տիպ հանդիսացավ մամուլի համար՝ հանրագումարի բերելու խորհրդային իշխանության տարիներին ձեռք բերված նվաճումները նյութական և հոգևոր արժեքների ստեղծման ասպարեզներում։

Նույնքան հառնդուն ու հետևողական էր պարբերականների աշխատանքը նաև հնգամյա պլանի կենսագործման համար մղված համաժողովրդական պայքարում։ Մամուլի ամենախոշոր ծառայությունն այստեղ այն էր, որ նա դարձավ մասսաների ստեղծագործական նախաձեռնությունից ծնունդ առած սոցիալիստական մրցության ծավալման, «Հնգամյակը չորս տարում» լոզունգի կենսագործման ամենաարդյունավետ միջոցներից մեկը։

1929 թ. հունվարի 20-ին, «Պրավդա»-ում առաջին անգամ տպագրվեց Վ. Ի. Լենինի «Ինչպե՞ս կազմակերպել մրցությունը» հոդվածը, իսկ մի քանի ամիս անց՝ նաև «Խորհրդային իշխանության հերթական խնդիրները» հոդվածի նախնական ուրվագիծը, որոնց մեջ առաջադրված էր մասսայական սոցիալիստական մրցության կազմակերպման մի ամբողջ ծրագիր։ Լենինյան այս աշխատությունները անմիջապես լույս տեսան նաև երկրի մյուս պարբերականներում, ազգային հանրապետությունների մամուլում։ «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը,— գրել էր Վ. Ի. Լենինը,— այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզ, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[138]։

Մրցությունը իբրև աշխատավորական լայն խավերին սոցիալիզմի կառուցման մեջ ներգրավելու հզոր միջոց դիտելու լենինյան այս պատգամը ուղենիշ հանդիսացավ նաև պարբերական մամուլի համար։ Սոցիալիստական մրցություն ծավալելու բանվորների նա-

---

138 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 26, էջ 493—494։

խաձեռնությունը ջերմորեն սատարեց և հանրության սեփականությունը դարձրեց «Պրավդա»-ն, որին հետևեցին ազգային լեզուներով հրատարակվող պարբերականները՝ բարձր գնահատելով կուսակցության կենտրոնական օրգանի ծառայություններն ու դերը նաև այս ասպարեզում։ ««Պրավդա»-ն ոչ միայն լուսաբանում, այլև կազմակերպում է պրոլետարիատի լայն զանգվածները արտադրանքի ինքնարժեքի 7 տոկոսյա իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատանքային դիսցիպլինայի ամրացման խնդիրների շուրջը»,— գրում էր «Խորհրդային «Հայաստան»-ը և ապա ընդգծում. «Ամենուրեք առաջ մղելով բանվորական առաջավոր ջոկատների ակտիվությունը, «Պրավդա»-ն դարձել է սոցիալիստական մրցության մի ասպարեզ»[139]։

Ազգային հանրապետությունների պարբերական մամուլը լայնորեն լուսաբանում էր երկրի առաջավոր ձեռնարկությունների՝ «Պրավդա»-ի էջերում տպագրվող մրցահրավիրների արձագանքները տեղերում։ 1929 թ. մարտի 5-ին «Պրավդա»-ում հրապարակվեց Լենինգրադի «Կրասնի վիբորժեց» գործարանի կոլեկտիվի նամակը, որով արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու համար մրցման էին հրավիրվում Խորհրդային Միության բոլոր գործարանները։ Մրցահրավերին առաջինն արձագանքեցին Կամենսկի թղթի ֆաբրիկայի բանվորները, որոնց պատասխան նամակը նույնպես տպագրվեց «Պրավդա»-ում մարտի 21-ին։ Մի շաբաթ անց կուսակցության կենտրոնական օրգանի կազմակերպած այս մրցության մեջ ընդգրկվեցին արդեն 70 ձեռնարկություններ։ Հայաստանում մրցահրավերին առաջինը պատասխանեցին Երևանի կարբիդի գործարանի բանվորները։ «Պրավդա»-ին ուղարկած իրենց հեռագրում, որ հրապարակվեց «Խորհրդային Հայաստան» թերթի 1929 թ ապրիլի 3-ի համարում, կարբիդագործները գրում էին.

«Կարբիդի գործարանի բանվորների հանդիսավոր միտինգը ջերմագին ողջույն է հղում բանվորական մասսաների իսկական կազմակերպիչ՝ մեր բոլշևիկյան «Պրավդա»-ին։

Դեռ մարտի 14-ին մենք որոշել էինք ընդունել «Կրասնի վիբորժեց»-ի մրցահրավերը՝ ինքնարժեքի իջեցման մասին։ Այն պահին, երբ մենք դեռ չէինք վերջացրել մեր պատասխանը վիբորժեցիներին, ստացվեց «Պրավդա»-ի համարը, որտեղ զետեղված էր Կամենսկի գործարանի բանվորների նամակը ինքնարժեքի իջեց-

139 «Խորհրդային Հայաստան», 1929, № 76։

ման գործում նրանց ունեցած փայլուն նվաճումների մասին... Մենք ամուր սեղմում ենք «Կրասնի վիրտրժեց»-ի և Կամենսկի գործարանի բանվորական կոլեկտիվների ձեռքը և ընդունում ենք նրանց մրցանշանները՝ մայիսի 1-ին իջեցնել ինֆնարժեքը 7 տոկոսով»:

Համ(բ)Կ XVI կոնֆերանսի նախօրեին սոցիալիստական մրցությունն արդեն ստացել էր մասսայական բնույթ և դառնում էր համամիութենական զորեղ մի շարժում: Հաստատելով 5-ամյա պլանը, կոնֆերանսն ընդունեց Խորհրդային Միության բոլոր բանվորներին և աշխատավոր գյուղացիներին ուղղված դիմում[140], *որի մեջ կարևոր նշանակություն էր տրված սոցիալիստական մրցության հետագա ընդլայնմանն ու խորացմանը՝ այն դիտելով իբրև «աշխատավորներին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու մշտական մեթոդ»: Կոնֆերանսը նշեց մրցության հիմնական ձևերն ու եղանակները, պարտավորեցրեց մամուլի օրգաններին՝ «մասսաների դատաստանին ներկայացնել մրցող ձեռնարկությունների գործնական արդյունքների համեմատությունը, պարբերաբար լուսաբանելով մրցության ընթացքը և ամենալայն հետաքրքրություն հարուցելով նրա նկատմամբ»: Հնգամյա պլանը, ընդգծեց կոնֆերանսը, կապիտալիստական տարրերին հաղթահարելու համար բանվոր դասակարգի պայքարի, մասսաների սոցիալիստական վերազատիրակության, սոցիալիստական հասարակության հիմքի ստեղծման պլանն է, իսկ սոցիալիստական մրցությունը՝ այդ պլանի կատարման համար մասսաների նախաձեռնությունը արթնացնելու և կազմակերպելու, ինքնաքննադատությունը ներքևից զարգացնելու հզոր միջոց. «Մրցությունն ու ինքնագործունեությունը անխզելիորեն կապված են միմյանց հետ»:*

Այս հստակ դիրքավորումը կանխորոշեց նաև մեր երկրի պարբերական մամուլի բովանդակությունն ու աշխատանքի մեթոդը: «Սոցիալիստական մրցությունը» խորագրով առաջնորդողում[141] *«Խորհրդային Հայաստան»-ն ընդգծում էր. «Այն պայմաններում, երբ երկրի տնտեսության վերակառուցման գործին բազմամիլիոն մասսաներն են մասնակցում՝ օրինակը և մրցությունը խոշորագույն ուժ են դառնում»: Դրանով էլ հենց մրցման այս նոր եղանակը սկզբունքորեն և արմատապես հակադրվում է կապիտալիզմի օրոք մոլեգնող կոնկուրենցիային: «Պրոլետարիատի դիկտա-*

---

140 *Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 778—783*

141 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1929, № 104։*

տուրան,— գրում էր Թերթը,— ոչնչացնում է կապիտալիստական հասարակության հետ և կոնկուրենցիան։ Սոցիալիստական մրցությունը ոչ մի առնչություն չունի կոնկուրենցիայի հետ». այն նոր կյանքի կառուցման, առաջավոր փորձի տարածման, աշխատանքի բոլոր բնագավառներում տեղ գտած թերությունների հայտնաբերման ու վերացման գործավոր միջոցներից մեկն է, որ մեծապես նպաստում է սոցիալիստական հասարակարգի ամրապնդմանը, սոցիալիզմի կառուցմանը։

Սոցիալիստական մրցության ծավալումն իր հետ բերում էր մասսաների հսկողության ուժեղացում տնտեսական շինարարության բոլոր ասպարեզներում, մի հանգամանք, որ իր հերթին ավելի արդյունավետ ու նպատակասլաց էր դարձնում համաժողովրդական այդ շարժումը։ Տնտեսության ոչ մի բնագավառում մենք դաղտնապահության կարիք չունենք, նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը վերոհիշյալ խմբագրականում, ընդհակառակը, սոցիալիստական շինարարության հաջողությունն ապահովելու համար մեր մամուլը, մասսայական կազմակերպությունները հրապարակում և աշխատավոր զանգվածների սեփականությունն են դարձնում մեր ողջ շինարարության ընթացքը, նվաճումներն ու բացերը յուրաքանչյուր գործարանում, ամեն մի հիմնարկության մեջ կոլտնտեսությունում ու կոոպերատիվում. «Միայն այս կերպով կարելի է իրականացնել մասսաների կոնտրոլը, կազմակերպել նրանց ձեռներեցությունը և խորացնել ու ծավալել սոցիալիստական մրցությունը»։

Պարբերական մամուլը հաճախակի հիշեցնում էր կուսակցության այն ցուցումը, թե սոցիալիստական մրցումը պետք է դարձնել աշխատանքի մեթոդ, որը հնարավորություն կտա կազմակերպված հունի մեջ դնելու մասսաների ստեղծագործական եռանդն ու խանդավառությունը, կատարելագործելու տնտեսական ղեկավարման եղանակները, հայտնաբերելու արտադրողականությունը բարձրացնելու, ինքնարժեքն իջեցնելու թաքնված ռեզերվները, ամրապնդելու աշխատանքային կարգապահությունը։

Այս առումով սոցմրցման կազմակերպման խնդիրներին լուրջ և հետևողական ուշադրություն էր նվիրում հատկապես «Խորհրդային Հայաստան»-ը։ Բավական է նշել, որ 1929 թ. մայիս-դեկտեմբեր ամիսներին թերթը տպագրեց 9 առաջնորդող[142] և ավելի

142 Տե՛ս №№ 104, 113, 139, 144, 162, 177, 211, 260, 266։

բան 480 տարբեր բնույթի նյութեր, որոնք վերաբերվում էին «Սոցիալիստական մրցումը հնգամյակի հաջող կենսագործման գրավականն է», «Սոցիալիստական մրցումը լայն ծավալ է ստանում», «Լինենք սոցիալիստական մրցության առաջավոր դիրքերում», «Սոցիալիստական մրցման առաջին արդյունքները» և այլ խորագրերի ներքո։ Զգալի աշխատանք կատարեց նաև «Բանվոր»-ը։ Դեռևս այս հարցին նվիրված իր առաջին խմբագրականում[143] թերթը հայտնում էր, որ «իր էջերը լայն կերպով բաց է անում սոցիալիստական մրցման համար. բոլոր ցեխերը, գործարաններն ու արհեստանոցները թող անմիջապես քննության առնեն սոցիալիստական մրցման խնդիրները և իրենց որոշումներն ուղարկեն «Բանվոր»-ին... Ժամանակը չի սպասում. պետք է սկսել և լայնացնել սոցիալիստական մրցման աշխատանքները»։ Դրանից հետո, գրեթե յուրաքանչյուր համարում, «Սոցիալիստական մրցման ֆրոնտից» խորագրի ներքո թերթն առանձին բաժին էր հատկացնում քաղաքի ձեռնարկություններում ծավալված մրցման լուսաբանմանը։ Նշանակալից էր նաև «Ավանգարդ»-ի դերը մասնավորապես կոմերիտմիության նախաձեռնությունը կազմակերպելու և Մոսկվայի, Լենինգրադի, Ուրալի ու Բաքվի աշխատավորության օրինակով հանրապետության երիտասարդությանը հարվածային շարժման մեջ ներգրավելու գործում։ Հնգամյակը չորս տարում կատարելու համար մղվող համաժողովրդական պայքարում, նշում էր թերթը, մեծ և սրբազան պարտականություն ունի կատարելու երիտասարդ սերունդը, նրա ավանգարդ կոմերիտմիությունը. «Մեր լոզունգը հիմա պետք է լինի՝ ողջ կոմսոմոլը հարվածային բրիգադա, յուրաքանչյուր բջիջ մի բրիգադա։ Հարվածային բրիգադայից՝ հարվածային ցեխ, հարվածային ցեխից՝ հարվածային գործարան»[144]։

Սոցիալիստական մրցման ծնունդ հանդիսացող հարվածային բրիգադները, ճիշտ կերպով նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը, «այն ուժերն են, որոնք գալիս են մեր սոցիալիստական շինարարության մեջ լծակցված միլիոնավոր մասսաների աշխատանքի կազմակերպության ձևերի, ինչպես և այդ մասսաների հոգեբանության մեջ վճռական բեկում առաջ բերելու, սոցիալիզմ կառուցող նոր մարդու ամբողջական և անթերի տիպար կազմակերպելու»։ Հարվածային շարժումը լայն ծավալ է ստացել Միու-

---

143 Տե՛ս «Բանվոր», 1929, № 44։

144 «Ավանգարդ», 1929, № 94։

թյան տարբեր վայրերում, ընդգրկելով ոչ միայն առանձին ցեխեր, այլև ամբողջ գործարաններ. մինչդեռ մեր հանրապետությունում, գիտողություն էր անում թերթը, այդ շարժումը դեռևս պահանջված ծավալն ու խորությունը չի ստացել, «մեղանում կազմակերպված ջոկատներում տակավին տեղ չունեն հին, փորձված, որակավոր բանվորները, և շատ դեպքերում դրանք տակավին մնում են կոմերիտական օղակներ միայն»[145]։

Մամուլն ուշադրություն էր հրավիրում սոցմրցման ծավալման մեջ նկատվող նաև այլ թերությունների վրա։ Դատապարտելով որոշ տնտեսավարների ցուցաբերած «հանցավոր անտարբերությունը», «խորհրդային Հայաստան»-ը գրում էր. «Ոմանք էլ կարծում են, թե մրցումը՝ դա միայն բանվորների գործն է, թե նրա հաջողությունը միայն աշխատող մկանների լարվածության մեջն է, մոռանալով միանգամայն այն հսկայական դաստիարակչական նշանակությունը, որ ունի սոցիալիստական մրցումը արտադրության ողջ սիստեմի կազմակերպման համար»[146]։

Անդրադառնալով սոցիալիստական մրցության ծավալմանը գյուղում, մամուլը նշում էր, որ արդեն արված են առաջին քայլերը հատկապես բամբակագործական շրջանների կոլտնտեսություններում (Ղուրդուղուլի, Ղամարլու, Հրազդան). կնքվել են մրցման պայմանագրեր, սկսվել է պայքարը բերքատվությունը բարձրացնելու, ինքնարժեքն իջեցնելու, աշխատանքային կարգապահությունն ամրացնելու, ագրոտեխնիկական նոր ձևեր կիրառելու համար։ Այս բոլորը լավ է և իրախուսելի։ Վնասակար ու վտանգավոր կլիներ, սակայն, զգուշացնում էր «խորհրդային Հայաստան»-ը, անտեսել այն փաստերը, երբ մրցման պայմանագրերը մշակվում ու կնքվում են գրասենյակներում, առանց կոլտնտեսականների մասնակցության։ Մյուս կողմից՝ «վերևից իջեցվող» այդ պայմանագրերն ունենում են այնպիսի կետեր, որոնք չեն բխում կոլտնտեսությունների ռեալ հնարավորություններից (օրինակ՝ բերքի 30 տոկոսի բարձրացում) և այդպիսով անիրական են։ «Բյուրոկրատիզմի խայտառակ փաստ» էր և այն, որ 30—40 կոլտնտեսությունների վերևից հրամցնում էին միևնույն պայմանագիրը։ Այս ամենը ոչ այլ ինչ է, եթե ոչ «սոցիալիստական մրցման բյուրոկրատական աղավաղման ու դատարկ մրցականչի վտանգ», որից

145 «Խորհրդային Հայաստան», 1929, № 260։
146 Նույն տեղում, № 162։

ժամանակին զգուշացրել էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմը։ «Այդ վտանգը և նրա արտահայտության կոնկրետ դեպքերն ու երևույթները,— եզրափակում էր թերթը,—այժմվանից պետք է անխնա կերպով հարվածել, խարանել»[147]։

* * *

Սոցմրցման և նրա նոր աստիճանը հանդիսացող հարվածային շարժման կազմակերպման գործում կարևոր դեր ունեին կատարելու արհմիությունները. ուստի և պարբերական մամուլը սուր կերպով դնում էր արհեստակցական կազմակերպությունների աշխատանքը բարելավելու, նրանց ակտիվությունն ուժեղացնելու, սոցիալիստական շինարարության նոր խնդիրներին համապատասխան գործունեության ձևեր ու եղանակներ կիրառելու պահանջը։ Միաժամանակ մամուլի էջերում, հատկապես արհմիութենական պարբերականներում, բացահայտվում-քննադատվում էին մի շարք կազմակերպություններում առկա թերություններն ու սխալները, որոնք բխում էին սոցմրցման ծավալման ու ղեկավարման գործում արհմիություններին վերապահված դերի ոչ հստակ, երբեմն աղավաղված պատկերացումներից։ «Սոցիալիստական մրցման ընթացքը» խորագրով խմբագրականում ՀԱՄԽ-ի օրգան «Աշխատանք» երկշաբաթաթերթն արձանագրում էր երկու կարևի խոշոր թերություն։ Մեկն այն էր, որ «սոցիալիստական մրցման գործը փորձում են կազմակերպել առանց բանվորների իրական մասնակցության», այսինքն՝ «պայմանագրերը կնքում են առանց ընդհանուր ժողովներում քննարկելու, մրցման են հրավիրում այլ գործարանների բանվորներին՝ առանց կազմակերպելու մրցումը հենց իրենց գործարանի ներսում. սա կեղծ ակտիվություն է, որ նշանակում է մի կողմից՝ «գերի մնալ բյուրոկրատիզմին», մյուս կողմից՝ «գործնական աշխատանքը փոխարինել փքուն ճառերով»։ «Սոցմրցումը կամպանիա չէ, այլ աշխատանքի նոր, կատարելագործված ձև։ Ով այդ ձևով չի կարողանում աշխատել, նա չի կարող ղեկավարել որևէ պրոֆաշխատանք»։ Պակաս վտանգավոր չէր նաև դրան հակառակ երևույթը՝ պասսիվությունը, որը շաբաթաթերթն համարում էր երկրորդ հիմնական թերությունը, որակելով այն իբրև «պոչականություն», երբ արհեստակցական կազմակերպությունները «ձևոնները ծալած սպասում են», որ մասսաներն իրենք ձևո-

147 Նույն տեղում, № 177։

նարկին սոցմրցման կազմակերպմանը. «Պրոֆմիութիւնները չը-պետք է մասսաների գլխավերևով աշխատեն, այլ պետք է արթնացնեն ու կազմակերպեն մասսաների նախաձեռնությունը. նրանց դերն այստեղ ակտիվ է և ոչ թե պասսիվ»[148]։

«Աշխատանք»-ը հրատարակության վերջին տարում՝ 1929 թվականին, բավական մեծ տեղ էր հատկացնում սոցիալիստական մրցման լուսաբանմանը, առաջավոր փորձի պրոպագանդային. հրապարակում էր մրցման պայմանագրերը, հարվածայինների լուսանկարներն ու իրենց ընկերներին ուղղված մրցահրավերները, տպագրում էր ստանձնած պարտավորությունների ստուգման ամփոփագրերը։ «Սոցիալիստական մրցությունը» (խնդիրները, արդյունքները), «Սոցմրցումը մեր գործարաններում», «Սոցմրցումը տեղերում», «Սոցմրցման առաջապահները» բաժինները հիմնականն էին այս պարբերականում, իսկ նախավերջին համարը գրեթե ամբողջությամբ նվիրված էր սոցիալիստական մրցության հարցերին[149]։

Աշխատավորների ստեղծագործական նախաձեռնությունն ընդլայնելու, նրանց ավելի ակտիվորեն սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու, առհասարակ հնգամյակը ժամկետից շուտ՝ չորս տարում կատարելու գործում արհմիությունների դերի բարձրացումը պատասխանատու խնդիրներ էր դնում նաև արհմիութենական մամուլի առջև. անհրաժեշտ էր ոչ միայն բարելավել ու հարստացնել նրա բովանդակությունը, այլև դարձնել առավել նպատակասլաց ու գործնական։ Այդպիսի վերակառուցման արդյունք եղավ ՀԱՄԽ-ի նոր օրգան «Սոցիալիստական արշավ» թերթը[150], որը փոխարինելու եկավ «Աշխատանք»-ին։

---

148 «Աշխատանք», 1929, № 11։

149 Տե՛ս նույն տեղը, № 17—18։

150 «Սոցիալիստական արշավ»-ն ուներ Արտադրական-բանվորական պրոֆեսիոնալ ենթավերնագիր։ Առաջին համարը լույս տեսավ 1930 թ. հունվարի 20-ին։ Մայիսի 7-ից (№ 21-ից) կոչվում էր «Սոցարշավ»։ Նույն թվականի դեկտեմբերի 7-ից (№ 63-ից) դարձավ երկօրյա, չափը փոքրացավ։ Հրատարակվում էր խմբագրական կոլեգիա ստորագրությամբ։ ՀԱՄԽ-ի նախագահության 1930 թ. սեպտեմբերի 8-ի նիստում պատասխանատու խմբագիր նշանակվեց նախագահության անդամ Ե. Խոջամիրյանը։ 1931 թ. լույս է տեսել իբրև ՀԱՄԽ-ի և Արհմիությունների կենտրոնական վարչությունների օրգան։

«Սոցիալիստական արշավ»-ում, իբրև առանձին էջ կամ էջիկ, զետեղված են հանրապետական Սոցապգանձարկղի օրգան «Ապահովագրական ուղի»-ի մի շարք համարներ։

Այս նոր պարբերականը հրապարակ իջավ նպատակ ունենալով՝ ա) «արշավանք կազմակերպել ծույլերի, պրոդուլշչիկների, աշխատանքի պրոլետարական դիսցիպլինան խախտողների, կամա ու ակամա վնասարարների դեմ». բ) «հարվածել անտնտեսվարությունը, թափթփվածությունը, դանդաղկոտությունը, բյուրոկրատիզմն ու քաշքշուկը». գ) նպաստել բանվորության «հետամնաց շերտերի քաղաքական ու կուլտուրական դաստիարակությանը»[151]։

Ինչպես վկայում է տպագրված նյութերի ուսումնասիրությունը, «Սոցիալիստական արշավ»-ը մոտիկից զբաղվում էր արհմիութենական աշխատանքի վերակառուցման խնդիրներով, արձագանքում բանվորությանը հուզող ամենատարբեր հարցերին (արտադրանքի ինքնարժեքի իջեցում, արտադրողականության բարձրացում, կուլտուր-կենցաղային սպասարկման բարելավում և այլն)։ Լուրջ և հանգամանալից առաջնորդողներ ու հոդվածներ տպագրեց «Սոցիալիստական արշավ»-ը հատկապես իր գոյության առաջին շրջանում, երբ դեռ հնգօրյա թերթ էր։ Ճիշտ է, երկօրյա դառնալուց հետո որոշ աշխուժություն ու բազմազանություն նկատվեց նյութերի ժուռնալիստական մատուցման և հարցերի ընդգրկման շրջանակն ընդլայնելու առումով, հաղթահարվեց նախկինում ինչ-որ չափով իրեն զգացնել տվող չորությունն ու պաշտոնական-գերատեսչական ոճը, բայց թերթի էջերում ավելի հաղվադեպ էին էական վերլուծություններ ու խորհրդածություններ պարունակող, արմատական խնդիրներ հարուցող ելույթները. մի խոսքով՝ թերթն ստացավ առավելապես ինֆորմացիոն-տեղեկատու բնույթ։ Իհարկե, սա ևս կարևոր էր։ Մեր դիտողությունը վերաբերում է լոկ խմբագրության աշխատանքի միակողմանիությանը։

«Սոցիալիստական արշավ»-ը կարևոր էր համարում արհմիությունների ակտիվության ու պատասխանատվության բարձրացումը հարվածային շարժումը տեղերում կազմակերպելու և ծավալելու, նկատվող թերություններն ու սխալները ժամանակին վերացնելու գործում։ Մեր հանրապետության բանվորները անհապաղ և մեծ խանդավառությամբ արձագանքում են հարվածային շարժմանը, ընդգծում էր թերթը «Հանդիսավոր խոստումները վերածենք գործնական աշխատանքի» խորագրով առաջնորդողում, և այս հանգամանքը խոշոր պարտականություններ է դնում հատկա-

151 «Սոցիալիստական արշավ», 1930, № 1։

պես գործարանային պրոֆկազմակերպությունների վրա. նրանք պետք է «լայն չափով և գործնականորեն օգնեն հարվածայիններին» ինչպես պարտավորությունների ոնալ ցուցանիշներ մշակելու, այնպես էլ արտադրության համար անհրաժեշտ նյութերի մատակարարումն ապահովելու, բանվորներին տեխնիկական պիտելիքներ տալու, նրանց ռացիոնալիզատորական առաջարկների իրացմանն աջակցելու տեսակետից: Առանց այդ կոնկրետ ու գործնական աշխատանքի՝ հարվածայնությունը կմնա սոսկ «որպես հանդիսավոր խոստում»[152]: Մի այլ խմբագրականում[153] Թերթն ուշադրություն էր հրավիրում կեղծ-հարվածայնության և ֆրազաբանության փաստերի վրա, դատապարտելով «թղթի մրցությունը»: Մի շարք պրոֆկազմակերպությունների աշխատանքում, նշում էր Թերթը, «բացակայել է խորությունը». նրանք առաջին հերթին ընկել են քանակական ցուցանիշների հետևից, «հոգ տարել աճեցնելու թվերի սյունակները: Եվ միայն այդքան: Սկսվել է յուրատեսակ մի մրցակցություն քանակի, պատկառելի թվերի շուրջը»: Այս ամենը համարելով բանվորական մասսաների ստեղծագործական նախաձեռնության նկատմամբ բյուրոկրատական վերաբերմունքի ակնառու դրսևորում, Թերթը հորդորում էր՝

«... Մի՛ վազի քանակի հետևից, մի՛ քաշ տա ձեզանից սոցմրցման պատասխանատվությունը պատկառելի թվերի առաջադրումով:

Թղթի սոցմրցումը լծակ չէ հնգամյակի հաջող կատարման համար, այլ՝ արգելակ:

Սոցմրցման որա՛կը, հարվածայինների ղեկավարության որակն ու պլանայնությունը—ահա՛ պրոֆկազմակերպությունների աշխատանքի մշտական լոզունգը»:

Թերությունները ու բացերը քննադատելուն զուգընթաց՝ պարբերական մամուլը լայնորեն լուսաբանում էր սոցիալիստական մրցության և հարվածային շարժման ասպարեզում ձեռք բերված նվաճումները, պրոպագանդում առաջավոր փորձը, դրվատում կուսակցական, արհմիութենական և կոմերիտական լավագույն կազմակերպիչներին: «Առաջին հարվածայինը Հայաստանում» խորագրի ներքո «Խորհրդային Հայաստան» թերթը առանձին բաժին նվիրեց Լենինականի տեքստիլ գործարանին[154], «Ավանդարդ»-ը

152 «Սոցիալիստական արշավ», 1930, № 8։

153 Տե՛ս նույն տեղը, № 12։

154 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930, № 14։

նկարագրեց Կարբիդի գործարանի, Հայքամբակկոմի, Երևանի կաշեգործարանի և այլ ձեռնարկությունների հաջողությունները, «Բանվոր.»-ը փառաբանական խոսք ասաց Դեպոյի առաջավորների հասցեին և այլն և այլն: Սոցմրցումը և նրա հետագա ստուգումը՝ հարվածայնությունը, ընդհանրացնում էր «խորհրդային Հայաստան»-ը, նվաճումներ ունեն խորհրդային Միության ոչ միայն առաջավոր արդյունաբերական շրջաններում, այլև այն մասերում, որոնք «ինդուստրալիզացիայի ճանապարհին առաջին խոշոր քայլերն են անում միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, ինչպես օրինակ մեզ մոտ՝ Հայաստանում»: «Եթե այսօր,— իր միտքն էր հաստատում Թերթը,— մենք արձանագրում ենք, որ խորհրդային Հայաստանի արդյունաբերությունը կատարել է և նույնիսկ գերակատարել այս տարվա կիսամյա պլանը, դա արդյունք է այն նվիրված ու հերոսական աշխատանքի, որի օրինակը տալիս են բանվորական ողջ մասսային մոտ ինը հազար հարվածայինները: Այս ճշմարտությունն անվիճելի է...»[155]:

Թերթերը տպագրում էին հանրապետության գործարանների ու արտադրական մյուս ձեռնարկությունների փոխադարձ մրցականները: Ուշագրավ շատ ավյալներ ու փաստեր կարելի է գտնել սոցմրցման տարելիցի տոթիվ մամուլի նախաձեռնությամբ անցկացված սոցիալիստական պարտավորությունների կատարման ստուգատեսի միամսյակը լուսաբանող նյութերում: Հանրապետության մամուլը լայնորեն արձագանքեց Բաքվի Լենինյան շրջանի նավթագործների նախաձեռնությանը, որոնք Անդրկովկասի բոլոր աշխատավորներին կոչ արեցին մտնել «Անդրֆեդերացիայի տասնամյակի անվան» միասնական հարվածային բրիգադի մեջ՝ հընդամյակի չորրորդ տարվա պլանը ժամկետից շուտ կատարելու համար: Թերթերը մասսայականացրին Երևանի Զեթ-օճառ գործարանի բանվորների և ինժեներա-տեխնիկական անձնակազմի դիմումը՝ մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 15-րդ տարեդարձը հնգամյակի ավարտական տարվա պլանները կատարելու և գերակատարելու մասին և այլն:

1931 թ. մայիսին Լենինականում տեղի ունեցավ հարվածայինների հանրապետական առաջին համագումարը: Այս տոթիվ մամուլում տպագրվեցին սոցմրցման արդյունքներն ամփոփող մի շարք հոդվածներ և այլ կարգի նյութեր, արծարծվեցին հարվածա-

155 Նույն տեղում, N 93:

յին շարժումը ծավալելու և խորացնելու կարևոր խնդիրները։ Այդ ժամանակ արդեն Հայաստանի 54 արդյունաբերական համեմատաբար խոշոր ձեռնարկություններում սոցմրցման մեջ ընդգրկված էր բանվորների 75 տոկոսը, ինժեներա-տեխնիկական կազմի 56 տոկոսը, կազմակերպված էր հարվածային 119 ցեխ, 205 բրիգադ և 50 արտադրական կոլեկտիվ. հարվածային շարժման մեջ էին մասնագիտական կադրերի 46, կանանց 84, կոմունիստների 81 և կոմերիտականների 82 տոկոսը[156]։

* * *

Ինչպես ամբողջ Խորհրդային Միության, այնպես էլ մեր հանրապետության պարբերական մամուլը հնգամյակի վերջին երկու տարում լայնորեն պրոպագանդում էր արդյունաբերության հաջող զարգացումն ապահովող հայտնի «վեց պայմանները», որ ձևակերպել էր Ի. Վ. Ստալինը 1931 թ. հունիսին գումարված տնտեսվարների համամիութենական խորհրդակցությունում և որոնք առաջին անգամ շարադրվեցին «Պրավդա»-ի հունիսի 25-ի և 27-ի խմբագրական հոդվածներում։ Կուսակցության Կենտկոմը սոցիալիստական շինարարության հետագա վերելքին հասնելու համար պահանջում էր իրագործել՝ 1) բանվորական ուժի կազմակերպված հավաքագրում. 2) աշխատավարձի սիստեմի կարգավորում. 3) աշխատանքի կազմակերպման բարելավում. 4) տնտհաշվարկի ամրապնդում. 5) հին արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի ակտիվ ներգրավում սոցիալիստական շինարարության մեջ. 6) նոր արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծում։

Այս խնդիրներն էլ հենց պայմանավորեցին պարբերական մամուլի և՛ բովանդակությունը, և՛ աշխատանքի հիմնական ուղղությունը՝ հնգամյակը ժամկետից շուտ կատարելու համար մղվող համաժողովրդական պայքարում։ Նոր պայմաններում անհրաժեշտ էր ավելի մոտիկից և գործնականորեն լուսաբանել արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական տեղամասերի, երկաթուղային տրանսպորտի աշխատանքը, բանվորական ավյալ կոլեկտիվի առջև դրված կոնկրետ խնդիրները՝ արդիֆինպլանների կատարման, սոցմրցմամբ ստանձնած պարտավորությունների կենսագործման ասպարեզում։ Բացի այդ, կարևոր նշանակություն էր

156 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 323։

ատանում աշխատանքային դասախարակության, կուլտուր-կենցաղային սպասարկման, սննդի բաշխվման հարցերի արծարծումը մամուլում՝ ավելի կոնկրետ փաստերով և փաստարկներով։ Վերոհիշյալ խնդիրների կատարումը հիմնականում իրենց վրա վերցրին գործարանային և մյուս բաղմատիրաժները, որոնց շուրջ համախմբված էին մեծ թվով բանթղթակիցներ։ Նռանդուն աշխատանք կատարեցին «Հարվածային տեխնիկշիկ»-ը («Մանածագործ»), «Քիմշին»-ը, «Մեքենաշինարար»-ը, «Քանամեռշին»-ը, «Հարվածային կառուցող»-ը, «Ցեմ-ֆրոնտ»-ը, «Կաուչուկի համար»-ը («Կիրովից»), «Սուլիշ»-ը («Երկաթուղային»), «Աերոյունաբերական կոոպերացիա»-ն և մյուս բաղմատիրաժները։

Հանդիսանալով կուսակցական, կոմերիտական, արհեստակցական կոմիտեների և դիրեկցիայի (վարչության) օրգաններ, 5-օրյա կամ 10-օրյա պարբերականություն և փոքր ծավալ (2—4 էջ, 41×29 սմ) ունեցող այս թերթերն զգալի դեր խաղացին հանրապետության արդյունաբերության տարբեր ճյուղերում, խոշոր կառույցներում, երկաթուղային տրանսպորտի տարածքում աշխատողներին մոբիլիզացնելու, նրանց ձեռք բերած նվաճումներն ամփոփելու գործում, նպաստեցին պլանների կատարմանը խոչընդոտող դժվարությունների ու թերությունների բացահայտմանն ու հաղթահարմանը։ Հետևելով իրենց սպասարկած ձեռնարկության մեջ ծավալված սոցիալիստական մրցության ընթացքին, բաղմատիրաժ թերթերը իրենք ևս մրցման էին հրավիրում միմյանց՝ գործարանների ու կառույցների առօրյան ավելի խոր ու բազմակողմանի լուսաբանելու, բանվորների ստեղծագործական նախաձեռնությունն ավելի ակտիվորեն սատարելու, պլանների կատարման ընթացքում ի հայտ բերված ճեղքվածքները շտապ վերացնելու և առհասարակ աշխատանքային խանդավառություն բաղմապատկելու համար։ Այդ թերթերի աշխատակիցներին ու թղթակիցներին օգնելու նպատակով «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրության, ՀԿ(բ)Կ Երևանի քաղկոմի, ՀԱՄԽ-ի և «Զարյա Վոստոկա» թերթի Հայաստանի բաժանմունքի նախաձեռնությամբ 1932 թ. հոկտեմբերի 26-ին անցկացվեց «Մամուլի հարվածայինների քաղաք»[157]. անտեսական, քաղաքական և մշակութային հրատապ խնդիրներին նվիրված հարց ու պատասխանի մի երեկո էր դա, որի ընթացքում տարբեր բնագավառների մի շարք ղեկավար աշ-

157 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1932, №№ 251, 253։

խատողներ պատասխանեցին մամուլի ակտիվիստների մոտ 200 հարցերի։ Բացի այդ, արվեցին գործարանների ու կառույցների կյանքը մամուլում բազմակողմանիորեն արտացոլելու վերաբերյալ բազմաթիվ առաջարկներ, որոնց կենսագործմանը հետևելու էր «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրությունը։ Բազմատիրաժներին աջակցելու էին գալիս նաև գործարանների և հիմնարկ-ձեռնարկների պատի թերթերը, որոնց աշխատանքները նույնպես քննարկվում էին «Խորհրդային Հայաստան»-ում, «Բանվոր»-ում, «Ավանգարդ»-ում և մամուլի այլ օրգաններում, ինչպես և պարբերաբար կազմակերպվող ցուցահանդեսներում։

Ողջունելով բազմատիրաժների ստեղծումը, «Խորհրդային Հայաստան» թերթը տեսություններից մեկում[158] նկատում էր, որ մամուլի այս նոր օրգանների «նախաձեռնության և ինքնագործունեության ծավալումը հսկայական չափով զարկ կտա գործարանների բոլոր աշխատանքներին»։ Նրանց գլխավոր խնդիրը ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը բնորոշեց այսպես՝ «լինել մասսաների մարտական կազմակերպիչը»։ Եվ պետք է նշել, որ չնայած առանձին թերություններին ու վրիպումներին (որոշ նյութերի վերամբարձությունն ու վերացականությունը, գրական անբավարար մշակումը, անտեղի խիստ ձևակերպումները և այլն), գործարանների ու կարևոր կառույցների թերթերը կատարեցին իրենց վերապահված կարևոր դերը և առանձին տեղ ունեն խորհրդահայ պարբերական մամուլի պատմության մեջ՝ շրջանային լրագրերի և քաղաքաժինների տպագիր օրգանների կողքին։

* * *

Սոցմրցման հետագա վերելքին նպաստելուն զուգընթաց՝ մամուլը մեծ ուշադրություն էր դարձնում գյուտարարական և ռացիոնալիզատորական շարժման արմատավորման, նոր տեխնիկայի տիրապետման խնդիրներին։

Դեռևս 1927 թվականին «Խորհրդային Հայաստան» թերթը «Սոցիալիստական շինարարությունը և մասնագետները» խորագրով առաջնորդողում, հիշեցնելով «ընկ. Լենինի՝ մեր կուսակցությանը տված հեռատես խորհուրդը մասնագետների վերաբերյալ», ընդգծում էր. Հայաստանի «հետամնաց պայմաններում և անցյալ

158 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931, № 237։

ռեժիմների անմխիթար ժառանգության հետևանքով մենք ավելի ևս կարիք ունենք մասնագետ ուժերի։ Մեզ մոտ ավելի ևս անհրաժեշտ է ամրացնել մեր և մասնագետների միջև գոյություն ունեցող կապը՝ սոցիալիստական շինարարության մեջ նորանոր հաջողություններ ձեռք բերելու համար»[159]։ Նույն խնդիրը դնելով մեխանիկական, կարբիդի, բազալտի գործարանների և պոլիգրաֆ տրեստի շենքերի կառուցման, Անիի պեմզայի շահագործումը կանոնավորելու, Լենինականի տեքստիլ և Երևանի կաշեգործարանների ավարտման կամ բարեկարգման առնչությամբ, թերթը մի այլ առաջնորդողում կարևոր էր համարում «բանվորական կոլեկտիվ ստեղծագործ մտքի և մասնագետների համագործակցության» ապահովումը[160]։

Մի փոքր անց, Շախտիի Հայաստանի դեպքերից հետո, մամուլն ամենց լրջորեն մտահոգվել խորհրդային նոր մասնագետների պատրաստման խնդրով։ Տեխնիկայի տիրապետման պահանջը դնելով առաջավ ավելի ու ավելի մասսայական բնույթ։ Թերթերն ակտիվորեն միջամտում էին պարբերաբար անցկացվող տեխնիկայի տիրապետման միամսյակներին, առաջարկելով կազմակերպչական նոր ձևեր ու միջոցներ, որոնք թեև Միության շատ վայրերում դրական արդյունքներ են տվել, բայց «մեզ մոտ դեռևս լայն ծավալ չեն ստացել» (արտադրական խմբակներ, ռացիոնալիզատորական ընկերություններ, գյուտարարական բյուրոներ, առանձին դասընթացներ, գիտա-տեխնիկական բջիջներ, զեկուցումներ և այլն)։ Այստեղ արդեն խոշոր չափով զգացվում էր մասնագետների օգնության կարիքը. «Նրանք,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— ունենալով բարձր տեխնիկական պատրաստականություն, պետք է մեծ էնտուզիազմ հայտաբերեն այս մեծ գործում. դեռևս մասնագետների որոշ շերտերում գոյություն ունեցող անտարբերությունն ու թափթփվածությունը պետք է իսպառ վերանան. դրան պետք է փոխարինի կազմակերպված աշխատանքը, կոնկրետ և ռեալ օգնությունը բանվորներին՝ տեխնիկային տիրապետելու գործում»[161]։

Մամուլը մեծ տեղ էր տալիս տեխպրոպագանդայի հարցերին, ուշադրություն հրավիրելով դպրոցական, կուսակցական և կոմերի-

159 Նույն տեղում, 1927, № 114։
160 Նույն տեղում, № 84։
161 Նույն տեղում, 1931, № 62։

տական ուսուցման ծրագրերում ու դասագրքերում համապատասխան բաժիններ ունենալու, արդեն կազմակերպված Տեխհրատի աշխատանքները բարելավելու, տեխուսուցման խմբակներին լայն աջակցություն ցույց տալու անհրաժեշտության վրա։ Այս խնդիրների կարևորությամբ է բացատրվում նաև տեխնիկային նվիրված հատուկ պարբերականների ստեղծումը ինչպես Միության այլ հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում։ 1931 թ. օգոստոսից ՀԱՄԽ-ի հրատարակությամբ սկսեց լույս տեսնել «Տեխնիկան մասսաներին» հանդեսը[162]։ Նշելով, որ հնգամյա պլանի կենսագործման ներկա փուլում, երբ «առավելագույն չափով մերենայացվում են բոլոր աշխատանքային պրոցեսները թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության ասպարեզում», առանձնակի կարևորություն է ստանում տեխնիկայի տիրապետման խնդիրը, պարբերականի անդրանիկ համարի խմբագրականում հրատարակիչները հիշեցնում էին. անհրաժեշտ է այդ նպատակի շուրջ մոբիլիզացնել «պրոլետարական մասսաների բոլոր կենդանի, ստեղծարար ուժերը և ողջ խորհրդային հասարակությունը, վերակառուցել ժողովրդական լուսավորության ամբողջ սիստեմը, պրոֆմիությունների բովանդակ կուլտուր-կրթական աշխատանքը»։ Այս պահանջների կատարմանն էր նպաստելու, ահա, «Տեխնիկան մասսաներին» հանդեսը, որի հիմնական խնդիրը խմբագրությունը ձևակերպեց հետևյալ կերպ՝ «... Պոպուլյար, լայն մասսաներին մատչելի ձևով գիտելիքներ տալ տեխնիկայի բոլոր բնագավառների վերաբերյալ, օգնել, որպեսզի մասսաները յուրացնեն տեխնիկան, զինվեն անհրաժեշտ գիտելիքներով՝ գիտակից և գործարար մասնակցություն ունենալու համար երկրի արտադրական կյան-

162 «Տեխնիկան մասսաներին» պարբերականն ուներ Մասսայական-տեխնիկական երկշաբաթաթերթ ենթանվանումը։ Պատասխանատու խմբագիր՝ Ե. Խոջամիրյան։ Հաճախ լույս է տեսել միացյալ համարներով։ 16—35 էջ (31×22 սմ), տպաքանակը՝ 1100—3000։ Հրատարակության վերջին տարում՝ 1935 թ., դառնում է Մասսայական-տեխնիկական պատկերազարդ ամսագիր և լույս է տեսնում իբրև ՀԱՄԽ-ի և ՀՍԽՀ Տեղական արդյունաբերության ժողկոմատի օրգան։ Պատ. խմբագիր է նշանակվում Վ. Ղազանչյանը։ 18 էջ, տպաքանակը՝ 1000—1150։

Հանդեսին աշխատակցել են հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների աշքի ընկնող մասնագետներ, ինժեներներ, արտադրության կազմակերպիչներ՝ Մ. Անդրեասյանը, Ա. Թասլախչյանը, Գր. Շիրմազանը, Ա. Մանանդյանը, Խ. Միրիմանյանը, Ս. Աղաբաբյանը, Ս. Թառայանը, Էդ. Գյուտյանը, Զ. Հացագործյանը, Բ. Արապյանը, Ե. Կիրակոսյանը, Ռ. Հակոբյանը, Անդր. Սարգսյանը, Արծ. Աբրահամյանը, Լ. Զաքարյանը և ուրիշներ։

բում»[163]։ Այս գլխավոր նպատակից ելնելով էլ հանդեսում կազմակերպվեցին առանձին բաժիններ, որոնցում համապատասխանորեն արծարծվում էին տեխնիկայի տիրապետման գործնական հարցերը, արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ տեխնիկական աշխատանքների, ներդործարանային արտադրական պրակտիկայի, տեխուսուցման կազմակերպման խնդիրները, մասսայականացվում էին գիտության և տեխնիկայի նվաճումները, լուսաբանվում էր գյուտարարների ու ռացիոնալիզատորների աշխատանքը։ Հանդեսը տպագրում էր «տեխնիկական զրույցներ», արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության մեջ և տրանսպորտում նոր տեխնիկայի ներդրմանը նվիրված հոդվածառաջարկներ, առանձին գիտական պրոբլեմներին վերաբերող բանավիճային ելույթներ՝ «մատչելի լեզվով ու մատչելի հարցադրումներով»։

Հրատարակության առաջին տարում հանդեսի աշխատանքներում առկա էին որոշ բացեր, որոնց վրա ժամանակին ուշադրություն հրավիրեց «Խորհրդային Հայաստան»-ը մի ընդարձակ մամուլի տեսությամբ[164]։ Մասնավորապես նշվեց հոդվածների զգալի մասի ընդհանուր բնույթը։ Առաջին հերթին, դիտողություն էր անում ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը, հանդեսի էջերում «պետք է լուսաբանվեն այն հարցերը, որոնք անմիջական կապ ունեն Հայաստանի արդյունաբերության կարևոր, առաջատար ճյուղերի հետ, այն հարցերը, որոնք ակտուալ նշանակություն ունեն և որոնց այս կամ այն չափով լուսաբանումը կոնկրետ օգնություն կտար, ասենք, պղնձի, տուֆի, տեքստիլի, էլեկտրաշինարարության պլանների կատարման համար մղվող պայքարին...»։ Վերակառուցվելով այս պահանջի ոգով, «Տեխնիկան մասսաներին» հանդեսն իր շուրջը համախմբեց մասնագիտական կարող ուժերին և զգալիորեն նպաստեց տեխնիկային տիրապետելու վերաբերյալ կուսակցության լոզունգի կենսագործմանը։

1931 թ. հրատարակվեցին «Երկաթուղային» թերթի «Տեխնիկայի տիրապետման համար» հավելվածի երեք համարները (պատ. խմբ.՝ Վ. Պիլիպենկո), որոնցում զետեղված հայերեն և ռուսերեն նյութերում քննարկված են շոգեքարշերի վերանորոգման, երթուղային ռեժիմի պահպանման, տեխպրոպագանդայի ճիշտ կազ-

---

163 «Տեխնիկան մասսաներին», 1931, № 1։

164 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1932, № 44։

մակերման հարցերը։ Նույն խնդիրներին էր նվիրված «Առողջ տրանսպորտ» հավելվածը, որ հրատարակեցին Անդրերկաթուղու 5-րդ բաժանմունքի ՅՕՏ («Տեխնիկայի տիրապետման համար») կազմակերպությունը և «Խորհրդային Հայաստան» ու «Երկաթուղային» թերթերը 1935 թ. փետրվարին[165]։

Մասնագիտացված բնույթ ուներ նաև 1932 թվականից լույս տեսնող «Տիրապետենք տեխնիկային»[166] հանդեսը։ Այստեղ արծարծվում էին տեքստիլ արդյունաբերության տեխնիկայի տիրապետման, նոր սարքավորումների յուրացման, մասնագետներ պատրաստելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու խնդիրները։

Նոր տեխնիկայի արմատավորման, կադրերի պատրաստման, դիտության նվաճումները արտադրության մեջ ներդնելու հարցերը որոշ տեղ ունեին նաև դիտա-հետազոտական բնույթի մի շարք հրատարակություններում։

* * *

Պարբերական մամուլի ելույթների արդյունավետությունը բարձրացնելու տեսակետից կարևոր էր բանվորաթղթակցային շարժման հետագա ծավալումն ու խորացումը, թղթակիցների հետ տարվող աշխատանքների բարելավումը։ Այդ նպատակին էին ուղղված 1928 թվականին «Խորհրդային Հայաստան»-ում դետեղվող «Բանվորական թերթիկ»-ները, «Մանկական»-ի ու «Կարմիր գինվոր»-ի հրատարակած «Գյուղթղթակից» և «Ջինթղթակից» խորագրով փոքրածավալ հավելվածները։

1929 թ. մայիսի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի բանվորական-թղթակիցների հանրապետական երկրորդ խորհրդակցությունը, որին մասնակցում էր մոտ 200 մարդ։ Լավագույն դեկուցումներ արդյունաբերության զարգացման ու կոլեկտիվացման ասպարեզներում մամուլի առջև ծառացած նոր խնդիրների, քննադատության

---

165 «Առողջ տրանսպորտ»-ը լույս է տեսել ամբագրական կոլեգիա ստորագրությամբ։ 16 էջ (28×19 սմ), տպարանակը՝ 2100։

166 Մինչև 1934 թ. «Տիրապետենք տեխնիկային» պարբերականը Հայտեքստիլ կոմբինատի և միացյալ գործարհկոմի օրգանն էր. 20 էջ (29×20 սմ). 1935 թ. վերանվանվեց «Տիրապետենք տեքստիլ արդյունաբերության տեխնիկային» և հրատարակվեց մինչև 1936 թ. հունվարը՝ իբրև մանվածքա-գործվածքային ու տրիկոտաժ գործարանների արհկոմիտեների օրգան։

ու ինքնաքննադատության ծավալման գործում թղթակիցների դերի, մամուլի ելույթների կապակցությամբ դատախազության կատարած աշխատանքի և պատի լրագրերի մասին։ Ամփոփելով ձեռք բերված հաջողությունները, խորհրդակցությունը որոշեց. ա) Քանի որ հնարավոր չէ հրապարակել ստացվող բոլոր թղթակցությունները, ապա անպայման կազմակերպել շտապագրված նյութերի հետապտում ու քննարկում՝ խմբագրություններին կից ունենալով հետաքննող բյուրոներ. բ) Ուժեղացնել ուսուցողական-դաստիարակչական աշխատանքը բանդյուղթղթակիցների շրջանում, հրատարակել հատուկ գրականություն, իսկ հնարավորության դեպքում՝ նաև «Բանդյուղթղթակից» խորագրով մի հանդես. թղթակիցների համար կազմակերպել կարճատև կուրսեր, սեմինարներ. անցկացնել խորհրդակցություններ. առավել ընդունակներին ներգրավել խմբագրական աշխատանքներում. գ) «Խիստ պայքար սկսել այն անհարազատ տարրերի դեմ, ովքեր սպրդում են թղթակիցների շարքերը և վարկաբեկում թղթակցային շարժումը». դ) Ընդլայնել պատի թերթերի ցանցը, բարելավել եղածները, դրանք դարձնելով կենտրոնական մամուլի բջիջներ՝ գործարաններում ու հիմնարկներում[167]։

Համկ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. ապրիլի 16-ին ընդունեց «Բանդյուղթղթակցության շարժման վերակառուցման մասին» որոշումը[168]։ Խնդիր էր դրվում, որպեսզի թղթակիցներն անպայման լինեն արտադրության առաջավորներ, մենթալիզմի «մանր» թերությունների մերկացման փոխարեն՝ «շատ ավելի խոր ներթափանցեն սոցիալիստական շինարարության բոլոր կարևորագույն հարցերում», միաժամանակ ոչ թե սահմանափակվեն «ընդհանուր, արդյունաբերության բոլոր բնագավառների համար միատեսակ խնդիրներով, այլ կատարելով այդ խնդիրները (պայքար բյուրոկրատիզմի դեմ. թերությունների մերկացում, պոչականության, պոկոդականության մերկացում և այլն),— այս ամենը կոնկրետացնեն, համապատասխանեցնելով սոցիալիստական շինարարության այն տարբեր տեղամասերին, որտեղ իրենք աշխատում են»։ Անհրաժեշտ համարվեց լայնորեն կիրառել մասսայական-թղթակցային աշխատանքի նոր ձևերը՝ «արշավները, հարվածային բրիգադները, հասարակա-

167 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1929, № 113։

168 Տե՛ս «Պարտիական և սովետական մամուլի մասին», էջ 565—570։

կան բուքսիրը, ռացիոնալիզատորական հաշիվները, փոխստուգումները և այլն»։

1931 թ. մայիսի վերջին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը քննարկեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վերոհիշյալ որոշման կատարման ընթացքը և նշեց բանգյուղթեթակցային շարժման վերակառուցումը հանրապետությունում առավել հետևողականորեն անցկացնելու կոնկրետ միջոցառումներ[169]։ Ընդհատված հավելվածթերթիկների փոխարեն սկսեցին լույս տեսնել նորերը՝ «Բանգյուղբրիգադիցների էջ»-ը՝ «Խորհրդային Հայաստան»-ում և «Հարվածային գյուղբրիգադից» երկշաբաթյա հավելված-էջը՝ «Մաճկալ»-ում։

Մի տարի անց «Պրավդա»-ի օրինակով ազգային հանրապետությունների մամուլի կենտրոնական օրգաններում ևս ստեղծվեցին աշխատավորների նամակների բաժիններ։ Անդրկովկասի պարբերականների խմբագրություններին այդ ցուցումը տրվեց Անդրբերկոմի Կուլտ-պրոպ բաժնի 1932 թ. օգոստոսի 9-ի շրջաբերականով[170]։ Գնալով ավելանում էր ստացվող նամակների ու թղթակցությունների թիվը։ Դրանց մի մասը հրապարակվում էր «Խորհրդային Հայաստան»-ի պատի թերթիկ-ներում, որոնք պարբերաբար տպագրվում և փակցվում էին գործարաններում, կոլտնտեսություններում, խորհանտեսություններում, գյուղխորհուրդներում, պետական հիմնարկներում և այլուր։ Խմբագրությունը անդրադառնում էր այդ նյութերին («Խորհրդային Հայաստան»-ի պատի թերթիկի հետմերով խորագրի ներքո), համապատասխան կազմակերպությունների ուշադրությունը բևեռելով աշխատավորների հարուցած կարևոր խնդիրների վրա։

* * *

Արդեն 1932 թ. վերջերից պարբերական մամուլում սկսեցին երևալ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերում 5-ամյա պլանի կատարման արդյունքներն ամփոփող նյութեր (հոդվածներ, զեկուցումներ, թվական տվյալներ և այլն)։ Հայաստանում շահագործման հանձնվեցին մի շարք արդյունաբերական նորակառույցներ, Երևանի Զերժինսկու անվան մեխանիկական գործարանը, Զորագէսը, Երևանի երկրորդ ավտոմատ էլեկտրակայանը, ֆերմենտացիոն գործարանը, Ղարաքիլիսայի կղմինդրի և աղյուսի

---

169 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931, № 125։

170 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 19, գ. 328, թ. 12։

գործարանը, Լենինականի հիդրոկայանի երկրորդ հերթը, կարի ֆաբրիկան, Մինջևան—Ղափան երկաթուղին, Դիլիջանի և Ստեփանավանի էլեկտրակայանները, Երևանի կարի ֆաբրիկան և այլն։ Ավարտին էր մոտենում Քանաքեռդէսի, Երևանի ծխախոտի ֆաբրիկայի, Դավալուի ցեմենտի գործարանի, Ղարաքիլիսայի քիմիական կոմբինատի և մի շարք այլ կառույցների շինարարությունը։ Խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքը 1927—1928 տնտեսական տարվա համեմատությամբ ավելացավ 4,5 անգամ։ Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունն աճեց ավելի քան 2,5 անգամ։ Զգալի նվաճումներ ձեռք բերվեցին գյուղի սոցիալիստական վերակառուցման ասպարեզում. կազմակերպվեց մեքենատրակտորային 7 կայան, մոտ 900 կոլտնտեսություններում միավորված էր գյուղացիական տնտեսությունների 40 տոկոսը։ Ընդհանուր ցանքատարածությունն ավելացավ մոտ 13 տոկոսով, վերելք ապրեց անասնաբուծությունը։ Որոշակի առաջընթաց արձանագրվեց բաղաքաշինության մարզում, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսուցման բարելավման, առհասարակ ժողովրդական լուսավորության ընդլայնման գործում։ Ավելի քան կրկնապատկվեց բանվորների և ծառայողների քանակը՝ ենթարկվելով նաև արմատական որակական փոփոխությունների։

Գրելով այս ամենի մասին, պարբերականները շեշտում էին այն հասատատակամությունն ու անձնվեր եռանդը, որ ցուցաբերեցին խորհրդային երկրի բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիությունն ու ժողովրդի գործին հավատարիմ մտավորականությունը։ Հնգամյակի հաջողությունների մեջ մամուլը տեսնում-ընդգծում էր բոլշևիկյան կուսակցության վարած լենինյան գծի ճշմարտացիության և բոլոր տեսակի օպորտունիստների ու օպոզիցիաների ձախողման փայլուն ապացույցը։ Հնգամյակի կատարումը չորս տարում այնպիսի գորավոր փաստ էր, որի առջև թշնամիներն անգամ անկարող էին աչք փակել և ստիպված էին վերանայել իրենց վաղեմի շափանիշներն ու անամեջ նկրտումները։ «Եթե հնգամյակի հաստատումից հետո,—գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,—սկզբներում մեր և մեր պլանների մասին բազմաթիվ երևակայական բարբաջանքներ գրվեցին, ապա վերջին ժամանակները բուրժուական մամուլը, անկախ ԽՍՀՄ-ի հանդեպ նրա տածած թշնամանքի աստիճանից, հարկադրված է դիմել իրական փաստերի, ինչքան էլ այդ փաստերն անհաճո լինեն նրանց համար,

և տամները կրճատելով նշել մեր նվաճումները»[171]։ Մեր բազմազգ հայրենիքի աշխատավորները, ընդհանրացնում էր «Պրավդա»-ն, իրենց հերոսական ու տիտանական պայքարով ապացուցին, որ «հինգը հավասար է չորսի», մի հաշիվ, որը միանգամայն պարզ է ու հասկանալի սոցիալիզմի կառուցման պաթոսով համակված զանգվածների համար և «կատարյալ հանելուկ բանվոր դասակարգի թշնամիների և ամեն կարգի օպորտունիստների համար»։ Հնգամյակի այսքան փայլուն իրագործումը, սակայն, շարունակում էր կուսակցության կենտրոնական օրգանը, նոր և էլ ավելի պատասխանատու խնդիրներ է դնում աշխարհի միակ սոցիալիստական երկրի աշխատավորների առջև. «Մենք հետու ենք դափնիների վրա հանգստանալուց, ձեռք բերված հաջողություններով բավարարվելուց. երկու հակադիր սիստեմների մրցությունը շարունակվում է...»[172]։

* * *

Այսպիսով, մեր հանրապետության պարբերական մամուլը հետևողական պայքար ծավալեց կոմունիստական կուսակցության մշակած սոցիալիստական ինդուստրացման կուրսը կենսագործելու համար, վճռականորեն հանդես գալով ինչպես տրոցկիստական-զինովևյան օպոզիցիայի, հակակուսակցական մյուս խմբերի գործողությունների, այնպես էլ բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսության դեմ։ Թերթերն ու հանդեսները բացատրական-կազմակերպչական լայն աշխատանք տարան խնայողության ռեժիմի կիրառման, արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի նվազեցման ծավալման, բյուրոկրատիզմի հաղթահարման ուղղությամբ, մեծ տեղ հատկացրին ժողովրդական տնտեսության զարգացման առաջին 5-ամյա պլանի համար մշված պայքարի լուսաբանմանը, սոցիալիստական մրցության կազմակերպման հարցերին։

Կարևոր նշանակություն ունեցան մամուլի ելույթները ինչպես սոցիալիստական ինդուստրացման համար կուսակցական կազմակերպությունների, բանվոր դասակարգի, արհմիությունների ու կոմերիտմիության ուժերը մոբիլիզացնելու, այնպես էլ աշխատանքի տարբեր ասպարեզներում տեղ գտած սխալները, ոչ ճիշտ պատկերացումներն ու ըմբռնումները հաղթահարելու գործում։

---

171 «Խորհրդային Հայաստան», 1933, № 2։

172 «Правда», 11 января 1933 г.

ԳԼՈՒԽ II

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ.

Գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրների քննարկումը մամուլում. աջ թեքման քննադատությունը. պայքար կուլակի դեմ: Բատրակների մեջ տարվող աշխատանքի հարցեր. «Բատրակ» («Գյուղատնտեսական բանվոր») շարաթաթերթը: Գյուղի կուսակցական ակտիվի համախմբումը. «Գյուղի կոմունիստ» ամսագիրը: Մամուլի թույլ տված սխալները, դրանց շտկումը: Մամուլի պայքարը կուսակցության գծից կատարված շեղումների դեմ՝ հանուն կոլտնտեսությունների հետագա ամրապնդման: Գյուղացիական և գյուղատնտեսական նոր պարբերականներ. «Կոլխոզնիկ» երկշաբաթաթերթը, «Սոցիալիստական ագրոնոմիա», «Ագրարային ֆրոնտում» հանդեսները, «Սոցիալիստական գյուղատնտեսություն» և «Կոլխոզնիկ» թերթերը: Շրջանային մամուլի ընդհանուր բնութագիրը: ՄՏԿ և խորհրդատնտեսությունների թաղամասերի թերթերը:

1

Գյուղատնտեսական կոոպերացիայի հետագա ծավալումը. հողաշինարարության աշխատանքների հաջող իրականացումը և կուսակցության քաղաքականության ճիշտ կիրառումը գյուղում հիմք ստեղծեցին Հայաստանում ևս կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպելու համար: Դեռևս 1927 թ. հոկտեմբերին «Դեպի կոլեկտիվ տնտեսություններ» խորագրով առաջնորդողում «Խորհրդային Հայաստան»-ը ընդգծում էր. «Մեր գյուղատնտեսության զարգացման պրոցեսում մեջտեղ եկող երևույթները հրամայողաբար թելադրում են կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպությունը, որը մեկ կողմից նպաստում է մեր ընդհանուր տնտեսության քանակական աճմանը, մյուս կողմից՝ գյուղի դասակարգային շերտավորման պրոցեսում և պայքարի ընթացքին նյութական բազա է տա-

լիս գյուղի միջակ և չքավոր տարրերին»[1]։ Մինչև ՀամԿ(բ)Կ XV համագումարը հանրապետությունում ստեղծվել էր ընդամենը 7 կոլեկտիվ տնտեսություն։ Համագումարից հետո աշխատանքներն ավելի լայն ու կազմակերպված ընթացք ստացան, և արդեն 1928 թ. կեսերին կոլտնտեսությունների թիվը հասավ 54-ի, իսկ տարեվերջին նրանց նախնական քանակը ավելի քան տասնապատկվեց։

Մամուլն ընդգծում էր ՀամԿ(բ)Կ XV համագումարի ընդունած որոշումների պատմական նշանակությունը, միաժամանակ քննարկելով մեր հանրապետությունում դրանց կենսագործման գործնական խնդիրները։ Այդ հարցերին սևեռուն ուշադրություն էին նվիրում «Խորհրդային Հայաստան»-ը, «Լենինյան ուղի»-ն, «Գյուղատնտեսական կյանք»-ը «Մաճկալ»-ը, «Ավանգարդ»-ը, «Բանվոր»-ը, «Կարմիր ռաշպար»-ը և Հայաստանում այդ ժամանակ հրատարակվող մյուս պարբերականները։

Անհրաժեշտ է ընդգծել, որ կոլեկտիվացման սկզբում պարբերական մամուլն ուներ միանգամայն ճիշտ դիրքորոշում և պայքարում էր գյուղատնտեսության վերակառուցման լենինյան սկզբունքների կիրառման համար։ «Սոցիալիզմի կառուցումը մեր երկրում,— ընդգծում էր «Գյուղատնտեսական կյանք»-ը,— կատարվում է հաղթանակած պրոլետարիատի ավանգարդի տնտեսական քաղաքականության ու գիտակցական ծրագրի շնորհիվ, ըստ որում գյուղական տնտեսությունների համայնացումը կատարվում է ոչ թե կապիտալիստական ուղիով՝ էքսպրոպրիացիայի միջոցով, այլ՝ Լենինի առաջադրած կոոպերացման ծրագրով»։ Այս սկզբունքային տարբերությունն էլ հենց, շարունակում էր հանդեսը, կանխորոշում է այն հիմնական խնդիրները, որ առաջադրվում են սոցիալիստական շինարարության այդ ընդարձակում. «նախ՝ գյուղատնտեսությունը կազմակերպել գիտական մեթոդներով, նորագույն տեխնիկայի բազայի վրա՝ արտադրանքն ավելացնելու նպատակով և ապա՝ գյուղատնտեսության ասպարեզում աշխատող բազմամիլիոն մանր արտադրողներին կոոպերացման ենթարկել ու նրանց զարգացումը առաջ տանել սոցիալիստական հունով»[2]։

Մամուլը կարևոր նշանակություն էր տալիս բացատրական-պրոպագանդիստական աշխատանքի ծավալմանը գյուղացիության ամենալայն խավերում։ Վճռական դեր վերապահելով ՀամԿ(բ)Կ

---

1 «Խորհրդային Հայաստան», 1927, № 244։

2 «Գյուղատնտեսական կյանք», 1928, № 1, էջ 31։

XV համագումարի որոշումների պարզաբանմանը, «Մաճկալ»-ը, օրինակ, խնդիր էր դնում. «Ոչ միայն գյուղացի կուսակցականները պետք է լավ իմանան այդ որոշումները, այլև անկուսակցական չքավոր և միջակ գյուղացին ու բատրակը։ Մեր գյուղի կոմունիստների պարտքն է ծանոթացնել գյուղացուն կուսակցության հերթական անելիքների հետ»[3]։ Կոլեկտիվացման հաջող կազմակերպման շահերը, նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը, պահանջում են, նախ և առաջ, «աշխատավոր ու չքավոր գյուղացիության մտքի նախապատրաստում, ուրեմն և այդ խնդրի խոր ու սիստեմատիկ քննություն»[4]։ Եվ պետք է նշել, որ այս ուղղությամբ հսկայական գործ կատարեց հենց ինքը՝ պարբերական մամուլը։ Հայաստանի պարբերականներում տպագրված այդ կարգի նյութերը կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ ա) կուսակցական համագումարների, պլենումների և Կենտկոմի որոշումների, հրահանգների կամ շրջաբերականների լուսաբանում. բ) պրոպագանդիստական հոդվածներ ու զրույցներ. գ) հարց ու պատասխանի ձևով շարադրված նյութեր. դ) կոլտնտեսությունների ակտիվիստների ելույթներ։

Առանձնակի կարևորություն ունեին մամուլի՝ կազմակերպչական խնդիրների քննարկմանը նվիրված ելույթները։ Կոլեկտիվացման ընդհանուր սկզբունքների պարզաբանմանը զուգընթաց մամուլը լուրջ ուշադրություն էր դարձնում մեր հանրապետությունում կոլեկտիվացման քաղաքականության կենսագործման կոնկրետ պայմանների և հնարավորությունների բացահայտմանը, նշում այդ հարցում շաբլոնի և համահարթեցված մոտեցման վնասակարությունը։ Կոլեկտիվացման գործը, ընդգծում էր «Խորհրդային Հայաստան»-ը, սկզբից ևեթ պիտի «պլանային հունի մեջ դրվի». բայց դա այնպիսի պլանավորում պետք է լինի, որ բխի իրական պայմանների ու հնարավորությունների ուսումնասիրությունից։ «...Պետք է շեշտել,— շարունակում էր թերթը,— որ կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը վերևից չպիտի փաթաթվի գյուղացիության վզին. պիտի հաշվի առնել վերջինիս արտահայտած ցանկությունները և կոլեկտիվ տնտեսություն կազմակերպել միայն այնտեղ, որտեղ հարցը բազմակողմանի ուսումնասիրված է»[5]։

Այս ճիշտ ելակետից էլ մամուլը քննադատում էր մեր հանրապետությունում կոլեկտիվ շինարարության ասպարեզում ի

---

3 «Մաճկալ», 1927, № 102։

4 «Խորհրդային Հայաստան», 1928, № 24։

5 Նույն տեղում, № 25։

հայտ եկող սխալ-ըմբռնումներն ու տենդենցները։ Ինչպես նշվեց՝ Հայաստանում կազմակերպված կոլտնտեսությունները համեմատական առումով, թվական տեսակետից, մինչև 1928 թ. սկիզբը դեռևս շատ քիչ էին։ Եվ ահա, երբ կոլեկտիվացումը մեր հանրապետությունում ևս սկսեց առաջ գնալ լայն հունով, որոշ շրջաններում այն կարծիքն էին հայտնում, թե հարկավոր է արագացնել կոլեկտիվների կազմակերպման թափը այն հաշվով, որպեսզի շուտափույթ կերպով փոխհատուցվի Հայաստանի ետ մնալը մյուս հանրապետություններից։ «Կան մարդիկ,— նկատում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— որոնք գտնում են, որ նորմալ պայմաններում կազմակերպվող կոլեկտիվ տնտեսությունների թվին պետք է ավելացնել այն քանակը, որ անցյալում չի կազմակերպվել»։ Այսպիսի հապճեպ փոխհատուցման պահանջը համարելով «վտանգավոր տրամադրություն», թերթը պատկերավոր համեմատության դիմելով շարունակում էր՝ «մի խոսքով՝ ճիշտ այնպես, ինչպես անում է գնացքի մեքենավարը, եթե նա ուշացել է ճանապարհի վատ մասում և աշխատում է մյուս մասում ժամանակին տեղ հասնելու համար սովորականից արագ թափով գնալ։ Պարզ է, որ,— զգուշացնում էր թերթը,— նման պայմաններում կատաստրոֆները հնարավոր են»[6]։

«Արագ թափի» կողմնակիցներն իրենց տեսակետը արդարացնում էին երկու կարգի փաստարկներով, որոնք նույնպես քննադատվեցին մամուլում։ Նախ, ասում էին նրանք, «Հայաստանի գյուղացին իր հոգեբանությամբ ու տենդենցներով ավելի կոլեկտիվիստ է, քան Ռուսաստանի գյուղացին», «վերջինիս մեջ անհատական սեփականության հոգեբանությունն ավելի խոր արմատներ ունի, քան առաջինի մեջ»։ Նման «հիմնավորումը» գտնելով «միամիտ» և «ոչ ռեալիստական», «Լենինյան ուղի»-ն պարզաբանում էր. «Մանր սեփականատեր գյուղացու հոգեբանությունն ու ձգտումները... ոչ թե գյուղացու ազգային կամ տերիտորիալ ցուցանիշներով են պայմանավորվում, այլ նրա տնտեսական դրությամբ, նրա՝ գեպի արտադրական միջոցներն ունեցած վերաբերմունքով։ Անհատական սեփականատիրական հոգեբանությունն ու իդեոլոգիան հայ գյուղացու մեջ նույնքան է ոսկրացած, որքան ռուս կամ մի ուրիշ գյուղացու մեջ»[7]։

---

6 «Խորհրդային Հայաստան», 1928, № 30։

7 «Լենինյան ուղի», 1929, № 4—5, էջ 54։

Մյուս փաստարկն այն էր, թե Հայաստանում չքավոր գյուղացիությունն ավելի մեծ տոկոս է կազմում. «իսկ որովհետև չքավորներին ավելի հեշտ է կոլեկտիվացման ենթարկել,— արամաբանում էին նրանք,— ուրեմն մեզանում կոլեկտիվացման տեմպը պիտի ավելի բարձր լինի»: Իհարկե, նկատում էր նույն հանդեսը, ոչ մի կասկած չի կարող լինել, որ չքավոր գյուղացին իր տնտեսական-սոցիալական դրությամբ ավելի հեշտ է կոլեկտիվացման ենթակա, քան գյուղի մյուս խավերը, սակայն երբեք չպետք է մոռանալ, որ կոլեկտիվ տնտեսության խնդիրը չի սպառվում միայն կազմակերպչական ձևերի փոփոխությամբ. դա հարցի միայն մի կողմն է: Գյուղատնտեսության բարձրացման ու սոցիալիստական վերակառուցման համար կարևոր նշանակություն ունեն տեխնիկական բազան, հողի որակը, գյուղատնտեսական կուլտուրաների մշակման փորձառությունը, գյուղի ընդհանուր կուլտուրական մակարդակը և այլ հանգամանքներ: Անդրադառնալով մեր հանրապետությունում կոլեկտիվ շինարարության կազմակերպման խնդիրներին, «Խորհրդային Հայաստան»-ը նշում էր. «Մեր գյուղի ընդհանուր հետամնացությունը, արտադրական միջոցների պրիմիտիվ լինելը, տնտեսության ապրանքայնության ցածր աստիճանը, հողատակավությունը և, վերջապես, գյուղի կուլտուրական հետամնացությունը խոչընդոտներ են, որոնք անխուսափելիորեն դժվարացնում են գյուղի կոլեկտիվացման գործը»: Թերթը կարևոր էր համարում, որ արդեն կազմակերպված կոլտնտեսությունները «գործի օրինակելի դրումով իրենց կողմը գրավեն գյուղի չքավոր ու միջակ տնտեսությունների համակրանքը», իսկ նորերն ստեղծելիս հաշվի առնվի «կոլեկտիվացման ասպարեզում Խորհրդային Միության այլ վայրերի ձեռք բերած հարուստ փորձը»[8]:

Պարբերական մամուլը, այս տեսակետից ելնելով, կարևոր տեղ էր տալիս կոլտնտեսությունների տնտեսական-տեխնիկական ամրապնդման, որակյալ կադրերի օգտագործման, միջակի նկատմամբ ճիշտ քաղաքականության կիրառման, բանվորա-գյուղացիական դաշինքի հետագա ամրապնդման խնդիրներին:

Նշելով կոլտնտեսությունների զգալի թվական աճը Հայաստանում, «Մաճկալ»-ը «Լենինի հետ» խորագրով առաջնորդողում գրում էր. «Բայց մենակ բանը թվումը չի: Պետք է աշխատել, որ կոլեկտիվները ամրանան, ուժեղանան և շատ տնտեսություններ

8 «Խորհրդային Հայաստան», 1928, № 266:

ընդարկեն։ Լենինն ասել է, որ մենք եթե մենակ խոսենք կոմունաների մասին և ոչնչով ցույց չտանք գյուղացուն նրանց առավելությունն անհատական տնտեսությունից, ապա գյուղացին մեր խոսքին չի հավատա։ Մեր կոլեկտիվները գործո՛վ պետք է ցույց տան, որ ավելի հառաջադեմ են, ավելի արդյունավետ, քան անհատ տնտեսությունները։ Այն ժամանակ ավելի շատ գյուղացիներ կուզենան կոլեկտիվ կազմակերպվել»[9]։

* * *

Կոլեկտիվացման քաղաքականությունն անցնելու շրջանում, դեռևս ՀամԿ(բ)Կ XV համագումարի նախօրյակին, մամուլը մի անգամ ևս շեշտեց բանվորա-գյուղացիական դաշինքի լենինյան սկզբունքների անշեղ կենսագործման կարևորությունը։ «Մեր կուսակցությունը,— ընդգծում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— երբեք չի կարող ինչպես մյուս բոլոր խնդիրներում, այնպես էլ գյուղացիության հանդեպ մեր վարած քաղաքականության լենինյան գիրքերից զիջումներ անել։ Մեր երկրում սոցիալիզմ կառուցելու և պրոլետարիատի դիկտատուրայի առաջին հանրապետության վրա իմպերիալիստական-կապիտալիստական հարձակման դեմ կանգնելու համար՝ անհրաժեշտ է պրոլետարիատի և գյուղացիության դաշինքը»[10]։ Այդ դաշինքի ամրապնդման հարցերին անդրադառնալիս մամուլը հաճախակի հենվում էր մոտիկ անցյալի, հեղափոխական պայքարի պատմական փորձի վրա, հիշեցնելով այն խոշոր նվաճումները, որ ձեռք էին բերվել այդ ասպարեզում կուսակցության քաղաքականության հետևողական կիրառման շնորհիվ՝ ի հեճուկս բոլոր կարգի աջ ու «ձախ» թեքումների և օպոզիցիաների։

«Մեր կուսակցությունը և գյուղը» առաջնորդողում «Խորհրդային Հայաստան»-ը քննադատում էր քաղաքը և գյուղը միմյանց հակադրելու տրոցկիստական նկրտումները արձագանքները, նշում այն մեծ հաջողությունները, որ առկա էին գյուղատնտեսական կոոպերացիայի ասպարեզում, արդյունաբերության զարգացումը գյուղի սոցիալիստական վերակառուցման հետ ներդաշնակելու գործում։ «Մեզ համար հիմնականը նա է,— ընդգծում էր թերթը,— որ մեր ընդհանուր տնտեսության հետ, մեր ծանր ինդուստրիայի սոցիալիստական զարգացման և կազմակերպման հետ բարձրացող գյուղատնտեսությունը ոչ թե մասնավոր կապիտալիստական հունով զարգանա, այլ իրոք մեր ամբողջ սոցիալիստական տնտե-

9 «Մաճկալ», 1929, № 6։

10 «Խորհրդային Հայաստան», 1927, № 206։

սության մի մասը»։ «Կարևոր է այն խնդիրը,— եզրակացնում էր Թերթը,— թե ինչ չափով մենք կարողանում ենք գյուղի հին կապիտալիստական հարաբերությունները ոչնչացնել և այնտեղ մանր գյուղացիական տնտեսությունների զարգացումը սոցիալիստական, կոլեկտիվիստական ռելսերի վրա դնել»[11]։

Քաղաքի և գյուղի կապերն ամրապնդելու իր ջանքերի մեջ պարբերական մամուլն ամենևին էլ երկրորդական նշանակություն չէր տալիս սպառողական կոոպերացիաներում, բանկոոպներում և առհասարակ Հայկոոպի սիստեմում աշխատանքները բարելավելու, գյուղին լայն սպառման առարկաների, գյուղատնտեսության գործիքների և այլնի մատակարարումը պատշաճ հիմքերի վրա դնելու հարցերին։ Հարկավոր էր ցուցաբերել դասակարգային ճիշտ մոտեցում, աշխուժ լինել, որպեսզի մի կողմից՝ կուլակային տարրերը չկարողանային տարածել իրենց ազդեցությունը սպառողական կոոպերներում և մյուս կողմից՝ ժամանակին կանխվեին «ձախության» արտահայտությունները միջակ գյուղացու նկատմամբ։ Այս խնդիրները հաճախակի արծարծվում էին կուսակցական-կոմերիտական մամուլի օրգաններում և գյուղացիական-գյուղատնտեսական պարբերականներում։

Բացի այդ, «Մաճկալ»-ը, Հայկոոպի հետ միասին, 1929 թ. հրատարակեց «Քաղաք—Գյուղ» և «Սոցիալիստական մրցականչ» հավելված-թերթիկները[12]։ Սրանցում զետեղված նյութերը հիմնականում երկու բնույթի էին՝ տեղեկատու-ինֆորմացիոն հաղորդումներ, քաղաքի ու գյուղի փոխհարաբերության գործում ձեռք բերված հաջողությունների հակիրճ ամփոփումներ և այդ ասպարեզում նկատվող թերությունները բացահայտող ահազանգ-թղթակցություններ, որոնց հետ տպագրվում էին Հովհ. Շավարշի կատարած դիպուկ ծաղրանկարները։ Այս հավելված-թերթիկները զգալի աշխուժություն և տեղաշարժ առաջացրին Հայկոոպի աշխատանքներում, նպաստեցին քաղաքի և գյուղի կապերի ամրապնդմանը, նրանց զոդմանը՝ կոոպերացիայի միջոցով։

Սպառողական կոոպերացիայի հաշվետու-ընտրական կամպանիայի և սպառողական կոոպերացիայի վերակառուցման խնդիրների կապակցությամբ 1930 թ. մայիսի 24-ին և հունիսի 28-ին լույս տեսան

---

11 Նույն տեղում, № 250։

12 «Քաղաք-գյուղ»-ը հրատարակվել է 7 համար՝ հունվար-մարտ ամիսներին, «Սոցիալիստական մրցականչ»-ը՝ 5 համար՝ դեկտեմբեր-հոկտեմբերին։

«Սպառկոոպերացիան գյուղում» հատուկ հրատարակության երկու համարները[13], որոնցում տպագրված հաշվետու և կոնսուլտացիոն նյութերում, ինչպես և տեղերից ստացված հաղորդում-թղթակցությունների մեջ բավական լայնորեն արտացոլված է աշխատանքի այդ կարևոր բնագավառի վիճակը մեր հանրապետությունում:

Հարկ է այստեղ հիշատակել նաև «Գյուղացու տուն» ամսաթերթը[14], որ հրատարակում էին «Սոցիալիստական գյուղատնտեսություն» թերթի խմբագրությունը և Գյուղացու կենտրոնական տունը: Նրանում զետեղված ընդհանուր քաղաքական բնույթի հոդվածները, կոլտնտեսային շինարարության վերաբերյալ նյութերը, հաղորդումները, լուսանկարները, Գյուղացու կենտրոնական տանը ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկությունները գալիս էին աջակցելու և լրացնելու դաստիարակչական, կազմակերպչական այն աշխատանքը, որ ծավալել էր Հայաստանի պարբերական մամուլը քաղաքի և գյուղի կապերն ամրապնդելու ուղղությամբ:

Կոլտնտեսային շարժման առաջին իսկ քայլերից պարբերական մամուլն ուշադրության կենտրոնում էր պահում միջակի նկատմամբ լենինյան քաղաքականությունից կատարվող շեղումների դեմ պայքարելու հարցերը: Կոլեկտիվացումը հասարակական-սոցիալական հեղաշրջում էր, որն ընթանում էր դասակարգային սուր պայքարի պայմաններում: Մեր քաղաքականության հիմնաքարն այստեղ, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը, «կազմում է Լենինի ֆորմուլան՝ հենվել շքավոր գյուղացու վրա, պահպանել դաշինքը միջակի հետ և պայքարել կուլակի դեմ»: Սակայն, շարունակում էր թերթը, լենինյան այդ պահանջի կիրառումը գործնականում դեմ է առնում երկու թեքման, որոնք «գոյություն ունեն այս կամ այն չափով և արտահայտվում են նաև մեղանում՝ Խորհրդային Հայաստանում»: Առաջին և գլխավոր վտանգը աջ թեքումն էր. «Վերջին մի քանի ամսվա ընթացքում թե՛ մամուլում, թե՛ զանազան կուսակցական հավաքույթներում բերվել են բազմաթիվ

---

13 Հրատարակել է Հայկոոպը: Խմբագիրը չի նշված: 18—22 էջ (29×21 սմ), տպաքանակը՝ 1500:

14 «Գյուղացու տուն»-ը տպագիր պատի լրագիր էր, հրատարակվում էր 1930 թվականից: Մինչև 1932 թ. ներառյալ լույս է տեսել 16 համար: Խմբագիրը չի նշված, տպաքանակը՝ 300: Տարածվում էր ոչ միայն Երևանում, Գյուղացու տան այցելուների մեջ, այլև հանրապետության շրջաններում:

օրինակներ, որոնք ապացուցում են, որ մեր կուսակցության մի շարք անդամներ... թերագնահատում են կուլակային վտանգը, կամ ժխտում նույնիսկ նրա գոյությունը»։ Երկրորդ թեքումը դրսևորվում էր «ձախության» կերպարանքով. «Մեր ընկերներից շատերը չեն հասկացել և չեն հասկանում միջակ գյուղացու հետ դաշինքը պահպանելու անհրաժեշտությունը։ Ապացույց՝ միասնական հարկի դանձման կամպանիան, որի ընթացքում եղել են դեպքեր, երբ միջակ գյուղացիները դասվել են կուլակների շարքը և համապատասխան չափով ծանրաբեռնվել հարկով»[15]։

«Բանվորա-գյուղացիական դաշինքի լենինյան դիրքերում» առաջնորդողում[16] *ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը մատնանշում էր կուսակցության գծի աղավաղման մի քանի փաստեր. Դիլիջանում միջակին ենթարկում էին «անհատական հարկման», մի քանի գավառներում միջակի գավակներին չէին ընդունում կոմերիտմիության մեջ, Լոռի-Փամբակում և Էջմիածնում կոլեկտիվություն ընդունվելու միջակների բոլոր դիմումներն անխնա մերժվել են՝ «աջ թեքման մեջ ընկնելու վախից» և այլն։ «Միջակի թերագնահատման այս բոլոր արտահայտությունները,—նկատում էր թերթը,— մասամբ բացատրվում են նաև նրանով, որ կապիտալիստական տարրերի դեմ մեր ծավալած ավելի ուժեղ ու լայնարձակ արշավը, աջ թեքման, որպես ներկայիս գլխավոր վտանգի՝ վրա շեշտը դնելու հանգամանքը ծուռ հայելու միջով են դիտվում և յուրացվում մեր որոշ ընկերների կողմից։* Նրանք անգիտանում են, որ կուսակցությունը միանգամայն տեղին և հիմնավոր կերպով այժմ աջ թեքման վրա կենտրոնացնելով կրակը, բնավ երբեք չի հրաժարվում և չի դադարում համազարկեր բաց անել «ձախ» թեքման բոլոր տեսակի արտահայտությունների վրա»։ *Թերթը տեղին էր համարում հիշեցնել Վ. Ի. Լենինի այն կարևորագույն ցուցումը, թե՝ «միջակ գյուղացիությունը շփոթել կուլակության հետ, նրա վրա այս կամ այն չափով տարածել այն միջոցները, որոնք ուղղված են կուլակության դեմ, նշանակում է ամենակոպիտ կերպով խախտել ոչ միայն խորհրդային իշխանության բոլոր դիրեկտիվները և նրա ամբողջ քաղաքականությունը, այլև կոմունիզմի բոլոր հիմնական սկզբունքները, որոնք պրոլետարիատի ու միջակ գյուղա-*

---

15 *«Խորհրդային Հայաստան», 1928, № 226։*

16 *Տե՛ս նույն տեղը, 1929, № 152։*

ցիության համաձայնության անհրաժեշտությունն են մատնանշում»։ Լենինյան այս նույն դիրքորոշումից էր ելնում «Մաճկալ»-ը, երբ ընդգծում էր. «Ով որ մոռանում, թերագնահատում է միջակի դերը՝ շքավորի հետ դաշինք կազմելու գործում, նա խոշոր չափով աղավաղում է կուսակցության գիծը, ջուր լցնում կուլակի և հակախորհրդային տարրերի ջրաղացին և հանդիսանում ոչ թե մեր բարեկամը, այլ թշնամին»[17]։

Կոլեկտիվացման հաջողությունների հիման վրա և գյուղում դասակարգային պայքարի սրման պայմաններում առանձնակի կարևորություն էր ստանում կուլակության հարցը։ Նրա դեմ մղվող պայքարի խնդիրները, հատկապես հացամթերումների դժվարությունների կապակցությամբ, շատ էին զբաղեցնում նաև պարբերական մամուլին։

1928 թ. ամռանը «Խորհրդային Հայաստան»-ը տպագրեց «Մեր անելիքները գյուղում» ծրագրային առաջնորդողը[18], ուր քննադատվում էին աջ-օպորտունիստական պրակտիկայի և տեսության այն դրսևորումները, որոնց կրողները չէին ուզում տեսնել կապիտալիստական տարրերի ուռճացումը գյուղում։ «Կան նույնիսկ այնպիսի ընկերներ,— գրում էր թերթը,—որոնք կուլակին հայտարարում են ոչ թե տնտեսական, այլ «հոգեբանական» կատեգորիա, ի չիք դարձնելով XV համագումարի որոշումը կուլակային տարրերի դեմ մաքառելու մասին»։ Հարկավոր էր կիրառել այնպիսի միջոցառումներ, որոնք կասեցնեին կուլակային տարրերի աճման պրոցեսը, հնարավորություն չտալով, որ նրանք ի վիճակի լինեն իրենց պայքարը տնտեսականից փոխադրելու քաղաքական ասպարեզ։ «Կուլակին վերջին հաշվով տնտեսապես ուժասպառելու և շքավոր ու միջակ գյուղացիության նրա ճիրաններից վերջնականապես ազատելու համար,— գրում էր թերթը,— երկու միջոց կա... առաջինը՝ կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների զարգացումն է, երկրորդը՝ այն օգնությունը, որ մենք պետք է դեռևս ցույց տանք շքավոր ու միջակ գյուղացիների անհատական տնտեսությունների զարգացման ու բարձրացման գործին,— այս նպատակին է, որ պիտի ծառայի մեր գյուղատնտեսական կոոպերացիան, այսպե՞ս է, որ հանդես պիտի գա մեր դասակարգային քաղաքականությունը մթերումների նկատմամբ, սերմացուի բաշխման գործում, գյու-

17 «Մաճկալ», 1929, № 11։

18 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1928, № 160։

ղի հետ շփվող մեր բոլոր հիմնարկների գործնական աշխատանքներում»։ Նշելով, որ անցյալ տարվա 7-ի փոխարեն Հայաստանում արդեն ունենք 55 կոլտնտեսություն («սա նոր գործ է և մեծ գործ»), թերթը առաջնահերթ էր համարում «կատարված աշխատանքի մանրակրկիտ ստուգումը», նկատվող սխալների ու շեղումների ժամանակին շտկումը. հակառակ դեպքում՝ «օբյեկտիվորեն ուժեղացրած կլինենք գյուղի կապիտալիստական տարրերը»։ Առաջիկայում ևս աշխուրջ պիտի լինել ամեն մի վրիպման հանդեպ։ «Մեր հսկիչ օրգանները, մանավանդ մեր մամուլը պիտի ունենան գյուղական ճակատի բոլոր հատվածներում իրենց աշխատակիցները՝ հասարակական աչքը»։

Շուտով կուլակությունը խորհրդային իշխանության և կոլտնտեսությունների դեմ իր պայքարը փոխադրեց քաղաքական ասպարեզ։ Կուսակցությունն առաջադրեց կուլակությունը որպես դասակարգ վերացնելու լոզունգը։ «Դասակարգային պայքարը գյուղում ընդունում է սուր բնույթ», «Խորտակե՛նք կուլակի դիմադրությունը», «Ուժեղացնե՛նք գրոհը կուլակի դեմ», «Կուլակը և նրա պայքարի պրիսմները» և այլ խորագրերի ներքո պարբերականները տպագրում էին նամակներ, կարճ հաղորդումներ, հրապարակախոսական ու պրոպագանդիստական բնույթի նյութեր, որոնց մեջ տրված է գյուղում մղվող դասակարգային պայքարի պատկերը։ Կուլակը, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— «չի հրաժարվում և ոչ մի բանից՝ սկսած զանազան դեմագոգիկ պրովոկացիաներից, մեր դժվարությունների ու սխալների օգտագործումից՝ մինչև սպառնալիքը և տեռորը... Շատ հաճախ նա իր պայքարը տանում է գառան մորթի հագած...»[19]։

Պարբերական մամուլի պայքարը հանուն կոլտնտեսական շինարարության հաջողության և ընդդեմ կուլակի՝ ուներ երկակի նպատակադրում. մի կողմից՝ մերկացնել կուլակային տարրերի գործելակերպը, նրանց կռվի մեթոդները, մյուս կողմից՝ կանխել կոլտնտեսությունների կազմակերպման ընթացքում ի հայտ եկող այն սխալները, վրիպումներն ու թերությունները, կուսակցական գծի աղավաղումները, որոնք օգտագործում էր դասակարգային թշնամին։ Հատկանշական է այս տեսակետից «Մաճկալ»-ի մի եզրույթը, որն ինչ-որ չափով նաև ինքնաքննադատական բնույթ ուներ.— 1929 թ. հոկտեմբերին, բերքի և կոլեկտիվացման օրը,

19 Նույն տեղում, 1929, № 10։

«Մաճկալ»-ը, Հայդյուզկոոպը և Կոլխոզկենտրոնը հրատարակեցին «Դեպի կոլեկտիվացում» խորագրով մի թերթիկ։ Այստեղ կոլտնտեսաշարժման հրատապ հարցերին նվիրված մի քանի արժեքավոր նյութերի կողքին զետեղված էր նաև «Մաճկալ»-ի ակտիվ աշխատակից Ա.Թ. Խնկոյանի մի ոտանավորը՝ գրված բացահայտ ձախության դիրքերից.

Վա՜յն է նրանց,
Ահն է նրանց,
Մա՜հն է նրանց,
Որ կոլխոզներ չեն սարքի...[20]։

Շուտով հենց ինքը՝ «Մաճկալ»-ը հանդես եկավ սխալ ու վնասակար այս քարոզի դեմ[21]։ «Ի՞նչ է, ուրեմն, դուրս գալիս. այն գյուղացուն, որ կոլխոզ չի մտնում, որը անհատական իր սեփական տնտեսությունն է վարում, ան ու մա՞հ է սպասում»,—հարցնում էր թերթը և ապա բացատրում՝ «Իհարկե... խոշոր, կենտրոնացրած, մեքենայացրած տնտեսությունը գյուղում պիտի հաղթի մանր անհատական տնտեսություններին։ Բայց այդ հաղթանակը պետք է կատարվի և կատարվում է ոչ թե «ահ ու մահով», ոչ թե զոռով, բռնի միջոցով, ինչպես կարող է հասկացվել Խնկո-Ապոր բանաստեղծությունից. կուսակցությունը և խորհրդային իշխանությունը զոռով գյուղատնտեսության կոլեկտիվացում չեն ստեղծում... չեն վերցնում ու խեղդում մասնավոր, անհատական չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունները։ Խորհրդային իշխանությունը, ամուր հենվելով չքավորի ու բատրակի վրա, միջակ գյուղացիների հետ միասին, կոլեկտիվ տնտեսությունների և կոոպերացիայի վրա հենվելով, պայքար է մղում կուլակային տնտեսությունների դեմ»։

Այն ժամանակ դեռ շրջանառության մեջ չէր գրված «ձախ քյալլագյոզություն» արտահայտությունը, որով հետագայում սկսեցին որակել նման երևույթները, և հոդվածագիրը այդ ոտանավորի տպագրությունը պարզապես համարեց «անթույլատրելի և կոպիտ

---

20 Ի դեպ՝ անդրադառնալով համանման մտայնության դրսևորումներին, «Ավանդարդ»-ը հետագայում արձանագրվում էր այսպիսի փաստ. Սևանում գյուղի ղեկավար ընկերներից մեկը, վերցնելով մի տախտակ, մի երեսին նկարում է դերեզման, իսկ մյուսին գրում «սոցիալիզմ» և ցույց տալով համագյուղացիներին, հայտարարում է. «Ով որ մտնի կոլխոզ, նա կարժանանա սոցիալիզմին, իսկ ով ոչ՝ դերեզմանին» (տե՛ս «Ավանդարդ», 1930, № 88)։

21 Տե՛ս «Մաճկալ», 1929, № 82։

սխալ», որը, «մի կողմից՝ կարող է շփոթեցնել կոլեկտիվի գիտակցության չհասած շքավոր և միջակ գյուղացիներին և մյուս կողմից՝ կուլակների ձեռքին պենք է տալիս կոլտնտեսությունների գաղափարը վարկաբեկելու համար»։

* * *

Ինչպես արդեն նշել ենք, «Մաճկալ»-ը, սկսած 1924 թվականից հաճախակի անդրադառնում էր բատրակների կազմակերպման, նրանց իրավունքների պաշտպանության հարցերին, ելակետ ունենալով գյուղի շքավորների համախմբման, բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման շահերը։ «Գյուղի մշակների (բատրակների) կյանքից» բաժինը 1927 թ. նոյեմբերից վերակառուցվեց, ընդարձակվեց և այդ հիման վրա «Մաճկալ»-ում սկսեց լույս տեսնել «Բատրակ» հավելված թերթիկը՝ իբրև Գյուղանտառի արհմիության կենտրոնական վարչության օրգան։ 1928 թ. ապրիլի 22-ից «Բատրակ»-ը տպագրվում է առանձին՝ իբրև «Մաճկալ»-ի հավելված պատկերազարդ երկշաբաթաթերթ[22]։ № 7-ից սկսած այն դառնում է ինքնուրույն հրատարակություն և շարունակում է լույս տեսնել որպես Հայաստանի գյուղանտառ միության Կենտրոնական վարչության շաբաթաթերթ[23]։ 1930 թ. հոկտեմբերի 25-ից, 125 համար հրատարակվելուց հետո, «Բատրակ»-ը վերանվանվեց «Գյուղատնտեսական բանվոր», որը լույս տեսավ մինչև 1931 թ. մարտի 29-ը[24]։

«Բատրակ»-ն իր առջև դրել էր երկու հիմնական նպատակ.

---

22 Այդ մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիան որոշում էր կայացրել դեռևս 1928 թ. փետրվարի 22-ին (տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 11, գ. 349, թ. 8)։

23 1930 թ. հունվարից՝ 5-օրյա, հունիսի 10-ից՝ օրգ. Հայաստանի գյուղանտառ միության Կենտրոնական վարչության։ Պատ. խմբագիր՝ Ա. Պետրոսյան։ Տպաքանակը՝ 3150—6000։

24 Այս վերջին համարում խմբագրությունը զետեղեց հետևյալ ազդ-հայտարարությունը. «Գյուղատնտեսական բանվոր»-ի հրատարակումն այսօրվանից դադարեցվում է և միացվում «Մաճկալ»-ին։ Մեր թերթի առաջ դրված հարցերը սիստեմատիկաբար լուսաբանելու է «Մաճկալ»-ը, որի համար մեր ընթերցողները և թղթակիցները պետք է կապվեն «Մաճկալ»-ի հետ»։ 1931 թ. ապրիլի 14-ից «Գյուղատնտեսական բանվոր»-ը զետեղվում է «Մաճկալ»-ի 4-րդ էջում՝ իբրև հավելված-թերթիկ, անկանոն պարբերականությամբ։ Սեպտեմբերի 19-ից վերանվանվեց «Գյուղի բանվոր»։

գյուղի բանվորներին՝ բատրակներին ներգրավել գյուղատնտես միության մեջ և ստանձնել նրանց տնտեսական շահերի պաշտպանությունը, նպաստել կուլտուր-դաստիարակչական աշխատանքների ծավալմանը[25]։ Այս խնդիրների կարևորությունն ավելի ակնհայտ կդառնա, եթե նկատի առնենք, որ 1924 թվականից մինչև «Բատրակ»-ի հրատարակությունը միության մեջ ներգրավված էր Հայաստանի բատրակության միայն 35 տոկոսը՝ շուրջ 10 հազար հոգի, 18—20 հազարը դեռևս միությունից դուրս էին և պահպանում էին ինքնաբավ գոյություն։ «Բատրակ»-ը, սակայն, չէր սահմանափակվում զուտ գերատեսչական նպատակների ծառայելով. այն բուռ էության հանդիսացավ «պրոլետարական հասարակայնության կազմակերպիչը գյուղում» և զգալի դեր խաղաց «գյուղի չքավոր ու միջակ խավերի ամուր դաշինքը» ապահովելու և կուլակային շահագործման դեմ պայքարելու գործում։ «Բատրակ»-ը հասարակական կյանքով հետաքրքրվելու, սոցիալիստական վերափոխումների պրոցեսին ակտիվորեն միջամտելու ունակություն էր պատվաստում գյուղի հետամնաց խավերում՝ դառնալով նոր մարդու ձևավորման արդյունավետ գործոններից մեկը։ Մի տարում ավելի քան բառապատկվեց ինչպես թերթի շուրջ համախմբված թղթակիցների, այնպես էլ տարածվող թղթակցությունների թիվը[26]։

Բազմազան և ընդգրկող էր «Բատրակ»-ի հետաքրքրությունների ու միջամտությունների ոլորտը։ Այս թերթի գործունեությունը լավագույնս վկայում էր, որ «մեր գյուղի պրոլետարիատը ոչ միայն քննում ու վեր է լուծում իրեն շրջապատող կյանքը, այլև գրում ու ձգտում է վերացնել իր նկատած թերությունները և խրախուսել նվաճումները»[27]։ Ահա մի քանիսը այն բաժիններից, որ պարբերաբար տեղ էին գտնում թերթի էջերում. «Աշխատանքները լավ են գնում», ««Բատրակ»-ի ճիպոտի տակ», «Հարց ու պատասխան» (կոնսուլտացիոն նյութեր), «Կուլտուրական աշխատանքը բատրակների մեջ», «Սոցիալիստական մրցությունը զատարկ ձևականություն չէ», «Բոլորս անգրագիտության դեմ», «Բժշկի դրույցները», «Կրոնն ու գինին դաշնակիցներ են», «Կոլեկտիվացման ֆրոնտում»։

Կոլեկտիվացման առաջին իսկ քայլերից՝ «Բատրակ»-ը, հետո նաև «Գյուղատնտեսական բանվոր»-ը ուշադրության կենտրոնում

25 Տե՛ս «Բատրակ», 1928, № 1։
26 Տե՛ս նույն տեղը, 1929, № 19։
27 Նույն տեղում։

էին պահում գյուղի չքավորներին ու բատրակներին կոլեկտիվ տընտեսությունների մեջ ներգրավելու, նրանց քաղաքական ակտիվությունը բարձրացնելու հարցերը։

Ղեկավարվելով այն սկզբունքով, թե կոլտնտեսության մեջ «բատրակությունն առաջին շարքերում պիտի լինի և իր հետևից պիտի տանի չքավոր ու միջակ գյուղացիությանը», «Բատրակ»-ը կրքոտությամբ հանդես էր գալիս բատրակային-չքավորական խմբակների դերը թերագնահատելու, նրանց կազմակերպումը խաթարելու փորձերի դեմ։ Ընդգծելով խորհուրդներին, կոոպերացիային, կոլտնտեսություններին, վարկային ու գյուղի բոլոր ընտրովի մարմիններին կից բատրակային-չքավորական խմբակներ ստեղծելու կարևորությունը, թերթը հիշեցնում էր. «... Այդ խմբակների միջոցով է, որ գյուղի չքավորությունը հակողություն պիտի ունենար ու վերացներ այդ մարմիններից բյուրոկրատիզմը, թափթփվածությունը, դասակարգային գծի աղավաղումները և այլն և այլն»[28]։

«Բատրակ»-ը ակտիվորեն մասնակցեց Գյուղատնտես միության համամիութենական կենտկոմի որոշմամբ անցկացված «Տրակտորի օր» միջոցառմանը, որը նշանակված էր 1930 թ. հունիսի 20-ին։ Դրա նպատակն էր ստուգել խորհտնտեսություններում աշխատող տրակտորների պահպանման և օգտագործման վիճակը, ի հայտ բերել մեքենաների փչացման ու պարապուրդների պատճառները, տրակտորիստների կադրերի պատրաստման հետ կապված հարցեր հարուցել համապատասխան մարմինների առջև։ «Տրակտորիստի օրվան» նախապատրաստվելու կամպանիան «Բատրակ»-ում տևեց շուրջ մեկ ամիս. բազմաթիվ ու բազմազան նյութերում, նպատակային էջերում թերթը հիմնովին ստուգեց մեր Հանրապետության խորհտնտեսություններում առկա գյուղատնտեսական տեխնիկայի վիճակը, արծարծեց մասնավորապես տրակտորների պահպանման, վերանորոգման, արդյունավետ աշխատանքի հետ կապված բազմաթիվ խնդիրներ, ընդգծելով այս ասպարեզում ձեռնարկվող միջոցառումների ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կարևորությունը։ «... Մեքենաների պահպանման համար մղվող պայքարը,— գրում էր թերթը առաջնորդողներից մեկում,— ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակություն ունեցող պայքար է։ Ամեն մի տրակտոր մի զենք է, որով մենք նորանոր դիրքեր ենք գրավում գյուղատնտեսության վե-

---

28 Նույն տեղում, 1930, № 6։

բակառուցման ֆրոնտում»[29]։ Թերթը կոչ էր անում տարածել լավագույն տրակտորիստների աշխատանքի փորձը, պատրաստել նոր մեխանիզատորներ, «բարձրացնել տեխնիկական կարգի պատասխանատվության զգացումը և մասսաներին պայքարի հանել մեքենաների փչացման դեմ»։ «Տրակտորի օրը» անցկացնելու և այդ ուղղությամբ տարվելիք նախապատրաստական աշխատանքները ղեկավարելու համար «Բատրակ»-ին կից ստեղծվեց կենտրոնական շտաբ, որի մեջ մտան Բամբակմիությունի, Գյուղարհեստի, «Մանկալ»-ի և Գյուղանտառի հանրապետական կոմիտեի ներկայացուցիչները[30]։ «Տրակտորի օրվան» նվիրված համարում «Բատրակ»-ը ամփոփեց այդ կարևոր միջոցառման արդյունքները, նշեց մեքենաների պահպանման գործում գյուղական հասարակայնության ակտիվության բարձրացումը, միաժամանակ հիշեցնելով, որ «ստուգատեսն անցկացնելուց հետո պայքարը տրակտորների փչացման դեմ երբեք չպիտի դադարեցնել, ուրիշ խոսքով ասած՝ այդ աշխատանքները կամպանիոն բնույթ չպիտի կրեն»[31]։

«Բատրակ»-ի և առանձնապես «Գյուղատնտեսական բանվոր»-ի էջերում արտացոլված են Հայաստանի խորհտնտեսություններում կատարված աշխատանքների հիմնական կողմերը, ցույց են տրված այդ բնագավառում ձեռք բերված խոշոր նվաճումները, բացահայտված են մի շարք էական թերություններ ու վրիպումներ՝ մասնավորապես վարձատրության, բնակարանային շինարարության, բանվորական սննդի մատակարարման, կուլտուրակենցաղային սպասարկման ասպարեզներում։ Խորհտնտեսությունների ցանցի հետագա ընդարձակման կապակցությամբ «Գյուղատնտեսական բանվոր»-ը սուր կերպով էր դնում հատկապես բանվորական ուժի ապահովման խնդիրները։ Արձանագրելով, որ բանվորական ուժի պակասի և ոչ ճիշտ կազմակերպման պատճառով 1930 թվականին մի շարք խորհտնտեսություններ (Շաղրլու, «Զոդ», Յանըզ, Աղբաբա և այլն) զգալի վնաս կրեցին, թերթը քննադատում էր խորհտնտեսային ղեկավար մարմիններին և պրոֆկազմակերպություններին՝ բանվորական ուժի ապահովման նկատմամբ ցուցաբերած «անփույթ վերաբերմունքի» համար։ Միանգա-

29 «Բատրակ», 1930, № 27։

30 Տե՛ս նույն տեղը։

31 Նույն տեղում, № 31։

մայն անհանդուրժելի էր գտնում թերթը և այն իրավիճակը, որ խորհտնտեսությունների կարիքների համար չեն օգտագործվում դեռևս կոլտնտեսությունների մեջ չընդգրկված բատրակները[32]։

Խորհտնտեսային շինարարության գործնական խնդիրների քննարկմանը «Գյուղատնտեսական բանվոր»-ը ջանում էր ներգրավել գյուղական հասարակայնության առաջավոր խավերին, մասնավորապես բատրակ և բանվոր թղթակիցներին։ Թերթի նախաձեռնությամբ 1931 թ. մարտի 1-ին հրավիրվեց խորհտնտեսությունների և ՄՏ կայանների բանթղթակիցների ու պատի թերթերի խմբկոլների հանրապետական խորհրդակցություն։ «Գյուղատնտեսական բանվոր»-ի խմբագրությունը հաշվետվություն արեց թերթի գործունեության և խորհտնտեսային շինարարության ծավալման կապակցությամբ մամուլի առջև ծառացած նոր խնդիրների մասին[33]։

«Բատրակ»-ը և «Գյուղատնտեսական բանվոր»-ը զգալի դեր խաղացին գյուղական չքավորությանը, հատկապես բատրակներին կազմակերպելու և գյուղի սոցիալիստական վերակառուցման մեջ ակտիվորեն ներգրավելու գործում։

* * *

Կոլեկտիվացման քաղաքականության կիրառումը նոր և պատասխանատու խնդիրներ դրեց գյուղի կուսակցական ակտիվի առջև։ Ուստի և անհրաժեշտ էր ավելի մոտիկից ու հանգամանորեն զբաղվել նրա քաղաքական-գաղափարական դաստիարակությամբ, կազմակերպչական ունակություններ և ճիշտ կողմնորոշվելու կարողություն պատվաստել այն մարդկանց, ովքեր կոչված էին լինելու կուսակցության գծի իրականացման առաջամարտիկները գյուղում։

Ճիշտ է, գյուղական ակտիվի դաստիարակության ու կազմակերպման ուղղությամբ որոշ աշխատանք կատարում էին «Խորհրդային Հայաստան»-ը, «Մանկալ»-ը, «Լենինյան ուղի»-ն և մյուս պարբերականները, սակայն, այդուհանդերձ, զգացվում էր նաև այդ նպատակին ծառայող առանձին հրատարակության կարիքը։

---

32 Տե՛ս «Գյուղատնտեսական բանվոր», 1930, № 65։

33 Տե՛ս նույն տեղը, 1931, № 10։

նոր պայմանների ծնունդ էր «Գյուղի կոմունիստ» ամսագիրը[34]։ «Մեր գյուղական ակտիվի խնդիրներն օրեցօր ավելի բարդանում ու դժվարանում են,— հայտնում էր խմբագրությունը։— Նրա վրա է անմիջորեն ընկած գյուղի սոցիալիստական վերակառուցման ամենամեծ ծանրությունը։ Նա է փաստորեն, որ կյանքի մեջ պիտի կիրառի կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականությունն ու որոշումները գյուղի վերաբերյալ։ Ահա գյուղական ակտիվին համապատասխան ցուցումներով և խորհուրդներով օգնելու և առհասարակ նրա բաղաքական աճման նպաստելու համար է, որ ՀԿ(բ)Կ Կենտկոմը հիմք դրեց նոր ժուռնալի հրատարակությանը։ «Գյուղի կոմունիստ»-ը հիմնականում կուրս է վերցնելու մեր գյուղական ակտիվի վրա, ընդառաջելու է նրա կարիքներին ու պահանջներին»[35]։

Այս նոր պարբերականն անդրադառնում էր գյուղական կյանքի գրեթե բոլոր խնդիրներին։ Ամսագրի հիմնական բաժիններն էին՝ «Կուսակցական կյանք», «Խորհրդային շինարարություն»,

---

34 «Գյուղի կոմունիստ»-ը ՀԿ(բ)Կ Կենտրոնական և Երևանի կոմիտեների օրգանն էր։ Առաջին համարը լույս է տեսել 1929 թ. մարտին, վերջին՝ 11-րդ համարը՝ 1930 թ. հունվարին (№№ 3—4, 6—7, 9—10-ը՝ միացյալ)։ Մինչև № 8-ը ներառյալ պատ. խմբագիրն էր Մ. Զոլաեյանը, այնուհետև՝ Ե. Զուրարը, խմբ. կոլեգիայի անդամներ էին նաև Ամատունին, Հ. Բարլումյանը, Հ. Մկրտչյանը և Գ. Քալաշյանը։ 52—62 էջ (22×15 սմ), տպաքանակը՝ 1000—1700։

Ի դեպ՝ շրջանը ու միջակ գյուղացիներին գյուղխորհուրդների շուրջը համախմբելու, գյուղական խորհրդային կառավարման օրգանների աշխատանքի բարելավմանը աջակցելու նպատակով ՀՍԽՀ Կենտգործկոմի կազմրաժինը 1928—1929 թթ. հրատարակում էր «Խորհրդային շինարարություն» երկշաբաթյա հանդեսը, ուր հիմնականում տպագրվում ու պարզաբանվում էին գյուղխորհուրդների վերաբերյալ ինչպես միութենական, այնպես էլ անդրկովկասյան ու հանրապետական կառավարությունների ընդունած դեկրետներն ու որոշումները։ Լույս էր տեսնում խմբ. կոլեգիա ստորագրությամբ։ 8—20 էջ (25×17 սմ), տպաքանակը՝ 9500—11300։

1932 թ. «Խորհրդային շինարարության» հրատարակությունը վերսկսվում է՝ իբրև օրգան ՀՍԽՀ Կենտգործկոմի և Արդարադատության ժողկոմատի։ Համապատասխանորեն ընդլայնվում է նաև հանդեսի ընդգրկման ոլորտը։ Նյութերի մեծ մասն ուներ վարչական-հրահանգչական բնույթ։ Պատ. խմբագիրն էր Ռ. Դաշտոյանը։ 36—56 էջ (31×20 սմ), տպաքանակը՝ 3000—5000։

Սրանից բացի, խորհուրդների ընտրությունների կանոններն ու այդ կապակցությամբ ընդունված որոշումները պարզաբանելու նպատակով Կենտգործկոմն ու Արդժողկոմատը 1934 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հրատարակեցին նույնանուն բյուլետենատիպ թերթի մի քանի համարներ։ Պատ. խմբագիր՝ Ռ. Դաշտոյան։ 4 էջ, տպաքանակը՝ 4000։

35 «Գյուղի կոմունիստ», 1929, № 1։

«Կոլեկտիվացման ճակատում», «Կոմսոմոլում», «Աշխատանքը բատրակների մեջ», «Կոոպերացման ճակատում», «Աշխատանքը գեղջկուհիների մեջ», «Հակակրոնական ճակատում», «Քաղաքական աշխարհում» (արտաքին ինֆորմացիա), «Կուլտուրական ճակատում», «Ի՞նչ կարդալ» (քաղաքական և գյուղատնտեսական ընթացիկ գրականություն)։ Այս բոլոր հարցերը հանդեսը քննարկումլուսաբանում էր իր հիմնական նպատակադրման, այն է՝ գյուղական կուսակցական ակտիվի քաղաքական դաստիարակությանը նպաստելու տեսանկյունից, և այս հանգամանքը որոշակի նպատակասլացություն էր հաղորդում նրա ելույթներին։

Առանձնակի արժեք ունեն «Գյուղի կոմունիստ»-ի այն նյութերը, որոնց մեջ, կոնկրետ փաստերի հիման վրա, արծարծված են գյուղական կազմակերպությունների գործունեության հետ կապված հարցերը՝ կոլեկտիվացման կուրսի ճիշտ կիրառման առնչությամբ։ Ամսագիրը սկզբից ևեթ գյուղի յուրաքանչյուր կոմունիստի պարտքն ու պարտականությունն էր համարում՝ հանգամանորեն ուսումնասիրել կոլեկտիվացման վերաբերյալ կուսակցության որոշումներն ու հրահանգները, յուրացնել ընդհանուր քաղաքական սկզբունքները, ինչպես և կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման, նրանցում կիրառվելիք վարձատրության կոնկրետ ձևերը։ Հակառակ դեպքում, նկատում էր հանդեսը, «մեր կուսակցական կազմակերպություններն իրենց հիմնական պարտականությունները կատարելիս, անկախ իրենց կամքից, կարող են թույլ տալ այնպիսի խոշոր սխալներ, որոնք կվնասեն ու կքայքայեն կոլեկտիվ տնտեսությունների գործը՝ վարկաբեկելով կոլեկտիվացման գաղափարը գյուղում»[36]։ Իբրև այդպիսի «հակառակ դեպքի» մի նմուշ ամսագիրը բերում էր Նոր Բայազետում կուսակցական մարմինների նախաձեռնությամբ կազմակերպված այն «կոլտնտեսության» օրինակը, որի մեջ մտել էին «զավառի մասշտաբով աշխատող պաշտոնյաները՝ միլիցիան, նրա օգնականը, պահեստապետներ, հիվանդանոցի ծառայողներ, փոստի պաշտոնյաներ, սափրիչներ, կոշկակարներ, նույնիսկ դատական աշխատակիցներ»։ Անշուշտ, եզրակացնում էր հանդեսը, այսպիսի կազմ ունեցող կոլեկտիվ տնտեսությունները երկար գոյություն ունենալ չեն կարող և «միայն կվարկաբեկեն կոլտնտեսական շարժումը»։

---

36 Նույն տեղում, N 2, էջ 41։

«Գյուղի կոմունիստ»-ը բացահայտում-քննադատում էր կոլտնտեսությունների կազմակերպման կամավորության սկզբունքի բամահրման «անիշխանական» փորձերը։ «...Կոլեկտիվ տնտեսությունների շինարարության գործը,—ընդգծում էր ամսագիրը,— նորություն է։ Այդ ուղղությամբ մենք ո՛չ պատմություն ունենք, ո՛չ էլ անհրաժեշտ փորձ։ Այդ տեսակետից՝ պահանջվում է մեծ զգուշություն մեր գործնական աշխատանքների ընթացքում։ Կազմակերպչական ամեն մի կոպիտ սխալը կարող է կործանիչ հարված հասցնել կոլեկտիվներին»[37]։

Ամսագիրը միաժամանակ վճռականորեն հանդես էր գալիս աջ-օպորտունիզմի դեմ՝ կարևոր նշանակություն տալով առողջ և սկզբունքային ինքնաքննադատության ծավալմանը մասնավորապես գյուղական կուսակազմակերպություններում։ «Անշեղորեն շարունակել պայքարը աջ օպորտունիստական պրակտիկայի դեմ» խմբագրականում[38] «Գյուղի կոմունիստ»-ը մի անգամ ևս ընդգծում էր, որ կյանքը, սոցիալիստական շինարարության ընթացքը մինչև վերջ հաստատեցին կուսակցության XV համագումարի և XVI կոնֆերանսի որոշումների ճշմարտացիությունը։ Կուսակցությունը ջախջախիչ հարված հասցրեց հակալենինյան գաղափարակիրներին։ «Աջ օպորտունիստական թեորիայի դեղին ծաղիկը դեռ չբացված թառամեց»,—պատկերավոր խոսքով ընդհանրացնում էր ամսագիրը։ Աջ թեքման դեմ հետևողական ու արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ է, որպեսզի կուսակցական, կոմերիտական կազմակերպությունները, գյուղի ակտիվը հստակ պատկերացում ունենան նրա էության և կոնկրետ դրսևորումների մասին։ Այլապես այդ պայքարը կկորցնի նպատակասլացությունը, ավելին՝ կվնասի կուսակցական գծի ճիշտ կիրառմանը։ Խմբագրականում բերված են սխալ ըմբռնումների մի քանի օրինակներ. Մեղրիի գավառի Հնչվաղ գյուղի կոմերիտ բջջի քարտուղարն ասում է. «Հարբեցողությունը աջ թեքում է»։ Մի ուրիշ գյուղում կոմունիստներն ասում են. «Աջ թեքումը միջակն է»։ Լենինականի գյուղերից մեկում կարծում են, թե «աջ թեքումը պուդրա բռնելն է»։ «Իհարկե,— եզրակացնում էր հանդեսը,— այսպիսի ընկերները չեն կարող կռվել աջ թեքման դեմ, որովհետև չեն հասկացել, թե ինչ է աջ թեքումը»։

---

37 «Գյուղի կոմունիստ», 1929, № 2, էջ 42։

38 Տես՝ նույն տեղը, № 8։

Նախորդ ամբողջ շարադրանքից պարզ երևում է, որ պարբերական մամուլը հաջողությամբ կատարում էր իր առջև դրված խնդիրները՝ նպաստելով կոլտնտեսային շինարարության ճիշտ ծավալմանը, պայքարելով աջ ու «ձախ» թեքումների, կուսակցության գծի խեղաթյուրումների դեմ։

Եվ այսպես շարունակվեց մինչև համատարած կոլեկտիվացման շրջանում թույլ տրված հայտնի սխալները, երբ մամուլը ևս բացահայտորեն տուրք տվեց սուբյեկտիվիստական աղավաղումներին՝ կատարելով մի շարք կոպիտ սայթաքումներ...

Կոլեկտիվացման կուրսի կենսագործման ընթացքում, ինչպես հայտնի է, շատ վայրերում ցուցաբերվեց չհիմնավորված հապճեպություն. գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բարդ ու դժվարին խնդիրները լուծելիս կոպիտ կերպով խախտվեցին կոլեկտիվացման լենինյան սկզբունքները, կուսակցության բարձրագույն օրգանների որոշումներն ու հրահանգները. սուբյեկտիվությունն ու կամայականությունը մեծ վնաս հասցրին գործին։ Գնալով ավելի ու ավելի հաճախակի դարձան կոլտնտեսությունների կազմակերպման կամավորության սկզբունքի խախտման դեպքերը, գլխապտույտ արագություն հաղորդվեց կոլեկտիվացման տեմպերին, միջակ գյուղացու նկատմամբ գործադրված անհիմն բռնությունները հասան աղետալի չափերի...

Եվ նման երևույթների մասին ահազանգելու, կուսակցության գծի կոպիտ խեղաթյուրումների դեմ ըմբոստանալու փոխարեն, ինչպես արվում էր մինչ այդ, շատ անգամ մամուլն ինքն էր տոն տալիս՝ խորացնելով տեղական մարմինների սխալները։ Հայտնի է նաև, որ այդ անառողջ «խանդավառությանը» զգալի չափով տուրք տվին մեր երկրի մամուլի նույնիսկ ամենահեղինակավոր օրգանները[39]։

Հայաստանում լույս տեսնող պարբերականները ևս զերծ չմնացին այդ վտանգավոր «հիվանդությունից». «ենթարկվեցին գլխապտույտի, բնագատական վերաբերմունք հանդես չբերին տեղերից ստացվող թղթե-թվանշանային կոլեկտիվացման ուռուցքային հաղորդագրությունների նկատմամբ և ընդհակառակը որոշ ժամանակ հրահրեցին «կոլեկտիվացման խաղը» չմտածված, ոչկամա-

39 Տե՛ս «ՍՄԿՊ պատմություն», 1963, էջ 557։

յին, ավյալ պայմաններում անտեղի և վտանգավոր մրցականչի լոզունգներով»[40]:

Չնայած այն բանին, որ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի որոշմամբ նախատեսվում էր Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, կոլեկտիվացումը հիմնականում ավարտել 1933 թվականին, Անդրերկոմը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը սխալ կերպով այդ կարևորագույն և բարդ գործը արդեն 1930 թ. գարնանն ավարտելու կուրս վերցրին. որոշում ընդունվեց Հայաստանի բոլոր շրջաններում անմիջապես անցնել համատարած կոլեկտիվացման: Այդպիսի «ձախ» դիրքորոշում ավելին ՀԿ(բ)Կ Կենտկոմն ու Երևանի գավառային կոմիտեն՝ աշխատավոր գյուղացիությանն ուղղված հունվարի 15-ի կոչում:

Իսկ ի՞նչ էր գրում պարբերական մամուլը: «Բուռն հոսանքը դեպի կոլտնտեսություն օրեցօր և ժամ առ ժամ ավելի մեծ թափ է ընդունում,— հավաստիացնում էր Հայաստանի կոմկուսի կենտրոնական օրգանը «Համատարած կոլեկտիվացման մարտական տեմպերը» առաջնորդողում:— Հզոր շարժումը, որ... ընդգրկել է մեր գյուղը, ընդունակ է գերազանցելու մեր ամենահամարձակ պլանային ենթադրությունները»[41]: Նույն ոգով էր ներթափանցված թերթի ելույթների մեծ մասը, այդպիսի հավաստումներով էին փայփայում իրենց և ընթերցողներին նաև հանրապետության մյուս պարբերականները: «Լենինյան ուղի»-ի հեղինակներից մեկը, օրինակ, ոչ միայն քամահրում էր տեղերից լսվող դպաստության ձայները, դրանք համարելով սոսկ «խուճապ բուռն աճման հանդեպ», «անպետք և վնասակար զգուշավորություն», այլև նույնիսկ մեղադրում էր ղեկավարությանը աճման թափից հետ մնալու համար. «Կոլտնտեսական շարժումը վաղուց արդեն գերազանցել է ամենաօպտիմալ ենթադրությունները, դեռ ավելին, այդ շարժման տեմպն այնքան ուժեղ է, որ բացառիկ չեն ղեկավարության հետ մնալու փաստերը: Արդեն ներկայումս գերազանցված է հնգամյա պլանը»: Եվ այդ ամենից հետո էլ կոչ էր անում. «... Օրվա խնդիրն է՝ ամեն կերպ արագացնել կոլեկտիվացման թափը...»[42]: «Գյուղի կոմունիստ»-ը աներկբայորեն գրում էր, թե կոլեկտիվացումն առաջ է գնում հեքիաթային տեմպ ու թափով. մինչև 1929 թ. վերջերը «մեր

---

40 «Խորհրդային Հայաստան», 1930, № 102:

41 Նույն տեղում, № 20:

42 «Լենինյան ուղի», 1930, № 1, էջ 46:

այսօրվա նվաճումների մասին խոսվում էր միայն որպես մի ծրագրի մասին։ Այնինչ այսօր այդ ծրագրերը դառել են իրական փաստ, ենթադրական թվերը վեր են ածվել իրական փաստերի»[43]։

Համանման օրինակներ կարելի է բերել այդ ժամանակ Հայաստանում լույս տեսած բոլոր պարբերականներից։ «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանգարդ» և «Բանվոր» թերթերի բրիգադը Դյուլբյանդում հիմնել էր ժամանակավոր տպարան և 1930 թ. հունվարի 31-ից հրատարակում էր «Դեպի համատարած» օրաթերթը[44] և ձրի բաժանում գյուղերում։ Լույս տեսած 10 համարները «ձախ» քյալլաղչողության տիպիկ նմուշներ էին. փոքրիկ, «մարտական» խմբագրականներում բուռն կրքով «մերկացվում» էին բոլոր նրանք, ովքեր չէին շտապում հայտարարելու, որ իրենց գյուղում 100 տոկոսով ավարտված է կոլեկտիվացումը, զգուշավոր մոտեցում էին ցուցաբերում միջակի հանդեպ...

Ճշմարտությունը պահանջում է ասել, սակայն, որ պարբերականներում, անգամ այդ ընդհանուր «խանդավառության» մթնոլորտում, երբեմն լսվում էին, ճիշտ է, վիհերոտ ու ոչ վճռական, բայց համենայն դեպս՝ դգաստության և աշխատության կոչող հորդորներ։ «Համատարած կոլեկտիվացման նշանաբանի տակ» առաջնորդողում նույն «Լենինյան ուղի»-ն գրում էր. «Կոլեկտիվ տնտեսությունների քանակական աճումը դերազանցում է ամենահամարձակ ենթադրությունները։ Բայց նա չի՞ մնում արդյոք քանակական աճումից կոլխոզների որակական ամրացումը, աշխատանքի նպատակահարմար կազմակերպումը կոլեկտիվ տնտեսության մեջ, զիկավար կադրերի, տնտեսավարների և կազմակերպիչների պատրաստությունը կոլխոզաշարժման համար»[45]։ Ավելի որոշակի էր դնում հարցը «Խորհրդային Հայաստան»-ը 1930 թ. փետրվարի 12-ի առաջնորդողում. «Վազելով տոկոսների բարձրացման հետևից, ինքնանպատակ համարելով կոլխոզաշարժման քանակական ծավալը,— արձանագրում էր թերթը,— մի շարք տեղերում խնդիր են դրել իրագործել համատարածը շաբաթների ընթացքում. անկախ տվյալ շրջանի կոնկրետ առանձնահատկություններից, տնտեսական զարգացման մակարդակից, մասսայական շարժման համար

---

43 «Գյուղի կոմունիստ», 1930, № 1, էջ 15։

44 «Դեպի համատարած»-ը երկու էջանոց փոքրածավալ թերթիկ էր, տպաքանակը՝ 1000։

45 «Լենինյան ուղի», 1930, № 1, էջ 7։

ամուր հենարաններ և նախապայմաններ ստեղծելուց, այդպիսով այս կամ այն չափով կիրառելով կոլխոզշինարարության բնագավառում միանգամայն անթույլատրելի՝ աշխատանքի վարչական մեթոդներ... Շատ անգամ չեն նկատում,— շարունակում էր Թերթը,— որ շեղվելով կոլեկտիվ տնտեսությունների շինարարության լուրջ ու համառ աշխատանքի ճանապարհից, բռնում են «կոլխոզշինարարական խաղի» վտանգավոր ուղին, գնալով ամենաթույլ դիմադրության գծով (Ադրարա, Թալին)»։ Թերթը ճիշտ կերպով գտնում էր, որ այս բոլորի վրա «պիտի կենտրոնացնեմ այսօր կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը»։

Այսպիսի զգաստ և սթափ հայացքների կողքին, սակայն, մամուլում դեռևս գերակշռողը թերությունների բացահայտման ու դրանց կանխման վերաբերյալ խորհրդածություններն ու գործնական պայքարը չէին։ Նույնիսկ սխալները նկատելուց հետո էլ շատ անգամ պարբերականները լուրջ և սկզբունքային մոտեցում չէին ցուցաբերում դրանց նկատմամբ, ըստ էության այդպիսի դեպքերում ևս ի հայտ բերելով «ձախ» տենդոնցներ։ Այսպես օրինակ, մի տեղ «Ավանգարդ»-ը ճիշտ կերպով նկատում էր Փարաքարում թույլ տրված սխալներն ու կոլտնտեսությունում առկա թերությունները. «սկզբից լայն հասարակական կարծիք չի ստեղծվել», «կոլխոզը բիչ է ուշադրության արժանացել սկսած Կոլխոզկենտրոնից մինչև տեղական մարմինների կողմից», «աշխատանքի բաժանումը լավ չի կատարվել, հաշվառումը և բաշխումը վատ հիմքերի վրա է դրված եղել» և այլն։ Ի՞նչ արժեք ունեին, սակայն, այս ճշմարիտ դիտողությունները, երբ այդքան լուրջ թերությունները թերթը հանդիսատ ու հանդստացնող տոնով հանկարծ հայտարարում էր ոչ ավել, ոչ պակաս՝ «լու», որն իբր թե «ուզտ» են շինում մեր դասակարգային թշնամիները կոլտնտեսությունների դեմ մղած իրենց պայքարում[46]։ *Ինչ խոսք, որ սա ամենևին էլ սկզբունքային մոտեցում չէր և հանդիսանում էր սոսկ «ձախ» քյալլագյոզության մի նոր դրսևորում։*

1930 թ. փետրվարի 20-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը «Անդրկովկասում, Միջին Ասիայում և Ռուսաստանյան Ֆեդերացիայի աղգային շրջաններում կոլեկտիվացումն իրականացնելու կարգի մասին» որոշման մեջ նախազգուշացնում էր, որ չի կարելի կոլեկտիվացման համար առավել նախապատրաստված շրջանների տեմպե-

---

46 *Տե՛ս «Ավանգարդ», 1930, № 25։*

ը մեխանիկորեն փոխադրել ազգային շրջանները։ Կոլեկտիվացման քաղաքականության իրականացման ժամանակ նկատվող սխալները, կոլտնտեսարժումը վերևից դեկրետավորելու, «կոլեկտիվացման խաղի», ձևական տոկոսների հետևից ընկնելու պրակտիկան քննադատվեց Անդրերկրամի 1930 թ. մարտի 8-ի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի մարտի 9-ի որոշումներում։ Անդրկովկասում հրատարակվող պարբերականները սկսեցին ավելի հաճախակի գրել «ձախ» քյալլագյոզական գործելակերպի մասին, սակայն սխալներն ու աղավաղումները տեղերում շարունակվում էին։ Մամուլի օրգանները ևս չկարողացան մինչև վերջ ազատագրվել իրենց կոպիտ սխալներից, հին սճից, հախուռն մոտեցումից։

1930 թ. մարտի 14-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ընդունեց «Կոլտնտեսային շարժման մեջ կուսակցական գծից կատարվող շեղումների դեմ պայքարելու մասին» հայտնի որոշումը, որն ամատական շրջադարձ մտցրեց նաև մեր երկրի պարբերական մամուլի աշխատանքներում։ Թերթերն ու հանդեսները ստիպաճնաբար ետադարձ հայացք գցեցին իրենց երեկվա խոսք ու գործի վրա, շատ բան վերանայվեց ու վերագնահատվեց վերոհիշյալ որոշման լույսի տակ։ «Անդրկովկասի բոլոր թերթերն էլ «գլխապտույտի» շրջաններ են ունեցել,— գրում էր «Բանվոր»-ը «Վճռականորեն ընդունել սխալները» առաջնորդողում[47]։— ...Հարյուրավոր թղթի հաջողություններից, մեր բոլոր թերթերը մեծ տառերով տպում էին շշմեցուցիչ տոկոսներ, առանց ամենափոքր նեղություն իսկ կրելու և վերլուծելու նրանց։ Որոշ թերթեր խայտառակության սյունին էին դամում այն կազմակերպություններին, որոնք կոլեկտիվացման մեծ տոկոսներ հրատարակելուց «հետ էին մնում»»։ Ընդունելով իր սխալները, «Բանվոր»-ը կոչ էր անում մյուս պարբերականներին՝ «նույնն անել հրապարակորեն»։

Հարկ է նշել, որ այդպիսի մոտեցումը ամենևին էլ ձևական նշանակություն չուներ պարբերական մամուլի համար։ Սեփական սխալների հրապարակային խոստովանումը սկզբունքորեն, ինչպես և բարոյական ու հոգեբանական տեսակետից առավել անկաշկանդ կդարձներ մամուլի պայքարը այն երևույթների վերացման համար, որոնց առաջացման մեջ քիչ չէր նաև հենց իր՝ մամուլի մեղքը։ Այս կամ այն կերպ իրենց սխալներն ու վրիպումները խոստովանեցին գրեթե բոլոր պարբերականները։ «Մաճկալ»-ը, օրինակ, ինքնա-

---

47 Տե՛ս «Բանվոր», 1930, № 95։

քննադատաբար անդրադառնալով իր անցյալին, գրում էր. «Կոլեկտիվացման բուռն շրջանում «Մանկալ»-ը կատարեց մի շարք սխալներ, երբ սոսկ բվական ուռումբ բմբկահարեց իբրև կոլեկտիվացման նվաճում: Ժամանակին նիշտ դիրքավորում ապակուլակացման վերաբերյալ «Մանկալ»-ը չկարողացավ տալ»[48]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմում կայացած հանրապետության մամուլի կուսակցական աշխատողների խորհրդակցությունը հատուկ բննության առավ մամուլի սխալները կոլտնտեսական շարժման ասպարեզում: Ա. Խանջյանի՝ «Կուսակցության բաղաքականությունը և մամուլի խնդիրները» զեկուցման առթիվ ընդունված բանաձևում[49] *նշվեց, որ «բանակի նաևից ընկնելը, թվերի խաղը... նպաստեց թղթե կոլխոզներին և թևավորեց «ձախ» քյալլաղչղությունները»: Անդրադառնալով մամուլի առջև ծառացած նոր խնդիրներին, խորհրդակցությունը հարկ համարեց «ուժեղացնել... «ձախ» քյալլաղչղությունների անխոնջ հարվածումը, ներկայիս գլխավոր վտանգ աջ օպորտունիզմի մերկացումը նոր պայմաններում... երկու ֆրոնտի վրա՝ բոլշևիկյան փորձված մեթոդով մամուլը պիտի պայքարի կուսակցության գլխավոր գծի համար»: ՀԿ(բ)Կ VI համագումարի արդյունքներին նվիրված առաջնորդողներից մեկում «Խորհրդային Հայաստան»-ը կրկին ընդգծեց պարբերական մամուլին առաջադրված խնդիրների կարևորությունը զաղափարական-կազմակերպչական աշխատանքների այնպիսի մի նշանակալից բնագավառում, ինչպիսին էր պայքարը կոլտնտեսարժման մեջ տեղ գտած աղավաղումների դեմ. «Մեր մամուլին հսկայական պատասխանատու դեր է վերապահված հատկապես ներկա շրջանում, երբ կուսակցությունը վերից վար և վարից վեր հիմնական և լուրջ աշխատանք է կատարում՝ կոլեկտիվացման ընթացքում թույլ տրված կոպիտ քաղաքական սխալները արագ տեմպով և իսպառ վերացնելու համար: Մեր բոլոր թերթերը, որոնք ոչ միայն ենթարկվեցին «գլխապտույտի», այլև մեծ չափով, իրենց սխալ դրությամբ հրահրեցին «ձախ» շեղումների պրակտիկան, այսօր պետք է ակտիվ կերպով օգնեն կուսակցությանը՝ վերացնելու և անկրկնելի դարձնելու գլխավորապես մեր սխալների, նրանց ուշ ճանաչման և դանդաղ շտկման հետևանքով ստեղծված՝ բանվորա-գյուղացիա-*

---

48 *«Մանկալ», 1930, № 51։*

49 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930, № 95։*

կան դաշինքի խզման վտանգը, որը դեռ իրական է Հայաստանի մի շարք շրջաններում»[50]։

Կուսակցության Հայանի որոշումներից հետո մեր երկրի պարբերական մամուլը նորից դուրս եկավ պայքարի առաջավոր դիծ. ուժեղացրեց կապերը աշխատավորության կյանքի ու նպատակասլաց մաքառումների հետ։ Ըստ որում, այդ շրջադարձի մեջ առկա էր շատ նշանակալից մի երևույթ. հիմա արդեն, կոլտնտեսային շինարարության ընթացքում կուսակցության դծից կատարված շեղումների դեմ պայքարելիս՝ մամուլը գործադրում էր անհամեմատ ավելի բուռն ջանք ու եռանդ, ավելի կրքոտ հետևողականություն էր դրսևորում, քան այդ նույն սխալներին կամա թե ակամա տուրք տալու շրջանում։

Գյուղական գանգվածների հետ սերտորեն կապվելու, մամուլի հեղինակությունն ու ներգործության ուժը մեծացնելու խնդրին հատուկ ուշադրություն դարձրեց թերթերի խմբագիրների անդրկովկասյան խորհրդակցությունը, որի ընդունած բանաձևերը հաստատվեցին Համկ(բ)կ Անդրերկոմի քարտուղարության 1930 թ. ապրիլի 16-ի նիստում և ուղարկվեցին Անդրկովկասի բոլոր թերթերին՝ ի գիտավարություն։ Այդ բանաձևերից մեկում մասնավորապես ընդգծվում էր. «Խմբագրությունների կողմից գյուղացիության քաղաքական տրամադրությանը ծանոթանալու և ստորին կազմակերպություններն ու խորհրդային վարչակազմի թույլ տված սխալների ու կուսակցության դծի առանձին աղավաղումների մասին ժամանակին ահազանգելու նպատակով թերթերում զետեղել նամակների ինֆորմացիոն ամփոփումներ, իսկ այն նամակները, որոնք քաղաքական նկատառումներով չեն կարող տպագրվել, ուղարկել կուսակցական կոմիտեներին և խորհրդային իշխանության համապատասխան օրգաններին»[51]։

Պարբերական մամուլի համար առաջնահերթ նշանակություն էր ստանում գյուղի վերաբերյալ կուսակցության որոշումների ու պետական օրենքների մասսայականացումն աշխատավորական ամենալայն խավերում։ Դեռևս 1930 թ. մարտ ամսին Անդրֆեդերացիայի սահմաններում հրատարակվող բոլոր պարբերականների խմբագրություններին ուղղված շրջաբերականում Համկ(բ)կ Անդրերկոմը նշում էր, որ այդ կարևոր գործը խիստ անմխիթար վի-

---

50 Նույն տեղում, N 142։

51 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 15, գ. 252, թ. 19։

ճակում է. մի շարք որոշումներ ու դիրեկտիվներ (գյուղատնտեսական նոր հարկի, անասնապահության, բամբակագործության, մեքենատեխնիկային ցույց տրվելիք օժանդակության, ցանքատարածությունների լրացուցիչ ընդարձակման վերաբերյալ և այլն) մեծ մասամբ չեն ապագրվել թերթերում և չեն պարզաբանվել։ Անդրերկրամը պարտավորեցրեց խմբագրություններին՝ բոլոր դիրեկտիվներն ու օրենքները դնելով «աչքի ընկնող տեղում, պարտադիր կերպով պարզաբանել դրանց հիմնական դրույթները հանրամատչելի հոդվածներով, հատուկ ուշադրություն դարձնելով այն միջոցառումներին, որոնք վերաբերում են կուսակցության ցուցումներն ու օրենքները տեղերում կիրառելիս թույլ տրված աղավաղումների դեմ մղվող պայքարին»[52]։

«Կոլտնտեսային շինարարությունը և պայքարը կուսակցության գծի համար» առաջնորդողում[53] «Լենինյան ուղի»-ն արձանագրում էր, որ 1930 թ. մարտ-ապրիլ ամիսները մեր հանրապետությունում ևս կոլեկտիվ տնտեսությունների «հոսունության և մազման շրջան հանդիսացան». եթե 1930 թ. հունվարի վերջին կոլեկտիվների մեջ ներգրավված էին բոլոր գյուղական տնտեսությունների 27, իսկ փետրվարի կեսերին՝ մոտ 60 տոկոսը, ապա մարտի վերջերին և ապրիլի սկզբներին նրանց մեջ մնաց մոտ 24 տոկոսը։ Որո՞նք էին այս երևույթի հիմնական պատճառները։ Հանդեսը դրանք բաժանում էր երեք կարգի. 1. «Դասակարգային թշնամու համառ ու օրհասական դիմադրությունը» (կուլակությունը, բացատրում էր Կենտկոմի օրգանը, օգտագործելով տեղական աշխատանքների թույլ օղակները, տեղական կազմակերպությունների սխալներն ու սայթաքումները, փորձեր արեց,— ոչ բոլոր դեպքերում անհաջող,— իր ազդեցության ոլորտի մեջ առնելու միջակ գյուղացիության առանձին շերտերը). 2. «Միջակի բնույթին հատուկ տատանումները» (միջակի, որպես մանր սեփականատիրոջ և աշխատավորի, երկակի բնույթը, պարզաբանում էր հանդեսը, չի կարող դեռ որոշ ժամանակ տատանումներ առաջ չբերել նրա մեջ. միջակն այսօր դիմադարձվելով դեպի գյուղի սոցիալիստական զարգացման ուղին, «դեռ վերջնականապես չի ազատագրված հին կածանների վրա վերադառնալու ժամանակավոր տրամադրություններից»). 3. Այն «բազմաթիվ սխալներ և կուսակցական գծի կո-

52 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, գ. 252, թ. 5։
53 Տե՛ս «Լենինյան ուղի», 1930, № 3։

պիտ ապավաղումները, որ կատարվեցին կոլտնտեսական շինարարության պրակտիկայում մեր գրեթե բոլոր գավառներում և շրջաններում»:

«Մաղման» վերոհիշյալ երևույթը ճիշտ գնահատելու համար, մատնանշում էր մամուլը, չպետք է անտեսել և այն իրողությունը, որ կոլտնտեսությունների թվական անկման մեջ իրենց դերն են խաղում նաև «ձևական պատճառները»: Բանն այն է, կոնկրետ օրինակների վրա հենվելով՝ նկատում էր «Լենինյան ուղի»-ն նույն առաջնորդողում, որ բարձր տոկոսներ կազմող կոլեկտիվ տնտեսությունների մի մասը երբեք էլ իրապես գոյություն չի ունեցել. «Հասարակական միտինգից կամ լոկ բանաձևի քվեարկությունից հետո,— հիշեցնում էր հանդեսը,— մարդիկ կարծել են, թե կոլեկտիվն արդեն պատրաստ է և շտապել են կոլտնտեսական շարժման բանակական ծավալը ուռեցնել թղթե կամ բանաձևերի մեջ միայն գոյություն ունեցող կոլեկտիվ տնտեսությունների հանրագումարներով»:

1930 թ. մարտի կեսերից «Խորհրդային Հայաստան» թերթում պարբերաբար տեղ էր տրվում «Վերացնել խեղաթյուրումները», «Անխնա մերկացնել և խփել «ձախ» բյալագոյությանը» և համանման այլ խորագրերով բաժիններին: Դրանցում ամփոփված նյութերում, որ ստացվում էին հանրապետության գրեթե բոլոր շրջաններից, մատնանշվում էին տեղերում թույլ տրված կոնկրետ սխալները. թերթը քննադատության կրակի տակ էր առնում նրանց, ովքեր համառում էին իրենց վրիպումների մեջ, չէին կամենում կամ չէին կարողանում կիրառել կուսակցության պահանջները կոլեկտիվ շինարարության ասպարեզում: Նույն ոգով բազմաթիվ թղթակցություններ լույս տեսան նաև հանրապետության մյուս պարբերականներում: «Մաճկալ»-ը «ջրի երես» էր հանում բռնի կերպով կոլտնտեսություններ կազմակերպելու փորձերը, որ դեռևս նկատվում էին մի շարք վայրերում. «Եթե կոլխոզ չմտնեք, կոոպերատիվից ապրանք չեք ստանա»,— ասում էին Վերին Աղբաշ գյուղում: «Էս ասելի ծակով (խոսքը կոլեկտիվի մասին է—Հ. Ֆ.) պիտի բոլորդ անցնեք»,— հայտարարում էին Յաղուբլու գյուղի բյալագոյանները: Անդրադառնալով նման փաստերին, «Պայքար գյուղի կոլեկտիվացման համար» առաջնորդողում «Մաճկալ»-ը եզրակացնում էր. «Հարկադրանքը մեր քաղաքականությունը չի: Նման միջոցները խախտում են միջակ գյուղացու հետ մեր դաշին-

քը»։ Թերթը այպանում էր բոլոր նրանց, ովքեր «հրամանը դերադասում են համոզելուց»[54]։

ՀԿ(բ)Կ VII համագումարի հրավիրման առթիվ գրված առաջնորդողներից մեկում «Խորհրդային Հայաստան»-ը նշում էր, որ չնայած շատ բան է արված կոլտնտեսարժման սխալները վերացնելու ուղղությամբ, սակայն դեռևս դրանք միայն առաջին քայլերն են, որոնք պետք է խորացնել և ավելի վճռական դարձնել։ «... Խիստ վտանգավոր կլիներ կարծել,— ընդգծում էր թերթը,—թե գյուղում կատարված սխալներն ու կուսակցական գծի աղավաղումներն արդեն լիովին ուղղված են և կարելի է հանգչել դափնիների վրա»[55]։

Կոլտնտեսային շարժման ընթացքում թույլ տրված խեղաթյուրումների դեմ պայքարելու հարցերը քննարկելիս պարբերական մամուլը կուսակցական կազմակերպությունների և հասարակայնության ուշադրությունը հրավիրում էր սկզբունքային նշանակություն ունեցող երկու հանգամանքի վրա։

Նախ՝ հարկավոր է շմոռանալ, որ խիստ վտանգավոր է այն մտայնությունը, թե կոլտնտեսությունների քայքայումն ու մաղումը պետք է բացատրել «միայն ու միայն» կուսակցական և խորհրդային մարմինների թույլ ված սխալներով։ Ճիշտ է, այդ սխալները մեծապես խանգարել և վնասել են գործին, բայց և այնպես «անտես առնել և աչքաթող անել դասակարգային թշնամուն», կնշանակեր «ջուր լցնել աջ-օպորտունիստների ջրաղացին»։ Այսուհետև ևս գլխավոր վտանգը մնում է աջ թեքումը[56]։

Եվ ապա՝ սխալներն ու աղավաղումներն ուղղելիս պետք է աչալուրջ լինել հախուռն մոտեցման ամեն մի դրսևորման դեմ, թույլ չտալ, որպեսզի այդ ընթացքում վարկաբեկվեն կուսակցությունն ու նրա դեկավար կադրերը։ Ամբողջ խնդիրն այն է, որ ճիշտ գործադրվի ինքնաքննադատության հզոր զենքը. հարկավոր է, տասնապատկելով գործնական աշխատանքների թափը գյուղում՝ «ուղղել կոնկրետ ցուցումներով կոնկրետ սխալներն ու թերությունները»։ Դրանով իսկ հնարավոր կլինի կանխել «հարձակումները կուսակցական դեկավարության և նրա լենինյան գծի վրա» և կրտրուկ միջոցներ ձեռք առնել նրանց դեմ, ովքեր «կփորձեն նա տա-

---

54 «Մանկալ», 1930, № 38։

55 «Խորհրդային Հայաստան», 1930, № 108։

56 Տե՛ս նույն տեղը, № 86,

նել կուսակցությունը սոցիալիստական հարձակողականի դիրքերից, խանդարել սխալների ուղղման ու գյուղաշխատանքների վերակառուցման գործին»[57]։

Հիշատակության արժանի է այն օգնությունը, որ ցույց տվեց մամուլը գյուղ ուղարկվող բանվորական բրիգադների կազմակերպմանը։ Թերթերը բացատրում էին այդ կարևորագույն միջոցառման նշանակությունը, պարզաբանում 25-հազարականներին առաջադրված քաղաքական-տնտեսական խնդիրները. էՀ ավելի սերտացնել բանվորա-գյուղացիական դաշինքը, աջակցել կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների ամրապնդմանը, ցանքատարածությունների ընդարձակմանն ու բերքատվության բարձրացմանը, կենսագործել ագրո-մինիմումը, նպաստել վերանորոգման արհեստանոցների կազմակերպմանը, գյուղատնտեսության մեքենայացմանը։ Այս բոլորին զուգընթաց, նշում էր «Սոցիալիստական արշավ» թերթը, յուրաքանչյուր բրիգադ, բրիգադի յուրաքանչյուր անդամ պետք է լինի գյուղի հասարակական-քաղաքական կյանքի խթանիչ ուժերից մեկը, ակտիվ դեր կատարի «գյուղի սոցիալիստական հասարակայնության կազմակերպման գործում»[58]։

Ինչպես հայտնի է, 1930 թ. հունվար-ապրիլ ամիսներին Հայաստանի բոլոր շրջաններն ուղարկվեցին բանվորական բրիգադներ, որոնք խոշոր աշխատանք տարան քաղաքի և գյուղի կապերն ամրապնդելու, բանվորա-գյուղացիական դաշինքը զարգացնելու ուղղությամբ։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. մարտի 14-ի որոշման ոգով մամուլում հանդիսավորապես քննարկվեցին 25-հազարականներին նպատակահարմար օգտագործելու, գյուղական կազմակերպությունների կողմից նրանց ցույց տրվող օժանդակությունն ու կուլտուրա-կենցաղային պայմանները բարելավելու հարցերը։ Գյուղ մեկնած 25-հազարականները, նշում էր «Մաճկալ»-ը, արժանի են հատուկ հոգատարության, քանի որ նրանք աշխատում են «դժվարին պայմաններում»։ Պետք է լիովին գործադրվեն նրանց վերաբերող բոլոր օրենքները. թերթը քննադատում էր այնպիսի փաստերը, երբ գլանում էին վճարել ռոճիկի տարբերությունը, խոչընդոտում էին նրանց ընտանիքներին՝ օգտվելու իրենց վերապահված արտոնու-

57 Նույն տեղում, № 108։

58 «Սոցիալիստական արշավ», Երևան, 1930, № 3։

թյուններից[59]։ «Մենք նրանց շուրջը պետք է ստեղծենք այնպիսի մի մթնոլորտ,— հորդորում էր «Սոցարշավ»-ը,— որտեղ նրանք զգան մեր ուշադիր ու նրբազգաց վերաբերմունքն իրենց կարիքների ու պահանջների նկատմամբ»[60]։ «Բանվոր»-ը գործարանային կուսակցական և արհեստակցական կազմակերպություններին առաջարկում էր «սիստեմատիկ նամակագրություն հաստատել իրենց շարքերից դուրս մեկնած բանվորների հետ»։ Թերթը դիմում էր 25-հազարականներին, կոչ անելով՝ «մշտական դրավոր և կենդանի կապ պահպանել խմբագրության հետ» և խոստանում էր պարբերաբար լուսաբանել նրանց աշխատանքը, անել ամեն ինչ, «որպեսզի նրանց հարուցած հարցերին ընթացք տրվի»[61]։

Պարբերական մամուլը, այսպիսով, նպաստեց բանվորական բրիգադների, 25-հազարականների աշխատանքի հաջողությանը, զյուղին ցույց տրվող քաղաքի շեֆական օգնության հետագա բարելավմանը։

3

Համկ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. մարտի 14-ի որոշումից հետո ամբողջ ուժով ծավալելով պայքարը կուսակցության դեմ կատարված շեղումները շտկելու համար, Հայաստանի պարբերական մամուլը միաժամանակ սկսեց ավելի համակողմանի ու սևեռուն ուշադրություն նվիրել կոլտնտեսությունների քաղաքական-տնտեսական ամրապնդմանը, տեխնիկական հզորացմանը, կոլտնտեսային շինարարության գործնական հարցերին։ Կենտրոնական կուսակցական և կոմերիտական օրգաններում («Խորհրդային Հայաստան», «Լենինյան ուղի», «Սվանդարդ», «Երիտասարդ բոլշևիկ» և այլն) լույս տեսան կուսակցության որոշումներն ու դիրեկտիվները, համամիութենական և տեղական ղեկավար գործիչների ելկուցումներն ու ելույթները, տպագրվեցին սկզբունքային նշանակություն ունեցող խմբագրականներ և այլ ղեկավար հոդվածներ։ Պարբերականները ծավալեցին բացատրական և դաստիարակչական-կազմակերպչական բուռն գործունեություն։

Նշանակալից դեր խաղաց գյուղացիական-գյուղատնտեսական մամուլը, որը նոր խնդիրներին համապատասխան վերակառուցեց

59 Տե՛ս «Մաճկալ», 1930, № 69։
60 «Սոցարշավ», 1930, № 27։
61 «Բանվոր», 1930, № 135։

իր աշխատանքները։ Բացվեցին մի քանի նոր պարբերականներ։ Դեռևս 1930 թ. փետրվարի 15-ից սկսել էր լույս տեսնել «Կոլխոզ-նիկ»-ը՝ գյուղատնտեսական կոլեկտիվների երկշաբաթյա հանդեսը (կոչվում էր երկշաբաթաթերթ), որի հրատարակիչներն էին Հողժողկոմատը, Կոլտնտեսությունը և Հայկոոպը[62]։

«Կոլխոզնիկ»-ում հիմնական տեղ էին բռնում «Կոլխոզային շինարարություն», «Կոլեկտիվների ամրապնդման համար», «Կոլեկտիվիստի ընկերուն», «Ագրոտեխնիկական հարցեր», «Մեր նվաճումները», «Տեղերում» և «Գեղարվեստական» բաժինները։ Այս պարբերականը տպագրում էր գեղավար հոդվածներ գյուղում կուսակցության վարած քաղաքականության, կոլտնտեսարժման հերթական խնդիրների, գյուղում ծավալված դասակարգային պայքարի, բանվորա-գյուղացիական դաշինքի մասին։ Քիչ չէին նաև կոլեկտիվացման գործնական հարցերը, կոլտնտեսությունների աշ-

---

62 «Կոլխոզնիկ»-ը պատկերազարդ պարբերական էր։ Պատ. խմբագիրն էր Պ. Ֆոլյանը, խմբագրական կոլեգիայի անդամներն էին Վ. Մամիկոնյանը, Ա. Ներսիսյանը, Խ. Դեմիրճյանը, Ա. Բակունցը։ 1930 թ. լույս է տեսել 20, 1931-ին՝ 18 համար։ 24—32 էջ (27×18 սմ), տպաքանակը՝ 3000—5000։

Ուշագրավ է, որ նման մի պարբերականի հրատարակության հարցը բարձրացվել էր դեռևս 1928 թ. դարնանը։ Մարտի 22-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիան նպատակահարմար գտավ լույս ընծայել մասսայական գյուղացիական մի նոր պարբերական՝ իբրև «Մաճկալ»-ի հավելված։ Նախատեսվում էր նրա միջոցով լուսաբանել ագրոնոմիայի, գյուղատնտեսության էկոնոմիկայի, ժողովրդական առողջապահության և լուսավորության խնդիրները՝ «գյուղի սոցիալիստական վերափոխման ընթացքը ղեկավարելու տեսանկյունից»։ Այն լինելու էր երկշաբաթյա հրատարակություն՝ 2—3 տպագրական մամուլ ծավալով։ Նյութական ծախսերը հոգալու էին Հողժողկոմատը, Առողջապահության ժողկոմատը և Կոոպերատիվ խորհուրդը։ Որոշվեց նույնիսկ պարբերականի անունը՝ «Նոր գյուղ» (տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 11, գ. 349, թ. 17)։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը ապրիլի 17-ին հաստատեց մամուլի բաժնի կոլեգիայի այս որոշումը և հանձնարարեց ներկայացնել Նախահաշիվ (տե՛ս նույն տեղը, թ. 16)։

Սակայն գլխավորապես թղթի պակասի պատճառով շատ շուտով հարկ եղավ դադարեցնել Անդրկովկասում այդ ժամանակ լույս տեսնող մի շարք պարբերականներ. Հայաստանում նույնպես փակվեցին մի քանի հրատարակություններ։ Պարզ է, նման պայմաններում «Նոր գյուղ»-ի լույսընծայումը չէր կարող իրագործվել (տե՛ս նույն տեղը, թ. 27 և ց. 10, գ. 283, թ. 42—43)։ Մասսայական գյուղացիական նոր պարբերական հրատարակելու հարցը կրկին օրակարգի մեջ դրվեց մոտ երկու տարի հետո. այնպես որ՝ սխալ չի լինի ասել, թե «Կոլխոզնիկ»-ը փաստորեն սկսեց լույս տեսնել դեռևս 1928 թ. գարնանը նախատեսվող «Նոր գյուղ»-ի փոխարեն, բայց արդեն ոչ թե իբրև «Մաճկալ»-ի հավելված, այլ որպես ինքնուրույն հրատարակություն։

խատանքը լուսաբանող. գրական փորձն ընդհանրացնող, անընտելավարության, գործարքման ու ծուլության փաստերը այպանող, հողագործության նոր ձևերն ու մեթոդները պրոպագանդող նյութերը: «Կոլխոզնիկ»-ի էջերում պարբերաբար արծարծվում էին անգրագիտության վերացման, գպրոցական գործի հաջող կազմակերպման, գյուղի կուլտուրական օջախների բարեկարգման, նոր և առողջ կենցաղի արմատավորման հարցերը, զետեղվում էին ոտանավորներ, պատմվածքներ, գյուղական մատավորականության գրական փորձերը: Երկշաբաթաթերթը նաև կոլտնտեսությունների վերաբերյալ օրենքների և կառավարական կարգադրությունների յուրովի մի տեղեկատու էր, որ դալիս էր օգնելու գյուղի ակտիվիստներին, կոլտնտեսային զեկավար աշխատողներին[63]:

Ինչպես արդեն գիտենք, 1929 թվականի սկզբներից դադարեց «Գյուղատնտեսական կյանք» հանդեսի հրատարակությունը: Այս հանգամանքը որոշ չափով բացասաբար անդրադարձավ հողօգտագործման և անասնապահության խնդիրների մասնագիտական քննարկման վրա՝ մեր ընթացիկ մամուլում: «Մաճկալ»-ում և մյուս պարբերականներում լույս տեսնող հոդվածները, բնականաբար, չունեին և չէին կարող ունենալ գիտական վերլուծության հավակնություն: Մինչդեռ գյուղատնտեսության հետագա զարգացման, գյուղի սոցիալիստական վերակառուցման շահերը պահանջում էին նաև գիտական մոտեցում, ինչպես գործնական, այնպես էլ հեռանկարային մի շարք հարցերի մասնագիտական հետազոտում: Ինչոր չափով այս պահանջը բավարարելու էր կոչված, ահա, «Սոցիալիստական ագրոնոմիա» հանդեսը, որի առաջին գիրքը հրատարակվեց 1930 թ. վերջերին[64]: Այն, ինչպես նշված էր ենթախորա-

---

63 Ի դեպ՝ վերոհիշյալ նպատակներին ծառայելու էր կոչված նաև նույնանուն մի այլ հրատարակություն, որն սկսվեց 1934 թ. ապրիլին՝ իբրև Հողժողկոմատի օրգան: Այս «Կոլխոզնիկ»-ը, սակայն, որ նույնպես կոչվում էր մասսայական երկշաբաթաթերթ, հրատարակվեց միայն երկու համար (ապրիլի 5-ին և 20-ին): Ճիշտ է, այս համարների վրա դրված է «Հրատարակության առաջին տարի» ծանուցումը, բայց ըստ էության, թե՛ բովանդակությամբ, թե՛ նյութերի դասավորությամբ ու մատուցման եղանակով՝ սա փաստորեն նախորդ «Կոլխոզնիկ»-ի շարունակությունն էր: Պատ. խմբագիրն էր Վ. Անանյանը: 18 էջ (27×18 սմ), տպարանակը՝ 1500:

64 Լույս է տեսել «Սոցիալիստական ագրոնոմիա»-ի չորս գիրք. մեկը՝ 1930 թ., մեկը՝ 1931-ին, երկուսը՝ 1932-ին: Պատ. խմբագիրներ են եղել Հ. Տանինը, ապա՝ Գ. Եսայանը, խմբ. կոլեգիայի անդամներ՝ Ա. Բակունցը, Վ. Երեմյանը, Խ. Երիցյանը, Պ. Քալանթարյանը, Վ. Անանյանը, Ս. Խաչատրյանը, Ա. Կոստանյանը, Հ. Միլանյանը, Հ. Քամալյանը: 104—134 էջ (28×19 սմ), տպարանակը՝ 800—1000:

գրում, նվիրված էր «ագրոնոմիայի փորձնական աշխատանքներին և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրներին»: Խմբագրությունն իր առջև նպատակ էր դրել նպաստել հողագործությունը «նորագույն գիտության ու տեխնիկայի ավյալների ու նվաճումների հիման վրա կառուցելուն», անդիջում պայքարել «աջ օպորտունիստների թերահավատումների» ու «ձախերի» աղավաղումների դեմ, մերկացնել կոնտրատեսականությունը: Հանդեսը ջանալու էր, որպեսզի «գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գիտական ու գործնական աշխատանքների գուգորդումը ներդաշնակ լինի» և դրանք տարվեն «համընթաց ու մեկը մյուսին լրացնելու ուղղությամբ»:

Սակայն, դժբախտաբար, «Սոցիալիստական ագրոնոմիա»-ն չունեցավ կանոնավոր պարբերականություն: Այնուամենայնիվ, հանդեսի չորս գրքերում ամփոփված նյութերի բնույթն ու բովանդակությունը վկայում են, որ այս հրատարակությունը գրական դեր է կատարել գյուղատնտեսության և անասնապահության տարբեր ճյուղերի զարգացման խնդիրների գիտական լուսաբանման ու հիմնավորման, ագրոկանոնների պրոպագանդման, բնության պահպանության գործում:

Փաստորեն «Սոցիալիստական ագրոնոմիա»-ի շարունակությունը եղավ և համանման հարցեր էր արծարծում գյուղատնտեսական գիտական-քաղաքական մեկ այլ հրատարակություն՝ «Ագրարային ֆրոնտում»-ը՝ «նվիրված գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հարցերին»[65]: Լույս տեսավ «Ագրարային ֆրոնտում»-ի ընդամենը երկու գիրք՝ 1934 թվականին: Հետագա տարիներին Հայաստանի գյուղատնտեսության մասնագիտական ուսումնասիրության և զարգացման հեռանկարների հարցերը քննարկվում էին Հողժողկոմատի, գիտա-ուսումնական հաստատությունների և փորձակայանների հրատարակած մի շարք ժողովածուներում ու տեղեկագրերում:

---

65 «Ագրարային ֆրոնտում»-ը լույս է տեսել Հողժողկոմատի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ինստիտուտի և «Սոցիալիստական գյուղատնտեսություն» թերթի խմբագրության հրատարակությամբ: Պատ. խմբագիրն էր Վ. Անանյանը, խմբագրական կոլեգիայի անդամներն էին Հ. Սիլանյանը, Պ. Քալանթարյանը, Ս. Երիցյանը և Գ. Աղաջանյանը: 150—152 էջ (26×17 սմ), տպաքանակը՝ 600—800:

* * *

Համկ(բ)կ Կենտկոմի մարտի 14-ի որոշումից հետո և Անդրբերկոմի ու ՀԿ(բ)կ Կենտկոմի համապատասխան միջոցառումների կապակցությամբ՝ զգալիորեն իր աշխատանքը վերակառուցեց նաև մեր հանրապետության ամենահեղինակավոր գյուղացիական պարբերականը՝ «Մաճկալ»-ը։ 1930 թ. ապրիլ ամսից սկսած «Մաճկալ»-ը ևս վճռականորեն հանդես էր գալիս կուսակցության գծի աղավաղումների քննադատությամբ՝ իր գլխավոր խնդիրներից մեկը ձևակերպելով հետևյալ կերպ. «Հայտարերել սխալներ և անմիջապես ուղղել, վերջ տալ աղավաղումներին, պատժել բոլոր նրանց, ովքեր սխալներ չեն ուզում ճանաչել և ուղղել»[66]։

«Մաճկալ»-ը ուշադրության կենտրոնում էր պահում կոլտնտեսությունների կազմակերպական և բարոյա-բաղաքական ամրապնդման, կոլտնտեսական արտելի կանոնադրությունը պարզաբանելու հարցերը՝ այդ ամենը կապելով մեր հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման ընթացիկ աշխատանքների հետ։ Թերթի մշտական բաժիններից մեկը դարձավ «Կոլտնտեսականի անկյուն»-ը (հաճախ այն կնտեղվում էր Հարց ու պատասխան խորագրի ներքո)։ Տպագրելով ընթերցողներից ստացած բազմապիսի հարցերը, «Մաճկալ»-ը պատասխանում էր դրանց կոնսուլտացիոն բնույթի հաղորդում-բացատրություններով, պարզաբանում կոլտնտեսությունների ղեկավարման, միջակի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, բերքի բաշխման, անձնական ու հանրային սեփականության հարաբերակցության՝ գործնական նշանակություն ունեցող և գյուղական լայն զանգվածներին հուզող խնդիրները։ Գյուղի ակտիվիստի անկյուն բաժնում թերթը զետեղում էր տեսական-պրոպագանդիստական հոդվածներ («Աջ թեքումը մնում է որպես գլխավոր վտանգ», «Ի՞նչ են ասում աջ օպորտունիստները կոլխոզների մասին և ինչո՞ւմն է նրանց սխալը» և այլն), որոնց նպատակն էր ճիշտ կողմնորոշում տալ կոլտնտեսշարժման ակտիվիստներին։

Այս ամենից բացի, գյուղատնտեսական ընթացիկ աշխատանքներն ավելի մոտիկից՝ տեղերում ուսումնասիրելու և նկատվող թերությունների վերացմանը անհապաղ միջամտությամբ նպաստելու համար Հայաստանի մի շարք շրջաններում «Մաճկալ»-ը կազմա-

---

66 *«Մաճկալ», 1930, № 51։*

կերպից շրջիկ խմբագրություններ[67]։ Դրանք յուրովի սուրբայցեր էին՝ թերթի աշխատակցի, տվյալ շրջանի թղթակիցների և գյուղակտիվիստների մասնակցությամբ։ Նյութերը հրատարակվում էին «Մանկալ»-ում առանձին էջերով՝ իբրև հատուկ թողարկումներ։ Մի տարվա ընթացքում (1930 թ. հոկտեմբեր—1931 թ. հոկտեմբեր) լույս տեսան հետևյալ էջիկները՝ «Մանկալ»-ը Դարալագյազում (6 համար), «Մանկալ»-ը Շամշադինում (6 համար), «Մանկալ»-ը Ղարաքիլիսայում (2 համար), «Մանկալ»-ը Գորիսում (4 համար), «Մանկալ»-ը Ստեփանավանում (1 համար) և «Մանկալ»-ը Սիսիանում (1 համար)։

Մեր հանրապետությունում խորհտնտեսությունների կազմակերպմանը նպաստելու, նրանցում ներգրավված աշխատավորներին հուզող հարցերին արձագանքելու առումով ուշագրավ էին արդեն իսկ հիշատակված «Գյուղատնտեսական բանվոր» («Գյուղի բանվոր») խորագրով հավելված-թերթիկները, որոնք գրաղեցնում էին «Մանկալ»-ի 4-րդ էջը և հետաքրքրական են այսօր ինչպես Հայաստանում խորհտնտեսային շինարարության վերաբերյալ հաղորդած տվյալներով, այնպես էլ, առավելապես, բանվորական ուժի հայթայթման ու կարգավորման ասպարեզում գործադրված ջանքերը վերապատկերելու տեսակետից։

Բնույթով լինելով մասսայական գյուղացիական լրագիր, «Մանկալ»-ն արդեն կատարել էր իր դերը, իր առջև դրված հիմնական խնդիրները. շուրջ մեկ տասնամյակ այս լրագիրը մեր հանրապետության գյուղական աշխատավորության նորօրյա ջանքերի ակտիվ արձագանքողն ու սրատաց խրախուսողը եղավ թե՛ տնտեսությունը հասարակական նոր հիմունքներով վերակառուցելու և թե՛ սոցիալիստական հասարակական-բարոյական նորմերի

---

67 Ի դեպ՝ այդպիսի միջոցառում անցկացնելու խորհուրդ «Մանկալ»-ին տվել էր «Խորհրդային Հայաստան» թերթը, որն իր մամուլի տեսությունից մեկում (1930, № 20) գրել էր. «Մանկալ»-ի գլխավոր թերությունն այն է, որ նա չի ձեռնարկում մի շատ կարևոր գործ։ Ռուսական, ուկրաինական և այլ գյուղացիական թերթերը գյուղատնտեսական կամպանիայի համար դուրս են եկել գյուղ։ Նրանք իրենց փոքրիկ տպարանով ու ժուռնալիստներով գյուղումն են։ Որքան մեծ կլիներ «Մանկալ»-ի կատարած աշխատանքը համատարած կոլեկտիվացման բնագավառում, եթե նա դուրս գար շրջան, եթե նա անմիջապես նյութեր հավաքեր Ղամարլըվում, Ղուրդուղուլում կամ Աշտարակում։ Մասսաների կազմակերպման համար դա կլիներ ամենալավ միջոցներից մեկը»։

արմատավորման ասպարեզներում։ Եվ իր այդ շնորհակալ գործն անելիս, Հայաստանի ամենամեծ ու ամենասիրված գյուղացիական թերթն ստեղծեց այնպիսի ուսանելի ավանդներ, որոնք ամուր պատվանդան էին դառնալու նրա հաջորդների համար։ Այսպիսի համոզումով էր ահա «Մաճկալ»-ը իր տեղն ու դերը հանձնում իրեն փոխարինելու եկած գյուղացիական նոր լրագրին, իր վերջին համարում՝ 1931 թ. հոկտեմբերի 20-ին ազդարարելով, թե «Մաճկալ»-ի փոխարեն նոյեմբերի 1-ից լույս է տեսնելու ավելի մեծ ծավալով նոր թերթ՝ «Սոցիալիստական գյուղատնտեսություն»-ը[68]։

Շարունակելով պայքարը աջ օպորտունիզմի և «ձախ» խոտորումների դեմ, գյուղացիական այս նոր թերթը միաժամանակ, իր կոչման համաձայն՝ հատուկ ուշադրություն էր նվիրում կոլտնտեսությունների ամրապնդման, մասնավորապես նրանցում կոնկրետ, գործնական աշխատանքների կազմակերպման խնդիրներին։ Այս ամենն ուղղակիորեն արձագանքում էր ՀամԿ(բ)Կ Անդրերկրամի և Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի կոմկուսների կենտկոմների հաշվետվության ասթիվ ընդունված ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշմանը[69], որի մեջ, ինչպես հայտնի է, հաջողությունների հետ մեկտեղ արձանագրված էին նաև լուրջ թերություններ մասնավորապես գյուղացիական հարցում։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը մշակեց մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն էր ազգային հանրապետությունների ինքնուրույնության հետագա զարգացումը (Անդրֆեդերացիայի մարմինների ենթակայության ներքո գտնվող մի շարք ձեռնարկություններ, ինչպես օրինակ՝ տեքստիլ, շինանյութերի, բիմիական, փայտամշակման, սննդի արդյունաբերության գործարանները, ջրային տնտեսու-

---

68 «Սոցիալիստական գյուղատնտեսություն»-ը հրատարակվում էր իբրև ՀՍԽՀ Հողժողկոմատի, Կոլտնտեսկենտրոնի և Հայջրտնտեսության օրգան, շաբաթը երեք անգամ, 1932 թ. հոկտեմբերի 6-ից (№ 128-ից) ուներ Հայաստանի կենտրոնական գյուղացիական երկօրյա թերթ ենթանվանումը։ 1933 թ. մարտից դարձավ օրաթերթ (չափը փոքրացավ)։ Խմբ.՝ Վ. Անանյան (տեղակալներն էին նախ՝ Ա. Պետրոսյանը, ապա՝ Ա. Հակոբյանը)։ 4 էջ (երբեմն նաև 2), տպաքանակի մասին տվյալներ չկան, սակայն պետք է ենթադրել, որ այն մոտավորապես նույնն է եղել, ինչ տպաքանակով որ հրատարակվել է «Մաճկալ»-ը վերջին շրջանում՝ 18 հազար։ Գոյատևել է մինչև 1935 թ. ապրիլի 1-ը. ընդհանուր հաշվով՝ երեք ու կես տարվա ընթացքում լույս է տեսել թերթի 762 համար։

69 Տե՛ս «Правда», 1931, № 304։

թյունը և այլն, անցան հանրապետական ենթակայության ներքո, գիտա-տեխնիկական կադրեր պատրաստող անդրկովկասյան բարձրագույն ուսումնական հաստատությունները վերածվեցին հանրապետականի և այլն)։ Համկ(բ)կ Կենտկոմի որոշման համաձայն ուժեղացվեց բաղաքական-մասսայական աշխատանքը Հայաստանի արդյունաբերական կենտրոնների կուսակազմակերպություններում, հենակետային կուսակազմակերպություններ ստեղծվեցին խորհտնտեսություններում, ՄՏԿ-ներում և խոշոր կոլտնտեսություններում, գյուղական կուսբջիջները վերակառուցվեցին ըստ արտադրական սկզբունքի։ 1932 թ. կեսերին Հայաստանում արդեն կար՝ կոլտնտեսություններում՝ 360, խորհտնտեսություններում՝ 35, ՄՏԿ-ներում՝ 7 և հենակետային 45 կուսբջիջ՝ 404 կուսխմբակներով ու 1653 կուսակազմակերպիչներով[70]։

Ինքնին հասկանալի էր արդեն, որ այս վերակառուցումը նոր պահանջներ էր առաջադրում նաև մամուլի այն օրգաններին, որոնք կոչված էին սպասարկելու գյուղացիությանն ու գյուղատնտեսությանը։ Ասպարեզ իջնելով գործունեության բավական լայն ծրագրով, «Սոցիալիստական գյուղատնտեսություն»-ը զգալի հաջողությունների հասավ Համկ(բ)կ Կենտկոմի վերոհիշյալ որոշման կենսագործման ասպարեզում, ինչպես նաև հանդուն ջաքներ գործադրեց կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման կարևորագույն օղակը բրիգադը համարելու վերաբերյալ Համկ(բ)կ Կենտկոմի 1932 թ. փետրվարի 4-ի որոշման կատարման ուղղությամբ։ Բավական է նշել, օրինակ, որ հինգ շաբաթվա ընթացքում (մարտի 22-ից ապրիլի 28-ը) թերթը բրիգադների կազմակերպման ու աշխատանքի հարցերին նվիրեց վեց առաջնորդող (մեկը՝ արտատպություն «Պրավդա»-ից) և շուրջ քսան այլ նյութեր։

«Սոցիալիստական գյուղատնտեսություն»-ը առանձնակի տեղ էր հատկացնում կոլտնտեսական արտելի կանոնադրության մասսայականացմանն ու պրոպագանդմանը, քննադատելով նրա ադավազման փաստերը, վարչարարության դրսևորումները, կոլտնտեսականների անձնական սեփականության իրավունքի դեմ կատարվող ոտնձգությունները։ Այդ կանոնադրությունը խախտողները, հիշեցնում էր թերթը, կամա թե ակամա ջուր են լցնում գյուղի սոցիալիստական վերակառուցման հակառակորդների ջրաղացին։

---

70 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», 1967, էջ 441։

Բացահայտելով «ձախ» վարչարարության մի շարք կոնկրետ դրսևորումներ (Ախտայի շրջանի Ֆարուխ գյուղում կոլտնտեսություն կազմակերպելիս համոզեցրել էին գյուղացիների ունեցած մեկական կովերը, Զանգեզուրի շրջանի Վաչագան գյուղի կոլտնտեսությունը «հանրայնացրել» էր միակ այծերը և այլն), Թերթն ընդհանրացնում էր. «Այդ փաստերը ցայտուն կերպով վկայում են, որ մեզ մոտ ևս գոյություն ունեն արտելի վրայից ցատկելու «ձախ» տենդենցներ, արտել, որ ներկայումս դեռ չի ամրացված բավականաչափ, որի բոլոր հնարավորություններն ապառելուց մենք դեռ շատ հեռու ենք և որը կազմում է կոլտնտեսական շարժման ներկա շրջանի գլխավոր ձևը»[71]: Թերթն ընդգծում էր, որ սխալներն ու խոտորումները գնալով ավելի անհանդուրժելի և ակնառու են դառնում կոլեկտիվացման հաջողությունների, գյուղում կուսակցության դծի հաղթանակի ֆոնի վրա: «Անհապաղ ուղղել սխալները» խորագրով առաջնորդողում[72] խստորեն քննադատված են Ադրբեջանի և Բասարգեչարի շրջաններում բացատրական-կազմակերպչական աշխատանքը վարչարարությամբ ու հարկադրանքի մեթոդներով փոխարինելու փաստերը. «... Յուրաքանչյուր գյուղացու համար վերևից, գրասենյակում սահմանել են որոշ առաջադրանք և կանչել գյուղացիներին, ստորագրել են ստել նրանց կամքից անկախ պատրաստված պայմանագրերը». «որակյալ բյալլագրության» օրինակ էր Հայլուղարդի շրջանային լիազորներից մեկի այն արարքը, երբ սա «իր վարչարարության մեջ այնքան առաջ է գնում, որ համարձակվում է խուզարկություններ կատարել Շիշկայա գյուղի մի քանի աշխատավորական տնտեսություններում՝ պարզելու համար անասունների կաթի քանակը». Զոգ գյուղում բոլոր կովերը 100 տոկոսով ծնած են հայտարարել և այդ հաշվով էլ կնքել կոնտրակցիաները: «Կասկած չկա,— եզրակացնում էր Թերթը,— որ բյալլագրողական այս արարքներն ընդհանուր ոչինչ չունեն կուսակցության դծի հետ և միայն թշնամու թիկունքը կարող են ամրացնել»: Նույն խնդրին նվիրված մեկ այլ առաջնորդողում Թերթը պահանջում էր խիստ պատասխանատվության կանչել, մինչև իսկ «վտարել կուսակցությունից անուղղելի բյալլագրողներին»[73]:

---

71 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1932, № 40։

72 Տե՛ս նույն տեղը, № 62։

73 Նույն տեղում, № 66։

«Սոցիալիստական գյուղատնտեսություն»-ը, բնականաբար, չէր կարող մոռացության տալ գյուղատնտեսական գիտելիքների տարածման ու ագրոտեխնիկայի խնդիրները։ Եվ իրոք՝ թերթը հաճախակի տպագրում էր մասնագիտական, կոնսուլտացիոն հոդվածներ ու այլ կարգի նյութեր։ Պետք է նկատել, սակայն, որ կարճատև մի շրջանում (1931 թ. դեկտեմբեր—1932 թ. փետրվար ամիսներին) խմբագրությունն այնքան հրապուրվեց այս խնդիրներով, որ գրալի չափով ընկավ միակողմանիության մեջ. վտանգ կար, որ թերթը կշեղվի իր բնույթից՝ գյուղացիականից վերածվելով գյուղատնտեսական օրգանի։ Աշխատանքի նման դրվածքի հետևանքով, բնականաբար, թուլացավ թերթի կազմակերպչական-մասսայական գործունեությունը, ազդացավ տեղերում կատարվող գործնական աշխատանքի արտացոլումը նրա էջերում։ Այս, ինչպես նաև մի շարք այլ թերություններ ստիպեցին հանրապետության թերթերի խմբագրություններին կից կոմբջջի նիստում հատուկ քննության առնվեր «Սոցիալիստական գյուղատնտեսության» հարցը։ Լսվեց խմբագրության հաշվետվությունը և Ակսել Բակունցի հարակից զեկուցումը «Սոցիալիստական գյուղատնտեսություն»-ում աշխատանքի դրվածքի և առաջիկա խնդիրների մասին։ Նշելով ձեռք բերված հաջողությունները, կոմբջջի նիստը իր բանաձևում[74] միաժամանակ բացահայտեց այն թերություններն ու բացերը, որոնց շտապփույթ վերացումն ավելի նպատակասլաց ու արդյունավետ կդարձներ թերթի գործունեությունը։ Վերը հիշատակված թերություններից բացի, նշվեցին նաև հետևյալները.

ա) Անբավարար է գյուղական կոմունիստների մարքսլենինյան դաստիարակության, ինչպես և կուլտուրական հեղափոխության կենսագործման ուղղությամբ թերթի կատարած աշխատանքը։

բ) Թերթը ինչպես հարկն է չի անդրադարձել գյուղական կուսակցամակերպությունների վերակառուցման հարցերին, չի լուսաբանել կոլտնտեսային ու խորհտնտեսային բջիջների փորձը, քիչ գործ է կատարել կուսաշխատանքը դաշտ ու բրիգադ տեղափոխելու ուղղությամբ, գրեթե չի զբաղվել կուսակցության սոցիալական կազմի կարգավորման խնդիրներով։

գ) Թերթի էջերում չի քննարկվել գյուղատնտեսության վե-

---

74 Տե՛ս նույն տեղը, N 44։

բարերյալ լույս տեսած գրականությունը, չի լուսաբանվել շրջանային մամուլի փորձը։

գ) Խմբագրությունը գրեթե մոռացության է տվել այնպիսի կարևոր բնագավառներ, ինչպիսիք են կենցաղը, առողջապահությունը, ճանապարհաշինությունը, գյուղատնտեսական բանվորների մեջ տարվող աշխատանքը և այլն։

Միաժամանակ արձանագրվեց, որ խիստ թույլ է Հողժողկոմատի, Կոլտնտեսների և «Խորհրդային Հայաստան»-ի աջակցությունը «Սոցիալիստական գյուղատնտեսությանը». խմբագրությունը զանվում է տեխնիկական անմխիթար վիճակում (չունի բաժնի վարիչներ, հրահանգիչներ). «Սոյուզպեչատ»-ը բարձիթող է տալիս թերթի տարածման գործը (ապրիլ ամսին նախատեսված օրական 12 հազար օրինակի փոխարեն տարածվել է միայն 6000)։ Կոմբջիջն իր անդամներից երեքին՝ Ե. Զուբարին, Ա. Բակունցին և Ռ. Աթայանին պարտավորեցրեց «կոնկրետ գործնական աջակցություն» ցույց տալ «Սոցիալիստական գյուղատնտեսության» խմբագրությանը. ժողովը խնդրեց Կենտկոմին՝ թերթին տրամադրել որակյալ կադրեր, ստեղծել «Կոլտնտեսային բաժին» և հրահանգչական ապարատ։

Այս քննարկումը և նախատեսված միջոցառումները զգալի չափով բարելավեցին թերթի գործունեությունը։ Վերակառուցելով աշխատանքները վերոհիշյալ որոշման ոգով՝ խմբագրությունը շուտով հասավ լուրջ հաջողությունների։ Թերթն սկսեց ավելի մոտիկից զբաղվել գաղափարական պայքարի խնդիրներով, ուժեղացրեց կազմակերպչական-մասսայական աշխատանքը, առանձին անկյուն հատկացրեց կուլտուր-կենցաղային հարցերին, ավելի հաճախակի էր գրում սոցիալիստական մրցության կազմակերպման, գյուղատնտեսական բանվորների առօրյայի մասին։ Գյուղական կազմակերպությունների փորձի փոխանակման նպատակով խմբագրությունը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի կազմբաժնի հետ միասին, 1932 թ. հունիսի սկզբներին անցկացրեց կուսաշխատանքի վերակառուցման սեմինար[75]։

Ուշագրավ է նաև հետևյալը. հուլիսի վերջերից, ավելի քան մեկ ամիս, Հայաստանի կենտրոնական գյուղացիական թերթը լույս էր տեսնում երկու հրատարակությամբ՝ մեկը այգեգործական-բամբակագործական շրջանների, մյուսը անասնապահական շրջանների համար։ Առաջին հրատարակությունը տարածվում էր

---

75 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1932, № 68։

Երևանում, Ղարդուղուլու, Ղամարլուի, Վաղարշապատի, Վեղու և Աշտարակի շրջաններում, մյուս շրջանների բաժանորդներն ստանում էին երկրորդ հրատարակությունը: Այս միջոցառումը, որն ի դեպ՝ ամենևին էլ չանդրադարձավ թերթի պարբերականության ու ծավալի վրա, զգալի չափով բարձրացրեց նրա գործնականությունը գյուղատնտեսության կոնկրետ ճյուղերի զարգացմանը նպաստելու առումով:

Նորություն էր նաև նոյեմբեր ամսից թերթում բացված Մասնագետների նամակներ ընդհանուր խորագիրը, որի ներքո տպագրված նամակ-թղթակցություններն արծարծում էին գյուղի մասնագետների (գյուղատնտես, բժիշկ, ուսուցիչ և այլն) աշխատանքի, կենցաղի, կուլտուր-լուսավորական գործունեության հետ կապված բազմազան խնդիրներ, բացահայտում այն դեպքերը, երբ այս կամ այն մասնագետը տեղական մարմինների կողմից չէր օգտագործվում ըստ իր մասնագիտության: Խմբագրությունը ջանում էր իր աջակցությունը բերել կադրերի ճիշտ ընտրության ու տեղաբաշխման, նրանց հեղինակությունը տեղերում բարձրացնելու գործին: Թերթի այս նախաձեռնությունն արժանացավ հանրապետության ԲԳՏ ժողկոմատի հավանության ու աջակցության: Շրջանային բոլոր բանգյուղտեսչություններին ուղղված հրահանգի մեջ ԲԳՏ ժողկոմը պահանջում էր. «Գյուղում աշխատող մասնագետների նամակները, որոնք պարբերաբար տպագրվելու են «Սոցգյուղ»-ում, անպայման ենթարկել և միջոցներ ձեռք առնել, որպեսզի բարելավվեն գյուղում աշխատող մասնագետների՝ ագրոնոմների, ագրոտեխնիկների, անասնաբույժների, բժիշկների նյութական-կենցաղային պայմանները և հնարավոր, որպեսզի նրանք օգտագործվեն իրենց մասնագիտության համաձայն»: Հրահանգը պարտավորեցնում էր բնության արդյունքների և նախատեսվող միջոցառումների մասին տեղեկացնել ՀՍԽՀ բանգյուղտեսչությանն ու «Սոցիալիստական գյուղատնտեսության» խմբագրությանը[76]: Այդ պատասխանները պարբերաբար զետեղվում էին Հետագոտող բյուրոյի անկյուն խորագրի ներքո:

«Սոցիալիստական գյուղատնտեսություն»-ը կարևոր նշանակություն էր տալիս հողօգտագործման բնագավառում առաջավոր կոլտնտեսությունների և փորձակայանների նվաճումների մասսայականացմանը: Այս կապակցությամբ թերթն անդրադառնում էր Հողժողկոմատի ագրոտեխնիկական պրոպագանդայի սեկտորի,

76 Տե՛ս նույն տեղը, Ֆ 155։

տեղերում գործող ագրոխմբակների, Գյուղհրատի, գյուղի սոցիալիստական վերակառուցման ինստիտուտի աշխատանքներին։ Գյուղատնտեսության տարբեր ճյուղերի, հողամշակության նոր մեթոդների, ագրոտեխնիկական խնդիրների, սերմնաբուծության, առաջավոր փորձի արմատավորման և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ հոդվածներով, կոնսուլտացիոն նյութերով ու խորհուրդներով հաճախակի հանդես էին գալիս ավագ և երիտասարդ սերնդի գիտնականները, ագրոնոմները, անասնաբույժները, գյուղատնտեսության բնագավառի աչքի ընկնող մասնագետներից շատերը։ Թերթը տպագրում և պրոպագանդում էր կոլտնտեսության վերաբերյալ և գյուղում կատարվող աշխատանքների մասին Համ Կ(բ)Կ Կենտկոմի, Անդրերկրամի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի կարևորագույն որոշումները, համագումարների, կոնֆերանսների ու պլենումների նյութերը, կուսակցական ու պետական ղեկավար գործիչների ելույթները։ Գյուղում տարվող գործնական աշխատանքների մասին ուշագրավ թղթակցություններ էին գրում շրջկոմների և գյուղական կուսակազմակերպությունների անդամները, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կազմակերպիչները։

Վերջապես, հիշատակության արժանի է նաև «Սոցիալիստական գյուղատնտեսության» գրական բաժինը։ Այստեղ են տպագրվել Ն. Զարյանի հանրահայտ «Սարո Միկինյան» պոեմը, մի քանի ակնարկները, Խնկո-Ապոր, Ս. Տարոնցու, Հ. Շիրազի, Գ. Հայրյանի, Աղավնու, Խ. Հրաչյանի, Մ. Կորյունի, Գ. Հակոբյանի, Զ. Մարգարյանի և այլոց բանաստեղծությունները։ Պետք է նշել Սրշ. Ղարագյուլյանի ակտիվ աշխատակցությունը (1933 թ. սկսած հաճախակի տպագրվում էին նրա ֆելիետոնները, խմբագրության ստացած նամակների հիման վրա գրված աշխույժ թղթակցությունները)։ Հատկապես 1933 թվականին թերթում պարբերաբար զետեղվում էին «Գրական էջ»-եր (մոտ երկու տասնյակ). խմբագրությունը կազմակերպում էր գրական խմբակներ, կոնսուլտացիաներ, որոնք գալիս էին լրացնելու և ամրապնդելու թերթի ծավալած բավական լայն կուլտուր-դաստիարակչական գործունեությունը։

Կենտրոնական գյուղացիական թերթի հեղինակությունն ավելի բարձրացնելու, նրա ելույթներն ու քննադատական գիտողություններն առավել ազդեցիկ ու արդյունավետ դարձնելու նպատակով որոշվեց այն հրատարակել իբրև ՀԿ(բ)Կ Կենտկոմի թերթ[77]։

---

77 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1935, № 70։

1935 թ. ապրիլի 1-ից Հայաստանի կենտրոնական գյուղացիական լրագիրն սկսեց լույս տեսնել նոր՝ «Կոլխոզնիկ» անվանումով։ Ենթախորագրի տակ նշված էր, որ այն հրատարակվում է իբրև «Մաճկալ»-ի և «Սոցիալիստական գյուղատնտեսության» շարունակություն[78]։

«Կոլխոզնիկ»-ը գոյատևեց ընդամենը հինգ ամիս։ Այս թերթի համար բնորոշը խստորեն ընդգծված առօրյա-գործնական բնույթն էր։ Սա, իհարկե, որոշ իմաստով լավ էր և ուներ իր դրական կողմը։ Չպետք է մոռանալ, սակայն, որ «Կոլխոզնիկ»-ը համարվում էր հանրապետության կենտրոնական գյուղացիական լրագիր, ՀԿ(բ)Կ Կենտկոմի թերթ, ուստի և պարտավոր էր ավելի շատ տեղ հատկացնել ընդհանուր քաղաքական խնդիրներին, մասնավորապես գյուղում կիրառվող քաղաքականության տեսական արծարծումներին։

Այնուամենայնիվ, «Կոլխոզնիկ»-ը դրական դերձ կատարեց կոլտնտեսություններում սոցիալիստական մրցություն ծավալելու, կոլտնտեսության օրինակելի կանոնադրության քննարկման ընթացքը լուսաբանելու, ագրոկանոնների ճիշտ կիրառմանը նպաստելու և, առանձնապես, կուլտուր-կենցաղային կոնկրետ խնդիրների քննարկման առումով։ Թերթի էջերում հաճախակի երևում էին Մարեենք մեր գյուղը դարավոր կեղտից, Մառազարդենք մեր գյուղերը և այլ խորագրեր, գործնականորեն քննարկվում էին առողջ կենցաղի արմատավորման, բաղնիքների շինարարության, կանաչապատման, գյուղի կուլտուրական կյանքի կազմակերպման (ռադիոֆիկացում, կինոսպասարկում, թատերական խմբակներ և այլն) հարցերը։ Խմբագրության նախաձեռնությամբ գյուղերի և կոլտնտեսությունների միջև անցկացվեց յուրօրինակ մի մրցույթ՝ գյուղը կուլտուրականացնելու համար։ Անդրադառնալով մրցույթի ընթացքին և նշելով առանձին գյուղերի դրական օրինակը, թերթը

---

78 «Կոլխոզնիկ»-ը երկօրյա թերթ էր (մի քանի համար՝ ամենօրյա)։ Պատ. խմբագիրն էր Վ. Անանյանը։ № 56-ից հրատարակվել է պատ. խմբագրի տեղակալ Ա. Հակոբյանի ստորագրությամբ։ Վերջին՝ 74-րդ համարը լույս տեսավ 1935 թ. օգոստոսի 30-ին։ Այստեղ էլ հենց զետեղված է խմբագրության ծանուցումն այն մասին, որ «Հայկոմկուսի Կենտկոմի որոշմամբ 1935 թ. սեպտեմբերի 1-ից «Կոլխոզնիկ» թերթի հրատարակությունը դադարեցվում է։ Թերթի բաժանորդներն իրենց մուծած գումարների դիմաց կարող են ստանալ ուրիշ թերթեր կամ հետ ստանալ գումարը «Սոյուզպեչատից»։

առաջնորդողներից մեկում ընդգծում էր. «Պետք է ամեն գյուղ ունենա իր զբոսարանը, ծաղկանոցը, բաղնիքը, ակումբը: Պետք է կարգավորվեն ու պլանավորվեն մեր գյուղերի փողոցները: Դրա ժամանակն է արդեն»[79]: «Կոլխոզնիկ»-ը կոլտնտեսային գյուղացիությանը նախապատրաստում էր լիարյուն կուլտուրական կյանքի, և սրա մեջ է այս թերթի ամենամեծ երախտիքը:

* * *

Մեր Հանրապետությունում կոլտնտեսային շինարարության հարցերը զգալի տեղ ունեին ազգային փոքրամասնությունների լեզուներով հրատարակվող պարբերականներում, որոնք անփոխարինելի դեր խաղացին կոլեկտիվացման քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների շրջանում կիրառելու, դասակարգային ճիշտ գիծ անցկացնելու, աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության գործում:

Նշանակալից է մասնավորապես ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀՍԽՀ Կենտգործկոմի օրգան „Гызыл Шәфәг" («Կըզըլ շաֆակ»— «Կարմիր արշալույս») ազգբնջաններին թերթի կատարած աշխատանքը: Սա, որ փոխարինելու էր եկել մինչ այդ լույս տեսնող «Ջանդի» լրագրին, հրատարակվում էր անհամեմատ մեծ տպաքանակով (արդեն 1930 թ. «Կըզըլ շաֆակ»-ը տարածվում էր 4.500, իսկ հաջորդ տարի՝ 10.000 օրինակ[80]) և դարձել էր իսկական մասսայական թերթ[81]:

«Կըզըլ շաֆակ»-ի շուրջը համախմբված էին մեծ թվով թղթակիցներ, շատը բատրակների ու կոլտնտեսականների միջավայրից, թերթին աշխատակցում էին մեր Հանրապետության ազգբնջանական մտավորականության լավագույն ներկայացուցիչներ, ուսուցիչներ, ուսանողներ: Թղթակցություններում բարձրացված հարցերը ըստ էության քննարկելու և քննադատական ելույթները իրենց նպատակին հասցնելու գործում մեծ օգնություն ցուցաբերեց խմբագրությունների կից ստեղծված Հանրապետական հետազոտող բյուրոն, որը «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանգարդ» և

79 «Կոլխոզնիկ», 1935, № 14։

80 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 18, գ. 47, թ. 28։

81 «Կըզըլ շաֆակ»-ի խմբագիրներն են եղել Մ. Հուսեյնովը, Ռ. Վելիբեկովը, Ա. Ռիզաևը 1937 թվականից վերանվանվեց «Коммунист». 1939 թվականից կոչվում է „Совет Эрмәнистаны":

մյուս թերթերի հետ միասին սպասարկում էր նաև «Կրկրլ շաֆակ»-ին[82]։

Սրանից բացի, Խորհրդային Հայաստանում լույս էին տեսնում նաև „Малқарлыг Чәдһәсиндә“ («Անասնապահական ֆրոնտում»), „Большевик сурә́ти“ («Բոլշևիկյան տեմպ»), „Зәрбәчи колхозчу“ («Հարվածային կոլտնտեսական») և այլ ադրբեջաներեն շրջանային թերթեր։

Մեր հանրապետության քուրդ աշխատավորության շրջանում կուլտուր-լուսավորական և քաղաքական-մասսայական նշանակալից գործ կատարեց ՀՍԽՀ Լուսժողկոմատի օրգան „Рйа тәза“ («Ռյա թազա»—«Նոր ուղի») թերթը, որի անդրանիկ համարը լույս տեսավ 1930 թ. մարտի 25-ին՝ քրդական նոր այբուբենի տարելիցին։

Առաջին տարում լույս տեսավ «Ռյա թազա»-ի ընդամենը 5 համար՝ 1000 օրինակ տպաքանակով։ Հաջորդ տարվանից տիրաժը կրկնապատկվեց[83], կանոնավորվեց նաև պարբերականությունը. շուտով թերթը դարձավ 5-օրյա[84]։ Առաջին հինգ համարներին նվիրված մամուլի տեսության մեջ «Խորհրդային Հայաստան»-ը առանձնապես ընդգծեց, որ «Ռյա թազա»-ն «պետք է «Մաճկալ» թերթի բնույթն ունենա, պարզ ու ժողովրդական լեզվով բացատրի քուրդ բատրակին, բանվորին, հողագործին ու խաշնարածին նոր ձևերով հող մշակելը, նոր անասնապահությունը, մատչելի լեզվով տեղյակ դարձնի նրանց մեր տնտեսական ու քաղաքական խնդիրներին, վերակառուցման շրջանի կարևորագույն հարցերին, կոլտնտեսությունների առավելություններին, զինի քուրդ աշխատավորներին դասակարգային պայքարի զենքերով»[85]։ Հիմնականում այս ուղղությամբ էլ ընթացավ թերթի հետագա աշխատանքը։ «Ռյա թազա»-ն խոշոր դեր կատարեց նաև գրագիտության տարածման, խորհրդային քրդական դրականության կազմավորման ու զարգացման գործում։

«Ռյա թազա»-ի հրատարակմանը առաջին շրջանում անմիջականորեն մասնակցել կամ ակտիվորեն աջակցել են Արաբ Շամի-

---

82 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 17, գ. 339, թ. 9։

83 Տե՛ս նույն տեղը, ց. 18, գ. 47, թ. 28։

84 «Ռյա թազա»-ի աշխատանքը 1938 թ. փետրվարից ընդհատվեց։ 1955 թ. այն նորից սկսեց լույս տեսնել՝ իբրև ՀԿԿ Կենտկոմի օրգան։

85 «Խորհրդային Հայաստան», 1931, № 72։

լովը, Ջաղոյն Գյանջոն, Հաջին Ջնդին, Ամինև Ավդալը, Ջամմ Ջալիլը և նորաստեղծ բուրդ մասավորականության այլ ներկայացուցիչներ։ Թերթին պարբերաբար աշխատակցում էին նաև Հր. Քոչարը, Հ. Մկրտչյանը (Քսպն), Ռ. Դրամբյանը և ուրիշներ։

Ի դեպ՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով պարբերականների հրատարակությանը կարևոր նշանակություն էր տրվում ամբողջ Անդրկովկասի մասշտաբով։ Արդեն 1930 թ. այստեղ լույս էին տեսնում մինգրելերեն, ավարերեն, քրդերեն, թաթարերեն, ասորերեն, թալիշերեն ու այլ լեզուներով թերթեր։ Հետագա տարիներին դրանց քանակը անհամեմատ ավելացավ՝ դրախավորապես շրջանային, բաղրաժինային ու գործարանային թերթերի ստեղծումով։ «Այժմ Անդրկովկասում չկա ոչ մի ազգային փոքրամասնություն, որի լեզվով թերթ չհրատարակվի»[86],—նշված է Անդրֆեդերացիայի կառավարության հաշվետվության մեջ 1935 թ. հունվարին։

4

Կոլտնտեսային շարժումը ծավալելու գործում զգալի դեր խաղաց շրջանային մամուլը։ Հայաստանի գավառային թերթերի մասին արդեն խոսել ենք աշխատության համապատասխան էջերում։ Նրանց մեծագույն մասը դադարել էր գոնես 1923 թ. կեսերին։ Բացառություն էին, ինչպես նշել ենք, Լենինականի «Բանվոր»-ը և Գորիսի «Կարմիր ռաշպար»-ը։ Մնացած գավառներին սպասարկում էին կենտրոնական կուսակցական-կոմերիտական ու դյուղացիական պարբերականները։ Այսպես շարունակվեց մինչև գավառների վերացումը և շրջանների կազմակերպումը, որ իրագործվեց, ինչպես հայտնի է, կուսակցական-խորհրդային ղեկավարությունը դյուղին մոտեցնելու նպատակով։ 1930 թ. ամռանը Հայաստանը բաժանվեց 25 շրջանների՝ համապատասխան կուսշրջկոմներով և աշխատավորների դեպուտատների շրջդործկոմներով։ Երևանում ու Լենինականում ստեղծվեցին կուսակցական քաղաքային կոմիտեներ։ Հենց այդ ժամանակվանից էլ սկսվեցին մամուլի նոր օրգանների՝ շրջանային թերթերի կազմակերպման աշխատանքները։ Սահմանադրական ամբողջ Միության մեջ օկրուգների (գավառների) վերացման առնչությամբ անցկացվեց թերթերի ցանցի արմատական

86 «Խորհրդային Հայաստան», 1935, № 18։

վերակառուցում. փակելով օկրուգային թերթերը, Համկ(բ)կ Կենտկոմը 1930 թ. օգոստոսի 11-ի որոշմամբ անհրաժեշտ համարեց «ծավալել շրջանային թերթերի ցանցը արդյունաբերական և կարևորագույն գյուղատնտեսական շրջաններում»[87]: Միաժամանակ Կենտկոմը հստակորեն սահմանեց մամուլի այդ նոր օրգանների հիմնական ուղղությունը, բնույթը. «Շրջանային թերթը պետք է լինի մասսայական քաղաքական օրգան և պետք է ունենա ցայտուն կերպով արտահայտված արտադրական բնույթ (ավյալ շրջանի տնտեսությանը համապատասխան)»[88]: 1931 թ. հունվարի 18-ին Համկ(բ)կ Կենտկոմը հատուկ որոշումով[89] անդրադարձավ շրջանային և տեղական մամուլի աշխատանքներին, բացահայտեց մի շարք էական թերություններ, նշեց դրանց վերացման միջոցները: Կենտկոմն ընդգծեց մասնավորապես կուսակցության գծից կատարվող շեղումների դեմ պայքարելու հարցերը խորը կերպով քննարկելու, խորհուրդների վերակառուցման, հացամթերումների ու դրամական միջոցների մոբիլիզացման ընթացքի լուսաբանումը կոլեկտիվացման խնդիրների և կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացնելու պայքարի հետ շաղկապելու անհրաժեշտություն: Ազգային կոմկուսների կենտկոմների, մարզկոմների և երկրկոմների կարևորագույն խնդիրը համարվեց գյուղական շրջանային և տեղական մամուլին ցույց տրվող գաղափարական-կազմակերպչական ղեկավարության արմատական բարելավումը: Ցուցում տալով ընդլայնել մամուլի ցանցն այն հաշվով, որ 1931 թ. ընթացքում բոլոր շրջաններում այս կամ այն ձևով լույս տեսնեն մամուլի օրգաններ (թերթեր, ժուռնալներ, ապակեպիպ բազմատիրաժներ և այլն), Կենտկոմը միաժամանակ պարտավորեցրեց հանրապետական, երկրամասային ու մարզային թերթերում պարբերաբար տպագրել շրջանային ու տեղական մամուլի տեսություններ՝ իրենց նշանակությամբ հավասարեցնելով դրանք խմբագրական հոդվածներին:

Այս որոշումներին և ցուցումներին համապատասխան՝ մամուլի օրգաններ ստեղծվեցին նաև անդրկովկասյան հանրապետություններում, այդ թվում և Հայաստանում: Դեռևս 1929 թ. Ղափանն ուներ իր թերթը («Պայքար պղնձի համար»), 1930 թ. վերջերին

---

87 «Գաղափարական և սովետական մամուլի մասին», էջ 553:

88 Նույն տեղում, էջ 554:

89 Տե՛ս նույն տեղը, էջ 559—562:

Նոր Բայազետում սկսեց լույս տեսնել «Խորհրդային գյուղ»-ը, իսկ հաջորդ տարի մեր հանրապետությունում ստեղծվեց շրջանային թերթերի ցանց. Ղարաբիլիսայում հրատարակվում էր «Սոցարշավ»-ը («Սոցարշավ»-ի հրատարակությամբ լույս էր տեսնում Համամլուի կոլտնտեսության կուսբյուրոյի և գյուղխորհրդի օրգան «Հարվածային Համամլու» թերթը, որը 1933 թ. վերանվանվեց «Բոլշևիկյան գրոհ»), Արթիկում՝ «Լեռնագործ»-ը, Ղամարլուում՝ «Հարվածային բրիգադ»-ը, Վաղարշապատում՝ «Բամբակի համար»-ը, Քեշիշքենդ-Փաշալվում՝ «Կոլխոզնիկ»-ը, Ղուրդուղուլիում՝ «Բոլշևիկյան տեմպով»-ը, Աշտարակում՝ «Այգեգործ կոլխոզնիկ»-ը, Ալավերդում՝ «Պղնձի ֆրոնտում»-ը, Բասարգեչարում՝ «Կարմիր Բասարգեչար»-ը, Ստեփանավանում՝ «Սոցիալիստական անասնապահություն»-ը։ Շրջանային թերթերի ընդհանուր միանվագ տպաքանակը 1931 թ. կազմում էր 32.600 օրինակ[90]։

Այնուամենայնիվ, Հայաստանի շրջանների կեսից ավելին դեռևս չուներ իր տպագիր օրգանը։ Դրեթե նույնն էր վիճակը նաև Անդրկովկասի մյուս հանրապետություններում։ 1931 թ. սեպտեմբերի 30-ին ՀամԿ(բ)Կ Անդրերկրամի բյուրոն հաստատեց շրջանային թերթերի ցանցն ընդլայնելու պլան-նախագիծ, ըստ որի բացվելու էին Վրաստանում՝ 28, Ադրբեջանում՝ 29 և Հայաստանում՝ 13 անուն նոր շրջանային թերթեր[91]։ Շուտով նախապատրաստական մի շարք միջոցներ ձեռնարկվեցին այս որոշման կենսագործման ուղղությամբ. ընտրվում էին համապատասխան կադրեր՝ թե՛ խմբագրական և թե՛ տպագրական գործի համար, ընդլայնվում էր տպարանների ցանցը. Լենինականում, Նոր Բայազետում, Ղափանում և Ղարաբիլիսայում գործող տպարաններին ավելացան նորերը Վաղարշապատում, Սարդարապատում, Ղամարլուում, Բասարգեչարում, Ալավերդում և Ստեփանավանում։ Հաջորդ տարում տպարաններ ստեղծվեցին նաև Մեղրիում, Սիսիանում, Շամշադինում, Իջևանում, Դիլիջանում և Թալինում[92]։ Այդ բազայի հիման վրա կազմակերպվեցին նոր շրջանային թերթեր։ 1932 թ. Հայաստանում հրատարակվում էին շրջանային մամուլի 13 օրգաններ, որոնցից 2-ը՝ անասնապահական, 3-ը՝ հացահատիկային-այգեգործական, 3-ը՝ արդյունաբերական և 5-ը՝ բամբակագործական շրջաններում։ Հաջորդ տարի շրջանային լրագրերի թիվը հասավ

90 Տե՛ս Մի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 18, գ. 47, թ. 28։
91 Տե՛ս նույն տեղը, ց. 17, գ. 348, թ. 9—12։
92 Տե՛ս նույն տեղը, ց. 16, գ. 27, թ. 2—3։

18-ի, 1934-ին՝ 21-ի, իսկ 1935-ին՝ 27-ի։ Վերը նշված թերթերին ավելացան նոր անուններ՝ Թալինի «Բոլշևիկյան դրոշով»-ը, Ն. Ախտայի «Լենինյան դրոշով»-ը, Աղրաբայի «Անասնապահական ֆրոնտում»-ը, Մարտունու «Կոլխոզային ուղի»-ն, Կոտայքի «Սոցիալիստական տեմպով»-ը, «Սիսիանի հարվածային»-ը, Ապարանի «Անասնապահ կոլխոզնիկ»-ը, Մեղրիի «Կոլխոզային գյուղ»-ը, Իջևանի «Հարվածային կոլխոզնիկ»-ը, Դիլիջանի «Ստալինյան արշավ»-ը և այլն։ Հանրապետության բոլոր շրջաններն ապահովված էին թերթերով։ Դրանցից չորսը լույս էին տեսնում ադրբեջաներեն, մեկը՝ ռուսերեն, երկուսը՝ հայերեն-ադրբեջաներեն, մեկը՝ հայերեն-ռուսերեն և մեկը՝ հայերեն-քրդերեն։

Հանդիսանալով ՀԿ(բ)Կ համապատասխան շրջկոմների և շրջգործկոմների օրգաններ, շրջանային թերթերն ղեկավարեցին կոլտնտեսային շարժման կազմակերպման, կոլտնտեսությունների ամրապնդման, բերքատվության բարձրացման, սոցմրցման ծավալման, գյուղի աշխատավորության քաղաքական և կուլտուրական դաստիարակության ուղղությամբ։ Առանձին սխալներով հանդերձ, շրջանային մամուլը կոնկրետ պայքար էր մղում կուսակցության դեմ կատարվող «ձախ» ու աջ խոտորումների դեմ, մերկացնում էր կուլակային տարերի մեքենայությունները։ Չնայած ծավալի փոքրությանը (2—4 էջ, հիմնականում 42×30 սմ) և պարբերականության սակավությանը (հնգօրյա, շաբաթաթերթ կամ 10-օրյա), շրջանային մամուլը կարողացավ ղեկավարել գործ կատարել՝ նպաստելով աշխատավոր գյուղացիության ջանքերի մոբիլիզացմանը գյուղի սոցիալիստական վերակառուցման համար։ Շրջանային թերթերն ստեղծում էին շրջիկ խմբագրություններ (առանձնապես գյուղատնտեսական կամպանիաների ժամանակ), հսկիչ պոստեր, անցկացնում էին ստուգայցեր, իրենց շուրջն էին համախմբում նորանոր թղթակիցների, տպագրում էին գյուղում աշխատողների գրական փորձերը, քննարկում անդրադարձության վերացման հարցերը։ Նրանք մամուլի նոր աշխատողների, ժուռնալիստների պատրաստման ու կոփման յուրովի դպրոց հանդիսացան. հին, փորձված կադրերի կողքին խմբագրություններում աշխատում էին նորերը։ Նրանցից շատերը հետագայում դարձան աչքի ընկնող ժուռնալիստներ, կուսակցական-հասարակական գործիչներ, սոցիալիստական արդյունաբերության, գյուղատնտեսության և մշակույթի կազմակերպիչներ։

Մեր հանրապետության շրջանային մամուլի ստեղծման ու

զարգացման գործում իրենց ավանդն ունեն Շ. Աղնավուրյանը, Կ. Ագրոյանը, Գ. Արզումանյանը, Ա. Ասատրյանը, Ա. Ասարեկյանը, Վ. Բգնունին, Խնկ. Դանիելյանը, Գ. Խաչատրյանը, Ա. Կիրակոսյանը, Ստ. Կուրտիկյանը, Արշ. Հակոբյանը, Գ. Հայրյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Ղազարյանը, Մ. Ղազարյանը, Լ. Ղազարյանը, Թ. Մանուկյանը, Հ. Մանուկյանը, Ս. Մանուկյանը, Հր. Մարգարյանը, Մ. Մարկոսյանը, Հ. Միրաքյանը, Ար. Մնացականյանը, Ս. Մովսիսյանը, Հ. Նաջարյանը, Նոր-Այրը, Ն. Շահվերդյանը, Բ. Շահումյանը, Ռ. Շիրոյանը, Աբրահամ Պետրոսյանը, Արտ. Պետրոսյանը, Վ. Պողոսյանը, Ե. Սարուխանյանը, Բ. Սիմոնյանը, Գր. Սինանյանը, Օ. Սեմերջյանը, Ա. Սոլախյանը, Լ. Վարդունին, Հ. Փարիկյանը, Ա. Օհանյանը, Ս. Օրբելյանը և ուրիշներ։

Համկ(բ)կ Անդրկովկասը և հանրապետական կոմկուսների կենտկոմները պարբերաբար անդրադառնում էին շրջանային մամուլի կազմակերպման ու զարգացման խնդիրներին, բացահայտում թերություններն ու վրիպումները, ընդհանրացնում աշխատանքի դրական փորձը։ Անդրկովկասում շրջանային մամուլի ցանցի ընդլայնման ու գաղափարական-կազմակերպչական ամրապնդման տեսակետից կարևոր նշանակություն ունեցան Անդրկոմի 1931 թ. հունիսին և 1932 թ. հուլիսին ընդունած որոշումները («Շրջանային թերթերի վիճակի մասին»[93], «Շրջանային թերթերի դրության և խնդիրների մասին»[94])։ Ընդգծելով, որ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և աշխատավոր զանգվածների կուլտուր-քաղաքական հսկայական աճման պայմաններում, որպես կոլեկտիվ կազմակերպիչ, հատուկ նշանակություն է ստանում շրջանային մամուլը, Անդրկոմը նախագծեց մի շարք կարևոր միջոցառումներ, որոնց կենսագործմանը ձեռնամուխ եղան հանրապետական կոմկուսների կենտկոմների համապատասխան բաժինները՝ ստիպելով բարելավելով շրջանային թերթերի դրվածքն ու զեկավարումը։ Անդրկոմը անհրաժեշտ համարեց մասնավորապես՝ ա) ամրացնել և ընդլայնել Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի մամուլի բաժինը. բ) 1932 թ. աշնանից հանրապետական կոմհամալսարաններին առընթեր բացել թերթերի բաժիններ, իսկ մանկավարժական ինստիտուտներին կից՝ մամուլի ամբիոններ. գ) կուսակցական ակտիվի վերապատրաստման ամառային կուրսերի սիստեմում ունենալ թերթերի բաժանմունք-

93 Տե՛ս ՄԱԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 17, գ. 348, թ. 30—31։

94 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1932, № 162։

ներ՝ ունկնդիրների առավելագույն քանակով. դ) մեկ ամսվա ընթացքում ընարել և որպես խմբագիրներ ու փոխխմբագիրներ շրջանային թերթերում աշխատանքի ուղարկել 30 կուս-անդամներ (Վրաստանում՝ 15, Ադրբեջանում՝ 10 և Հայաստանում՝ 5)։

Բացի այդ, որոշվեց հանրապետական կենտկոմների կուլտպրոպ բաժինների լրագրային-ամսագրային սեկտորներում կազմել շրջանային և ստորին մամուլի ինֆասեկտորներ։ Անդրերկոմը պարտավորեցրեց «Заря Востока», «Бакинский рабочий», «Կոմունիստ» (ադրբեջաներեն), «Կոմունիստ» (վրացերեն), «Խորհրդային Հայաստան» և «Тифлисский рабочий» թերթերի խմբագրություններին՝ «բարելավել մամուլի տեսությունների բովանդակությունը, ապահովել դրանց տպագրումը ոչ պակաս, քան երկու օրը մեկ անգամ, իսկ «Заря Востока»-ում՝ ամեն օր, թերթերին կից կազմակերպելով ռեցենզենտների ակտիվ»։

1932 թ. վերջերից Անդրերկոմի կուլտ-պրոպ բաժնի մամուլի սեկտորը պարբերաբար կազմում և հանրապետական կենտկոմներին ու թերթերի խմբագրություններին էր ուղարկում շրջանային մամուլի ամփոփիչ տեսություններ, որոնց մեջ հակիրճ, բայց փաստալից կերպով նշվում էին այս կամ այն թերթի ինչպես դրական փորձը, այնպես էլ հատկապես սխալներն ու վրիպումները, դրանով իսկ կոնկրետ աջակցություն ցույց տալով խմբագրություններին։ Այդ տեսությունների մեջ զգալի տեղ է հատկացված նաև Հայաստանում հրատարակված շրջանային մամուլին («Սոցարշավ», «Պայքար պղնձի համար», «Բոլշևիկյան դրոշով», «Կարմիր Բասարգեչար», «Լենտագործ», «Լենինի դրոշով» և այլն[95])։

Շրջանային մամուլի կազմակերպման առաջին փուլում «Խորհրդային Հայաստան»-ը քիչ և թռուցիկ կերպով էր անդրադառնում նորաստեղծ լրագրերի աշխատանքին։ Հանրապետության զեկավար թերթը շրջանային մամուլի խնդիրներով ըստ էության զբաղվել է 1932 թ. վերջերից։ Առանձնապես սուր և դիպուկ էին 1933—1934 թթ. հրատարակված մամուլի տեսությունները, որոնք զգալի չափով նպաստեցին տպագիր նոր օրգանների մարտունակության բարձրացմանը, գաղափարական կողմի ուժեղացմանը։ «Խորհրդային Հայաստան»-ը կազմակերպում էր շրջանային թերթերի և ստորին մամուլի ստուգատես-մրցույթներ, նրանց հետ միասին տեղերում հրատարակում էր միացյալ համարներ՝ նվիրված

---

95 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 19, գ. 312, 324, և 327։

գարնանացանի նախապատրաստման կամպանիային, սահմանում էր խրախուսիչ մրցանակներ լավագույն խմբագրի կամ գյուղթղթակցի համար, անցկացնում էր թղթակցային հավաքներ և այլն։

«Խորհրդային Հայաստան»-ի մամուլի տեսություններում և առաջնորդողներում ամփոփված են շրջանային թերթերի ձեռք բերած հաջողությունները աշխատավորների կազմակերպման, սոցիալիստական մրցության ծավալման, աշխատանքային կարգապահության ամրապնդման, թշնամական դաղափարախոսության և աջ օպորտունիզմի պրակտիկ դրսևորումների դեմ մղվող պայքարի առպարեզներում։ Միևնույն ժամանակ նրանցում բացահայտված են շրջանային մամուլում ի հայտ եկած թերությունները ու սխալները, բոլշևիկյան մամուլի ոգուն խորթ արտահայտությունները, լեզվա-ոճական վրիպումները, առանձին խմբագրությունների աշխատանքի անընդունելի մեթոդները՝ դրանց վրա հրավիրելով համապատասխան կուսշրջկոմների ուշադրությունը։ Դատապարտվում էր մասնավորապես այն պրակտիկան, երբ թերթերը լցվում էին խմբագրության մի քանի աշխատողների երկար-բարակ հոդվածներով կամ շրջաբերականներով ու ժողովների արձանագրություններով։ «Շրջանային թերթերի հիմնական նյութը,— ընդգծում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— պետք է կազմված լինի բանգյուղթղթակիցների գրածներից, գործարանում, հանքահորում, դաշտում, կոլտնտեսություններում աշխատող հարվածայինների գրածներից»[96]։

Մի քանի թերթերի խմբագրություններ խստագույնս քննադատվեցին ինքնաթմբկահարման և ավելորդ ինքնաուսկլամի համար։ Մամուլի օրվա կամ իրենց լրագրի տարելիցների առթիվ առանձին խմբագրություններ սկզբունքային հարցեր բարձրացնելու փոխարեն գերադասում էին գնահատել թերթի պատասխանատու աշխատակիցների լուսանկարները, ստացված ողջույնի հեռագրերը կամ անհարկի գովեստներով լեցուն գրությունները՝ «տոնական վաղաժամ ու անտեղի աղմուկի տակ» մոռացության տալով իրենց կոնկրետ խնդիրները[97]։

---

96 «Խորհրդային Հայաստան», 1934, № 102։

97 Տե՛ս, օրինակ, «Մի հարսանիք և հարսանքանման մի տոն» և «Հոբելյանական ինքնաթմբկահարության մասին» խորագրով մամուլի տեսությունները («Խորհրդային Հայաստան», 1933, №№ 76, 180), «Թե՞ թթ, թե ընտանեկան ալբոմ» «Վերջին փոստից»-ը («Խորհրդային Հայաստան», 1935, № 114)։

Շրջանային մամուլի լեզվին վերաբերող հարցերում «Խորհրդային Հայաստան»-ը շեշտը դնում էր որոշ թերթերում նկատվող երկու ծայրահեղությունների հաղթահարման անհրաժեշտության վրա. մի դեպքում՝ անտեղի գործածվում էին բարբառային այնպիսի բառեր ու ոճեր, որոնք պարզապես հասցնում էին գռեհկաբանության, մյուս դեպքում՝ «ակադեմիական» լեզու էր բանեցվում, օգտագործվում էին օտար, անհասկանալի, կեղծ-գիտական արտահայտություններ[98]։ Ի դեպ՝ այս վերջին երևույթը, որ նկատելի էր նաև Միության այլ վայրերի շրջանային մամուլում, «Պրավդա»-ն դիպուկ կերպով բնորոշեց իբրև «լրագրային բյուրոկրատիկ մեծամտություն»[99]։

Առհասարակ շրջանային մամուլի թերությունները վերացնելու, գաղափարական-պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելու առումով կարևոր նշանակություն ունեցան «Պրավդա»-ի մի շարք առաջնորդողները, որոնց ոգով մեր հանրապետության շրջանային թերթերի գործունեությանն անդրադարձավ նաև «Խորհրդային Հայաստան»-ը։

1935 թ. սկզբի տվյալներով՝ Խորհրդային Միության մեջ հրատարակվող 9 հազար թերթերից 5 հազարը շրջանային և խորհտնտեսային լրագրեր էին։ Այդ ժամանակ արդեն, նշում էր «Պրավդա»-ն, արդյունաբերության, գյուղատնտեսության և մշակույթի բուռն զարգացման շնորհիվ «խիստ փոխվեց խորհրդային հանրապետությունների դեմքը, զգալիորեն բարդացան կուսակցական-մասսայական աշխատանքի խնդիրները, անչափ աճեցին մեր թերթերի ընթերցողների՝ միլիոնավոր աշխատավորների կուլտուրական-ուսումնական պահանջները»։ Եվ երբ այս տեսանկյունից քննում ենք շրջանային թերթերը, նկատում էր կուսակցության կենտրոնական օրգանը, չենք կարող անտեսել, որ նրանց մի զգալի մասը «հեռու է ցանկալի լինելուց՝ կուսակցական կրքոտության, ստեղծագործական թափի ու ծավալի և տպվող նյութերի գրական վարպետության իմաստով». թերթերը «հաճախ տալիս են գորշ, անդուն էջեր, որոնք բնավ չեն համապատասխանում կուսակցության կողմից նրանց առջև դրված խնդիրներին»[100]։

---

98 Տե՛ս, օրինակ, «Չկա լավ թերթ՝ վատ լեզվով» և «Դրեցեք պարզ, առանց «էրուդիցիայի» և «հայեցողության»» խորագրով մամուլի տեսությունները («Խորհրդային Հայաստան», 1934, №№ 115, 149)։

99 «Правда», 1934, № 272.

100 «Правда», 14 апреля 1935 г.

«Շրջանային թերթը պետք է դեկավարել» խորագրով առաջնորդողում[101] «Պրավդա»-ն սուր կերպով դնում էր շրջանային մամուլը բարձրորակ կադրերով ամրապնդելու հարցը. պետք է վերակառուցել խմբագրությունների աշխատանքը սոցիալիստական շինարարությամբ թելադրված նոր խնդիրներին համապատասխան. այժմ յուրաքանչյուր խմբագրությունից «պահանջվում է, որ նա առանձնապես դիտենա բացատրել կուսակցության ու կառավարության քաղաքականության և որոշումների իմաստը, դաղափարն ու էությունը. պետք է դիտենալ թարգմանել կուսակցության լոզունգները կոնկրետ գործողության լեզվով՝ ամբողջ շրջանի կոնկրետ պայմաններում. պետք է պարզորոշ կերպով դիտենալ իր շրջանի, յուրաքանչյուր գյուղխորհրդի ու կոլտնտեսության բոլոր առանձնահատկությունները»: Շատ թերթերում, նկատում էր «Պրավդա»-ն, «պրոպագանդայի ու ագիտացիայի մեթոդներն ու տիպն իսկ մնացել են այն ցածր աստիճանի վրա, որն արդեն անցել են կուսակցությունն ու երկիրը». թարմ, լիարյուն, կյանքի բոլոր կողմերն ընդգրկող ինֆորմացիայի փոխարեն թերթերը հաճախ «ընթերցողին մատուցում են կեղծ-օպերատիվ հոդվածների չոր կեղևը, նոր մարերի փոխարեն՝ ծամածռված կրկնություններ, փայլուն պատմելակերպի ու ցուցադրման փոխարեն՝ պաշտոնական տոն»:

Առանձնապես վատանդավոր՝ էր համարում «Պրավդա»-ն մամուլում «լայնորեն տարածված հրամանի և սպառնալիքների տոնը»: Այդպիսի ոճ բանեցնողները «մոռանում են, որ թերթը դիրեկտիվ, առավել ևս վարչական կազմակերպություն չէ. նրանք մոռանում են, որ թերթի խնդիրն է՝ ներգործել ընթերցող զանգվածների գիտակցության վրա՝ համոզելու, ցուցադրելու, համեմատելու միջոցով, որ սպառնալիքների և վախեցնելու ճշգրտոնն ամենից քիչ աղդու է և ամենից բիչ վայել բոլշևիկյան թերթին»: «Թերթ, որ սիրում է հրամայել» խորագրով մամուլի տեսության մեջ «Խորհրդային Հայաստան»-ը քննադատեց «Ճակնդեղի ֆրոնտում»-ի և «Այգեգործ կոլխոզնիկ»-ի խմբագրություններին, որոնք, գյուղատնտեսական աշխատանքներում տեղ գտած թերությունների պատճառները որոնելու և դրանց վերացման ուղիները նշելու փոխարեն՝ գործի էին դրել հրամանների ու սպառնալիքների իրենց ամբողջ բառապաշարը («խմբագրությունը նախազգուշացնում է...», «անմիջապես վե՛րջ դնել...», «խիստ պատժի ենթարկել...» և այլն):

---

101 Տե՛ս «Правда», 31 октября 1935 г.

Հայաստանի կոմկուսի կենտրոնական օրգանը, բերելով կոնկրետ օրինակներ, վերջում ընդհանրացնում էր. «Հրամանների և վարչական մեթոդների դիմելու հակումով, կուսակցական, խորհրդային և տնտեսական մարմինների անմիջական պարտականություններն իրենց վրա վերցնելու վտանգավոր ձգտումով վարակված են նաև մեր շրջանային մի շարք այլ թերթեր։ Այդ տենդենցները պետք է անխնա դուրս վանել մեր մամուլից, ավելի ու ավելի սուր և ազդեցիկ դարձնել մասսաների բոլշևիկյան դատափարակության այդ դերը դերը»[102]։

Կարևոր նշանակություն ուներ մամուլի կրթության, բոլշևիկյան ճշմարտացիության և սկզբունքայնության բարձրացումը։ Այս տեսակետից միանգամայն տեղին էր հաճոյախոսության և կեղծ հիացմունքի այն դրսևորումների քննադատությունը, որոնք երբեմն արտահայտվում էին մամուլի օրգաններում՝ իրենց հետ բերելով խորթ ու մերժելի լրագրային բարքեր։ Շրջանային և այլ դեկավար աշխատողների անտեղի փառաբանումը քաղցր-մեղցր հաճոյախոսական ոճով՝ հարվածում էր մամուլի սկզբունքայնությանը, խաթարում նրա քննադատական ոգին։ Այդպիսի մոտեցումը խանգարում, թույլ չէր տալիս ժամանակին բացահայտելու աշխատանքի այս կամ այն բնագավառում առկա թերությունները՝ դասակարգային հակառակորդի դեմ տարած հաղթանակի և սոցիալիստական շինարարության ընթացքում ձեռք բերված նվաճումների համար բնական հպարտության զգացումը փոխարինելով կեղծ հիացմունքի թմրեցնող «խանդավառությամբ»։ «Բոլշևիկյան համեստության և լրագրային հաճոյախոսությունների մասին» մամուլի տեսության մեջ «Խորհրդային Հայաստան»-ը բերում է շրջանային դեկավարներին հաճոյախոսելու մի շարք փաստեր «Կոլխոզի ուղի», «Հարվածային կոլխոզնիկ» և «Կարմիր Զանգեզուր» թերթերից։ Ահա մի նմուշ. «Շրջկոմի քարտուղարը գյուղ մեկնեց,— գրում է «Խորհրդային Հայաստան»-ը։— Ամենասովորական երևույթ, շրջանային յուրաքանչյուր աշխատողի ամենօրյա պարտականություն։ Բայց խմբագիրը նորից հիացմունքի մեջ է... Եվ նա մի ընդարձակ հաճոյախոսական ակնարկ է նվիրում այդ դեպքին։ Խմբագիրը գուցե կարծում է,— շարունակում է թերթը,— թե դրանով բարձրացնում է շրջկոմի քարտուղարի կամ շրջանի մյուս դեկավար աշխատողների հեղինակությունը։ Բնավ ո՛չ։ Այդ կարգի

---

102 «Խորհրդային Հայաստան», 1935, № 248։

հոդվածները միայն կարող են նպաստացնել շրջանային կոմիտեների քարտուղարների և մյուս աշխատողների իրոք վայելած հեղինակությունը, որ ձեռք է բերվում անձնվեր և հանդուն աշխատանքի շնորհիվ»[103]։ Թերթը մեջբերում է անում «Պրավդա»-ի մամուլի տեսություններից մեկից, ուր ասված էր. «Բոլշևիկյան կրթությունը թշնամուն մերկացնելու գործում, մեր մարդկանց, կուլտուրայի, էկոնոմիկայի մեծ աճի, սոցիալիզմի աճի ցուցադրման գործում՝ խորհրդային ժուռնալիստիկայի ամենաթանկագին հատկանշական գծերից մեկն է։ Սակայն կրթությունը հիացմունք չէ։ Կրթությունը, կրթությունը խառնվածքը բոլորովին չի նշանակում վարունգը տան մեծությամբ նկարագրել... Բոլշևիկյան կրթությանը հակառակ և խորթ են հաճոյախոսական փառաբանումները...»։

Հաղթահարելով թերություններն ու վրիպումները՝ շրջանային մամուլի օրգանները ընդլայնում էին իրենց ներգործության ոլորտը, մեծացնում ազդեցության ուժը գյուղական աշխատավորության ամենալայն խավերի վրա։

* * *

Գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում խոշոր դեր խաղացին մեքենա-տրակտորային կայանների և խորհտնտեսությունների քաղաքաժինների տպագիր օրգանները, որոնց կազմակերպումն սկսվեց քաղաքաժինների ստեղծման հետ միաժամանակ։ Մամուլի այս նոր տիպի առաջնեկներին շուտով հետևեցին մյուսները, և արդեն 1933 թ. վերջին խորհրդային Միությունում նրանց թիվը հասավ 2850-ի, որից ավելի քան 2150-ը՝ ՄՏԿ-ներում, իսկ մոտ 700-ը՝ խորհտնտեսություններում[104]։ Քաղաքաժինների թերթերին նվիրված առաջնորդողում, ընդգծելով մամուլի այս նոր օրգանների առջև դրված կարևոր խնդիրները և ամեն կերպ նրանց աջակցելու անհրաժեշտությունը (տպագրական հիմքի ստեղծում, կուսակցական-ժուռնալիստական կադրերի համալրում և այլն), «Պրավդա»-ն գրում էր. «ՄՏԿ-ի թերթը բոլշևիկյան մամուլի ամենաերիտասարդ ջոկատն է։ Այն պետք է լինի նրա ամենամարտա-

---

103 Նույն տեղում, 1936, № 131։

104 Տե՛ս «Партийная и советская печать в борьбе за построение социализма и коммунизма», էջ 259։

կան ջոկատը։ ՄՏ կայանի թերթերը պետք է բոլշևիկյան կրակի թերթիկները լինեն գյուղում, մի գնք՝ վերադաստիարակելու ու վերակառուցելու երեկվա միլիոնավոր մանր սեփականատերերի գիտակցությունը։ ՄՏ կայանի թերթերը պետք է սուր լինեն՝ ինչպես պրոլետարական դիկտատուրայի սլաքները, կենսալի՝ ինչպես մեր հաղթանակած պրոլետարական դատակարգի երիտասարդությունը, պայծառ՝ ինչպես մեր երկրի սոցիալիստական հոյակապ շինարարության երանգները»[105]։ Մաքսիմ Գորկին քաղաքաժինների թերթերի խմբագիրների խորհրդակցությունում այդ օրգանները դեպուկ կերպով անվանեց «մեծ ճշմարտության տարածողներ»[106]։

Հայաստանում 1933 թ. ընթացքում ստեղծվեցին ՄՏԿ քաղաքաժինների 8 թերթեր՝ Սարգարապատում՝ «Ստալինյան կոլխոզ»-ը (սա փաստորեն շարունակությունն էր նախորդ տարվանից հրատարակվող՝ ՄՏ կայանի կուսկոմի և բանկոմի օրգան «Հարվածային տրակտորիստ»-ի), Ստեփանավանում՝ «Կոլխոզի դիրքերում»-ը, Լենինականում՝ «Տրակտորիստ»-ը (մի քանի համարից հետո վերանվանվեց «Ստալինյան ուղի»), Ն. Ախտալում՝ «Քաղաքաժնի խոսք»-ը, Վաղարշապատում՝ «Կոլխոզ-ֆրոնտ»-ը, Ղամարլուում՝ «Բոլշևիկյան կոլխոզ»-ը, Մարտունիում՝ «Բոլշևիկ»-ը և Դավալուում՝ «Հարվածային կոլխոզնիկ»-ը։ «Կոլխոզի դիրքերում»-ը ուներ ռուսերեն, իսկ «Բոլշևիկյան կոլխոզ»-ը և «Հարվածային կոլխոզնիկ»-ը՝ ադրբեջաներեն բաժիններ։

Քաղաքաժինների թերթերը, որ լույս էին տեսնում շրջանային լրագրերի ծավալով (երբեմն էլ՝ ավելի փոքր) և անկանոն պարբերականությամբ (տասնօրյա, շաբաթը մեկ, եռօրյա, երբեմն նույնիսկ ամեն օր), քաղաքական-դաստիարակչական լայն աշխատանք ծավալեցին, օգնելով կուսակցական-տնտեսական մարմիններին՝ կոլտնտեսությունների ամրապնդման, բերքատվության բարձրացման, ագրոնոմների և գյուղատնտեսական տեխնիկայի արմատավորման գործում։ ՄՏԿ-ների թերթերը հանդիսանում էին քաղաքական ներգործության զորեղ միջոցներ։ Նրանցում տպագրված նյութերը կոնկրետ էին, մեծ մասամբ դիպուկ ու նպատակասլաց։ Քաղաքաժինների օրգաններում հաճախակի կարելի էր հանդիպել կարուկ գրված, թերությունները խարազանող թղթակցությունների,

---

105 «Правда», 1933, № 191.

106 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933, № 201։

ահազանգերի, հակիրճ ու փաստալից ինֆորմացիաների։ Հնարավորության դեպքում դեռևս գոյություն էին նաև հազորդագրություններ միջազգային կյանքի, կոլեկտիվացման ասպարեզում մյուս հանրապետություններում ձեռք բերված նվաճումների վերաբերյալ։ Քաղբաժինների թերթերն օգնում էին պատի լրագրերի և «Իլլիչովկա»-ների հրատարակմանը տեղերում, դասախոսակում-պատրաստում էին թղթակիցների նոր կադրեր։ Խմբագրությունները հրատարակում էին արտահերթ կայծակ-համարներ, շրջիկ-թերթիկներ, հետևում էին բացահայտված թերությունների վերացման ընթացքին, տպագրում «Կարմիր տախտակ»-ներ՝ լավագույն աշխատողներին խրախուսելու համար։

Չնայած որոշ թերություններին (տեղ-տեղ՝ չափազանց խիստ տոն, շտապված-չճշտված նյութերի հրապարակում, լեզվա-ոճական անհարթություններ և այլն), ՄՏԿ քաղբաժինների թերթերը պատվով կատարեցին իրենց վերապահված կարևոր դերը։ Հայաստանում այդ թերթերի հրատարակմանը ակտիվորեն, իբրև խմբագիրներ, մասնակցեցին Մ. Ենգիբարյանը, Ի. Հասրաթյանը, Ա. Մալխասյանը, Գ. Նազարյանը, Ս. Նալբանդյանը, Ա. Ստեփանյանը, Ռ. Վելիբեկովը, Ա. Օհանյանը, Վ. Օհանյանը և ուրիշներ։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. նոյեմբերյան պլենումը, ընդգծելով, որ ՄՏԿ քաղբաժինները բացառիկ կարևոր դեր խաղացին գյուղում առկա թերությունները վերացնելու գործում, լիովին արդարացրին իրենց և սպառեցին իրենց առջև դրված հարվածային խնդիրները, որոշեց քաղբաժինները վերածել արտադրական-տերիտորիալ հատկանիշներով գործող սովորական կուսակցական կազմակերպություններ։ Մամուլի վերաբերյալ կետում նշված էր, որ ՄՏԿ քաղբաժինների թերթերը նոր կազմակերպվող շրջաններում, նայած շրջանային թերթերի վիճակին, կա՞մ պետք է միացնել շրջանային թերթերին, կա՞մ շարունակել հրատարակել՝ իբրև առանձին հզոր ՄՏԿ-ների օրգաններ[107]։ 1934 թ. վերջերից մեր հանրապետությունում ևս քաղբաժինների թերթերը միաձուլվեցին շրջանային մամուլի օրգաններին։

Կարևոր դեր կատարեցին նաև խորհտնտեսությունների քաղբաժինների թերթերը, որոնք Հայաստանում ասպարեզ իջան հիմնականում 1934 թ. մարտ-ապրիլ ամիսներին։ Ուշագրավ է, որ եթե ամբողջ խորհրդային Միության մեջ ՄՏԿ քաղբաժինների թերթե-

107 Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս III, էջ 332։

.ը թվով երեք անգամ շատ էին խորհրդատեսությունների քաղաքաժինների տպագիր օրգաններից, ապա ՀՍԽՀ-ում վերջինները նույնիսկ ավելի էին առաջիններից. այստեղ հրատարակվում էին խորհրդատեսությունների քաղաքաժինների 9 անուն թերթեր. «Անասնապահության մարտական դիրքերում» (Բաղարշայի խորհրդատ.), «Հարվածային անասնապահ» (Սեմյոնովկա), «Սովխոզ-ֆրոնտ» (նախ՝ Սուլթանաբադի, հետո՝ Շուրապատի խորհրդատ.), «Բոլշևիկ անասնապահ» (Լոռու ցեղային անասնապահ. խորհրդատ.), «Սոցիալիստական ոչխարաբուծություն» (Ալագյազ), «Հարվածային ոչխարաբույծ» (Արազդայան), «Ճակնդեղի ֆրոնտում» (Լենինական), «Բոլշևիկյան ուղի» (Յանըզ), «Հարվածային անասնապահ» (Նոր Բայազետ, հետո՝ «Ագրիջայի սովխոզ» Մարտունիում)։

Խորհրդատեսությունների քաղաքաժինների թերթերը ուշադրության կենտրոնում էին պահում աշխատանքային կարգապահության ամրապնդման, սոցիալիստական մրցության ծավալման, աշխատանքի կազմակերպման առաջավոր մեթոդների արմատավորման, սոցիալիստական սեփականության հավիտենականության դեմ պայքարելու հարցերը։ Զգալի տեղ էր հատկացվում խորհրդատեսությունները բանվորական ուժով ապահովելու, բանվոր-ծառայողների կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու խնդիրներին։ Մամուլի այս օրգանները նույնպես չունեին կայուն, որոշակի պարբերականություն. լույս էին տեսնում և՛ իբրև եռօրյա, և՛ շաբաթը մեկ, և՛ տասնօրյա, և՛ ամիսը երկու անգամ՝ ըստ հնարավորության և նայած խորհրդատեսությունում ծագած հրատապ հարցերին։ Ծավալը նույնպես փոքր էր (2—4 էջ 27×17, կամ 41×29 սմ)։ Մի քանի թերթեր պետեղում էին ռուսերեն, ադրբեջաներեն կամ քրդերեն նյութեր, իսկ Սեմյոնովկայի «Հարվածային անասնապահ»-ը որոշ ժամանակ լույս էր տեսնում նաև ռուսերեն և ադրբեջաներեն հրատարակությամբ։

Խորհրդատեսությունների քաղաքաժինների տպագիր օրգանների կազմակերպման ու հրատարակման գործում զգալի ջանք ու եռանդ ներդրին քաղաքաժինների պետերը և տեղակալները, որոնք երբեմն խմբագիրներ էին հանդիսանում, ինչպես նաև այդ նպատակի համար մոբիլիզացված կուսակցականներն ու երիտասարդ ժուռնալիստները (Ա. Բարսեղյան, Վ. Բզնունի, Գ. Դադումյան, Զ. Դպիրյան, Բ. Հարությունյան, Մ. Մարկոսյան, Ար. Մնացականյան, Լ. Մելքումյան, Ա. Մուրադյան, Աբր. Պետրոսյան, Հ. Պողոսյան և ուրիշներ)։

1934 թ. մայիսի 18-ին և 1935 թ. փետրվարի 15-ին Երևանում տեղի ունեցավ մամուլի աշխատողների և թերթերի խմբագիրների հանրապետական երկու խորհրդակցություն: Առաջին խորհրդակցությունում «Համկ(բ)կ XVII համագումարի որոշումները և մամուլի անելիքները» զեկուցումով հանդես եկավ Ա. Գուլոյանը: XVII համագումարի որոշումների մասսայականացման ու կենսագործման և այդ հիման վրա շրջանային մամուլի աշխատանքները վերակառուցելու ընթացքի մասին հաղորդումներ արեցին Ստ. Կուրտիկյանը, Բ. Շահումյանը, Ս. Դանիելյանը և Ս. Նալբանդյանը:

Երկրորդ խորհրդակցությունում քննարկվեց հոդժողկոմ Վ. Մամիկոնյանի զեկուցումը գարնանացանի հաջող նախապատրաստման և այդ ուղղությամբ շրջանային մամուլի անելիքների մասին: Ելույթներում զգալի տեղ հատկացվեց խմբագրությունների աշխատողների գաղափարական-պրոֆեսիոնալ պատրաստականության բարձրացման հարցերին:

* * *

Այսպիսով, մեր հանրապետության պարբերական մամուլը ամենուն ջանքեր գործադրեց գյուղի սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ. քննադատելով աջ-օպորտունիստական տեսակետները, թերթերն ու հանդեսները բարձրացնում էին կուլակության դեմ պայքարն ուժեղացնելու, բատրակների մեջ տարվող աշխատանքը բարելավելու, գյուղական ակտիվի ուժերը համախմբելու, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքն ամրապնդելու հարցերը, պայքարում ‹կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման համար: Պետք է նշել, սակայն, որ մամուլը ևս զգալի տուրք տվեց կոլեկտիվացման գործում կուսակցության դեմ կատարված խոտորումներին, «ձախ»-բյալլագյոզական սխալներին: Կուսակցության համապատասխան որոշումներից հետո պարբերականներն ուղղեցին իրենց թույլ տված սխալները և ակտիվորեն ձեռնամուխ եղան շեղումների վերացմանը, նպաստելով կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդմանը:

ԳԼՈՒԽ III

ՊԱՅՔԱՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Երկրորդ հնգամյա պլանի պրոպագանդան մամուլում: Արդյունաբերական և բաղամային նոր պարբերականներ. «Բանվորական Երևան», «Հարվածային բանվոր», «Երևանի բանվոր», «Խորհրդային Հայաստան»-ի Երեկոյան հրատարակությունը: «*Коммунист*» թերթը: Մամուլի պայքարը սոցիալիստական մրցության հետագա ծավալման համար արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ. հարվածային և ստախանովյան շարժումը. մամուլի փոխադարձ մրցաճրավերը, արձագանքներ «Պրավդա», «Վիշկա», «Նևի-Յոլ», «Իզվեստիա» թերթերի մրցականչերին: Երկրորդ հնգամյակի արդյունքների գնահատումը պարբերական մամուլում:

1

Առաջին հնգամյակի ավարտական տարվա հենց սկզբին՝ 1932 թ. հունվարին Համկ(բ)կ XVII կոնֆերանսն ընդունեց դիրեկտիվներ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլան կազմելու վերաբերյալ: Այս նոր պլանը, որի հիմնական խնդիրը ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումն էր և կապիտալիստական տարրերի վերջնական լիկվիդացումը, համաժողովրդական քննարկումից հետո հաստատվեց Համկ(բ)կ XVII համագումարում՝ դառնալով գործունեության ու պայքարի մարտական ծրագիր մեր հայրենիքի բոլոր աշխատավորների համար:

1932 թ. կեսերից Հայաստանում սկսվեց հանրապետության ժողտնտեսության զարգացման 2-րդ հնգամյա պլանի քննարկումը, որին ակտիվորեն ձեռնամուխ եղավ նաև պարբերական մամուլը: «Միայն աջ օպորտունիստները կարող են անտեսել երկրորդ հնգ-

դամյակի պլանները կատարելու գործի մեջ պրոլետարական մասսաների ունեցած մասնակցության խոշոր նշանակությունը, ենթադրել, որ դա լոկ Պետպլանի գործն է»[1],— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը: «Որքան ավելի լայն քննարկվի 2-րդ հնգամյակի պլանը,—նշում էր թերթը մի այլ առաջնորդողում[2],— այնքան ավելի կատարելագործված, տեխնիկապես հիմնավորված կլինի, միլիոնների փորձով հագեցված կլինի նա»: Ըստ որում՝ առանձնակի կարևորություն էր տրվում քննարկման ընթացքում աշխատավորական կոլեկտիվների արած առաջարկությունների լրիվ հաշվառմանն ու մանրամասն ուսումնասիրմանը, մի հանգամանք, որը կօգներ «էլ ավելի լրիվ երևան հանելու և ռացիոնալ օգտագործելու մեր երկրի հնարավորությունները՝ սոցիալիզմի կառուցման թափն էլ ավելի արագացնելու համար»:

1932 թ. հուլիսի 20-ից ՀԱՄԽ-ի, Պետպլանի և «Խորհրդային Հայաստան» թերթի նախաձեռնությամբ հանրապետությունում անցկացվեց Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման 2-րդ հնգամյա պլանի քննարկման միամսյակ, որի ընթացքը լայնորեն լուսաբանվում էր մամուլում՝ աշխատավորական կոլեկտիվների ժողովների վերաբերյալ ինֆորմացիաներում, ռեպորտաժներում և այլ նյութերում: Բացի այդ, թերթում լույս տեսան ինչպես տնտեսության առանձին ճյուղերի, այնպես էլ կոնկրետ գործարանների, կառույցների ու ձեռնարկությունների զարգացման հեռանկարներին, նախատեսվող կապիտալ ներդրումների իրացման ուղիներին նվիրված հոդվածներ, ընդարձակ բնութագրումներ, հարցազրույցներ, առաջարկություններ ու նկատառումներ: Միաժամանակ մամուլը խնդիր էր դնում այնպես կազմակերպել գործը, «որպեսզի հունվարի մեկին յուրաքանչյուր բրիգադ, յուրաքանչյուր բանվոր, անցնելով աշխատանքի, պարզ կերպով իմանա իր պարտականությունները, ամսական, տասնօրյա, օրական պլանները»[3]: Պարբերական մամուլը հետևողական աշխատանք ծավալեց կենսագործելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմի այն ցուցումը, որի համաձայն 1932 թ. դեկտեմբերի 20-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 5-ը հայտարարված էր «Առաջին հնգամյակի պլանների կատարումն ամփոփելու և երկրորդ հնգամյակը դիմավորելու կիսամսյակ»:

---

1 «Խորհրդային Հայաստան», 1932, № 134:

2 Տե՛ս նույն տեղը, № 167:

3 Նույն տեղում, № 280:

Հանրապետության աշխատավորները, ոգևորված առաջին հնգամյակի արդյունքներով, ձեռնամուխ եղան 2-րդ հնգամյա պլանի առաջադրանքների կատարմանը: Պարբերական մամուլը ոչ միայն լուսաբանում էր նրանց հերոսական աշխատանքի, այլև օգնություն էր հասցնում նաև մնացող տեղամասերին, բացահայտում աշխատանքի կազմակերպման, նյութերի մատակարարման, աշխատուժի նպատակահարմար օգտագործման մեջ եղած թերությունները, աջակցում դրանց շուտափույթ հաղթահարմանը: Առաջվա պես մամուլի օրգանները մեծ ուշադրություն էին դարձնում աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման հարցերին, իրենց խրախուսիչ ու քննադատական ելույթներով նպաստում սոցիալիստական մրցության հետագա ծավալմանն ու խորացմանը, նրա նոր ձևերի՝ իզուտովյան և ստախանովյան շարժման արմատավորմանը հանրապետությունում:

Այս տեսակետից զգալի դեր կատարեցին նաև այն նոր պարբերականները, որոնք կյանքի կոչվեցին նոր խնդիրների թելադրանքով և դատարկելով արդեն հրապարակի վրա եղածներին՝ ավելի ընդգծեցին ու ամրոզջացրին մամուլի աշխատանքը երկրորդ հնգամյակի՝ անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման հնգամյակի կենսագործման համար մղված համաժողովրդական պայքարում:

1933 թ. ապրիլի 6-ից սկսեց լույս տեսնել ՀԿ(բ)Կ Երևանի քաղկոմի և քաղխորհրդի օրգան «Բանվորական Երևան»-ը[4], որը լուսաբանում էր հանրապետության մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում, նորակառույցներում ծավալված աշխատանքները, անդրադառնում քաղաքային տրանսպորտի, բուժհիմնարկների, ուսումնական հաստատությունների, դպրոցական գործի, կուլտուրայի օջախների բարելավման հարցերին, պատշաճ ուշադրություն նվիրում քաղաքաշինության, կենցաղային սպասարկման, քաղաքի մաքրության խնդիրներին. մի խոսքով՝ իր բնույթով և ընդգրկման շրջանակներով տիպիկ քաղաքային թերթ էր, որն իր ակտիվ միջամտությամբ դալիս էր աջակցելու Երևանի՝ իբրև սոցիալիստական Հայաստանի մայրաքաղաքի՝ ձևավորմանն ու տրադիցիաների արմատավորմանը: Թերթը պարբերաբար տպա-

---

4 «Բանվորական Երևան»-ը օրաթերթ էր: Պատ. խմբագիր Ստ. Կուրտիկյան, ապա՝ Տ. Խորունի: Հրատարակվել է մինչև 1934 թ. մայիսի 4-ը, ընդամենը 321 համար:

գրում էր նաև գրական նյութեր, արվեստին նվիրված հոդվածներ, կենցաղային և այլ թեմաներով գրված ֆելիետոններ, ծաղրանկարներ, որոնք զգալի հետաքրքրություն էին հարուցում ընթերցող լայն շրջաններում: Թերթի աշխատանքների առանցքը, սակայն, արդյունաբերության հարցերն էին:

«Բանվորական Երևան»-ը խորամուխ էր լինում գործարանների ընթացիկ աշխատանքի մեջ, հետևում պլանների կատարմանը, արտադրանքի որակի բարելավմանը, արտադրողականության բարձրացմանը, սոցմրցմամբ ստանձնած պարտավորությունների կենսագործմանը: Թերթի էջերում բանվորները բարձրացնում էին իրենց ձեռնարկությանը հուզող հարցեր («Նամակներ խմբագրության» բաժինը): Գրշի թույնով խորագրի ներքո տպագրվում էին քննադատական փոքրիկ հոդվածներ, ռեպլիկներ, ահազանգումներ: «Կառուցվող Երևանում» բաժնում թերթը նկարագրական հոդվածներով, ռեպորտաժների, հանդամանալից թղթակցությունների միջոցով լուսաբանում էր ինչպես արդյունաբերական ձեռնարկությունների, այնպես էլ կուլտուրայի օջախների կառուցման, բնակարանային շինարարության ընթացքը:

Խմբագրության աշխատանքի գնահատման տեսակետից բնորոշ է այն փաստը, որ թերթի առանձին բաժիններ իրենց աշխատավայրը հրբեմն տեղափոխում էին արտադրական կոնկրետ ձեռնարկություններ: Այսպես՝ 1933 թ. մայիս ամսին «Կուսակցական և արտադրական բաժին»-ը աշխատում էր Երևանի տպարանում, ձեթ-օճառ և կարբիդի գործարաններում՝ նպատակ ունենալով կոնկրետ օժանդակություն ցույց տալ կուսակցամակերպությունների գործունեության վերակառուցմանն ու պլանների կատարմանը: «Բանվորական Երևան»-ի Շրջիկ խմբագրությունը հինգ անգամ եղավ Երևան—Քանաքեռդեպ երկաթգծի կառուցման վայրում[5]: Թերթը ռեյդ կազմակերպեց՝ ստուգելով քաղաքում տարվող շինարարական աշխատանքների ընթացքը[6]:

Այս ամենը նպաստում էր նաև տեղերում բանթղթակցային շարժման աշխուժացմանը: Առհասարակ «Բանվորական Երևան»-ը լուրջ ուշադրություն էր դարձնում այդ հարցին, նպատակային հոդվածներ, նամակներ ու կոչեր տպագրելուն զուգընթաց՝ կազմակերպելով նաև թղթակիցների խորհրդակցություններ առանձին

---

5 Տե՛ս «Բանվորական Երևան», 1933, №№ 34, 39, 44, 54, 97:

6 Տե՛ս նույն տեղը, № 86:

գործարաններում. բացի այդ, 1933 թ. հոկտեմբերի 1-ից մինչև տարեվերջ խմբագրությունն անցկացրեց գործարանային պատի թերթերի համաքաղաքային կոնկուրս՝ սահմանելով չորս մրցանակային պարգևներ[7]։

1933 թ. ապրիլի 26-ից «Բանվորական Երևան»-ում բացվեց Երևանը պետք է նանաչի իր հերոսներին ընդհանուր խորագրով նոր բաժինը, որին բնաբան էր ընտրված «Պրավդա»-ի առաջնորդողից վերցված հետևյալ կոչը. «Սոցիալիստական մրցության տարեգարձին, մայիսմեկյան օրերին, վահանի վրա բարձրացնենք տեխնիկան յուրացնող հերոսներին։ Վահանի վրա բարձրացնենք առաջավոր հարվածայիններին, խոտանի դեմ մղվող պայքարի հերոսներին, աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման հերոսներին, լոզերների ու գործալիքների դեմ մղվող պայքարի հերոսներին։ Դարձնե՛նք նրանց անունները հարգելի, պատվավոր ու սիրելի մեր երկրում, նրանց փորձով դիմենք պրոլետարների ու կոլտնտեսականների միլիոնավոր մասսաներին»։ Կատարելով «Պրավդա»-ի պահանջը, թերթը պարբերաբար, գրեթե յուրաքանչյուր համարում, տպագրում էր արտադրության առաջավորների կյանքին ու հատկապես աշխատանքային գործունեությանը նվիրված ակնարկատիպ բնութագրություններ, զետեղելով նաև նրանց լուսանկարները։ Հարվածայիններին դրվատելու և խրախուսելու տեսակետից ուշագրավ էր նաև Համ(ր)կ XVII համագումարի անվան կարմիր տախտակ խորագրով ենթաբաժինը, ուր զետեղվում էին առաջավոր բանվորների ինքնահաշվետվությունները, մասսայականացվում էր նրանց աշխատանքի փորձը։

Հիշատակության արժանի գործ կատարեց «Բանվորական Երևան»-ը մասնավորապես Կաուչուկի գործարանի և Երևան—Աղստաֆա երկաթգծի կառուցմանն օժանդակելու առումով։ 1933 թ. հոկտեմբերի 27-ից թերթում զետեղվում էին «Կաուչուկի ֆրոնտում», իսկ նոյեմբերի 4-ից՝ «Երևան—Աղստաֆա» խորագրով էջերը[8], որոնց միջոցով խմբագրությունն ամենօրյա հսկողություն

---

7 Տե՛ս նույն տեղը, № 151։

8 «Կաուչուկի ֆրոնտում»-ը համարվում էր գործարանի շինարարության գլխավարչության, կուսկոլյուրոյի և բանկոմի օրգանը. այս էջը թերթում զետեղվել է 22 անգամ՝ մինչև հաջորդ տարվա ապրիլի 10-ը։ «Երևան—Աղստաֆա» էջը երկաթգծի շինարարության վարչության կուսբջջի և բանկոմի օրգանն էր, շտաբով վերանվանվեց «Երկաթե ուղիներով». լույս է տեսել 19 անգամ՝ մինչև 1934 թ. ապրիլի 3-ը։

էր սահմանել ժողովրդա-տնտեսական կարևորագույն նշանակություն ունեցող այդ կառույցների շինարարության պլանների կատարման ընթացքի վրա և բանթղթակիցների ակտիվ մասնակցությամբ բացահայտում էր ամենափոքր թերություններն անգամ, նպաստելով աշխատանքի որակի բարելավմանն ու արտադրողականության բարձրացմանը, աշխատուժի ճիշտ օգտագործմանը, պարապուրդների վերացմանը։

* * *

«Բանվորական Երևան»-ի հետ գրեթե միաժամանակ, 1933 թ. ապրիլի 23-ից իր հրատարակությունն սկսեց ՀԱՄԽ-ի և արհմիությունների կենտրոնական վարչությունների օրգան «Հարվածային բանվոր» երկօրյա թերթը[9]։ Սոցիալիստական մրցման ծավալում՝ հանուն 2-րդ հնգամյակի հաջող կատարման, իզոտովյան շարժման արմատավորում, նոր տեխնիկայի տիրապետում, աշխատաժամանակի ռացիոնալ օգտագործում, պրոֆկազմակերպությունների ակտիվացում, բանվորների հանգստի, սննդի, կուլտուր-կենցաղային սպասարկման բարելավում, արդյունաբերական և շինարարական առանձին ձեռնարկությունների ներքին կյանքի լուսաբանում, վերջապես՝ արտադրության առաջավորների փորձի մասսայականացում,— ահա այն հիմնական խնդիրները, որոնց պարբերաբար անդրադառնում էր թերթը համապատասխան բաժիններում՝ օգտագործելով լրագրային տարբեր ժանրեր, նյութերի մատուցման բազմազան ձևեր։ Արտադրանքի որակի, պլանների կատարման, աշխատանքային կարգապահության հարցերը մեծ մասամբ քննարկվում էին առաջնորդողներում ու հանդամանալից հոդվածներում. սոցիալիստական մրցումը ծավալելու նպատակով տպագրվում էին կոչեր, փոխադարձ մրցակցելու. արտադրության առաջավորները խրախուսվում էին ՀԱՄԽ-ի և թերթի սահմանած հանրապետական «Կարմիր տախտակ»-ում, վատ աշխատող պրոֆկազմակերպությունների անունները գետեղվում էին «Սև տախ-

---

9 «Հարվածային բանվոր»-ը մինչև մայիսի 29-ը ուներ Բանվորական մասսայական թերթ հնչանվանումը։ Պատ. խմբագիրն է եղել Հմայակ Սիրասը (Ոսկանյան)։ Թերթն ստորագրել են նաև Մ. Մարկոսյանը (պատ. խմբագրի տեղակալ) և Հ. Հայկազունին (ի տեղի պատ. խմբագրի)։ Հրատարակվել է մեկ տարի՝ մինչև 1934 թ. ապրիլի 22-ը, ընդամենը 151 համար։

տակ»-ի սյունակներում. կենցաղային և կուլտուրական սպասարկման թերությունները քննադատվում էին էդ. Խոճիկի, Ան. Մխիթարյանի, Վարդ Կամսարի, Աշփալի և ուրիշների ֆելիետոններում. արտադրության պրոցեսը դանդաղեցնող կամ խաթարող երևույթների վրա թերթն ուշադրություն էր հրավիրում Մենք անազանգում ենք խորագրի ներքո հրապարակվող հակիրճ և դիպուկ թղթակցություններով. աշխատավորությանը հուզող բազմաթիվ հարցեր են բարձրացված Բանվորական նամակներից, Մեզ գրում են բաժիններում։

Խմբագրությունը պարբերաբար տեղեկացնում էր ընթերցողներին, թե ի՞նչ հետևանք են ունեցել թերթի քննադատական ելույթները, ի՞նչ միջոցառումներ են մշակվել տեղերում հայտնաբերված թերությունները վերացնելու համար. հաճախակի երևում էր նաև Անտիպ թղթակցության ներքո խորագիրը։ Այս բոլորից բացի, թերթը տպագրում էր միջազգային կյանքի տեսություններ, կապիտալի երկրներում տեղի ունեցող գործադուլային շարժմանը նվիրված հաղորդումներ (Քաղաքական շաբաթ, Կարմիր գծից դուրս բաժինները)։

Առանձնապես հարկ է նշել «Հարվածային բանվոր»-ի Շրջիկ խմբագրության աշխատանքը՝ կոնկրետ ձեռնարկություններում պլանների կատարման ընթացքը լուսաբանելու և թերակատարումների պատճառները հայտնաբերելու գործում։ Շրջիկ խմբագրությունը եղավ Ալավերդու լենինյան հանքերում, Շամլուղում, գրանիտի և ծխախոտի գործարաններում, 3-րդ սովխոզում, Լենինականի տեքստիլ գործարանում ու դեպոյում։ Խմբագրության աշխատակիցների և տեղի թղթակիցների ուսումնասիրության արդյունքները և կոնկրետ առաջարկությունները տպագրվում էին թերթում՝ զբաղեցնելով նրա մեկ կամ երկու էջը[10]։ 1934 թ. «Հարվածային բանվոր»-ում մի քանի անգամ առանձին բաժին հատկացվեց Սոցիալիստական նամապարհաշինարարություն խորագրով էջերին, որ տպագրվում էր իբրև Երկաթգծի և ճանապարհաշինարար բանվորների արհմիության կենտրոնական վարչության օրգան։

«Հարվածային բանվոր»-ը «Вышка» թերթի խմբագրությունից ստացավ և 1933 թ. հունիսի 1-ի համարում հրապարակեց Բաքվի Ձերժինսկու անվան գործարանի հարվածայինների նամա-

---

10 Տե՛ս «Հարվածային բանվոր», 1933 N՝ 44, 45, 46, 50, 63, 92, 95։

կը՝ ուղղված Հայաստանի բոլոր բանվորներին։ Նրանում առաջարկվում էր կիրառել փականագործ Վղովինի նախաձեռնությունը (դագաղը հերթափոխին հանձնել՝ առանց աշխատանքն ընդհատելու) և Իգնատովի օրինակով առաջավորների շուրջը համախմբել նա մնացողներին։ «Հարվածային բանվոր»-ը «Վիշկա»-ին ուղարկած պատասխանում հավատիացնում էր, որ Հայաստանի պարբերական մամուլը ինչպես հարկն է կմասնակցացնի Իգնատովի և Վղովինի փորձը։ Այդ նպատակով խմբագրությունը հատուկ կոչով դիմեց «Բանվորական Երևան»-ին, «Ավանգարդ»-ին, «Արդյունաբերական կոոպերացիա»-ին, «Սոցդյուգ»-ին, «Բանվոր»-ին, ինչպես նաև «Պղնձի ֆրոնտում», «Պայքար պղնձի համար», «Երկաթուղային», «Լենինագործ» և բոլոր մյուս շրջանային թերթերին՝ առաջարկելով սկսել լայն կամպանիա՝ աշխատանքի իգնատով-վղովինյան մեթոդը կիրառելու համար, աջակցել մեքենաների պարապուրդների ու արտադրանքի խոտանի վերացմանը։ «... Եկեք պայքարենք տեխնիկայի յուրացման համար՝ Իգնատովի, Վղովինի ձևով,— կոչ էր անում խմբագրությունը։— Պայքարենք արտադրական պրոցեսի կազմակերպման լավագույն ձևի համար։ Պայքարենք ընկերական փոխադարձ օգնության համար՝ արտադրական պրոցեսում։ Եկեք պայքարենք կազմակերպված՝ բարձրորակ աշխատանքի համար՝ թե՛ քաղաքում, թե՛ գյուղում»։ «Հարվածային բանվոր»-ը առաջարկում էր խմբագրությունների նախաձեռնությամբ անցկացնել «Իգնատովյան-Վղովինյան ռեյդ-արշավներ» արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, արդիֆիցիրանների կատարման ասպարեզում առկա ճեղքվածքները վերացնելու նշանաբանով կազմակերպել Երևան—Լենինական և Ալավերդի—Ղափան մրցումը, մի դեպքում՝ «Բանվորական Երևան» ու «Բանվոր», մյուս դեպքում՝ «Պղնձի ֆրոնտում» և «Պայքար պղնձի համար» թերթերի ակտիվ օժանդակությամբ[11]։

Վերոհիշյալ պարբերականների խմբագրությունները անմիջապես արձագանքեցին կոչին և ձեռնամուխ եղան կոնկրետ աշխատանքի։ ՀԱՄԽ-ի նախագահությունը բարձր գնահատեց «Հարվածային բանվոր»-ի այդ նախաձեռնությունը[12]։

«Հարվածային բանվոր»-ը Խորհրդային Միության առաջին բանվորական թերթերից մեկն էր, որ արձագանքեց Մոսկվայի է-

---

11 Տե՛ս «Հարվածային բանվոր», 1933, № 12։

12 Տե՛ս նույն տեղը, № 14։

լիկարագործարանի հարվածայինների՝ հերթափոխության ամբողջ 420 րոպեն լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատելու նախաձեռնության առթիվ «Պրավդա»-ի այն կոչին, թե՝ «Աշխարհում ամենակարճ բանվորական օրը սոցիալիզմի երկրում կարող է և պե՞տք է ամենաարտադրողական բանվորական օրը լինի»[13]։ «Պրավդա»-ն իր խմբագրականով նորից մարտական խնդիր է դնում մեր առաջ,— գրում էր «Հարվածային բանվոր»-ը,— այն է՝ բոլշևիկորեն լծվել պլանների կատարման աշխատանքներին՝ լրիվ օգտագործելով 7-ժամյա բանվորական օրը։ Անհրաժեշտ է, որ մեր բոլոր գործարհկոմները անմիջականորեն զբաղվեն այս հարցով»։ Թերթն առաջարկեց հանրապետության այնպիսի խոշոր ձեռնարկություններում, ինչպիսիք էին կարբիտի, մեխանիկական, ծխախոտի գործարանները, Լենտեքստիլը, Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը՝ յուրաքանչյուր բրիգադում առանձին-առանձին քննության առնել, թե ինչպես են օգտագործվում աշխատանքային ժամերը, մանավանդ որ՝ «քիչ չեն դեպքերը,— նկատում էր թերթը,— երբ հաճախ որևէ գործիքի պակասության պատճառով բանվորն ստիպված է վազվզել գործարանի մի ծայրից մյուսը և իզուր ժամանակ վատնել, և կամ ցեխերը, ժամանակին այս կամ այն անհրաժեշտ նյութերը չստանալու հետևանքով՝ կանգ են առնում. պետք է վճռականորեն վերջ տալ նման երևույթներին»[14]։

«Հարվածային բանվոր»-ը ակտիվորեն մասնակցեց Անդրֆեդերացիայի մայրաքաղաքների բարեկարգման համար Բաքվի, Թիֆլիսի և Երևանի միջև ծավալված սոցիալիստական մրցությանը, որը սկսվեց Թիֆլիսի քաղխորհրդի նախաձեռնությամբ։ Ի դեպ՝ Երևանը օրինակելի խորհրդային քաղաք դարձնելու համար խորագրի ներքո քաղաքաշինության հարցերին պարբերաբար անդրադառնում էր նաև «Հարվածային կառուցող» տասնօրյա բանվորական բազմատիրաժ թերթը[15]։

* * *

ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ «Բանվորական Երևան»-ի և «Հարվածային բանվոր»-ի փոխարեն 1934 թ. մայիսի 5-ից սկսեց

---

13 «Правда», 8 сентября 1933 г.

14 «Հարվածային բանվոր», 1933, № 55։

15 «Հարվածային կառուցող»-ը Հայկենտշինի կուսկոլլեկտիվի և արդկոմունակշինի արհմիության կենտվարչության օրգանն էր։ Հրատարակվել է 1931 թ. հոկտեմբերի 29-ից մինչև 1933 թ. ապրիլի 8-ը։ Պատ. խմբ.՝ Ս. Նալբանդյան։

հրատարակվել «Երևանի բանվոր» թերթը[16]։ Այս նոր պարբերականը լինելու էր կենտրոնական բանվորական լրագիր, ուստի և վերահիշյալ որոշման մեջ Կենտկոմը անհրաժեշտ համարեց արդյունաբերական շրջաններում (Լենինական, Ղարաբիլիսա, Ալավերդի, Ղափան, Արթիկ-ուսֆ) ունենալ թերթի մշտական թղթակիցներ։

Շարունակելով նախորդների գործը, «Երևանի բանվոր»-ը նրանցում արծարծված խնդիրներից դատ, մեծ տեղ էր տալիս նաև արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի արմատավորման, աշխատավորության կուլտուրական հանդստի կազմակերպման, տեսարի բարելավման հարցերին. բացի այդ, տպագրում էր արդյունաբերական թերթում ունեցող շրջանային լրագրերի ու գործարանային պատի թերթերի տեսություններ, ուներ «Խորհրդային միություն», «Խորհրդային Հայաստանում» և «Վերջին ժամ» ինֆորմացիոն բաժինները։

«Երևանի բանվոր»-ը առաջադրեց յուրաքանչյուր գործարանում հեռագրատական բյուրո, կոնտրոլտորական լաբորատորիա ստեղծելու պահանջը, գտնելով, որ դրանք կոչված են դառնալու «գործարանի կուլտուրական կառավարման կարևոր լծակները»։ Դա բխում է արտադրանքի որակը բարձրացնելու այն ցուցումներից, ընդգծում էր թերթը, որ ավելց կուսակցության XVII համագումարը։ «Գործարանի պատվի համար, նրա մարկայի փառքի համար» խորագրով առաջնորդողում թերթը միանգամայն ճիշտ և հատկանշական էր գտնում այդ առթիվ խմբագրության ուղարկած հարցաթերթիկներին մի շարք առաջավոր գործարանների դիրեկտորների տված այն պատասխանը, թե առանց բարձր որակի ապահովման՝ խոսք չի կարող լինել ձեռնարկության պատվի մասին, իսկ մարկայի փառքը «կդառնա շատ էժան ցուցանակ»։

Մի շարք հոդվածներում «Երևանի բանվոր»-ը քննադատեց այն ղեկավարներին ու գործարանների դիրեկտորներին, ովքեր մոռացության էին տալիս, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի բանվորների կուլտուր-կենցաղային պահանջների բավարարումը սոցիալիստական շինարարության հաջող իրականացման շահերի տեսակետից։ «Կուսակցությունը,— հիշեցնում էր թերթը,— վճռական հարված է տալիս բոլոր նրանց, ովքեր բանվորների կուլտ-կենցա-

---

16 «Երևանի բանվոր»-ը ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Երևանի կոմիտեի և ՀՍՄԽ-ի օրգանն էր. օրաթերթ, պատ. խմբագիր՝ Տ. Խորունի։ Տպաքանակը՝ 13000։ Հրատարակվել է ընդամենը 95 համար։

զային, ընակարանային, մատակարարման հարցերը հետին պլան են մղում, հակադրում են արտադրական պլանների կատարմանը, դրանով իսկ անուշադրության մատնելով այդ հարցերը»։ Թերթը «անուղղելի շաղակրատ» էր համարում ձեռնարկությունների այն պետերին, ովքեր «աղմկում են պլանների համար», «բազմահարկ ճառեր» են ասում, «հոչակ» հանած ռապորտներ են տալիս և այլն և «մոռանում են այնպիսի «հասարակ բան», թե որտե՞ղ է ապրում և ինչպե՞ս է ապրում իրենց բանվորը»[17]։

«Երևանի բանվոր»-ը դպրի շափով նպաստեց նաև գյուղի նկատմամբ բանվորական կոլեկտիվների ստանձնած շեֆական պարտավորությունների կատարմանը, այդ գործում նկատվող ձևական վերաբերմունքի հաղթահարմանը։ Գյուղի և կոլտնտեսության մասին կուսակցության XVII համագումարի որոշումները, ընդգծում էր թերթը, շեֆ կազմակերպություններից պահանջում են գործնականորեն աջակցել «բոլշևիկյան կոլտնտեսությունների ստեղծմանը, աճեցնել կոլտնտեսական նոր ակտիվ, կազմակերպել գյուղում մարքս-լենինյան դաստիարակության գործը, կոնկրետ, սիստեմատիկ զբաղվել շեֆարկյալ գյուղի ամեն մի հարցով (զբաղրոց, ռադիո, կոլտնտեսական ակումբ, գրադարան, պատի թերթ, կոոպերատիվ, կոլտնաշուկա և այլն)»[18]։

«Երևանի բանվոր»-ի վերջին համարում (1934 թ. օգոստոս 27) խմբագրությունը տեղեկացնում էր բոլոր բաժանորդներին և ընթերցողներին, որ սեպտեմբերի մեկից այս թերթի փոխարեն լույս է տեսնելու «Խորհրդային Հայաստան»-ի երևկոյան հրատարակությունը[19]։

Այս պարբերականը ևս, նախորդների պես, շարունակում էր ուշադրության կենտրոնում պահել արդյունաբերական մեծ ու փոքր ձեռնարկությունների աշխատանքի համակողմանի լուսաբանման, առաջավոր բանվորների փորձի տարածման, կոմունալ շինարարության հետագա ծավալման, քաղաքային տրանսպորտի բարելավման խնդիրները, դպրի տեղ հատկացնելով նաև մայրաքաղա-

---

17 «Երևանի բանվոր», 1934, № 9։

18 Նույն տեղում, № 20։

19 «Խորհրդային Հայաստան»-ի երևկոյան հրատարակությունը ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի և Երևանի քաղխորհրդի օրգանն էր. օրաթերթ. պատ. խմբագիր՝ Հովհ. Պողոսյան, իբրև խմբագրի տեղակալ թերթին ստորագրել են նաև Արտ. Բղնունին և Տ. Ալեքսանյանը։ Հրատարակվել է մինչև 1935 թ. վերջը, ընդամենը 398 համար։

քի կանաչապատման, փողոցների բարեկարգման հարցերին։ Պետք է նշել, որ «Խորհրդային Հայաստան»-ի երևանյան հրատարակությունը ավելի հետևողականորեն ու պարբերաբար էր անդրադառնում կուսակազմակերպությունների աշխատանքին, ընդհանրացնում էր քաղաքական-մասսայական և դաստիարակչական ասպարեզներում նրանց ձեռք բերած փորձը։ Նորություն էր և այն, որ թերթը Քաղաքներ ու տարիներ ընդհանուր խորագրի ներքո պարբերաբար զետեղում էր փոքրիկ զրույց-տեղեկանքներ ինչպես խորհրդային մյուս հանրապետությունների մայրաքաղաքների ու այլ խոշոր կենտրոնների, այնպես էլ կապիտալիստական երկրների քաղաքների մասին։ Այդ նյութերն ունեին որոշակի ճանաչողական արժեք և պատշաճում էին թերթի բնույթին։ Իբրև երևանյան հրատարակություն՝ թերթը, բնականաբար, չէր կարող անտեսել նաև գրականության ու արվեստի հարցերը. տպագրում էր ռեցենզիաներ քաղաքում ցուցադրվող կինոֆիլմերի, թատերական բեմադրությունների մասին, ընթերցողներին էր ներկայացնում գրականության և արվեստի գործիչներին՝ տպագրելով ոչ միայն նրանց ստեղծագործությունները, այլև յուրաքանչյուրի վաստակը բնութագրող հոդված-դիմանկարներ։ Բացի այդ, թերթի էջերում տեղ են գտել Ֆիրդուսուց, Հայնեից, Չեխովից, Մոպասանից, Օ' Հենրիից և այլ դասականներից կատարված թարգմանությունները։ Թերթն ուներ նաև «Վերջին հեռագրեր», «Սպորտ», «Ֆելիետոն», «Ֆոտո-մեղադրանք» բաժինները։ Բավական աշխույժ և լավ ձևավորված այս պարբերականն ստեղծեց երևանյան քաղաքային թերթի ուսանելի տրադիցիաներ։

* * *

Մեր հանրապետության պարբերական մամուլի պատմության մեջ ուշագրավ երևույթ էր «Коммунист» օրաթերթի հիմնադրումը[20]։ Այս նոր թերթը, որի առաջին համարը լույս տեսավ 1934 թ. հուլիսի 12-ին, գալիս էր նպաստելու այն խնդիրների կատարմանը, որ առաջադրել էր ՀամԿ(բ)Կ XVII համագումարը։ «Коммунист»-ը, նշված է «Մարտական գործողության մեջ դեմքը կուսակցության ամենասուր զենքը» խորագրով առաջնորդողում, լինելու է երկրորդ հնգամյակի կենսագործման համար Հայաստանի աշխատավորների

20 «Коммунист»-ը ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Երևանի կոմիտեի և ՀՍԽՀ Կենտգործկոմի օրգանն էր։ Առաջին խմբագիրն էր Ի. Գալկինը։

հերոսական ջանքերի արտահայտիչն ու կազմակերպիչը, օգնելու է անասնապահության զարգացմանը, կոլտնտեսությունների ամրապնդմանը, արդյունաբերական ձեռնարկությունների արտադրողականության բարձրացմանը, զաղափարական պայքարի ճիշտ կազմակերպմանը, աջակցելով «հաղթանակի հասնելու սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում». թերթը անխոնջ խարազանելու է «աշխատանքի բյուրոկրատական մեթոդների կիրառման մեջ մեղավորներին, որոնք խոչընդոտում են կուսակցության գլխավոր գծի անցկացմանը»[21]:

1934—1936 թթ. համարներում թերթը լուրջ ուշադրություն դարձրեց հանրապետության արդյունաբերական շինարարության, արտադրանքի որակի բարելավման, ծախսերի մշակության, խաղողագործության զարգացման հարցերին[22], մի շարք խմբագրականներ նվիրեց սոցիալիստական մրցության կազմակերպման, ստախանովյան շարժման ծավալման խնդիրներին[23]: Առաջավոր փորձը պրոպագանդելու և հարվածայիններին գրվատելու նպատակով խմբագրությունը բացեց Սոցիալիզմի մարդիկ խորագրով բաժինը: Թերթը հետևողականորեն հանդես էր գալիս ճանապարհաշինարարությանը, երկաթուղային տրանսպորտի բարելավմանը նվիրված հոդվածներով, թղթակցություններով, տպագրում էր աշխատանքի մարդկանց նամակներն ու նորարարական առաջարկությունները: Մամուլի տեսություններում «Коммунист»-ը արծարծում էր շրջանային թերթերի, մասնավորապես անասնապահական շրջանների պարբերականների մատուցակությունը բարձրացնելու խնդիրները:

Առանձնակի արժեք ունեին թերթի էլույթները ինքնաքննադատության ծավալման, զաղափարական դաստիարակության և կուսակցական-կազմակերպչական աշխատանքների որակի բարելավման վերաբերյալ: Ընդգծելով բոլշևիկյան քննադատության և ինքնաքննադատության լոզունգի կիրառման ասպարեզում մեր հանրապետությունում ձեռք բերված նշանակալից հաջողությունները, առաջնորդողներից մեկում «Коммунист»-ը նշում էր, որ, ցավոք սրտի, դեռևս կան կուսակցականներ, որոնք «կորցրել են բոլշևիկի հիմնական հատկանիշը՝ զգաստությունն ու համեստությունը, կրա-

---

21 «Коммунист», 1934, № 1:

22 Տե՛ս նույն տեղը, 1934, № 20, 1936, № 23 և այլն:

23 Տե՛ս նույն տեղը, 1936, №№ 2, 24, 56 և այլն:

րել են մասսաների հետ ունեցած կապերը, մի կողմ են նետել բոլշևիկյան աշխատանքի հիմնական մեթոդը՝ ինքնաքննադատությունը, կանգնելով վարչարարության, ինքնաքննադատության ճնշման ուղու վրա, մի ուղի, որ առնում է դեպի կապմարմնում, դեպի մենավարություն, դեպի միաձուլում խորթ տարրերի հետ»[24]:

Թերթի կուսշինարարության և պրոպագանդայի բաժնի նյութերում կենտրոնական տեղ էին բռնում կուսակցական կազմակերպությունների աշխատանքի ձևերի բազմազանության, մասսաների հետ կապերի ամրապնդման, կուսակցության անդամի պատասխանատվության, հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացման, գաղափարական կոփվածության հարցերը: «Լենինիզմի անխոնջ պրոպագանդա մղել» խորագրով առաջնորդողում[25] *Թերթը մի անգամ ևս հիշեցնում էր, որ Համկ(բ)կ XVII համագումարում ընդունված կուսակցության նոր կանոնադրությունը պարտավորեցնում է յուրաքանչյուր կուսակցականի՝ մշտապես հոգալ իր գաղափարական զինվածությունը բարձրացնելու մասին: «Կուսակցության ամեն մի անդամ,— գրում էր Թերթը,— պետք է տիրապետի մարքսիզմ-լենինիզմի հիմունքներին... Սկզբնական կուսակազմակերպությունը, նրա կուսակազմակերպիչը կամ կուսկոմը, կուսակցական բաղկոմներն ու շրջկոմները պարտավոր են հետաքրքրվել ոչ միայն կուսակցականներին ու անկուսակցական ակտիվի լավագույն մասին կուսդպրոցների ու խմբակների մեջ ընդգրկելու և անցկացվող պարապմունքների քանակն ավելացնելու, այլև ուսուցման որակի հարցերով»:*

«Коммунист»-ը պարբերաբար արծարծում էր բնակչության կենցաղ-սպասարկման, առողջապահության գործի կազմակերպման, ֆիզկուլտուրայի մասսայականացման հարցերը, անդրադառնում գրականության, կերպարվեստի, դիտության, թատրոնի ու երաժշտության խնդիրներին, լուսաբանում էր հանրապետության մշակութային կյանքը:

Ինչպես ճիշտ կերպով նկատում էր խմբագրությունը, «Коммунист»-ի *ասպարեզ գալով՝ «Հայաստանում մեկով ևս ավելացավ կոլեկտիվ ագիտատորների, պրոպագանդիստների ու կազմակերպիչների թիվը»*[26]:

---

24 «Коммунист», *1935, № 6։*

25 *Տե՛ս նույն տեղը. 1934, № 72։*

26 *Նույն տեղում, № 1։*

1933 թ. ընթացքում լայն ծավալ ստացավ սոցիալիստական մրցությունը գյուղատնտեսության մեջ։ Ամփոփելով հարվածային կոլտնտեսականների առաջին համամիութենական համագումարի հայտարարած՝ հանրապետությունների, երկրամասերի, մարզերի, շրջանների, խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների ու կոլտնտեսությունների համամիութենական մրցության առաջին փուլի արդյունքները, «Պրավդա»-ն կոչ արեց ավելի լայնորեն ներգրավել գյուղի աշխատավորներին բերքահավաքն անթերի ավարտելու և հացամթերումների պլանը հաջող կատարելու համար սկսված մրցության մեջ՝ սահմանելով համամիութենական «Կարմիր տախտակ»։ Կարևոր դեր վերապահելով պարբերական մամուլին, «Պրավդա»-ն «Սոցմրցումը գյուղում դարձնենք միլիոնավոր մասսաների գործ» խորագրով առաջնորդողում[27] նշեց թերթերի աշխատանքի մի ամբողջ ծրագիր։ «Համամիութենական մրցությունը հաջող ծավալելու համար,— գրում էր կուսակցության կենտրոնական օրգանը,— անհրաժեշտ է, որպեսզի ամբողջ բոլշևիկյան մամուլը՝ սկսած հանրապետական, երկրամասային ու մարզային թերթերից մինչև խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների քաղաքաթերթերի բազմատիրաժները, ամենախիստ վերահսկողություն և օպերատիվ ղեկավարություն հաստատի մրցության ասպարեզում»։ «Պրավդա»-ն առանձնապես օգտակար էր համարում մրցող հանրապետությունների, երկրամասերի ու մարզերի թերթերի միջև պարբերաբար, ամիսը երկու անգամ, կատարել այնպիսի էջերի փոխանակում, ուր ամփոփված լիներ բերքի պահպանության, բերքահավաքի և պետությանը հացահատիկ հանձնելու ասպարեզում ձեռք բերված դրական փորձը. «Փորձի փոխանակումը,— հիմնավորում էր թերթն իր առաջարկը,— սոցիալիստական մրցության անհրաժեշտ մի մասն է. չի կարելի մոռանալ, որ, ի տարբերություն բուրժուական մրցության, սոցիալիստական մրցության նպատակն է՝ ստեղծել ընդհանուր վերելք»։ «Պրավդա»-ն խորհուրդ տվեց նաև համամիութենական «Կարմիր տախտակ»-ի օրինակով հանրապետական, երկրամասային, մարզային, շրջանային ու քաղաքաթերթերի թերթերում ևս հիմնել տեղական «Կարմիր տախտակ»-ներ։ Դրանից դեռ մեկ ամիս առաջ «Պրավդա»-ն թերթերին առաջարկել էր

---

27 Տե՛ս «Правда», 19 июля 1933 г.

մրցման մեջ մտնել բերքահավաքը և հացամթերումը լավագույնս կազմակերպելու և լուսաբանելու համար։

Արձագանքելով «Պրավդա»-ի կոչին, «Խորհրդային Հայաստան»-ը հունիսի 21-ին մրցման հրավիրեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմի օրգան «Կոմունիստի» (վրացերեն) և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի օրգան «Կոմունիստ» (ադրբեջաներեն) թերթերին[28], որոնք ընդունեցին մրցականը[29], ստանձնելով կոնկրետ պարտավորություններ։ Այդ երեք հանրապետական թերթերում շուրջ երեք ամիս զետեղվում էին տասնօրյա ամփոփագրեր սոցմրցման ընթացքի մասին, կատարվում էին էջերի փոխանակումներ («Խորհրդային Հայաստան»-ի մի էջը հատկացվում էր, ասենք, Վրաստանի «Կոմունիստի»-ին, որի խմբագրությունը պատմում էր իրենց հանրապետությունում ծավալված սոցմրցման մասին, ներկայացնում գրական փորձը, Բաքվի «Կոմունիստ»-ը տեղ էր տալիս «Խորհրդային Հայաստան»-ին և այլն)։ Այդ փոխէջերը նորություն էին մեր երկրի պարբերական մամուլի համար և զգալի հետաքրքրություն հարուցեցին մրցման մեջ մտած հանրապետությունների գյուղական աշխատավորության շրջանում։

Փոխադարձաբար միմյանց մրցման հրավիրեցին նաև Անդրկովկասի մամուլի մյուս օրգանները. «Սոցգյուղ»-ը՝ Վրաստանի և Ադրբեջանի գյուղացիական թերթերին (Թիֆլիսի «Ախալի սոփելի»-ին և Բաքվի «Ենի Քենդ»-ին), «Ավանգարդ»-ը՝ կոմերիտական «Ախալգազրդա կոմունիստը» և «Գյանջ իշչի» թերթերին, Լենինականի «Բանվոր»-ը՝ Արթիկի «Լենինագործ»-ին, Ախտալի «Լենինյան դրոշով»-ը՝ «Կարմիր Բասարգեչար»-ին և այլն։

1933 թ. հուլիսի 27-ից, «Պրավդա»-ի առաջարկի համաձայն, «Խորհրդային Հայաստան» թերթում սկսեց տպագրվել հանրապետական «Կարմիր տախտակ», ուր հրապարակվում էին այն կոլտնտեսությունների, գյուղերի, խորհտնտեսությունների, ՄՏ կայանների ու շրջանների անունները, որոնք անկորուստ ավարտել էին բերքահավաքը, կատարել հացահատիկի հանձնման պետական պարտավորությունները, լրիվ վերադարձրել էին պետությունից ստացած վարկերը և բնամթերքով փոխհատուցել ՄՏԿ-ների կատարած աշխատանքը[30]։ Մրցությունը հաջող անցկացնելու համար,

---

28 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 № 141։

29 Տե՛ս նույն տեղը, №№ 144, 146։

30 Տե՛ս նույն տեղը, №№ 172—179, 182, 187, 202։

ընդգծում էր թերթը, «բոլոր կուսակցական կազմակերպություններից, ՄՏԿ քաղաքաժիններից ու շրջկոմներից, քաղաքաժինային ու շրջանային թերթերից պահանջվում է ուժեղացնել բոլշևիկյան մասսայական աշխատանքը...»[31]։ Որոշ ժամանակ անց «Խորհրդային Հայաստան»-ը, ՀՍԽՀ Ֆինժողկոմատի հետ միասին, հայտարարեց շրջանային ու քաղաքաժինների թերթերի հանրապետական մրցույթ ֆինանսական միջոցների մոբիլիզացիայի երրորդ եռամսյակի պլանը ժամկետից շուտ և որակական բարձր ցուցանիշներով կատարելու համար՝ արձագանքելով Գորկու երկրամասի նախաձեռնությամբ սկսված սոցմրցմանը։ Սահմանվեց չորս մրցանակ-պարգև՝ 3500 ռուբլի ընդհանուր գումարով[32]։ 1933 թ. դեկտեմբերի 11-ից «Խորհրդային Հայաստան»-ում զետեղվում էր «Կուսակցության XVII համագումարի անվան հանրապետական կարմիր տախտակ»։

Հայաստանի պարբերական մամուլը լայնորեն արձագանքեց նաև Բաքվի «Վիշկա» և «Ենի-Յոլ» թերթերի նախաձեռնությամբ սկսված «Լավագույն բամբակ հավաքողների անդրկովկասյան մրցությանը»։ Տպագրվեցին մի շարք փոխէջեր։ «Խորհրդային Հայաստան», «Վիշկա» և «Ենի-Յոլ» թերթերի ավիա-խմբագրությունները թռիչքներ կատարեցին Վաղարշապատի ու Ղամարլուի շրջանների դաշտերի վրա՝ տարածելով սոցմրցումը խորացնելու վերաբերյալ թռուցիկներ ու կոչեր[33]։

Սոցմրցումը գյուղում ծավալելու տեսակետից ուշագրավ է նաև «Խորհրդային Հայաստան»-ի և ՀՍԽՀ Հողժողկոմատի կազմակերպած դաշտավարական բրիգադների հանրապետական մրցությունը՝ 1935 թ. գարնանացանին լավագույն կերպով նախապատրաստվելու համար։ Ինչպես վկայում է անցյալ տարիների փորձը, նշում էին մրցության նախաձեռնողները, սոցմրցումը «մասսաների արտադրական էնտուզիազմի նոր ալիքի բարձրացման կարևորագույն լծակն է» և «տվել է փայլուն արդյունքներ պետական առաջադրանքների կատարման գործում». կասկած չկա, որ լավ կազմակերպման դեպքում արդյունավետ կլինի նաև այս նոր մրցությունը, որի համար առանձնացված է 10 հազար ռուբլու պարգևատրման ֆոնդ[34]։ Շրջանային մամուլն անմիջապես ձեռնամուխ

31 Նույն տեղում, № 172։
32 Տե՛ս նույն տեղը, № 200։
33 Տե՛ս նույն տեղը, № 268։
34 Տե՛ս նույն տեղը, 1935, № 24։

եղավ մրցության կազմակերպմանը։ Զգալի աշխատություն և հետևողականություն ցուցաբերեցին հատկապես Վաղարշապատի «Կոլխոզ-Ֆրոնտ», Թալինի «Բոլշևիկյան գրոշով», Նոր Բայազետի «Խորհրդային դյուղ» թերթերը։ «Խորհրդային Հայաստան»-ը մամուլի տեսություններում անդրադառնում էր շրջանային թերթերի աշխատանքին և կոնկրետ դիտողություններով ու առաջարկներով օգնում, որպեսզի նրանք ավելի լավ մասնակցեն մրցության կազմակերպմանը տեղերում։

Հիշատակության արժանի է շրջանային թերթերի մասնակցությունը «Իզվեստիա»-ի նախաձեռնած «Ճանապարհաշինության վերացման համամիութենական մրցույթ»-ին, որ տեղի ունեցավ 1935 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին։ «Իզվեստիա»-ին առընթեր ստեղծված մրցույթի կենտրոնական շտաբը հատկացրեց 50 հազար ռուբլի՝ պարգևատրելու համար այն թերթերին, որոնք առավել ակտիվորեն կաջակցեն ճանապարհաշինարարության աշխատանքներին։ Այս ուղղությամբ մեր հանրապետությունում զգալի ջանք գործադրեցին Ալավերդու, Մարտունու, Ստեփանավանի, Շամշադինի շրջանային թերթերը և առանձնապես Լենինականի «Բանվոր»-ը, որն արժանացավ առաջին մրցանակի՝ պարգևատրվեց ավտոմոբիլ[35]։

1935 թ. ապրիլի սկզբներին մամուլում հրապարակվեց Հարավարևելյան կոլտնտեսությունների համամիութենական երկրորդ համագումարին մեր հանրապետությունից մասնակցած պատգամավորների կոչը՝ Հայաստանի խորհրդայնացման 15-րդ տարեդարձի առթիվ արտադրական արշավ սկսելու վերաբերյալ։ Հետագա ութ ամիսներին թերթերը լուսաբանում էին արշավի ընթացքը, պրոպագանդում առաջավոր ձեռնարկությունների, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների նվաճումները, ստուգում պարտավորությունների կատարումը, զգաստության կոչում թերացողներին։

* * *

Խոշոր է պարբերական մամուլի դերը աշխատանքի արտադրողականության բարձրացման և երկրորդ հնգամյակը ևս ժամկետից շուտ կատարելու համար մղված պայքարի բովում ծնունդ առած այնպիսի զորեղ մի շարժման կազմակերպման ու ծավալման գործում, ինչպիսին ստախանովյան շարժումն էր։ Խորհրդային Միության ամբողջ մամուլի հետ միասին Հայաստանի թերթերն ու հան-

35 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1936, № 102։

գեղեցիկը ևս լայնորեն լուսաբանում էին Ստախանովի օրինակով աշխատող բանվորների, արտադրական կոլեկտիվների հաջողությունները, պրոպագանդում առաջավոր փորձը։ Ըստ որում, բնականաբար, մամուլը կարևոր նշանակություն էր տալիս տեխնիկային խորապես տիրապետելու հարցին, աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների կիրառմանը, արտադրության կազմակերպման եղանակների կատարելագործմանը։ Թերթերը շատ էին գրում մասնավորապես Ալավերդու, Ղափանի, Անի-Պեմզայի գործարաններում ու հանքերում, Քանաքեռդէսի և Երևանի կաուչուկի գործարանի շինարարության մեջ, մեխանիկական գործարանի, Լենինականի տեքստիլ կոմբինատի բանվորների, երկաթուղայիններ շրջանում սկսված շարժման մասին՝ լայն տեղ տալով ինչպես ստախանովականների գործունեությանը նվիրված հոդվածներին, հաղորդումներին ու ակնարկներին, այնպես էլ հենց իրենց՝ ստախանովականների ելույթներին։ Ամենուրեք վերանայվում էին գործող տեխնիկական նորմաները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացման չափանիշներին։ Մեր հանրապետության մամուլը ևս առաջնորդվում էր Վ. Ի. Լենինի այն հայտնի ցուցումով, թե՝ «Աշխատանքի արտադրողականությունը, վերջին հաշվով ամենակարևորը, ամենագլխավորն է նոր հասարակարգի հաղթանակի համար»[36]։

Ստախանովյան շարժմանը նվիրված մշտական բաժիններ բացվեցին «Խորհրդային Հայաստան», «Ավանդարդ», «Բանվոր» թերթերում, շրջանային մամուլի օրգաններում, գործարանային բազմատիրաժներում։ Ավելի հաճախակի սկսեցին երևալ Աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, Հանուն ինքնարժեքի իջեցման, Նոր տեխնիկայի յուրացման ֆրոնտում և համանման խորագրերը։ Թերթերը ջանում էին, որպեսզի կազմակերպվեն ուղղատեխնիկայի խմբակներ, խրճիթ-լաբորատորիաներ, կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում տարածվի առաջավորների փորձը և, որ գլխավորն է՝ «հոգատար, զուրգուրալից վերաբերմունք ու գործնական օգնություն ապահովվի կենդանի մարդու, սոցիալիստական դաշտերի ստախանովականների նկատմամբ»[37]։

Հարկ է նշել նաև, որ ինչպես կենտրոնական մամուլում, այն-

---

36 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 29, էջ 523։

37 «Խորհրդային Հայաստան», 1936, № 200։

պես էլ մեր Հանրապետության պարբերականներում քննադատվեցին ստախանովյան շարժման հարցում ի հայտ եկած թյուրըմբռնումներն ու խեղաթյուրումները, մասնավորապես այդ շարժումը արվեստի աշխատողների, բժիշկների ու մանկավարժների շրջանում տարածելու փորձերը[38]։

Պարբերական մամուլի համար ուշագրավ արժեք ունեցավ Համկ(բ)կ Կենտկոմի 1935 թ. դեկտեմբերյան պլենումի՝ «Արդյունաբերության և տրանսպորտի հարցերը՝ կապված ստախանովյան շարժման հետ» որոշումը, ուր ընդգծված էր, որ այդ շարժումը «սոցիալիզմի ուղիներում մեր ամբողջ առաջընթացի, մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի արդյունքն է» և «բարձրացնում է բանվոր դասակարգի կուլտուրական-տեխնիկական մակարդակը, փշրում էր տեխնիկական հին նորմաները, մի շարք դեպքերում գերազանցում է կապիտալիստական առաջավոր երկրների աշխատանքի արտադրողականությանը»[39]։

Այսպիսի ըմբռնումով էլ հենց մամուլը շարունակեց ակտիվորեն մասնակցել երկրորդ հնգամյակը ժամկետից շուտ կենսագործելու համար ծավալված համաժողովրդական պայքարին, որը նույնպես պսակվեց փայլուն հաղթանակով. կուսակցության առաջադրանքը կատարվեց 4 տարի հինգ ամսում։ Խորհրդային Միությունը արդյունաբերության արտադրանքի ծավալով Եվրոպայում գրավեց առաջին, իսկ աշխարհում՝ երկրորդ տեղը, զարգացման տեմպերով գերազանցեց կապիտալիստական գլխավոր երկրներին և վերածվեց խոշոր ինդուստրիալ տերության։ Մեր երկրում հիմնականում ավարտվեց սոցիալիզմի կառուցումը։

Հսկայական նվաճումներ ձեռք բերվեցին ԽՍՀՄ ազգային հանրապետություններում, այդ թվում և Հայաստանում։ Մանր արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ հասավ 84 տոկոսի։ Ընդարձակվեցին մի շարք արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, կառուցվեցին նոր գործարաններ ու արտադրամասեր. շահագործման հանձնվեցին Ալավերդու կոմբինատի մետաղաձուլական, պղնձարջասպի, Դավալուի ցեմենտի, Երևանի բաղալտի, մարմարի գործարանները, վերակառուցվեցին Երևանի մեքենաշինական ու Լենինականի մեխանիկական գործարանները և այլն։ Հին ձեռնարկությունների վերակառուցման և նո-

38 Տե՛ս, օրինակ, «Ավանգարդ», 1935, № 203։

39 «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս III, էջ 337։

բերի շահագործման շնորհիվ մեծ վերելք ապրեց թեթև և սննդի արդյունաբերությունը: 1932 թ. համեմատությամբ ծանր արդյունաբերության համախառն արտադրանքը 85,6 մլն ռուբլուց 1937 թ. հասավ 214,3 մլն ռուբլու, թեթև արդյունաբերությանը՝ 25,4 մլն ռուբլուց՝ 40,9 մլն ռուբլու: Հնգամյակի վերջում Հայաստանում գործում էր հանրապետական ու տեղական նշանակության 48 էլեկտրակայան՝ 76,8 հազար կիլովատ-ժամ ընդհանուր կարողությամբ: Գյուղացիական տնտեսությունների 88,7 տոկոսն արդեն ընդգրկված էր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, որոնց թիվը հասավ 1074-ի: Կազմակերպված էր 16 խորհտնտեսություն, ՄՏԿ-ների թիվը 4-ից հասել էր 24-ի: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1932 թ. 60,8 մլն ռուբլու դիմաց 1937 թ. կազմեց 99,1 մլն ռուբլի: Խոշոր առաջընթաց կատարվեց ազգաբնակչության կուլտուր-կենցաղային սպասարկման, առողջապահության, ժողովրդական կրթության, գիտության ու մշակույթի բնագավառներում:

Այս բոլոր նվաճումները պարբերական մամուլը դնահատում էր իբրև կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և խորհրդային մտավորականության անձնվեր աշխատանքի արդյունք, ԽՍՀՄ ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության, սոցիալիստական հայրենասիրության պերճախոս վկայություն:

Մամուլը կարևոր էր համարում մեր երկրում սոցիալիզմի կառուցման միջազգային նշանակության պրոպագանդումը, ընդգծում էր այն հեղափոխականացնող ազդեցությունը, որ թողնում էր բանվորների և գյուղացիների՝ աշխարհում առաջին սոցիալիստական հայրենիքը ինչպես կապիտալիստական երկրների աշխատավորության, այնպես էլ գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների վրա՝ նրանց մղած ազատագրական պայքարում:

* * *

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխման տարիներին ևս մեր հանրապետության պարբերականները զգալի տեղ հատկացրին միջազգային իրադրության պարզաբանմանը, իմպերիալիզմի ռեակցիոն էության մերկացմանը, կապիտալի ու աշխատանքի միջև մղվող դասակարգային դոտեմարտերի, միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման լուսաբանմանը: Մամուլի էջերում իրենց արտացոլումը գտան մասնավորապես Չեմբերլինի նոտայի առթիվ մեր երկրում ծայր առած համաժողո-

վերջական բաղաքն ու ցասումը, Չինաստանի հեղափոխական իրադարձությունները, կապիտալի աշխարհում պոռթկացող գործադուլային-դասակարգային պայքարի գրվագները։ Առանձնակի սրությամբ էր գրում պարբերական մամուլը գերմանական ու իտալական ֆաշիզմի, ճապոնական միլիտարիզմի զավթողական նկրտումների, աշխարհին սպառնացող ֆաշիստական վտանգի մասին։

Դեռևս 1927 թ. գարնանը լույս տեսավ Հեղափոխական մարտիկներին օգնող միջազգային կազմակերպության (ՄՕՊՐ) Հայաստանի կենտրոնական և Երևանի քաղաքային կոմիտեների օրգան «ՄՕՊՐ» ամսագրի 1—2 միացյալ համարը[40]։ «Խորհրդային Միությունը և Համկոմկուսը,— կարդում ենք պարբերականի խմբագրականում,— հանդիսանում են ամբողջ աշխարհի հեղափոխական ազատարար շարժումների գլխավոր փարոսը և հավատարիմ ուղեցույցը։ Թե՛ միջազգային պրոլետարիատի, թե՛ բոլոր երկրների աշխատավոր գյուղացիությունը և թե՛ բոլոր գաղութային, կիսագաղութային ճնշված ազգությունները իրենց ազատագրական շարժումների ընթացքում Խորհրդային Միության մեջ տեսնում են իրենց ամենահավատարիմ բարեկամին և առաջնորդողին»։

1930 թ. օգոստոսից սկսեց լույս տեսնել «ՄՕՊՐ-ի դրոշը» հանդեսը՝ իբրև ՄՕՊՐ-ի Հայաստանի կենտկոմի օրգան[41]. 1935 թ. վերանվանվեց «Կարմիր ֆրոնտ»[42]։ Ուներ հետևյալ բաժինները՝ Դասակարգային մարտերում, Սպիտակ տեռորի և ֆաշիզմի նիրաններում, Ինչ են անում մոպրականները, Մոպրական աշխատանքը տեղերում։

Նշենք նաև, որ 1924—1929 թթ. հրատարակվում էր «Տեղեկագիր Հայաստանի Կարմիր խաչի» տարեգիրքը։

Պարբերական մամուլը պատշաճ ուշադրություն էր նվիրում սոցիալիստական հայրենիքի պաշտպանունակությունն ամրապնդելու, քաղաքացիների ռազմա-հայրենասիրական դաստիարակու-

---

40 Հրատարակվել է միայն այս համարը։ Պատ. խմբագիր՝ Ն. Մակինց։ 32 էջ (31×29 սմ), տպաքանակը՝ 3000։ Գ. Լևոնյանի «Վիկատար ցուցակ»-ում նշված է, որ 1926 թ. լույս է տեսել նույնանուն միօրյա թերթ։

41 «ՄՕՊՐ-ի դրոշի» պատ. խմբագիրներ եղել են Ա. Հախումյանը, Ստ. Կուրտիկյանը, Ա. Սոլախյանը և Վ. Ղազանչյանը։ 20—24 էջ (30×22 սմ), տպաքանակը՝ 1500—2500։ 1934 թ. Ստեփանավանում ՄՕՊՐ-ի շրջկոմի հրատարակությամբ լույս տեսավ «Կարմրադրոշ մոպրական» թերթի մի քանի համար (պատ. խմբ.՝ Ստ. Կուրտիկյան)։

42 «Կարմիր ֆրոնտ»-ը լույս է տեսել մինչև 1936 թ. վերջը։ Պատ. խմբագիրն էր Տ. Խորունին։ 24 էջ (32×30 սմ), տպաքանակը՝ 2000—3500։

թյան դրվածքը բարելավելու խնդիրներին[43]։ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության՝ իբրև համաշխարհային խաղաղության հետևողական ջատագովի և միջազգային պրոլետարիատի ինտերնացիոնալ համախմբվածության անխորտակելի պատվարի՝ պատմական առաքելության պրոպագանդան դարձավ մամուլի առաջնահերթ պարտականություններից մեկը։

* * *

Այսպիսով, մեր հանրապետության պարբերական մամուլն իր ավանդը ներդրեց ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխման համար մղված համաժողովրդական պայքարում։ Թերթերն ու հանդեսները ըստ ամենայնի աջակցեցին ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանի ժամկետից շուտ կատարմանը. նպաստեցին արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը, գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը, սոցիալիստական մրցության նոր ձևերի արմատավորմանը քաղաքում և գյուղում, արտադրական նոր հնարավորությունների հայտնաբերմանն ու աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխման համար խորհրդային Հայաստանի պարբերական մամուլի մղած պայքարը հատկանշվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Պարբերական մամուլն ավելի խորացրեց և ուժեղացրեց գաղափարական-դաստիարակչական ու կազմակերպչական աշխատանքը, որոնեց ու գտավ հասարակական ներգործության նոր ձևեր, ժուռնալիստական նոր հնարանքներ։

2. Պարբերական մամուլը հետևողականորեն հանդես եկավ տրոցկիստական-զինովևական օպոզիցիայի և մյուս պառակտիչ խմբավորումների դեմ՝ հանուն կուսակցության միասնականության, հանուն լենինիզմի հաղթանակի։ Թերթերն ու հանդեսները ֆենադատում էին բերիավատներին ու տատանվողներին, պաշտպանում

---

43 *Այս ուղղությամբ նշանակալից աշխատանք կատարեցին մասնավորապես զինվորական պարբերականները* («Փոփոխիկ», «Կարմիր զինվոր», «Կարմիր բանակային թերթ», «Կարմիր Երկրային» *և այլն)։*

և պրոպագանդում էին մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության ու հեռանկարների վերաբերյալ կոմունիստական կուսակցության մշակած և կիրառած գլխավոր գիծը, պայքարում բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսության դեմ:

3. Պարբերական մամուլը բազմակողմանի աշխատանք ծավալեց սոցիալիստական ինդուստրացման լենինյան պլանի իրականացման համար. այստեղ սկզբունքային կարևոր նշանակություն ունեին ինչպես սոցիալիստական ինդուստրացման ուղիների ու մեթոդների պարզաբանումները, այնպես էլ պայքարը խնայողության ռեժիմի կիրառման, ինքնաֆինանսավորության ծավալման, սոցիալիստական մրցության կազմակերպման, նոր տեխնիկայի տիրապետման համար:

4. Պարբերական մամուլն իր հերթը բողոց կոլեկտիվացման ուղիներում. ուշագրավ են թերթերի ու հանդեսների էջերը աջ-օպորտունիզմի դեմ, կուլակային գաղափարախոսության և նրա գործնական դրսևորումների քննադատությունը: Հաղթահարելով կոլեկտիվացման գործում թույլ տված իր խոտորումները, մամուլն ավելի ուժեղացրեց և հետևողական դարձրեց ինչպես աջ-օպորտունիզմի, այնպես էլ «ձախ» ֆլանգոզության պրակտիկայի քննադատությունը, հանդես եկավ հանուն կոլտնտեսությունների կազմակերպական ամրապնդման, բանվորա-գյուղացիական դաշինքի հետագա զարգացման և կուսակցության գծի ճիշտ կիրառման: Համապատասխանորեն բացվեցին գյուղացիական-գյուղատնտեսական նոր պարբերականներ: Որոշակի դրական գործ կատարեցին ՄՏԿ-ների և խորհրդատնտեսությունների հաղթաթերթերը:

5. Պարբերական մամուլն անուրանալի ծառայություն մատուցեց ժողովրդական տնտեսության զարգացման առաջին և երկրորդ հնգամյա պլանները ժամկետից շուտ կատարելու համար աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու, արդյունաբերության և գյուղատնտեսության վերելքն ապահովելու, սոցիալիստական մրցությունը, հարվածային և ստախանովյան շարժումը ծավալելու գործին: Թերթերն ու հանդեսները լայնորեն քննարկում էին ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրները, պրոպագանդում սոցիալիզմի կառուցման բոլոր բնագավառներում ձեռք բերված հաջողությունները, կոմունիստական կուսակցության ղեկավար և ուղղություն տվող դերը:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ I

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ ՄԱՄՈՒԼԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Դպրոցական շինարարության. ուսուցչության գաղափարական-պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման խնդիրները. մանկավարժական պարբերականներ. «Ժողովրդական լուսավորություն» («Կոմունիստական լուսավորություն»). «Կուլտուրական ֆրոնտ» («Խորհրդային դպրոց»), «Խորհրդային մանկավարժ»: Պայքար անգրագիտության վերացման համար. «Դեպի համատարած գրագիտություն» ամսագիրը: Քաղաքական լուսավորության ճարտերը մամուլում. խրճիթ-ընթերցարաններ: Պրոֆեսիոնալ-տեխնիկական և բարձրագույն կրթության խնդիրներ:

1

Սոցիալիստական շինարարության տարիներին պարբերական մամուլը սկզբուն ուշադրություն նվիրեց կուլտուր-լուսավորական աշխատանքների կազմակերպմանը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում: Դպրոցական շինարարություն, կրթության նոր սիստեմի ստեղծում, անգրագիտության ասպիճանական վերացում, նոր կենցաղի արմատավորում, կրոնական նախապաշարումների հաղթահարում, գիտության, դրականության և արվեստի զարգացում՝ գաղափարական նոր հիմքի վրա,— ահա այն հիմնական խնդիրները, որոնց կենսագործմանը հետամուտ էր մամուլը՝ «երրորդ ֆրոնտում» կուսակցության կիրառած ընդհանուր ձևոնարկումների մեջ:

Ինչպես կենտրոնական մամուլում, այնպես էլ գավառային թերթերում կարևոր տեղ էր հատկացվում դպրոցական շինարարությանը: Էական դեր էր վերապահվում այստեղ գյուղական հասարակայնությանը, որը կոչված էր իր հայթայթած միջոցներով

ամրապնդացնելու այս ասպարեզում կառավարության գործադրած ջանքերը։ Դպրոցական հին շենքերը վերանորոգելու և նորերը կառուցելու լայն կամպանիա ծավալից զավառական մամուլը, որի էջերում արտացոլված է հեղկոմների, ապա նաև խորհուրդների հանդուն գործունեությունը ժողովրդական լուսավորության ասպարեզում։ «Կարմիր գյուղացի», «Կարմիր Լոռի», «Մուրճ ու մաճ», «Շիրակի ռանչպար», «Կարմիր ռաշպար» և մյուս թերթերում, երիտասարդական թերթիկներում և էջիկներում ժողովրդական կրթության կազմակերպման հարցերը կարևոր տեղ ունեին թե՛ թեմատիկայի և թե՛ արծարծման ժուռնալիստական բազմաձևության առումով։ Հակիրճ, բայց դիպուկ առաջնորդողներում[1] բարձրացվող հրատապ խնդիրներին յուրովի արձագանքում էին ժողովրդական բառ ու բանով հագեցած գրույցները, նամակները, կոչերը, լուսավորության ասպարեզում աշխատողների գործնական թղթակցություններն ու փոքրիկ հոդվածները։

Այս ամենը առանձին օղակներն էին խորհրդային կարգերի հաստատումով սկսված այն պատմական պրոցեսի, որը դեռևս իր առաջին համարներից մեկում «Կոմունիստ»-ը դիպուկ կերպով որակեց իբրև «հոգևոր ապատագրումն»[2]։ Դպրոցը, ոչ առանց հպարտության հավատում էր «Շիրակի ռանչպար»-ը,—«բոլորի ուշադրությունն է գրավել»։ Համեմատություն անցկացնելով անցյալի հետ, թերթը նշում էր այն խոշոր աշխատանքը, որ կատարվել էր ուսուցման գործը զավառում կանոնավորելու ուղղությամբ. սակայն, չնայած այդ ամենին, դեռ շատ բան կա անելու, մի շարք գյուղեր չունեն իրենց դպրոցը, շենքերը դանվում են անմխիթար վիճակում, զգացվում է վառելիքի, գրենական պիտույքների սուր պակաս, ուսուցիչները քիչ են... «Որքան գյուղ, այնքան էլ դպրոց, ահա Շիրակի աշխատավորության ներկա հրամայական պահանջը»,—եզրակացնում էր թերթը[3]։ Նույնպիսի խնդիր էր առաջադրում «Կարմիր ռաշպար»-ը իր առաջնորդողներից մեկում[4]. Զանգեզուրում

---

1 Բավական է նշել, օրինակ, որ «Կարմիր Լոռի» թերթը միայն 1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին լուսավորության հարցերին նվիրեց վեց առաջնորդող (№№ 14, 15, 16, 18, 19, 20)։

2 Տե՛ս «Կոմունիստ», 1920, № 12։

3 «Շիրակի ռանչպար», 1923, № 32։

4 Տե՛ս «Կարմիր ռաշպար», 1923, № 24։ Նույն համարում տպագրված են նաև «Պահանջը մեծ է ու կարևոր», «Ընկեր գյուղացի՛ն, օգնեցեք դպրոցին», «Կեցցե՛ երրորդ ֆրոնտը Զանգեզուրում» հոդվածները և լուսաշխի վարչության կոչը՝ ուղղված զավառի ուսուցիչներին։

ում արդեն վերականգնված է 51 առաջին աստիճանի դպրոց, որոնցում «սովորում են աշխատավոր գյուղացիության զավակները, մեր ապագան». տեղական խորհուրդների բյուջեի 40 տոկոսը հատկացված է ուսման գործի կազմակերպմանը. նախատեսված է 1923—24 ուսումնական տարում դպրոցների թիվն ավելացնել ևս 10-ով... Սակայն, հիշեցնում էր թերթը, եթե գյուղական հասարակայնությունը համակողմանի օժանդակություն ցույց չտա՝ հնարավոր չի լինի ուսումնական աշխատանքները կազմակերպել այնպես, որ բավարարի զավառի պահանջները. դպրոցական գործը համաժողովրդական բնույթ պիտի ստանա։ Խմբագրության նախաձեռնությամբ հոկտեմբերի 15-ից 30-ը հայտարարվեցին դպրոցին օգնելու օրեր։

Դպրոցական շինարարության մեջ, նշում էր մամուլը, ելակետ պիտի ունենալ սոցիալ-հասարակական և բարոյական այն նոր սկզբունքներն ու ըմբռնումները, որոնք արդյունք են պրոլետարական դիկտատուրայի հաստատման և հաջողությամբ կիրառվում են Ռուսաստանյան Ֆեդերացիայում։ «Խորհրդային իշխանությունն իր գոյության հենց առաջին օրից,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը իր մի առաջնորդողում,— ձևակերպում է մեր դպրոցի ուրվագիծը՝ իբրև աշխատանքային դպրոցի, որը կազմում է սկիզբը, նախնական լաբորատորիան, սաղմնային բջիջը ընդհանուր անտեսական մեր կյանքի, նրա կառուցվածքի։ Խորհրդային դպրոցն իր սաներին պիտի տա ամենախիստ մտքով սոցիալիստական, բնապատմական դաստիարակություն, թեորեականը գործնականի հետ ամենասերտ կերպով կապված...»[5]։

Հասկանալի է ինքնին, որ առաջնահերթ նշանակություն ուներ ուսուցչության խնդիրը, որը նույնքան կարևոր էր, որքան և դպրոցական շինությունների կանոնավորումը, դպրոցի նյութա-տեխնիկական ապահովությունը։ Մամուլը տարբեր տոհմերով արծարծում էր մանկավարժական նոր սկզբունքների ձևավորման ու արմատավորման, ուսուցիչների դաղափարական դաստիարակության, դասագրքերի ու ծրագրերի հիմնովին վերափոխման հարցերը։ Թերթերն ու հանդեսները տպագրում էին բացատրական-կոնսուլտացիոն բնույթի հոդվածներ, բանիմաց առաջարկություն-հանձնարարականներ՝ Հայաստանում դպրոցական գործի հաջող կազմակերպման համար։

---

5 *«Խորհրդային Հայաստան», 1923, № 132։*

Բանվորա-գյուղացիական մասսայի սերնդի համար օրի չափ կարևոր են լուսավորությունն ու դիտությունը, գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, այդ սերնդի «ուսերի և ուղեղների վրա է ընկնելու մեր վաղվա օրվա վիթխարի շինարար, ստեղծագործ աշխատանքի ծանրությունը». ուստի, խնդիր էր դնում թերթը, «պիտի պատրաստել նրան այդ մեծ գործի համար»։ Այդ նախապատրաստության ժամանակ է ահա, որ երբեք չպետք է մոռացության տալ երկու կարևոր հանգամանք՝ ա) «դպրոցների և ուսուցչական կազմի նյութական ապահովությունը» և բ) «ուսուցիչների մասավոր պատրաստության և դպրոցների հոգևոր բովանդակության» կատարելագործումը[6]։

Բնական է, որ գյուղացիական այնպիսի մի հանրապետության մեջ, ինչպիսին Հայաստանն էր, առանձնահատուկ դեր էր վերապահվում գյուղական ուսուցչին։ Եվ ամենևին էլ պատահական չէր, որ ուսուցչի գործունեությունը իր կարևորությամբ «Խորհրդային Հայաստան»-ը հավասարեցնում էր գյուղական կուսբջջի քարտուղարի աշխատանքին, նրանց համարելով գյուղում «կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության գալիք նվաճումների հենակետերը հանդիսացող երկու սյուներ»։ Եթե «կուսբջջի քարտուղարի որակից և ունակությունից է կախված կուսակցական աշխատանքի մեծագույն մասի հաջողությունը և անկուսակցական մասսաների նվաճումը կոմունիզմի գաղափարներով»,— նկատում էր թերթը,— ապա նույնքան «պատասխանատու, երախտալի և մեծ է գյուղական ուսուցչի դերը. նա ոչ միայն դասատու է..., այլև լույսի փարոս և կազմակերպիչ շաղախ է գյուղական շինարարության բոլոր ասպարեզներում»։ Ահա թե ինչու առաջնակարգ նշանակություն է ստանում ուսուցչության գաղափարական ճիշտ դաստիարակության, նրա շարքերը «թարմ, կոմունիստական ուժերով» համալրելու խնդիրը։ «Պետք է աշխատել,— ամփոփում էր թերթն իր պատկերավոր խոսքը,— որ այդ փարոսը վառվի բանվորա-գյուղացիական հեղափոխության հարազատ լույսով, պետք է աշխատել, որ շաղախը լինի միանգամայն անաղարտ»[7]։

Մամուլը վճռական նշանակություն էր տալիս ուսուցչի և գյուղական հասարակայնության, առաջին հերթին կուսակցական ու կոմերիտական բջիջների սերտ համագործակցությանը, վերջիննե-

---

6 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, № 153։

7 Նույն տեղում, 1923, № 57։

րիս համալրելով ուսուցչի «հզոր դաշնակիցները», որոնցից զուրկ էր նախահեղափոխական գյուղի հայ ուսուցիչը։ «Չի կարելի մտածել նոր գյուղի մասին՝ առանց նոր ուսուցչի»,— ընդգծում էր «Խորհրդային Հայաստան»-ը, միաժամանակ մատնանշելով նրա առջև ծառացած խոչընդոտները, որոնց հաղթահարման համար էլ հենց անհրաժեշտ էր վերոհիշյալ համագործակցությունը. «Իհարկե,— գրում էր թերթը,— հիմա էլ բամբակ փռած չէ գյուղական ուսուցչի ճանապարհին. հիմա էլ գյուղում կան հետադեմ տարրեր. դեռ հիմա էլ գյուղական ուսուցիչը մի հարվածով չի կարող կտրել գյուղական պահպանողականության դեմ յոթ գլուխը միանգամից։ Հիմա էլ դեռ անտեսապես ապահովված չէ ինքը՝ ուսուցիչը, աղքատ է և դպրոցը։ Սակայն... ուսուցչի հետևում կանգնած է խորհրդային իշխանությունը, և, որ գլխավորն է, գյուղական ուսուցիչը գյուղում այժմ հզոր դաշնակիցներ ունի. դա կոմկուսի և կոմերիտմիության բջիջն է։ Սա արդեն բոլորովին նոր ուժ է գյուղում, որի նմանը չուներ իր կողքին հին շրջանի իդեալիստ հերոս ուսուցիչը»[8]։

Գյուղական ուսուցչի առջև դրված խնդիրներին և առհասարակ գյուղում դպրոցական գործի կազմակերպմանը զգալի տեղ էր հատկացնում «Մաճկալ»-ը, որի էջերում 1924 թ. կեսերից պարբերաբար երևում էր Մեր դպրոցներում բաժինը։ «Բանվոր»-ը, «Ավանգարդ»-ը և «Կարմիր ռաշպար»-ը նույնպես առանձին անկյուններ էին հատկացնում այդ հարցերի քննարկմանը։ Հատկանշական է նաև, որ մամուլի ելույթները գնալով դառնում էին առավել գործնական ու կոնկրետ, մի հանգամանք, որին մեծապես նպաստում էր իրենց իսկ՝ ուսուցիչների թղթակցությունը պարբերականներին։ Եվ ուշադրավն այն է, որ ուսուցիչ-թղթակիցները չէին սահմանափակվում միայն դպրոցական շինարարության խնդիրներով, նրանք արձագանքում էին գյուղական կյանքի բոլոր երևույթներին։

* * *

Դպրոցական գործի և ուսուցչության հետ առնչվող խնդիրների արծարծումը այն թերթերում և ամսագրերում, որոնք կոչված էին ծառայելու ընդհանուր-քաղաքական կամ մասնագիտական-գիրատեսչական նպատակների, բնականաբար, չէր կարող ունենալ սիստեմատիկ բնույթ։ Եվ պատահական չէ, որ դնալով հասունացավ դպրոցական շինարարության, անդրադիտության վերաց-

8 Նույն տեղում, 1924, № 207։

ման, ուսուցչական կադրերի տեսական-պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման հարցերին նվիրված հատուկ մանկավարժական մամուլի կազմակերպման պահանջը։

Այդպիսի մամուլի օրգաններ Ռուսաստանյան Ֆեդերացիայում և մի քանի այլ հանրապետություններում հրատարակվում էին դեռևս 20-ական թվականների սկզբներից։ Հայաստանում մանկավարժական մամուլի առաջնեկը եղավ «Ժողովրդական լուսավորություն» ամսագիրը, որը սկսեց լույս տեսնել 1926 թ. հուլիսից. 1931 թ. սեպտեմբերին վերանվանվեց «Կոմունիստական լուսավորություն», որի հրատարակությունը շարունակվեց մինչև 1933 թ. սկիզբը[9]։ Մանկավարժական այս պարբերականը, ինչպես նշված է անդրանիկ համարի խմբագրականում՝ նպատակ ուներ լուսաբանել և ուղղություն տալ կուլտուրական վերելքին ապահովող այն օղակների գործունեությանը,— դպրոց, լիկբեզյան, խրճիթ-ընթերցարան, գրադարան, ակումբ և այլն,— որոնք «պիտի ունենան իրենց ուրույն սիստեմը, բովանդակությունը և աշխատանքի մեթոդները»։ Ամսագիրը լայնորեն քննարկելու էր «արհեստագիտական լուսավորության խնդիրները», որոնք ծավալվող տնտեսական և շինարարական աշխատանքների պայմաններում շատ հրատապ ու

---

9 *«Ժողովրդական լուսավորություն»-ը ուներ ժողովրդական լուսավորության բաղմականության և կազմակերպության խնդիրներ ենթանվանումը և լույս էր տեսնում իբրև ՀՍԽՀ Լուսժողկոմատի ամսագիր. 1929 թ. № 1-ից՝ Լուսժողկոմատի և Լուսաշխի ու Դեղաշխի պրոֆմիությունների ամսագիր. 1930 թ. № 1-ից՝ օրգան Լուսժողկոմատի և Լուսաշխի պրոֆմիության, 1931 թ. № 1-ից՝ Լուսժողկոմատի և Լուսաշխի միության կենտրոնական վարչության։ Մինչև 1930 թ. լույս է տեսել «Խմբագրական կոլեգիա» տառագրությամբ, այնուհետև նշվում է խմբագրական կոլեգիայի կազմը՝ Հր. Սարգսյան (պատ. խմբագիր), Դ. Քացախյան, Վ. Աստվածատրյան, Տ. Ղազանչյան, Արմ. Թամազյան (պատ. քարտուղար), հետո նորից՝ միայն «Խմբագրական կոլեգիա» կամ առանց տառագրության։ «Կոմունիստական լուսավորության» 1931 թ. № 4-ում նշված է՝ պատ. խմբագիր Սերգեյ Դավթյան։ 40—80—128 էջ (25×18 և 62×39 սմ), տպաքանակը՝ 400—1800։*

Խմբագրական կոլեգիայի անդամներից բացի, ամսագրին աշխատակցել են Ա. Մռավյանը, Ա. Եղիազարյանը, Մ. Սանթրոսյանը, Մ. Մազմանյանը, Ա. Շավարշյանը, Կ. Ղազարյանը, Տ. Մուշեղյանը, Մ. Գասպարյանը, Լ. Խուդոյանը, Հ. Ինճիկյանը, Ա. Խեչումյանը, Ա. Առուշարյանը, Ա. Շահինյանը և ուրիշներ։ Ամսագիրը պարբերաբար, գրեթե յուրաքանչյուր համարում տեղ էր տալիս դպրոցական գործի ականավոր կազմակերպիչ և տեսաբան Ն. Կրուպսկայայի ելույթներին։

«Ժողովրդական լուսավորություն»-ը երբեմն արել է նաև արտատպություններ «Культура и революция», «За коммунистическое просвещение» *և* «Народный учител» *պարբերականներից, հրատարակել է մի շարք հավելվածներ։*

անհետաձգելի նշանակություն են ձեռք բերում, քանի որ սուր կերպով զգացվում էր «որակյալ բանվորի, գյուղացու, կոոպերատորի, կազմակերպողի և ղեկավարողի պահանջը»։ Եվ վերջապես՝ հայրենի երկրի ուսումնասիրության գործը, որ գնալով ընդունում է ավելի ու ավելի լայն բնույթ և «կապված է դարձյալ մեր տնտեսական ու կուլտուրական վերելքի հետ», նույնպես պիտի արժանանա ամսագրի ուշադրությանն ու հոգածությանը։

Վերոհիշյալ խնդիրներին համապատասխան էլ խմբագրությունը կազմակերպում էր իր աշխատանքները՝ ստատիճանաբար ընդլայնելով ամսագրի հետաքրքրությունների ոլորտը։ Այս հանդեսի նյութերն այսօր արժեքավոր են նրանով, որ ոչ միայն զգալի պատկերացում են տալիս այն ժամանակվա դպրոցական-ուսուցչական գործի դրվածքի, այդ ասպարեզում լուսաշխատողների գործադրած եռանդուն ջանքերի մասին, այլև արտացոլում են խորհրդային հայ մանկավարժական մտքի որոշակի փուլի զարգացման ընթացքը՝ նվաճումներով և հակասություններով ու վրիպումներով հանդերձ։

Կազմակերպչական և Պաշտոնական խորագրերի ներքո ամսագիրը հրապարակում էր կուսակցության ու կառավարության որոշումները, լուսժողկոմատի հրահանգները, շրջաբերականները և այլ կարգի պաշտոնական փաստաթղթեր՝ դպրոցական գործի, ուսումնական պրոցեսի կազմակերպման վերաբերյալ[10]։ Գիտական բաժնում տպագրվում էին ուսուցման մեթոդների մշակմանն ու կատարելագործմանը նվիրված տեսական-ընդհանրացնող բնույթի հոդվածներ, ինչպես նաև մեր երկրում կիրառվող դպրոցական քաղաքականությունը պարզաբանող ու պրոպագանդող համառոտ ուսումնասիրություններ։ Դպրոցական ցանցի վերակառուցման հարցերը քննարկվում էին Տարածային-կազմակերպչական խնդիրներ բաժնում։ Դասագրքեր կազմելու, դասավանդման եղանակների, ուսուցման արդյունավետ ձևերի վերաբերյալ առաջարկներն ամփոփվում էին Մեթոդական խնդիրներ խորագրի ներքո։ Ամսագիրը, առանձ-

---

10 Ի դեպ՝ 1928 թ. սկսած այս կարգի նյութերը հրապարակվում էին «Տեղեկագիր ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի» ամսագրում, որը 1929 թ. № 4-ից վերանվանվեց «Տեղեկագիր ՀՍԽՀ Լուսժողկոմատի պաշտոնական հրահանգների և կարգադրությունների»։ Ամսագրի համարներում, որոնց մեծ մասը միացյալ էր, ամփոփված են նաև արժեքավոր վիճակագրական տվյալներ, զետեղված են ծանուցում-հանձնարարականներ նոր լույս տեսած մանկավարժական գրականության, դասագրքերի, մանկա-պատանեկան երկերի վերաբերյալ։ Խմբ. չի նշված։ 24—72 էջ (26×18 սմ), տպաքանակը՝ 600։

նապես հրատարակության վերջին տարիներին, մեծ տեղ էր հատկացնում ուսման պրոցեսի կազմակերպումը սոցիալիստական շինարարության գործնական պահանջների հետ շաղկապելու, սովորողների արտադրական ուսուցումն ապահովելու հարցերին. այդ նպատակով առանձնացված էին Պոլիտեխնիզացիա և Հնգամյակի հետմեռով բաժինները: Հատուկ բաժիններ է նվիրել հանդեսը քաղաքավարական աշխատանքների մեթոդիկայի, ուսուցիչների ու աշակերտների ինքնակազմակերպման խնդիրներին, դավառներում ու շրջաններում լուսավորության գործի դրվածքի ուսումնասիրմանը, դավառագիտական աշխատանքների պարզաբանմանը: Բացի այդ, նրա էջերում լայն ինֆորմացիա էր տրվում Խորհրդային Միությունում ծավալված դպրոցական շինարարության, գիտության և տեխնիկայի նվաճումների, կապիտալիստական երկրներում մատաղ սերնդի դաստիարակության անմխիթար վիճակի մասին, դրախոսվում էին մանկավարժական և մանկապատանեական գրքերը:

Դպրոցում և կուլտուրական մյուս օջախներում տարվող ուսումնա-դաստիարակչական աշխատանքները ևս ընթանում էին դաղափարական սուր պայքարի պայմաններում, ներհակ տեսակետների և ճաշակների բախումների ոլորտում: Ուսուցման նոր եղանակների կիրառման խնդիրները քննարկելու հետ մեկտեղ «Ժողովրդական լուսավորություն»-ը պատշաճ ուշադրություն էր նվիրում մանկավարժության մեթոդաբանական հարցերին, մանկավարժական գիտության, դասագրքերի մեջ և ուսուցման պրոցեսում անընդունելի տեսակետների ներթափանցման բացահայտմանը: Այս առումով հանդեսը կարևոր նշանակություն էր տալիս դպրոցական խմբակների, ինքնագործունեության երևույթների, առհասարակ աշակերտների գեղագիտական դաստիարակության նպատակասլաց կազմակերպմանը: Ճիշտ է, խմբագրությունը որոշ տուրք տվեց «ձախության» տենդենցներին, պրոլետկուլտական մատյանությանը. մյուս կողմից, սակայն, միանգամայն տեղին էր նրա քննադատական գիտողությունն այն լուսաշխատավորների հասցեին, ովքեր դպրոցական ծրագրերում գեղագիտական ուսուցման նախատեսումը համարում էին «դուտ ժամանցաճաշություն և նյութական շռայլություն». մի շարք դպրոցներում, նկատում էր հանդեսը, «դրամական խնայողություն անելու նպատակով կրճատվում են երգեցողությունը, նկարչությունը և ձեռարվեստը»: Այս ամենը ոչ մի կապ չունի խնայողության վերաբերյալ լոզունգի ճիշտ կիրառման հետ, հարկավոր է յուրովի մոտեցում ունենալ

գաղափարական պայքարի բոլոր մեծ ու փոքր լծակներին, որոնցից մեկն էլ դպրոցականների գեղագիտական դաստիարակությունն է։ «Խնայողության ռեժիմը իդեալոգիայի հաշվին չպիտի կատարվի»,— եզրակացնում էր ամսագիրը[11]։

«Ժողովրդական լուսավորություն»-ը դպրոցական ջանքեր գործադրեց ուսման մեջ պոլիտեխնիկական սկզբունքի կիրառման, մանկավարժական կադրերի մարքս-լենինյան դաստիարակության, անդրադարձության վերացման, մասսայական-լուսավորական հիմնարկների (խրճիթ-ընթերցարան, գրադարան և այլն) աշխատանքի բարելավման ուղղությամբ։ Եվ միանգամայն ճիշտ էր ամսագրի այն եզակետը, թե՝ «հնարավոր չէ կուլտուրական ֆրոնտի աշխատանքներն անսխալ կատարել՝ չգուգորդելով դրանք տնտեսական և քաղաքական շինարարության հետ»[12]։

1931 թ. սեպտեմբերի 5-ին հրապարակվեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ «Տարրական և միջնակարգ դպրոցների մասին» որոշումը։ Պոլիտեխնիկական կրթության վերաբերյալ ծրագրային ցուցումների հետ մեկտեղ Կենտկոմն ընդգծեց ուսուցման որակի բարելավման, մեթոդական ղեկավարության ուժեղացման, լուսավորության մարմինների և դպրոցների ու մասսայական ուսուցչության կադրերի ամրապնդման, ծրագրերի գիտական մշակման անհրաժեշտությունը։ Ժողովրդական կրթության գործնական խնդիրները դրվեցին հասարակայնության ուշադրության կենտրոնում։ Այս պայմաններում խստորեն զգացվում էր մանկավարժական բնույթի պարբերաթերթի պակասը, որը դալու էր ամբողջացնելու գործնական ու մեթոդական խնդիրների քննարկումը։ Եվ այսպես, 1932 թ. փետրվարի 25-ից սկսվեց ՀՍԽՀ Լուսժողկոմատի և Լուսաշխի կենտրոնական վարչության նոր օրգանի՝ «Կուլտուրական ֆրոնտ» ամսօրյա պարբերաթերթի հրատարակությունը[13]։

---

11 «Ժողովրդական լուսավորություն», 1928, № 5, էջ 434։

12 Նույն տեղում, № 1, էջ 13։

13 «Կուլտուրական ֆրոնտ»-ը հրատարակվել է ավելի քան չորս տարի՝ մինչև 1935 թ. մարտ ամիսը։ Պատ. խմբագիրներն են եղել՝ Վ. Կոստանյանը, Ար. Մովսիսյանը, իրրև խմբագրի տեղակալ թերթն ստորագրել է նաև Ասուր Վենկատանը (Աս. Ասատրյան)։ Աշխատակցել են Սիմակը, Մ. Սանթրոսյանը, Մ. Դուրգարյանը, Գ. Մանուկյանը, Տ. Մուշեղյանը, Արմ. Վարդապետյանը, Հ. Թումյանը, Ա. Շահինյանը, Գ. Խաչատրյանը և ուրիշներ, դպրոցի դիրեկտորներ, ուսուցիչներ, մեթոդիստներ, խրճիթվարներ, կուլտուրայի բնագավառի բազմաթիվ գործիչներ։

Խմբագրությունն ընդգծում էր, որ պարբերաթերթը կոչված է նպաստելու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վերոհիշյալ որոշման կենսագործմանը մեր հանրապետությունում։ Դպրոցական գործն այստեղ դեռևս ունի զգալի թերություններ, ասված է անդրանիկ համարի առաջնորդողում. ճիշտ է, 1931—1932 ուսումնական տարում հիմնականում ապահովվեց բառամյա պարտադիր ուսուցումը, բայց դպրոցական աշխատանքների որակը տակավին մնում է անբավարար... Այս առումով էլ, ահա, կարևոր նշանակություն ունեն «ուսուցչի տեսական և մասնագիտական պատրաստականության մակարդակը և այն մտավոր սնունդը, որ տրվում է ուսուցչությանը՝ ծրագրերով, մեթոդական գրականությամբ ու ձեռնարկներով, ու աշակերտությանը՝ դասագրքերով և օժանդակ գրականությամբ»։ Այս ամենը, շարունակում էր խմբագրությունը, սերտորեն կապված է հասարակական, նյութական ու ֆինանսական այն պայմանների հետ, որոնց մեջ ապրում և աշխատում է դպրոցը։ Այդ պայմանների «փոփոխում ու բարելավում՝ բանվորական-աշխատավորական լայն մասսաների անմիջական մասնակցությամբ՝ սա՛ պետք է հանդիսանա մեր օրգանի կարևոր անելիքներից մեկը»։ Թերթը հետևողականորեն պայքարելու էր «ընդդեմ լենինյան թեորիայի աղավաղումների, ընդդեմ հակակոմունիստական մանկավարժության ամեն մի արտահայտության», հանդես էր գալու «դպրոցական գործի և կուլտուրական ֆրոնտի օպորտունիստական թերագնահատումների դեմ»։

«Կուլտուրական ֆրոնտ»-ի աշխատանքներն ամփոփվում էին հետևյալ հիմնական բաժիններում՝ 1. Մարքս-լենինյան մանկավարժության մեթոդական բաժին *(տեսական պրոբլեմների և տեղական փորձի պարզաբանում-մասսայականացում). 2.* ՀամԿ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերի 5-ի որոշման կատարման բաժին *(ի՞նչ է ձեռնարկվում կամ նախատեսվում որոշման մեջ առաջադրված խնդիրների կենսագործման ուղղությամբ՝ մեր հանրապետության պայմաններում). 3.* Դրախոսական-քննադատական բաժին *(դասագրքերի, մանկավարժական հրատարակությունների, մանկական գրականության վերլուծություն, անոտացիա-հանձնարարականներ, գրքերի տեսություններ). 4.* Կոնսուլտացիոն բաժին *(պաշտոնական հրահանգներ, շրջաբերականներ, լուսժողկոմատի գործունեության արտացոլում, կարևոր միջոցառումների, նիստերի, խորհրդակցությունների վերաբերյալ հաղորդումներ, մեթոդական ցուցումներ, առաջարկներ, օրինակելի դասավանդման նմուշներ,*

ծնողների հետ կատարվող աշխատանքի պարզաբանում). 5. Մասնակցություն խնդիրների բաժին (ուսուցիչների նյութական-կենցաղային պայմանների ուսումնասիրություն, աշակերտների ընտանեկան վիճակի պարզաբանում, դպրոցները՝ լաբորատոր սարքավորումներով, սպորտ-հրապարակներով, արտադրական-պոլիտեխնիկ ուսուցման համար անհրաժեշտ առարկաներով և աշակերտներին՝ դասագրքերով ու գրենական պիտույքներով ապահովելու հարցերի քննարկում)։

Այս ամենին զուգընթաց՝ «Կուլտուրական ֆրոնտ»-ը անդրադառնում էր բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտա-հետազոտական հիմնարկների գործունեությանը, թատրոնի, կինոյի, երաժշտության, կերպարվեստի հարցերին, ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքի խնդիրներին։ Թերթը տպագրում էր կուլտուր-կրթական թեմաներով ֆելիետոններ (Էդ. Խոճիկ, Դ. Գաղալյան), տարբեր մամուլի տեսություններ, ուսումնասիրում-քննարկում էր կուլտուրայի օջախների աշխատանքը, խրախուսում-գրվատում էր լավագույն ուսուցիչներին, դասախոսներին, կուլտուրայի ասպարեզի անխոնջ մշակներին։ Ուշադրավ են թերթի էջերում ծավալված քննարկում-վիճաբանությունները մանկավարժության տեսական, գործնական և մեթոդական-մեթոդոլոգիական կարևոր հարցերի վերաբերյալ։ Խորհրդային մյուս հանրապետություններում դպրոցական շինարարության ասպարեզում ձեռք բերված նվաճումների պրոպագանդումը, սոցիալիստական մշակույթի ամենատարբեր բնագավառների արձագանքումները, անտեսական և քաղաքական խնդիրների նպատակային արծարծումները դպրոցին բարձրացնում էին թերթի հասարակական հնչեղությունը։

Շուրջ մեկ տարի՝ մինչև 1933 թ. սկիզբը «Կուլտուրական ֆրոնտ»-ը լույս էր տեսնում «Կոմունիստական լուսավորություն» ամսագրին զուգահեռ, և լուսաժողկոմատի այդ երկու օրգանների միջև զոյություն ուներ, այսպես ասած՝ աշխատանքի որոշ բաժանում. ամսագիրն ավելի շատ ուշադրություն էր նվիրում տեսական, իսկ թերթը՝ գործնական խնդիրներին։ Ամսագրի հրատարակությունը դադարելուց հետո, բնականաբար, թերթի աշխատանքներում ուժեղացվեց նաև տեսական կողմը. «Կուլտուրական ֆրոնտ»-ը դարձավ մեր հանրապետությունում մանկավարժական գիտության և դպրոցաշինության գործնական հարցերի քննարկման հիմնական լծակը, կուլտուրական հեղափոխության իրականացմանը նպաստող

կարևոր օղակներից մեկը խորհրդային հայ պարբերական մամուլի մեջ։ 1936 թվականից «Կուլտուրական ֆրոնտ»-ը վերանվանվեց «Խորհրդային դպրոց»[14], որը շարունակեց նույն հարցերի արծարծումը՝ սոցիալիստական շինարարության և կուլտուրական հեղափոխության նոր խնդիրներին համապատասխան։

Լուսավորության բնագավառի աշխատանքների վերակառուցումն ու ընդլայնումը կրկին օրակարգի մեջ դրին հատուկ մանկավարժական տեսական-մեթոդական հանդես ունենալու պահանջը։ Նախատեսված էր այն հրատարակել 1936 թ. մարտ ամսից՝ «Կոմունիստական դաստիարակություն» անվանումով[15]. սակայն խմբագրության կոմպլեկտավորման և նախապատրաստական այլ աշխատանքների ձգձգման պատճառով նոր օրգանի առաջին համարը լույս տեսավ նույն թվականի մայիսին. փոխվեց նաև նախատեսված անվանումը. այն կոչվեց «Խորհրդային մանկավարժ»[16]։ Կոմունիստական դաստիարակության ընդհանուր խնդիրներին զուգընթաց (ինտերնացիոնալիզմ, հայրենասիրություն, հակակրոնական պայքար և այլն), ամսագիրը քննարկում էր դպրոցական աշխատանքների կազմակերպման (շենք, կահավորում, ուսումնական տարբավորումներ, ծրագրեր, դասագրքեր և այլն), դասավանդման մեթոդիկայի, ԽՍՀՄ, Անդրկովկասի և Հայաստանի ժողովրդական լուսավորության ու մանկավարժության պատմության հարցերը, տպագրում էր կոնսուլտացիաներ, դրախոսություններ, ինֆորմացիաներ, ընդհանրացնում էր մայրենի լեզվի, պատմության, թվաբանության և այլ առարկաների դասավանդման ասպարեզում ձեռք բերված դրական փորձը, պարբերաբար անդրադառնում մանկավարժական պրակտիկային։

---

14 «Խորհրդային դպրոց»-ը նույնպես ՀԽԽՀ Լուսժողկոմատի և Տ. Մ. Դ. արհմիության կենտկոմի օրգանն էր. լույս էր տեսնում շաբաթը մեկ անգամ, 4 էջով։ Առաջին խմբագիրն էր Արտո Եղիազարյանը, խմբագրի տեղակալը՝ Ա. Ստեփանյանը, ի տեղի խմբագրի թերին ստորագրել է նաև Ս. Ղազարյանը։ 1940 թ. «Խորհրդային դպրոց»-ը վերանվանվեց «Սովետական դպրոց»։

15 Տե՛ս «Խորհրդային դպրոց»-ի 1936 թ. № 8-ում զետեղված հայտարարությունը։

16 «Խորհրդային մանկավարժ»-ը ՀԽԽՀ Լուսժողկոմատի օրգանն էր։ Առաջին խմբագիրն էր Մ. Սանթրոսյանը, պատ. քարտուղարը՝ Ավ. Ճուղուրյանը։ 64 էջ (25×17 սմ), տպաքանակը՝ 2000։ 1940 թ. վերանվանվեց «Սովետական մանկավարժ»։

Բնական է, որ կուլտուրական շինարարության խնդիրները չէին սպասվում մասսայ սերնդի ուսուցման գործի կազմակերպումով։ Պակաս կարևոր չէր նաև անգրագիտության վերացումը։ Պարբերական մամուլը բազմիցս վկայակոչում էր Վ. Ի. Լենինի այն միտքը, թե «անգրագետ երկրում կոմունիստական հասարակություն կառուցել չի կարելի»[17]։ 1921 թ. սեպտեմբերին ՀՍԽՀ ԺողԿոմխորհն ընդունեց անգրագիտության վերացման մասին դեկրետը, շուտով ստեղծվեց լուսժողկոմատին առընթեր անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով։ Կազմակերպվեցին դրագիտության ուսուցման կետեր, որոնց թիվը 1923—1924 ուսումնական տարում հասավ 429-ի՝ 85 հազար սովորողներով[18]։ Այստեղ ևս նշանակալից դեր խաղացին հասարակայնության նախաձեռնությունն ու աջակցությունը. դրա լավագույն արտահայտությունը եղավ անգրագիտության վերացմանն օգնող ընկերության, հետագայում՝ «Կորչի՛ անգրագիտությունը» ընկերության կազմակերպումը։

Անգրագիտության վերացման հզոր միջոց էր մամուլը։ Պարբերականները ոչ միայն լայնորեն քննարկում-հիմնավորում էին դրագիտության տարածման անհրաժեշտությունը հասարակության ամենատարբեր խավերում,— կուսակցության անդամների մեջ, բանակում, քաղաքում ու գյուղում,— այլև իրենց էջերում բացել էին յուրովի դասընթացներ՝ անգրագետներին ուսուցանելով գրաճանաչություն, կիսագրագետներին հաղորդակից դարձնելով գիտելիքների հաջորդ աստիճանին։

Մամուլը կարևոր խնդիր էր համարում «կուսակցական շարքերից այբբենական անգրագիտության վերացումը». «Այն կուսակցական ու խորհրդային հեռանկարները, որոնք դրված են մեր առաջ,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,—չենք կարող լիովին իրականացնել, եթե միանգամ ընդմիշտ չվերանա կուսակցության միջից անգրագետ բառը։ Մեր հետագա ամեն ասպարեզում տարվելիք հաղթանակները պայմանավորվում են գլխավորապես հիշյալ աշխատանքի հաջող պսակմամբ»[19]։

Նույնքան հրատապ էր կոմունիստների քաղաքական դրագի-

---

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 362։

18 Տե՛ս «Խորհրդային Հայաստան. 1920—1925» (Ժողովածու), էջ 309։

19 «Խորհրդային Հայաստան». 1922, № 231։

տության և ընդհանուր պատրաստականության բարձրացման խնդիրը։ Այնքան խոր ու բազմարնույթ էր գիտելիքների ծարավն այս ասպարեզում, որ ամենևին էլ տարօրինակ չի հնչում մամուլում արտահայտված այն պահանջը, թե՝ «պետք է բաց անել գրագիտության երեքամսյա դասընթացներ, ուր հարկավոր է դասավանդել երկրագնդի պատմությունից սկսած և վերջացրած խորհրդային կոնստիտուցիայով...»[20]։

Կուսակցական գրքույկների, բաղդատարարական խմբակների շատ կարևոր էր համարում մամուլը նաև ինքնակրթության խնդիրը։ Ամեն մի ազատ ժամ, ամենափոքր հնարավորությունն իսկ յուրաքանչյուր կոմունիստ պետք է օգտագործի գիտելիքների իր պակասը լրացնելու, մարքսիստական գրականության ուսումնասիրելու համար. «Մարքսիստական գիրքը պիտի իր պատվավոր տեղը գրավի, ինչպես առաջ հրացանը, յուրաքանչյուր կոմունիստի կյանքում»[21]։

Մամուլը միշտ էլ շեշտում էր այն սերտ կապը, որ գոյություն ուներ տնտեսական վերաշինության և կուլտուր-լուսավորական աշխատանքների բուռ ամենայնի ծավալման միջև՝ կյանքի բոլոր ասպարեզներում։ Դրանք միևնույն գործի երկու միմյանց լրացնող ու ամրապնդացնող կողմերն են, որոնց անջատումը կամ, առավել ևս՝ հակադրումը չի կարելի որակել այլ կերպ, քան պարզապես «սոցիալիզմի կառուցման լենինյան ուսմունքի վերանայում»։ Այդ երկուսն էլ, ընդգծում էր «Խորհրդային Հայաստան»-ը խմբագրականներից մեկում, «տարբեր կողմերից բավարարություն պիտի տան հիմնական անելիքին՝ Հայաստանը դարձնել տնտեսապես հառաջադիմող և լուսավոր սոցիալիստական երկիր»[22]։ Հարկավոր է մշտապես հիշել, նշում էր նույն թերթը մի այլ տեղում, որ «անգրագետ աշխատավորը սոցիալիզմի կառուցման գիտակից ու տոկուն մարտիկ լինել չի կարող»[23]։

Անգրագիտության վերացման և տոհմատարակ կուլտուր-կրթական գործի կազմակերպման հարցերին պատշաճ ուշադրություն էին նվիրում գավառական թերթերը։ Այս ասպարեզում գավառային մամուլի սկզբունքային ելակետը, տոհմատարակ այդ հարցի կարևորության ըմբռնումը գիտակ բնութագրում տացավ «Շիրակի

20 «Խորհրդային Հայաստան», 1921, № 176 (ընդգծումն իմն է—Հ. Ֆ.)։
21 Նույն տեղում, 1922, № 223։
22 Նույն տեղում, 1923, № 56 (ընդգծումն իմն է—Հ. Ֆ.)։
23 Նույն տեղում, 1927, № 2։

ռանչպար»-ի խմբագրականներից մեկում գործածված հետևյալ պատկերավոր արտահայտությամբ. «Գառն ու գայլը իրար հետ կհաշտեցնես, բայց խորհրդային իշխանությունն ու կոմունիզմը անգրագիտության հետ երբեք չեն հաշտվի»[24]: Այսպիսի համոզմունքով էին, ահա, պայքարում անգրագիտության վերացման համար «Աղքատ գյուղացի»-ն ու «Ռանչպար»-ը, «Կարմիր Լոռի»-ն ու «Բանվոր»-ը, «Կարմիր ռաշպար»-ն ու «Մուրճ ու մաճ»-ը, երիտասարդական թերթերն ու թերթիկները, տեղական ամբողջ մամուլը: Այս իրողությունը հաստատող մեջբերումների փոխարեն, որոնց վկայակոչումը կարող էր զբաղեցնել տասնյակ էջեր, հարկ ենք համարում բավարարվել «Խորհրդային Հայաստան»-ի հետևյալ հեղինակավոր հավաստումով. նշելով, որ «անգրագիտության վերացման ճիգերը մեր գավառներում առաջ են գնում ուժեղ թափով», թերթն ընդհանրացնում էր. «Չեք գտնի գավառական թերթի մի համար, որի մեջ լրջորեն չմտածվի գավառի անգրագիտության մասին»[25]:

Քաղաքական-լուսավորական աշխատանքների հիմնական ըծակներից մեկը գյուղում խրճիթ-ընթերցարաններն էին, որոնց կազմակերպմանը և գործունեության բարելավմանը մշտապես հետևում էին պարբերականները, առանձնապես «Խորհրդային Հայաստան» և «Մաճկալ» թերթերը: Խրճիթ-ընթերցարանների կազմակերպման կամպանիան մամուլում լայն ընթացք ստացավ հատկապես 1924 թ. աշնանից: Ինչպես վկայում են խմբագրությունում ստացված տեղեկությունները, նշում էր «Մաճկալ»-ը, շատ գյուղերում մենք դեռևս չունենք խրճիթ-ընթերցարաններ. եղածներն էլ մեծ մասամբ միայն անունով գոյություն ունեն և ոչ մի բանի պետք չեն. շարունակ փակված են լինում, թերթեր չեն ստանում... Այս վիճակը անհանդուրժելի է, նկատում էր խմբագրությունը, լավ կազմակերպված խրճիթ-ընթերցարանի ստեղծումը պիտի լինի «գյուղի գիտակից աշխատավորության ամենակարևոր և անհետաձգելի հոգսերից մեկը». «Խորհրդային Հայաստանում որքան գյուղ՝ այնքան էլ խրճիթ-ընթերցարան...»[26]:

Պարբերականների էջերում հանդամանորեն քննարկվում էին կուլտուրական այդ օջախների կազմակերպման հարցերը, լուսա-

---

24 «Շիրակի ռանչպար», 1923, № 105:

25 «Խորհրդային Հայաստան», 1923, № 28:

26 «Մաճկալ», 1924, № 133:

գանվում էր խրճիթվարների աշխատանքը, պատրաստվում էին «գլուխ պահողները», ուշադրություն էր հրավիրվում ձեռք բերված գրական փորձի վրա։ Մամուլի նախաձեռնությամբ անցկացվեց օրինակելի խրճիթ-ընթերցարանների մրցույթ, որը, ինչպես վկայում է համապատասխան նյութերի ուսումնասիրությունը, լայն ու աշխույժ հետաքրքրություն առաջացրեց հանրապետության բոլոր գյուղերում։ Միայն «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրությունը 1925 թ. հունվարի 16-ից մինչև փետրվարի 28-ը, մրցության վերջին օրը, ստացավ 97 թղթակցություն, որոնցից 54-ը լույս տեսավ թերթում։ Կուլտուրական շինարարության ուսումնասիրման ուշագրավ վավերագրեր են դրանք, որ, դժբախտաբար, չեն օգտագործվել այդ հարցին նվիրված գիտական գրականության մեջ։ Մրցման ընթացքը լայնորեն լուսաբանվեց նաև «Մաճկալ»-ում, որի էջերում այդ օրերին բացված էր Լուսավորությունը գյուղում հատուկ բաժինը։ Բացի այդ, խմբագրությունն ստեղծեց մի հանձնաժողով, որը թերթում լույս տեսած նյութերի հիման վրա խրախուսիչ պարգևներ (գրականություն, թերթերի տարեկան բաժանորդություն, կահավորանք և այլն) ավեց օրինակելի խրճիթ-ընթերցարաններին։

Պարբերական մամուլի վերահիշյալ գործունեությունը թևավորված էր այն խնդիրների կարևորությամբ, որ առաջադրել էր ՌԿ(բ)Կ XIII համագումարը գյուղում տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքների բարելավման, մասնավորապես գյուղի կուլտուրական ուժերի համախմբման առաջադրանքում։ Ուսուցչի, գյուղատնտեսի, բժշկի աշխատանքներում համագործակցություն և կուլտուր-լուսավորական ընդհանուր նպատակասլացություն մտցնելու համար որոշվեց խրճիթ-ընթերցարաններին կից ստեղծել քաղաքական լուսավորության կենտրոններ, որոնք համախմբելու էին գյուղի բոլոր կուլտուրական ուժերին. խրճիթ-ընթերցարանը, նշում էր մամուլը, կոչված է դառնալու «գյուղի կուլտուրական վերելքի միասնական օրգանը». այստեղ պիտի կենտրոնացվեն այն բոլոր աշխատանքները, որ տարվում են գյուղացիների քաղաքական լուսավորության, ագրոնոմիական ու բնագիտական ուսուցման, անգրագիտության վերացման, կանանց ու երիտասարդության դաստիարակության և այլ բնագավառներում[27]։

Անգրագիտության վերացման ուղղությամբ պարբերական մամուլի աշխատանքը նոր հունի մեջ մտավ ՀամԿ(բ)Կ XV համագու-

---

27 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, № 172։

մարից հետո, որն իր որոշումներում մի անգամ ևս ընդգծեց գյուղի և քաղաքի կուլտուրականացման հրամայական անհրաժեշտությունը։ Այժմ ապրում ենք մի շրջան, գրում էր «խորհրդային Հայաստան»-ը «Կուլտուրայի ֆրոնտում» խորագրով առաջնորդողում[28], երբ սոցիալիզմի կառուցման ճանապարհին «առաջխաղացման հիմնական նախապայմաններից մեկը դառնում է մեր քաղաքի և գյուղի կուլտուրական հետամնացության հաղթահարումը»։ Թերթը խնդիր էր դնում հանրապետության կուսակցական, խորհրդային, արհեստակցական ու հատկապես կուլտուր-լուսավորական կազմակերպությունների առջև՝ «վերանայել իրենց գործունեությունը XV համագումարի հրամայականների տեսանկյունով և մշակել գործնական ծրագիր մեր աշխատավորության կուլտուրականացման ճակատում ավելի շատ և ավելի շուտ ու շոշափելի նվաճումների տիրանալու համար»։ Սակայն, զգուշացնում էր թերթը, յուրաքանչյուր ծրագրմանն ու նախագծին պետք է հաջորդի կոնկրետ գործնական աշխատանքը, որպեսզի չմոլորվենք ավելորդ դրադրությունների և թղթե որոշումների բավիղներում. խոսքի և գործի միասնականությունը, մեր կազմակերպությունների գործնականությունը ևս մեր ընդհանուր կուլտուրականացման կարևոր վկայություններից մեկն է. «Ավելի շատ գո՛րծ, քան ծրագիր, դա՛ էլ կուլտուրականացման նշան կլինի, մեր պետական ապարատի ու համապատասխան մարմինների կուլտուրականացման նշան»։

Բացատրական-կազմակերպչական զգալի աշխատանք ծավալեց պարբերական մամուլը 1928 թ. աշնանից հանրապետությունում սկսված կուլտարշավի ժամանակ, ինչպես նաև ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. մայիսի 24-ի որոշման կապակցությամբ ՀՍԽՀ Լուսժողկոմատի, Գլխավոր քաղ-լուսավարչության, «Կորչի անգրագիտությունը» ընկերության, ՀԱՄԽ-ի, Հայկոոպի, Հայգյուղկոոպի և Հայտնարկոոպի միջև կնքված՝ անգրագիտության վերացման 5-ամյա պլան-համաձայնագրի կենսագործման ուղղությամբ։

«Անգրագիտության դեմ պայքարելու շաբաթ»-ը Հայաստանում սկսվեց 1928 թ. հոկտեմբերի 25-ին. իսկ մինչ այդ մամուլն արդեն նախապատրաստական լայն աշխատանք էր տարել՝ բացատրելով հասարակայնությանը և ամենատարբեր կազմակերպություններին ու հիմնարկներին վերապահված կարևոր դերը կուլտարշավի ողջ ընթացքում, որի առաջին փուլը տևելու էր վեց ամիս՝

28 Տե՛ս նույն տեղը, 1928, № 20։

1928 թ. նոյեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը։ Հիշեցնելով, որ հանրապետության չափահաս աղդաբնակչության (16—35 տարեկան) 80 տոկոսը՝ 150 հազար հոգի անգրագետ է, մամուլը, մի շարք ֆինանսական հաշվումներ անելուց հետո, եզրակացնում էր. «Անգրագիտության վերացման համար պետության բյուջեով հատկացվող գումարներն այնքան մեծ չեն, որ առանց կողմնակի օգնության այդքան մարդկանց անգրագիտությունը հնարավոր լինի վերացնել 8—10 տարուց շուտ». մինչդեռ «բացարձակապես անհրաժեշտ է և հաստատապես որոշված՝ մինչև 1934—35 թվականները, երբ Հայաստանում պիտի մտցվի ընդհանուր տարրական կրթություն, վերջնականապես վերացնել բնակչության անգրագիտությունը»։ Ուստի, կոչ էր անում մամուլը, հարկավոր է վերակենդանացնել «Կորչի՛ անգրագիտությունը» ընկերության գործունեությունը, անհապաղ կենսագործել «Յուրաքանչյուր գրագետ կոմերիտական պետք է սովորեցնի մի անգրագետ կոմերիտականի» լոզունգը, շուտափույթ կերպով համախմբել հասարակայնության բոլոր կարող ուժերը[29]։

«Խորհրդային Հայաստան» թերթում պարբերաբար սկսեց երևալ Կուլտուրական արշավանք խորագրով նոր բաժինը։ Պրոպագանդիստական-բացատրական ընդհանուր բնույթի հոդվածներից, կոչ-հորդորներից ու հրահանգներից բացի՝ այստեղ տպագրվում էին կոնկրետ թղթակցություններ, նամակներ, վիճակագրական տվյալներ, կուլտարշավի ակտիվ մասնակիցներին նվիրված նյութեր, աշխատանքային փորձի ընդհանրացումներ, դիտողություններ թերությունների ու բացերի վերաբերյալ։ Երբեմն-երբեմն թերթը տալիս էր նաև անգրագիտության վերացման խնդիրներին նվիրված հատուկ էջեր։

Առանձնակի ակտիվություն և հետևողականություն դրսևորեց «Ավանդարդ»-ը։ Կոմսոմոլի կուլտուրական արշավանքը գլխադրի ներքո թերթը զետեղում էր առանձին էջեր ու բաժիններ, որոնք համեմված էին Վ. Ի. Լենինի հոդվածներից ու ճառերից, կուսակցության համապատասխան որոշումներից քաղված մեջբերումներով։ 1928 թ. № 81-ից թերթում սկսեց գործել «Հեռակա ուսուցման անկյուն»-ը՝ Սովորենք վարժ կարդալ և կանոնավոր գրել ենթախորագրով։ Այստեղ տպագրվում էին պարզ, հստակ ձևաձիր փոքրիկ տեքստեր՝ արտագրելու և կարդալու համար. թերթը վարժություն-

29 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1928, № 241։

ներ էր առաջարկում, սովորեցնում էր հասցե ու նամակ գրել և այլն, դրանով իսկ գործնական օգնություն ցույց տալով գրագիտության տարածման ասպարեզում աշխատող կոմերիտական ակտիվիստներին։ 1929 թ. հունիսի վերջից թերթում բացվեց նաև «Ռուսաց լեզվի անկյուն» («Уголок русского языка»). ընթերցողները կարող էին ծանոթանալ ռուսերեն արտասանության և շեշտադրության կանոններին, սովորել շաբաթվա օրերի ու ամիսների, տարվա եղանակների անունները. տպագրվում էին առանձին փոքրիկ ռուսերեն նախադասություններ, նույնը՝ հայերեն տառերով (տրանսկրիպցիա), ապա՝ դրա հայերեն թարգմանությունը[30]։ «Ավանգարդ»-ի նախաձեռնությամբ կոմերիտմիությունը ստանձնեց ընդհանուր պարտադիր կրթության շեֆությունը Հայաստանում[31]։

Ուշադրավ և հիշատակելի է «Մաճկալ»-ի դերը։ Անգրագիտության վերացման ասպարեզում խմբագրության կատարած աշխատանքն անմիջականորեն բխում էր առհասարակ գյուղի կուլտուրականացման գործում թերթի առջև դրված այն խնդիրներից, որ Ալ. Մյասնիկյանն իր նամակներից մեկում ընորոշել էր իբրև «հեղափոխական պարտականություն»[32]։

Դեռևս 1923 թ. հոկտեմբերին «Մաճկալ»-ի խմբագրությունում ստացվեց մի նամակ. հեղինակը, որ մեծահասակ սովորող էր, գանգատվում էր, թե իրենց ուսուցիչը դասի ժամանակ դասագրքի փոխարեն կարդում է «Մաճկալ» լրագիրը։ Խմբագրությունն անհրաժեշտ համարեց անդրադառնալ այդ նամակին, պաշտպանել ուսուցչի նախաձեռնությունը. արծարծած հարցերի բազմազանությամբ ու մատչելիությամբ, նկատում էր խմբագրությունը, «Մաճկալ»-ն իրոք կարող է դասագրքի դեր կատարել. կարդալ-գրել սովորեցնելուց բացի՝ թերթը նաև ընդարձակում է գյուղացիների

30 Տե՛ս «Ավանգարդ», 1929, №№ 46, 48, 52, 54, 55 և այլն։

31 Տե՛ս նույն տեղը, 1930, № 179։

32 Ալ. Մյասնիկյանի այս նամակից մի քաղվածք խմբագրությունը հրապարակեց նրա ողբերգական մահվան լուրն ստանալուց հետո, թերթի 1925 թ. մարտի 25-ի համարում՝ «Ընկ. Մյասնիկյանի պատգամը «Մաճկալ»-ին» խորագրի ներքո։ Ի դեպ՝ նույն համարում տպագրվեց նաև խմբագրությանն ուղարկած Ալ. Մյասնիկյանի ամենավերջին նամակի ձեռագիրը, որտեղ ասված է. «Ուղարկելով 20 ռ., խնդրում եմ 10 օրինակ «Մաճկալ»-ից (մինչև տարվա վերջը. ամբ. օրինակը 10 ամսվա համար արժե 2 ռ., ընդամենը՝ 20 ռ.) նվիրեցեք դրանում կարիք զգացող գյուղերին՝ ըստ Ձեր հայեցողության»։ «Ինքը՝ ընկ. Մյասնիկյանը,— ավելացնում էր խմբագրությունը,— շարունակ ստանում էր «Մաճկալ» և կարդում էր գյուղացիների գրած նամակները»։

մտահորիզոնը՝ տեղյակ պահելով նրանց մեր երկրում և դրսի աշխարհում տեղի ունեցող անցուդարձին, գյուղական կյանքի լավ ու վատ կողմերին, խորհուրդներ է տալիս տնտեսությունը բարելավելու, կենցաղը նոր հիմունքներով կազմակերպելու, հիվանդություններից խուսափելու, բնության երևույթները ճիշտ ըմբռնելու և շատ ու շատ այլ անհրաժեշտ բաների մասին. ուստի և սովորողների համար «Մաճկալ»-ը ձեռնտու և հարմար է. միայն հարկավոր է հայտնել, թե լրագիրն «ի՞նչ պակաս կողմեր ունի, ի՞նչ բանի մասին շատ գրի, որ դառնա լավ դասագիրք»[33]:

1928 թ. հոկտեմբերից «Մաճկալ»-ում բացվեց Ինքնուսի անկյուն բաժինը. խմբագրությունը մտադրվել էր օժանդակել գյուղի հասակավոր կիսագրագետներին և բոլոր նրանց, ովքեր ցանկություն ունեն «ինքնաշխատության միջոցով սովորել՝ կարդացածը հասկանալ, լրագրով ու գրքով պարապել, իրենց մտքերը գրավոր արտահայտել, պատի լրագրին և «Մաճկալ»-ին թղթակցել, նամակ. դիմում, արձանագրություն և այլ գրության գործնական ձևեր գրել»: Նախատեսվում էր բաժնում դնել հայոց լեզվի 50 դաս, առաջին քանը՝ կիսագրագետների գրքույկ, իսկ մնացածը գյուղացիական երեկոյան միամյա դասընթացի, առաջին աստիճանի կուսդպրոցի և բարձր տիպի Ա խմբի հայոց լեզվի ծավալով:

1930 թ. հունիսից «Մաճկալ»-ը ձեռնարկեց «Հեռակա դասեր»-ի անցկացմանը՝ դարձյալ կիսագրագետների համար: Այդ դասերի կամ, ինչպես խմբագրությունը որակեց՝ «Գյուղական հանրակրթական դասընթաց»-ի նպատակն էր «օգտակար դիտելիքներ հաղորդել», «սովորեցնել ուղիղ կարդալ, գրել և հաշվել, լրագրով, գրքով և բարտեղով աշխատել»: Բացատրելով, թե ինչպես պիտի օգտվել դասընթացից, թերթը վերջում խորհուրդ էր տալիս. ««Մաճկալ»-ից կտրեք-հանեք բոլոր դասերը, կարգով դասավորեք և կստանաք մի ամբողջական դասագիրք. կամ առանձին պահեք «Մաճկալ»-ի բոլոր այն համարները, որտեղ դասերն են տպված»[34]: Ամբողջ դասընթացը, հայտնում էր խմբագրությունը, բաժանված է չորս մասի: Առաջին բաժնում «կկարդաք կոոպերացիայի, կոլտնտեսության, խորհտնտեսության մասին». երկրորդում «կխոսենք մեր արդյունաբերության խնդիրների մասին». երրորդում կպատկերվեն խորհուրդների աշխատանքն ու խորհրդային իշխանության

33 «Մաճկալ», 1923, № 80:
34 Տե՛ս նույն տեղը, 1930, № 63:

կառուցվածքը. շարադրում «կկարդաք այն մասին, թե ինչպես են ապրում գյուղացիներն ու բանվորները կապիտալիստական երկրներում. այստեղ կխոսվի նաև Կարմիր բանակի, Լենինի կյանքի և աշխատանքի մասին»։ Դասընթացի այս ընդհանուր պլանին զուգահեռ զետեղվելու էին զրույց-հոդվածներ՝ ընթացիկ քաղաքական-տնտեսական կամպանիաների և տոների վերաբերյալ[35]։ Յուրաքանչյուր հետակա դաս վերջում ունենալու էր հարցեր և առաջադրություններ, տրվելու էին նաև դժվար ըմբռնելի բառերի բացատրությունները։ Նախատեսելով այսքան ընդարձակ ծրագիր, թերթը, դժբախտաբար, չկարողացավ մինչև վերջ իրականացնել այն։ Ինչ-ինչ պատճառներով՝ 6-րդ դասից հետո դասընթացն ընդհատվեց. տպագրվեցին միայն մայիսի 1-ին, Հայաստանում Մայիսյան ապստամբությանը, անգրագիտության վերացման դեկրետին և կուլտարշավին նվիրված զրույց-դասերը։

Անգրագիտության վերացման խնդիրներն իրենց տեղն ունեին նաև «Բանվոր»-ում, «Կարմիր զինվոր»-ում, «Կարմիր ռաշպար»-ում, երիտասարդական ու հասարակական-քաղաքական հանդեսների էջերում, մանկավարժական-դպրոցական մամուլի օրգաններում։ Բացի այդ՝ 1931—1932 թթ. մեր հանրապետությունն ուներ անգրագիտության վերացմանը նվիրված իր հատուկ պարբերականը՝ «Դեպի համատարած գրագիտություն» ամսագիրը[36]։

Սոցիալիստական շինարարությունը հաջողությամբ ավարտելու և ձեռք բերված նվաճումներն ամրապնդելու շահերը, նկատում էր լուսժողկոմ Ա. Եղիազարյանը անդրանիկ համարի խմբագրականում, հրամայական պահանջում են, որպեսզի «մեր խորհրդային երկնակամարի տակ ոչ մի անգրագետ չլինի, իսպառ վերանա անգրագիտությունը». իսկ դա, ինչպես ոմանք են կարծում, «ոչ թե «անմեղ» կուլտուրական գործ է, այլ մեզ համար, մեր հեղափո-

---

35 Տե՛ս նույն տեղը, № 65։

36 «Դեպի համատարած գրագիտության» առաջին համարը լույս տեսավ 1931 թ. հոկտեմբերին. այն ուներ Ամսագիր կիսագրագետների համար ենթանվանումը. համարի վրա չի նշված, թե ո՞ւմ օրգանն է։ № 2-ից հրատարակվում է իբրև ՀՍԽՀ Լուսժողկոմատի օրգան, փոխվում է ենթանվանումը՝ Ամսագիր նոր կարդալ սովորողների համար։ Շարունակվել է մինչև 1932 թ. մարտ ամիսը՝ ընդամենը 6 համար։ Պատ. խմբագիրներն են եղել Ա. Ստեփանյանը, Ս. Դավթյանը, Ն. Թերզյանը։ 16—20—24 էջ (27×18 սմ), տպաքանակը՝ 1150—5000։ Ամսագրին աշխատակցել են Սիմակը, Ա. Մովսիսյանը, Ա. Բարայանը, Ռ. Գարրիելյանը, Հ. Անդրեասյանը և ուրիշներ։

խությունն, սոցիալիզմի կառուցման համար նշանակություն ունեցող քաղաքական խնդիր է, կապիտալիզմի արմատները մեր երկրում ոչնչացնելու համար խոշոր գործոն է»։ Ամսագիրն զգալի առաջընթաց էր համարում այն իրողությունը, որ ընթացիկ 1931 թվականին հանրապետությունում վերացվել է 87 հազար հոգու անգրագիտությունն ու կիսագրագիտությունը. ավելի մեծ էին առաջիկա անելիքները՝ անհրաժեշտ էր խավարից ու խարխափումից ազատագրել ևս 156 հազար հոգու։ Գրագիտության տարածմանը նպաստելու հետ մեկտեղ, տպված է նույն խմբագրականում, հանդեսն «իր աշխատանքները, նյութերը այնպես պետք է դրսևորի, որ օժանդակած լինի կիսագրագետների լրիվ գրագետ դառնալու գործին, պայքարի անգրագիտության հետադարձի (ռեցիդիվ) դեմ...»։

«Դեպի համատարած գրագիտություն»-ը տպագրում էր համառոտ հանրամատչելի զրույցներ մեր երկրում տեղի ունեցող տնտեսական ու կուլտուրական շինարարության, հասարակական-քաղաքական կյանքի մասին, տարբերական գիտելիքներ էր հաղորդում մարքսիզմ-լենինիզմի ուսմունքից, զետեղում էր բնության ու կենդանական աշխարհի վերաբերյալ փոքրիկ նկարագրություններ, հրապարակում էր ոտանավորներ, ակնարկներ, արձակ պատկերներ։ Ամսագրի էջերում տեղ էին գտնում նաև նոր-նոր գրել-կարդալ սովորողների ձեռագրերը, նամակները և լիկբեզների առօրյան արտահայտող այլ նյութեր։ Պետք է նշել, սակայն, որ առաջին երկու համարների նյութերի մեծ մասն ուներ ընդհանուր-ճառային բնույթ և շարադրանքի ոճով ու բառապաշարով այնքան էլ չէր համապատասխանում հանդեսի առջև դրված յուրահատուկ խնդիրներին։ Բարեբախտաբար շուտով այս թերությունները հաղթահարվեցին, և ամսագիրը դարձավ անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելուն նպաստող արդյունավետ միջոցներից մեկը։

3

Անգրագիտության վերացման, առհասարակ կուլտուրական հեղափոխության իրագործման գրավականը մամուլն իրավացիորեն տեսնում էր այն պատմական շրջադարձի մեջ, որ նշանավորվեց Մեծ Հոկտեմբերի հաղթանակով։ «Գիտության հզոր զենքն անցնում է աշխատավորների ձեռքը,— գրում էր դեռևս «Կոմունիստ»-ը,— շովինիզմի ու կղերականության հոգևոր կապանքնե-

ից աղաղված Հայաստանի աշխատավորությունը թեակոխում է սոցիալիստական գիտության և հեղափոխական լուսավորության ասպարեզը։ Սրանո՛վ կհաղթենք»[37]։

1921 թ. հունվարին իր աշխատանքներն սկսեց Երևանի ժողովրդական համալսարանը, որն ուներ 225 ուսանող։ Վերականգնման շրջանի վերջում այդ թիվն ավելի քան քառապատկվեց։ 1923 թ. հիմնադրվեց կոնսերվատորիան, կազմակերպվեցին Երևանի ու Լենինականի բանֆակները, բացվեցին տեխնիկումներ։ Հայաստանում առաջանում էր կուլտուրական մի նոր խավ՝ ուսանողությունը, որի կրթության ու գաղափարական դաստիարակության հետ կապված հարցերի քննարկումը սկզբից ևեթ պատշաճ տեղ գրավեց մամուլի էջերում, առանձնապես «Խորհրդային Հայաստան» և «Ավանգարդ» թերթերում։ 1928 թ. Երևանում բացվեց Անդրկովկասյան անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը։ Երկու տարի անց համալսարանի ֆակուլտետները վերակազմվեցին-վերածվեցին առանձին ինստիտուտների՝ գյուղատնտեսական, բժշկական, առևտրա-կոոպերատիվ, մանկավարժական և շինարարական (հետագայում՝ պոլիտեխնիկական)։ Հաջորդ տարիներին ևս բացվեցին նոր ինստիտուտներ, ուսումնարաններ ու տեխնիկումներ։ Զարգացավ բարձրագույն և միջնակարգ կրթությունը։ «Շատ նշանակալից առաջխաղացում» է նկատվում «գիտության, գեղարվեստի, կուլտուրական աշխատանքի բոլոր ճյուղերում,— ընդհանրացնում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— և հատկապես այն ճյուղերում, որոնք կապված են սոցիալիստական մեր տնտեսության վերելքի և բանվորա-գյուղացիական մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման հետ»։ Մեր գիտական և ուսումնական հաստատությունները «վերացական արժեքներ չէ, որ արտադրում են, այլ արժեքներ, որ ունեն ամենակենսական, գործուն, դաստիարակող նշանակություն՝ սոցիալիզմի արժեքներ»[38]։

Մամուլը սուր կերպով բարձրացնում էր պրոֆտեխնիկական և պոլիտեխնիկական կրթության կազմակերպման, գիտության ու սոցիալիստական շինարարության պրակտիկայի սերտ կապի ապահովման խնդիրները։ Երիտասարդության պրոֆտեխնիկական ուսուցման գործը մեղանում ետ է մնում արդյունաբերության զար-

---

37 «Կոմունիստ», 1920, № 12։

38 «Խորհրդային Հայաստան», 1927, № 85։

գացման թափից, նշում էր «Ավանգարդ»-ը 1927 թվականի առաջնորդողներից մեկում[39]։ Թերթն իրավացիորեն գտնում էր, որ Երևանում ու Լենինականում գործող պրոֆտեխնիկական դպրոցները չեն կարող բավարարել ժողովրդական տնտեսության աճող պահանջները և հարկավոր է բացել նորերը։ Մանավանդ այժմ, եզրակացնում էր թերթը, «երբ արդյունաբերության առաջ կանգնած է սոցիալիստական ռացիոնալիզացիայի կիրառման հարցը, հրատապ մի խնդիր, որակյալ բանվորների կադրեր ստեղծելու կարիքը ավելի մեծ ու անհետաձգելի է դառնում»։

Կարևոր դեր էին կատարում նաև բանֆակները, որոնց գործունեությունը շատ բարձր էր գնահատում մամուլը։ Նրանք կոչված էին լուծելու «ստեղծագործական կադրերի պատրաստման հարցը». բանֆակների միջոցով է, որ «պրոլետարիատի մեծ գործին անձնվիրաբար լծված մասնագետ-գիտական ուժերի կողքին պրոլետարիատն ստեղծում է իր կարմիր կադրերը, պրոլետար մասնագետները»,— նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը բանֆակների՝ «պրոլետարական գիտության դարբնոցների» 10-ամյակին նվիրված առաջնորդողում[40]։ Երկրի ինդուստրացման գործը, գյուղատնտեսության բարձրացման ու կոլեկտիվացման պահանջը, շարունակում էր թերթը, իր ամբողջ մեծությամբ գնում է մեր առաջ գիտությունը մասսաներին տալու, կուլտուրական հեղափոխության նվաճումները է՛լ ավելի ամրացնելու անհրաժեշտությունը։ Պայքարի այս ասպարեզում բանֆակները այն հատատուն կամուրջներն են, որոնք գյուղացուն և հանրահարի բանվորներին կապում են գիտության հետ»։

Մասնագիտական կրթության հարցերը մամուլը սերտորեն շաղկապում էր ուսանողներին ակտիվ հասարակական աշխատանքի ներգրավելու, պրոլետարական գաղափարախոսության ոգով նրանց աշխարհայացքը կազմավորելու խնդիրների հետ։ Կարևոր դեր խաղաց մամուլը հատկապես ընդհանուր-մասնագիտական ուսուցման և քաղաքական պատրաստականության փոխհարաբերության ճիշտ ըմբռնումն ապահովելու գործում։ Մամուլը պայքարում էր երկու ծայրահեղությունների դեմ. քննադատում էր և՛ նրանց, ովքեր արհամարհում էին գործնական գիտելիքների յուրացման կարևորությունը, շեշտը դնելով «քաղաքականությամբ

39 Տե՛ս «Ավանգարդ», 1927, № 85։

40 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1929, № 55։

տարվելու» անհրաժեշտության վրա, և՛ նրանց, ովքեր բացարձակացնում էին գործնական դիտելիքներին տիրապետելու նշանակությունը, միանգամայն անտարբեր լինելով քաղաքական պատրաստականության նկատմամբ։ Երկու ծայրահեղություններն էլ «սխալ են և վտանգավոր»,— նշում էր «Ավանգարդ»-ը։ Սոցիալիստական շինարարության շահերը պահանջում են ոչ թե հակադրել, այլ ներդաշնակել դաստիարակության այդ երկու կողմերը. «Եթե ցանկանում ես սոցիալիզմի կառուցման աշխատանքին քաղաքականապես օգտակար լինել,— խորհուրդ էր տալիս թերթը,— պետք է տիրապետես այն դիտելիքներին, որոնք քեզ անհրաժեշտ են արտադրության կամ գյուղատնտեսության մեջ և առհասարակ այն բնագավառում, ուր դու աշխատում ես». մյուս կողմից էլ, շարունակում էր թերթը, չպետք է մոռանալ նաև, որ «քո ընդհանուր կրթությունն ու գործնական դիտելիքները կարող են տեղին և նպատակահարմար չգործադրվել և երբեմն նույնիսկ կամա թե ակամա վնասել սոցիալիզմի կառուցման աշխատանքին, եթե դու զուրկ ես քաղաքական պատրաստականությունից»[41]։

Ուսանող երիտասարդության դաստիարակությանը, ինչպես և ուսումնական պրոցեսի կազմակերպմանը նպաստելու էին գալիս ուսանողական պարբերականները («Նոր ուսանող», «Երիտասարդ հարվածային», «Հարվածային ուսանող», «Խորհրդային հարուստագետ» և այլն)։

* * *

Այսպիսով, մեր հանրապետության պարբերական մամուլն սկզբից ևեթ ուշադրության կենտրոնում էր պահում կրթության և կուլտուր-լուսավորական աշխատանքների ծավալման հարցերը։ Թերթերն ու հանդեսները բազմակողմանիորեն քննարկում էին դպրոցական շինարարության, անգրագիտության վերացման, խորհրդային մանկավարժության սկզբունքների հետ կապված հրատապ խնդիրները, արտացոլում մանկավարժական պրակտիկան։ Մամուլը գործնական առաջարկներով օգնում էր ուսուցչության դաստիարակչական-պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացմանը, գրագիտության տարածմանը, կոչ անելով ուսումնա-դաստիարակչական ամբողջ աշխատանքը սերտորեն շաղկապել սոցիալիստական շինարարության խնդիրներին, ծառայեցնել դրանց իրականացմանը։

---

41 «Ավանգարդ», 1926, № 28։

ԳԼՈՒԽ II

ՄԱՄՈՒԼԻ ՊԱՅՔԱՐԸ ՆՈՐ ՄԱՐԴՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Հանուն նոր կենցաղի արմատավորման. բաղաքենիության քննադատությունը. նոր ապրելակերպի կուլտուրան: Առողջապահության և ֆիզիկական դաստիարակության խնդիրներ. «Բժշկական հանդես». «Առողջապահությունը Հայաստանում», «Առողջ կենցաղ» («Առողջապահության ֆրոնտում») հանդեսները, սպորտային պարբերականներ: Կանանց շրջանում տարվող աշխատանքի ճարցեր. «Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը: Մամուլի հակակրոնական պայքարը. սխալների և վնասակար մտայնությունների հաղթահարումը. «Անաստված» հանդեսը:

1

Կուլտուրական շինարարության կարևոր օղակներ էին նոր կենցաղի կազմակերպման համար գործադրվող ջանքերը, կանանց շրջանում տարվող աշխատանքը և պայքարը կրոնի դեմ: Այս բոլորը մամուլը դիտում էր իբրև երկրում կատարվող սոցիալական արմատական վերափոխումներին ուղեկցող երևույթներ և գաղափարական-դաստիարակչական ներգործության ոլորտի մեջ էր առնում այդ ասպարեզներում կատարվող ամեն մի քիչ թե շատ նշանակալից տեղաշարժ:

Պարբերական մամուլի գործունեության այս կողմը, անշուշտ, հասարակական խոշոր արժեք ու հնչեղություն ուներ և նշանակալից էր ոչ միայն նորօրյա բարոյա-քաղաքական խնդիրների արծարծման տեսակետից, այլև սոցիալիստական հասարակության հեռանկարները ուրվագծելու առումով: Սրանք հարցեր էին, որ ուղղակիորեն առնչվում էին հասարակության բոլոր խավերի շահերին՝ թե՛

գործնականում և թե՛ ընդհանուր-գաղափարական սկզբունքների հաստատման մեջ։

Ինքնին հասկանալի է, որ հնարավոր չէր միանգամից հրաժարվել-թոթափել հին և հաստատել նորը, մի ոստյունով թռչել անդունդի վրայից։ Անհրաժեշտ էր նուանդուն աշխատանք տանել բոլոր ուղղություններով, հաղթահարել հրեշավոր պահպանողականությունը։ Հին կենցաղի, հին սովորույթների, նախապաշարումների քննությունն ու քննադատությունը մամուլը գուգակցում էր նորի հաստատման ու արմատավորման համար մղվող ակտիվ, ներգործուն պայքարի հետ։ Ինչպես ընդգծում էր «Խորհրդային Հայաստան»-ը՝ պարբերական մամուլը «ամեն օր ու ամեն կողմից քննում է ներկա կենցաղը և միջոցներ և ուղիներ նշում նոր կենցաղ կերտելու համար»։ «Այդ նոր կենցաղը՝ նոր սեր, նոր ընտանիք, մարդկային-բարոյական նոր փոխհարաբերություններ,— գրում էր թերթը,— իհարկե, գլխից, վերացականորեն չէ, որ պիտի ստեղծենք կոմունիստներս այս կամ այն դեկրետով։ Մի նոր, հնից տարբերվող կենցաղի տարրերն ստեղծվում են, մակարդվում իրև արդյունք մեր աչքերի առջև կատարվող խոշորագույն սոցիալական վայրիվերումի, որի ակտիվ մասնակիցները մեկ-երկուսը չեն, այլ հազարներ ու հարյուր հազարներ ու միլիոններ»[1]։

Նոր կենցաղի կազմակերպման հարցերին մեծ ուշադրություն և տեղ էր հատկացնում Հայաստանի ամբողջ պարբերական մամուլը. չկար գյուղում տեղի ունեցող որևէ ուշադրավ երևույթ՝ կենցաղային-ընտանեկան-ամուսնական փոխհարաբերությունների ոլորտում, որ դուրս մնար «Մաճկալ»-ի տեսադաշտից. «Բանվոր»-ը հաճախակի անդրադառնում էր աշխատավորության կենցաղին, երեխաների դաստիարակության, մանկամատուցների ու մանկապարտեզների ցանցի ընդլայնման հարցերին. «Ավանդարդ»-ը հեղեղված էր երիտասարդությանը հուզող նոր խնդիրներին նվիրված բազմապիսի նյութերով (սեր, ընկերական փոխհարաբերություններ, վերաբերմունք մեծահասակների նկատմամբ, որդիական զգացմունք, նորաձևություն և այլն). «Կարմիր ռաշպար»-ը գրում էր նշանդրեքի, հարսանեկան ծեսերի, անվանակոչությունների, կնության մասին. «Կարմիր դինվոր»-ում ամենևին էլ վերջին տեղը չէին բռնում ֆիզկուլտուրայի, առողջապահության, մաքրության, հավատարմության, ճշտապահության հարցերը. կենցաղային ու բա-

---

1 «Խորհրդային Հայաստան», 1923, № 199։

բոյական նոր սկզբունքների արմատավորմանը նվիրված բաժիններ ունեին այդ ժամանակ հրատարակվող հանդեսներն ու ամսագրերը...

Իհարկե, վերոհիշյալ բաժանումները սոսկ պայմանական են, և միամտություն կլիներ մտածել, թե պարբերականներից ամեն մեկը արծարծում էր միայն հիշատակված խնդիրները։ Դրանք այս կամ այն չափով իրենց արտացոլումն ու արձագանքն էին գտնում պարբերականներից յուրաքանչյուրում. կենցաղային-բարոյական խնդիրները՝ իրենց բոլոր տեսակի դրսևորումներով՝ ընդհանուր պրոբլեմ էին Հայաստանի ամբողջ մամուլի համար, որը բազմակողմանիորեն հոգում էր «մեր կյանքի կուլտուրական բարեկարգման, ընտանեկան կենցաղի արմատական հեղաշրջման և մասսաների հասարակական բնազդների ազնվացման ու դաստիարակման մասին»[2]։

Հասարակության հիմնովին վերափոխման համար մղվող պայքարի ամենաակտիվ տարրերից մեկն էր երիտասարդությունը և, բնականաբար, նրա բարոյա-էթիկական դաստիարակության հարցերը մշտական հոգածության առարկա պիտի լիներին թե՛ կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունների, թե՛ պետական մարմինների և թե՛, մանավանդ, մամուլի համար։ Ըստ որում, ելակետային նշանակություն ուներ այդ դաստիարակության բոլոր ձևերն ու մեթոդները իրականության, կյանքի ու պայքարի կենդանի պրոցեսների հետ սերտորեն շաղկապելու, ավելի ճիշտ՝ այդ պրոցեսներից բխեցնելու այն ռեալիստական պահանջը, որը կենսական էր դարձել նաև պարբերական մամուլի համար՝ գործունեության բոլոր ոլորտներում։ Այդ սկզբունքն իր հստակ և դիպուկ արտահայտությունն ստացավ Ալ. Մյասնիկյանի «Հոդատարություն երիտասարդության նկատմամբ» հոդվածում, որ հրապարակվեց նախ «Զարյա Վոստոկա», ապա «Ավանդարդ» թերթերում[3]։ «Մեր կարծիքով,— գրում էր Ալ. Մյասնիկյանը,—չի կարելի նորմաների տակ դնել երիտասարդության մորալը, կենցաղը կամ սեռական կյանքը՝ ելակետ ունենալով զուտ տեսական դատողությունները կամ պարզապես բարի ցանկությունները, որովհետև այդ ճանապարհը բռնելով՝ կարող ես ընկնել քաղքենիության, իդեալիստական ուժասպառության մեջ։ Կոմունիստական մորալը և նոր

---

2 «Խորհրդային Հայաստան», 1923, № 218։

3 Տե՛ս «Заря Востока», 10 февраля 1925 г., «Ավանդարդ», 1925, № 16։

կենցաղը առաջ են գալիս նոր կյանքի պրոցեսում և կոիվների, հաղթանակների, պարտությունների ու մեր սերնդի առաջադիմող շարժման հնոցում»:

Սոցիալիստական կենցաղավարության, հասարակական-բարոյական նոր ըմբռնումների արմատավորման համար հետևողական ու բազմակողմանի պայքար ծավալեց կոմերիտական մամուլը, մասնավորապես «Ավանգարդ» թերթը: Այստեղ հաճախ էին տպագրվում հարբեցողությունը, անբարոյականությունը, փնթիությունը, շահադիտական նպատակներով ամուսնությունները, հին ու մերժելի սովորույթներին կառչած մնալու փաստերը այպանող հոդվածներ, նամակներ, ռեպլիկներ, որ ղետեղվում էին Մեր կենցաղի մասնի ու խոշոր բացերից, Ի՞նչն է վարկաբեկում կոմերիտմիությանը և այլ խորագրերի ներքո՝ առանձին բաժիններում կամ նպատակային էջերում: Այս նյութերն արժեքավոր էին առանձնապես նրանով, որ ընդհանուր, վերացական դատողությունների փոխարեն արձանագրում էին իրական փաստեր ու եղելություններ՝ դրանցից բխող կոնկրետ եզրակացություն-առաջարկներով: Քիչ չէին նաև դիպուկ ու սրամիտ ծաղրանկարները, որոնցով համեմվում էին վերոհիշյալ բաժիններն ու էջերը:

Հետևելով «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթին, «Ավանգարդ»-ը ևս 1927 թ. կեսերից սկսեց քննարկել նոր օրերին խորթ այնպիսի մի վնասակար երևույթ, ինչպիսին քաղքենիությունն էր՝ իր բազմաձև դրսևորումներով: Կոչ անելով կոմերիտականներին ու երիտթղթակիցներին՝ արտահայտվել այդ խնդրի շուրջը, թերթն իբրև կողմնորոշիչ նյութ «Կոմսոմոլսկայա պրավդա»-ից արտատպեց ««Մեշչան», «մեշչանականություն»» խորագրով հոդվածը[4], որն աչքի է ընկնում հստակ բնութագրումներով, հասարակական անկեղծ պաթոսով: Քաղքենիությունն արտաքին հատկանիշ չէ, ասում-հաստատում էր թերթը, այլ կյանքի երևույթների, հասարակության նկատմամբ պարտքի ու պարտականության յուրովի, եսամոլական ընկալման արգասիք. դրա համար էլ թյուրիմացություն է, երբ հաճախ քաղքենի են անվանում «համարյա այն բոլոր երիտասարդներին, որոնք հագնում են կապույտ կոստյում, դեղին կոշիկներ ու նախշուն դուլպաներ». «որոշելու համար մեշչանականությունը, պետք է դիտել, թե ինչով է շնչում մարդ և որոնք են նրա հիմնական ձգտումները:

---

[4] Տե՛ս «Ավանգարդ», 1927, № 68:

Մեշչանինովությունը դա անհատապաշտությունն է, հասարակայնությունից խուսափելը, ամեն ինչ իր «ես»-ին ծառայեցնելու ձգտումը:

... Մեշչան է և բյուրոկրատ:

Նա իր ընկերներին և մարդկանց ոչ թե միատեսակ է մոտենում, այլ ըստ դասակարգման, որպես մի սանդուղք, որով նա կարող է վեր բարձրանալ: Կոմունիստական իդեալը նրա համար դրոշ չէ, կյանքի նպատակ չէ, այլ մի փոխանության տոմս, որն ամսի 1-ին և 15-ին որոշ տոկոս է բերում»:

Առանձնապես վնասակար ու վտանգավոր է քաղքենիությունն այն դեպքում, եթե կատում էր Թերթը, երբ նրանով վարակվում են զանազան զեկավար դիրք զբաղեցնող անձինք. «Բարձր պաշտոնը նրանց համար հաղարավոր մարդկանց սոցիալիստական շինարարության շուրջը համախմբելու միջոց չէ, այլ պատվավոր մի բնակավայր, մի աշտարակ, որտեղ նրանք կարող են մարդկանցից բարձր կանգնել ու այնտեղից հրամայել նրանց»:

Այս չափանիշներով էլ, ահա, «Ավանգարդ»-ը մերկացնում-քննադատում էր քաղքենիական «բարոյականության» դրսևորումները, երիտասարդությանը կոչ էր անում պայքարել հասարակական այդ արատի դեմ, որի իսպառ վերացումը Թերթը իրավացիորեն նոր կյանքի առողջ ու լիաթոր զարգացման նախապայմաններից մեկն էր համարում:

«Ավանգարդ»-ը շարունակաբար ընդգծում էր այն կարևոր, առաջատար դերը , որ կոչված էր կատարելու կոմերիտմիությունը կուլտուրական հեղափոխության իրականացման գործում: «Մեր հիմնական խնդիրն է,— գրում էր Թերթը «Կուլտուրական հեղաշրջումը և մենք» առաջնորդողում,— հեղաշրջումը մացնել մեր կյանքի և աշխատանքի բոլոր բնագավառները»[5]: «Ավանգարդ»-ը կազմակերպում էր «Կուլտուրական արշավներ», ուսումնասիրում երիտասարդության, հատկապես բանվորների և ուսանողների կենցաղային-աշխատանքային պայմանները, հանրակացարանների հիգիենիկ վիճակը, սպասարկման որակը ճաշարաններում, առողջապահական ու սանիտարական ծառայության հիմնարկները: Այդպիսի նախաձեռնություն հանդես բերեց նաև «Բանվոր» Թերթը: Ուշադրավ են «Բանվոր»-ը հետազոտում է Լենինականի ժողովրդական

---

5 *«Ավանգարդ», 1928, № 10:*

անեղի գործը[6] և այլ խորագրերի ներքո տպագրված նյութերը, խմբագրության կազմակերպած ստուգայցերը, ինչպես նաև Վ. Բոթվինեցի բնաղատակաև-երգիծական փոքրիկ պատկերները։ Կուլտուրական կենցաղավարության, հասարակական-բարոյական նոր ըմբռնումների, ընտանիքի, սիրո և ամուսնության հարցեր էին բարձրացնում նաև «Հայաստանի աշխատավորուհի»-ն, «Երիտասարդ բոլշևիկ»-ը, «Կարմիր զինվոր»-ը և մյուս պարբերականները։

Կուլտուրականության համար մամուլի պայքարի շրջանակները գնալով ընդլայնվեցին, իրենց մեջ ներառնելով ոչ միայն օրինակելի կենցաղավարություն հաստատելու, այլև աշխատանքային կուլտուրայի կազմակերպման ու կատարելագործման խնդիրները։ Ավելին՝ այդ երկուսի միասնության մեջ էր տեսնում մամուլը կուլտուրականության ճշմարիտ չափանիշը թե՛ առանձին անհատների և թե՛ կոլեկտիվների համար։ Լոկ անհատների կուլտուրական կենցաղավարությունը դեռևս քիչ է և անբավարար, նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը «Հանուն կուլտուրայի» խորագրով առաջնորդողում,— կարևորն այն է, որ «կուլտուրական լինի գործարանի, հանքի, խորհտնտեսության ու կոլտնտեսության աշխատանքային ամբողջ միջավայրը... Անհրաժեշտ է համառ աշխատանքով արմատացնել մեր լայն մասսաների մեջ այն ճշմարտությունը, որ սոցիալիզմը աշխատանքի և կենցաղի ամենաբարձր և ամենակատարյալ կուլտուրա է պահանջում»[7]։ Նույնպիսի խնդիր էր առաջադրում «Ավանգարդ»-ը, երբ գրում էր, թե «կոմերիտմիության կուլտուրական աշխատանքի պլանում տեղ պետք է գտնեն ոչ միայն պարելը, թատրոն ու կինո հաճախելը, այլև աշխատանքի կուլտուրային տիրապետելը...»[8]։

Մամուլը վճռականորեն հանդես էր գալիս այն տրամադրությունների դեմ, որոնց արտահայտիչները փորձում էին «կուլտուրապես ապրելու լոզունգը մանր-բուրժուական հանդիստ ու ապահով կենցաղի ստեղծման նպատակին ծառայեցնել»։ Սա սկզբունքային նշանակություն ուներ կուլտուրական-մասսայական աշխատանքի արդյունավետության բարձրացման և հետագա ծավալման տեսակետից։ Մյուս կողմից էլ հարկավոր էր խուսափել աշխատանքի «ստանդարտ, շաղամպված ձևերից», թույլ չտալ «ավելորդ աղմկա-

---

6 Տե՛ս «Բանվոր», 1928, № 85։

7 «Խորհրդային Հայաստան», 1935, № 290։

8 «Ավանգարդ», 1935, № 18։

բարության» որևէ դրսևորում, այդ կարևոր գործի գոհացում։ «Ավանգարդ»-ը քննադատեց Երևանի բամբակագործ և մեխանիկական գործարանների ԼԿԵՄ և արհմիութենական կոմիտեների կազմակերպած «կուլտուրապես ապրելու կոնկուրսը», որն ապացուցում էր. «Կուլտուրական չէ այն բանվորը, որն անպայման ամիսը 3 անգամ կինո կամ թատրոն չի հաճախում (և անպայման ընտանիքի հետ), կամ սենյակում չի կախում առաջնորդներից երկուսի նկարը»։ «Հասկանալի է,— եզրակացնում էր թերթը,— որ սա կուլտուրական աշխատանքի գոհացումն է, Համ.ԿԵՄ X պլենումի այն ցուցումի անտեսումն է, որը պահանջում է «վճռաբար պայքարել կուլտուրայի գռեհկացման և սուրոգատների դեմ, երբ իսկական կուլտուրայի համար պայքարը փոխարինում են ցուցադրական աղմուկով»»[9]։

Պարբերական մամուլը կարուկ կերպով քննադատում-մերժում էր նաև այն մտայնությունը, ըստ որի՝ կուլտուրականության պահանջը հետապնդում է սոսկ առանձին անհատների «բարձր պահանջմունքները» բավարարելու և կամ ընդհանրապես «կուլտուրական մարդիկ» ստեղծելու ինքնաբավ ու հայեցողական մի նպատակ։ Սա անհեթեթ ու խառնակ պատկերացում է, նշում էր «Ավանգարդ»-ը, և մթագնում է կուլտուրականության համար մղած մեր պայքարի էությունը. մեր խնդիրն է նպաստել այնպիսի պայմանների ստեղծմանը, որ «խորհրդային երիտասարդը, և առաջին հերթին կոմերիտականը, դառնա ոչ թե պարզապես կուլտուրական մարդ, այլ բանվոր դասակարգի գործի, սոցիալիզմի գործի ակտիվ ու բարձր կուլտուրա ունեցող մարտիկ»[10]։

Եվ սա, ինչպես վկայում է նաև մյուս պարբերականների նյութերի ուսումնասիրությունը, Հայաստանի ամբողջ մամուլի ելակետային սկզբունքներից մեկն էր կուլտուրական հեղափոխության կենսագործման ժամանակաշրջանում։

2

Կարևոր նշանակություն ուներ նաև աշխատավորության առողջապահության և ֆիզիկական կոփվածության խնդիրը, որը նույնպես մամուլի հոգածության առարկան է եղել սկսած դեռևս 20-ական թվականների առաջին տարիներից։ «Խորհրդային Հայաս-

9 «Ավանգարդ», 1935, № 18։

10 Նույն տեղում (ընդգծումն իմն է.— Հ. Ֆ.)։

ման»-ը, «Մաճկալ»-ը, գավառային թերթերը, այնուհետև «Ավանդարդ»-ը և մյուս պարբերականները տպագրում էին հոդվածներ ու թղթակցություններ հանրապետությունում, մասնավորապես գյուղերում առողջապահության գործի դրվածքի, աշխատավորության բժշկա-սանիտարական սպասարկման վիճակի մասին, դեռևս էին առողջապահական-հիգիենիկ հարցերին նվիրված հանրամատչելի դրույցներ, հանդես էին գալիս հելմինթների ու բախտագուշակների դեմ, լուսաբանում առողջապահության ժողկոմատին ենթակա հաստատությունների աշխատանքը, ջերմախտի, տրախոմայի և մյուս համաճարակների վերացմանն ուղղված միջոցառումները և այլն։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ասպարեզում ձեռք բերված հաջողություններին զուգընթաց ավելի ու ավելի շատ միջոցներ էին հատկացվում առողջապահության գործի կազմակերպմանը, ընդլայնվում էր առողջապահական հիմնարկների ցանցը, բազմապատկվում բուժաշխատողների ու բժիշկների քանակը։ Բավական է հիշել, որ 1925 թ. վերջին Հայաստանում արդեն գործում էր 151 առողջապահական հաստատություն՝ 1000-ից ավելի աշխատակիցներով, որոնցից 187-ը բժիշկներ էին[11]։ Այն օրերի համար սա մեծ առաջադիմություն էր։ Առաջիկայում, սակայն, ավելի խոշոր անելիքներ կային։

Բուժսպասարկման ասպարեզում աշխատողների որակավորումը բարձրացնելու, նոր կադրերի պատրաստման, նրանց մասնագիտական կատարելագործման հարցերը, որ երբեմն-երբեմն երևվում էին կուսակցական, կոմերիտական կամ գյուղացիական պարբերականներում, բնականաբար, ավելի շատ և ավելի շատ քննարկվում էին կազմակերպչական տեսանկյունից և չէին կարող ունենալ մասնագիտական-պրոֆեսիոնալ մակարդակ, գիտական-վերլուծական բնույթ։ Մինչդեռ առողջապահության զարգացման շահերը պահանջում էին, որպեսզի այդ ասպարեզում աշխատող մասնագետները հասու լինեն բժշկագիտության նվաճումներին, պրակտիկան հարստացնեն տեսական գիտելիքներով, տեղյակ լինեն իրենց ընկերների փորձին։ Այդ խնդիրները կատարելուն լավագույնս կարող էին նպաստել մասնագիտական հրատարակությունները, մասնավորապես բժշկական-առողջապահական բնույթի

---

[11] *Տե՛ս «Խորհրդային Հայաստանը թվերով» (վիճակագրական տեղեկատու. 1923—1927 թթ.), էջ 44։*

պարբերականները։ Դրանց կարիքն զգում էին հատկապես շրջան-ներում աշխատող բժիշկները, որոնց վրա, բնակչության բուժսպասարկումից բացի, ընկած էր նաև կուլտուր-լուսավորական ընդհանուր գործունեության պարտականություն։ Հիմնականում շրջանային բժշկին օգնելու նպատակով էլ, ահա, կյանքի կոչվեց «Բժշկական հանդես»-ը[12]։

Այս պարբերականի միջոցով կենտրոնում աշխատող մասնագետներն իրենց դիտելիքներն ու տեսական նվաճումները պիտի հաղորդեին շրջանային բժշկին, հոդվածներով, կոնսուլտացիաներով, պրոֆեսիոնալ փորձի փոխանակումով «բարձր պահեին բժշկական գիտության դրոշակը զավառում», աջակցեին «իրենց ուսումնածարավ ընկերոջը» «նախապաշարումներով լի մեր գյուղում» սանիտարական լուսավորություն տարածելու, զանազան սնոտիապաշտությունների և տեղական հեքիմների դեմ պայքարելու գործում. ««Բժշկական հանդես»-ը,—հավաստիացնում էր խմբագրությունը,— գալիս է օգնության շրջանային բժշկին, որը թե՛ պետք է լուսավորվի և թե՛ լուսավորի այն շրջանը, որտեղ նա ապրում է»։ Մյուս կողմից՝ շրջանային բժիշկը ևս հրավիրվում էր աշխատակցելու հանդեսին, հաղորդելու իր փորձի, մտահղացումների, հանդիպած դժվարությունների մասին, «զեկուցելու կյանքից ստացած իր դիտողություններն աշխատավորության առողջացման գործի լավացման վերաբերյալ»[13]։

Հանդեսի երկու համարները, որ ճաշակով կատարված գիտական հրատարակության տպավորություն են թողնում, ունեին հետևյալ բաժինները՝ 1) Ինֆեուուրյն հոդվածներ. 2) Սոցիալական բժշկականություն. 3) Տեսություններ, 4) Առանձին դիտողություններ. 5) Ռեֆերատներ. 6) Համագումարներ (բժշկական աշխատողների կոնֆերանսներ, խորհրդակցություններ և այլն). 7) Պաշտոնական (Առժողկոմատի հրահանգներ, որոշումներ, շրջաբերականներ և այլն)։

---

12 «Բժշկական հանդես»-ը ՀՍՍՀ Առողջապահության ժողկոմատի հրատարակությունն էր. լույս է տեսել երկու համար՝ № 1-ը՝ 1926 թ., № 2-ը՝ 1927-ին։ Պատ. խմբագիրն էր առժողկոմ Ս. Լազարյանը, գլխավոր բաժինները խմբագրում էին Ա. Մելիք-Ադամյանը (ներքին հիվանդություններ), Հ. Քեչեկը (վիրաբուժական հիվանդություններ), Գ. Արեշյանը (կանանց և մանկաբուժական հիվանդություններ) և Բ. Փիրումյանը (առողջապահություն և սանիտարիա), պատ. քարտուղարն էր Ա. Մելիքյանը։ 140—164 էջ (26×18 սմ), տպաքանակը՝ 600։

13 «Բժշկական հանդես», 1926, № 1, էջ 5։

Դեռևս 1928 թ. հունիսին ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղարությունը որոշել էր դադարեցված «Բժշկական հանդես»-ի փոխարեն հրատարակել «Гигиена и общественная санитария» ամսագիրը՝ 1 մամուլ ծավալով[14]։ Բայց շուտով նորից զգացվեց հայերեն պարբերականի կարիքը, և ահա 1929 թ. փետրվարին լույս տեսավ «Առողջապահությունը Հայաստանում» հանդեսը, որը, սակայն, չունեցավ պարբերական բնույթ[15]։ Նրա առջև դրված խնդիրների կատարմանը ձեռնամուխ եղավ Առողջապահության ժողկոմատի նոր օրգան «Առողջ կենցաղ» հանդեսը, որ սկսեց լույս տեսնել 1929 թ. դեկտեմբերից[16]։ 1932 թ. այն վերանվանվեց «Առողջապահության ֆրոնտում»[17], որը հրատարակվեց մինչև 1935 թ. ապրիլը։

Այս պարբերականները, ի տարբերություն նախորդ բժշկական հանդեսների, մասսայական բնույթի հրատարակություններ էին և կոչված էին լինելու, ինչպես խմբագրությունն էր նպատակադրել՝ «կուլտուրական հեղափոխության կարևորագույն գործոններից մեկը»։ Իրենց առջև դրված խնդիրներին համապատասխան՝ սրանք ունեին անհամեմատ ավելի լայն ընդգրկում և հետապնդում էին դաստիարակչական-լուսավորական գործնական նպատակներ։

Բժշկագիտության հարցերի մասնագիտական քննարկումը թողնելով այլ հրատարակությունների[18], «Առողջ կենցաղ»-ը և «Ա-

---

14 Տե՛ս Մկի Հայկ. ֆիլ. արխիվ. ֆ. 1, ց. 10, գ. 283, թ. 42։

15 «Առողջապահությունը Հայաստանում» հանդեսը նույնպես ՀՍԽՀ Առողջապահության ժողկոմատի հրատարակությունն էր։ Լույս է տեսել մեկ գիրք։ Խմբագիրն էր Մ. Գարդաշյանը։ 20 էջ (32×21 սմ), տպաքանակը՝ 4000։

16 «Առողջ կենցաղ»-ը ուներ Միամսյա պատկերազարդ հանդես ենթանվանումը, սակայն լույս է տեսել անկանոն պարբերականությամբ, մեծ մասամբ միացյալ համարներով։ 1930 թ. № 2—3-ից՝ օրգան ՀՍԽՀ Առողջկոմատի և Ֆիզկուլտուրայի գիտագույն խորհրդի։ Խմբագիրներն են եղել Գ. Գարդաշյանը և Գ. Զևոնդյանը, խմբ. կոլեգիայի անդամներ՝ Գ. Կարապետյանը, Ս. Բաղդասարյանը, Ա. Մալխասյանը, Տ. Բունիաթյանը, Մ. Մելիք-Բարամյանը, Կ. Ծովյանը, Ս. Գյոդակչյանը, պատ. քարտուղար՝ Ար. Ղազարյանը։ 42—49 էջ (33×24 սմ), տպաքանակը՝ 3000—3500։

«Առողջ կենցաղ»-ը առանձին հրատարակությամբ լույս էր ընծայում հանրամատչելի զրույցների գրքույկներ՝ «Սան-լուս գրադարան» մատենաշարով։

17 «Առողջապահության ֆրոնտում»-ը միայն ՀՍԽՀ Առողջապահության ժողկոմատի օրգանն էր, նույնպես հրատարակվում էր անկանոն պարբերականությամբ՝ տարեկան 4—5 համար, մեծ մասամբ միացյալ։ Պատ. խմբագիրն էր Գ. Զևոնդյանը։ 28—42 էջ (30×23 սմ), տպաքանակը՝ 1500—2000։

18 Դրանցից էին, օրինակ, «Труды тропического института (Наркомздрава ССР Армении)» (հրատարակվել է երեք պրակ՝ 1924, 1935 և 1939 թթ.). ՀՍԽՀ

առողջապահության ֆրոնտում»-ը հիմնականում զբաղվում էին մարդաբանական-առողջապահական տարբերակի դիտելիքների տարածմամբ, տպագրում էին քաղաքների և գյուղերի սանիտարական վիճակին, համաճարակային հիվանդություններին, կենցաղային և աշխատանքային հիգիենային, ֆիզկուլտուրայի մասսայականացմանը, մոր ու մանկան պահպանությանը, բուժհիմնարկների գործունեությանը նվիրված հոդվածներ, թղթակցություններ, անդամ գեղարվեստական նյութեր։

Հոգևոր և մտավոր բարձր հատկանիշներով օժտված լինելու հետ մեկտեղ, նկատում էր «Առողջ կենցաղ»-ը, հարկավոր է, որպեսզի նոր հասարակարգ կերտող ուժերը տոկուն լինեն նաև ֆիզիկապես. ուրեմն նրանց պետք է ծանոթացնել առողջապահության տարբերակի դիտելիքներին, որպեսզի «հնարավորություն ունենան հիվանդությունների դեպքում, լինեն դրանք պրոֆեսիոնալ, թե համաճարակային, փոխանակ գլուխը կորցնելու, նախազգուշանալ և առանձարտորեն ինքնապաշտպանության դիմել ամեն տեսակի ֆիզիկական ավերիչների դեմ»։ Աշխատավորության «ֆիզիկական ապահովության հարցը» պահանջում էր նաև «բարելավել և առողջացնել մի շարք կենսական պայմաններ, որոնք սերտորեն կապված են բանվոր դասակարգի հետ և կազմում են նրա առողջության հիմքը. օրինակ՝ բնակարանային, ընտանեկան, կենցաղային, սննդի և մի շարք այլ պայմաններ»։ Այս հարցերն ըստ էության և գործնականորեն քննարկելու համար խմբագրությունն աշխատակցության հրավիրեց «մեր արդյունաբերական վայրերի, քաղաքների և գյուղերի բանվորական թղթակիցներին, առողջապահական և ֆիզկուլտուրայի ասպարեզում գործող բոլոր ակտիվիստներին»[19]։

Տպագրված նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ «Առողջ կենցաղ»-ը և «Առողջապահության ֆրոնտում»-ը հիմնականում ճիշտ էին ըմբռնել իրենց առջև դրված խնդիրները։ Նրանց էջերում ամփոփված նյութերն զգալի չափով պատկերացում են տալիս նաև մեր հանրապետությունում առողջապահության գործի

Առողջոմատի և Երևանի բժշկական ինստիտուտի՝ «Медицинский журнал Армении» *և* «Медицина на службе социалистического строительства» *հրատարակությունները (առաջինը լույս է տեսել երեք համար՝ 1930, № 1, 1931, № 1—2, երկրորդը՝ մեկ գիրք՝ իրեն հոդվածների ժողովածու, 1932).* «Материалы VI Кавказского съезда физиологов, фармакологов и биохимиков», *Երևան, 1934 և այլն։*

19 *«Առողջ կենցաղ», 1929, № 1։*

կազմակերպման ու զարգացման, բուժհիմնարկների, առողջարանների գործունեության, բժշկական կադրերի պատրաստման և այլնի վերաբերյալ։ Բժշկի հասարակական-քաղաքացիական և պրոֆեսիոնալ պարտքի, նրա վրա դրված մեծ պարտականությունների պարզաբանմանը զուգընթաց՝ այս պարբերականներն ըստ արժանվույն գնահատում էին անցյալի և ժամանակակից հայ ականավոր բժիշկների վաստակը, լուսաբանում-մասսայականացնում նրանց գործունեության ուսանելի էջերը՝ դրանով իսկ որոշ նյութ կուտակելով նաև բժշկության ապագա պատմաբանի համար։ Ուշագրավ են նույնպես Ռուսաստանում, անդրկովկասյան մյուս հանրապետություններում առողջապահության, նոր կենցաղի կազմակերպման, արտադրական-աշխատանքային հիգիենայի պահպանման ու կատարելագործման ուղղությամբ կիրառված միջոցառումները պրոպագանդող նյութերը, որ Ի՞նչ են գրում թերթերը խորագրի ներքո արտատպվում էին «Правда», «Известия», «Труд», «Рабочая газета», «Заря Востока», «Бакинский рабочий», «Правда Востока», «Беднота» թերթերից ու այլ պարբերականներից։

«Առողջ կենցաղ» և «Առողջապահության ֆրոնտում» հանդեսների շուրջ համախմբված էին հանրապետության ականավոր բժիշկներ, առողջապահության ասպարեզի աշքի ընկնող գործիչներ, գիտական ու ժուռնալիստական կարող ուժեր։

Այս պարբերականները, այլ բաժինների հետ մեկտեղ («Մեռնող կյանքի մնացորդները», «Թղթակցություններ դյուղից», «Հարց ու պատասխան», «Բուժ-առողջապահական հիմնարկներում», «Գիտական նորություններ», «Խրոնիկա» և այլն), ունեին նաև «Ֆիզկուլտուրա» բաժինը, ուր տպագրվում էին սպորտով զբաղվելու կարևորությանը, նրա տարբեր ձևերին նվիրված հոդվածներ, խորհուրդներ, ինֆորմացիոն նյութեր։ Հասկանալի է, որ այս ամենը, ուշագրավ լինելով հանդերձ, չէր կարող ապահովել աշխատավորության ֆիզիկական դաստիարակության բնագավառում առաջադրվող խնդիրների հանգամանալից քննարկումն ու լուսաբանումը։ Նույնը պետք է ասել մյուս պարբերականներում բացված համանման բաժինների մասին։ Ֆիզկուլտուրայի հարցերին նվիրված հատուկ պարբերականի բացը ըստ էության չծածկեց նաև ՀԱՄԽ-ի օրգան «Աշխատանք» երկշաբաթաթերթի «Ֆիզկուլտուրա»[20] հա-

---

20 «Ֆիզկուլտուրա» հավելվածը ՀԱՄԽ-ի կուլտբաժնին կից ֆիզկուլտբյուրոյի օրգանն էր։ Պատ. խմբագիր՝ Հ. Պետրոսյան, խմբ. կոլեգիայի անդամներ՝ Վ. Այվազյան, Հ. Տանին։ 10 էջ (39×23 սմ), տպաքանակը՝ 1500։

վիլվածի լույսընծայումով. 1928 թ. ապրիլ-մայիս ամիսներին հրատարակված այս հավելվածի երկու համարները չեն արծարծել կազմակերպչական-գաստիարակչական լուրջ պրոբլեմներ և ավելի շատ թաղնում են ինֆորմացիոն բյուլետենի ապավորություն:

Ֆիզկուլտուրայի հետագա ծավալումը, նոր խմբակների ու միությունների կազմակերպումը, սպորտհրապարակների և այլ շինությունների ստեղծման անհրաժեշտությունը, մի խոսքով՝ մասսայական ֆիզկուլտշարժման զարգացման ու ընդլայնման խնդիրները կարիք ունեին առավել համակողմանի քննարկման. ավելին՝ արդեն հասունացել էր հատուկ ֆիզկուլտ-պարբերական հրատարակելու պահանջը: 1932 թ. մայիսից սկսեց լույս տեսնել «Հարվածային ֆիզկուլտուրնիկ» ամսագիրը[21]: Ինչպես ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանն էր նշում խմբագրությանն ուղղված ողջույնի մեջ՝ պրոլետարական ֆիզկուլտուրան ոչ թե ինքնանպատակ մի զբաղմունք է, այլ «մի միջոց միայն՝ կատարելու բանվոր դասակարգի խնդիրները, պայքարելու սոցիալիզմի կառուցման մեծ գործի համար»: «Հարվածային ֆիզկուլտուրնիկ»-ի խնդիրն է, այնուհետև գրում էր նա, «ընդգրկել ֆիզկուլտ շարժման մեջ մեր բանվորական և կոլտնտեսային ամենալայն մասսաներին, բանվորական և աշխատավորական ողջ երիտասարդությանը»:

«Հարվածային ֆիզկուլտուրնիկ»-ը արտացոլում էր հանրապետության սպորտային կյանքը, պրոպագանդում առանձին մարզաձևերի ասպարեզում ձեռք բերված հաջողությունները, աչքի ընկնող մարզիկների նվաճումները, արծարծում էր ֆիզկուլտուրայի մասսայականացման խնդիրները, մանր-բուրժուական կենցաղի և հոգեբանության հաղթահարման, նոր սոցիալիստական արտադրության հարցերը, մեծ ուշադրություն էր նվիրում մարդու անատոմիայի, օրգանիզմի ամրապնդման վերաբերյալ դիտելիքների տարածմանը:

1933—1934 թթ. լույս էր տեսնում «Կարմիր սպորտ» երկշաբաթաթերթը[22]: 1935 թ. հունվարից, նախօրոք դադարած «Հար-

---

21 «Հարվածային ֆիզկուլտուրնիկ»-ը ՀՍԽՀ ֆիզկուլտուրայի գերագույն և Երևանի քաղաքային կոմիտեների օրգանն էր: Պատ. խմբագիրներ եղել են՝ Ա. Արզումանյանը, Ա. Հախումյանը, Ա. Տեմյանը, պատ. քարտուղար՝ Ս. Աճեմյանը: 10—18—20 էջ (33×25 սմ), տպաքանակը՝ 1350—1750: Ունեցել է միացյալ համարներ:

22 «Կարմիր սպորտ»-ը Հայաստանի ֆիզկուլտուրայի Գերագույն խորհրդի օրգանն էր: Պատ. խմբ.՝ Ա. Աբրահամյան:

վածային ֆիզկուլտուրնիկ»-ի փոխարեն, սկսում է հրատարակվել «Ֆիզկուլտուրա և տուրիզմ» ամսագիրը[23]։ Ֆիզկուլտշարժման հետագա ծավալումն ու խորացումը, սակայն, պահանջում էին կազմակերպչական-մասսայական հարցերի ավելի դրծուն քննարկում։ Սրանից ելնելով էլ 1936 թ. հունիսից վերսկսվում է «Կարմիր սպորտ» թերթի հրատարակությունը՝ տասնօրյա պարբերականությամբ[24]։

Ֆիզկուլտուրային նվիրված պարբերականները ևս լինելով կուլտուրական հեղափոխության խորացման արդասիք՝ նպաստում էին նրա խնդիրների կենսագործմանը։

* * *

Իր հիմնական անելիքներից մեկը պարբերական մամուլը համարում էր կուլտուր-լուսավորական աշխատանքների ծավալումը կանանց շրջանում, նրանց ազատագրումը հին սովորույթներից ու կաշկանդումներից և ներգրավումը տնտեսական, կուլտուրական, հասարակական կյանքի ամենատարբեր ասպարեզները։ Ինչպես արդեն նշել ենք տարբեր տիպերով՝ կանանց նվիրված հատուկ բաժիններ, էջեր կամ թերթիկներ ունեին հանրապետությունում լույս տեսնող գրեթե բոլոր պարբերականները՝ սկսած դավառային մամուլից մինչև կենտրոնական թերթերը։

Շուտով, սակայն, կանանց շրջանում տարվող աշխատանքների ծավալման ու խորացման շահերը անհրաժեշտություն առաջացրին ունենալու այդ հարցերին նվիրված ինքնուրույն մի պարբերական։ 1924 թ. մարտից սկսեց լույս տեսնել «Հայաստանի աշխատավորուհի» հանդեսը՝ իբրև ՀԿ(բ)Կ Կենտկոմի կինբաժնի օրգան[25]։

---

23 «Ֆիզկուլտուրա և տուրիզմ»-ը ՀՍԽՀ ֆիզկուլտուրայի գլխավոր խորհրդի և պրոլետտուրիզմի հանրապետական խորհրդի օրգանն էր։ Պատ. խմբագիրն էր Ա. Աբրահամյանը։ 16—30 էջ (33×25 սմ), տպաքանակը՝ 1200—2500։

24 ՀՍԽՀ ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի կոմիտեի օրգանն էր (առաջին համարը՝ օրգան ՀՍԽՀ ֆիզկուլտուրայի գլխավոր խորհրդի)։ Ժամանակավոր պատ. խմբագիրն էր Ս. Սարգսյանը, № 3-ից՝ պատ. խմբագիր՝ Գր. Սինանյան։ Նրբեմն տպագրում էր ռուսերեն էջեր։

25 «Հայաստանի աշխատավորուհի»-ն 1924 թ. № 3-ից դարձավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բանվորուհիների և գեղջկուհիների բաժնի օրգան, 1930 թ. սեպտեմբերից՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի մասսայական բաժնի օրգան (երկշաբաթաթերթ), 1935 թ.՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի ժուռնալ։ Մինչև 1936 թվականի վերջը լույս է տեսել 186 համար։ Առաջին խմբագիրը եղել է Ֆլորա Վարդանյանը, այնուհետև՝ Վ. Տարախչյանը, Անուշը (Մելրումյան), Էդ. Խոճիկը, Մ. Զոլախյանը։ 12—20—40 էջ (30×22 սմ), տպաքանակը՝ 1924—1926 թթ. եղել է 1000—2000, հետագայում հաճա-

Լինելով Խորհրդային Հայաստանի կանանց անդրանիկ պարբերականը, այս հանդեսը ծավալեց բաղաքական-լուսավորական լայն գործունեություն։ Առանձնակի դեր խաղաց «Հայաստանի աշխատավորուհի»-ն հին կենցաղի հեղաշրջման, անգրագիտության վերացման և կանանց տրված իրավունքների պարզաբանման գործում։ Այդ հարցերին նվիրված նյութերը զետեղվում էին նոր կյանք և աշխատանք, նոր կենցաղ, Օրենսդրություն, Կուրսի անգրագիտություն, Առողջապահական, Մոր և մանկան անկյուն բաժիններում։ Ինչպես վկայում է ամսագրի խմբագիրներից և ակտիվ աշխատակիցներից Վ. Տարախչյանը՝ «Հայաստանի աշխատավորուհի»-ն «դարձել էր անգրագիտության վերացման դասագիրք, որտեղ պարբերաբար տպագրվում էին հմուտ մանկավարժների կազմած հատուկ դասեր, մատչելի դրույցներ»[26]։

Ամսագիրը պարզաբանում էր տնտեսական և կուլտուրական քաղաքականության հարցերը, այդ տարիներին բանվորուհիների ու գեղջկուհիների առջև ծառացած նոր խնդիրները (Դեպի կոոպերացիա, Գյուղատնտեսական, Մեր ակտիվ աշխատավորուհիներ բաժինները), լուսաբանում-արտացոլում էր կանանց շրջանում տարվող աշխատանքները, կինբաժինների գործունեությունը, արձագանքում էր բաղաքական իրադարձություններին, կապիտալի աշխարհում տեղի ունեցող կանանց շարժումներին (Քաղաքական աշխարհում, Արտասահմանի մեր քույրերը բաժինները), տպագրում էր գրական նյութեր, երգիծական մանրապատումներ, ընագիտական ու առողջապահական դրույցներ, կրոնական սովորույթները այլանող հոդվածներ։ Եվ այս բոլորը բննվում ու մատուցվում էր որոշակի հայեցակետից՝ կանանց մեջ տարվող աշխատանքների կազմակերպմանը գործնականորեն օժանդակելու նպատակադրմամբ։ Ինչպես ճիշտ նկատել է ամսագրի աշխատակիցներից մեկը՝ «Հայաստանի աշխատավորուհի»-ն ոչ միայն դասախարակչական խնդիրների է հետամտել, այլև «երկար ժամանակ մի ձեռնարկ է եղել բանվորուհիների, գեղջկուհիների մեջ աշխատող ընկերների համար»[27]։

Հրատարակության առաջին տարում «Հայաստանի աշխատա-

խակի փոխվել է, մերթ իջել է, մերթ բարձրացել. նվազագույնը՝ 1400, առավելը՝ 8100։ Ունեցել է միացյալ համարներ։

26 Տե՛ս «Հայաստանի աշխատավորուհի», 1967, № 3, էջ 5։

27 «Հայաստանի աշխատավորուհի», 1927, № 4, էջ 3։

վորուհի»-ն տեղերում ձրի բաժանվում էր գեղջկուհիներին[28]։ Հաջորդ տարվա գարնանից, երբ արդեն զգալի թվով թղթակիցներ էին համախմբված ամսագրի շուրջը և այն որոշ հեղինակություն էր ձեռք բերել կանանց շրջանում, անցկացվեց բաժանորդագրություն։ Աստիճանաբար մեծանում էր հետաքրքրությունը ամսագրի նկատմամբ։

«Հայաստանի աշխատավորուհու» բովանդակության, ինչպես և տեխնիկական-հրատարակչական որակի բարելավման համար կարևոր նշանակություն ունեցավ Համկ(բ)Կ Անդրբերկոմի ազիտպրոպ կոլեգիայում 1926 թ. հունվարին կայացած խորհրդակցության որոշումը հանրապետական կենտկոմների բանվորուհիների և գեղջկուհիների բաժինների կողմից հրատարակվող հանդեսների մասին։ Ընդգծելով այդպիսի հրատարակությունների կարևորությունը, խորհրդակցությունը միևնույն ժամանակ նշեց ընդհանուր բնույթի մի քանի թերություններ, որոնց հաղթահարումը համարվեց խմբագրությունների առաջնահերթ խնդիրը։ Անհրաժեշտ էր՝ ա) ավելի կոնկրետացնել տպագրվող նյութերի բովանդակությունը, խուսափելով «ազիտացիոն ֆրազներից». բ) առավել մատչելի դարձնել հոդվածների բնույթը՝ հատակորեն կողմնորոշվելով գեղի անգրագետ և կիսագրագետ աշխատավորուհիները. գ) բարելավել ձևավորումը, նկարների տպագրությունը[29]։

«Հայաստանի աշխատավորուհի»-ն, լինելով նոր իրավակարգի պայմաններում կանանց շրջանում տարվող կուլտուր-դաստիարակչական և քաղաքական աշխատանքների ծավալման արդյունք, ինքն էլ իր հերթին մեծ դեր խաղաց գյուղի և քաղաքի աշխատավորուհիների ինքնագիտակցությունն արթնացնելու, հասարակական ու տնտեսական կյանքում նրանց ակտիվ մասնակցությունն ապահովելու գործում։ Ամսագրի սկզբունքային առանձնահատկությունը նախախորհրդային շրջանում հրատարակված և արտասահմանյան երկրներում լույս տեսնող նույնատիպ պարբերականներից բխում էր կանանց հասարակական վիճակի մեջ եղած արմատական տարբերություններից։

Այս հանգամանքը ժամանակին ճիշտ կերպով նկատել է սրբյուսքահայ ականավոր կին գրող և հասարակական գործիչ Զ. Եսայանը «Հայաստանի աշխատավորուհուն» նվիրված իր մի հոդվա-

---

28 Տե՛ս ՄԱԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 4 գ. 295, թ. 38։

29 Տե՛ս նույն տեղը, ց. 6, գ. 169, թ. 34։

ծում[30]։ Բացահայտելով այն խոր տարբերությունը, որ առկա է «խորհրդային և ոչ-խորհրդային երկիրներու կանանց ընկերային վիճակին մեջ», Զ. Նայանն ընդգծում էր. «Մինչդեռ առաջինները պետք է պատրաստվին իրենց պարտավորությունները իբրև ազատ քաղաքացի լրիվ կատարելու համար, պուրժուական երկիրներու կիները դեռ ստիպված են ոգի ի բուին պայքարիլ, ձեռք բերելու համար իրավունքներ, որոնք բնական իրավունքներն են ամեն մարդկային արարածի»։ Այս տեսանկյունից մոտենալիս, շարունակում էր նա, դժվար չի լինի նկատել, որ «Հայաստանի աշխատավորուհի»-ն «ֆեմինիստական թերթ մը չէ, այլ ազատ օրկանը բանվորուհիներու և գեղջկուհիներու, և որուն նպատակն է օժանդակել ամեն միջոցով մշակութային և կենցաղային բարձրացման Հայաստանի քաղաքացի աշխատավորուհիներուն, որպեսզի անոնք ի վիճակի ըլլան իրենց բաժին ինկած դերը կատարել առավելագույն միջոցներով»։ Ուշադրավ են նաև հոդվածի եզրափակիչ տողերը, որոնք մի նոր կողմից են բացահայտում այս պարբերականի նշանակությունը. «Անհրաժեշտ է, որ գաղութի հայ աշխատավոր կիներն իրենց գաղափարներով և գործելու եղանակով իրական մերձեցում մը ունենան երկրի իրենց քույրերու նոր խտալներուն և սովորույթներուն»։

3

Կուլտուրական հեղափոխության բաղկացուցիչ տարրերից մեկն էլ հակակրոնական պայքարն էր, որի կազմակերպման ու ճիշտ ղեկավարման պարտականությունը զգալի չափով ընկած էր պարբերական մամուլի վրա։ Հայաստանում հրատարակված թերթերն ու հանդեսները հետևողական, արդյունավետ գործունեություն ծավալեցին գաղափարական-դաստիարակչական այս կարևոր ասպարեզում՝ նպաստելով կուսակցության մշակած միջոցառումների կենսագործմանը, աշխատավորության հոգևոր վերածնման բարդ ու հակասական պրոցեսի բնականոն ընթացքի կազմակերպմանը։ Հանդես գալով նոր մարդու քաղաքացիական կերպարի ձևավորմանը լրջորեն խոչընդոտող այնպիսի արգելքների դեմ, ինչպիսիք էին կրոնական գաղափարաբանությունը, սնահավատությունը, կնոջ բարեպաշտությունը և այլն, պարբերական մամուլը դրանց քննա-

30 Տե՛ս «Երևան», Փարիզ, 1926, հունվարի 10։

դատությանը զուգորդում էր նորի, առաջադիմականի հաստատման ու արմատավորման համար հասարակության գործադրած ջանքերի գրվատումը։ Այս ամենն ուներ նաև գործնական արժեք և նշանակություն, քանի որ բնական-տարերային աղետների (երկրաշարժ, անբերրիություն, մորեխի ու կարկուտի պատճառած վնասները, համաճարակներ և այլն) ժամանակ կրոնի սպասավորների ու հովանավորների կողմից դրանք օգտագործվում էին իբրև բարձրագույն գոյությունը և «կոմունիստների դեմ նրա զայրույթը հաստատող ապացույցներ», փաստորեն խուճապի մատնելով, հուսալքման դատապարտելով հողի մշակներին։ Ահա թե ինչու այդպիսի պահերին մամուլը, հատկապես գավառական թերթերը առանձնակի ուշադրություն էին նվիրում հակակրոնական պրոպագանդային, տպագրում էին բնագիտական ու բժշկական զրույցներ։ Ազնիվ աշխատանքի և իսկական արդարության հաղթանակի շահերը, գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը, պահանջում են վճռականորեն հանդես գալ «մասնավոր սեփականության, շահագործման և ագիտության խայտառակ երրորդության դեմ»։ Այստեղ է, ահա, շարունակում էր թերթը, որ անչափ կարևոր նշանակություն է ստանում հատկապես երիտասարդ սերնդի կողմից գիտությանը տիրապետելու, բնության ու հասարակական երևույթները ճիշտ ըմբռնելու և բացատրելու խնդիրը. բայց «այդ աշխատանքի ճամփին ընկած է մի հին քար, որի անունն է կրոն և որի վրա այսօր թափվում են մուրճի ծանր հարվածներ»[31]։

Հակակրոնական բնույթի նյութերը մամուլի էջերում առավել հաճախակի էին երևում եկեղեցական տոների և ուխտագնացությունների նախօրյակներին։ Դրանք մեծ մասամբ հանրամատչելի հաղորդումներ էին կրոնական մի շարք հավատալիքների ծագման, դրանց պատճառած գործնական վնասների վերաբերյալ, թղթակցություններ ու նամակներ՝ դրրացների, հնբիմների, «տեղական սրբերի» «հրաշագործությունների» մասին և այլն։ Ինչ վերաբերում է հակակրոնական զրույցներին, ապա բավական է աչքի անցկացնել միայն «Մաճկալ»-ի 1924 թ. մի քանի ամսվա համարները և կհամոզվենք, թե ինչպիսի կարևորություն էր տալիս մամուլը պրոպագանդայի այդ նպատակասլաց ձևին[32]։

---

31 «Խորհրդային Հայաստան», 1923, № 72։

32 Տե՛ս, օրինակ, «Մաճկալ», 1924, № 19 («Հանդերձյալ կյանք»), № 27 («Աստծո որդին»), № 34 («Գոյություն ունեցե՞լ է արդյոք Քրիստոսը»), №№ 43, 45, 47 («Քրիստոսի հրաշագործություններից»), № 62 («Սուրբ Հաղորդություն»), № 65 («Մասունքներ») և այլն։

Իր հակակրոնական պայքարում Հայաստանի պարբերական մամուլը ևս ստիպված էր հաղթահարելու մի շարք գաղափարական-կազմակերպչական կարգի դժվարություններ, որոնք կարելի է խմբավորել իբրև վնասակար մտայնության երկակի արտահայտություններ։

Դրանցից մեկի կողմնակիցները գտնում էին, թե կրոնի դեմ այդքան ակտիվ կերպով հանդես գալը «ուժերի ավելորդ ծախսում է», քանի որ, իբր, սոցիալիստական շինարարության պրակտիկան ինքնաբերաբար մոռացման և մահվան կդատապարտի կրոնական բոլոր հավատալիքները։ Նման դիրքորոշումը համարելով «միանգամայն մերժելի», մամուլն արմատավորում էր այն ճշմարիտ ըմբռնումը, թե ընդհակառակը՝ նոր կյանքի կառուցման շահերն են հենց պահանջում հետևողականորեն կռվել կրոնի տարածած մտավոր և հոգևոր թույնի դեմ. «Գյուղացին պիտի համոզվի, որ աղոթքով բիրքը չի շատանա, պետք է սովորի տրակտորով վարել, սերմացուն զտել, ախտահանել, շարքացան անել և վնասատուների դեմ պայքարել»։

Կային նաև այսպես մտածողներ. կրոնական տոները և պաշտամունքային մյուս հրապուրանքներն ունեն արդեն զուտ ձևական նշանակություն, ոչ ոք ըստ էության չի հավատում եկեղեցուն ու աստծուն, և եթե գյուղացին, ասենք, ուխտ է գնում՝ ապա «միայն զվարճանալու համար»։ Այս մտայնության կրողները, որ, վերջին հաշվով կորցնելով իրականության զգացողությունը, կրոնը համարում էին արդեն անցած-գնացած, մեռած ու թաղված մի բան, միանգամայն ավելորդ էին գտնում մամուլի հակակրոնական ելույթները, պնդելով, թե «կրոնի դեմ գրելը նշանակում է մեռելին սաղացնել»։ Հենց այդպես էլ ասված էր «Մաճկալ»-ի խմբագրությունում ստացված մի նամակում[33]։ Հիշեցնելով, որ նամակագիրը պարզապես անտեսում է գյուղացիների լուսավորվածության ծայրահեղ ցածր մակարդակը, թերթի խմբագրությունը միաժամանակ ճիշտ էր համարում նրա այն դիտողություն-առաջարկը, թե անհրաժեշտ է տպագրել բնության երևույթները բացատրող նյութեր։ «Մաճկալ»-ը խոստանում էր առաջիկա համարներից սկսել «կարելույն չափ բավարարել ընթերցողների այդ պահանջը»։ Եվ իրոք՝ շուտով թերթում երևացին նոր բաժիններ՝ Գիտական, Առողջապահական, Բժշկի զուցցներ, Գիտություն և տեխնիկա և այլն, որոն-

33 Տե՛ս «Մաճկալ», 1923, № 22։

ցում զեկուցվում էին զրույցներ մարդու ծագման, բնության մեջ տեղի ունեցող երևույթների մասին, խորհուրդներ հիվանդությունները կանխելու կամ բուժումը արդյունավետ դարձնելու վերաբերյալ, գիտության ու տեխնիկայի նվաճումները մատուցողական նյութեր և այլն։

Համանման բաժիններ ու խորագրեր ունեին նաև հանրապետությունում լույս տեսնող մյուս թերթերն ու հանդեսները, որոնք առավել կամ պակաս հետևողականությամբ ձեռնամուխ էին եղել քաղաքական-լուսավորական աշխատանքների ծավալմանը աղգաբնակչության ամենալայն խավերում։ Վերոհիշյալ նյութերի տպագրումը, ընթերցողների մատհորիզոնն ընդլայնելուց բացի՝ զգալի չափով նպաստում էր նաև մամուլի հակակրոնական պայքարի ուժեղացմանը, առավել բազմակողմանի, հետաքրքիր ու արդյունավետ դարձնելով մասսաների մեջ տարվող կուլտուր-դաստիարակչական աշխատանքները։

Հակակրոնական պայքարի մասին խոսելիս չի կարելի անտեսել մամուլի այն ելույթները, որ ուղղված էին այդ ասպարեզում ի հայտ եկած զանազան «ձախությունների» դեմ։ Ճիշտ է, պարբերականների էջերում ևս երբեմն տպրվում էին ուռա-հեղափոխական նկրտումներ, բայց դրանք առանձին շեղումներ էին. կարևորը, բնորոշը մամուլի պայքարն էր «ձախ» խոտորումների դեմ։ «Հակակրոնական գործերից» խորագրով առաջնորդվում «Խորհրդային Հայաստան»-ը, նկատի ունենալով խմբագրությունում տեղի ունեցող գավառական թղթակցությունների մի մասը, գրում էր. «Ընկերները, մանավանդ կոմսոմոլիստները, հաճախ առաջարկում են հակակրոնական ցույցեր կազմակերպել և կամ ադմինիստրատիվ միջոցների դիմել կրոնական «բյանդրբաղների» վերաբերյալ։ Փորձը ցույց է տվել,— շարունակում էր թերթը,— որ գյուղական փոքրաթիվ կոմսոմոլիստների հակակրոնական ցույցերը և կամ կոմսոմոլիստ անհատների արհամարհական, դեմոնստրատիվ, իսկ հաճախ և հայհոյական վերաբերմունքը կրոնի և եկեղեցու հանդեպ՝ հակառակ արդյունքներ են տալիս. դեռ կոմսոմոլը չնչին փոքրամասնություն, փոքրիկ կղզի է շրջապատի հավատապաշտ, ավելի ճիշտը՝ սնոտիապաշտ մեծամասնության ծովի մեջ»[34]։

Մի շարք առաջնորդողներում ու հոդվածներում «Խորհրդային Հայաստան»-ը խնդիր էր դնում բոլոր միջոցներով նպաստել աշ-

---

34 «Խորհրդային Հայաստան», 1924, № 187։

խաղավորության ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, ուժեղացնել քաղաքական-դաստիարակչական աշխատանքը երիտասարդության շրջանում, հանրագիտական ու գեղարվեստական «առողջ գրականություն» մատակարարել գյուղերին, մաքրել պատկոմական գրադարանները խորթ գաղափարախոսության կնիքը կրող, հատկապես «կրոնամոլական գրքերից»։

Կրոնի դեմ մղվող պայքարում հաջողության հասնելու նախապայմաններից մեկն էլ այն է, նշում էր մամուլը, որ կոմերիմիությունը «տիրապետի հակակրոնականության բոլոր զենքերին»։ Այս ուղղությամբ գրալի աշխատանք կատարեց «Ավանգարդ»-ը, որը, հաշվի առնելով կոմերիտականների թույլ տված սխալներն ու «ձախ» խոտորումները՝ հորդորում էր գործել «զգույշ և առանց հարայ-հրոցի»։ Խոլականորեն «երկինքը ամրակոծելով», դեռևս գանազան նախապաշարումների ազդեցության տակ գտնվող աշխատավորական տարրերի կրոնական զգացմունքները «շափազանց կոպիտ կերպով վիրավորելով», նրանց «ծաղր ու ծանակի ենթարկելով», գրում էր թերթը, «միայն կրոնամոլության ջրաղացի ջուրն ենք ավելացրել. նրանք, մի տեսակ իրենց «հալածվածներ ու նահատակներ» զգալով՝ մոլեռանդության գիրկն են ընկել»։ Հակակրոնական աշխատանքը, նկատում էր թերթը, ոչ թե կամպանիա պետք է լինի, այլ «մեր ամենօրյա խնդիրը»։ Եվ այդ պարտականությունը հաջողությամբ կատարելու համար չպետք է մոռանանք ամենից գլխավորը, այն է՝ «ինքներս մեզ վրա աշխատենք և զինվենք հակակրոնական հիմնավոր պատրաստությամբ, որպեսզի կարողանանք ոչ թե հայհոյել կրոնը, այլ ապացուցել նրա ողջ կեղծիքը։ Այդպե՞ս պիտի փորել կրոնի հիմքերը»[35]։

Ուշադրավ է կոմերիտական մամուլի օրգանների բանավեճը 1924 թ. նոյեմբերից հրատարակվող «Ազատ եկեղեցի» կրոնա-բարոյական և պատմա-գրական պարբերականի հետ[36]։ Վերջինս, որ սկզբնապես հանդես էր գալիս «բրիստոնեական եկեղեցին օտա-

---

35 «Ավանգարդ», 1925, № 70։

36 «Ազատ եկեղեցի»-ն լույս էր տեսնում սկզբում շաբաթը մեկ, 1926 թ.՝ մեկամսյա, այնուհետև՝ երկշաբաթյա պարբերականությամբ։ Խմբագիր-հրատարակիչն էր Մեսրոպ ա. թ. Մելյանը (1927 թվից հրատարակիչ՝ «Ազատ Եկեղեցական Եղբայրություն»)։ 24 էջ (27×18 սմ), տպաքանակը նախապես 1200 էր. 1925 թ. ավելացավ-հասավ 2000-ի, 1926-ին՝ նորից 1200, 1927-ին իջավ 600-ի։ Հրատարակվել է մինչև 1928 թ. սկիզբը։

բամուտ սովորություններից մաքրելու», ծիսակատարությունների ժամանակ գրաբար լեզուն աշխարհաբարով փոխարինելու, առհասարակ եկեղեցու գործունեությունն արմատական ռեֆորմների ենթարկելու միտումներով[37], ի վերջո ամբողջ հարցը հանգեցրեց նրան, որ գոյություն ունեն «լավ» ու «վատ», «ապականված» ու «մաքուր» հոգևորականներ, ուստի և հարկավոր է հիմնել նոր եկեղեցի՝ սրա շուրջը հավաքելով «ավելի մաքուր» սպասավորներ։ Վնասակարն ու վտանգավորն այն էր, որ քննադատելով հոգևոր այրերի շահատակությունները, «կեղծ ու պատիր գործերը», նույնիսկ նման փաստեր պարունակող նյութեր արտատպելով երիտասարդական պարբերականներից, «Աղատ եկեղեցի»-ն բանն այնպես էր ներկայացնում, թե իբր իր այդ «պայքարը» վերջին հաշվով նույնանում է կոմերիտմիության և նրա մամուլի օրգանների հակակրոնական պայքարին։ «Ավանդարդ»-ը և «Երիտասարդ բոլշևիկ»-ը վճռականորեն հանդես եկան այս պատրանք-մտայնության դեմ[38]։ Կոմերիտական մամուլից արտատպելով կրոնավորների դեմ ուղղված հոդվածներ, «Աղատ եկեղեցի»-ն դրանք համեմում էր «խորիմաստ» մեկնաբանություններով[39], որոնցից այն եզրակացությունն էր բխում, թե այդ մամուլը ևս վերջին հաշվով «շահագործիչ, մոլորեցուցիչ, սահարեկիչ և հալածական մեթոդներ գործադրող» կրոնավորների դեմ է միայն ելույթներ ունենում. իսկ «դիտության, կրոնի բարոյականի ազատ և մաքուր վարդապետություններն իրենց մաքուր ուսուցիչներն պիտի ունենան...»։ Եկեղեցու «ազատամտականները», նկատում էր «Ավանդարդ»-ը, իհարկե, շատ կցանկանան «մեր աուլի ջուրն էլ խառնել իրենց աուլի ջրին և իրենց պայքարին հակադիր մեր պայքարը իրար կողքի դնել և նմանեցնել միմյանց», բայց այդ «մոլորյալները» չեն ուզում տեսնել, որ մենք պայքարում ենք կրոնի և նրա տարածած հաշիշի դեմ առհասարակ, կրոնի արմատների դեմ և ոչ թե նրա վատ սպասավորների։ «Ուրիշ խոսքով ասած,—եզրափակում էր թերթը,—մեր

---

37 Տե՛ս «Աղատ եկեղեցի», 1924, № 1։

38 Տե՛ս «Ավանդարդ», 1927, № 50 («Մի քանի աղատ խոսք «Աղատ եկեղեցու» մասին» խմբագրականը), «Երիտասարդ բոլշևիկ», 1927, № 7—8 (Շ. Աղնավուրյանի «Պետք է ուժեղացնել իդեոլոգիական ֆրոնտը, պայքարել կապույտ և մանիշակագույն սատանաների դեմ» հոդվածը), «Ավանդարդ», 1927, № 69 (Ռ. Ա.-ի (Արեյան) «Դարձյալ հաշիշի «աղատ» վաճառականների մասին» մեկնաբանությունը)։

39 Տե՛ս, օրինակ, «Աղատ եկեղեցի», 1927, № 5։

դասակարգության հիմքը կազմող դարվինիզմը, մարքսիզմն ու լենինիզմը, ինչպես հայտնի է և՛ «Ազատ եկեղեցուն», և՛ հին եկեղեցուն, ամբողջապես հակադրված և թշնամական դիրք ունեն դեպի կրոնի վարդապետությունը... Մեր հակակրոնական պայքարը ոչ թե հակատեսակական մի պայքար է, այլ լույսի և խավարի պայքար է, պրոլետարիատի ազատագրության ուղիները լուսավորող մարքսիզմի և այդ ուղիները խավարող կրոնի պայքար»[40]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիան 1927 թ. դեկտեմբերի 27-ի նիստում քննելով մամուլում տարվող հակակրոնական պայքարի հարցը, անհրաժեշտ համարեց ուժեղացնել և սիստեմատիկ դարձնել այդ կարգի նյութերը հանրապետության պարբերականներում, հատկապես «Ավանդարդ» թերթում և «Երիտասարդ բոլշևիկ» ամսագրում: Միաժամանակ հանձնարարվեց մամուլի բաժնին՝ «ուսումնասիրել և կոլեգիային ներկայացնել հակակրոնական ոչ ծավալուն մի ամսագիր հրատարակելու հարցը»[41]: ՀԿ(բ)Կ Կենտկոմի բարեուղարությունը հաստատեց նոր պարբերականի հրատարակման նախահաշիվը՝ 5000 ռուբլու չափով[42]: 1928 թ. հունվարից սկսեց լույս տեսնել «Անաստված» հանդեսը ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԼԿԵՄ Երևանի կոմիտեի ապիտ-պրոպ բաժինների ու ՀԱՄԽ-ի հրատարակությամբ[43]:

Այս պարբերականը դարձավ աշակցելու «Մարտնչող անաստվածների միությանը (ՄԱՄ)», «Անաստվածների ընկերություն»-ներին ու խմբակներին, կոորդինացնելու նրանց կուլտուր-լուսավորական գործունեությունը: Այդպիսի մի հրատարակության անհրաժեշտությունն զգալի չափով պայմանավորված էր նաև նրանով, որ դասակարգային պայքարի սրմանը զուգընթաց կուլակային-նեպ-

---

40 «Ավանդարդ», 1927, № 50։

41 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 8, գ. 139, թ. 51։

42 Տե՛ս նույն տեղը, ց. 10, գ. 283, թ. 15։

43 Նույն թվականի 9—10-րդ միացյալ համարից «Անաստված»-ը հրատարակվում է իբրև ՀՍԽՀ Անաստվածների միության կենտրոնական խորհրդի օրգան։ Համարվում էր ամսագիր, բայց մեծ մասամբ լույս էր տեսնում միացյալ համարներով։ 1932 թ. եղել է երկշաբաթյա հանդես, 1933 թ. մի քանի համար՝ 10-օրյա թերթ, այնուհետև հրատարակությունը շարունակվել է նախկին տեսքով՝ մինչև 1935 թ. կենսերը։ Խմբագիրներն են եղել Պ. Թորոսյանը, Էդ. Խոճիկը, Կ. Ղազարյանը, Վ. Թաթիկյանը, Լ. Վարդումին, Ն. Խոջամիրյանը։ 16 էջ (30×23 սմ), տպաքանակը առաջին տարում եղել է 2100—5500, այնուհետև մեծացավ՝ հասնելով մինչև 8000-ի, բայց հրատարակության վերջին շրջանում խիստ կրճատվեց՝ իջնելով 550-ի։

մանական տարրերն ավելի էին սերտացնում իրենց դաշինքը կրոնական գաղափարաբանության հետ։ Այս իրողությունից ելնելով էլ «Անաստված»-ը իր հիմնական խնդիրն էր համարում՝ «պարզաբանել լայն աշխատավորական մասսաներին կրոնի հակահեղափոխական դերն ու նրա դասակարգային բնույթը, ցույց տալ նրա արգելիչ, կործանարար վնասակարությունը պրոլետարական պայքարի, սոցիալիստական շինարարության և բանվոր դասակարգի կուլտուրական ու կենցաղային կյանքի բարելավման մեջ»[44]։

Հաշվի առնելով իրականության փաստերը, հանդեսը նշում էր, որ հիմնականում երկու դեպքում են «իրենց թևերը տարածում կրոնական բլոկը և ագիտացիան». մեկ այնտեղ, ուր «հակակրոնական աշխատանքները շատ թույլ են տարվում, ավելի շուտ՝ չեն տարվում», մեկ էլ այնտեղ, ուր կրոնի դեմ պայքարում են «վերին ատիճանի կոպիտ, հարվածային և վարչական, հեղափոխական օրինականությանն ընդդեմ մեթոդներով»։ Ըստ այդմ էլ՝ կարևոր էր համարվում բացատրական-համոզիչ աշխատանքների և «սիստեմատիկ, խորացված գաղափարական պայքարի» ծավալումը, «պայքար, որ պետք է տարվի ոչ թե այս կամ այն... եկեղեցին գրավելու համար, այլ աշխատավոր զյուղացու, բանվորի գիտակցությունը, համոզմունքը՝ բեկելու և կազմակերպելու՝ մատերիալիզմի իմացությունների»։ Կրոնի դեմ մղած մեր պայքարի հաջողությունը, շարունակում էր «Անաստված»-ը, զգալի չափով պայմանավորված է նաև նրանով, թե կկարողանա՞նք արդյոք որոշակի տարբերակում անցկացնել մի կողմից՝ կրոնական բարձր շերտի, հակախորհրդային բլոկի և մյուս կողմից՝ շարքային հավատացյալների, աշխատավորության հետամնաց, մոլորված խավերի միջև, չեզոքացնել առաջիններին և վերջիններին աղատել նրանց ազդեցությունից ու «բարձր հովանավորությունից», ներգրավելով սոցիալիստական շինարարության մեջ[45]։

Ունենալով ճիշտ նպակետ և իրեն առաջադրված խնդիրների հստակ ըմբռնում՝ «Անաստված»-ը բացատրական-պրոպագանդիստական լայն աշխատանք ծավալեց, զգալի չափով նպաստելով հակակրոնական կազմակերպությունների գործունեության բարելավմանը, մատերիալիստական գիտելիքների տարածմանը։ Հանդեսի էջերում պարբերաբար ապագրվում էին Մարքսի, Էնգելսի,

---

44 «Անաստված», 1928, № 2։

45 Տե՛ս նույն տեղը, 1929, № 1—2։

Լենինի ասույթները կրոնի վնասակարության և նրա դեմ պայքարելու անհրաժեշտության մասին։ Ընթերցողները հաճախակի էին հանդիպում Եմ. Յարոսլավսկու հանրամատչելի պրոպագանդիստական հոդվածներին, որ արտատպվում էին «Պրավդա»-ից և այլ պարբերականներից, Հ. Ազատյանի և այլոց գրվածքներին։ Առանձնապես պետք է նշել Ռ. Գաբրիելյանի եռանդուն աշխատակցությունը ամսագրին. գրեթե յուրաքանչյուր համարում նա հանդես էր գալիս կյանքի ծագման ու զարգացման մասին բնագիտական զրույցներով, պրոպագանդելով Դարվինի ուսմունքը, մատերիալիստական աշխարհընկալման հիմունքները («Մարդու ծագումը», «Ի՞նչ է ժառանգել մարդը կենդանիներից», «Ջրհեղեղի պատմությունը», «Դարվինիզմ և մարքսիզմ» և այլն)։ Հակակրոնական գրականություն խորագրի ներքո պարբերաբար զետեղվում էին անոտացիա-հանձնարարականներ ոչ միայն նոր լույս տեսած գրքերի և բրոշյուրների, այլև անցյալի ուշագրավ հրատարակությունների վերաբերյալ։ Զգալի տեղ էին բռնում «Մարտնչող անաստվածների միության» տեղական կազմակերպությունների աշխատանքը լուսաբանող նյութերը, գավառներից, կոլտնտեսություններից և ձեռնարկություններից ստացված թղթակցությունները։

Իր թեմատիկայի ընդհանուր բնույթից ելնելով՝ «Անաստված»-ը, բնականաբար, սկզբից ևեթ դիմեց մասսայական ներգործության այնպիսի արդյունավետ միջոցի օգտագործմանը, ինչպիսին երգիծանքն էր՝ իր բազմազան կիրառումներով։ Երգիծական-սատիրական պատկերներով, սրամիտ երկախոսություններով կամ ֆեյլիետոններով ամսագրի էջերում հանդես են եկել Լեռ-Կամսարը, Դ. Դեմիրճյանը, Էդ. Խոճիկը, Վ. Թոթովենցը, Գ. Մահարին, Ն. Զարյանը, Փալանդուզ Մկոն (Վ. Բագրատունի), Ան. Շիրոյանը և ուրիշներ։ Երբեմն-երբեմն վերատպվում էին նաև Հ. Պարոնյանի սրամիտ տողերը կրոնի և կրոնավորների մասին։ Հանդեսին որոշակի աշխուժություն և ներգործուն ուժ էին տալիս դիպուկ և խոսուն ծաղրանկարները, որ կատարում էին Մ. Արուտչյանը, Հ. Տեր-Ավագյանը, Ե. Դանչոն, Հովհ. Շավարշը, Ս. Թարյանը, Մ. Անուշավանը, Ս. Հովհաննիսյանը, Կ. Սիմոնյանը, Լեկապեն և ուրիշներ։

Իր շուրջը համախմբելով գիտական ու գրական ակտիվ ուժեր, այս հանդեսը կարողացավ հասարակական լայն հետաքրքրություն առաջացնել. մանավանդ գոյության առաջին տարիներին այն հանրապետության ամենաշատ ընթերցվող պարբերականներից մեկն էր և որոշ չափով լրացնում էր երգիծական հրատարակության պա-

կասը մեկանում։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ, ինչպես նշված է ամսագրի 5-րդ տարելիցին նվիրված խմբագրականում՝ «Անաստված»-ը «շատ շուտով արձագանք գտավ ոչ միայն Խորհրդային Հայաստանի բոլոր մասերում, այլև Հայաստանից դուրս՝ Վրաստանում, Ադրբեջանում, նույնիսկ Ամերիկայի, Հունաստանի, Սուրիայի և այլ երկրների բանվորների մեջ. այս վերջիններից մեծ թվով բաժանորդագրվեցին և թղթակցություններ ստացվեցին»[46]։

Լինելով այդ ժամանակ Խորհրդային Միությունում ազգային լեզուներով հրատարակվող հակակրոնական 16 պարբերականներից մեկը, «Անաստված»-ը որոշակի դեր խաղաց աշխատավորության սոցիալիստական դաստիարակության գործում, կրոնական գաղափարախոսության դեմ մղված պայքարում։

Դասակարգային-գաղափարական պայքարի սրմանը զուգընթաց՝ առավել վտանգավոր էին դառնում հակակրոնական աշխատանքում ի հայտ եկող թերությունները թե՛ տեսության մեջ և թե՛ գործնականում։ «Ամենամեծ տեսակի օպորտունիզմ է աջերի այն տեսակետը,— ընդգծում էր «Խորհրդային Հայաստան»-ը «Կրոնի արմատները ոչնչացնելու համար» խորագրով առաջնորդողում[47],— թե քանի որ մեզ մոտ կատարվում է կուլտուրական հեղափոխություն, կրոնն ինքն իրեն կվերանա, կարիք չկա «ձեռք տալ նրան»։ Մյուս կողմից թերթը նույնքան վտանգավոր էր համարում «կրոնին միանգամից վերջ տալու փորձերը, որ կատարում են այստեղ և այնտեղ իրենց անչափ ձախ երևակայողները մեր շարքերում»։ «Այդպիսի «ձախությունը»— եզրակացնում էր թերթը,—լավագույն օգնությունն է կուլակին և հակահեղափոխականներին։ Կրոնը վերացնելու գործում վարչական միջոցների դիմելը «ձախ» ավանտյուրիզմ է, որ միայն ուժեղացնում է կրոնական նախապաշարումները»։

Անտիճանարար ավելի հանդամանալից ու սկզբունքային բնույթ էր ընդունում մամուլի հակակրոնական պայքարը։ Հաղթահարելով «ձախության» և հաշտվողականության տենդենցները, պարբերականները լայնորեն պրոպագանդում էին մատերիալիստական աշխարհայացքի հիմունքները, գիտության նվաճումները, մերկացնում-քննադատում էին կրոնական գաղափարաբանության ամեն մի դրսևորում։ Իր գործունեության այս կարևոր բնագավա-

---

46 «Անաստված», 1932, № 21—24։

47 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930, № 92։

ռում մամուլը ելնում էր այն սկզբունքային ըմբռնումից, որը ճիշտ կերպով այսպես ձևակերպեց «Լենինյան ուղի» ամսագիրը. «... Հակակրոնական պայքարը մեր ընդհանուր իդեոլոգիական-դասակարգային պայքարի, մեր ընդհանուր կուլտուրական հեղափոխության մեկ մասնիկն է դառնում, այն հեղափոխության, որն անհնարին է առանց խավարամտության, տգիտության և վայրենության հաղթահարման, առանց ամեն ժամ և ամեն օր շահագործման հարաբերությունները հաղթահարելու...»[48]։

* * *

Այսպիսով, մեր Հանրապետության պարբերական մամուլը լայն կերպով դնում և քննարկում էր աղգաբնակչությանը հասարակական նոր սկզբունքների և ըմբռնումների ոգով դաստիարակելու և վերադաստիարակելու հարցը։ Քաղքենիության, նասիրության, պաշտոնամոլության, հնից եկող վնասակար սովորությունների կրքոտ քննադատության հետ մեկտեղ թերթերն ու հանդեսները դրվատում էին նոր կենցաղավարության, սոցիալիստական ապրելակերպի՝ ընդօրինակման արժանի դրսևորումները, տարածում առողջապահական գիտելիքներ։ Նոր մարդու հասարակական-բարոյական կերպարի ձևավորմանը նպաստելու տեսակետից նշանակալից էին նաև մամուլի ակտիվ մասնակցությունը կանանց շրջանում տարվող աշխատանքներին և թերթերի ու հանդեսների հետևողական, սկզբունքային ելույթները հանուն հակակրոնական պայքարի ճիշտ ու նպատակասլաց կազմակերպման։

---

48 *«Լենինյան ուղի», 1929, N 6, էջ 60։*

ԳԼՈՒԽ III

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Նոր գրականության ստեղծման հնարավորությունների ու զարգացման հեռանկարների խնդիրը. պրոլետկուլտականության ճնշադատությունը. դասական ավանդների նիշտ օգտագործման համար: Գրական-գեղարվեստական առաջին պարբերականները. «Մուրճ» հանդեսը, «Խորհրդային Հայաստան» բերի «Պայքար» հավելվածը: «Վերելք» և «Նոր ակոս» պարբերականները: Միօրյա գրական թերթեր: Երգիծական մամուլի օրգաններ. «Նեշտ», «Զուտնա», «Կարմիր մոծակ»: «Նորք», «Նոր ոտի» և «Գրական դիրքերում» հանդեսների ընդհանուր բնութագրությունը: Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցումը. նոր պարբերականներ. «Գրական թերթ», «Նոյեմբեր», «Վերելք», «Խորհրդային գրականություն»: Գրական նոր սերնդի դաստիարակության խնդիրը. «Երիտ-գրող», «Գրական սերունդ» ամսագրերը: Թատրոնի, կինոյի, կերպարվեստի և երաժշտության հարցերը մամուլում. «Խորհրդային Հայաստան» թերթի նոր հավելվածը, «Արվեստ» երկամսյա հանդեսը, «Արվեստի ֆրոնտում» հավելվածը, «Խորհրդային արվեստ» ամսագիրը:

1

Պարբերական մամուլը կարևոր դեր խաղաց Հասարակական նոր պայմաններում գրականության, արվեստի և գիտության ձևավորման ու զարգացման ուղիների որոնման գործում՝ 20-ական թվականների սկզբներին: Այն ժամանակաշրջանն էր դա, երբ ծնվում էին նոր ըմբռնումներ և նոր սկզբունքներ էին արմատավորվում ներգրական սուր բախումների ալիքում, արվեստի դեմոկրատացման, գիտության գործնականացման ջանքերի մեջ:

Նոր գրականության ստեղծման հնարավորությունների ու զար-

պացման հեռանկարների հիմնական, առանցքային պրոբլեմի շուրջն էին մերձենում կամ տարբերակվում գրական-գեղարվեստական ավանդների, «հին» ու «նոր» կաղապարների փոխհարաբերության, «ազգային» և «համաշխարհային» բովանդակության, «մեռած» ու «ծնվող» ձևերի, գրական մթնոլորտի հետ առնչվող բազմաթիվ խնդիրներ, որոնց ուսումնասիրման համար այսօր գրականության պատմաբանին հետաքրքիր և արժեքավոր նյութ է մատուցում ժամանակի պարբերական մամուլը: Այստեղ մենք հանդիպում ենք և՛ Հայաստանում պրոլետարական գրականության ստեղծման վաղաժամության վերաբերյալ կարծիքների, և՛ անցյալի ժառանգության հանդեպ «ձախ» պրոլեկտուլտական մոտեցման դրսևորումների, և՛ գրականության խնդիրների ճշմարիտ, առողջ մեկնաբանությունների:

Այս ամենը մամուլում լայն քննարկման նյութ դարձավ հատկապես այն բանից հետո, երբ «Խորհրդային Հայաստան»-ում լույս տեսավ «Դեկլարացիա երեքի» գրական մանիֆեստը[1] Ե. Չարենցի, Ա. Վշտունու և Գ. Աբովի ստորագրությամբ: Պատմականորեն պայմանավորված մի քանի գրական կողմերի, կամ ինչպես ճիշտ կերպով նկատված է՝ «գրական լիցքի» հետ մեկտեղ (գեղարվեստի մեջ քաղաքենիական նացիոնալիզմի, ապադասակարգայնության, ապոլիտիկ «չեզոքության» և էսթետիզմի մերժում-բացասում, արվեստի նոր ձևերի հայտնագործման պահանջ և այլն), դեկլարացիան պարունակում էր «բացասական լիցք», որը այրում, մոխրացնում էր անցյալի հետ կապող բոլոր կամուրջները, կլասիկան լրիվ դուրս էր նետում «արդիականության նավից»[2]: Տուրք տալով կուսակցության կողմից դատապարտված նիհիլիստական ըմբռնումներին, «ուլտրա-հեղափոխական» ոգևորությանը, դեկլարացիայի հեղինակներն ընկնում էին պրոլետկուլտական-ֆուտուրիստական աղանդավորության ջրատուության մեջ՝ իրենց նեղից տանելով գրական նոր սերնդի շատ ներկայացուցիչների:

«Դեկլարացիայի» սկզբունքների կողմնակիցների ու հակառակորդների միջև մամուլում բռնկվեց իսկական մի բանակռիվ: Երկու կողմերն էլ հանդես էին գալիս իրենց տեսակետների պաշտպանությամբ: «Խորհրդային Հայաստան»-ում լույս տեսան Ե. Չարենցի, Գ. Աբովի, Ա. Վշտունու և այլոց հոդվածները, որոնց մեջ քամա-

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, № 130:

2 Տե՛ս «Սովետահայ գրականության պատմություն», հ. 1, Երևան, 1961, էջ 65—67:

հրվում էր անցյալի կուլտուրական-գրական ավանդները նոր գրականության ստեղծմանը ծառայեցնելու անհրաժեշտությունը։ «Մենք պետք է կազմակերպված պայքար մղենք հին արվեստի տրադիցիաների դեմ»[3],— գրում էր Ե. Չարենցը։ «Անցել են Թումանյաններն իրենց կիսաֆեոդալական և կիսագյուղացիական միամիտ ապրումների հետ, անցնում են նաև Տերյանները»[4],— արձագանքում էր Գ. Աբովը։ «Մեր «վաստակավոր» և «հայտնի» գրողները,— հեգնում էր Ա. Վշտունին,— իրենց քաղաքական համոզմունքով և հոգեկան խառնվածքով այնքան են հեռու կանգնած պրոլետարական գրականությունից, որքան Մասիսը Հիմալայան լեռնաշղթայից...»[5]։ Հին գեղարվեստը «բոլորովին անհարազատ է բանվորական մասսաների ապրումներին»,— ձայնակցում էր Ն. Դաբաղյանը՝ առաջարկելով այդ գեղարվեստը, որպես հնություն, դնել «թանգարաններում, նախամարդկանց կմախքների կողքին»[6]։

Պրոլետկուլտական-նիհիլիստական վերոհիշյալ վնասակար ու վտանգավոր մտայնության հիմնավոր քննադատությամբ մամուլում հանդես եկան Տ. Հախումյանը, Պ. Մակինցյանը, Հ. Սուրխաթյանը, Ա. Կարինյանը[7]։ Այդ ելույթներում սրամիտ և դիպուկ էր այն դիտողությունը, որով մատնացույց էր արվում գրական օրենսդիր Չարենցի և հեղափոխական երգիչ Չարենցի միջև առկա հակասությունը։ «Եղիշե Չարենցը,— նկատում էր Պ. Մակինցյանը,— իր թարմաշունչ պոեզիայով շատ ավելին է տվել պրոլետարական պոեզիային, քան այս աղքատիկ ու ծռմռված կանոններով է տալիս»։ Հայ գրականության դասական ավանդների կարևորության ընդունման և դրանք նոր մշակույթի կազմակերպմանը ի սպաս դնելու անհրաժեշտության յուրովի դրսևորումն եղան Հ. Թումանյանի մահվան առթիվ մամուլում զետեղված բազմաթիվ նյութեր։

Նոր, սոցիալիստական գեղարվեստի ծավալման, նրա սկզբ-

---

3 «Խորհրդային Հայաստան», 1922, № 136։

4 Նույն տեղում, № 158։

5 Նույն տեղում, № 229։

6 Նույն տեղում, № 13։

7 Տե՛ս Տ. Հախումյան, «Ի պաշտպանություն չորրորդ աստիճանի հոտենտոտի («Երևի» դեկլարացիայի և Ե. Չարենցի հոդվածաշարի առթիվ)», («Խորհրդային Հայաստան», 1922, № 141). Պ. Մակինցյան, «Հայկական Բուլոն և նրա արբանյակները թվով երեք ու կես» (նույն տեղում, № 157). Հ. Սուրխաթյան, «Մի դեկլարացիայի առթիվ» («Նոր աշխարհ», Թիֆլիս, 1923, № 1). Ա. Կարինյան, «Վերտանգավոր սայլարում» («Պայքար», Երևան, 1923, № 2)։

քունքների արմատավորման համար կարևոր նշանակություն ունեցան ակադեմիկոս լենինյան Ալ. Մյասնիկյանի՝ այդ հարցերին նվիրված ելույթները խորհրդային հայ մամուլում։ Ընդգծելով գրականության ու արվեստին վերապահված կարևոր դերը աշխատավորների կուլտուրական-դաստիարակչական դաստիարակության գործում, Ալ. Մյասնիկյանը գտնում էր, որ մամուլը չի կարող անուշադրության մատնել նոր գեղարվեստի ստեղծման խնդիրները, քանի որ կուլտուրայի ասպարեզը բուրժուական և պրոլետարական գաղափարախոսությունների բախման ամենահիմնական ոլորաններից մեկն է։ Այս ըմբռնման կոնկրետ արտահայտությունն էին մասնավորապես նրա այն ելույթները, որոնք ուղղված էին «արվեստը արվեստի համար» տեսության և բուրժուական ռեակցիոն գրաքննադատության դեմ[8]։ Ալ. Մյասնիկյանը վճռաբար հանդես էր գալիս ի պաշտպանություն մարքս-լենինյան մեթոդոլոգիայի, որը զեկավար սկզբունք պիտի լինի գրական-կուլտուրական երևույթներն ու գեղարվեստական կոնկրետ երկերը գնահատելիս։ «Այսպես կոչված գուտ գեղարվեստ չկա,— գրում էր նա,— քանի որ գեղարվեստը գեղարվեստի համար չէ, այլ ընդհակառակը՝ գեղարվեստը— դա ինքը կյանքն է, հասարակությունն է. նա մարդկանց ու երկրիս համար է»։

Նոր, սոցիալիստական գեղարվեստ ստեղծելու, նրա զարգացման համար ուղիներ հարթելու ակտիվ շահագրգռությամբ էր տոգորված Ալ. Մյասնիկյանի՝ «Պրոլետարական գրականության նվիրված «Մուրճ» ամսագրի № 1-ի առթիվ» հոդվածը[9], որն զգալի դեր խաղաց իր առաջին քայլերն անող խորհրդային հայ գրականության կազմավորման պրոցեսում։ Նա գտնում էր, որ մեր գրողների ջանքերը առաջին հերթին պետք է ուղղված լինեն այն կոնկրետ ստեղծագործական-շինարարական աշխատանքների արտացոլմանն ու գեղարվեստական իմաստավորմանը, որ ծավալվում են այստեղ, Խորհրդային Հայաստանում։ «Ո՞րն է այն մթնոլորտը, որտեղ ծնել ու ծաղկելու է հայ պրոլետարական գրականությունը վերջինիս սուղ իմաստով,— հարցնում էր Ալ. Մյասնիկյանը և պատասխանում.— Այդ մթնոլորտը արդի հայ կյանքն է. նրա տնտեսությունը, գյուղը, մթին նկուղները, աշխատավոր գյուղացին, ար-

8 Տե՛ս «Գրական քննադատության մեթոդի մասին» («Նոր աշխարհ», 1922, № 1). «Յու. Այխենվալդի «Բանաստեղծները և բանաստեղծուհիները»» (նույն տեղում, № 2)։

9 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, №№ 267—268։

դի հայ մամուլը, հայ քաղաքական կուսակցությունները, հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը, քաղաքացիական կոիվների անցուդարձը, խորհրդային շինարարության պես-պես կողմերն ու ձևերը, հայ շինականի ու քաղաքի աշխատավորի մտորումներն ու հուզումները, հայ ինտելիգենտը, վարժապետը, հոգևորականը և այլն և այլն՝ այն ամենը, որ կա, տպրում ու բովանդակություն է տալիս այն կյանքին, որ կոչվում է խորհրդային Հայաստան»։ Ընդհանուր-կոմունիստական մասշտաբներ շոշափող, վերացական ու աննյութ պոեզիայի գերիշխանության պայմաններում առավել ևս ակնառու էր այսպիսի հարցադրման կարևորությունը։

Իր գրավոր ու բանավոր ելույթներում, անձնական հանդիպումների և զրույցների պահերին Ալ. Մյասնիկյանը ոչ միայն բացահայտում էր գրական մարզում տեղ գտած սխալները, այլև առանձնակի սիրով ընդգծում էր գրականը, միշտ բարձր գնահատելով նոր գեղարվեստի տաղանդավոր կերտողների աշխատանքը։ Նա զգայուն, հոգատար վերաբերմունք էր դրսևորում նաև հայ մտավորականության այն խոշոր ներկայացուցիչների հանդեպ, ովքեր հասարակական-քաղաքական նոր պայմաններում շարունակում էին ազնվորեն ծառայել ժողովրդին։ Գրական խնդիրներին, նոր կուլտուրայի ստեղծման գործին ցուցաբերած նրա մոտեցման մեջ միասնաբար էին հանդես գալիս ակնառավոր պետական գործիչն ու նշանավոր գրականագետը[10]։ Լեոն, վերհիշելով իր և Հ. Թումանյանի հանդիպումներն ու զրույցները Ալեքսանդր Մյասնիկյանի հետ, գրել է. «Գերազանցորեն պետական մարդ և գերազանցորեն գրական մարդ։ Ինձ ու Հովհաննես Թումանյանին հափշտակում էր հենց այն հանգամանքը, որ երկրորդ մարդն այնքան սերտորեն ներդաշնակված է առաջին մարդու հետ։ Ալեքսանդր Մյասնիկյանը խոսում էր գրականության մասին ոչ թե իբրև գրականությունից մի կողմ կանգնած մի համակրող, մի մեկենաս։ Ո՛չ։ Նա ինքն գրական մշակ էր։ Ահա ինչն էր ամենից շատ թանկ մեզ համար»[11]։ Նշելով Ալ. Մյասնիկյանի ցուցաբերած բացառիկ հետաքրքրությունը գեղարվեստի նկատմամբ, Մ. Սարյանը վկայում է. «Նա, ինչքան ես ինքս մոտիկից դիտեմ, մեծ ուշադրությամբ հետևում էր այն բոլորին, ինչ կատարվում էր գրականության ու նկարչության

[10] Այստեղ մեր խնդիրների մեջ չի մտնում Ալ. Մյասնիկյանի գրական-քննադատական ժառանգության քննությունը։

[11] «Նոր ակոս», 1925, № 5—6—7։

ասպարեզում։ Ընկ. Մյասնիկյանը կուլտուրապես խոշոր մարդ էր. հազվագյուտ մեծ դեմք»[12]։

Ալ. Մյասնիկյանի խոշոր էրուդիցիան, սևեռուն ուշադրությունը գրականության, արվեստի, առհասարակ կուլտուրայի զարգացման նկատմամբ, հայ հրապարակախոսությանն ու գրականագիտությանը մատուցած ծառայությունները թանկ էին գնահատում նաև պետական-կուսակցական այն գործիչները, որոնք աշխատել էին նրա հետ։ «Ընկ. Մյասնիկյանը,— գրել է Ա. Մռավյանը,— չափազանց լայն հետաքրքրություն ունեցող անձնավորություն էր. նա ոչ միայն փայլուն կերպով տիրապետում էր մարքսիզմին, տնտեսագիտությանը, մարքսիստական փիլիսոփայությանը, այլև մեծ հետաքրքրություն ուներ կուլտուրայի խնդիրների նկատմամբ։ Գրական-գեղարվեստական խնդիրները մեծ չափով նրան զբաղեցնում էին, նրա ուշադրությունը գրավում»[13]։ Ալ. Մյասնիկյանի հիշատակին նվիրված Երևանի քաղխորհրդի սգո նիստում Աշ. Հովհաննիսյանը, բնութագրելով ականավոր լենինյանի անցած հեղափոխական ուղին, առանձնապես ընդգծում էր. «Մեր օրերին ընկ. Մյասնիկյանը՝ Ալ. Մարտունին դարձավ խոշորագույն հայ հրապարակախոսը և ամենաազդեցիկ հայ մարքսիստ գրականագետը»[14]։

2

20-ական թվականների սկզբներին խորհրդային հայ իրականության մեջ ձևավորվեցին առաջին գրական միավորումներն ու խմբակները («Հայ գեղարվեստական աշխատավորների միությունը» և «Մուրճ» խմբակը՝ Երևանում, «Հայ գրչի մշակների ընկերությունը» և «Դարբնոց»-ը՝ Թիֆլիսում, «Քուրա»-ն՝ Մոսկվայում և այլն)։ 1922 թ. վերջերին և հաջորդ տարվա սկզբներին կազմավորվում է «Պրոլետարական գրողների ասոցիացիա»-ն, որը հետո իր բաժանմունքներն ստեղծեց Լենինականում, Ալավերդում, Ղարաքիլիսայում և հանրապետության այլ վայրերում։ Ամենուրեք ստեղծագործական վեճեր էին ծայր առնում, կազմակերպվում էին քննարկումներ, «գրական դատեր» ... Յուրաքանչյուրը բերում էր իր ըմբռնումները, իր տեսակետները գրականության ու արվեստի անցյալի, այսօրվա ու վաղվա վերաբերյալ։

---

12 «Խորհրդային Հայաստան», 1925, № 69։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, № 67։

Նորօրյա հախուռն ձգտումները, բնականաբար, առաջացրին համապատասխան տպագիր օրգաններ ունենալու պահանջ, որի բավարարումը, ինչ խոսք, առանձին անհատների եռանդուն նախաձեռնություններից ավելի՝ հասարակական անհրաժեշտության արդասիք էր նախ և առաջ։ Այսպես ծնունդ առան Հայաստանում գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ու գիտական առաջին պարբերականները։

1922 թ. նոյեմբերին հրատարակվեց «Մուրճ»-ի՝ պրոլետարական գրականությանը նվիրված առաջին համարը, որն ուներ Գրական-գեղարվեստական-քննադատական պարբերական ենթանվանումը[15]։ «Մուրճ»-ի հիմնադիր և խմբագիր Ա. Վշտունին այսպես է ձևակերպել ամսագրի նպատակը. «Տանելով գրականությունը աշխատավորական-դասակարգային գաղափարախոսության ուղիով, որքան հնարավոր է առաջ քաշել աշխատավորական խավերից դուրս եկած գրողներին և գեղարվեստագետներին, նրանց կապելով այն ինտելիգենտ գրողներին, որոնք գրական հասկացողությամբ ամբողջապես կանգնած կլինեն մարքսիստական դասակարգային տեսակետի վրա»[16]։ Հարկ է նշել սակայն, որ ամսագիրը քիչ թե շատ հաջող կատարեց իր նպատակի միայն առաջին մասը («առաջ քաշել աշխատավորական խավերից դուրս եկած գրողներին...»)։ «Մուրճ»-ը զերծ չմնաց ժամանակի սխալներից ու «ձախությունից». մուրճականները ևս ժխտում-մերժում էին դասական ժառանգությունն օգտագործելու անհրաժեշտությունը, տալով «դասակարգային ինքնամփոփվածության» տեսությանը։ Պրոլետկուլտական ազանդավորությանը գումարվում էին ստեղծագործական խեղ պատկերացումները, որոնց հետևելով՝ «Մուրճ»-ի բանաստեղծները մեծ մասամբ հնչեցնում էին «կոսմիկական մոտիվներ», ֆետիշացնում շոգին ու պողպատը, մի կողմից՝ մոռացության տալով Խորհրդային Հայաստանի կենդանի իրականությունը, մյուս կողմից՝ բամբասելով նոր արվեստի մեջ հոգևորանական տարրը։ Այս միակողմանիությունը դիտուկ կեր-

---

15 «Մուրճ»-ը № 3-ից (1923 թ. հունվար) կոչվել է Օրգան պրոլետարական գրողների։ Պատ. խմբագիրն էր Ա. Վշտունին, խմբ. կոլեգիայի մեջ էին՝ Ա. Նորենկը (Ակ. Հախումյան), Դ. Վանանդեցին, Ե. Դանչոն։ 24—56 էջ (30×23 և 27×20 սմ), տպարանակը չի նշված։ Վերջին՝ 5-րդ համարը լույս է տեսել 1923 թ. մայիսին։

16 «Մուրճ», 1922, № 1։

պով ընդգծեց Ալ. Մյասնիկյանը «Մուրճ»-ին նվիրված իր վերոհիշյալ հոդվածում։

«Մուրճ»-ը ուներ «Բանաստեղծություններ», «Վիպագրություն», «Գործնական ուղիների վրա», «Տեսական ձևակերպումներ», «Գրախոսություն և ուսումնասիրություն» բաժինները։ Սկզբնակ գրողների գործերից բացի, հանդեսը տպագրում էր հաղորդումներ գրական նոր ուղղությունների և հոսանքների վերաբերյալ, փորձում էր տեսականորեն հիմնավորել «իր պոետների պրակտիկան», քննարկում էր ժամանակակից գրական արտադրանքը։ Դժբախտաբար, «Մուրճ»-ը չկարողացավ լայնախոհ մոտեցում ցուցաբերել իր առաջադրած ծրագրին և շուտով ներփակվեց նեղկաստայականության անձուկ շրջանակներում, առաջնորդվելով ավելի շուտ և ավելի շատ իր հրատարակիչների անձնական համակրություններով ու հակակրանքներով։ Ներգրական պայքարում սուբյեկտիվիզմը հասավ այնտեղ, որ պրոլետարական գրականության դիրքերից հանդես եկող պարբերականն այդ գրականությունից դուրս էր դնում նույնիսկ... Ե. Չարենցին, տալով նրան այսպիսի տարօրինակ բնութագրում՝ «հեղափոխության երգիչ՝ բուրժուական հոգեբանությամբ»[17]։

Գրականության և արվեստի խնդիրներն ավելի մոտիկից քննարկելու նպատակով «Խորհրդային Հայաստան» օրաթերթը 1923 թ. հունվարի 15-ից սկսեց հրատարակել «Պայքար» խորագրով հավելվածը։ Հուլիսի 5-ից «Պայքար»-ը դադարում է հավելված լինելուց և շարունակում է լույս տեսնել իբրև ինքնուրույն հրատարակություն[18]։

«Պայքար»-ը կանգնած էր գրական-գեղագիտական առողջ դիրքերի վրա։ Առանձնապես պետք է նշել Ա. Կարինյանի այն հոդ-

---

17 «Մուրճ», 1923, № 3։

18 «Պայքար» հավելվածի պարբերականությունն անկանոն էր (կես տարում լույս է տեսել 5 համար). թեև 1923 թ. 6—7-րդ միացյալ համարից սկսած (հուլիսի 5), առանձին հրատարակություն դառնալուց հետո, ինչպես խմբագրությունն էր հայտնում՝ լինելու էր «Գրական-գեղարվեստական կիսամսյա հանդես», բայց չի հաջողվում պահպանել նախատեսվող պարբերականությունը. № 8-ը հրատարակվում է օգոստոսի 1-ին, № 9-ը՝ օգոստոսի 28-ին, № 10—11-ը՝ սեպտեմբերի 24-ին, վերջին՝ № 12—13-ը լույս է տեսնում դեկտեմբերի 6-ին։ «Պայքար»-ի խմբագիրն էր Ա. Կարինյանը։ 16 էջ (33×23 սմ), տպաքանակը՝ 600—800։ Աշխատակցել են Ա. Մյասնիկյանը, Ե. Չարենցը, Վ. Թոթովենցը, Գ. Արովը, Մ. Ջանանը, Ա. Վշտունին, Ստ. Զորյանը և ուրիշներ։

վածները, որոնց մեջ ճիշտ ելակետից մերժվում էին ինչպես անցյալի գրական ավանդների քամահրումները, այնպես էլ նոր, պրոլետարական գեղարվեստի ստեղծման ուղիների ծուռ ու սխալ պատկերացումները։ Ե. Չարենցի «Ռոմանս անսեր» ժողովածուին նվիրված գրախոսականում նա անում է մի շարք ճշմարիտ ու դիպուկ դիտողություններ. առարկելով Տերյանի նկատմամբ բանաստեղծի արհամարհական արտահայտություններին, քննադատը նկատում էր. «Ինչո՞ւ է նա այդպես խոսում—մենք չգիտենք։ Եթե նա ցանկանում է իր հայտարարությամբ ցուցադրել «հակատերյանական» իր ոգին—սխալվում է։ Ի վերջո, Չարենցի ամենալավ երգերի մեջ իսկ կա «տերյանական ոգի»»[19]։ Մի ուրիշ անգամ անդրադառնալով Հայաստանում պրոլետարական գրականության ստեղծման առթիվ ծագած վեճերին, Ա. Կարինյանը քննադատում է դրանցում ի հայտ եկած երկու վտանգավոր տենդենցները։ Մեկն այն էր, որ իբր թե «Հայաստանը՝ որպես «գյուղատնտեսական» երկիր, չի կարող նպաստավոր միջավայր ստեղծել «պրոլետարական» գրականության համար»։ Այս մտայնությանը գրականագետը հակադրում էր միանգամայն տրամաբանված իր առարկությունը՝ լայն ու բազմակողմանի մոտեցում ցուցաբերելով քննարկվող խնդրին. «Եթե «պրոլետարական» գրականության հիմնական հատկությունը համարենք նրա գործարանային-ֆաբրիկային ոգին,— նկատում էր նա,— եթե մենք պահանջ դնենք պրոլետարական գրողներին՝ գրել միշտ շոգեկաթսաների և մաշինաների մասին, այդ միտքն, իհարկե, չի կատարվի Հայաստանում այնպես, ինչպես նա արվում է Արևմուտքում կամ Ռուսիայում։ Բայց մենք կարող ենք ուրիշ կողմից ևս մոտենալ հարցին։ Եթե մենք «պրոլետարական» գրականության բնույթը բնորոշենք ավելի լայն տեսակետից, եթե մենք նկատի առնենք նրա հեղափոխական ինտերնացիոնալիզմը, նրա դասակարգային շեշտը և հասարակական ուրույն իմաստասիրությունը՝ այդ պարագային հայ պրոլետարական հեղինակները, իհարկե, կարող են իրենց խոսքը ասել։ Ամբողջ խնդիրը հենց նրանումն է, որ «պրոլետարական» գրականությունը «չորրորդ դաս»-ի իդեոլոգիան լինելով հանդերձ՝ չի կարող և չպետք է սահմանափակվի բացառապես «ֆաբրիկային-գավոդային» մոտիվներով»[20]։

---

19 «Պայքար», 1923, № 2, էջ 18։

20 Նույն տեղում, № 3, էջ 33։

Պրոլետարական գրականությունը «նեղ-ցեխային», ազանդավորական շրջանակների մեջ նեղփակելու միտումների քննադատությունը Ա. Կարինյանն ավելի է խորացնում՝ մերժելով նաև մյուս՝ նույնչափ վտանգավոր մտայնություն-տենդենցը, որի կողմնակիցները ժխտում էին անցյալի ավանդների նշանակությունը նոր մշակույթի ստեղծման գործում։ Պրոլետարական գրողը, արվեստագետը, շարունակում էր ականավոր մարքսիստ քննադատը, պիտի ձգտի երդել «կյանքի բոլոր կողմերը, ինչպես այդ արել են մինչև այժմ արվեստի մեծագույն վարպետները». բայց չպետք է մոռացության տալ սկզբունքային նշանակություն ունեցող կարևորագույն մի հանգամանք, ա՛յն, որ նոր գրողը, նոր արվեստագետը պետք է ունենա ի՛ր մոտեցումը, ի՛ր դասակարգային «ես»-ը. «Պրոլետարիատի «սուբյեկտիվ» գեմքը պիտի ինքնահատուկ գրոշմ դնե» այդ գեղարվեստի վրա[21]։

«Պայքար»-ի հատկանշական կողմերից մեկն էլ այն էր, որ ուներ գրական-գեղարվեստական բավական լայն ընդգրկում. պրոլետարական գրականության խնդիրների քննարկմանը զուգընթաց պարբերականն անդրադառնում էր ռուսական և արտասահմանյան գեղագիտական ուղղություններին, թատրոնի ու կերպարվեստի հարցերին, տպագրում տաղանդի գրողների և արվեստագետների վաստակը բնութագրող հոդվածներ (Վերհարն, Ուիտմեն, Մ. Սարյան, Հ. Կոջոյան), զետեղում էր գրական-կուլտուրական կյանքի նորությունների, Հայաստանի մշակութային հաստատությունների նվիրված հաղորդումներ, ոիյուբաՀայ մամուլի տեսություններ և այլն։

«Պայքար»-ը, որ լույս տեսավ շուրջ մեկ տարի, ուշագրավ երևույթ էր հանրապետության գրական-հասարակական կյանքում։

1924 թ. սկզբներից «Պայքար»-ին փոխարինելու եկավ «Վերելք» գրական-գեղարվեստական, գիտական-հասարակական պատկերազարդ հանրամատչելի ամսագիրը[22], որն ուներ հետևյալ բա-

---

21 «Պայքար», 1923, № 3, էջ 33։

22 «Վերելք»-ը լույս էր ընծայում ՀԿ(բ)Կ Կենտկոմի հրատարակչական բաժինը։ Պատ. խմբագիրն էր Ն. Զուրարը, խմբ. կոլեգիայի մեջ մտնում էին նաև Հ. Գյուլի-Քեվխյանը և Հակ. Հովհաննիսյանը։ Գեղարվեստական ձևավորումը կատարել է Հ. Կոջոյանը։ Աշխատակցել են Ստ. Զորյանը, Ն. Զարենցը, Դ. Դեմիրճյանը, Խ. Նրիցյանը, Թ. Ավդալբեկյանը, Հ. Աճառյանը, Ա. Կարինյանը, Ա. Մռավյանը, Պ. Արեցյանը, Խ. Սամվելյանը, Գ. Գյուրջյանը, Ն. Զարյանը, Գ. Մահարին և ուրիշներ։ 24—84 էջ (32×23 սմ), տպարանակը՝ 1500։ Ունեցել է միացյալ համարներ։

ժիններբ՝ Գեղարվեստական, Տնտեսական կյանք, Գիտական նյութեր, Գիտություն և տեխնիկա, Կյանք և գեղարվեստ, Գրախոսություն:

«Վերելք»-ում տպագրվել են Ստ. Զորյանի «Շուկայում», «Պատերազմ» պատմվածքները, հատված Դ. Դեմիրճյանի «Համառոտ անմահներ և հավերժական մահկանացուներ» վեպից, Ե. Չարենցի «Լենին» բանաստեղծությունը, Ալ. Բլոկի «Տասներկուսը» (թարգմ. Աղ. Վարդանյանի) և այլ գրական գործեր:

Ամսագիրն անդրադարձել է նաև տնտեսական շինարարության հարցերին (ջրանցքների կառուցում, բամբակագործություն, ագրոնոմիական ուսուցում և այլն), զետեղել է հակակրոնական բնույթի նյութեր ու զրույցներ, գիտության ու տեխնիկայի նորություններին նվիրված համառոտ հաղորդումներ:

Երբ 1924 թ. կեսերին ընդհատվեց «Վերելք»-ի հրատարակությունը, հրապարակ իջավ նույն բնույթի մի այլ պարբերական՝ «Նոր ակոս» գրական-գեղարվեստական և հասարակական պատկերազարդ հանդեսը (կոչվում էր շաբաթաթերթ)[23]:

Զգալի տեղ էր հատկացնում այս պարբերականը գրական նյութերին, գեղանկարչության, երաժշտության, բանդակագործության, թատրոնի խնդիրներին, կուլտուրական շինարարության հարցերին: Իրենց նոր ստեղծագործություններով նրա էջերում հանդես են եկել Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Ստ. Զորյանը, Դ. Դեմիրճյանը, Վ. Թոթովենցը, Լեո-Կամսարը և ուրիշներ, գրականագիտական, հրապարակախոսական կամ արվեստաբանական հոդվածներ են գրել Ա. Կարինյանը, Թադ. Ավդալբեկյանը, Գ. Վանանդեցին, Գ. Գյուրջյանը, Գ. Մահարին, Դ. Դզնունին, Կ. Զարյանը, Ա. Երեմյանը:

«Վերելք»-ի համարների վրա դրված է միայն տարեթիվը, ամիս-ամսաթիվը չի նշված. սակայն, ինչպես պարզ է դառնում № 4—5-ին տրված խմբագրական ծանոթությունից՝ ամսագիրն սկսել է հրատարակվել 1924 թ. հունվարից կամ փետրվարից, ապրիլին կամ մայիսին լույս է տեսել 2—3-րդ միացյալ համարը. նախատեսվում էր հաջորդ՝ 4—5-րդ միացյալ համարը լույս ընծայել նույն տարվա ամռանը, բայց այն հրապարակ իջավ ավելի քան մեկ ու կես տարի ուշացումով՝ 1926 թ. սկզբներին: Իբրև այս վերջին համարի հավելված հրատարակվեց Վ. Թոթովենցի «Ողջույնի ճաշ» պիեսը:

23 «Նոր ակոս»-ը նույնպես լույս էր ընծայում ՀԿ(բ)Կ կենտկոմի հրատարակչություն: Խմբագիրն էր Ե. Չուբարը: Առաջին համարը լույս է տեսել 1924 թ. հունիսի 15-ին, վերջինը՝ 1925 թ. մայիսի 5-ին, ընդամենը 23 համար, որից 1924 թ. № 15—16-ը և 1925 թ. № 5—6—7-ը՝ միացյալ: 16 էջ (31×24 սմ), տպաքանակը՝ 1500—3000:

«Նոր-ակոս»-ը տպագրում էր գիտական-բազմաբնույթ հանրամատչելի գրություններ, անդրադառնում գյուղատնտեսության, առողջապահության, ֆիզկուլտուրայի, դպրոցաշինության խնդիրներին:

Ուշադրավ են «Նոր-ակոս»-ի տպագրած թարգմանությունները ռուսական և արտասահմանյան գրողներից, ինչպես նաև կուլտուր-քաղաքական կարևոր իրադարձություններին նվիրված նպատակային համարները: Շարախոսներին ընթերցողներին է ներկայացրել Վ. Հյուգոյի, Ջ. Լոնդոնի, Հ. Բարբյուսի, Ա. Բլոկի, Ի. Էրենբուրգի և այլոց առանձին ստեղծագործություններ: 1924 թ. № 7-ը ամբողջովին հատկացված է առաջին համաշխարհային պատերազմի 10-ամյակին և ունի շեշտված հակապատերազմական բնույթ. համարում մի շարք պլակատներից ու ծաղրանկարներից բացի, տպագրված են Ե. Չարենցի «Մաճկալ Սարոյի պատմությունը» պոեմը, Ա. Բակունցի «Վանգունց Բագին», Վ. Թոթովենցի «Հանուն հայրենիքի» պատմվածքները, Ն. Զարյանի, Գ. Աբովի ոտանավորները, Հ. Բարբյուսի «Շրանշան» պատկերը, հատված Ի. Էրենբուրգի «Պատերազմի դեմը» գրքից, ինչպես նաև ընդարձակ տեղեկություն բելգիացի նկարիչ Ֆ. Մագրիլի գծանկարների ալբոմի մասին, ուր ամփոփված ավելի քան 40 գործերը վերաբերում են պատերազմի ծանր տարիներին: Պատմագրական և ճանաչողական որոշակի արժեք ունի շարախոսների վերջին համարը (1925 թ. № 5—6—7), որը գրեթե լրիվ նվիրված է Ակ. Մյասնիկյանի, Գ. Ա-թարբեկյանի և Մոդիլևսկու ողբերգական մահվանը:

Գրական-գեղարվեստական բազմաթիվ նյութեր են տպագրել, ինչպես նաև մանկական գրականության հարցերին են անդրադարձել Հայաստանում լույս տեսած մանկա-պատանեկան ու երիտասարդական պարբերականները:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ խորհրդային հայ գրականության և արվեստի խնդիրները լայնորեն քննարկվել են ԽՍՀՄ մյուս հանրապետություններում հրատարակված հայերեն պարբերականներում. եթե անտեսական շինարարության հարցերն այդ օրգաններում արծարծվում էին ավելի հանրապետության սահմանված կոնկրետ խնդիրների առնչությամբ, ապա մշակույթն այն բնագավառն էր, որտեղ հավասար պարտականություններ ու շահագրգռություններ ունեին բոլոր հայերեն պարբերականները, անկախ նրանից, թե որտեղ էին հրատարակվում: Այս առումով էլ հենց անհրաժեշտ է հիշատակել այս-

տեղ «Քուրա» (Մոսկվա, 1923), «Զարկ» (Մոսկվա, 1924), «Դարբնոց» (Թիֆլիս, 1922—1923), «Նոր աշխարհ» (Թիֆլիս, 1922), «Գիրքերում» (Թիֆլիս, 1925), «Վիշկա» (Բաքու, 1925) և այլ հրատարակություններ։ Բացի այդ, խորհրդային հայ գրականության և արվեստի խնդիրներին զգալի տեղ են հատկացրել Բաքվի «Կոմունիստ», Թիֆլիսի «Մարտակոչ» և «Պրոլետար» թերթերը (վերջին երկուսն ունեցել են գրական-գեղարվեստական հավելվածներ)։

Հայաստանում հրատարակվել են միօրյա գրական թերթեր՝ «Նոյեմբեր»-ը, «Պրոլետ-գրող»-ը և «Գյուղ-գրող»-ը, որ լույս տեսավ Նոր Բայազետում, 1925 թվականին։ Եթե առաջին երկուսը գրական որոշակի խմբավորումների և գեղագիտական ըմբռնումների արտահայտություն էին և ունեին հիմնականում դեկլարացիոն բնույթ, ապա «Գյուղ-գրող»-ը հապճեպորեն կազմված պատահական հրատարակություն էր, որ գեղեցված էին թույլ, պարզապես կիսագրագետ ոտանավորներ, մի պատմվածք և ճապաղ ու վերամբարձ փոքրիկ հոդվածներ։ «Խորհրդային Հայաստան» թերթը և ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի ենթաբաժինը խստորեն քննադատեցին այդ հրատարակությունը[24]։

* * *

Հիշատակության արժանի են Հայաստանում հրատարակված երգիծական պարբերականները։ 1923 թ. հունիս-հուլիս ամիսներին լույս տեսան «Ճնշում»-ի երեք համարները[25]։ Երգիծաթերթի նպատակների մասին պատկերացում է տալիս խմբագրության հետևյալ ողջ-ծանուցումը. «Մեզանից թող վախենան նրանք, որ իրենց մեծ են կարծում, նրանք, որ կարճահասակ են և կարծում են, որ շինարի բոյ ունեն... Մեզանից թող վախենան բոլոր սրերը, բարոյախոսները, անբիծները, կեղծ հանճարները։ Մենք սիրում ենք անկեղծ ու պարզ խոսքը։ Թող սարսափեն մեզանից չակերտավոր մեծությունները»[26]։ «Ճնշում»-ը ուներ գեղեցիկ ու դեմքեր, գիմազներ, Ստուգված լուրեր և գեսից-դենից խորագրով բաժինները, որոնցում զետեղված համառոտ ծաղրական գիտողությունները մեծ

24 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, N՝ 251, 252, Մշի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 204, թ. 71 և ց. 6, գ. 208, թ. 2—3։

25 «Ճնշում»-ն ուներ ժուռնալ ծաղր ու ծանակի, մարդկանց և ժամանակի ենթանվանումը։ Խմբագիրն էր Վ. Թորոսվենցը։ Բացի խմբագրից, «Ճնշում»-ում գրել են Լեռ-Կամսարը, Էդ. Խոհիկը և ուրիշներ։ 4 էջ (31×24 սմ), տպաքանակը՝ 300—500։

26 «Ճնշում», 1923, N՝ 1։

մասամբ վերաբերում են առանձին անհատների։ Հասարակական երևույթներին «Շեշտ»-ը գրեթե չի անդրադարձել, և այդ նրա խոշոր թերությունն էր։ Զգալի բաց էր և այն, որ պարբերականը չէր զնահատում ծաղրանկարները։

Այս թերություններից զգալապես զերծ էր «Զուռնա»-ն, որ հրատարակվել է միայն մեկ համար՝ 1924 թ. մարտ ամսին[27]։ «Զուռնա»-ն ծաղրել-քննադատել է դաշնակցությանը, կրոնավորներին ու կրոնամոլներին, կապիտալիստական աշխարհի բարքերը, մեր հանրապետության մշակութային կյանքի մի քանի թերի կողմերը։ Սրամիտ ու դիպուկ են ծաղրանկարները, որոնց հեղինակները, դժբախտաբար, չեն նշված։

Իր բովանդակությամբ, ծավալով և հրատարակչական որակով երգիծական մամուլի առաջնորդում, վերոհիշյալ պարբերականների համեմատությամբ, լուրջ նվաճում էր «Կարմիր մոծակ»-ը[28]։ Այս պարբերականի համարների վրա նշված է միայն տարին, ամսաթիվը չի հիշատակված. սակայն, ինչպես պարզվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտաբաժնին հղված մի գրությունից, «Կարմիր մոծակ»-ը եղել է երկշաբաթյա հանդես, որի առաջին համարը լույս է տեսել 1926 թ. մարտի վերջին։ Գրության մեջ նշված է նաև հանդեսի հիմնական նպատակը՝ «խորհրդային դիրքերից խարազանել մեր կյանքի բացասական կողմերը», «սուր ծաղրի ենթարկել հակահեղափոխական արտաքին էմիգրանտական հոսանքներին...»[29]։ Հանդեսի խնդիրները յուրովի երգիծական ասպեկտով են ներկայացված անդրանիկ համարի խմբագրականում. այնպիսի մի բժիշկ է «Կարմիր մոծակ»-ը, որը «քննում է ոչ թե իրեն զիմողներին, այլ հատկապես իրենից խուսափողներին». նրա զեղերի դարակում դուք կգտնեք «ապտակ ու մարակ, մախաթ ու կրսմբիոց, մազ ու կոկորդիլոս, զուռնա ու շեշտ, տաքսեղ ու ասեղ...»[30]։

---

27 «Զուռնա»-ն լույս է ընծայել ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Պետհրատի էքսպեդիցիայի հրատարակությունը։ Խմբագիրն էր Էդուարդ Խոճիկը։ Նրանից բացի, այս միակ համարում նյութեր ունեն Լևո-Կամսարը, Դ. Դեմիրճյանը, Գ. Մահարին (Գուրիս)։ 16 էջ (31×24 սմ), տպաքանակը՝ 1000։

28 «Կարմիր մոծակ»-ը հրատարակվել է հինգ համար՝ չորսը 1926 թ., մեկը՝ 1927-ին։ № 1-ը և № 2-ը ստորագրված է՝ «Խմբագրական կազմ՝ Ա. Երզնկյան, Էդ. Խոճիկ», հաջորդ համարները՝ «Պատ. խմբագիր՝ Էդ. Խոճիկ»։ Նկարչական բաժնի վարիչն էր Մ. Արուտչյանը։ Տպագրությունը՝ զունավոր։ 16 էջ (31×23 սմ), տպաքանակը՝ 2000—4000։

29 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 214, թ. 18։

30 «Կարմիր մոծակ», 1926, № 1։

Այս «դեղամիջոցներից» «Կարմիր մոծակ»-ը օգտվում էր հատուկ ընտրությամբ՝ նայած թե ո՞վ էր «հիվանդը». յուրայիններին նա ծաղրում-ծանակում էր այնպիսի պատկերներով, դիպուկ մակդրություններով, բառակներով, մանրապատումներով, սրամիտ խոսք ու ակնարկով, որոնց ընդհանուր տոնը բարեկամական էր, վերաբերմունքը մեր կյանքի թերությունների նկատմամբ՝ սրատես. այդ նյութերն ունեն սխալները շտկելու, բացերն ու վրիպումները վերացնելու միտում։ Այս առողջ երակներից էր քննադատում հանդեսը գրական բարքերը, կենցաղային արատները, հնից եկող սովորությունները, բյուրոկրատական քաշքշուկը, կոոպերատիվ և դպրոցական շինարարության մեջ տեղ գտած թերությունները... Բոլորովին այլ էր «Կարմիր մոծակ»-ի վերաբերմունքը խորհրդային իշխանության բաղաբական հակառակորդներին, միջազգային ռեակցիան և կապիտալիստական աշխարհի բարքերը մերկացնող նկարներում ու նյութերում. այստեղ արդեն երգիծանքն ու հումորը փոխարկվում են սուր ու սպանիչ սատիրայի։

Վերաբերմունքի այսպիսի հստակ տարբերակումը գաղափարական-գործնական տեսակետից ավելի նպատակասլաց էր դարձնում «Կարմիր մոծակ»-ի նյութները։ Առանձնապես պետք է նշել Մ. Արուսչյանի և Վ. Գայֆիճյանի կատարած ծաղրանկարները, Էդ. Խաճիկի, Լեո-Կամսարի, Դ. Դեմիրճյանի երգիծական ու սատիրական պատկերները։ 1926 թ. № 4-ը լույս տեսավ իբրև «Հատուկ պարոնյանական համար», մեծ երգիծաբանի մահվան 35-ամյակի առթիվ։

Երգիծական պարբերականները նպաստում էին գրական-մշակութային կյանքի աշխուժացմանը, ազգաբնակչության քաղաքական դաստիարակմանը։

3

Հիմնականում ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի հետ է համընկնում նաև «Նորք» հանդեսի հրատարակությունը[31]։ Այս պարբերականը մի շարք առումներով ա-

---

31 «Նորք»-ի առաջին համարը լույս տեսավ 1922 թ. վերջերին։ Հանդեսի 8 գրքերից 7-ը հրատարակվել են 1922—1926 թթ., վերջին գիրքը տպագրվեց երկամյա ընդհատումից հետո։ Մինչև 1925 թ. հրատարակվում էր Աշ. Հովհաննիսյանի և Աս. Մռավյանի խմբագրությամբ, 1926 թ. առաջին գրքում խմբագրական կոլեգիայի մեջ հիշատակված են նաև Արտ. Կարինյանն ու Ե. Չարենցը, երկրորդ

ռանձնակի տեղ ունի 20-ական թվականների խորհրդային հայ մամուլի պատմության մեջ, ուստի և հարկ ենք համարում մի փոքր ավելի հանգամանորեն խոսել նրա մասին՝ տալով հանդեսի ընդհանուր բնութագրությունը։

«Նորք»-ը հրապարակ իջավ իբրև գրական, գիտական և բաղաքական հանդես։ Իր բնույթից ելնելով էլ այս պարբերականը, ինչպես ծրագրել էր խմբագրությունը[32], հետամուտ էր երեք հիմնական նպատակի՝ ա) «Արձանագրել այն արդյունքները, որոնց հասնում է հայ աշխատավորը նոր շինարարության ընթացքում». բ) «Հանդես բերել մեր աննկիրները քաղաքական, տնտեսական ու կուլտուրական բնագավառներում և լուսաբանել մեր անցյալը մարքսիստորեն». գ) Ամեն կերպ սատարել սոցիալիստական հայ գրականության կազմավորմանը. խմբագրությունը հավատում էր որ իր «Համակրանքը լինելու է նրանց կողմը, ովքեր նոր աչքով կնայեն աշխարհի և կյանքի վրա, որոնց համար զուր չեն անցել վերջին տարիների արյունոտ վայրիվերումները, ովքեր տեսնում են գալիքը և նշմարում նրա տարրերը նոր հաստատվող կենցաղի մեջ»։

Եվ երբ այս ծրագրային նպատակադրումների տեսանկյունից այսօր, շուրջ կես դար անց, նորից անդրադառնում ենք «Նորք»-ի անցած ուղուն, միանգամայն պարզ ուրվագծվում է մեր առջև այն իրոք նշանակալից դերը, որ կատարել է այս հանդեսը 20-ական թվականներին՝ թե՛ արդիական հասարակական խնդիրների ընդգրկման ծավալով, թե՛ ժուռնալիստական-հրապարակախոսական օրինակելի մակարդակով և թե՛, մանավանդ, գրական բաղաքականության ճշմարիտ ըմբռնումով ու կիրառումով՝ իրարամերժ տեսակետների խաչաձևման բավականին բարդ իրադրության պայմաններում։

Իսկապես էլ, եթե մի պահ վերհիշենք այդ իրադրությունը, որի մասին ընդհանուր կարգով ակնարկեցինք այս գլխի սկզբում, ավելի ակնհայտ կդառնա «Նորք»-ի վաստակը մասնավորապես գրական ուղիներում։ Եվ այսպես, այն ժամանակ, երբ այնքան հախուռն կերպով ժխտվում էր դասական գրականության ավանդների

գիրքը, իբրև պատ. խմբագիր, ստորագրել է միայն Աշ. Հովհաննիսյանը, վերջին՝ 1928 թվականի համարն ունի «Խմբագրական կոլեգիա» ստորագրությունը։ 230—468 էջ (27×18 սմ), տպաքանակը՝ 1000—1500։

32 Տե՛ս «Նորք», գիրք առաջին, 1922, «Խմբագրության կողմից»։

կարևորությունը, նույնիսկ պիտանիությունը պրոլետարական գեղարվեստի ձևավորման համար, երբ հիմքից մերժվում էին Տերյանն ու Թումանյանը, «Նորք»-ը առաջին իսկ համարում տպագրեց մեր այդ երկու մեծերի երկերը, ավելին՝ հասարակայնությանը ներկայացրեց նաև նրանց թարգմանությունները՝ նույնպես դասական հեղինակներից (խաքանիի քառյակները՝ Հ. Թումանյանի և Ռուսթավելու «Ընձենավոր»-ի նախերգանքը՝ Վ. Տերյանի թարգմանությամբ). այն օրերին, երբ «Երևքի դեկլարացիան» անխուսափելիորեն մահվան դատապարտված «մի թոքախտավորի» ախտորոշումն էր գրանցում «ներկա հայ բանաստեղծության» «հիվանդության թերթիկ»-ում, «Նորք»-ը օրենսդիր-Չարենցին հակադրում էր Չարենց-ստեղծագործողին, այդ համեմատությամբ զգաստության և ռեալականության կոչ անելով ծայրահեղ «հրապուրանքներով» մոլորվածներին[33]. և, վերջապես, այն պահին, երբ պրոլետարական գրականության վերաբերյալ բարձր կոչերով իրենց ծնունդն էին ազդարարում մի շարք պարբերականներ ու խմբակ-խմբավորումներ, «Նորք»-ը, առանց ավելորդ ռեկլամի, անում էր առավելագույնը հենց այդպիսի գրականություն ստեղծելու համար՝ իր էջերում ճաշակավոր պատրաստակամությամբ տեղ տալով խորհրդային հայ գրականության առաջին լավագույն նմուշներին...

«Նորք»-ի գրական ելույթները կարելի է բաժանել երեք հիմնական ենթամասերի, որոնք լրացնում են միմյանց և ամբողջական տեսք տալիս հանդեսի «գրական քաղաքականությանը»։ Հիմնական տեղը այստեղ բռնում են խորհրդային հայ գրողների երկերի հրապարակումները. «Նորք»-ում են լույս տեսել Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» էպոպեան, «Քամին», «Ասպետական (Ռապսոդիա)», «Էլեգիա, գրված Վենետիկում», «Ստիննեսի մասին», «Դեսպի Ստամբոլ», «Ես և Իլյիչը» և այլ ստեղծագործություններ, Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»-ը, «Պատերազմի դաշտում»-ը, «Հաղթական սիրո երգը», Ստ. Զորյանի «Ձմռան գիշեր», «Մեծատունը», Ա. Բակունցի «Իվան բեյը», «Դրոգասյան Գեվոն», Արազու «Ընկեր Մուկուչը», «Ապրողները», Մ. Դարբինյանի «Գլուխ պահող Կիկոսը», Մ. Մանվելյանի, Ն. Զարյանի, Գ. Մահարու, Վ. Նորենցի, Մ. Արմենի և ուրիշների մի շարք հաջողված գործերը։ «Հներից» «Նորք»-ը հրապարակել է, ինչպես արդեն նշվեց, Վ. Տերյանի բանաստեղծությունները, Հ. Թումանյանի մի քանի ստեղծագործությունները, ինչպես նաև «Անբուն կկուն», «Սասունցի Դավթի» Բ մասի հատված-

33 Տե՛ս նույն տեղը, էջ 288—299։

ները, Շիրվանզադեի «Հայր Անուիրիոսի վիշտը», «Լեոյի «Մանկութեան դրկում» պատկերը։

«Նորք»-ի գնահատման համար կարևոր է այստեղ հիշել, որ վերը նշված գործերից մի քանիսը ուղենշային արժեք ունեցան խորհրդային հայ գրականության ձևավորման ու զարգացման տեսակետից։ Եվ առնվազն տարօրինակ է հնչում «Մուրճ»-ի այն հայտարարությունը, թե՝ ««Նորք»-ի շուրջ համախմբված չկան նոր խոսք ասող գրական ուժեր»[34]։ Իհարկե, ինքնին հասկանալի է, որ «դասականների պառնասը» գրոհող մուրճականներին «հրեշավոր հանցանք» էր թվում, երբ «Նորք»-ում կարդում էին Թումանյանի և Տերյանի բանաստեղծությունները (Թումանյանը, ասում էին նրանք, «թեքվում է դեպի միստիցիզմը, դեպի պեսիմիզմի ճահիճը», «այս մեծ և ահավոր ժամին երկչոտորեն փախչում է և իրեն խորթ համարում «վայրի մարդկանց»», իսկ Տերյանի երգերը «այժմ, մեր պայքարի օրերին արդեն կորցրել են իրենց կարևորությունը»[35])։ Սա դեռ կարելի է արդարացնել «սկզբունքի» տեսակետից։ Բայց առանց խմբակայնությունը և նեղ-կաստայական նկատառումները հաշվի առնելու՝ չի կարելի բացատրել «Նորք»-ի գրական նյութերի հախուռն ժխտումը նրանց կողմից, ըստ որում նաև այնպիսի մի երկի այպանումը, ինչպիսին «Երկիր Նաիրի»-ն է, որը նույն «Մուրճ»-ը ամենաանպատշաճ կերպով համարում էր մի գործ, որ «կարելի է գրել տրամվայի մեջ» կամ ««Կաֆե Նաիրիում» նարդի խաղալիս»[36]։ Ահա թե մինչև ուր էր հասնում աղանդավորությունը գրական քննադատության մարզում։ Մինչդեռ, ինչպես վկայում էր «Խորհրդային Հայաստան»-ի «Պայքար» հավելվածը՝ «Նորք»-ը առաջին իսկ համարից ջերմ ընդունելություն գտավ ընթերցողների և անկողմնակալ քննադատության կողմից, իսկ նույն «Երկիր Նաիրի»-ն համարվեց «միանգամայն նոր խոսք մեր վիպագրության մեջ»[37]։

«Նորք»-ի գրական ելույթների հաջորդ էական մասը գրական-քննադատական նյութերն են։ Ե. Չարենցի երկերի, Գ. Աբովի «Դանակը բկին» գրքույկի, Ստ. Զորյանի «Գրադարանի աղջիկը» վիպակի, Ա. Վշտունու «Neo—Orientalia»-ի, Ն. Զարյանի, Գ. Մահարու, Վ. Նորենցի, Արաքսի և այլ հեղինակների ժողովածուներին նվիրված գրախոսականները, ինչպես նաև դասական գրականու-

34 «Մուրճ», 1923, № 5։

35 Նույն տեղում, № 4։

36 Նույն տեղում, № 5։

37 «Պայքար», 1923, № 2, էջ 23։

թյան վաստակները գնահատող ակնարկները վկայում են Հանդեսի միանգամայն ճիշտ դիրքորոշումը, մեծապես օգտակար դարձնելով ժամանակի անընդունելի գրական նկրտումներից զերծ մնալու նրա հետևողական ձգտումը։ Առանձին դեպքերում շեշտը այս կամ այն գրական երկի գեղարվեստականության կողմի վրա դնելը պետք է բացատրել գեղագիտական պահանջները ոտնահարելու ակնհայտ գրսևորումներին հակադրվելու այն միտումով, որն այսօր ավելի է ընդգծում Հանդեսի գրական դերը 20-ական թվականների գրական պայքարում։ Հակառակ դեպքում կարելի է հեշտությամբ ընկնել շփոթմունքի մեջ և պարբերականի այդ արժանիքը համարել... Թերություն, ինչպես տեղի է ունեցել «Սովետահայ գրականության պատմության» առաջին հատորում, ուր «Նորք»-ին դիտողություն է արված, իբր թե, դեպի «զուտ արվեստը» ունեցած նրա մասնակի հակման համար[38]։ Մինչդեռ ընդհակառակը, «Նորք»-ի վրիպումն այն էր, որ նրա էջերում երբեմն սպրդում էին արվեստի դասակարգայնության ոչ ճիշտ ըմբռնումից ածանցվող այնպիսի գռեհիկ սոցիոլոգիական նկրտումներ, որոնք հետևանք էին ժամանակի հախուռն «ձախ» պատկերացումների։ Նույնիսկ «զտարյուն էսթետ» համարվող այնպիսի մի գրականագետի մոտ, ինչպիսին Ց. Խանզադյանն էր, այն ժամանակվա թյուրըմբռնումները ակամա ստանում էին ցավալիորեն ծայրահեղ դրսևորում. «Կարմիր Արև» դասագրքին նվիրված մի գրախոսության մեջ[39] նշելով, որ նրանում տեղ են գտել նոր սերնդի կրթության համար ոչ օգտակար, ժամանակի ոգուն խորթ, պարզապես հակադաստիարակչական մի շարք նյութեր, ճշմարիտ և դիպուկ շատ օրինակների կողքին, քննադատը բերում է հետևյալ փաստարկ-հավաստումը. «Ի դեպ՝ միանգամայն անտեղի է նաև Միք. Նալբանդյանի ոտանավորը՝

Ազատն ասված այն օրից,
Սրբ հանեցավ շունչ փչել
Իմ հողանյութ շինվածքին...»։

Թերևս ընդգծված բառերով գրականագետն ուզում էր զգաստացնե՞լ դաստիարակներին, հուշելով նրանց, որ մատաղ սերնդին զերծ պիտի պահել կրոնական նախապաշարումների ամենահեռավոր շորշոփից անգամ... Բայց մեջբերված տողերից հետո նրա ա-

38 Տե՛ս «Սովետահայ գրականության պատմություն», հ. I, էջ 60։
39 Տե՛ս «Նորք», № 5—6, 1926։

բած գաղտնությունները, առավել ևս այն գնահատականը, որին արժանացնում է քննադատը Նալբանդյանի ամբողջ բանաստեղծական վաստակը, վկայում են, որ նա ուղղակիորեն տուրք էր տալիս նիհիլիստական մտածելակերպին։ «Նմանապես մի անմտություն,— ասում էր նա վերոհիշյալ տողերի հասցեին,— որով չի կարելի գաղափարակել մեր մատաղ սերունդը»։ Մի կողմ թողնենք դեռ այն «մանրուքը», որ պարզապես անտեսել էր առնվում Հայանի բանաստեղծության բուն ոգին ու շունչը և այն պատմական դերը, որ խաղացել էր Նալբանդյանի այդ մարտաշունչ կոչը ժողովրդյան ազատագրագ ոգորումների մեջ։ Մեր ակնարկած սայթաքման տեսակետից առավել բնորոշ է քննադատի վերջնական եզրակացությունը. «Միթ. Նալբանդյանը մեր հայրերի-պապերի համար է եղել բանաստեղծ, մեզ համար նա միայն հրապարակախոս է և բանաստեղծ» (էջ 353)։

Ահա, եթե կուզեք, «Նորք»-ի վրիպումը գրական հարցերում։ Բարեբախտաբար սա և նման մեկ-երկու օրինակները սոսկ ցավալի «պատահար» էին և հակասում էին Հանդեսի ընդհանուր առմամբ ճիշտ ու առողջ այն կողմնորոշմանը, որ ուներ խմբագրությունը թե՛ դասական գրականության ավանդները արժևորելիս և թե՛ ժամանակակից երկերի գնահատության մեջ։

Վերջապես, «Նորք»-ի «գրական վարքագծի» մի լրացուցիչ գրաբարումն են նրա էջերում ամփոփված թարգմանությունները, որոնք նույնպես հաստատում են Հանդեսի ընդհանուր, եկեղեցային սկզբունքները գրական հարցերում։ Ո՞ր գրողներից կատարված թարգմանություններին է տեղ ավել «Նորք»-ը։ Խաբանիի և Ռուսթավելու մասին արդեն նշվեց։ Մնում է ավելացնել Ա. Բլոկին, Ու. Ուիտմենին, Էմ. Վերհարնին, Ս. Եսենինին, գերմանական հեղափոխական գրող Կուրտ Կլերերին, և պարզ կդառնա Հանդեսի նախասիրությունների ոլորտը գրական և էսթետիկական-ճանաչողական այնպիսի մի կարևոր բնագավառում, ինչպիսին գեղարվեստական թարգմանությունն է։

* * *

Խմբագրության խոստման համաձայն՝ «Նորք»-ը մոռացության չավեց Հայոց պատմության տարբեր շրջանների լուսաբանության խնդիրը, որը սերտորեն առնչվում էր Հանդեսի գիտական-հասարակական նպատակադրմանը։ Ու նաև իր գործունեության այդ կողմով է, որ «Նորք»-ը տեսական պարբերականի համարումն ու-

ներ այն ժամանակ և այսօր էլ չի կորցրել իր հետաքրքրությունն այդ իսկ առումով։ Եվ իսկապես, հայոց պատմության և հասարակական մտքի հետազոտողը չի կարող անտարբեր անցնել «Նորք»-ում տպագրված այնպիսի ուսումնասիրությունների և վավերագրերի կողքով, ինչպիսիք են Թադ. Ավդալբեկյանի «Բահրան ու մուլքը XVII և XVIII դարերում» (գիրք երկրորդ, 1923 թ.), «Երկրագործական հավելյալ արդյունքի նորման XVII—XVIII դարերում և XIX-ի սկզբներում» (գիրք № 3, 1923 թ.), Ս. Կասյանի «Ռուսական ինքնակալության քաղաքականությունը Անդրկովկասում» հոդվածները, Եր. Շահազիզի՝ «Մ. Նալբանդյանի բանտից գրած նամակները» (գիրք № 3, 1923, գիրք № 4, 1924, գիրք № 5—6, 1925) և Աշ. Հովհաննիսյանի՝ «Ներ. Էնգելսի նամակը «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն թարգմանության նախաբանի փոխարեն» հրապարակումները (գիրք 4, 1924), Աշխարհբեկի «Քարե դարը Հայաստանում» (գիրք 5—6, 1925), Ա. Կարինյանի «Հին Թուրքիան և թուրքահայերը» (գիրք առաջին և երկրորդ, 1926) և այլ նյութեր։

Ճիշտ է, դրանցում արտահայտված ոչ բոլոր տեսակետներն ու եզակետներն են ընդունելի և հիմնավորված թվում այսօր. մի շարք դեպքերում հեղինակները որոշակի տուրք են տվել ժամանակի «ձախ» ըմբռնումներին ու քաղաքական պատեհապաշտությանը։ Գիտության հետագա զարգացումը կուտակել է նոր փաստեր։ ՍՄԿԿ XX—XXIII համագումարների պատմական որոշումներից հետո հասարակագիտության, այդ թվում և հայ ժողովրդի պատմության մի շարք պրոբլեմներ ստացել են նոր մեկնաբանություններ, ճշտվել են շատ թյուր ու բռնազբոսիկ տեսակետներ... Այնպես որ՝ «Նորք»-ի, ինչպես և յուրաքանչյուր պարբերականի, գնահատության ժամանակ կա ամենևին էլ ոչ երկրորդական նշանակություն ունի պատմականության չափանիշի կիրառումը։ Ինքնին հասկանալի է, իհարկե, որ այդպես վարվել՝ երբեք չի նշանակում արդարացնել ամեն ինչ և ամենքին։ Այնուամենայնիվ, «Նորք»-ի՝ նույնիսկ սխալներ պարունակող հոդվածները օգնում են մեզ պատկերացնելու գիտական մտքի և հասարակական ըմբռնումների այն օրերի մակարդակը, դրանով իսկ ձեռք բերելով պատմա-ճանաչողական արժեք։

Ուշադրավ են Մատիկ անցյալից խորագրի ներքո ամփոփված նյութերը (հուշագրություններ, վավերագրեր, մեկնաբանություններ և այլն), որոնք վերաբերում են XX դարի առաջին երկու

տասնամյակների հասարակական-քաղաքական կացությանը Անդրբկովկասում, հատկապես Հայաստանում, ինչպես և հեղափոխական պայքարի առանձին դրվագներին, ազգային կուսակցությունների վարքագծին ժողովրդի համար բախտորոշ պահերին։ Այս բաժնում են տպագրվել Ասատուր Կախոյանի (Բանվոր խնչո) «Լոռվա հեղափոխական անցյալից», Եր. Մելիքի «Իսահակ Լալայան» հուշագրությունները, «Հնչակյանների հարումը ռուսական հեղափոխության ու սոցիալիզմին», «Նժդեհի զեկուցումը Լեռնահայաստանի անկման պատճառների մասին», «Մշակ» լրագրի արխիվից հանված՝ «Հայ սոցիալիստական գաղութը ժնևում (տեղական ուսանողության կյանքից)» և «ՌՍԴ(բ)Կ Լոնդոնի համագումարը» նյութերը, «Լենինը և հայկական հարցը», «Դաշնակցական Հայաստանի գործերից» փաստաթղթերը, Մոսկվայի նահանգական ժանդարմական վարչության պետին ուղղված Թիֆլիսի ժանդարմական վարչության 1903 թ. փետրվարի 12-ի զեկույցը «Հայերի հեղափոխական շարժումների մասին», «Վարդան Գոլոշյան և իր շրջանը», «Հայ բանվոր հեղափոխականների «Ասոցիացիայի» տեղը հայ բանվորական շարժման պատմության մեջ» և վավերագրական բնույթի այլ հրապարակումներ՝ համապատասխան պարզաբանումներով։

Խմբագրությունն այս կարգի նյութերի այնպիսի ընտրություն էր անում, որ մի կողմից՝ փաստական հիմք էր տալիս «մոտիկ անցյալի պատմությունն ուսումնասիրողին և մյուս կողմից՝ յուրովսանն լրացնում-ամբողջացնում էր իր իսկ հանդեսի էջերում լույս տեսնող հասարակական-քաղաքական բովանդակություն ունեցող նյութերը, մասնավորապես ազգային կուսակցությունների, դաշնակցության դեմ ուղղված բուռն քննադատությունը։ Ի դեպ՝ «Նորք»-ի վերջին դրքում տպագրված Աշ. Հովհաննիսյանի «Դաշնակցության սոցիալական ծագումը» հոդվածից հետո, որը հեղինակի անտիպ աշխատության լոկ մի հատվածն էր և հրապարակվել էր դիսկուսիոն կարգով, նրա բնութագրումներին անհամաձայն քննադատներն իրենց ընդդիմախոսության մեջ հասան այնպիսի միակողմանիության, որ անտեսում-ժխտում էին ոչ միայն Աշ. Հովհաննիսյանի անցյալ հեղափոխական-գիտական վաստակը, այլև «Նորք»-ի դերը առհասարակ։ Հախուռն ժխտման կիրքն այնտեղ էր հասել, որ «Նորք»-ը նույնացվում էր, ոչ ավել, ոչ պակաս... Էջմիածնի միաբանության օրգան «Արարատ» ամսագրի հետ[40]։ Ու

---

40 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1928, № 154։

երբ հիմա անդրադառնում ես այդ ամենին, չես կարող սկսում չզարմանալ, թե «Նորք»-ին ժամանակակից այդ քննադատներն ինչպե՞ս էին կարողանում անդիտանալ, որ այդ հանդեսի էջերում են տպագրվել Ալ. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի, Ա. Մռավյանի, Ա. Կարինյանի, Ս. Կասյանի ու այլ ականավոր բոլշևիկների հրապարակախոսական կամ գիտական հոդվածները, Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Ա. Բակունցի և խորհրդային մյուս ականավոր գրողների նորաշունչ ստեղծագործությունները, որ «Նորք»-ում զետեղվել են մարքս-լենինյան ուսմունքի մասսայականացմանը նվիրված բազմաթիվ նյութեր, որ նրա էջերում մերկացվել է կրոնական գաղափարաբանությունը, որ, վերջապես, այդ հանդեսում ես կրքոտ պայքար է մղվել դաշնակցության դեմ։

Եվ այնուհետև՝ չէ՞ որ այս ամենին զուգընթաց՝ «Նորք»-ը իր նյութերով ակտիվորեն մասնակցում էր սոցիալիստական շինարարության հարցերի քննարկմանը, միաժամանակ նպաստելով բնակչության լայն խավերում տարվող քաղաքական-բացատրական աշխատանքների հաջող ծավալմանը։ Նոր տնտեսական քաղաքականության պարզաբանում, ուսումնական և կոոպերացիայի, տնտեսության պլանավորման և դյուղում կատարվող սոցիալիստական հեղաշրջումների խնդիրներ, արդյունաբերության զարգացման ուղիների որոնում, Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ ստեղծման պատմական նշանակության բազմակողմանի գնահատում,— ահա մի քանիսն այն կարևոր պրոբլեմներից, որ արծարծվել են հանդեսի էջերում՝ սոցիալիստական շինարարությանը նվիրված տեսական և հրապարակախոսական-պրոպագանդիստական հոդվածներում։

Սրան պիտի ավելացնել նաև խորհրդային Միության միջազգային դրության, արտաքին քաղաքականության, միջազգային բանվորական շարժման, գործադուլային պայքարի և հարակից այլ խնդիրների լուսաբանումը, որով ավելի ամբողջական ու ավարտուն է դառնում հանդեսի քաղաքական դիրքորոշման ու հասարակական կոչման նկարագիրը։

* * *

Բազմաղան ու ընդգրկող էր «Նորք»-ի գրախոսության բաժինը՝ թե՛ իր բնույթով, և թե՛ թեմատիկայի ու պրոբլեմատիկայի տեսակետից։ Հանդեսը պատշաճ ուշադրություն էր հատկացնում ինչպես գրական ստեղծագործությունների արժեքավորմանը, սկսած հնագույն գրողների երկերից, մինչև «երեկ լույս տեսած» գրքերն ու

գրքույկները, այնպես էլ պատմության, տնտեսագիտության, հասարակագիտության տարբեր բնագավառներին վերաբերող գրականության վերլուծությանը՝ անելով նաև մեթոդոլոգիական բնույթի դիտողություններ, քաղաքական ու տնտեսագիտական տերմինաբանությանը վերաբերող ճշտումներ։ Հանդեսի ութ գրքերում զետեղված է մոտ 70 գրախոսական։ Հատկանշական է, որ խմբագրությունը չի սահմանափակվել սոսկ հայերեն հրատարակություններին անդրադառնալով, հաճախակի տպել է նաև ռուսերեն և այլ լեզուներով լույս տեսած գրքերին կամ ժողովածուներին նվիրված անոտացիոն-ներկայացնող բնույթի գրախոսականներ՝ նպատակ ունենալով ընդլայնել իր ընթերցողների մտահորիզոնը։

Եվ վերջապես, «Նորք»-ի էջերի կողքով անտարբեր չի կարող անցնել խորհրդային հայ պարբերական մամուլի պատմությանը։ Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ այս հանդեսն ինքը հենց կարևոր օղակներից մեկն է այդ մամուլի ընդհանուր շղթայի, այլև այն առումով, որ «Նորք»-ը ղդալի նյութ է մատուցում Հայաստանում հրատարակված մամուլի մի շարք օրգանների պատմության համար։ Առանձին պարբերականների նոր լույս տեսած համարներին նվիրված փոքրիկ տեսություններն ու անոտացիաները արժեքավոր են թե՛ մամուլի խնդիրների՝ այն ժամանակվա ըմբռնումները պատկերացնելու և թե՛ ավյալ պարբերականի անցած ուղու նկարագրության տեսակետից։ Այդ բնույթի նյութերում «Նորք»-ը հաղորդում է այս կամ այն պարբերականի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ (ե՛րբ է հիմնադրվել, ի՛նչ պարբերականություն է ունեցել, ի՛նչ նպատակների է հետամուտ եղել և այլն), ուշագրավ դիտողություններ է անում առանձին նյութերի մասին, հայտնում է արժեքավոր նկատառումներ, անում գործնական առաջարկներ։ Այս ամենն էլ, ահա, «Նորքը» դարձնում է 20-ական թվականներին Հայաստանում լույս տեսած պարբերական մամուլի ուսումնասիրման աղբյուրներից մեկը։

«Նորք»-ի առաջին իսկ գրքում զետեղված է ընդարձակ գրախոսություն «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» հանդեսի Ա—Բ միացյալ համարի մասին։ Չնայած առանձին խիստ ձևակերպումներին և գնահատականների որոշ միակողմանիությանը, չի կարելի չհամաձայնել գրախոսի ընդհանուր եզրակացությանը. «Որ այդպիսի ժուռնալի անհրաժեշտությունը զգացվում է մեզանում, դրանում երկու կարծիք լինել չի կարող. սակայն պիտի որ այդ ժուռնալը նախ ազատագրել պատահական ագիտացիայից և երկ-

բորդ՝ տալ նրան զուտ գիտական հետազոտության բնույթ»[41]։ Ուշագրավ տվյալներ ու արժեքավոր դիտողություններ կան «Ազգարար վիճակագրական կենտրոնական վարչության», «Գյուղատնտեսական կյանք», «Հայաստանի կոոպերացիա», «Экономический Вестник ССР Армении» և այլ պարբերականներին նվիրված տեսությունների մեջ[42]։ Գրականության զարգացման գործում խորհրդային հայ պարբերական մամուլին վերապահված դերի ճիշտ ըմբռնման արդյունք էր այն ընդհանուր գնահատականը, որ տրված է «Վերելք» հանդեսի №№ 1 և 2—3-ին նվիրված գրախոսության մեջ։ Այստեղ բնութագրված են գրական ուղղություն ունեցող պարբերականներից յուրաքանչյուրի առջև դրված կոնկրետ խնդիրները, ելնելով ընթերցող այն շրջանների մակարդակից ու պահանջներից, որոնցով և ըստ էության պայմանավորվում էր այս կամ այն հանդեսի թե՛ բովանդակությունը, թե՛ նյութերի մատուցման ձևը և թե՛ գրական-հասարակական պրոբլեմատիկայի յուրահատկությունը։ Դիպուկ է նկատված մասնավորապես հաջորդականության այն շղթան, որ ի մի էր ձուլում և առավել նպատակասլաց դարձնում մամուլի ջանքերը գեղագիտական ու քաղաքական դաստիարակության առպարեզում. ««Պատկում»-ից դեպի «Վերելք» և «Վերելք»-ից դեպի «Նորք»— ահա այն գրական ուղին, որ գալիս է հաջորդական ձևով խորացնելու և զարգացնելու կոմունիստական դաղափարախոսությունը մեր երկրի աշխատավորության և աճող սերնդի դիտակցության մեջ»[43]։

Ի դեպ՝ «Standart»-ում[44] Ե. Չարենցը «Վերելք»-ի նույն համարներին նվիրված գրախոսականում չի համաձայնում այս տար-

---

41 «Նորք», գիրք առաջին, 1922, էջ 287։

42 Տե՛ս գիրք չորրորդ, 1924, էջ 312—314, 314—315, 315—316։

43 Նույն տեղում, էջ 321։

44 «Standart»-ի առաջին և միակ համարը հրատարակել են Ե. Չարենցը։ Կ. Հալաբյանը և Մ. Մազմանյանը Մոսկվայում, 1924 թ. մայիսին։ Ի դեպ՝ Մ. Մազմանյանը հետագայում վերհիշում է. «Չարենցը «Ստանդարտի» մի օրինակը տվել էր Ալեքսանդր Մյասնիկյանին, որ այդ օրերին գտնվում էր Մոսկվայում։ Մյասնիկյանը կարդացել էր ու մի լավ քննադատել մեր ամսագիրը իր անընդունելի գաղափարների համար (խոսքը գեղագիտական նկատառումների մասին է— Հ. Ն.) և խորհուրդ էր տվել ոչնչացնել բոլոր օրինակները։ Չարենցը տխուր վերադարձավ ու հայտնեց մեր անելիքի մասին։ Հենց նույն երեկոյան, հուլիսի 1-ին, վառեցինք մեր հանրակացարանի խոհանոցի մեծ պլիտան ու կրակին տվինք այնքան սիրով գլուխ բերած մեր «Ստանդարտը» («Հիշողություններ Ե. Չարենցի մասին», Երևան, 1961, էջ 69)։

գերակայանը և որոշ արհամարհանքով է արտահայտվում «Նորք»-ի գիտական բնույթի վերաբերմամբ՝ անտեսելով այն իրոք խոշոր տարբերությունը, որ տակա էր այս տեսակետից «Նորք»-ի և «Վերելք»-ի միջև ու ամեն ինչ վերագրելով «Նորք»-ի գրախոսի «տեղասիրական զգացմունքին»[45]: Զարենցի փաստարկումներից մեկն էլ այն էր, թե՝ «ինչպես գեղարվեստական, այնպես էլ մյուս բաժինների երկու այդ օրգանների աշխատակիցները նույնն են. նյութերը նույնը, գրելաձևը նույնը»: Երկու հանդեսների նյութերի համադրումը վկայում է, սակայն, որ, ինչպես ճիշտ կերպով նկատել է Զարենցի երկերի ժողովածուն կազմող և հմուտ ծանոթագրող գրականագետ Ա. Զաքարյանը՝ Զարենցը սխալվում էր «Նորք» հանդեսը գնահատելիս[46]:

Այլ հարց է, իհարկե, որ «Նորք»-ի գիտական բնույթը չէր խանգարում, որ նրա էջերում տեղ գտնեին նաև հրապարակախոսական շնչով տոգորված նյութեր՝ հատկապես հասարակական խնդիրների քննարկման ժամանակ. բայց սա արդեն ուղղակիորեն բխում էր հանդեսի կոչումից (չպետք է մոռանալ, որ «Նորք»-ը համարվում էր «գրական, գիտական և բաղաքական» հանդես):

Ե. Զարենցի վերոհիշյալ նկատողությունը սոսկ հպանցիկ մի խոսք պիտի համարել: «Նորք»-ի գնահատման համար առավել նշանակալից են այն սերտ կապերը, որ ունեցել է նա հանդեսի հետ՝ թե՛ ստեղծագործորեն և թե՛ գործնականապես: «Նորք»-ի անդրանիկ համարը բացվում է «Երկիր Նաիրի» վեպով: Դեռևս հանդեսը լույս տեսնելուց առաջ նրա քարտուղար Մ. Գևորգյանին Մոսկվայից գրած նամակում պոետը հետաքրքրվում էր. «Ի՞նչ է անում «Նորքը», ե՞րբ է լույս տեսնելու: Ի՞նչ նոր նյութեր են ստացվելու»[47]: Նման վկայություններ էլի կան Ե. Զարենցի երկերի ժողովածուի VI հատորում ամփոփված նամակներում: Զարենցն առաջարկում էր իրեն «ձևակերպել» հանդեսի «կորեսպոնդենտ» ամսավճարով: Մոսկվայում այդ մասին նա խոսել էր «Նորք»-ի խմբագիրներից Ա. Մռավյանի հետ: Ամենայն հավանականությամբ՝ ֆինանսական ձևակերպումների հետ կապված դժվարությունների հետևանքով Ե. Զարենցը պաշտոնապես չի համարվել «Նորք»-ի թղթակիցը, բայց եղել է հանդեսի ամենաակտիվ աշխատակիցնե-

---

45 Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. VI, Երևան, 1968, էջ 112։

46 Նույն տեղում, էջ 627։

47 Նույն տեղում, էջ 389։

րից մեկը. «Նորք»-ի յուրաքանչյուր համարում, բացի վերջին գրքից, Չարենցի անվանը հանդիպում ենք մեկից ավելի անգամներ։ Իր ստեղծագործություններից բացի, նա այստեղ տպագրել է մի շարք թարգմանություններ ու գրախոսականներ, իսկ 1926 թ. աշխատել է որպես «Նորք»-ի պատասխանատու քարտուղար՝ միաժամանակ լինելով խմբագրական կոլեգիայի անդամ։

* * *

«Նորք»-ը դադարելուց շուրջ մեկ տարի անց, 1929 թ. հունվարից Պետհրատն սկսեց լույս ընծայել «Նոր ուղի» գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական, տնտեսական և գիտական ամսագիրը[48]*։ Լույս է տեսել «Նոր ուղու» 32 համար։*

«Նոր ուղի»-ն ծավալի մեծ մասը հատկացնում էր գրական-գեղարվեստական նյութերին և գրականության ու արվեստի տեսական պրոբլեմներին, գրաքննադատությանը։ «Նոր ուղի»-ն ևս կանգնած էր խորհրդային հայ գրականության զարգացման ակունքների մոտ, զգալապես նպաստում էր գրական-էսթետիկական նոր ըմբռնումների ձևավորմանն ու արմատավորմանը հայ իրականության մեջ։ Դասական գրականության ավանդների և այսպես կոչված «ուղեկիցների» ստեղծագործության նկատմամբ վերաբերմունքի հարցերն այդ ժամանակ արդեն որոշակի հստակություն էին ստացել շնորհիվ կուսակցության համապատասխան որոշումների ու ցուցումների, և «Նոր ուղի»-ն այս ասպարեզում ավելի անկաշկանդ գործունեության հնարավորություն ուներ։ Մ. Նալբանդյանի, Հ. Պարոնյանի, Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Ավ. Իսահակյանի և մյուս դասականների երկերի հրապարակումը, ինչպես և նրանց վաստակի գնահատությունները ամսագրում ունեին գրականության անցյալի նկատմամբ լայնախոհ վերաբերմունքի տենդենց և բխում էին գրական պրոցեսի մեջ օրգանական շարունակության իրողությունը հավաստելու շահերից։ Բնականաբար, ավելի մեծ տեղ էր հատկացնում «Նոր ուղի»-ն խորհրդային հայ գրականության հրա-

---

48 *Հաջորդ տարվանից «Նոր ուղի»-ն փոխեց ենթանվանումը՝ կոչվելով* Գրական-գեղարվեստական, քաղաքական-հասարակական ամսագիր։ *Հանդեսի խմբագիրներն են եղել Պ. Մակինցյանը, Ա. Կարինյանը, Ե. Չուրարը, Դր. Սիմոնյանը, խմբ. կոլեգիայի անդամներ՝ Ս. Բակունցը, Ա. Եղիազարյանը, Կ. Ղազարյանը, Ընդ. Վահանյանը, Նշ. Մակինցը, Մ. Մազմանյանը, Ա. Ոսկերչյանը։ 96—364 էջ (25×18 սմ), տպաքանակը՝ 900—2000։ Ունեցել է միացյալ համարներ։*

պարակմանը. այստեղ են տպագրվել Ե. Չարենցի «Խմբապետ Շավարշ»-ը, Լենինգրադյան ցիկլի բանաստեղծությունները, Ա. Բակունցի «Կարմրաքար»-ը և մի շարք պատմվածքներ, Դ. Դեմիրճյանի «Երեքը», «Ռաշիդ»-ը, «Նիզյար»-ը, «Նոր մոնումենտալը», Սա Զորյանի «Վարդաձորի կոմունը», «Քսանումեկ թիվ» վեպի հատվածները, Մ. Արազու «Լուսնի շողերով»-ը, Վ. Թոթովենցի «Կյանքը հին հասմենական ճանապարհի վրա» վիպակը, Ն. Զարյանի, Ա. Վշտունու, Մ. Դարբինյանի, Գ. Սարյանի, Վ. Ալազանի, Մ. Մանվելյանի, Գ. Մահարու, Վ. Նարենցի, Մ. Վեսպերի, Ս. Տարոնցու և ուրիշների ստեղծագործությունները, երիտասարդ և սկսնակ գրողների շատ գործեր։

Գրականագիտական և քննադատական հոդվածներով հանդես են եկել Ա. Տերտերյանը, Ա. Կարինյանը, Պ. Մակինցյանը, Հ. Սուրխաթյանը, Է. Չոփուրյանը, Հ. Մկրտչյանը, Ս. Սողոմոնյանը և ուրիշներ։ Երաժշտության ու արվեստի հարցերին նվիրված նյութեր ունեն Ռ. Թերլեմեզյանը, Գ. Լևոնյանը, Վ. Ղարզանյանը, Արա Սարգսյանը, Ս. Քոչարյանը։

«Նոր ուղի»-ն հետևողականորեն իրագործում էր հայ ընթերցողին ժամանակակից ռուս, արտասահմանյան և Անդրկովկասի ժողովուրդների գրականություններին ծանոթացնելու վերաբերյալ իր խոստումը։ Ամսագրում պարբերաբար երևում էին Ռուսական գրականություն, Անդրկովկասյան գրականություն, Արտասահմանյան գրականություն բաժինները, տպագրվում էին ներկայացնողքննադատական հոդված-հաղորդումներ այլազգի գրողների և նրանց գրքերի վերաբերյալ։ Բացի այդ, հաճախ տրվում էին խորհրդային Ռուսաստանում լույս տեսնող գրական պարբերականների հերթական համարների տեսություններ («На литературном посту», «Новый мир», «Октябрь», «Рост», «Звезда» և այլն)։

Հանդեսի գիտական բաժնում տպագրվել են Գրիգոր Ղափանցյանի, Ռ. Գաբրիելյանի, Է. Հասրաթյանի, Մորուս Հասրաթյանի, Գրիգոր Շիրմազանյանի և այլոց հոդվածներն ու հաղորդումները լեզվաբանության, կենսաբանության, ջրանցքաշինության, պատմության տարբեր հարցերի վերաբերյալ։ Պետք է նշել, սակայն, որ այս բաժինը համեմատաբար էպիզոդիկ տեղ էր բռնում ամսագրի էջերում և պատահական չէ, որ հրատարակության երկրորդ տարվանից նրա ենթանվանումից դուրս թողնվեցին «տնտեսական և գիտական ամսագիր» բնորոշումները։

Անհամեմատ մեծ ուշադրություն էր նվիրում խմբագրությունը

հասարակական-քաղաքական հարցերին, սոցիալիստական շինարարության խնդիրների քննարկմանը, հեղափոխական անցյալին, հասարակագիտական պրոբլեմներին։ Ի մի բերելով հանդեսի այս բաժնի նյութերը, դրանք կարելի է խմբավորել հետևյալ կերպ. ա) Դաշնակցության քննադատություն. բ) Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումների մոտիկ անցյալի պատմությունից. գ) Սոցիալիստական շինարարության գործնական հարցերի քննարկում. դ) Անցյալի հասարակական-քաղաքական հոսանքների քննություն։

Սրանցից բացի, հանդեսը տպագրել է նյութեր կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի, կապիտալի աշխարհում մղվող դասակարգային պայքարի, ազգային-ազատագրական պոռթկումների և սոցիալ-հասարակական մի շարք այլ պրոբլեմների վերաբերյալ։

Եթե գրական նյութերի հրատարակումով, արվեստի տարբեր բնագավառներին նվիրված հոդվածներով «Նոր ուղի»-ն ջանում էր նպաստել խորհրդային հայ մշակույթի զարգացմանը՝ նոր ժամանակների ըմբռնումներին համապատասխան, ապա հասարակական-քաղաքական խնդիրներին վերաբերող նյութերով ձգտում էր մի կողմից՝ արձագանքել գաղափարական պայքարի ճակատում կուսակցության վարած քաղաքականությանը, մյուս կողմից՝ ընդլայնել ընթերցողների մտահորիզոնը, նոր գիտելիքներ ու փաստեր հաղորդել նրանց։

4

Ինչպես խորհրդային ամբողջ գրականության զարգացման համար, այնպես էլ մեր հանրապետության գրական կյանքում վիթխարի նշանակություն ունեցավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1925 թ. հունիսի 28-ին ընդունած՝ «Կուսակցության քաղաքականությունը գեղարվեստական գրականության բնագավառում» բանաձևը։ Դատապարտելով կոմունիստական գաղափարախոսությանը խորթ տենդենցները, սոցիալիստական կուլտուրա ստեղծելու անհնարինության վերաբերյալ նկրտումները, բանաձևը միաժամանակ մերժում էր խմբակայնության, պրոլետարական բացարձակության ամեն մի մտայնություն, քննադատում «ուղեկիցների» հանդեպ ցուցաբերվող անհանդուրժողականության դրսևորումները, պահանջելով լայնախոհ և սկզբունքային մոտեցում ունենալ նոր արվեստի ստեղծման խնդիրները լուծելիս։

Շուտով Լենինականում գործող բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» միության հիմքի վրա կազմավորվեց պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միավորումը, որը 1926 թ. դեկտեմբերին միացավ Պրոլետարական գրողների ասոցիացիայի հետ. ստեղծվեց Հայաստանի պրոլետարական գրողների միությունը, որը և 1927 թ. օգոստոսից սկսեց հրատարակել իր օրգան «Գրական դիրքերում» հանդեսը[49]։ Շուրջ հինգ տարի այս պարբերականն ազգային ջանքեր գործադրեց պրոլետարական գրականության զարգացմանը նպաստելու ուղղությամբ։

Հրապարակ իջնելով՝ հանդեսն իր առաջ դնում էր հետևյալ հիմնական խնդիրները[50]. 1) Գաղափարական պայքար մղել «հայ ազգայնական գրական շարժման» դեմ։ 2) «Մտերմական փոխհարաբերության» մեջ մտնել «ուղեկից» գրողների հետ, «ուղեկիցներին օբյեկտիվ քննադատության ենթարկել, նրանց կատարած նվաճումները՝ թե՛ ձևի և թե՛ բովանդակության առպարեզում, դրվատել, բաջալերել, մյուս կողմից ընկերաբար ցույց տալ նրանց թերությունները...»։ 3) Պայքարել «ինքնանպատակ էսթետիզմի կամ արվեստի բացարձակ հավիտենականության նշանաբանի տակ» հանդես եկող «կեղծ մարքսիստական քննադատության» մեթոդի դեմ։ 4) Մերկացնել «տրոցկիզմի թե՛ քաղաքական, թե՛ գրական բոլոր արտահայտությունները»։ 5) Պարբերաբար հանդես գալ «սմենովեխյան գրական շարժման», «անկումային գրականության» հոսանքների և նրանց հովանավորելու փորձերի դեմ»։ 6) Բոլոր միջոցներով նպաստել «պրոլետարական գրականության զարգացմանը և նրա հեգեմոնիայի պատմական նվաճման գործին». այլևս անցած պիտի համարել «այն շրջանը, երբ առաջնորդիչ ուժ էր հանդիսանում «Թեկուզ թույլ, բայց թո՛ղ պրոլետարական լինի» նշանաբանը. «Պրոլետարական գրականությունը բանակատիպ աճել է, այդ բանակն այսօր պետք է փոխվի որակի։ Այսօր պրոլետարական

---

49 «Գրական դիրքերում»-ն ուներ Տեսական-քննադատական, գրական-գեղարվեստական պատկերազարդ հանրամատչելի ամսագիր ենթանվանումը։ 1930 թ. № 2-ից դարձավ Խորհրդային Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի օրգանը։ Հրատարակվել է մինչև 1932 թ. ապրիլ ամիսը։ Պատ. խմբագիրներ են եղել Ն. Դարաղյանը, Վ. Աչաղանը, Հ. Գյուլի-Քեվխյանը, խմբ. կոլեգիայի անդամներ էին Ն. Զարյանը, Գ. Վանանդեցին, Ան. Վարդանյանը, Գեղամ Սարյանը, Ամատունին, Ա. Ոսկերչյանը, Հ. Մկրտչյանը, Ս. Տարոնցին։ 32—84 էջ (25×18 սմ), տպարանակը՝ 1000—3500։ Ունեցել է միացյալ համարներ։

50 Տե՛ս «Գրական դիրքերում». 1927, № 1։

գրականությունը ոչ միայն բովանդակությամբ, այլև ձևով պետք է բարձր լինի. այսօր մենք մեր գրոշակի վրա գրում ենք՝ «Մե՛ր, բայց՝ լա՛վը»:

Ամսագրում հանդես են եկել ժամանակի գրեթե բոլոր երիտասարդ և սկսնակ գրողները, գրաքննադատները, գրում էին նաև ավագ ու միջին սերնդի ներկայացուցիչները: Պրոլետարական գրականությանը գարկ տալու միտումով խմբագրությունը հաճախակի տպագրում էր «բուն արտադրության ընդերքներից» ստացված նյութերը՝ գործարաններում, գյուղատնտեսության մեջ աշխատողների ոտանավորները, երբեմն գրական նյութեր էր արտատպում պատի թերթերից և այլն: Ժամանակի գրական պայքարի, գեղագիտական ըմբռնումների մասին զգալի չափով պատկերացում են տալիս բանավիճային հոդվածները, գրողների պատասխաններն իրենց քննադատներին, ընկերական շարժերը, ծաղրանկարները:

«Գրական դիրքերում»-ը, որ իր կարևորագույն անելիքն էր համարում «պրոլետարական գրականության զարգացման, ագիտացիայի և պրոպագանդայի գործը կազմակերպված հիմքերի վրա դնելը»[51], պարբերաբար տպագրում էր խորհրդային բազմաբնույթ գրականության աչքի ընկնող ներկայացուցիչների դիմանկարները, երբեմն նաև կենսագրություններ, հատվածներ նրանց ստեղծագործություններից (Մ. Գորկի, Դ. Ֆուրմանով, Ա. Սերաֆիմովիչ, Ա. Ֆադեև, Ֆ. Գլադկով, Ա. Բեզիմենսկի և ուրիշներ): Ամսագրում զետեղված են նմուշներ վրացական ու ադրբեջանական պրոլետգրականությունից, բուրյաթական, տունգուսական և խորհրդային մյուս ազգությունների նորագույն գրականությունից, ինչպես նաև արտասահմանյան պրոլետգրողների գործերից: Հանդեսն ընթերցողներին ծանոթացնում էր պրոլետգրականության մատենաշարով հրատարակվող հայերեն և ռուսերեն գրքերին՝ տպագրելով գրախոսականներ, անոտացիաներ, հանձնարարականներ՝ հեղինակների վերաբերյալ համառոտ ծանոթագրություններով:

Այս ամենը, բնականաբար, օգնում էր գրականություն եկող երիտասարդությանը՝ ընդլայնելու գրական ճանաչողության շրջանակները, հետևելու ընդհանուր գրական պրոցեսին, ավելի հստակ ու որոշակի դարձնելու սեփական նախափորձերի գնահատման չափանիշները:

Բացի այդ, «Գրական դիրքերում»-ը տպագրում էր անոտա-

---

51 Տե՛ս նույն տեղը, էջ 3:

ցիա-գրախոսություններ Հայաստանում ու Անդրկովկասում լույս տեսնող հայերեն հանդեսների և ժողովածուների գրական-գեղարվեստական բաժինների վերաբերյալ («Նորք», «Երիտասարդ բոլշևիկ», «Նոր ուղի», «Պիոներ», «Հոկտեմբեր» (Թիֆլիս) և այլն)։

«Գրական դիրքերում»-ի նյութերն ամփոփվում էին հետևյալ հիմնական բաժիններում՝ Գրական-գեղարվեստական, Տեսական-քննադատական, Գրախոսություն, Կոնսուլտացիա, Խրոնիկա, Շարժեր, Պարոդիաներ։

Ընդհանրապես գրական կյանքում կատարած իր որոշակի դերին, «Գրական դիրքերում»-ը թույլ է տվել մի շարք սխալներ ու վրիպումներ։ Դեռևս ամսագրի առաջին համարներին նվիրված տեսության մեջ[52] «Խորհրդային Հայաստան»-ը ճիշտ կերպով քննադատում-պարսավում էր «հանդեսի գրախոսության բաժնի մի քանի հոդվածների անհամբերատար ոգին դեպի ուղեկից գրողները»։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը նշում էր նաև «գեղարվեստական գրողի և գրական քննադատի սահմանները շփոթելու» փաստը. «Այդ տեսակետից հանդեսում կան անշնորհք գրախոսականներ, որոնք կա՛մ շատ դյուրին և էժան գովեստներ են, կա՛մ չհիմնավորված հարձակումներ»։ Իբրև այդպիսի «չհիմնավորված հարձակման» մի նմուշ նշենք, օրինակ, Գ. Վանանդեցու «դիտողությունը» Ա. Բակունցի ստեղծագործության վերաբերյալ։ Մի հոդվածում Ա. Տերտերյանը Բակունցին համարում էր գյուղագիրների նոր սերնդի ամենատիպիկ ներկայացուցիչը[53]։ Չհամաձայնելով գրականագետի այս տեսակետին, Գ. Վանանդեցին բանեցնում է անհանդուրժողական մի տոն և առարկելու փոխարեն դատավճիռ է կարդում՝ «Ակսելը նոր հորիզոնների երգիչ չէ։ Նա բնապաշտ է և հռետոր,— գծեր, որոնք նրա հոգեբանության շատ հարազատ տարրերն են... Ակսելի հռետոր և բնապաշտ լինելը—հին գյուղի մահացման ուղին է—ուրիշ ոչինչ—գալիք սոցիալիստական ինդուստրիայի պատճառով... Ակսելը հեղափոխական և կոմունիստական հուզաշխարհի մարդ չէ» և այլն[54]։

«Գրական դիրքերում»-ի թույլ տված սխալները հետագայում սուր կերպով քննադատվեցին Հայաստանի պրոլետարական գրող-

---

52 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1927, № 237։

53 Տե՛ս «ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 2—3։

54 «Գրական դիրքերում», 1927, № 2, էջ 9։

ների ասոցիացիայի աշխատանքների վերաբերյալ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության որոշման մեջ[55]։ Կենտկոմը պահանջեց «ամուր հիմքերի վրա դնել «Գրական դիրքերում»-ի քննադատության և գրախոսության բաժինը՝ նրա շուրջը համախմբելով և առաջ քաշելով երիտասարդ նորանոր կադրեր» և «գրական որակի բարձրացման, սոցիալիստական շինարարության, հնգամյակի հերոսների գեղարվեստական ցուցադրման խնդիրները դարձնել ժուռնալի հիմնական առանցքը»։

5

Ժողովրդական տնտեսության վերակառուցման շրջանում Հայաստանում գրական կյանքը զարգանում էր բարդ ու հակասական ընթացքով, ներհակ ըմբռնումների, գրական տարբեր միավորումների իրարամերժ սկզբունքների խաչաձևման մթնոլորտում։ Գրական խնդիրները շարունակում էին առաջվա պես կրքեր հարուցել նաև պարբերական մամուլի էջերում։ Ծայր առան մի շարք բանավեճեր, որոնք շոշափում էին պրոլետարական գրականության որակի բարելավման, ոճերի ու թեմաների բազմազանության, արդիականության հետ սերտ կապի, սխեմատիզմի և գրական ապաշնորհության դեմ պայքարի և այլ կենսական խնդիրներ։ Չպետք է անտեսել սակայն, որ լուրջ ու օգտակար հարցադրումների հետ միասին հաճախ արտահայտվում էին նաև այնպիսի ըմբռնումներ ու տեսակետներ, որոնք ակնհայտորեն կրում էին իրենց վրա դոգմիկ սոցիոլոգիզմի, կոմսոմոլարծության կամ խմբակայնության կնիքը, սկզբունքային բանակռիվը տեղափոխում էին անձնական վիրավորանքների, անհատական համակրության կամ հակակրության ծանծաղուտը՝ գրականության հասարակական շահը զոհաբերելով անհանդուրժող անսխալականության մոլուցքին...

«Բախումների» առաջին դրսևորումներից մեկը եղավ Ս. Խանոյանի՝ մարքերի փոխանակության կարգով տպագրված «Գրական խոհեր» հոդվածի[56] առիթով սկսված բանավեճը։ Մի շարք այլ խնդիրների հետ մեկտեղ հեղինակը սուր կերպով դնում էր նաև գրականության որակի բարձրացման հարցը. «Մենք իսկի էլ կողմ-

55 Տե՛ս նույն տեղը, 1932, № 3։

56 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1927, № 156։

նակից չենք,— գրում էր նա,— այն սկզբունքին, թե՝ «թեև վատ է, թույլ է, բայց մերն է»... Զանազան պիտակներ, գրական խմբավորումների էտիկետը վահան դարձրած անշնորհ, ապիկար ու անտաղանդ «գրողներին» շոյելու, սիրաշահելու ժամանակ չունենք, ու եթե կուզեք՝ հանցանք էլ է նրանց գրական մարդամեջ խառնելը»։ Իր հիմքում ճիշտ այս պահանջի պաշտպանությամբ հանդես եկավ Գ. Մահարին[57]։ Քննադատելով գրական ապաշնորհությունը հովանավորելու փաստերը և դատապարտելով գրական ասպարեզում կոմսնապարծությունից բխող ինքնաթմբկահարությունը, նա շարունակում էր. «... Ինչո՞ւ ենք մենք կարծում, որ պրոլետարիատին հարկավոր է ինչ-որ երկրորդ տեսակի արվեստ, ինչո՞ւ մեր ապաշնորհությունները փաթաթել պրոլետարիատի վզին. ասենք, խոստովանենք մեր թույլ կողմերը, փոխանակ ջայլամի նման գլուխները խրելու տաք ավազի մեջ և կարծելու, որ ոչ ոք չի տեսնում մեզ... Լինենք ավելի մոտ կյանքին, հեղափոխության և մարդուն...»։

Եվ ահա, փոխանակ իսկապես մտահոգվելու պրոլետարական գրականության բովանդակության հարստացման, որակական կատարելագործման, նրա հասարակական ներգործության ընդլայնման խնդիրներով, գրական շարժման ղեկի մոտ կանգնածներից ոմանք հարցը անմիջապես տեղափոխեցին անձնական հողի վրա և բանն ըստ էության քննարկելու փոխարեն սկսեցին զանազան պիտակներով «ահաբեկել» իրենց ընդդիմախոսներին։ Գ. Մահարուն համարեցին «ազնվականության հայկական խրտվիլակ», «գիտնականների և բոսյակության գուսան», իսկ նրա ճշմարիտ դիտողությունները որակեցին իբրև «լիկվիդատորական զավեշտախաղ»[58]։ Պետհրատի դիրեկտորին, որն իր հոդվածում[59] նշում էր, թե պետք է խստապահանջ լինել նաև պրոլետգրողների գործերը հրատարակելիս, հապճեպորեն վերագրեցին «բացահայտ տենդենցներ՝ անցնելու այն լաղերը, ուր խռնվել են մեր թրջված հակառակորդները», իսկ նրա ղեկավարած հիմնարկի լույս ընծայած մյուս բոլոր գրքերը գրչի մեկ անպատասխանատու շարժումով վերածվեցին «լեֆո-ֆուտուրիստական-նացիոնալիստական գրվածքների», որոնք կարելի է «սպառել մեծ հաջողությամբ արտասահ-

57 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1927, № 174։

58 Նույն տեղում, № 175։

59 Տե՛ս նույն տեղը, № 171։

մանյան հակախորհրդային թափառաշրջիկների մեջ...»[60] և այլն։ Պարզ է, որ այսպիսի, մեղմ ասած՝ անհանդուրժողական կեցվածքն ու տոնը հարցի քննարկումը դնում էին դեմագոգիայի անիվների վրա, որոնք գլորվում էին տաղնապալից ու շատ վտանգավոր արահետներով։ Եվ մի՞թե այդ բոլորից հետո պարզապես զավեշտական չեն հնչում այն հոդված-մեղադրանքի վերջին խոսքերը, որից քաղեցինք վերոհիշյալ «ամբաստանությունները». «Վե՛ր ջ տվեք սուր ու կրքոտ բանավեճերին, անիմաստ հարձակումներին, կազմալուծող ու վարկաբեկող միտումներին, եկեք միասին ու միահամուռ ուժեղացնենք կուլտուրական ճակատը, որ անբաժան ու կարևոր մասն է կազմում սոցիալիզմի կառուցման մեծ աշխատանքի»։

* * *

Սոցիալիստական գրականության խնդիրները քննարկելիս պարբերական մամուլը կարևոր նշանակություն էր տալիս ինտերնացիոնալիզմի սկզբունքների հաստատմանը, ազգային բոլոր հանրապետությունների գրողների միջև ստեղծագործական կապերի ամրապնդմանը։ «Պրոլետարիատի հաղթանակով,— ընդգծում էր «Խորհրդային Հայաստան»-ը «Ինտերնացիոնալիզմի դրոշի տակ» խորագրով առաջնորդողում[61],— ինչպես արվեստի բոլոր ճյուղերը, այնպես էլ գրականությունը դառնում է աշխատավոր զանգվածների ինտերնացիոնալիստական դաստիարակման, դասակարգային կազմակերպման և նոր, սոցիալիստական կենցաղի հաստատման և սոցիալիզմի կառուցման լավագույն զենքերից մեկը»։ Եվ ապա՝ «Զևով՝ ազգային, բովանդակությամբ՝ ինտերնացիոնալիստական։ Այսպես է զարգանում նոր արվեստը»։ Այս խմբագրականում, որ գրված էր Վրաստանի ու Ադրբեջանի մի խումբ գրողների՝ Հայաստան այցելելու և այստեղ «Անդրկովկասյան գրականության շաբաթ» անցկացնելու առիթով, թերթը ամենայն որոշակիությամբ դնում էր անդրկովկասյան գրողների փոխադարձ շփման ու ստեղծագործական համագործակցության խնդիրը։ Շեշտելով գրականության ասպարեզում ևս «ազգայնության, բուրժուական իդեոլոգիաների, մեշչանիզմի և օպորտունիզմի դեմ» պայքարելու կարևորությունը, թերթը ճիշտ կերպով ձևակերպում էր գրական փոխազդեցության հիմնական սկզբունքը՝ «Ուսումնասիրել միմյանց՝ փոխա-

60 Նույն տեղում, № 175։

61 Տե՛ս նույն տեղը, 1929, № 127։

դարձարար ապդելով միմյանց վրա»։ Նույնանման մի առաջնորդող տպագրից թերթը Հայաստանում ապրելիքանական գրականության տասնօրյակի առթիվ[62]։ Մի անգամ ևս ընդգծելով, որ սոցիալիզմի կառուցման պաթոսն արտացոլող գրականությունն ու արվեստը «հզոր զենք են մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության համար», ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգանը հավաստում էր աշխատավորության բուռն հետաքրքրությունը՝ ավելի մոտիկից ծանոթանալու եղբայրական հանրապետությունների մշակույթի նվաճումներին։ «Մեր մամուլը, պետական հրատարակչությունը, գրողների և արվեստագետների կազմակերպությունները,— խնդիր էր դնում թերթը,— պետք է եռանդով ընդառաջ գնան այդ միանգամայն օրինաչափ ձգտմանը»։ Մեր հանրապետության պարբերականներում և հրատարակչությունների արտադրանքի մեջ հետզհետե ավելի պատշաճ ու հիմնավոր տեղ էին բռնում խորհրդային ժողովուրդների գրականություններից կատարվող թարգմանությունները։

Սոցիալիստական գրականության սկզբունքների պրոպագանդման յուրովի խթան հանդիսացավ պարբերական մամուլի համար Մ. Գորկու այցելությունը Հայաստան՝ 1928 թ. ամռանը։ Այդ առթիվ թերթերը տպագրեցին հատուկ առաջնորդողներ, ողջույններ, գնահատանքի ու մեծարանքի խոսքեր, զետեղեցին պրոլետարական մեծ գրողի կենսագրությունը, նրա ստեղծագործությունը բնութագրող հոդվածներ և այլ նյութեր։ Այս, ինչպես և սոցիալիստական գրականության հիմնադրի գրական գործունեության 40-ամյակի արձագանքները մեր մամուլում խորհրդային շրջանի հայ-ռուսական գրական կապերի հետաքրքիր էջերից են։

Վերակառուցման շրջանում գրականության հարցերին նվիրված նյութերի մեջ ուշադրավ է «Խորհրդային Հայաստան»-ի «Գրական ֆրոնտի մարտական խնդիրները» խորագրով առաջնորդողը[63]։ «Նոր ձևով դրվում է պայքարը պրոլետարական գրականության հեգեմոնիայի նվաճման համար,— գրում էր թերթը,— և այստեղից էլ բխում է, ի միջի այլոց, մի շարք գրականագիտական պրոբլեմների լուծման հրատապ անհրաժեշտությունը»։ Դրանք էին՝ «մատերիալիստական դիալեկտիկայի կիրառումը գրականության ասպարեզում, նրանով պայմանավորվող գեղարվեստական մեթոդի մշակումը, պրոլետարական գրականության ոճի բնորոշումը, թե-

62 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935, № 246։

63 Տե՛ս նույն տեղը, 1930, № 80։

մատիկայի, ժանրերի ընտրության խնդիրը»։ Այնուհետև, նշելով, որ գրական ուժերի կոնսոլիդացիայի նշանաբանի ներքո «կենտրոնում արդյունավետ աշխատանք է կատարվում», թերթը շարունակում էր. այդ խնդիրը պետք է «կտրականապես լուծվի նաև մեղանում, ուր հաճախ սկզբունքային հարցերն անձնական քմահաճույքի ու վիրավորանքի ձև են ընդունում»։ Ուժերի կոնսոլիդացիան, նկատում էր թերթը, «նշանակում է գրուպայական տրամադրությունների և գրական ցեխովշչինայի ոտնձգությունների վճռական վանում և ստեղծագործական մարտական միասնություն՝ հանուն նոր դիրքերի գրավման, հանուն անվրեպ առաջխաղացման գրական ֆրոնտում՝ մարքս-լենինյան անսայթաք սկզբունքների հիման վրա»։

* * *

Համկ(բ)Կ Կենտկոմի՝ «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» հայտնի որոշումը (1932 թ. ապրիլի 23) կարևորագույն նշանակություն ունեցավ նաև մեր հանրապետության գրական կյանքում։ Այդ որոշման հիման վրա լուծարքի ենթարկվեցին Հայաստանի պրոլետգրողների կազմակերպությունը, Հայաստանի գրողների ֆեդերացիան, պրոլետ-երաժիշտների, պրոլետ-ճարտարապետների ու պրոլետ-նկարիչների միությունները։ Փոխարենը կազմակերպվելու էին Հայաստանի խորհրդային գրողների միություն, երաժիշտների, նկարիչների և կերպարվեստի աշխատողների ու ճարտարապետների միասնական միություններ։ Այս նոր միավորումների մեջ համախմբվելու էին խորհրդային իշխանության պլատֆորմը պաշտպանող և սոցիալիստական շինարարությանը մասնակցելու ձգտող բոլոր գրողներն ու արվեստագետները։ Ստեղծվեցին վերակառուցումն իրականացնող համապատասխան կազմկոմիտեներ։ Պարբերական մամուլը ևս գործի անցավ։

Մեծ էին մասնավորապես «Գրական թերթ»-ի աննկիները, որի հրատարակությունն սկսվել էր Համկ(բ)Կ Կենտկոմի որոշումից դեռևս երկու ամիս առաջ՝ 1932 թվականի փետրվարի 23-ից[64]։

---

64 «Գրական թերթ»-ը նախապես հանդիսացել է Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի օրգան. 1932 թ. մայիսից հրատարակվում էր իբրև Հայաստանի խորհրդային գրողների, երաժիշտների և կերպարվեստագետների միությունների օրգան. ապա՝ օրգ. Հայաստանի խորհրդային գրողների միության վարչության։ Մինչև 1937 թ. խմբագիրներ եղել են՝ Հ. Մկրտչյանը, Ե. Չուբարը, Ն. Դարագյանը, Վ. Աչաղանը, Գ. Արովը, խմբ. կոլեգիայի անդամներ՝ Ա. Վշտունին, Վ. Նորենցը, Ա. Ոսկերչյանը, Խ. Սարգսյանը, Մ. Արմենը, Ա. Բակունցը, Ն. Զարյանը, Վ. Թոթովենցը։

«Գրական թերթ»-ը իր հիմնական նպատակն էր համարում՝ նպաստել սոցիալիստական շինարարության հետ գրականության կապերի հետագա խորացմանն ու ընդլայնմանը։ «Ով կարծում է, թե կարիներում նստած կարելի է կերտել բոլշևիկյան արվեստը,— ասված է անդրանիկ համարի խմբագրականում,— նա մեծագույն ֆիլիստերն է»։ Թերթն իր առջև դրել էր հետևյալ խնդիրները. 1. Կազմակերպել պրոլետարական և առհասարակ խորհրդային գրողների «տեսական-քննադատական-ստեղծագործական աշխատանքը» մեր հանրապետությունում, «պայքարել հանուն պրոլետգրականության հեգեմոնիայի», «գլխավորել ուղեկցային գրականության դիֆերենցիացիան»։ 2. Պայքարել գրականության բարձր որակի համար. «Մենք չենք կարող և չպետք է բավարարվենք այն ընթացիկ, հաճախ սխեմատիկ գործերով, որոնց զգալի մասը իրավամբ գրական խալտուրա է»։ 3. Կազմակերպել «մեր ողջ գրականության ինքնաքննադատության գործը», «պայքարել հանուն լենինյան կուսակցականության և մատերիալիստական դիալեկտիկական մեթոդի գրականության մեջ, տալ գրական գործերի լիակատար վերլուծություններ, իր կոչման բարձրության վրա դնել մարքս-լենինյան քննադատությունը, ամենաուժեղ պայքար մղելով ամեն տեսակի հակամարքսիստական տեսությունների, ինչպես նաև խմբակային տենդենցիոզ քննադատության փորձերի դեմ»։ 4. Պատշաճ ուշադրություն նվիրել «գրական նոր կադրերի պատրաստմանը». «Բոլշևիկյան արվեստը պահանջում է մարքս-լենինյան ուսմունքով զինված նորանոր կադրեր բանվոր դասակարգի առաջավոր ջոկատներից—բանվոր հարվածայիններից...»։ 5. «Ծավալել մարքս-լենինյան բոլշևիկյան պայքարը դասակարգային թշնամու իդեոլոգիայի և նրա բոլոր արտահայտությունների դեմ. հատկապես դաշնակիզմի, մենշևիզմ-տրոցկիզմի դեմ»։ 6. «Ծավալել պայքարը երկու ֆրոնտում՝ ընդդեմ ներկայիս գլխավոր վտանգ աջ օպորտունիզմի և «ձախ» խոտորումների՝ հանուն կուսակցության լենինյան գծի կենսագործման գրականության և արվեստի ֆրոնտում»։

Թերթն իր ուշադրության ոլորտում էր պահելու նաև արվեստի մյուս բնագավառների՝ թատրոնի, կինոյի, կերպարվեստի, երաժշտության տեսական ու գործնական հարցերը։ «Այս խնդիրների առնչությամբ,— հավաստվում էր խմբագրականում,— «Գրական թերթ»-ը իր էջերում քննարկելու է կուլտուրական հեղափոխության հիմնական հարցերը և հանդիսանալու է կուլտուրական հեղափոխության կարևոր լծակներից մեկը»։

Ընդամենը 6 համար էր լույս տեսել «Գրական թերթ»-ը, երբ ընդունվեց Համկ(բ)կ Կենտկոմի որոշումը, որից բխող խնդիրների իրագործումն էլ այնուհետև դառնալու էր այս պարբերականի նպատակը: Թերթը այդ որոշման պարզաբանմանն ու արժեքավորմանը նվիրեց խմբագրականներ, հոդվածներ, տպագրեց գրողների ու արվեստագետների խոսքեր, արծարծեց գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման կապակցությամբ առաջ եկած մի շարք պրոբլեմատիկ հարցեր (գրական-գեղարվեստական ուժերի կոնսոլիդացիա, գաղափարական և գեղարվեստական բարձր մակարդակի ապահովում, գրական քննադատության բարելավում և այլն): «Համկոմկուսի Կենտկոմի պատմական որոշումը,— ընդգծում էր թերթը,— այդ վերակառուցումն առաջադրում է որպես մեր գրականության զարգացման լենինյան էտապի խնդիր... Խորհրդային Հայաստանի պայմաններում Համկ(բ)կ Կենտկոմի որոշումը նշանակում է հսկայական շրջադարձ մեր գրական ֆրոնտում»[65]:

Սկզբից ևեթ «Գրական թերթ»-ը մատնանշում էր երկու վտանգավոր մտայնություն, որոնց հաղթահարումը կարևոր նշանակություն ուներ վերակառուցումը ճիշտ հունով տանելու համար: «Ձախ» վուլգարիզատորներից ոմանք, «վարչարարության սիրահարները» փորձում էին անտեսել այն էական հանգամանքը, որ «կուսակցության Կենտկոմը լիկվիդիացիայի է ենթարկել պրոլետ-ասոցիացիաները և առաջարկում է ստեղծել բոլորովին նոր կազմակերպություն»: Այսպես վարվելով՝ նրանք բանն այնպես էին ներկայացնում, որ իբր «կատարվել է միայն կազմակերպչական ձևի փոփոխում»: Սա՝ մեկ: Մյուս կողմից, շարունակում էր թերթը, աջ կապիտուլյանտական տրամադրությունների արտահայտիչները, «ձախերի» կատարած կոպիտ սխալները նույնացնելով կուսակցության դեմ հետ, ըստ էության փորձում էին «ժխտել կուսակցության ղեկավարությունը գրականության և արվեստի բնագավառում», բացասել «իդեոլոգիական այդ կարևորագույն վերնաշենքերի կուսակցականությունը»: Նրանք ուզում էին «մարքս-լենինյան քննադատության նա մնալը, նրա կատարած կոպիտ սխալները սիստեմի վերածելով՝ առհասարակ մարքս-լենինյան քննադատության դերը ժխտել»[66]:

«Գրական թերթ»-ը կարևոր էր համարում, որպեսզի գրողների

---

65 «Գրական թերթ», 1932, № 8:

66 Նույն տեղում, № 10:

միության ստեղծումը նախապատրաստելիս հարթվեն ու հաղթահարվեն նախկին կազմակերպությունների միջև գրապայքարի ընթացքում դրսևորված ծայրահեղություններն ու անտեղի կիրքը, անկանխակալ կերպով նշվեն և՛ նրանց ծառայությունները, և՛ թերությունները ու սխալները։ «Լվացքով, հին հաշիվներով չզբաղվենք,— կոչ էր անում Դ. Դեմիրճյանը,— դա կխանգարեն այսօրվա և վաղվա մեր անելիքները։ Տաս տարին միայն բացասական արդյունք չի տվել, այլև դրական։ Այժմ մեր առջև դրված խնդիրները դժվարանում են, որովհետև մեզ վստահում են մեծ չափերով ու այդ վստահությունը տալիս է ինքը պրոլետարիատը։ Հիմա մենք ընդհուպ մոտեցանք մասսաներին, այսօր խորհրդային գրականության զարգացման նոր էպոխայի սկիզբ է դրվում»[67]։

«Ո՞վ կարող է լինել խորհրդային գրողների միության անդամ» խորագրի ներքո թերթը տպագրեց մի շարք գրողների ու քննադատների կարծիքն այդ հարցի վերաբերյալ։ Արձագանքելով «Литературная газета»-ում զետեղված Նիկ. Ասեևի հոդվածին[68], «Գրական թերթ»-ում արտահայտվողները (Գ. Մահարի, Տ. Հախումյան, Գ. Սարյան, Դ. Դեմիրճյան, Հր. Քոչար, Խ. Դաշտենց, Ալազան, Ն. Զարյան և ուրիշներ) բարձրացրին գրական կազմակերպության ճիշտ համալրման հետ կապված կարևոր խնդիրներ[69]։ Ուշադրավ էին սոցիալիստական շինարարության հետ գրողներին ավելի սերտորեն կապելու ձևերի վերաբերյալ կարծիքների փոխանակումը, երիտգրողների ինքնազարգացմանը, գաղափարական ու գրական դաստիարակությանը նվիրված հոդվածներն ու առաջարկությունները։

Նոր պայմաններում «Գրական թերթ»-ը կրկին ուշադրություն հրավիրեց դասական գրողների երկերի հրատարակման գործը ճիշտ կազմակերպելու անհրաժեշտության վրա։ Այս կարևոր հարցում պետք է ունենալ հստակ ու պարզորոշ դիրքորոշում, նկատում էր թերթը. մի կողմից՝ անընդունելի են այն «ձախ» տենդենցներն ու տրամադրությունները, որոնք «թերագնահատում են անցյալ արժեքների, անցյալ կուլտուրայի օգտագործման նշանակությունը մեր սոցիալիստական կուլտուրան կառուցելու գործում», «կլասիկների հրատարակումն ընդունում են որպես «նահանջ» պրոլետարական

67 «Գրական թերթ», 1932, № 9։

68 Տե՛ս «Литературная газета», 1932, № 38:

69 Տե՛ս «Գրական թերթ», 1932, № 8։

կուլտուրա կառուցելու դիրքերից, որպես «թերագնահատում» պրոլետարական կուլտուրայի և գրականության». մյուս կողմից էլ՝ հարկավոր է մերժել այն մոտեցումը, որի ջատագովները «անցյալ կուլտուրայի ժառանգության հարցը ընդունում են մեխանիկորեն, առանց լենինյան ըմբռնման, առանց քննադատական վերաբերմունքի»[70]:

Ելնելով Կենտկոմի որոշումից, «Գրական թերթ»-ը սկզբնական շրջանում ճիշտ կերպով դնում էր նաև ստեղծագործական խնդիրների քննարկման, բանավեճերի ընդլայնման, գրական քննադատության որակի արմատական բարելավման հարցերը: Գրականության նոր փուլը և նրա հեռանկարները, նկատում էր խմբագրությունը, թելադրում են ոչ միայն քննադատել անցյալ շրջանի սխալները, այլև «սոցիալիստական շինարարության հարուստ փորձի հիման վրա մշակել խորհրդային գրականության զարգացման ներկա էտապի պահանջներից բխող տեսական, ստեղծագործական հիմնական խնդիրները», որոնք «զուգորդվում են սոցիալիստական ռեալիզմի ճիշտ հարցադրման հետ»[71]:

1932 թ. սեպտեմբերին լույս տեսավ ՀՍԽՀ խորհրդային գրողների միության օրգան «Նոյեմբեր» հանդեսի առաջին և միակ համարը[72]: Հովհ. Թումանյանի, Ա. Պուշկինի, Դ. Դեմիրճյանի, Մ. Աբեղյանի, Գ. Մահարու, Վ. Նորենցի, Գ. Սարյանի գործերից բացի, հանդեսում զետեղված են մի քանի տեսական ուսումնասիրություններ, «Պրավդա»-ից արտատպված «Գրականությունը նոր խնդիրների մակարդակին» հոդվածը, «Դեպի նոր հաղթանակներ» խմբագրականը, հասարակական-քաղաքական և մշակութային այլ հարցերի նվիրված նյութեր:

Գրական ժառանգությանը, ինչպես նաև խորհրդային հայ գրականությանն ու մշակույթի տարբեր բնագավառներին պատշաճ տեղ է հատկացված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 15-ամյակի և Հայաստանի խորհրդայնացման 12-րդ տարելիցի առթիվ լույս տեսած «Հոկտեմբեր–Նոյեմբեր» տարե-

---

70 Նույն տեղում, 1933, № 3։

71 Նույն տեղում, 1932, № 26։

72 «Նոյեմբեր»-ն ուներ Գրական-գեղարվեստական, գրաքննադատական և քաղաքական-հասարակական հանդես ենթանվանումը։ Պատ. խմբագիրն էր Ե. Չուբարը, խմբ. կոլեգիայի անդամներ էին նաև Ալազանը, Ա. Բակունցը, Շիրվանզադեն, Ե. Չարենցը, Խ. Սարգսյանը, Ա. Ոսկերչյանը։ 175 էջ (26×18 սմ), տպաքանակը՝ 1650։

գրքում[73], որի հրատարակությունը, ցավոք սրտի, չկրեց պարբերական բնույթ, ինչպես խոստանում էր խմբագրությունը։

1933 թ. ապրիլից, «Նոյեմբեր»-ի փոխարեն սկսեց հրատարակվել «Վերելք» հանդեսը[74], որի էջերում տպագրված են Հովհ. Թումանյանի, Շիրվանզադեի, Մ. Շահինյանի, Դ. Դեմիրճյանի, Մ. Արազու, Մ. Մանվելյանի, Վ. Թոթովենցի, Գ. Մահարու, Գ. Սարյանի, Մ. Արմենի, Ս. Տարոնցու, Հր. Քոչարի, Հ. Շիրազի, Ս. Պայազատի, Ս. Վահունու, Ադամնու և ավագ ու կրտսեր սերնդի այլ գրողների առանձին ստեղծագործություններ, նմուշներ ուկրաինական և վրաց ժամանակակից գրականությունից։ Գրականագիտական կամ գրաքննադատական նյութերով հանդես են եկել Ա. Կարինյանը, Հ. Մկրտչյանը, Ռ. Զարյանը, Ս. Սողոմոնյանը և ուրիշներ։

1934 թ. կեսերից «Վերելք»-ին փոխարինելու եկավ «Խորհրդային գրականություն» ամսագիրը[75], որը, «Գրական թերթ»-ի հետ միասին, ավելի հանգամանորեն ձևակերպեց Հանրապետության գրական-գեղարվեստական կյանքի արտացոլմանն ու կազմակերպմանը։ Ամսագիրն ուներ հետևյալ հիմնական բաժինները՝ Գրական, Տեսական, Քննադատական, Գրական արխիվ, Գրախոսական, Գրական խրոնիկա։

Ամսագիրը ընթերցող հասարակայնությանն էր ներկայացնում խորհրդային հայ գրականության ընթացիկ արտադրանքը, նմուշներ գրական ժառանգության անհայտ էջերից, ինչպես նաև խորհրդային մյուս հանրապետությունների գրողների, առաջատար ու

---

73 «Հոկտեմբեր-Նոյեմբեր»—Տարեգիրք գրականության, արվեստի, գիտության և ժողովրդական ստեղծագործության։ Խմբագրական կազմ՝ Ե. Չարենց, Ա. Բակունց, Ե. Զուրաբ, պատ. խմբագիր՝ Ե. Չարենց, 660 էջ (30×22 սմ), տպաքանակը՝ 3000։

74 «Վերելք»-ը Հայաստանի խորհրդային գրողների միության օրգանն էր։ Պատ. խմբագիրն էր Ե. Զուրաբը, խմբ. կոլեգիայի անդամներ էին նաև Ալազանը, Ն. Դարազյանը, Դ. Դեմիրճյանը, Գ. Մահարին, Ե. Չարենցը, Շիրվանզադեն, Գ. Վանանդեցին։ Հրատարակվել է մինչև 1934 թ. փետրվարը՝ ընդամենը 7 համար (1933 թ. № 2—3-ը՝ միացյալ)։ 134—230 էջ (24×17 սմ), տպաքանակը՝ 1000—1500։

75 «Խորհրդային գրականության» առաջին համարը լույս է տեսել 1934 թ. մայիսին՝ իբրև Հայաստանի խորհրդային գրողների միության կազմկոմիտեի օրգան (հաջորդ տարվա № 1-ից՝ օրգան Հայաստանի խորհրդային գրողների միության)։ Երկրորդ համարը հրատարակվեց եռամսյա ընդմիջումից հետո՝ 1934 թ. սեպտեմբերին, ապա՝ կանոնավոր պարբերականությամբ։ Ուներ Գրական-գեղարվեստական և Քննադատական հանդես ենթաբաժանումը։ 1934—1936 թթ. խմբագիրն էր Հ. Մկրտչյանը։ 175—260 էջ (26×18 սմ), տպաքանակը՝ 1000։

համաշխարհային դասականների ստեղծագործություններից, ջանում էր արծարծել սոցիալիստական ռեալիզմի, գրականության ոգեղեղության հարատևության, գրական վարպետության հետ առնչվող խնդիրներ։

* * *

Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցմանը ձեռնամուխ լինելուց հետո ավելի լայն կերպով և գործնականորեն դրվեցին գրական նոր սերնդի դաստիարակության հարցերը։ Գնալով ավելի ու ավելի շատ նոր անուններ էին երևում գրական ասպարեզում. հարկավոր էր ոչ միայն տպագրել նրանց գրվածքները, այլև մանրամասն քննել ու վերլուծել, բացահայտել թերությունները, նրանց ծանոթացնել դասականների և ժամանակակից աշխի ընկնող գրողների ստեղծագործական լաբորատորիային։ Այս ամենը կօգներ գրական երիտասարդությանը՝ բարձրացնելու պրոֆեսիոնալ մակարդակը, խստապահանջ լինելու սեփական գրական փորձերի նկատմամբ։

Բնականաբար, արդեն զգացվում էր գրական երիտասարդությանն ապատարկող հատուկ պարբերականի կարիքը։ Այդպիսի հրատարակություն կազմակերպելու մի փորձ արվեց 1933 թ. կեսերին։ Հայաստանի խորհրդային գրողների միության կազմկոմիտեին կից գործող Կոոպտաս միության գրական խմբակը, նյութական օժանդակություն ստանալով խնամակալ հիմնարկից, նախաձեռնեց «Երիտ գրող» գրական-գեղարվեստական ամսագրի հրատարակությունը[76]։ Ամսագիրը նպատակ էր դրել իր շուրջը համախմբել վերոհիշյալ խմբակի երիտասարդ ուժերին, նպաստել նրանց գրական, գաղափարական աճին։ Սակայն խմբագրությունը պատրաստակամություն էր հայտնում լայնացնել պարբերականի ընդգրկման շրջանակները, տեղ տալ նաև Երևանում գործող մյուս գրական խմբակների անդամներին՝ «հարկ եղած դեպքում մի քիչ ընդարձակելով ժուռնալի ծավալը, եթե այլ միությունները կդան օժանդակելու մեզ ՀԽԳ միության կազմկոմիտեի հետ միասին»։ «Երիտ գրող» ամսագրի երկու համարներում տպագրված են մեծ մասամբ ստանավորներ և մի քանի պատկերներ։ Գրականից բացի՝ ամսագիրն ուներ նաև Կոնսուլտացիոն, Արվեստի խնդիրներ և Խրո-

---

76 Կարողացանք գտնել ամսագրի միայն № 1-ը և № 2-ը։ 16—24 էջ (26×17 սմ), տպաքանակը՝ 250—600։ Պատ. խմբագիրն էր Գրիգոր Մասյանը։

ճիկա բաժիններիը։ Գրական ուսուցմանը նպաստելու առումով ուշագրավ էին Սա. Զարյանի «Սովորելու խնդիրը» (№ 1), Դ. Դեմիրճյանի «Ռիթմը պոեզիայի մեջ» (№ 2) և Ն. Զարյանի «Ինչպես եմ գրել «Ռուշանի բարափը»» (№ 2) հոդվածները, որոնք զետեղված են կոնսուլտացիոն բաժնում։

«Երիտ գրող»-ի սկսած գործը, ավելի լայն ու կազմակերպված հիմքի վրա, շարունակեց երիտասարդական գրական-գեղարվեստական և քննադատական նոր ամսագիր «Գրական սերունդ»-ը, որ հրատարակվում էր 1934 թ. ապրիլից[77]։

«Գրական սերունդ»-ն ասպարեզ իջավ գաղափարայնության, կուսակցականության և ինտերնացիոնալիզմի սկզբունքները գրականության մեջ կիրառելու նշանաբանով։ Մարքսիզմ-լենինիզմի խոր ուսումնասիրությունը ամսագիրը համարում էր գրական նոր սերնդի կարևորագույն խնդիրը։ Միաժամանակ խմբագրությունը կենսական նշանակություն էր տալիս գրական վարպետությանը տիրապետելու, գրական ստեղծագործության որակը բարելավելու հարցերին։ Անդրանիկ համարի «Դեպի սոցիալիստական որակ» խորագրով խմբագրականում հանդեսը նշում էր, որ գրականությանը նվիրվել ցանկացողը չի կարող բավականանալ քաղաքական գիտելիքների, մարքսիստական աշխարհայացքի թեկուզ և կատարյալ յուրացմամբ։ Դա սոցիալիստական գրականության ստեղծման կարևորագույն նախապայմանն է, իհարկե, որը, սակայն, պետք է զուգակցել գրական վարպետության բարձրացման ու կատարելագործման հետ. «Քաղաքականապես գրագետ, մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի հիմունքներին լիակատար ծանոթ կարող են լինել շատերը, սակայն նրանք դեռ գրողներ չեն։ Գրողն սկսում է այնտեղից, որտեղից սկսում է նրա գրական առանձնահատկությունը»[78]։ Եվ բնական է, որ հանդեսը սուր կերպով դնում էր «գրական աշխատանքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի», գրական արվեստին տիրապետելու խնդիրը, անխնա պայքար հայտարարելով «մի կերպ յոլա գնացողներին» և «յոլա տանողներին»։

---

77 «Գրական սերունդ»-ն սկսեց լույս տեսնել իբրև Հայաստանի խորհրդային գրողների միության կազմկոմիտեի օրգան. 1934 թ. նոյեմբերից՝ օրգ. Հայաստանի խորհրդային գրողների միության. 1935 թ մարտից՝ օրգ. ՀԵԳՄ և ՀԼԿՍՄ Կենտկոմի Պատ. խմբագիրներ եղել են Ն. Զարյանը, Դ. Սիմոնյանը։ 84—300 էջ (26×18 սմ), տպաքանակը՝ 1000—2000։ Ունեցել է միացյալ համարներ։ Հրատարակվել է մինչև 1936 թ. հունիսը։

78 «Գրական սերունդ», 1934, № 1, էջ 32։

Դժբախտաբար, միշտ չէ, որ ամսագիրը կարողանում էր իր առաջադրած ճիշտ հարցադրումների բարձունքից մոտենալ գրական երևույթներին: Այնուամենայնիվ, միանգամայն գրական գնահատության են արժանի գրական նոր սերնդին պրոֆեսիոնալ դիտելիքներ հաղորդելու, գրական վարպետության հարցերն արծարծելու ուղղությամբ խմբագրության գործադրած ջանքերը: Գրականագիտական և տեսական-քննադատական բաժիններից զատ, հանդեսում իրենց պատշաճ տեղն ունեին Գրական կոնսուլտացիա, Գրողների լաբորատորիայում, Գրական ժառանգություն, Համաշխարհային գրականության կլասիկներ, Գրական նորություններ, Ինչպես են աշխատել գրական վարպետները բաժինները: «Գրական սերունդ»-ը երիտասարդությանը հաղորդակից էր դարձնում ակնառոր գրողների աշխատանքի ոճին, ստեղծագործական յուրահատկություններին[79], կազմակերպում էր գրական կոնսուլտացիաներ, հրապարակում գրական ժառանգության ուշագրավ, ուսուցողական արժեք ունեցող էջեր[80], տպագրում էր նմուշներ առաջական և եվրոպական դասականների երկերից, գրախոսում երիտասարդ գրողների գրքույկները և այլն: Ամսագիրն անդրադարձել է նաև գրական երիտասարդության քաղաքացիական-բարոյական դաստիարակության հարցերին:

* * *

Համկ(բ)կ Կենտկոմի որոշումից հետո թարմացնող և սթափեցնող մի հոսանք անցավ նաև մեր հանրապետության գրական մթնոլորտով: Պարբերական մամուլը ևս ձեռնամուխ եղավ կենսական նոր խնդիրների քննարկմանը: Ցավոք սրտի, սակայն, խմբակային-թայֆայական պայքարը, որ նոր ուժով բորբոքեցին ժողովրդի իսկական թշնամի, քաղաքական ավանտյուրիստ Բերիան ու նրա արբանյակները, խաթարեց և ծուռ հունի մեջ դրեց մամուլի աշխատանքը գրապայքարի ասպարեզում: Ինչպես այդ ժամանակ, այնպես էլ դրանից հետո խմբակայնության «խոհանոցներում»

---

79 Տե՛ս, օրինակ, Մ. Գորկի, «Ինչպես եմ ես գրում» (1934, № 1), «Զրույց երիտասարդների հետ» (1934, № 2—3). «Ինչպես էր մշակում Հ. Բոմանյանն իր երկերը» (1934, №№ 1, 2—3). Ալ. Տոլստոյ, «Ինչպես եմ ես գրում» (1934, № 2—3). «Ինչպես էր աշխատում Անտոն Չեխովը» (1934, № 2—3) և այլն:

80 Տե՛ս, օրինակ, «Բալզակի նամակները» (1934, № 6—7). «Նար-Դոսի երկու նամակը» (ն. տ.). «Բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը լեզվի մասին» (ն. տ.) և այլն:

թխված բաղմապիսի մեղադրանքներ բարդվեցին Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Վ. Թոթովենցի, Գ. Մահարու և այլ ականավոր գրողների, երիտասարդ սերնդի աչքի ընդնող մի շարք ներկայացուցիչների վրա։ Գրական «հակառակորդները» պարզապես «հաշիվ էին մաքրում» միմյանց հետ, իսկ ստեղծված դառն մթնոլորտում տուժում էին ամենից շատ գրական տաղանդները։ Խմբակային պայքարում շիկացող անառողջ տրամադրությունները, ինչպես ճիշտ նկատել է Հր. Թամրազյանը՝ «խոշընդոտ եղան տեսական առողջ եզրահանգման հասնել գրական պրակտիկայում լիովին հասունացած այնպիսի էական հարցի քննարկման ժամանակ, ինչպիսին է ազգային ձևի և սոցիալիստական բովանդակության հարցը։ Վեճերի ընթացքում յուրաքանչյուր մեծ ու փոքր սխալ դառնում էր դեմագոգիայի և քաղաքական փոխադարձ մեղադրանքների առիթ»[81]։

Չնայած բոլոր խոչընդոտներին, այնուամենայնիվ, խորհրդային հայ գրականությունը ևս զարգանում էր՝ ստեղծելով իր մնայուն արժեքները։ Գրական պրոցեսի առողջ բաբախումների վրա լսելյան իր տիրական հետքն էր թողնում Ե. Չարենցի ստեղծագործությունը, հատկապես «էպիկական լուսաբաց»-ի գեղագիտական մանիֆեստացիան։ Ժամանակի մամուլում արտահայտված գրական ճշմարիտ ու կենսունակ տեսակետներին ծանոթանալիս նկատվում է ուշագրավ մի հանգամանք. թեև այս առումով Չարենցի մասին գրեթե չէին գրում, չէին վկայակոչում նրան, բայց հաշվի էին առնում նրա անառարկելի հեղինակությունը. գրական հսկայի բարերար ազդեցությունը տեղի էր ունենում լուռ, անաղմուկ, մի տեսակ՝ «ընդհատակից»։

Հայաստանի խորհրդային գրողների համագումարից երկու շաբաթ առաջ, 1934 թ. հուլիսի 14-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն քննարկեց և դատապարտեց ծայրահեղորեն սրված խմբակային պայքարը։ Նշելով մամուլի անբավարար պայքարը խմբակայնության դեմ, բյուրոն իր ընդունած որոշման մեջ արձանագրեց. «Առաջարկել «Խորհրդային Հայաստան»-ին, «Կոմունիստ»-ին, «Ավանգարդ»-ին, «Գրական թերթ»-ին՝ ծավալել գրականության վերաբերյալ կուսակցության կայացրած որոշումների լայն պրոպագանդ և կազմակերպչական-մասսայական աշխատանք խորհրդային գրողների առաջիկա համագումարների առթիվ, սիստեմատիկաբար տեղ հատկացնելով գրողների ու քննադատների ստեղծա-

---

81 «Սովետահայ գրականության պատմություն», հ. I, էջ 515։

գործական նյութերին, վճռաբար պայքար մղելով գրականության մեջ նկատվող դասակարգայնորեն խորթ ազդեցությունների բոլոր արտահայտությունների և ստեղծագործական կարգի բոլոր թերությունների դեմ»[82]:

Հայաստանի և ԽՍՀՄ գրողների համագումարների օրերին և անմիջապես հետո զգալիորեն մեղմացավ խմբակային պայքարը նաև մեր հանրապետությունում: Մամուլի էջերում ևս սկսեցին երևալ ստեղծագործական խնդիրներ քննարկող, համեմատաբար հանգիստ տոնով գրված հոդվածներ: Տարաբախտաբար գրական բարքերի առողջացման այս պրոցեսը կարճատև եղավ: Անհատի պաշտամունքից բխող սուբյեկտիվ կամայականությունները շուտով իրենց ավերիչ հետքերը թողին նաև գրականության և արվեստի բնագավառում: Մամուլը ևս ցավալիորեն տուրք տվեց սոցիալիստական շինարարության հաջողություններին զուգընթաց դասակարգային պայքարի հետագա սրման վերաբերյալ սարքովի թեզին, որից կառչելով թշնամական ու ավանտյուրիստական տարրերը անլուր ռեպրեսիաներ գործադրեցին նաև գրական տաղանդավոր շատ գործիչների, գրողների ու արվեստագետների նկատմամբ, մեծ վնաս պատճառելով հայ մշակույթին:

6

Գրական խնդիրներին զուգընթաց պարբերական մամուլը հետզհետե ավելի ու ավելի լայն տեղ էր տալիս արվեստի տարբեր ճյուղերի (թատրոն, երաժշտություն, կերպարվեստ, կինո) զարգացման հետ առնչվող հարցերի քննարկմանը: Ինքնին հասկանալի է, որ առանձնակի դեր էր վերապահված այստեղ գեղագիտական մամուլին: Դեռևս 1926 թ. մարտ-մայիս ամիսներին «Խորհրդային Հայաստան» թերթը հրատարակում էր 8 էջանոց երկշաբաթյա մի հավելված, որը կարելի է համարել արվեստին նվիրված պարբերականի նախատիպը խորհրդային հայ մամուլի պատմության մեջ: Ճիշտ է, այս հավելվածն ուներ գրական, գեղարվեստական և գիտական ենթանվանումը, բայց ստեղծագործություններ տպագրելուց և գրական շարժման հարցեր արծարծելուց ավելի զետեղում էր արվեստի տարբեր պրոբլեմներին նվիրված ելույթներ, բարձրացնում էր թատրոնի, երաժշտության, նկարչության,

82 «Խորհրդային Հայաստան», 1934, № 163:

ճարտարապետության զարգացման հետ կապված գործնական հարցեր։ Հավելվածին աշխատակցել են Ալ. Սպենդիարյանը, Ե. Չարենցը, Ռ. Թերլեմեզյանը, Արա Սարգսյանը, Գ. Գյուրջյանը, Միք. Միրզայանը, Ս. Մելիքսեթյանը, Վ. Թոթովենցը, Վ. Թերզիբաշյանը և ուրիշներ։

«Խորհրդային Հայաստան»-ի հավելվածի հրատարակությունը դադարելուց հետո նրա հեղինակային ակտիվը համախմբվում է 1926 թ. նոյեմբերից լույս տեսնող «Արվեստ» երկամսյա հանդեսի շուրջը[83]։ Վերոհիշյալ մի շարք արվեստագետներից բացի, հանդեսին աշխատակցել են նաև Սպ. Մելիքյանը, Անտոն Մայիլյանը, Աշխարհբեգ Քալանթարը, Ա. Երեմյանը, Վ. Դայֆեճյանը, Ա. Աուշաբրյանը, Ս. Օգանեզաշվիլին, Գ. Գյուրջյանը, Արտ. Այվազյանը, Կ. Ջաբարյանը և ուրիշներ։

Ինչպես նշված է «Մեր նպատակը» խմբագրականում, հանդեսը «արվեստի գործերի գնահատման հիմնական չափանիշը» համարելու էր «կյանքի, ժամանակաշրջանի հետ ունեցած կապը» և այս եկակետից էլ ջանալու էր ցույց տալ, թե «մեր օրերի գեղարվեստագետները ինչպես են արտացոլում մեր մեծ, պատմական էպոխայի էվոլյուցիան, ինչպես են վրձնում քաղաքի և գյուղի նոր սոցիալ-տնտեսական կյանքը, վերջապես, ինչպիսի գույներով են արտահայտում արթնացող ժողովրդական մասսաների նոր ձգտումներն ու հոգեբանությունը»։ Խմբագրությունը խոստանում էր նաև

83 Դեռևս 1926 թ. օգոստոսին ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնին ուղղված մի գրության մեջ նշվում էր, որ Երևանի գեղարվեստական տեխնիկումի վարիչ Վ. Դայֆեճյանը, նույն տեխնիկումի դասատու Գ. Գյուրջյանը և Պետական թանգարանի հսկիչ, բանաստեղծ Ա. Երեմյանը դիմել են իրենց սեփական միջոցներով և նախաձեռնությամբ Երևանում «Արվեստի ֆրոնտում» անունով մի երկամսյա թերթ հրատարակելու թույլտվություն ստանալու խնդրանքով։ Նրանք հայտնում էին, որ պարբերականի «գլխավոր նպատակն է՝ ցուցադրել իր մեջ խորհրդային երկրների, այն է՝ հեղափոխական Ռուսաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի նոր արվեստը (նկարչություն, երաժշտություն, թատրոն)» (տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 214, թ. 42)։ Շուտով թույլատրվում է նոր պարբերականի հրատարակությունը. այն լույս է տեսնում ոչ թե իբրև «երկամսյա թերթ», ինչպես նախատեսվում էր, այլ որպես «երկամսյա հանդես». փոխվում է նաև պարբերականի նախորոշված անվանումը, և այն կոչվում է «Արվեստ»։

«Արվեստ»-ն ուներ նկարչական և երաժշտական պատկերազարդ երկամսյա հանդես ենթանվանումը։ Ըստ երևույթին, խմբագրական կոլեգիայի մեջ մտնում էին վերոհիշյալ նախաձեռնողները, խմբագիրն էր Արամ Երեմյանը։ 16 էջ (30×23 սմ), տպաքանակը՝ 400—500։ Լույս է տեսել 8 համար։

տպագրել ինչպես հայրենական, այնպես էլ ռուսական, վրացական, աղրբեջանական, մասամբ էլ եվրոպական հին ու նոր նկարչական և երաժշտական մշակույթին, արվեստի ականավոր ներկայացուցիչներին նվիրված հոդվածներ։ «Հանդեսի լուսունդն է,—ընդգծված է խմբագրականի վերջում,— բոլոր ժողովուրդների արվեստի ջերմ ու խորը ուսումնասիրություն և եղբայրական կապ»[84]։

«Արվեստ»-ը ուշադրավ և հետաքրքրական մի շարք նյութեր, համառոտ հետազոտություններ հրապարակեց հայ նկարչության, երաժշտության, ճարտարապետության տարբեր խնդիրների վերաբերյալ, տպեց հոդվածներ վրացական երաժշտության, աղրբեջանական ժողովրդական երգերի մասին, զետեղեց դեղանկարչական գործեր, նոտագրություններ, երգերի տեքստեր։ Իր ծրագրին հետամուտ՝ հանդեսը արվեստասեր հասարակայնությանը ծանոթացնում էր ժամանակակից նկարիչների ու երգահանների ստեղծագործությանը, դասականների վաստակին՝ տպագրելով հոդվածներ, կենսագրական-ստեղծագործական հանրամատչելի դիմանկարներ։ «Արվեստ»-ում նյութեր կան Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Ստ. Ազաջանյանի, Ե. Թադևոսյանի, Վ. Խոջաբեկյանի, Վ. Գայֆեճյանի, Գ. Գյուրջյանի, Այծեմիկ Ուրարտուի, Լադո Գուդիաշվիլու, Ս. Բարխուդարյանի, Ն. Տիգրանյանի, Քր. Քուշնարյանի, Կ. Զաքարյանի և այլոց մասին։ Առանձին հոդվածներ են նվիրված Բեթհովենի մահվան 100-ամյակին, Մոցարտի ստեղծագործությանը, նկարիչ Ստ. Ներսիսյանին։ Բացի այդ, հրապարակված են մի շարք նյութեր արևելյան ժողովրդական նվագարանների, գործիքային երաժշտության ծագման ու զարգացման, պետական կոնսերվատորիայում ուսուցման կազմակերպման, ջութակի դասարանի, սիմֆոնիկ նվագախմբի մասին և այլն։

Պրոֆեսիոնալիզմի հետ մեկտեղ «Արվեստ»-ն ուներ նաև կուլտուր-լուսավորական, ուսուցողական ու կազմակերպչական միտումներ, և այս հանգամանքն ավելի որոշակի է դարձնում նրա տեղը խորհրդային Հայաստանի գրական-գեղարվեստական պարբերականների շարքում։

«Արվեստ»-ից հետո երեք տարի Հայաստանում հատուկ գեղա-

---

84 «Արվեստ», 1926, № 1—2։

գիտական բնույթի պարբերական չի հրատարակվել[85]։ Այս բացը ինչ-որ չափով ծածկում էր կուսակցական պարբերական մամուլը և հատկապես «Խորհրդային Հայաստան» թերթը, որի գեղարվեստական բաժնի նախաձեռնությամբ 1928 թ. սկզբներից կազմակերպվեց ստեղծագործական հարցերին նվիրված մի քանի բանավեճ։ Մաքերի փոխանակությունն սկսվեց Հ. Գյուլի-Քեվխյանի «Հայկինոն և մեր անելիքները» հոդվածով, որին կցված ծանոթության մեջ թերթն ընդգծում էր գեղարվեստի տարբեր ճյուղերին վերաբերող խնդիրների պարբերաբար, հանգամանալից քննարկման կարևորությունը սոցիալիստական կուլտուրայի ստեղծման ու զարգացման գործում։ Թերթն ուզում էր «կուլտուրայի և գեղարվեստի ֆրոնտի շպարպարանված, մութ մնացած հարցերի» քննությանը տալ մասսայական բնույթ և նախատեսվող բանավեճերի վրա էր հրավիրում ինչպես արվեստի բոլոր բնագավառների աշխատողների, այնպես էլ «պրոլետարական լայն մասսաների, ընթերցողների, թատրոնի և կինոյի դիտողների, երաժշտությամբ, նկարչությամբ, բանդակագործությամբ, շինարարական արվեստով հետաքրքրվողների ուշադրությունը,— մի խոսքով այն մասսայի, որը կտրված է անցյալի կուլտուրայից, տրադիցիայից, հին ծաղիկներից և բուրումներից, ցանկանում է տեսնել նոր, սոցիալիստական

85 Այն օրերին, երբ նախապատրաստվում էր «Արվեստ» հանդեսի հրատարակությունը, Հայաստանի Գեղաշխի արհմիության կենտրոնական վարչությունը ևս դիմում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնին՝ խնդրելով թույլատրել լույս ընծայելու «Բեմ և արվեստ» խորագրով ամսագիրը, որի նպատակն է լինելու՝ «1) Իդեոլոգիական պայքարի հակատում հանդիսանալ պրոլետարական արվեստի ուղիների և զարգացման հնարավորությունների գործոններից մեկը. 2) Արվեստի ասպարեզում աշխատող ձեռնարկ-հիմնարկների շուրջը հասարակայնության ստեղծումը. 3) Գեղաշխի միության պրոֆեսիոնալ խնդիրների պարզաբանումը»։ Նախատեսված էր նաև խմբագրական կոլեգիա հետևյալ կազմով՝ Դ. Դղնունի (պատ. խմբագիր), Ս. Մելիքսեթյան, Վ. Վաղարշյան (տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 7, գ. 399, թ. 36)։ Արխիվային նյութերից հայտնի է նաև, որ մամուլի բաժնի կոլեգիան 1926 թ. դեկտեմբերի 15-ի նիստում հաստատեց պարբերականի հրատարակության թույլտվության իրավունքը (տե՛ս ն. տ., գ. 400, թ. 6)։ Մի քանի օր անց, սակայն, արդեն լույս տեսավ «Արվեստ» հանդեսի անդրանիկ համարը, և, ըստ երևույթին զուգահեռականությունից խուսափելու պատրվակով, «Բեմ և արվեստ»-ի հրատարակությունն այլևս անհարատևահարմար գիտվեց. բայց ինչպես խորագիրն ու ծրագիրն են հուշում՝ այս պարբերականը ավելի շատ թատրոնի և հարակից խնդիրներ էր քննարկելու և ըստ էության, զուգահեռականությունից ավելի՝ թղթի, ֆինանսավորման և այլ հանգամանքներ են եղել նրա լույս աշխարհ չգալու պատճառը։

կուլտուրան»։ Ըստ որում՝ թերթը մի անգամ ևս հիշեցնում էր, որ «հնի» և նորի փոխհարաբերության հարցերը վճռելիս պետք է ելնել լենինյան դիրքորոշումից. «Մեռնող հնի միջից, ինչպես Վլադիմիր Իլյիչն է դրել՝ պետք է փոխառնել այն, ինչ օգտակար է պրոլետարիատի համար, վճռականորեն դեն շպրտելով այն, ինչ վնասակար է»[86]։

Հայկինոյի աշխատանքներին նվիրված բանավեճը, որի ընթացքում առաջ քաշվեցին ստեղծագործական ու կազմակերպչական բնույթի մի շարք հարցեր, շարունակվեց և ամփոփվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի ապիտրաժնի հրավիրած կինոխորհրդակցությունում[87]։ Հետագայում ևս «Խորհրդային Հայաստան»-ը տպագրեց Հայկինոյի գործունեությանը վերաբերող մի շարք նյութեր, կինո-ռեցենզիաներ, հանդիսատեսների նամակներ։ Ուշադրավ նախաձեռնություն հանդես բերեց «Ավանգարդ»-ը՝ կազմակերպելով կինոնկարների կոլեկտիվ դիտում-քննարկումներ, որոնց մասին թերթում տպագրվում էին ընդարձակ հաղորդումներ[88]։

Հետաքրքիր էր թատրոնի հարցերին նվիրված բանավեճը «Խորհրդային Հայաստան»-ի էջերում։ Բանավեճին մասնակցեցին դերասաններ, դրողներ, թատերական գործիչներ, հանդիսականներ։ Քննարկվեցին Հայաստանի պետական թատրոնի անցած ուղու, ներկա և գալիք անելիքների, բեմադրությունների որակի, գաղափարական բովանդակության, կատարողական արվեստի, բանվորական թատրոնի վիճակի բարելավման հետ կապված մի շարք խնդիրներ։ Չի կարելի չնշել, որ առողջ, օգտակար հարցադրումների հետ մեկտեղ եղան նաև «ձախ», ժխտողական, պրոլետկուլտական մտայնության, նոր թատրոնի դերի խեղ պատկերացումների դրսևորումներ։ Հոդվածներից մեկում, օրինակ, ասվում էր. «Միշտ միևնույն «նամուսը», «Զար ոգին», «Ուշ լինի, նուշ լինի»-ն... Այս պիեսները ոչ միայն խորթ են բանվորական կենցաղին, այլև իդեոլոգիապես անընդունելի»[89]։

Հիմնվելով բանավեճի նյութերի վրա և լրացուցիչ ուսումնասիրություններ անելով, ՀԿ(բ)Կ Կենտկոմը հատուկ որոշում ընդունեց Հայաստանի պետթատրոնի մասին[90]։ Որոշման հրապարակու-

---

86 «Խորհրդային Հայաստան», 1928, № 33։

87 Տե՛ս նույն տեղը, № 45։

88 Տե՛ս, օրինակ, «Ավանգարդ», 1928, № 80։

89 «Խորհրդային Հայաստան», 1928, № 78։

90 Տե՛ս նույն տեղը, № 183։

մից հետո «Խորհրդային Հայաստան»-ը տպագրեց նրանում առաջադրված խնդիրները պարզաբանող հոդվածներ, արվեստագետների նյութեր, նրանց մի շարք առաջարկներն ու նկատառումները։ Այդ նյութերն ըստ պրոբլեմատիկայի շոշափում են հետևյալ հիմնական հարցերը՝ կադրեր, խաղացանկ, թատերական հասարակայնության ստեղծում, թատրոնը տեղերում։

«Խորհրդային Հայաստան», «Ավանգարդ» թերթերում և մյուս պարբերականներում տպագրվում էին նաև երաժշտության ու կերպարվեստի առանձին հարցերին նվիրված նյութեր։ Այդ ամենը, սակայն, սիստեմատիկ, հետևողական բնույթ չուներ և թողնում էր սուր հրանցիկ անդրադարձումների տպավորություն։ Արվեստի խնդիրների քննարկումը հանրապետական մամուլում թույլ էր հատկապես 1929 թվականից մինչև հաջորդ տարվա վերջն ընկած ժամանակահատվածում։ Այս բացն այնքան զգալի էր, որ «Խորհրդային Հայաստան»-ը 1930 թ. նոյեմբերի 15-ից սկսեց հրատարակել «Արվեստի ֆրոնտում» խորագրով երկշաբաթյա հավելվածը[91], որն զգալի տեղ էր հատկացնում ինչպես շտիածո և արձակ գործերի հրատարակմանը, այնպես էլ գրաքննադատական նյութերին, ստեղծագործական հարցերի քննարկմանը։ Հավելվածի ամենաբնորոշ կողմն այն է, որ նրանում ամփոփված է ընդարձակ ու հանդամանալից խրոնիկա կինոյի ու կերպարվեստի, հանրապետության գրական, թատերական ու երաժշտական կյանքի վերաբերյալ։ Հավելվածում նյութեր ունեն Դ. Դեմիրճյանը, Ռ. Թերլեմեզյանը, Տ. Հախումյանը, Մ. Ազայանը, Ն. Զարյանը, Ա. Վշտունին, Վ. Թոթովենցը, Գ. Մահարին, Վ. Անանյանը, Հ. Մկրտչյանը և ուրիշներ։

Գրական-գեղարվեստական կազմակերպությունները վերակառուցելու մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը նոր հեռանկարներ բացեց նաև գեղագիտական մամուլի առջև. Հայաստանում ևս փաստորեն սկսվեց այդ տիպի մամուլի գործունեության նոր փուլը։

---

91 «Արվեստի ֆրոնտում» հավելվածն ուներ Գրական-գեղարվեստական ենթանվանումը։ Նյութերը պատրաստում և հրատարակությունն իրականացնում էր «Խորհրդային Հայաստան» թերթի գեղարվեստական բաժինը։ 8—12 էջ (42×30 սմ), տպաքանակը՝ 20.000։ Լույս է տեսել երեք համար (նոյեմբերի 15-ին, 29-ին և դեկտեմբերի 15-ին)։ Ճիշտ է, վերջին համարում հայտարարություն էր զետեղված այն մասին, որ «Խորհրդային Հայաստան» օրաթերթի բոլոր բաժանորդները նոր տարվանից անվճար կստանան «Արվեստի ֆրոնտում» երկշաբաթաթերթը, բայց հավելվածի հրատարակությունը չշարունակվեց։

Դրա անմիջական արտահայտությունը եղավ «Խորհրդային արվեստ» ամսագրի հիմնադրումը[92]։

Կենտկոմի որոշումից բխող ստեղծագործական, ինչպես և մասսայական-դաստիարակչական աշխատանքների ծավալման պահանջը համապատասխան կոնկրետ խնդիրներ էր դնում ազգային հանրապետություններում ստեղծված գեղագիտական պարբերականների առջև, որոնց մեծագույն մասը, այդ թվում և «Խորհրդային արվեստ»-ը, ուներ մասսայական բնույթ և նախատեսված էր միջին ընթերցողների համար։ Մյուս կողմից՝ «Խորհրդային արվեստ»-ը կոչված էր նպաստելու սոցիալիստական շինարարության ասպարեզում արվեստագետների ջանքերի միավորմանը, նրանց գաղափարական-պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացմանը, նոր կադրերի դաստիարակությանը, աջակցելու արվեստի նվաճումները ժողովրդի ամենալայն խավերում մասսայականացնելու գործին։ Շարունակելով ամսագրի անելիքների թվարկումը, խմբագրությունն այնուհետև գրում էր. «ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը և նրա լուսաբանմանը նվիրված «Պրավդա»-ի խմբագրական հոդվածը հսկայական խնդիր են դնում մեր առջև՝ ուժեղացնել մեր պայքարը ներկայիս գլխավոր վտանգ աջ օպորտունիզմի և «ձախ» վուլգարիզատորության դեմ, որի դեմ հենց ուղղված է սուր ծայրով Կենտկոմի որոշումը։ Այդ կապակցությամբ «Խորհրդային արվեստ»-ը հսկայական պայքար պիտի մղի վարոնսկիականության, լիտֆրոնտականության, ինչպես նաև ուղղակցային ինտելիգենցիայի նկատմամբ թույլ տրվող «ձախ» դիրքավորումների դեմ»[93]։

«Խորհրդային արվեստ»-ն ուներ Մեր կերպարվեստագետները. Մեր գրողները, Կինոֆրոնտում, Երաժշտություն, Մեր երաժիշտները, Ինքնագործ արվեստ, Մեր բեմի աշխատողները, Արվեստ և գրականություն (լրատու), Սատիրա և հումոր և այլ բաժիններ։

Սոցիալիստական արվեստի սկզբունքային խնդիրների պարզաբանման և հին ու խոտելի տեսակետների մերժման հետ մեկտեղ

---

92 «Խորհրդային արվեստ»-ը ՀՍԽՀ Լուսժողկոմատի օրգանն էր, ուներ Հասարակական-քաղաքական ու գեղարվեստական մասսայական պատկերազարդ ամսագիր ենթանվանումը։ Առաջին համարը լույս է տեսել 1932 թ. հոկտեմբերին. 1935—1936 թթ. եղել է երկշաբաթյա հանդես։ Մինչև 1936 թ. վերջը հրատարակվել է 74 համար։ Այդ շրջանում խմբագիրներ եղել են Ա. Վշտունին և Ս. Մելիքսետյանը, ի տեղի խմբագրի ստորագրել է Հմ. Սիրասը։ 34—42 էջ (30×23 սմ), տպաքանակը՝ 2000—5000։ Ունեցել է միացյալ համարներ։ 1940 թ. № 4-ից վերանվանվել է «Սովետական արվեստ»։

93 «Խորհրդային արվեստ», 1932, № 1, էջ 1։

ամսագիրը քննարկում էր կուլտուրական հեղափոխության իրականացման գործնական հարցերը՝ լուրջ ուշադրություն դարձնելով աշխատավորության գեղագիտական դաստիարակությանը, արվեստասեր հասարակայնության նորօրյա ճաշակի կազմավորմանը։ Ամսագիրը պարբերաբար անդրադառնում էր Հայաստանի պետական թատրոնի, Լենինականի, Կիրովականի, Դիլիջանի, Ալավերդու, Ղամարլուի թատրոնների, գյուղական խմբերի բեմադրություններին, երաժշտական հաստատությունների գործունեությանը, Հայկինոյի աշխատանքներին, կազմակերպում էր սցենարների և պիեսների քննարկումներ, ծանոթացնում առանձին արվեստագետների ստեղծագործական լաբորատորիային... Ուշադրավ են ռեժիսյորի, դերասանի և հանդիսատեսի, գրողի և կոմպոզիտորի, դրամատուրգի և թատրոնի փոխհարաբերության, ինքնուրույն դրամատուրգիայի, խաղացանկի, դերասանի վարպետության, բաղաքների վերահատակագծումների, գրքի ձևավորման, պարարվեստի, ժողովրդական ինքնագործունեության զարգացման և այլ խնդիրների վերաբերյալ հոդվածները, նկատառումները, առաջարկները ու տեսակետները։

Այս ամենը շատ բանով կօգնեն այսօր արվեստի պատմաբաններին՝ ոչ միայն վերարտադրելու խորհրդային հայ թատրոնի, կերպարվեստի, նկարչության, երաժշտության, ճարտարապետության զարգացման ընթացքը, այլև հետևելու ժամանակի գեղագիտական ըմբռնումների ելևէջներին։ Եվ այդ ժամանակ դժվար չի լինի նկատել, որ ճիշտ ու առողջ տեսակետների, գաղափարական ու պրոֆեսիոնալ առումով սկզբունքային հարցադրումների կողքին եղել են նաև ծուռ ու «ձախ» միտումներ, որոնք հետևանք էին արվեստի և գրականության խնդիրների վերաբերյալ կուսակցության ուղղ կողմնորոշման սխալ հասկացողության։ Այսպես՝ խոսելով երաժշտական ինքնագործունեության մեջ բեկում մտցնելու անհրաժեշտության մասին, հոդվածագիրներից մեկը այնուհետև շարունակում էր. «Սոցիալիստական շինարարության տեմպերի էնտուզիազմով համակող երգի ու նվագի փոխարեն երբեմն երգում ու նվագում են հին կենցաղի փտած, միանգամայն անթույլատրելի երգեր՝ «Սիրուհիս, քեզ համար», «Ծիծեռնակ, ծիծեռնակ» և այլն»[94]։ Մի ուրիշ անգամ այսպանվում էին այն կոմպոզիտորները, որոնք «հեղափոխական թեմային միացնում էին ժողովրդական երգեր,

94 «Խորհրդային արվեստ», 1932, № 1, էջ 27։

կամ ժողովրդական երգերի ոճով նոր եղանակներ էին գրում», կարուկ կերպով պահանջվում էր անպայման քննադատական վերաբերմունք ունենալ նույնիսկ... «զարգացումն ժողովրդական աշխատանքային բնույթի երգերին»[95] և այլն։ Այս ամենը, ինչ խոսք, բացահայտորեն հակասում էր «ձախ» վուլգարիզատորության դեմ պայքարն ուժեղացնելու վերաբերյալ խմբագրության վերոհիշյալ նպատակադրմանը և անհետևողականություն էր մտցնում ամսագրի գործունեության մեջ։

Առավել նպատակասլաց ու արդյունավետ էր ամսագրի աշխատանքը խորհրդային հայ արվեստագետների վաստակը ընթերցող լայն շրջաններին ներկայացնելու ուղղությամբ։ Այստեղ ևս, ինչպես և նախորդ «Արվեստ» երկամսյա հանդեսում, մատուցման հիմնական ձևը ստեղծագործական դիմանկարն էր։ Ինչպես «հնից եկող», այնպես էլ նոր սերնդի արվեստագետների ընդհանուր-հանրամատչելի բնութագրումները, նաև դասականների արժեքավորումը,— եթե մանավանդ չմոռանանք, որ այդ ամենը արվում էր հիմնականում հանդիսատեսներկայացնող տոնով,— ոչ միայն անուղղակի կերպով հաստատում էր ստեղծագործական առողջ ավանդները շարունակելու անհրաժեշտությունը, այլև զգալի չափով փոխհատուցում էր «ձախ» և վուլգար-սոցիոլոգիական այն նկրտումները, որ տեղ էին գտնում ամսագրի այլ բնույթի մի շարք հոդվածներում ու տեսական վերլուծությունների մեջ։ Բացի այդ, տրված են ընդարձակ ինֆորմացիաներ պետական թատրոնի, կոնսերվատորիայի, պետական գրադարանի, կուլտուրայի թանգարանի և մշակութային այլ օջախների մասին, տպագրված են խորհրդային հայ գրողների չափածո և արձակ մի շարք երկեր, նրանց ստեղծագործություններին նվիրված հոդվածներ ու դրախոսականներ... Մի խոսքով՝ ամսագիրը ծավալել էր կուլտուր-լուսավորական լայն գործունեություն։

«Խորհրդային արվեստ»-ը հիմնականում ճիշտ էր ըմբռնում և կիրառում իր ընդհանուր նպատակադրումը, այն է՝ «լինել գեղագիտական մասսայական հանդես, որը միջին ընթերցողի համար մատչելի ձևով պարզաբանելու է արվեստի տեսական-ստեղծագործական խնդիրները, լիովին արտահայտելու է արվեստի տարբեր բնագավառների... անելիքները և հանդիսանալու է միաժամանակ արվեստի լավագույն ինֆորմատորը»[96]։ Իսկապես ա-

95 Նույն տեղում, № 2, էջ 8—9։
96 Նույն տեղում, № 1, էջ 2։

սած՝ սրանում էլ հենց պետք է տեսնել այս ամսագրի հիմնական ծառայությունը քննարկվող ժամանակաշրջանում։

* * *

Այսպիսով, մեր հանրապետության պարբերական մամուլը ի մոտո քննարկում էր սոցիալիստական հայ գրականության և արվեստի ձևավորման ու զարգացման խնդիրները՝ առանձին վրիպումներով հանդերձ հիմնականում պաշտպանելով գաղափարական-էսթետիկական ճշմարիտ ըմբռնումներն ու տեսակետները։ Մամուլը ոչ միայն արտացոլում էր սոցիալիստական մշակույթի ստեղծման համար ծավալված սուր պայքարը, այլև զգալի չափով ուղղություն էր տալիս այդ պայքարին՝ տեսակետների ու կարծիքների բազմազանության մեջ առանձնացնելով, ընդգծելով առողջն ու ընդունելին, բացասելով սխալն ու վնասակարը։ Գրական-գեղարվեստական և գեղագիտական մամուլի հետ միասին այստեղ զգալի դեր խաղացին նաև հասարակական-քաղաքական ուղղություն ունեցող պարբերականները։ Ուշադրավ էին երգիծական մամուլի անդրանիկ օրգանները։

Ամփոփում

Կուլտուրական հեղափոխության իրականացման ասպարեզում մեր հանրապետության պարբերական մամուլի աշխատանքը հատկանշվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Պարբերական մամուլը պատշաճ տեղ հատկացրեց ժողովրդական կրթության և կուլտուր-լուսավորական աշխատանքների կազմակերպման խնդիրներին: Կարևոր արժեք և հասարակական հնչեղություն ունեցան մամուլի էջերը հանուն ուսուցչության գաղափարական-պրոֆեսիոնալ հիշտ դաստիարակության և մանկավարժության նոր սկզբունքների արմատավորման: Նշանակալից դեր խաղաց մամուլը անգրագիտության վերացման, քաղաքական լուսավորության կազմակերպման, պոլիտեխնիկ ուսուցման ծրագրի կենսագործման ասպարեզում, նպաստելով կյանքի և դպրոցի կապերի ամրապնդմանն ու ընդլայնմանը: Նոր խնդիրներին համապատասխան բացվեցին մանկավարժական պարբերականներ,

որոնք զգալի գործ կատարեցին և հարստացրին մեր հանրապետության մամուլի պատմությունը:

2. Պարբերական մամուլը հետևողականորեն պայքարեց հանուն նոր մարդու հասարակական-բարոյական կերպարի ձևավորման: Թերթերն ու հանդեսները, ելնելով սոցիալիստական հասարակական հարաբերությունների հաստատման շահերից՝ խստագույնս դատապարտում էին բարոյական ու կենցաղավարական հին նորմերի ու ըմբռնումների մնացուկները մարդկանց գիտակցության մեջ և առօրյայում: Մամուլն արդյունավետ աշխատանք տարավ մասնավորապես երիտասարդության աշխարհընկալողությունն ընդլայնելու, ֆիզիկական կոփվածությունն ապահովելու ուղղությամբ, արծարծեց աշխատավորության առողջապահության, նոր կենցաղավարության, կանանց դերի բարձրացման հարցերը: Կարևոր նշանակություն ստացավ մամուլի հակակրոնական պայքարը: Համապատասխանաբար ստեղծվեցին մամուլի նոր օրգաններ:

3. Պարբերական մամուլը մեծապես նպաստեց սոցիալիստական հայ գրականության և արվեստի ձևավորմանն ու զարգացմանը: Թերթերն ու հանդեսները եռանդուն կերպով ֆինարկեցին նոր գրականության ստեղծման հնարավորությունների ու զարգացման հեռանկարների, դասական ավանդների օգտագործման, իրականության նշմարտացի արտացոլման, գրողի և արվեստագետի հասարակական պարտքի, նրանց կոչման ու դերի հարցերը: Ելնելով կոմունիստական կուսակցության համապատասխան որոշումներից, մամուլն աշակցեց գրականության և արվեստի գործիչների համախմբմանը սոցիալիստական ռեալիզմի սկզբունքների հիման վրա, ֆինաղատեց պրոլետկուլտականության թե՛ տեսական և թե՛ գործնական դրսևորումները, անցյալի առողջ ավանդները համահարելու փորձերը, ուշադրության կենտրոնում պահեց գրական երիտասարդության դաստիարակության ու անի խնդիրները: Կազմավորվեց և հետաքրքիր ուղի անցավ գրական-գեղարվեստական ու գեղագիտական մամուլը, որն արտացոլեց մեր գրականության և արվեստի զարգացման բարդ ու հակասական ընթացքը: Պարբերական մամուլի պայքարի հիմնական բովանդակությունն այս ասպարեզում գրականության և արվեստի կուսակցականության ու ժողովրդայնության սկզբունքների պաշտպանությունն էր, գրականությունն ու արվեստը սոցիալիստական շինարարության խնդիրներին ծառայեցնելու նպատակադրումը:

4. Պարբերական մամուլն իր ծնողով ու հետագա զարգացմամբ կուլտուրական հեղափոխության հաջողություններին պերճախոս վկայություններից մեկն է մեր հանրապետությունում. բայց դրանից ավելի՝ այդ մամուլը աշխատավորության քաղաքական դաստիարակության և կուլտուրականացման զորավոր միջոց է նախ և առաջ, կուլտուրական հեղափոխության իրականացման այնպիսի մի արդյունավետ գործոն, որի նշանակությունը դժվար է գերագնահատել:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

ԽՍՀՄ-ում սոցիալիզմի պատմական հաղթանակը օրակարգի մեջ դրեց նոր սահմանադրության ստեղծման հարցը։ Խորհուրդների համամիութենական VII համագումարը (1935 թ. հունվար-փետրվար) անհրաժեշտ համարեց մշակել նոր սահմանադրության նախագիծ։ Շուտով ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով, որի կազմած նախագիծը Համկ(բ)Կ Կենտկոմում և ԽՍՀՄ Կենտգործկոմի նստաշրջանում քննարկվելուց և հաստատվելուց հետո, 1936 թ. հունիսի 12-ին հրապարակվեց մամուլում և դրվեց համաժողովրդական քննարկման։

Այս կապակցությամբ նոր պատասխանատու խնդիրներ ծառացան մեր ողջ երկրի, այդ թվում և ազգային հանրապետությունների մամուլի օրգանների առջև։ Հսկայական անելիք ունեին պարբերականները ԽՍՀՄ Հիմնական օրենքի պարզաբանման ու պրոպագանդման, աշխատավորների առաջարկների ու ցանկությունների հրապարակման գործում։ Ակտիվորեն մասնակցելով նախագծի քննարկմանը, մամուլը լայն հնարավորություն էր ստանում խորացնելու և առավել արդյունավետ դարձնելու ժողովրդի քաղաքական-դաստիարակական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքը, դրվատելու սոցիալիզմի ուղիով մեր հայրենիքի պատմական առաջընթացը՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Ինչպես ճիշտ կերպով նկատում էր «Պրավդա»-ն՝ սահմանադրությունը հանդիսացավ սոցիալիզմի համար, կոմունիստական կուսակցության մեծ գործի համար «ապիտացիա և պրոպագանդա մղելու անզուգական զենք»։ Նախագծի համաժողովրդական քննարկումը, աշխատավորների արտահայտած կարծիքները, արած լրացումներն ու առաջարկները,— խնդիր էր դնում կուսակցության կենտրոնական օրգանը,— «որպես բուն խորհրդային, սոցիալիստական դեմոկրատիայի ամենափայլուն արտահայ-

տությունների մեկը, պետք է պատշաճ տեղ գտնեն մեր մամուլի էջերում և բոլոր կուսակցական, խորհրդային ու արհմիութենական կազմակերպությունների աշխատանքում»[1]։

Մեր հանրապետության պարբերական մամուլը ևս հիմնովին ձեռնամուխ եղավ քաղաքական-հասարակական կարևորագույն նշանակություն ունեցող այդ գործին։ Ինչպես հայերեն, այնպես էլ ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող պարբերականներում, հատկապես թերթերում, ավելի քան հինգ ամիս հրապարակվում էին աշխատավորական ամենալայն խավերից ստացվող նամակները, բանվորների, կոլտնտեսականների, մտավորականների, երիտասարդության մտորումները. օրինական հպարտություն դժվարին ու անձնազոհ պայքարով ձեռք բերված սոցիալիզմի պատմական նվաճումների համար, երախտագիտություն կոմունիստական կուսակցության հանդեպ, բուռն հայրենասիրություն, ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբվածության և եղբայրության նվիրագործում, հավատարմություն երդում սոցիալիզմի և կոմունիզմի գործին,— ա՛յս էր այդ բազում նյութերի ներքին պաթոսը։

Ինչպես հայտնի է, նոր սահմանադրությամբ վերացվում էր Անդրֆեդերացիան, և ստեղծվում էին առանձին միութենական հանրապետություններ։ Այս կապակցությամբ մեր հանրապետության մամուլի առջև խնդիր դրվեց հատուկ ուշադրություն դարձնել կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության ազգային քաղաքականության պրոպագանդային։ Թերթերն ու հանդեսները հանդամանորեն պարզաբանում էին այն խոշոր դերը, որ կատարել էր Անդրֆեդերացիան իր գոյության 14 տարիներին՝ Անդրկովկասում սոցիալիստական շինարարության հաղթանակն ապահովելու, ազգերի եղբայրությունն ամրապնդելու, ազգային կադրեր ստեղծելու, ֆեդերատիվ հանրապետությունների բազմակողմանի զարգացման հասնելու գործում։ Անդրֆեդերացիան լիովին լուծեց իր առջև դրված պատմական խնդիրները։ Արդեն հասունացել էր անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերատիվ միավորման սիստեմը վերացնելու հարցը։ Այդ էին պահանջում Անդրկովկասի հանրապետությունների հետագա զարգացման շահերը։ Այս տեսանկյունից մոտենալով հարցին, պարբերական մամուլը մերկացնում և պատմության օրինակներով դատապարտում

---

[1] «Правда», 13 сентября 1936 г.

էր «բոլոր այն նախկին նացիոնալ-ուկլոնիստներին, որոնք այսօր փոփոխում են այն մասին, որ իբր թե Անդրկովկասյան ֆեդերացիայի լիկվիդացիան՝ դա իրենց գործի արդարացումն է»։ «Մեր կարևորագույն խնդիրն է,— գրում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— պահպանել և է՛լ ավելի զարգացնել ու խորացնել Անդրկովկասյան ֆեդերացիայում կոփված մեր ժողովուրդների սերտ կապը, ծավալել է՛լ ավելի լայն ինտերնացիոնալ դաստիարակչական աշխատանք»[2]։ Մամուլի գործունեության այս կողմն ավելի ընդգծվեց ՀՍԽՀ նոր սահմանադրության համաժողովրդական քննարկման ընթացքում, որ սկսվեց 1936 թ. հոկտեմբերից։

1936 թ. դեկտեմբերի 5-ին ԽՍՀՄ խորհուրդների համամիութենական VIII արտակարգ համագումարը հաստատեց սահմանադրությունը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Հիմնական օրենքը. մեր երկրում սոցիալիզմի հաղթանակը ամրագրվեց օրենսդրական կարգով։ Հաջորդ տարվա մարտի 23-ին Հայաստանի խորհուրդների IX արտակարգ համագումարում հաստատվեց ՀՍԽՀ նոր սահմանադրությունը. ամփոփվեցին սոցիալիզմի կառուցման պայքարում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Հայաստանի աշխատավորների ձեռք բերած նվաճումները։

ԽՍՀՄ սահմանադրության ընդունումից հետո պարբերական մամուլի առջև խնդիր դրվեց՝ պրոպագանդել այդ պատմական փաստաթղթի վեհ գաղափարները, ակտիվորեն պայքարել նրանց կենսագործման համար, լայնորեն լուսաբանել Գերագույն խորհրդի առաջիկա ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ընթացքը։ Մամուլի այս նոր պարտավորություններին էր նվիրված «Պրավդա»-ի 1936 թ. դեկտեմբերի 13-ի առաջնորդողը, որ հաջորդ օրն արտատպեց «Խորհրդային Հայաստան» թերթը՝ իբրև ուղեցույց նաև մեր հանրապետության պարբերականների համար։ «Սոցիալիզմի երկրի քաղաքացիների ստեղծագործական ակտիվությունն ու ինքնագործունեությունը խրախուսող հասարակական կազմակերպությունների մեջ,— գրում էր «Պրավդա»-ն,— բոլշևիկյան մամուլը հատուկ տեղ է գրավում... Նոր սահմանադրության իրականացումը հաղարավոր հարցեր կառաջացնի աշխատավորների մեջ։ Նրանք պատասխանի համար դիմելու են իրենց թերթերին։ Նրանք իրենց յուրաքանչյուր հարցին պետք է ստանան

2 «Խորհրդային Հայաստան», 1936, № 137։

պարզորոշ, սկզբունքային, սպառիչ պատասխան»։ «Պրավդա»-ն խնդիր էր դնում մամուլի աշխատանքը վերակառուցել-հարմարեցնել սահմանադրության գործադրմամբ սկսված հասարակական նոր պայմաններին, ավելի սերտացնել կապը աշխատավոր զանգվածների հետ, առավել արդյունավետությամբ նպաստել նրանց գաղափարական-քաղաքական աճին։ «Մեր մամուլը վաստակ ունի, այդ ոչ ոք չի վիճարկի, ոչ ոք չի խլի,— եզրակացնում էր կուսակցության կենտրոնական օրգանը։—Սակայն միայն անցյալի վաստակն այսօր բավական չէ. կուսակցությունը պահանջում է, որ մեր թերթերը, խորհրդային ժուռնալիստները պայքար մղեն ու աշխատեն այնպես, որ տպագիր խոսքի հեղինակությունն ու ներգործության ուժն ավելի ու ավելի աճեն»։

Առհասարակ պետք է նշել, որ ինչպես ԽՍՀՄ նոր սահմանադրության համաժողովրդական քննարկման ընթացքում, այնպես էլ նրա հաստատումից հետո սուր կերպով դրվեցին մամուլի աշխատանքների բարելավման, մասնավորապես խորհրդային ժուռնալիստի կոչման, նրա նոր պարտականությունների, գաղափարական և պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման, ժուռնալիստիկայի մարտունակությունն ու ակտիվությունը ուժեղացնելու, տպագիր խոսքի ներգործության ոլորտն ընդլայնելու խնդիրները, որոնց «Պրավդա»-ն նվիրեց երկու հատուկ խմբագրական հոդված («Կոմունիզմի մամուլը»[3] և «Է՛լ ավելի բարձրացնել մամուլի աշխատողների կուլտուրան»[4])։ «Խորհրդային ժուռնալիստը,— ընդգծում էր «Պրավդա»-ն,— նախ և առաջ կոմունիզմի մեծ բանակի մարտիկն է», հետևապես ժուռնալիստիկայի ասպարեզում արդյունավետ աշխատանք կարող է կատարել «միայն նա, ով ամբողջովին, մինչև արյան վերջին կաթիլը նվիրված է սոցիալիզմի գործին»։ Այդ վեհ կոչումը մեծ պարտականություններ է դնում մեր մամուլի բոլոր աշխատողների վրա. լավ մարտիկ լինելու համար անհրաժեշտ է զինվել գաղափարական-քաղաքական պատրաստականության անսպառ լիցքերով, խոր գիտելիքներ ամբարել էկոնոմիկայից, փիլիսոփայությունից, պատմությունից ու գրականությունից, հասնել պրոֆեսիոնալ վարպետության։ «Խորհրդային ընթերցողը,— նկատում էր «Պրավդա»-ն,— չի ուզում հաշտվել ապիտության, խալտուրայի և զորշության հետ... Դիլետանտությունը և թն-

3 Տե՛ս «Правда», 5 мая 1936 г.

4 Տե՛ս «Правда», 26 октября 1936 г.

թեամբ ամենագիտությունը տեղ չպետք է ունենան խորհրդային մամուլում... Մեր կուսակցությունը բոլոր իրավունքները ավեց ժուռնալիստներին, բացի մեկից՝ վատ աշխատելու իրավունքից. ավելի քի՛չ շաբլոն, մակերեսայնություն, ավելի խո՛րն ուսումնասիրել մեր իրականությունը, նրանում կատարվող ամենաբարդ պրոցեսները»:

Այդ ճշմարիտ պահանջ-առաջարկների կենսագործմանը, սակայն, մեծապես խոչընդոտեց արդեն իսկ ծնունդ առած Ստալինի անձի պաշտամունքը, որին զգալի տուրք տվեց նաև պարբերական մամուլը: Բազմաթիվ հոդվածներում, ակնարկներում և գրական ստեղծագործություններում մեկ անհատի ծառայություններին վերագրվեցին սոցիալիզմի ուղիով մեր բազմազգ հայրենիքի պատմական առաջընթացի այն բոլոր հաջողությունները, որ նվաճվել էր միլիոնավոր մարդկանց անձնվեր աշխատանքով՝ կոմունիստական կուսակցության ամենօրյա ղեկավարությամբ: Մի շարք նյութերում գերիշխում էին քաղաքական շանտաժն ու չհիմնավորված մեղադրանքները, ի հայտ էր գալիս անձնական հաշվեհարդարի մոլուցքը: Այս ամենը հակասում էին խորհրդային մամուլի ոգուն, սոցիալիզմի կառուցման պայքարում ծնված ու ամրապնդված սոցիալիստական ժուռնալիստիկայի այն առողջ ավանդներին, որոնց հետևելով մեր պարբերական մամուլը իրավամբ վաստակել է նոր կյանքի կառուցման տարիների համբավը: Անհատի պաշտամունքի մթնոլորտը զգալի զոհեր խլեց նաև մամուլի աշխատողների, ժուռնալիստների հին ու փորձված բանակի շարքերից. հանիրավի ամբաստանվեցին և հալածանքների ենթարկվեցին բազմաթիվ ազնիվ, կուսակցության լենինյան գաղափարներին, սոցիալիզմի գործին նվիրված լրագրողներ, թերթերի ու հանդեսների խմբագիրներ, աշխատակիցներ, մամուլի եռանդուն կազմակերպիչներ:

Սակայն անհատի պաշտամունքը չէր կարող կասեցնել մեր երկրի հաղթական առաջընթացը. կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ աշխատավոր զանգվածները՝ հանքերում ու գործարաններում, նորակառույցների շինդների մեջ, կոլտնտեսային դաշտերում, գիտության օջախներում, դոմենյան հնոցների առջև՝ ամենուրեք շարունակում էին լարված ու անձնուրաց պայքարը, կոփելով մեր բազմազգ հայրենիքի հզորությունը, հարթելով հետագա վերելքի ուղիները: Պարբերական մամուլն արտացոլում էր ժողովրդի այդ հերոսական ջանքերը, լավի ու կատարյալի նրա ձգտումները: Եվ իսկապես, եթե մամուլի բաղում նյութերից հա-

ննեք-մի կողմ դնենք անհատի պաշտամունքին տրված ակամա տուրքը, ապա դժվար չի լինի տեսնել, որ մնացած ամբողջը ըստ էության աշխատանքի մարդկանց կյանքի ու պայքարի պատմությունն է։ Այս առումով էլ տեղին է այն նկատումը, թե անհատի պաշտամունքի թողած հետքը խորհրդային մամուլի վրա կարելի է համեմատել այն մոխրի հետ, որ ծածկում է վառվող օջախը. ժողովուրդը, կուսակցությունը, պարբերական մամուլը այրվում էին ստեղծագործ խանդավառությամբ՝ չնայած անհատի պաշտամունքի ճերմակ մոխրին, որ ժամանակավորապես, մինչև թարմաշունչ քամին, ծածկել էր մշտավառ օջախը[5]։

Մեր երկրի պարբերական մամուլը գաղափարակշռական ու կազմակերպչական մեծ գործ կատարեց սոցիալիստական շինարարության հետագա ընթացքում, Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում, ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հետպատերազմյան հնգամյակների տարիներին։

Բուռն կերպով աճեց և զարգացավ մամուլը ՍՄԿԿ XX համագումարից հետո։ Կուսակցության XXI, XXII և XXIII համագումարների որոշումները նոր պատասխանատու խնդիրներ առաջադրեցին մամուլի աշխատողներին։ Պարբերական մամուլը հանդես գործունեություն ծավալեց՝ արտացոլելով աշխատավորների ամենօրյա սիրանքները կոմունիստական շինարարության բոլոր ասպարեզներում։

Տարեցտարի ընդլայնվում են մեր մամուլի գաղափարական ներգործության ոլորտները, աճում է նրա մասսայականությունը, մեծանում է թերթերի ու հանդեսների ցանցը։ 1969 թ. մայիս ամսի տվյալներով Խորհրդային Միությունում 65 լեզվով հրատարակվում էին մոտ 7.500 թերթ և ավելի քան 5.100 ամսագիր ու այլ պարբերական, որոնց միանվագ տպաքանակը անցնում էր 260 միլիոնից։ Հայաստանում լույս էին տեսնում 80-ից ավելի մասսայական թերթ ու մոտ 100 հանդես՝ մեկ ու կես միլիոն ընդհանուր միանվագ տպաքանակով։

Մեր երկրում պարբերական մամուլը աշխատավորների կոմունիստական դաստիարակության անփոխարինելի միջոցներից մեկն է, հատու դնենք՝ սոցիալիզմի և իմպերիալիզմի միջև մղվող գաղափարական սուր պայքարում։

---

5 *Տե՛ս Դж. Ахмедов.* Периодическая печать Дагестана, Махачкала, 1963, *էջ 174։*

РЕЗЮМЕ

В книге исследуется периодика—газеты, еженедельники, журналы (около 300 названий), издававшиеся в Армянской ССР с 1920 по 1936 г., показываестя ее роль в восстановлении народного хозяйства, в социалистической индустриализации, в коллективизации сельского хозяйства и осуществлении культурной революции.

* * *

В период после установления Советской власти и до контрреволюционного мятежа дашнаков (февраль 1921 г.) в Армении издавались газеты «Коммунист» (на армянском языке), «Коммунист» (на русском языке) и «Ахкат гюхаци» («Крестьянин-бедняк»)—органы ЦК КП(б) Армении.

Деятельность этих газет преследовала следующие цели: осветить и оценить путь, пройденный трудящимися Армении в период от Майского восстания 1920 года до провозглашения Советской власти; раскрыть историческое значение установления Советской власти в Армении и содействовать началу мирного созидательного труда; продолжать и углублять политическое воспитание и интернациональное сплочение трудящихся, начатое большевистской печатью еще в условиях подполья.

С ликвидацией февральского контрреволюционного мятежа 1921 года печать продолжала разоблачать политику дашнаков. Значительную работу проделали советские органы печати и в период ликвидации Зангезурской авантюры летом 1921 года.

Построение нового общества потребовало самоотверженной работы во всех областях жизни. В связи с этим печать усилила идейно-воспитательную работу среди трудящихся, используя новые формы и методы агитации и пропаганды, соответствующие изменившимся условиям.

Улучшение идейно-воспитательной работы было тесно связано с борьбой против фразерства, выразившегося в отрыве пропаганды и агитации от практики социалистического строительства. В этом отношении примечательны выступления «Правды», опыт которой сыграл решающую роль в перестройке работы партийной печати на местах, в том числе и в Армении.

Газеты «Хорурдаин Айастан», «Наша правда» (на русском языке), журналы «Известия ЦК Коммунистической партии Армении» (на русском языке), «Коммунист» (орган Ереванского городского комитета партии), а также уездные органы печати отводили много места организации и расширению партийной работы.

Работа периодической печати по интернациональному воспитанию трудящихся получила новый размах в период организации Закфедерации и СССР. Выступая против создания Закфедерации, идеологи буржуазии направляли острие своей критики против ленинской национальной политики коммунистической партии, стремясь внести раскол между закавказскими народами и оттолкнуть их от русского народа. Однако эти попытки, как подчеркивала пресса, с самого начала были обречены на провал: после установления Советской власти в Закавказье возникла национальная солидарность народов, а бескорыстная военная, политическая, экономическая и культурная помощь Советской России способствовала укреплению дружбы армянских, грузинских и азербайджанских трудящихся с великим русским народом. Естественно, что в центре внимания армянской советской печати было такое веское свидетельство пролетарского интернационализма, как помощь Советской России Армении в преодолении экономических и политических трудностей, в укреплении основ Советской власти и создании предпосылок строительства социализма.

Эта помощь не только в значительной степени удовлетворила насущные нужды трудящихся Армении, но и сыграла неоценимую роль в морально-политическом смысле: она укрепила в массах веру в Советскую власть, способствовала интернациональному воспитанию трудящихся, явилась лучшим подспорьем в борьбе против буржуазно-националистической идеологии.

Оценка ведущей роли русского народа в национальном и социальном возрождении всех советских народов и народностей была и остается одной из актуальных проблем армянской советской печати.

Периодическая печать Советской Армении широко разъясняла массам ленинскую национальную политику Коммунистической партии, помогала претворению ее в жизнь в отношении проживавших в республике нацменьшинств (азербайджанцев, курдов, греков, ассирийцев). Немалую роль сыграли органы печати, выходившие на языках нацменьшинств,— газеты «Ранчпар» («Крестьянин»), «Занги» («Зангу»), «Кызыл-Шафак» («Красная Заря»)—на азербайджанском языке и «Рйя Таза» («Новый Путь»)—на курдском языке.

Важным направлением идеологической работы армянской советской печати являлась борьба против троцкизма и других антипартийных оппозиционных группировок, за чистоту марксизма-ленинизма, за единство рядов партии. Эта борьба с новой силой развернулась после смерти В. И. Ленина. В этот период в армянской советской прессе и публицистике особо выделялась тема «Ленин и Армения».

Периодическая печать отводила много места на своих страницах экономическим вопросам. Газеты и журналы разъясняли значение нэпа для оживления сельского хозяйства и промышленности, укрепления союза рабочего класса и беднейшего крестьянства, для подъема благосостояния трудящихся.

В ходе восстановления народного хозяйства актуальное значение приобрели пропаганда новой экономической политики и борьба против ее извращений. «Новая экономическая политика,— писала «Советакан Айастан»,— не есть тактика компромиссов, как полагают многие, а более усовершенство-

ванное и целенаправленное оружие, посредством которого мы должны упрочить хозяйственное здание нашей Советской родины».

Первые шаги мирного хозяйственного строительства в Армении связаны с мероприятиями по орошению земель. Компартия и правительство республики при этом руководствовались известным письмом В. И. Ленина коммунистам Кавказа, идеи которого широко пропагандировались на страницах печати.

Велики заслуги периодической печати в укреплении союза рабочего класса с трудовым крестьянством, в пропаганде простейших форм кооперации, на основе которой осуществлялось восстановление сельского хозяйства. Печать разъясняла, что только через кооперацию многомиллионное крестьянство может быть вовлечено в социалистическое строительство. Она неоднократно напоминала о вреде прожектерства, требовала исходить из реальных условий и вести необходимую разъяснительную и организаторскую работу. В этом направлении широкую работу развернули органы кооперативной печати: «Айастани кооперация» («Кооперация Армении»), «Айкоп тегекату» («Вестник Айкопа»), «Верацнунд» («Возрождение»), «Айастани гюхатитесакан кооперация» («Сельскохозяйственная кооперация Армении») и др.

Задачи восстановления и развития сельского хозяйства обстоятельно обсуждались на страницах сельской печати. В этом отношении особенно отличились газета «Мачкал» («Пахарь») и журнал «Гюхатитесакан кянк» («Сельскохозяйственная жизнь»). Обобщенный ими богатый и многообразный материал представляет значительный научный интерес для изучения истории крестьянства Советской Армении.

В годы восстановления народного хозяйства известное развитие получила и промышленность, в связи с чем периодическая печать придавала важное значение укреплению организованности рабочих, обеспечению их активного участия в преодолении хозяйственных трудностей. Обстоятельно освещались задачи организации промышленности в соответствии с ее ресурсами, восстановления старых предприятий и создания новых, проблемы правильного сочетания союзных и

республиканских интересов, эффективного использования рабочей силы, целесообразной организации труда и ряд других практически важных вопросов. Периодическая печать отводила много места и профсоюзной работе, подготовке рабочих кадров, профессиональному образованию молодежи. «По стечению исторических обстоятельств,— метко отмечалось в прессе,— пролетариат дал больше **специалистов по революции**, чем **революционеров-специалистов.** Этот недостаток надо восполнить путем подготовки специалистов из рабочей молодежи». Особенно выделялись органы профсоюзной печати: «Банвори хоск» («Рабочее слово»), «Тпагракан банвор» («Печатник»), «Арестакцакан шаржум» («Профсоюзное движение»), «Ашхатанк» («Труд»), «Ашхатанки тегекату» («Вестник труда») и др.

В восстановлении народного хозяйства активно участвовали также местные органы печати, молодежная и военная периодика: «Кармир гюхаци» («Красный крестьянин»), «Кармир Лори» («Красный Лори»), «Мурч у мач» («Молот и плуг»), «Кармир Ширак» («Красный Ширак»), «Банвор» («Рабочий»), «Кармир ранчпар» («Красный земледелец»), «Еритасард комунист» («Молодой коммунист»), «Авангард», «Кармир зинвор» («Красный воин»), «Гехапохутян пахак» («Страж революции») и др.

Процесс формирования и развития периодической печати в республике направляли отделы печати при Заккрайкоме РКП (б) и ЦК КП (б) Армении.

В годы восстановления народного хозяйства деятельность периодической печати Армении характеризуется следующими основными направлениями:

1. Исходя из ленинского понимания новых задач, вставших перед партией в условиях пролетарской диктатуры, периодическая печать развернула широкую агитационно-пропагандистскую и организаторскую работу, стала одним из важных рычагов общественного воздействия.

2. Периодическая печать способствовала мобилизации трудящихся на борьбу против внутренней контрреволюции.

3. Периодическая печать сыграла значительную роль в перестройке партийно-политической работы, в усовершенст-

вовании методов и форм идейного воздействия на трудящихся, в разоблачении троцкизма и укреплении ленинского единства партии.

4. Периодическая печать систематически поднимала вопросы интернационального воспитания трудящихся, развернула широкую пропаганду национальной политики Коммунистической партии, разъясняла историческое значение Закфедерации и СССР.

5. Периодическая печать повседневно освещала задачи хозяйственного строительства, сыграла важную роль в осуществлении новой экономической политики.

* * *

С окончанием восстановительного периода перед печатью встали новые задачи, связанные с социалистической реконструкцией народного хозяйства республики. На страницах газет и журналов широко освещались решения XIV съезда ВКП (б), подчеркивалось значение победы над троцкистско-зиновьевской оппозицией для перспектив строительства социализма. При этом характерно, что печать приписывала историческую заслугу разгрома оппозиции не отдельным деятелям партии, а всему съезду, называя его «высшим и наиболее авторитетным органом ленинизма», «коллективной мыслью пролетарской партии». Печать подчеркивала провал стремлений международной реакции, связывавшей свои надежды с победой оппозиции.

В период борьбы с оппозицией и в дальнейшем печать чаще стала обращаться к задачам улучшения идеологической работы. Остро ставилась проблема глубокого овладения марксистско-ленинским учением, поскольку на данном этапе социалистического строительства идеологический фронт становился «важнейшим для партии и нашего общего дела».

Газеты и журналы Советской Армении вели последовательную борьбу против дашнакской идеологии, обнажая контрреволюционную сущность этой партии. Приводя в своих обзорах отрывки из дашнакских газет «Арач» («Вперед»), «Усабер» («Вестник надежды») и «Айреник» («Родина»), советская армянская печать разоблачала вздорные бредни

относительно «скорого краха большевистского режима». Советские газеты и журналы, экземпляры которых отправлялись в зарубежные страны, правдивым освещением хода социалистического строительства оказывали большую помощь прогрессивным силам зарубежных армян в их борьбе против дашнакской пропаганды. Печать отмечала чувства солидарности зарубежных армян с Советской Арменией.

Повышение действенности идеологической работы, пропаганда марксистско-ленинской теории в тесной связи с практикой социалистического строительства требовали улучшения форм и методов партийной работы. В соответствии с этими задачами были перестроены отделы партийной жизни в газетах, уточнены функции отдельных журналов, их направление, основаны новые органы печати: «Ленинян уги» («Ленинский путь»), «Кусакцакан шинарарутюн» («Партийное строительство»), «Пропагандист», «Агитатори блокнот» («Блокнот агитатора»), «Еритасард большевик» («Молодой большевик») и др.

На основе решений XIV съезда и XV конференции ВКП (б) печать широко пропагандировала программу индустриализации и ленинский план построения социализма в нашей стране, разъясняла особенности социалистической индустриализации, ее коренное отличие от индустриализации капиталистической. Особое внимание обращалось на разработку и практическое применение таких важных мероприятий, как режим экономии, рационализация промышленности, повышение производительности труда, снижение себестоимости, укрепление трудовой дисциплины и проверка выполнения. В этом отношении периодическая печать действовала в двух основных направлениях: во-первых, газеты и журналы разъясняли и пропагандировали значение каждого из этих мероприятий с точки зрения решения общих задач социалистического строительства; во-вторых, они ставили эти вопросы перед конкретными отраслями производства и конкретными предприятиями, заостряя внимание на недостатках, промахах и нерешенных проблемах. В этом также проявлялась организаторская функция печати. Немало места отводилось материалам, в которых освещался передовой опыт рабочих и отдельных предприятий.

Периодическая печать республики вела последовательную борьбу за удешевление и совершенствование госаппарата, против проявлений бюрократизма и других отрицательных явлений. С этой целью регулярно публиковались рабселькоровские письма, в которых вскрывались конкретные недостатки и содержались практические предложения по их устранению.

Важнейшим средством ускорения темпов социалистического строительства являлись критика и самокритика. Самокритика может дать желаемый результат только в том случае, отмечала печать, если будут обеспечены ее творческий характер, ее массовость. В развертывании критики и самокритики значительную роль сыграли «Листки Рабоче-Крестьянского Контроля» и «Листки легкой кавалерии». Разумеется, периодическая печать самокритично подходила также и к своей работе.

Газеты и журналы шире стали освещать вопросы социалистического преобразования деревни после исторических решений XV съезда ВКП (б). В начальный период коллективизации пресса правильно ориентировалась в этом вопросе, борясь за осуществление ленинских принципов. Остро ставились такие вопросы, как усиление союза с середняком, борьба с кулачеством и правым уклоном, улучшение работы среди батрачества и др. Печать разоблачала тактику кулацких элементов, методы их борьбы.

В ходе коллективизации появляются новые органы печати: «Батрак», «Гюхатитесакан банвор» («Сельскохозяйственный рабочий»), «Гюхи комунист» («Сельский коммунист»), «Социалистакан мрцаканч» («Призыв к социалистическому соревнованию»), «Спаркооперациян гюхум» («Потребкооперация в деревне») и др.

Периодическая печать Армении выполняла поставленные перед ней задачи, связанные с развитием колхозного движения. Так продолжалось до известных ошибок, допущенных в период сплошной коллективизации, когда печать отдала дань субъективистским искажениям.

Известное решение ЦК ВКП (б) от 14 марта 1930 года, направленное против отклонений от партийной линии в кол-

хозном движении, внесло коренной поворот и в работу печати. Газеты и журналы публично признавались в собственных ошибках—обстоятельство, которое имело не формальное, а принципиальное значение в моральном и психологическом смысле, делало более непринужденной борьбу за устранение тех искажений, в появлении которых имела долю вины и сама печать.

Периодическая печать снова вышла на передний край борьбы, обращая при этом особое внимание на политическое и хозяйственное укрепление колхозов.

Наряду с партийными газетами и журналами улучшила свою работу и сельскохозяйственная пресса. К этому времени в Армении стал выходить ряд новых органов печати: «Колхозник», «Социалистакан агрономия» («Социалистическая агрономия»), «Аграраин фронтум» («На аграрном фронте»), «Социалистакан гюхатитесутюн» («Социалистическое сельское хозяйство») и др. В колхозном строительстве немаловажная роль выпала на долю местных газет и печатных органов политотделов МТС и совхозов.

Агитационно-пропагандистская и организаторская роль прессы с новой силой сказалась в период всенародной борьбы за осуществление первого и второго пятилетних планов развития народного хозяйства. Газеты и журналы публиковали самый разнообразный материал — от информаций до специальных разворотов, насыщенных данными о перспективах, которые открывали пятилетки в различных областях промышленности, сельского хозяйства и культурного строительства.

Периодическая печать придавала принципиальное значение освещению пятилетних планов с точки зрения национальной политики партии, которая направлялась на обеспечение быстрых темпов хозяйственного и культурного развития национальных республик. Она подчеркивала, что народно-хозяйственные планы, исходя из общей программы социалистического строительства, гармонически сочетают интересы всех народов нашей страны. Газеты и журналы акцентировали интернациональный характер социалистическо-

го строительства, необходимость расширения сотрудничества и взаимопомощи национальных республик.

Периодическая печать стала мощным фактором расширения социалистического соревнования, действенным средством осуществления лозунга «Пятилетку — в четыре года!». Газеты выступили инициаторами широкой производственной переклички и обмена передовым опытом, пропагандировали новые, социалистические методы труда, выдвигали вопросы улучшения хозяйственного руководства.

На страницах газет помещались критические материалы, направленные на устранение ошибок и недостатков в организации соревнования, против проявлений формализма в этом деле. Значительно возросла роль профсоюзной печати и заводских многотиражек.

В годы второй пятилетки появились новые органы печати—городские, рабочие и вечерние газеты, а также периодические издания, в которых освещались задачи овладения новой техникой. Это— «Банворакан Ереван» («Рабочий Ереван»), «Арвацаин банвор» («Рабочий-ударник»), «Ереванн банвор» («Ереванский рабочий»), ежедневная газета «Коммунист» (на русском языке), журналы «Техникан масанерин» («Техника—массам»), «Тиранетенк техникаин» («Овладеем техникой») и др.

Борьба периодической печати Советской Армении за социалистическую перестройку народного хозяйства характеризуется следующими основными направлениями:

1. Периодическая печать последовательно выступала против антипартийных течений и группировок за единство партии, за победу ленинизма, пропагандировала выработанную Коммунистической партией генеральную линию построения социализма в нашей стране.

2. Периодическая печать развернула борьбу по осуществлению ленинского плана социалистической индустриализации в республике. Принципиально важное значение имело освещение путей и методов социалистической индустриализации, а также вопросов, связанных с проведением режима экономии, овладением новой техникой и т. п.

3. Периодическая печать принимала деятельное участие

в борьбе за коллективизацию сельского хозяйства республики, выступала против кулацкой идеологии и левацкой практики, разъясняла задачи организационно-хозяйственного укрепления колхозов и дальнейшего упрочения союза рабочего класса и крестьянства, пропагандировала передовой опыт колхозов и совхозов.

4. Значительны заслуги периодической печати в мобилизации сил трудящихся на досрочное выполнение первого и второго пятилетних планов развития народного хозяйства, на обеспечение подъема промышленности и сельского хозяйства, на развертывание социалистического соревнования, стахановского движения. Газеты и журналы широко обсуждали вопрос социалистического преобразования народного хозяйства, пропагандировали достигнутые успехи во всех областях жизни, подчеркивали руководящую и направляющую роль Коммунистической партии, международное значение строительства социализма в СССР.

* * *

Одной из важнейших задач периодической печати явилась борьба за осуществление ленинской программы культурной революции.

Первоначально наиболее злободневной была задача ликвидации неграмотности. Газеты и журналы в связи с этим разъясняли ленинское положение о том, что в неграмотной стране нельзя строить коммунистическое общество. Пресса нашла своеобразную форму обучения грамоте.

Усилия печати по ликвидации безграмотности в республике получили новый размах после XV съезда ВКП (б), подчеркнувшего необходимость всемерного повышения уровня культуры города и деревни. Немалую роль в этом сыграла комсомольская и крестьянская периодика, а также специальные издания, посвященные вопросам ликвидации безграмотности. Газеты и журналы по различным поводам поднимали вопросы формирования и внедрения новых принципов педагогики, идейного воспитания и профессионального обучения учителей, радикального изменения содержания учебников и учебных программ. Эти задачи широко обсуждались, в част-

ности, на страницах педагогической периодики: «Жоговурдакан лусаворутюн» («Народное просвещение»), «Комунистакан лусаворутюн» («Коммунистическое просвещение»), «Культуракан фронт» («Культурный фронт»), «Хорурдаин дпроц» («Советская школа»), «Хорурдаин манкаварж» («Советский педагог») и др.

Органы печати со всей остротой выдвигали требования организации профтехнического и политехнического образования, улучшения работы рабфаков, развития высшего образования, обеспечения тесной связи науки и практики социалистического строительства.

Важной областью культурного строительства в то время являлась работа по устройству нового быта, раскрепощению женщин, а также борьба против религии. Все это печать рассматривала как необходимые условия для социального преобразования страны.

Эта сторона деятельности периодической печати вызвала большой общественный резонанс и была значительной не только с точки зрения затронутых ею актуальных нравственных и политических вопросов, но и в смысле выяснения перспектив развития социалистического общества.

Активную борьбу за новый быт развернула комсомольская печать, в частности газета «Авангард». На ее страницах печатались статьи, письма и реплики, бичующие мещанство, пьянство, безнравственность, браки, заключенные в корыстных целях, критиковались старые, отжившие обычаи. Печать выступала против попыток подменить лозунг «жить культурно» созданием мещанского быта. Она способствовала усилению культурно-массовой работы и повышению ее эффективности. В материалах печати критиковалось то ошибочное мнение, будто борьба за культуру предполагает лишь удовлетворение «высоких требований» отдельных личностей или же воспитание культурных людей вообще. «Это представление абсурдно и нелепо,— отмечала газета «Авангард»,— оно затемняет сущность и перспективы нашей борьбы за культурность. Наша задача способствовать созданию таких условий, чтобы гражданин нашей страны мог стать не просто культурным человеком, а активным и обладающим высокой

культурой борцом за рабоче-крестьянское дело, дело социализма».

Печать уделяла большое внимание развитию спорта, здравоохранения и физической культуры. Эти вопросы и определяли основное содержание органов медицинской и спортивной прессы. Это — «Бжшикакан андес» («Медицинский журнал»), «Арохчапаутюн Айастанум» («Здравоохранение в Армении»), «Арохч кенцах» («Здоровый быт»), «Арохчапаутян фронтум» («На фронте здравоохранения»), «Арвацаин физкультурник» («Ударник-физкультурник»), «Физкультураев туризм» («Физкультура и туризм»), «Кармир спорт» («Красный спорт») и др.

Развитие культурно-просветительной работы среди женщин, вовлечение их в различные сферы хозяйственной, общественной и культурной жизни составляли главное содержание журнала «Айастани Ашхатаворун» («Работница Армении»).

Одним из важных элементов культурной революции являлась борьба за преодоление религиозных предрассудков. В этом также велика была заслуга периодической печати. Газеты и журналы регулярно печатали научно-популярные материалы, помогавшие преодолению религиозных предрассудков и расширению культурного кругозора. «Антирелигиозная борьба становится частью нашей общей идеологической классовой борьбы и культурной революции,— отмечалось в журнале «Ленинян уги»,— невозможной без преодоления темноты, отсталости и дикости, без преодоления отношений эксплуатации».

Антирелигиозные материалы появлялись на страницах прессы особенно часто накануне церковных празднеств. Это были в большинстве случаев популярные беседы о возникновении религиозных предрассудков, корреспонденции и письма, в которых разоблачались гадалки, знахари, чудодействия «местных святых» и т. д. В атеистическом воспитании трудящихся большую роль сыграл двухнедельный журнал «Анаствац» («Безбожник»).

Нашей прессе приходилось преодолевать примиренческие настроения, которые выражались двояко. Находи-

413—34

лись люди, считавшие, что активное выступление против религии является ненужной затратой сил, поскольку практика социалистического строительства, якобы, сама по себе осудила на отмирание религиозные предрассудки. Печать указывала, что интересы строительства новой жизни, напротив, требуют последовательной борьбы с этими предрассудками. Другие утверждали, что религиозные праздники и старинные обряды уже приобрели чисто формальное значение, так как люди перестали верить в бога, и если крестьянин, скажем, идет на богомолье, то только ради того, чтоб поразвлечься. Носители этой точки зрения, теряя чувство действительности, считали религию уже отжившей свой век, умершим и похороненным явлением. Они считали антирелигиозные выступления прессы совершенно лишними, утверждали, что «писать против религии значит» оживлять мертвеца». Печать подчеркивала, что подобное мнение вредно и опасно. Антирелигиозная борьба армянской советской прессы постепенно приобретала более последовательный и принципиальный характер. Периодика широко пропагандировала основы материалистического мировоззрения, достижения науки, обнажая каждое проявление религиозной идеологии.

Велика роль печати в формировании и развитии литературы социалистического реализма, искусства и науки в новых общественных условиях. Неослабное внимание прессы к этим проблемам было совершенно закономерным, так как культура являлась той областью, где происходили острые столкновения между пролетарской и буржуазной идеологией.

В начале 20-х годов в советской армянской действительности возникли первые литературные объединения и группировки: «Союз армянских работников искусства» и группа «Мурч» («Молот») в Ереване, «Общество армянских литераторов» и «Дарбноц» («Кузница») в Тбилиси, «Кура» («Домна») в Москве и т. д. В конце 1922 года формируется «Ассоциация армянских пролетарских писателей», которая несколько позже создает свои отделения в Ленинакане, Алаверди, Караклисе и в других местах. Выходят первые литературно-художественные и эстетические периодические органы: «Мурч» («Молот»), «Пайкар» («Борьба»), «Верелк»

(«Подъем»), «Нор акос» («Новая борозда»), «Норк», «Арвест» («Искусство») и т. д. В развитии советской армянской литературы важную роль сыграли журналы «Пайкар» и «Норк». Достойны внимания также сатирические издания «Шепт» («Ударение»), «Зурна», «Кармир моцак» («Красный комар»).

В литературной жизни Советской Армении огромное значение имела резолюция ЦК ВКП (б) от 28 июня 1925 года о политике партии в области художественной литературы. Она послужила руководством правильной организации дальнейшей работы литературной печати. Газеты и журналы непримиримее относились к проявлениям тенденций, чуждым коммунистической идеологии, к попыткам доказать невозможность создания социалистической литературы, резче критиковали нетерпимое отношение к «попутчикам».

Литературная жизнь республики развивалась сложными и противоречивыми путями — в процессе борьбы противоположных концепций и различных литературных группировок. В спорах затрагивались теоретические вопросы улучшения качества пролетарской литературы, разнообразия ее стилей и тем, проблемы тесной связи с современностью, борьбы со схематизмом и литературщиной. Наряду с постановкой серьезных и нужных вопросов в печати проявлялись представления и мнения, носившие отпечаток вульгарного социологизма, принципиальные дискуссии зачастую подменялись сведением личных счетов.

Обсуждая задачи литературы и искусства, периодическая печать придавала важное значение расширению их интернациональной основы. «С победой пролетариата,— подчеркивала «Хорурдаин Айастан»,— литература, как и все отрасли искусства, становится одним из сильнейших оружий интернационального воспитания трудящихся масс».

Печать поднимала вопросы укрепления взаимосвязи и творческого сотрудничества советских писателей, подчеркивала необходимость борьбы против буржуазной идеологии, мещанства и оппортунизма в области литературы и искусства.

В постановлении ЦК ВКП (б) от 23 апреля 1932 года «О перестройке литературно-художественных организаций»

ставились новые задачи перед литературной и художественной печатью. Говоря о консолидации творческих сил вокруг задач социалистического строительства, печать подчеркивала важность применения ленинских принципов в литературе и искусстве, в оценке культурного наследия прошлого. Новые органы литературной и эстетической печати— «Гракан терт» («Литературная газета»), «Хорурдаин гракануцюн» («Советская литература»), «Хорурдаин арвест» («Советское искусство») — отводили много места обсуждению творческих вопросов, проблемам взаимоотношения социалистического содержания и национальной формы литературы и т. д. Серьезное внимание уделялось новому литературному поколению. Немало работы предстояло на этом поприще, в частности, печатным органам молодых писателей— «Ериттрох» («Молодой писатель»), «Гракан серунд» («Литературное поколение») и др.

После съездов писателей Армении и СССР в республике значительно ослабла борьба между литературными группировками. Но этот процесс оздоровления литературных нравов был кратковременным. Связанный с культом личности субъективистский произвол оставил свой след и в области литературы и искусства. Однако, несмотря на это, армянская советская литература и искусство продолжали развиваться, создавая свои ценности.

В осуществлении культурной революции работа печати республики характеризуется следующими основными направлениями:

1. Периодическая печать отводила достойное место задачам народного образования и культурно-просветительной работы. Широкое общественное звучание получили выступления прессы по вопросам идеологического воспитания и профессионального образования учителей, внедрения новых принципов педагогики. Значительную роль сыграла печать в ликвидации безграмотности, в политическом просвещении масс, в осуществлении программы политехнического обучения, способствуя этим укреплению и расширению связей между школой и жизнью.

2. Периодическая печать последовательно боролась за формирование нового человека. Газеты и журналы, исходя из интересов укрепления социалистических общественных отношений, осуждали пережитки старых норм и представлений в сознании и быту людей. Плодотворной была работа в области коммунистического воспитания молодежи. Важное значение имела антирелигиозная борьба прессы.

3. Периодическая печать способствовала развитию армянской советской литературы и искусства. Газеты и журналы обсуждали такие вопросы, как создание новой литературы и перспективы ее развития, правильное использование классического наследия, правдивое отражение действительности, общественный долг писателя и художника. Печать последовательно проводила линию на объединение деятелей литературы и искусства на основе принципов социалистического реализма, осуждала как теоретические, так и практические проявления пролеткульта, попытки пренебречь вековыми традициями культурного наследия, постоянно заботилась о воспитании и творческом росте литературной молодежи.

Литературно-художественная, эстетическая и научная пресса отразила сложный и противоречивый путь развития нашей литературы, искусства и науки. Основное содержание борьбы в этой области — защита принципов партийности и народности, стремление использовать науку и искусство в интересах социалистического строительства.

* * *

Досрочно выполнив второй пятилетний план развития народного хозяйства, Советский Союз по объему промышленной продукции занял первое место в Европе и второе в мире, по темпам роста перегнал главные капиталистические страны и превратился в крупную индустриальную державу. В деревне победил колхозный строй, невиданного подъема достигли народное образование, наука и культура. В стране Советов в основном завершилось строительство социализма.

Огромные успехи были достигнуты в национальных республиках, в том числе в Армении. Удельный вес тяжелой промышленности в народном хозяйстве составил здесь 84%. Расширился ряд крупных индустриальных предприятий, были построены новые заводы и цехи. По сравнению с 1932 г. стоимость валовой продукции в 1937 году возросла с 85,6 миллиона рублей до 214,3 млн рублей. 88,7% крестьянских хозяйств были объединены в коллективные хозяйства. Стоимость валовой продукции сельского хозяйства в 1937 году составила 99,1 млн рублей против 60,8 млн рублей в 1932 году. Большой прогресс был достигнут в культурно-бытовом обслуживании населения, в области здравоохранения, народного образования, науки, литературы и искусства.

Все эти достижения периодическая печать оценивала как результат самоотверженного труда рабочего класса, колхозного крестьянства и трудовой интеллигенции под руководством Коммунистической партии, как яркое проявление дружбы, патриотизма и интернациональной солидарности народов СССР.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

I. Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպե՞ս կազմակերպել մրցությունը, երկեր, 4-րդ հրատ., հ. 26։
«Սովետական իշխանության հերթական խնդիրները» հոդվածի ուրվագիրը, հ. 27։
Սովետական իշխանության հերթական խնդիրները, հ. 27։
Մեր թերթերի բնույթի մասին, հ. 28։
Փոքրիկ պատկերներ մեծ հարցեր պարզելու համար, հ. 28։
ՌԿ(բ)Կ VIII համագումարը. 18—23 մարտի 1919 թ., հ. 29։
Մեծ նախաձեռնություն, հ. 29։
Մոսկվա—Կազան երկաթուղու առաջին շաբաթօրյակից դեպի համառուսաստանյան մայիսմեկյան շաբաթօրյակը, հ. 31։
Երիտասարդության միությունների խնդիրները, հ. 31։
Ճառ ժողովրդական կրթության նահանգական և գավառական բաժինների քաղուսվարների համառուսաստանյան խորհրդակցությունում, հ. 31։
Հեռագիր Հայաստանի ռազմական ռևոլյուցիոն կոմիտեի նախագահին, հ. 31։
Սովետների համառուսաստանյան VIII համագումարը, հ. 31։
Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ ընդունվելու պայմանները, հ. 31։
Ճառ բանվորների և գյուղացիների դեպուտատների Մոսկվայի սովետի պլենումի նիստում, հ. 32։
Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին, հ. 32։
ՌԿ(բ)Կ Համառուսաստանյան X կոնֆերենցիան, 26—28 մայիսի, 1921 թ., հ. 32։
Լուսժողկոմատի աշխատանքի մասին, հ. 32։
Նոր տնտեսական քաղաքականության մասին, հ. 33։
Բանդյուղտնեսչության խնդիրների, դրանց ըմբռնման և կատարման հարցի շուրջը, հ. 33։
Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիա կազմելու առաջարկի նախագիծը, հ. 33։
ՌԿ(բ)Կ XI համագումարը. 27 մարտի—2 ապրիլի 1922 թ., հ. 33։
Դրություն քաղբյուրոյին մենշևիկյան շովինիզմի դեմ պայքարելու մասին, հ. 33։
Ճառ համառուսաստանյան ԿԳԿ-ի IX գումարման IV սեսիայում, 31 հոկտեմբերի 1922 թ., հ. 33։

Ռուսաստանի ռևոլյուցիայի հինգ տարին և համաշխարհային ռևոլյուցիայի հեռանկարները, հ. 33։
Էջեր օրագրից, հ. 33։
Նամակ «Экономическая газета»-ի խմբագրությանը. հ. 33։
Կոոպերացիայի մասին, հ. 33։
Մեր ռևոլյուցիայի մասին, հ. 33։
ՌԿ(բ)Կ XII համագումարը, հ. 33։
Ինչպես վերակազմենք բանդյուղտեսչությունը, հ. 33։
Լավ է քիչ, բայց լավ. հ. 33։
Նամակ համագումարին, հ. 36։
Ն. Օսինսկուն, հ. 36։

2. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Խորհրդային իշխանության 20 տարին, Երևան, 1938։
Խորհրդային Հայաստան. 1920—1925 (ժողովածու), Երևան, 1926։
Խորհրդային Հայաստանը թվերով (վիճակագրական տեղեկատու). 1923—1927 թթ., Երևան, 1928։
Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Երևան, 1935։
Հայաստանի կոմունիստական կուսակցության IV համագումարի բանաձևերը, Երևան, 1926։
ՀԱԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշումը ՀԱԿ(բ)Կ Անդրբերկոմի, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի կենտկոմների զեկուցումների առթիվ, Երևան, 1931։
ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ միացյալ պլենումի բանաձևերը, Երևան, 1931։
ՀԿ(բ)Կ V համագումարի բանաձևերը, Երևան, 1928։
ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու նյութերը ՀԿ(բ)Կ VI համագումարին, Երևան, 1929։
ՀԿ(բ)Կ VI համագումարի բանաձևերն ու որոշումները, Երևան, 1929։
ՀԿ(բ)Կ VII համագումարի որոշումները, Երևան, 1930։
ՀԿ(բ)Կ VIII համագումարի բանաձևերը, Երևան, 1932։
Պարտիական և սովետական մամուլի մասին (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 1955։
ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, մաս I, Երևան, 1954, մաս II, մաս III, 1955։

Второй съезд коммунистических организаций Закавказья. 19—23 марта 1923 г., Стенографический отчет. Тифлис, 1923.
Восстановление народного хозяйства Армянской ССР (материалы и документы за 1921—1928 г.), Ереван, 1958.
Культурное строительство Армянской ССР, Ереван, 1962.
Народное хозяйство Армянской ССР. Ереван, 1957.
Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода, Эривань, 1928.
Образование СССР (сборник документов, 1917—1924), М.—Л., 1949.

Первый Закавказский съезд коммунистических организаций. Стенографический отчет, Тифлис, 1922

Пятый съезд коммунистических организаций Закавказья. Ноябрь 1927 г., Стенографический отчет, Тифлис, 1928.

Седьмой съезд коммунистических организаций Закавказья. Ноябрь 1934 г., Стенографический отчет, Тифлис, 1934.

Социалистическое строительство Армянской ССР, 1920—1940, Ереван, 1940.

Третий съезд коммунистических организаций Закавказья. 13—15 мая 1924 г., Стенографический отчет, Тифлис, 1924.

Четвертый съезд коммунистических организаций Закавказья. 5—9 декабря 1925 г., Стенографический отчет, Тифлис, 1926.

Шестой съезд коммунистических организаций Закавказья. Июнь 1930 г., Стенографический отчет, Тифлис, 1930

3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Խորհրդային Հայաստանում 1920—1936 թթ. հրատարակված պարբերականներ*

Ա. ԹԵՐԹԵՐ

«Ազիտ թերթիկ», Երևան, 1933։

«Ազրիջայի սովխոզ», Մարտունի, 1934—1935։

«Աղբատ գյուղացի», Երևան, 1921։

«Աղբատ գյուղացի», Նոր Բայազետ, 1921։

«Այգեգործ կոլխոզնիկ», Աշտարակ, 1931—1936։*

«Անասնապահական ֆրոնտում», Աղբարա, 1933—1936։*

«Անասնապահ կոլխոզնիկ», Ապարան, 1934—1936։*

«Անասնապահության մարտական դիրքերում», Բազարչայ, 1934։

«Աշխատավոր կնոջ թերթիկ», Երևան, 1921։

«Աշխատավոր կնոջ թերթիկ», Նոր Բայազետ, 1922։

«Ավանգարդ», Երևան, 1923—1936։*

«Արդյունաբերական կոոպերացիա», Երևան, 1931—1935։

«Բամբակի համար», Վաղարշապատ, 1931—1936։*

«Բամբակի ֆրոնտում», Ղամարլու, 1931։

«Բանվոր», Ալեքսանդրապոլ—Լենինական, 1923—1936։*

«Բանվորական Երևան», Երևան, 1933—1934։

«Բանվորի խոսք», Ալեքսանդրապոլ, 1921։

---

* *Աստղանշված պարբերականների հրատարակությունը շարունակվել է։*

«Բայազետի կոլխոզնիկ», Նոր Բայազետ, 1935—1936*։
«Բատրակ», Երևան, 1928—1930։
«Բոլշևիկ», Մարտունի, 1933—1934։
«Բոլշևիկ անասնապահ», Ստեփանավան, 1933—1936*։
«Բոլշևիկյան դրոհ», Ղարաբիլիսա, 1933։
«Բոլշևիկյան դրոշով», Բալին, 1932—1936*։
«Բոլշևիկյան կոլխոզ», Ղամարլու, 1933—1934։
«Բոլշևիկյան տեմպով», Ղուրդուղուլի, 1931—1936*։
«Բոլշևիկյան ուղի», Նոր Բայազետ, 1934։

«Գեղարքունիք», Նոր Բայազետ, 1926։
«Գյուղատնտեսական բանվոր», Երևան, 1931։
«Գյուղ-դրոշ», Նոր Բայազետ, 1925։
«Գրական թերթ», Երևան, 1932—1936*։
«Դրոհ», Երևան, 1934։

«Դեպի խորհուրդները», Էջմիածին, 1921։
«Դեպի կոոպերացիա», Երևան, 1929։
«Դեպի համատարած», Դյուզբենդ, 1930։

«Երիտասարդ բանվոր», Ալեքսանդրապոլ, 1922։
«Երիտասարդ բանվոր», Երևան, 1922։
«Երիտասարդ կոմունիստ», Երևան, 1921—1923։
«Երիտասարդ մանկալ», Իջևան—Դիլիջան, 1922—1923։
«Երիտասարդ ռաշպար», Գորիս, 1922—1923։
«Երկաթուղային» («Ստալինյան ուղեղիր»), Լենինական, 1931—1936*։
«Երևանի բանվոր», Երևան, 1934։

«Զանգեզուրի կոմունիստ», Գորիս, 1920։

«Լենինի դրոշով», Ն. Ախտա, 1932—1936*։
«Լեռնագործ», Արթիկ, 1931—1936*։
«Լրաբեր», Երևան, 1923։

«Խորհրդային գյուղ», Նոր Բայազետ, 1930—1935։
«Խորհրդային դպրոց», Երևան, 1936*։
«Խորհրդային Զանգեզուր», Գորիս, 1921։
«Խորհրդային Հայաստան», Երևան, 1921—1936*։
««Խորհրդային Հայաստան»-ի երեկոյան հրատարակություն», Երևան, 1934—1935։

«Կարմիր բանակ», Երևան, 1920—1921։
«Կարմիր բանակային թերթ», Երևան, 1935—1936*։
«Կարմիր Բասարգեչար», Բասարգեչար, 1931—1936*։
«Կարմիր գյուղացի», Էջմիածին, 1921—1922։

«Կարմիր գոլիան», Երևան, 1921։
«Կարմիր երիտասարդ», Ալեքսանդրապոլ, 1921—1922։
«Կարմիր երիտասարդ», Էջմիածին, 1922։
«Կարմիր երիտասարդ», Նոր Բայազետ, 1923։
«Կարմիր երկրային», Ղարաբիլիսա, 1932—1934։
«Կարմիր Զանգեզուր», Դորիս, 1920։
«Կարմիր գինվոր», Երևան, 1921—1936*։
«Կարմիր Լոռի», Ջալալ-օղլի, 1921—1923։
«Կարմիր մանկավարժ», Երևան, 1932։
«Կարմիր միլիցիա», Երևան, 1933—1936*։
«Կարմիր Շիրակ», Ալեքսանդրապոլ, 1921։
«Կարմիր սպորտ», Երևան, 1933—1934, 1936*։
«Կարմիր ուղի», Ալեքսանդրապոլ, 1922—1923։
«Կարմիր ուղի», Մեղրի, 1923։
«Կարմիր օրեր», Երևան, 1921։
«Կարմրադրոշ մոպրական», Ստեփանավան, 1934։
«Կաուչուկի համար» («Կիրովեց»), Երևան, 1934—1936*։
«Կոլխոզային դյուղ», Մեղրի, 1935—1936*։
«Կոլխոզային ուղի» («Կոլխոզուղի»), Մարտունի, 1933—1936*։
«Կոլխոզի դիրքերում», Ստեփանավան, 1933—1934։
«Կոլխոզնիկ», Երևան, 1935։
«Կոլխոզնիկ», Քեշիշքենդ, 1931—1934։
«Կոլխոզ ֆրոնտ», Վաղարշապատ, 1933—1934։
«Կոմունիստ», Ալեքսանդրապոլ, 1920—1921։
«Կոմունիստ», Երևան, 1920—1921։
«Կուլտուրական ֆրոնտ», Երևան, 1932—1935։

«Հարվածային անասնապահ», Նոր Բայազետ, 1934։
«Հարվածային անասնապահ», Սեմյոնովկա, 1934—1936*։
«Հարվածային բանվոր», Երևան, 1933—1934։
«Հարվածային բրիգադ», Ղամարլու, 1931—1932։
«Հարվածային կառուցող», Երևան, 1931—1933։
«Հարվածային կարող», Երևան, 1932—1933։
«Հարվածային կոլխոզնիկ», Դավալու, 1933—1934։
«Հարվածային կոլխոզնիկ», Իջևան, 1934—1936*։
«Հարվածային Համամլու», Ղարաբիլիսա, 1931—1933։
«Հարվածային ոչխարաբուծ», Արազդայան, 1934։
«Հարվածային տեմպ», Ղամարլու, 1932—1934։
«Հարվածային տեքստիլշչիկ» («Մանածագործ»), Լենինական, 1930—1936*։
«Հարվածային տրակտորիստ», Սարդարապատ, 1932—1933։
«Հարվածային ուսանող», Երևան, 1933—1936*։

«Զկնորս բանվոր», Նոր Բայազետ, 1925—1926։

«Ճակնդեղի ֆրոնտում», Լենինական, 1934։

«Մանկալ», Երևան, 1922—1931։
«Մարտական դիրքերում», Երևան, 1932։
«Մարտական տեմպ», [Ղարաբիլիսա], 1932։
«Մեքենաշինարար», Երևան, 1931—1936*։
«Մշակ Հայաստանի», Երևան, 1921։
«Մուրճ ու մանգ», Իջևան—Դիլիջան, 1921—1923։

«Նոր Արևելք», Երևան, 1922—1923։
«Նոր կյանք», Ղարաբիլիսա, 1926։

«Շամշադինի կոլխոզնիկ», Բերդ, 1934—1936*։
«Շեշտ», Երևան, 1923։
«Շիրակի ռանչպար», Ալեքսանդրապոլ, 1921—1923։

«Պայքար պղնձի համար» («Պղնձի համար»), Վանաձոր, 1929—1936*։
«Պատանի լենինական», Երևան, 1924։
«Պատկում», Ալեքսանդրապոլ, 1923։
«Պատկում», Երևան, 1922։
«Պիոներ կանչ», Երևան, 1925—1936*։
«Պղնձի ֆրոնտում», Ալավերդի, 1931—1936*։
«Պողպատե գիծ», Ղարաբիլիսա, 1934—1935։
«Պրոլետար», Ալեքսանդրապոլ, 1921։
«Պրոլետարական ճարտարապետ» («Խորհրդային ճարտարապետ», «Կարմիր ճարտարապետ»), Երևան, 1932—1936*։
«Պրոլետպրող», Երևան, 1925։

«Ռանչպար», Նոր Բայազետ, 1921—1923։

«Սիսիանի հարվածային», Սիսիան, 1933—1936*։
«Սովետներ», Նոր Բայազետ, 1922։
«Սովխոզ ֆրոնտ», Սամսիա, 1934—1936*։
«Սոցարշավ», Ղարաբիլիսա—Կիրովական, 1931—1936*։
«Սոցիալիստական անասնապահություն», Ստեփանավան, 1931—1936*։
«Սոցիալիստական արշավ» («Սոցարշավ»), Երևան, 1930—1931։
«Սոցիալիստական գյուղատնտեսություն», Երևան, 1931—1935։
«Սոցիալիստական ոչխարաբուծություն», Ալագյազ, 1934։
«Սոցիալիստական տեմպով», Քանաքեռ, 1934—1936*։
«Ստալինյան արշավ», Դիլիջան, 1934—1936*։
«Ստալինյան կոլխոզ», Սարդարապատ, 1933—1934։
«Ստալինյան ուղի», Լենինական, 1933—1934։
«Սուլիչ», Լենինական, 1931։

«Վորոշիլովյան հրաձիգ», Ղարաբիլիսա, 1934։

«Տաղնապ—Тревога», Ղարաբիլիսա—Երևան, 1929, 1932։
«Տպագրական բանվոր», Երևան, 1922—1927։

«Տպագրիչ», Երևան, 1927—1928։
«Տպագրող», Լենինական, 1930—1932։
«Տրակտորիստ», Լենինական, 1933։

«Ցեմ-ֆրոնտ», Դավալու—Արարատ, 1934—1936*։

«Քաղքաժնի խոսք», Ն. Ախտա, 1933—1934։
«Քաղուսուցման ֆրոնտում», Երևան, 1934։
«Քանաքեռչին», Երևան, 1932—1936*։
«Քիմիայի ֆրոնտում», («Քիմշին»), Ղարաքիլիսա—Կիրովական, 1932—1936։

«Коммунист», Ереван, 1921.
«Коммунист», Ереван, 1934—1936*.
«Наша Правда», Ереван, 1921—1922.
«Социалистическое животноводство», Степанаван, 1931—1936*.

«Большевик сүр'этн», Веди, 1931—1936*.
«Гызыл Шәфәг», Јереван, 1929—1936*.
«Гырмызы Басаркечәр», Басаркечәр, 1932—1936*.
«Зәнки», Јереван, 1925—1929.
«Зәрбәчи колхозчу», Веди, 1930.
«Малдарлыг чәбһәсиндә», Амасија, 1932—1936*.
«Рәнчбәр», Јереван, 1921—1924.
«Сосиализм малдарлыгы», Степанаван, 1932—1936*.
«Рйа Тәза», Ереван, 1930—1936*.

Բ. ՀԱՆԴԵՍՆԵՐ

«Ագիտատորի բլոկնոտ», Երևան, 1936*։
«Ագիտատոր-պրոպագանդիստի բլոկնոտ», Երևան, 1933։
«Ագրարային ֆրոնտում», Երևան, 1934։
«Ագատ եկեղեցի», Երևան, 1924—1928։
«Ագդարար», Երևան, 1922—1926։
«Անապատան երեխա», Երևան, 1926։
«Անասնավաճ», Երևան, 1928—1935։
«Աշխատանք», Դիլիջան, 1924։
«Աշխատանք», Երևան, 1922—1929։
«Աշխատանքի տեղեկատու» («Աշխատանքային տեղեկատու»), Երևան, 1923—1931։
«Առողջապահության ֆրոնտում», Երևան, 1932—1935։
«Առողջապահությունը Հայաստանում», Երևան, 1929։
«Առողջ կենցաղ», Երևան, 1929—1932։
«Արհեստակցական շարժում», Երևան, 1921—1922։
«Արվեստ», Երևան, 1926—1927։

«Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» (միացյալ 1—2 համարը), Էջմիածին, 1921—1922։
«Բժշկական հանդես», Երևան, 1926—1927։

«Բյուլետեն Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչության», Երևան, 1926—1929։
«Բյուլետեն Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության կենտրոնական կոմիտեի», Երևան, 1921։
«Բյուլետեն ՀՍԽՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ինֆորմացիայի բաժնի», Երևան, 1921—1922։
«Բյուլետեն ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի», Երևան, 1935—1936*։
«Բյուլետեն ՀՍԽՀ Ներքին գործոց ժողովրդական կոմիսարիատի», Երևան, 1922—1923։

«Գյուղատնտեսական բյուլետեն ՀՍԽՀ Կենտվիճվարչության գյուղատնտեսական բաժնի», Երևան, 1923—1925։
«Գյուղատնտեսական կյանք», Երևան, 1922—1929։
«Գյուղի կոմունիստ», Երևան, 1929—1930։
«Գրական դիրքերում», Երևան, 1927—1932։
«Գրական սերունդ», Երևան, 1934—1936։

«Դեպի համատարած գրագիտություն», Երևան, 1931—1932։

«Երիտասարդ բոլշևիկ», Երևան, 1926—1933։
«Երիտասարդ հարվածային», Երևան, 1931։
«Երիտ-գրող», Երևան, 1933։
«Երիտ-հարվածային», Երևան, 1931—1932։
«Երևանի բազմամասային գործադիր կոմիտեի տեղեկատու», Երևան, 1924։

«Զուռնա», Երևան, 1924։

«Ժողովրդական լուսավորություն», Երևան, 1926—1930։

«Ինֆորմացիոն բյուլետեն Հայկոոպի վարչության», Երևան, 1930—1931։
«Ինֆորմացիոն տեղեկություններ Գյուղատնտեսի արհմիության կենտրոնական վարչության», Երևան, 1927—1928։

«Լենինյան ուղի», Երևան, 1928—1933։

«Խորհրդային արվեստ», Երևան, 1932—1936*։
«Խորհրդային գրականություն», Երևան, 1934—1936*։
«Խորհրդային մանկավարժ», Երևան, 1936*։
«Խորհրդային շինարարություն», Երևան, 1928—1929, 1932—1934։

«Կարմիր մարտիկ», Երևան, 1923։
«Կարմիր մոծակ», Երևան, 1926—1927։
«Կարմիր ֆրոնտ», Երևան, 1935—1936։
«Կոլխոզնիկ», Երևան, 1930—1931, 1934։
«Կոմունիստ», Երևան, 1922—1923, 1925—1928։

«Կոմունիստ», Երևան, 1935—1936։
«Կոմունիստական լուսավորություն», Երևան, 1931—1933։
«Կոոպերացիա», Երևան, 1927—1928։
«Կուսակցական շինարարություն», Երևան, 1932—1933։
«Կուսաշխատող», Երևան, 1936*։

«Հայաստանի աշխատավորուհի», Երևան, 1924—1936*։
«Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիա», Երևան, 1924։
«Հայաստանի կոոպերացիա», Երևան, 1921—1926։
«Հայկոոպի տեղեկատու», Երևան, 1922։
«Հարվածային տպագրիչ», Երևան, 1935—1936*։
«Հարվածային ֆիզկուլտուրնիկ», Երևան, 1932—1933։
«Հեղափոխության պահակ», Երևան, 1925։
«Հոկտեմբերիկ», Երևան, 1929—1936*։
«Հոկտեմբեր—Նոյեմբեր», Երևան, 1932։
«ՀՍՍՀ Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», Երևան, 1926—1930։
«Հրավիրակ», Երևան, 1925—1926։
«ՀՕԿ-ի տեղեկատու», Երևան, 1928։

«Մուրճ», Երևան, 1922—1923։
«ՄՕՊՐ», Երևան, 1927։
«ՄՕՊՐ-ի դրոշը», Երևան, 1930—1934։

«Նոյեմբեր», Երևան, 1932։
«Նոր ակոս», Երևան, 1924—1925։
«Նոր արշալույս», Լենինական, 1926։
«Նոր ուղի», Երևան, 1929—1932։
«Նոր ուսանող», Երևան, 1924։
«Նորք», Երևան, 1922—1928։

«Պահակ», Երևան, 1925։
«Պայքար», Երևան, 1923։
«Պատկոմ», Երևան, 1923—1924։
«Պիոներ», Երևան, 1923—1930։
«Պիոներ-գեկ», Երևան, 1925—1935։
«Պրոլետարական», Երևան, 1934—1935։
«Պրոլետարական», Լենինական, 1934։

«Ջոկատավար», («Կուլար»), Երևան, 1935—1936*։

«Սոցիալիստական տպրոնոմիա», Երևան, 1930—1932։

«Վերածնունդ», Երևան, 1921։
«Վերելք», Երևան, 1924—1926։
«Վերելք», Երևան, 1933—1934։

«Տեխնիկան մասսաներին», Երևան, 1931—1935։
«Տեղեկագիր Հայաստանի Կարմիր խաչի», Երևան, 1924—1929։
«Տեղեկագիր ՀՍԽՀ Դիտության և արվեստի ինստիտուտի», Երևան, 1926—1931։
«Տեղեկագիր ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի պաշտոնական հրահանգների և կարգադրությունների», Երևան, 1928—1930։
«Տեղեկագիր ՀՍԽՀ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի», Երևան, 1932—1935։
«Տեղեկագիր ՀՍԽՀ Պատմության և գրականության ինստիտուտի», Երևան, 1936*։
«Տպագրության տարեգիրք» («Գրքի տարեգիրք»), Երևան, 1925—1936*։

«Փոփոխիկ», Ղարաբիլիսա, 1928։

«Օրագիր ՀՍԽՀ Հնությունների պահպանության կոմիտեի», Երևան, 1927։

«Ֆիզկուլտուրա և տուրիզմ», Երևան, 1935։

«Известия Центрального Комитета Коммунистической партии Армении», Ереван, 1922.
«Медицинский журнал Армении», Ереван, 1930—1931.
«Экономический вестник Армении» («Социалистическое хозяйство Армении»), Ереван, 1925—1929, 1932—1935.

Դ. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

«Անաղջ տրանսպորտ» («Երկաթուղային»-ի, 1935)։
«Արվեստի ֆրոնտում» («Խորհրդային Հայաստան»-ի, 1930)։
«Բատրակ» («Մանկալ»-ի, 1927—1928)։
«Գյուղատնտեսական բանվոր» («Գյուղի բանվոր»)—«Մանկալ»-ի, 1931։
«Գյուղացու տուն» («Սոցիալիստական գյուղատնտեսություն»-ի, 1931—1932)։
«Գյուղթղթակից» («Մանկալ»-ի, 1928)։
«Գրական դրոհ» («Բանվոր»-ի, 1933)։
«Դեպի կոոպերացիա» («Մանկալ»-ի, 1925—1926)։
«Զինթղթակից» («Կարմիր զինվոր»-ի, 1928—1929)։
«Զինթղթակիցը գորաշարժում» («Կարմիր զինվոր»-ի, 1927)։
«ԼՈԿԱՅ-ի Ներքին» («Կարմիր զինվոր»-ի, 1932)։
«Խորհրդային Հայաստան»-ի գրական, գեղարվեստական, գիտական երկշաբաթյա հավելված, 1926։
«Կայծակ» («Երկաթուղային»-ի, 1934)։
«Կաշեգործի ձայն» (Կաշեգործների արհմիության կենտկոմի օրգան «Голос кожевника» թերթի, 1926)։
«Կարմիր Հոկտեմբեր» («Խորհրդային Հայաստան»-ի, 1922)։
«Պայքար» («Խորհրդային Հայաստան»-ի, 1923)։
«Սոցիալիստական մրցակցություն» («Մանկալ»-ի, 1929)։
«Տեխնիկայի տիրապետման համար» («Երկաթուղային»-ի, 1931)։
«Տպագրական բանվոր» («Տպագրական բանվոր»-ի, 1925—1926)։
«Քաղաք-գյուղ» («Մանկալ»-ի, 1929)։
«Ֆիզկուլտուրա» («Աշխատանք»-ի, 1928)։

Դ. ՄԻՈՐՅԱՆ ԹԵՐԹԵՐ

«Ավտոդոր», Երևան, 1935, մարտի 20։
«Արդիֆինպլանների կատարման հակառում», Երևան, 1930, մարտի 2։
«Գարնանային ստուգատես», Երևան, 1930, ապրիլի 29։
«Գարնանացանի ֆրոնտ», Լենինական, 1931, փետրվարի 28։
«Դրոշ հարվածային», Երևան, 1931, հոկտեմբերի 1։
«Դեպի խորքերի հետախուզում», Երևան, 1932, նոյեմբերի 7։
«Դեպի կոլեկտիվացում», Երևան, 1929, հոկտեմբերի 9։
«Ինտերնացիոնալիզմի ֆրոնտում», Լենինական, 1935։
«Լենինյան սերունդ», Երևան, 1935, ապրիլի 22։
«Լենինյան ուղիով», Դիլիջան, 1924, հունիսի 14։
«ԿԻՄ», Նոր Բայազետ, 1926։
«Կոլեկտիվացման արշալույս», Երևան, 1930, փետրվարի 1։
«Կոոպերացիա», Երևան, 1930, օգոստոսի 12։
«Կոոպերացիայի միջազգային օրը», Երևան, 1930, հուլիսի 5։
«Կորչի՛ տուբերկուլյոզը», Երևան, 1927, հունիսի 17։
«Համատարած գրագիտություն ֆրոնտում», Ն. Ախտա, 1931, նոյեմբերի 20 և դեկտեմբերի 29։
«Հարվածային կոլխոզնիկ», Երևան, 1933, հունիսի 14։
«Հոկտեմբերյան հեղափոխությունը և բժշկականությունը», Երևան, 1927, նոյեմբեր։
«Մարտական դիրքերում», Երևան, 1936, հունիսի 5։
«Մի՛ ծեծիր», Երևան, 1931, փետրվար։
«Միությունական օր», Երևան, 1933, սեպտեմբերի 28։
«Մոր և մանկան պահպանություն», Երևան, 1928, մարտ։
«ՄՕՊՐ», Երևան, 1926, մարտի 18։
«Նոյեմբեր», Երևան, 1925, նոյեմբերի 6։
«Շավիղ», Վաղարշապատ, 1925, հունվարի 22։
«Պայքար համատարած գրագիտության համար», Երևան, 1931։
«Պայքարի 12 տարի», Երևան, 1933։
«Պատլեն», Ղարաբիլիսա, 1924։
«Պրոլետարական տուրիստ», Երևան, 1935։
«Սպարտակի ուղիով», Երևան, 1932։
«10 տարի ֆիզկուլտ ֆրոնտում», Երևան, 1930, նոյեմբերի 29։
«Տպագրիչ», Երևան, 1934, ապրիլի 20 և նոյեմբերի 28։
«Տպագրիչ», Լենինական, 1930, մարտի 11։
«Քաղաքացման ֆրոնտում», Երևան, 1934, մարտի 10 և հոկտեմբերի 23։

ԽՍՀՄ և Անդրֆեդերացիայի կենտրոնական պարբերականներ

«Бакинский рабочий», 1920—1936.
«Журналист», 1922—1933.
«Заря Востока», 1921—1936.
«Известия», 1920—1936.
«Комсомольская правда», 1925—1936.
«Печать и революция», 1921—1930.
«Правда», 1920—1936

413—35

4. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ԱՄՊԿ Կենտրոնական արխիվներ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1։

Ցուցակ 1, գործ 61, 66, 100, 101, 114, 119, 120, 198, 206, 232, 240, 255, 256, 258, 260, 306, 334, 362, 363, 367, 411, 418, 419, 420, 421, 422, 477, 478, 481, 483, 486, 487, 524, 526, 589, 591, 596։

Ցուցակ 2, գործ 23, 41, 42, 79, 87, 94, 111, 113, 115, 116, 201, 202, 278, 373, 392, 394, 400, 408, 409, 434, 437, 438, 455։

Ցուցակ 3, գործ 8, 253, 274, 279, 298, 300, 322, 341, 347։

Ցուցակ 4, գործ 1, 11, 18, 25, 28, 47, 69, 70, 85, 113, 198, 207, 238, 272, 273, 284, 285, 294, 295, 300, 302, 303, 308, 312, 326, 328։

Ցուցակ 5, գործ 18, 174, 181, 183, 184, 189, 199, 204, 206, 214, 220, 228, 263։

Ցուցակ 6, գործ 31, 61, 154, 155, 156, 158, 169, 170, 172, 173, 175, 177, 183, 193, 200, 202, 205, 206, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 217, 218, 219։

Ցուցակ 7, գործ 18, 24, 81, 177, 200, 263, 310, 312, 320, 327, 334, 335, 345, 354, 377, 382, 384, 385, 389, 399, 400, 401, 402, 403, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 415, 416, 417, 418, 419։

Ցուցակ 8, գործ 55, 69, 120, 139, 152, 153, 154, 155, 156, 157։

Ցուցակ 9, գործ 45, 93, 95, 247, 299, 308, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 364, 365, 366։

Ցուցակ 10, գործ 247, 254, 283, 284, 285, 286, 287, 288։

Ցուցակ 11, գործ 138, 269, 289, 298, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353։

Ցուցակ 12, գործ 128, 146, 147։

Ցուցակ 13, գործ 202, 244, 330, 334, 344, 351, 356, 366, 381։

Ցուցակ 14, գործ 88, 90, 96, 99, 109։

Ցուցակ 15, գործ 39, 252, 258, 261, 273, 293, 294, 298։

Ցուցակ 16, գործ 27։

Ցուցակ 17, գործ 331, 339, 348, 383։

Ցուցակ 18, գործ 47։

Ցուցակ 19, գործ 308, 310, 312, 324, 327, 328։

Ցուցակ 20, գործ 28, 126։

Ցուցակ 21, գործ 269, 298։

Ցուցակ 24, գործ 354, 355, 377, 378, 379։

Ցուցակ 25, գործ 359, 360, 362, 363։

Ցուցակ 26, գործ 417, 418, 419, 420։

5. ԳՐՔԵՐ. ՀԱՎԱՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀՈԴՎԱԾՆԵՐ

Աղայան Ա., *Լենինը ժողովրդում*, Երևան, 1962։

Ալիխանյան Ս., *Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում*, Երևան, 1964։

Աղայան Ս., Խալեյան Ն., *Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության*, գր. III, Երևան, 1960։

Ամիրբեկյան Վ., *Սովետական տեղական մամուլը (1921—1925)*, Երևան, 1964։
Բաղդասարյան Հովհ., *Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների պայքարը ՍՄԿԿ միասնության համար*, Երևան, 1969։
Գալոյան Գ., *Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ*, Երևան, 1961։
Գրիգորյանց Ա., *Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում*, Երևան, 1960։
Նեզույան Փ., *Հայաստանը ինդուստրացման ուղիով*, Երևան, 1967։
Թումանյան Հ., *Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը*, Երևան, 1962։
Լալաբեկյան Ի., *Վ. Ի. Լենինը և սովետական կարգերի հաստատումն ու ամրապնդումը Անդրկովկասում*, Երևան, 1961։
Լեոնյան Գ., *Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934)*, Երևան, 1934։
Խանչյան Ա., *Հոդվածներ և հատեր*, Երևան, 1963։
Խաչատրյան Գ., *Սովետահայ ինտելիգենցիայի ձևավորումն ու զարգացումը*, Երևան, 1968։
Խուրշուդյան Լ., *Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից*, Երևան, 1961։
Մովսյան Վ., *Այն տարիներին (Մարդիկ, միայն մարդիկ)*, Երևան, 1968։
Կասյան Ս., *Ընտիր երկեր*, Երևան, 1967։
Կարապետյան Համբ., *Մեծ պայքարի մարդիկ*, գիրք I, Երևան, 1963, գիրք II 1967։
Կարապետյան Ս., *1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը*, Երևան, 1965։
Կ. Մարքս և Ֆ. Էնգելս արվեստի մասին, հ. II, Երևան, 1964։
Հակոբյան Ա., *Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.)*, Երևան, 1955։
Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1967։
Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1967։
Հայ պարբերական մամուլի պատմությունից, պր. I, խմբագրությամբ Ա. Բ. Կարինյանի, Երևան, 1963։
Հարությունյան Շ., *Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում*, Երևան, 1967։
Հովհաննիսյան Աշ., *Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը*, Երևան, 1923։
Հովհաննիսյան Աշ., *Համազգային կրիզիս*, Երևան, 1926։
Հովհաննիսյան Աշ., *Հուշեր և բնութագրումներ*, Երևան, 1969։
Ղազախեցյան Վ., *Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում*, Երևան, 1962։
Ղազանչյան Վ., *Սովետահայ կուլտուրայի առաջին քայլերը*, Երևան, 1964։
Ղարիբջանյան Լ., *Երևանի պետական համալսարան*, Երևան, 1964։
Մելիքսեթյան Վ., Կարապետյան Հ., *Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության*, պր. II, Երևան, 1958։
Մարտունի Ալ., *Խորհրդային Հայաստանի ուղին*, Թիֆլիս, 1924։
Մարտունի Ալ., *Կուսակցությունները դաշնակցության մեջ*, Թիֆլիս, 1924։

Մնացականյան Ա., *Կոմունիստական պարտիան Հայ ժողովրդի ազատարարն է, Երևան, 1964։*

Մյասնիկյան Ալ., *Ընտիր երկեր, Երևան, 1957։*

Մռավյան Ա., *Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961։*

Ներկարարյան Վ., *Հայաստանի կոմունիստական պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925), Երևան, 1956։*

Շառոյան Գ., *Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում (1920—1929 թթ.), Երևան, 1962։*

Շիրմազանյան Գր., *Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962։*

Ոսկերչյան Պ., *Սովետական Հայաստանի արդյունաբերությունը, Երևան, 1966։*

Պետրոսյան Հովհ., *Հայ գիտնականներ, հրատարակիչներ, ժուռնալիստներ, (կենսաբիբլիոգրաֆիական ծանոթագրություններով), Երևան, 1960։*

Պետրոսյան Հովհ., *Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, Երևան, 1954։*

Պետրոսյան Շ., *Սովետական պետականության կազմակերպումը և զարգացումը Հայաստանում, Երևան, 1961։*

ՍՄԿԿ պատմություն, Երևան, 1963։

Սովետահայ գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1961։

Վարդանյան Հ., *Հայաստանի կոմպարտիայի պայքարը գյուղում սոցիալիզմի հաղթանակի համար, Երևան, 1967։*

Օհանջանյան Ռ., *Հայաստանի կոմունիստական պարտիան գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին (1930—1934 թթ.), Երևան, 1955։*

Օրջոնիկիձե Գ., *Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950։*

Վարդապետյան Ա., *Հայաստանի արհմիությունների պատմություն, Երևան, 1969։*

Аветисян Г. А. Комсомол Закавказья в борьбе за победу и упрочение Советской власти, Ереван, 1964.

Акперов А. З. Газета «Ени фикир» в борьбе за подъем экономики и культуры закавказских республик. Автореферат дисс. на соискание учен. степени канд. историч. наук, Баку, 1967.

Ахмедов Д. Н. Периодическая печать Дагестана (1900—1940 гг.), Махачкала, 1963.

Бережной А. Ф. О некоторых вопросах изучения и преподавания истории партийно-советской печати. «Вопросы журналистики. Межвузовский сборник статей», 1960, вып. 2, кн. 1, с. 3—24.

Булацкий Г. В. Печать Белоруссии в период завершения социалистической реконструкции народного хозяйства республики (1933—1937), Минск, 1960.

Верховский В. И. Из истории партийного руководства печатью (1921—1923 годы), «Вопросы истории КПСС», 1959, № 3, с. 138—151.

Григорянц А. К. Формирование и развитие технической интеллигенции Армении (1920—1965), Ереван, 1966.

Гурин В. Д. Зарождение советской печати в Киргизии, Фрунзе, 1964.

Дементьев А. Г. В. И. Ленин и советская журналистика В кн.: Очерки истории русской советской журналистики (1917—1932), М., 1966, с. 143—170.

Дмитриев С. К. Партийно-советская печать Якутии в первые годы Советской власти (1917—1925 гг.), Якутск, 1964.

Дондоков В. Ц. Возникновение и развитие партийно-советской печати в Бурятии (1918—1937 гг). Очерк истории, Улан-Удэ, 1960.

Звездин З. К. Периодическая печать как источник по истории трудового подъема рабочего класса СССР 1926—1929 годов. (Обзор матер.), «Проблемы источниковедения», 1959, т. 8, с. 3—30.

Имашев С. Н. Зарождение коммунистической печати в Казахстане (1918—1925 гг.), Алма-Ата, 1961.

Касумов М. Р. Боевой революционно-сатирический журнал «Молла Насреддин» и его общественно-политическое направление (1906—1931 гг). Автореферат дисс. на соискание учен. степени доктора историч. наук, Баку, 1965.

К. Маркс и Ф. Энгельс о печати, М., 1963.

Круглов А. А. Освещение «Правдой» вопросов социалистического соревнования в первой пятилетке. Лекция, М., 1957.

Максимов А. А. Советская журналистика 20-х годов. Краткий очерк журнальной периодики, Л., 1964.

Марцелов С. В. Печать Советской Белоруссии (историч. очерк), Минск, 1967.

Мишурис А. Л., Кузнецов И. В. История партийно-советской печати, М., 1968.

Меликян М. М. К вопросу о формировании армянской нации и ее социалистическом преобразовании, Ереван, 1957.

Мясникян А. Ф. (Мясников). Избранные произведения, Ереван, 1965.

Орахелашвили М. 10 лет Закавказской федерации, Баку, 1932.

Очерки истории русской советской журналистики (1917—1932). Ответ. ред. А. Г Дементьев, М., 1966.

Партийная и советская печать в борьбе за построение социализма и коммунизма. Учебн. пособие. Изд. второе, дополненное. М., 1966.

Партийно-советская печать в период борьбы за строительство социализма. Учебн. пособие, сбор. статей, под общей ред. А. Л. Мишуриса, М, 1964.

Портянкин И. А. Редакторская и публицистическая деятельность В. И. Ленина. М., 1959.

Рубан В. А. Украинская советская газета (проблемы становления и развития: 1917—1926 гг.). Автореферат дисс. на соискание учен. степени доктора филолог. наук, Киев, 1967.

Сафаров Р. Печать и вопросы пропаганды идей дружбы народов, Ташкент, 1967.

Севян В. Г. История армянской молодежной периодической печати (1917—1932 гг.). Автореферат дисс. на соискание учен. степени канд. историч. наук, Ереван, 1968.

Советская печать в документах. М., 1961.

Советская печать в наши дни (сборник статей). Ред. коллегия: А. Ф. Бережной (ответ. ред.), Л. Э. Варустин, С. В. Смирнов. Л., 1963.

Стыкалин С., Кремненская И. Советская сатирическая печать (1917—1963). М., 1963.

Ученова В. В. Партийно-советская печать восстановительного периода (1921—1925 гг.). краткий очерк. М., 1964.

Хармандарян С. В. Армянская ССР в первый год новой экономической политики. Ереван, 1955.

Худавердян К. С. Культурная революция в Советской Армении (1920—1940 гг.). Ереван, 1966.

Цкитишвили К. В. Печать Грузии в борьбе за пропаганду достижений духовной культуры народов СССР, «Вестник отд-ния общественных наук Акад. наук Груз. ССР». 1963, № 4, вып. 18, с. 46—61.

Ямпольская Р. М. Ленинские традиции партийно-советской печати (1917—1924 гг.). учебн. пособие, М., 1966.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբելյան Պ. — 462
Աբով Գ. — 78, 211, 454, 455, 460, 464, 470, 489
Աբովյան Ս. — 168
Աբրահամյան Ա. — 438, 439
Աբրահամյան Աբծ. — 306
Ադոյան Ա. — 38, 144, 244, 247, 249
Ագրոյան Կ. — 364
Ազատյան Հ. — 79, 83, 154, 169, 175, 178, 179, 244, 247, 450
Ազնավուրյան Շ. — 146, 363, 447
Աթաբեկյան Գ. — 464
Աթայան Թ. — 354, 447
Աթանասյան Ա. — 16
Այազան Վ. *(Գարուպյան)* — 144, 177, 480, 482, 489, 492—494
Այնթապյան Տ. — 385
Ախմեդով Գ. — 20
Ախունդով Թ. — 196
Ադաթաթյան Ս. — 306
Ադայան Մ. — 504
Ադաչանյան Գ. — 347
Ադաչանյան Ստ. — 501
Ադավնի — 356, 494
Անաայան Հր. — 462
Անեմյան Ս. — 438
Ամատունի Ա. — 247, 256, 330, 482
Ամիրեկյան Վ. — 19, 127
Ամիրխանյան Մ. — 220
Ամիրխանյան Շ. — 79, 244, 247
Այխենվալդ Յու. — 456
Այվազյան Աստ. — 500
Այվազյան Վ. — 179, 437
Անանյան Վ. — 157, 346, 347, 350, 357, 504
Անանուն Գ. — 121
Անդրեասյան Հ. — 421
Անդրեասյան Մ. — 306
Անտելեպյան Գ. — 83
Անուշ *(Մելքումյան)* — 439
Անուշավան Մ. — 450
Աշխարհբեգ *(Քալանթար)* — 473, 500
Աշրաֆյան Զ. — 38
Աշտիլ — 381
Առաքելյան — 138
Առաքելյան Ա. — 364
Առաստրյան Աս. *(Ասուր Վենիամին)* — 250, 364, 409
Ասեն Ն. — 492
Աստվածատրյան Վ. — 406
Ավագյան Հ. — 220
Ավագյան Հ. Տ. — 179, 280, 450
Ավագյան Ս. — 17
Ավդալ Ա. — 360
Ավդալբեկյան Թ. — 121, 462, 463, 473
Ավդալբեկյան Խ. — 166, 168
Ավետիսյան Մ. — 220
Ավետիսյան Վ. — 17
Աստի Մ. — 469, 480, 493, 494
Աստյան Բ. — 306
Արամ — 149, 470
Արեշյան Գ. — 434
Արեշյան Ս. — 16
Արզումանյան Ա. — 151, 247, 249, 255, 438
Արզումանյան Գ. — 364

Արզումանյան Մ. — 17
Արիսյան Լ. — 84, 144, 192, 194, 247, 252, 256
Արմեն Մ. — 469, 489, 494
Արշարունի Արշ. — 129, 201
Առուտչյան Մ. — 450, 466, 467
Առուտչյան Ա. — 406, 500

Բաբայան Ա. — 421
Բաբլոյան Մ. — 18
Բաբլումյան Հ. — 330
Բագրատունի Վ. *(Փալանդուզ Մկա)* — 450
Բալագյան Լ. — 19
Բալզակ — 497
Բալյան Հ. — 121
Բակունց Ա. — 142, 157, 171, 345, 346, 353, 354, 463, 464, 469, 475, 479, 480, 484, 489, 493, 494, 498
Բաղդասարյան Հ. — 179
Բաղդասարյան Ս. — 435
Բաննանյան Հ. — 126, 131, 157
Բարբյուս Հ. — 257, 464
Բարխուդարյան Ա. — 84
Բարխուդարյան Ս. — 501
Բարսեղյան Ա. — 373
Բարսեղյան Խ. — 17
Բեգլարյան Ա. — 17
Բեգիմենսկի Ա. — 483
Բեքնովեն — 501
Բզնունի Արտ. — 149, 151, 244, 247, 385
Բզնունի Վ. — 373
Բժշկյան Հ. *(Դայ)* — 154
Բլոկ Ալ. — 463, 464, 472
Բոյան Մ. — 17
Բոտաղյան Ա. — 145
Բուլացկի Գ. — 20
Բունիաթյան Տ. — 435

Գաբրիելյան Հ. *(Հենրի)* — 84, 144, 146
Գաբրիելյան Ռ. — 421, 450, 480
Գազազյան Գ. — 411
Գալկին Ի. — 386
Գայֆեճյան Վ. — 467, 500, 501
Գասպարյան Հարութիկ — 178
Գասպարյան Մ. — 406
Գարագաշ Մ. — 142
Գարդաշյան Գ. — 435
Գարդաշյան Մ. — 435
Գլադկով Ֆ. — 483
Գյանջո Ջ. — 360
Գյոդակյան Ս. — 435
Գյուլի-Քեվխյան Հ. — 35, 84, 129, 195, 210, 462, 482, 502
Գյուսյան Էդ. — 306
Գյուրջյան Գ. — 462, 463, 500, 501
Գոլոշյան Վարդան — 474
Գորկի Մ. — 483, 488, 497
Գրիգորյան Ս. — 247, 249
Գուդիաշվիլի Լ. — 501
Գուլոյան Ա. — 374
Գումեղին *(Գուրգեն Մկիր-Դաղյան)* — 83, 144
Գուրգենյան Վ. — 252
Գուրին Վ. — 20
Գևորգյան Մ. — 478

Դաբաղյան Ն. — 256, 455, 482, 489, 494
Դաղումյան Գ. — 373
Դալլաքյան Կ. — 18
Դանիելյան Խնկ. — 364, 374
Դանիելյան *(Տեր-Դանիելյան)* Հ. *(Յամփրքի)* — 144, 146, 255
Դանիելյան Մ. — 252
Դանչո Ն. — 450, 459
Դաշտենց Խ. — 492
Դաշտոյան Ռ. — 169, 330
Դաստակյան Վ. — 250, 252
Դավթյան Մխիթար — 154
Դավթյան Սերիկ — 149, 451, 406, 421
Դավթյան Վ. — 177
Դարբինյան Մ. — 469, 480
Դեմիրճյան Գ. — 450, 462, 463, 467, 469, 475, 480, 492, 493, 494, 496, 504
Դեմիրճյան Խ. — 179, 345
Դզնունի Գ. — 83, 84, 195, 211, 463, 502
Դզնունի Վ. — 364
Դմիտրիև Ս. — 20
Դոնդոկով Վ. — 20

Գպիրյան Զ. — 373
Գրամբյան Ռ. — 360
Գուրզարյան Մ. — 151, 409

Եկավյան Հ. — 143, 144, 146, 210, 247, 256
Եղիազարյան Աբաս—406, 412, 421, 479
Եղիբարյան Մ. — 84, 252, 372
Եսայան Գ. — 346
Եսայան Զ. — 441, 442
Եսենին Ս. — 472
Երեմյան Ա. — 463, 500
Երեմյան Վ. — 346
Երզնկյան Ա. — 166, 169, 466
Երիցյան Ե. — 168, 346, 347, 462

Զարյան Կ. — 463
Զարյան Ն. — 356, 450, 462, 464, 469, 470, 480, 482, 489, 492, 496, 504
Զարյան Ռ. — 494
Զաքարյան Ս. — 478
Զաքարյան Լ. — 306
Զաքարյան Կ. — 500, 501
Զորյան Ստ. — 460, 462, 463, 469, 470, 480, 496

Էնգելս Ֆ. — 6, 82, 449, 473
Էսսեն Մ. — 196
Էրենբուրգ Ի. — 464
Էփրիկ — 195
Էֆենդիև Բ. — 67—69

Թադևոսյան Ա. — 283
Թադևոսյան Ն. — 501
Թադևոսյան Ս. — 168
Թարարյան Հ. — 249
Թաքիկյան Վ. — 448
Թամազյան Արմ. — 220, 406
Թամանյան Ալ. — 115
Թամրազյան Հր. — 498
Թառայան Ս. — 306
Թասլախչյան Ա. — 306
Թարյան Ս. — 450
Թերզիբաշյան Վ. — 500
Թերզյան Ն. — 421
Թերլեմեզյան Ռ. — 480, 500, 504
Թորոսյանց Վ.—431, 450, 460, 463—465, 480, 489, 494, 498, 500, 504
Թովմասյան Լ. — 126
Թորոսյան Պ. — 84, 448
Թումանյան Հովհ. — 455, 457, 469, 470, 479, 493, 494, 497
Թումյան Հ. — 409

Իմաշև Ս. — 20
Ինգիկյան Հ. — 406
Իշխանյան Ս. — 16, 17, 19
Իսահակյան Ալ. — 178
Իսահակյան Ավ. — 479
Իսահակյան Հ. — 17
Իսահակյան Ս. — 346

Լազարյան Ս. — 434
Լազյան Հ. — 154, 155
Լալայան Ա. — 154
Լալայան Իս. — 474
Լենկապ — 450
Լենին Վ. Ի. — 5—11, 22, 26, 29, 52, 53, 55, 63, 74, 82, 88, 89, 91, 94—97, 102, 110—113, 122, 225, 229, 231, 235, 259, 269, 270, 272, 291, 304, 317, 318, 321, 393, 413, 418, 421, 450, 474
Լեո — 457, 470
Լեո-Կամսար — 450, 463, 465—467
Լիրկնեխտ Կ. — 145
Լիլոյան Հ. — 17
Լոկշինա Մ. — 252
Լոնդոն Ջ. — 464
Լուկաշին Ս. — 79, 81, 82, 209, 475
Լուշնիկով — 217
Լևոնյան Գ. — 22, 195, 396, 480

Խալեյան Ն. — 17
Խանզադյան Ց. — 471
Խանոյան Ս. — 154, 485
Խանջյան Ա. — 247, 338, 438
Խաչատրյան Գ. — 409
Խաչատրյան Ռ. — 18
Խաչիկոզլյան Վ. — 220

Խաչյան Ա. — 178
Խարանի — 469, 472
Խառատյան Ն. — 220
Խերանյան Ն. — 143, 144
Խեչումյան Ա. — 406
Խնկոյան Ա.Թ. *(Խնկո-Ապեր)* — 151, 157, 324, 356
Խոնիկ Էդ. — 381, 411, 439, 448, 450, 465—467
Խոջաբեկյան Վ. — 501
Խոջամիրյան Ն. — 133, 298, 306, 448
Խորունի Տ. — 133, 143, 144, 146, 256, 377, 384, 397
Խուդավերդյան Կ. — 19
Խուդոյան Լ. — 406
Խուրշուդյան Լ. — 18

Ծատուրով Գ. —252
Ծովյան Կ. — 435
Ծովյան Վ. *(Խերանյան)* — 18, 127, 133, 153, 154

Կալինին Մ. — 274
Կախոյան Ամ. — 474
Կամսար Վ. — 381
Կասյան Ս. — 247, 273, 475
Կարապետյան Գ. — 435
Կարիբ Գ. — 154
Կարինյան Արտ. — 16, 18, 38, 42, 45, 154, 169, 171, 194, 244, 455, 460—463, 467, 473, 475, 479, 480, 494
Կիկնաձե — 196
Կիրակոսյան Ա. — 364
Կիրակոսյան Ն. — 306
Կիրակոսյան Ս. *(Բանվոր Սամակ)* — 212
Կիրով Ս. — 52
Կլեբեր Կ. — 472
Կոբոզյան Հր. — 177
Կոչոյան Հ. — 179, 462, 501
Կոստանյան Ա. — 346
Կոստանյան Հ. — 247
Կոստանյան Վ. — 247, 409
Կուրյուն Մ. — 356
Կրեմենսկայա Ի. — 20
Կրուպսկայա Ն. — 268, 406
Կուզնեցով Ի. — 20
Կուրտիկյան Սա. — 146, 255, 364, 374, 377, 396, 397

Հալաբյան Կ. — 477
Հախումյան Ա. *(Նոբեկ)* — *133*, 157, 396, 438, 459
Հախումյան Տ. — 455, 492, 504
Հակոբյան Ա. — 350, 357
Հակոբյան Աբշ. — 364
Հակոբյան Գ. — 356
Հակոբյան Մ. — 17
Հակոբյան Ռ. — 306
Համբարձումյան Ս. — 236
Համդիլյան Կ. — 192, 198, 244
Հայկազունի Հ. — 380
Հայնե Հ. — 386
Հայրապետյան Հ. — 149, 151
Հայրյան Գ. — 356, 364
Հանեսոզլյան Ա. — 177
Հասարբյան Ի. — 372
Հասարբյան Է. — 480
Հասարբյան Մարուս — 480
Հարենց Ա. — 149, 150
Հարությունյան Գ. — 177
Հարությունյան Բ. — 374
Հարությունյան Ս. — 250
Հարությունյան Վ. — 198
Հացագործյան Զ. — 306
Հյուզո Վ. — 464
Հովհաննիսյան Աշոտ — 27, 78, 83, 161, 162, 196, 205, 244, 458, 467, 468, 473, 474
Հովհաննիսյան Հակ. — 462
Հովհաննիսյան Հմ. — 38, 146, 151, 157, 198, 247, 252, 255
Հովհաննիսյան Հովհ. — 497
Հովհաննիսյան Մ. — 220
Հովհաննիսյան Ս. — 450
Հովսեփյան Ա. — 19
Հովսեփյան Գ. — 177
Հովսեփյան Խ. — 79, 178
Հովսեփյան Հ. — 154
Հովսեփյան Վ. — 128

Հրաչյան Խ. — 356
Հուսնյոով Մ. — 358

Ղազանչյան Վ. — 306, 396
Ղազանչյան Տ. — 406
Ղազանչյան Վանիկ — 19
Ղազարյան Աշ. — 249, 252
Ղազարյան Աբ. — 435
Ղազարյան Ա. — 364
Ղազարյան Գ. — 138, 157
Ղազարյան Լ. — 364
Ղազարյան Կ. — 126, 194, 406, 448, 479
Ղազարյան Պ. — 237
Ղազարյան Ս. — 412
Ղարագյուլյան Աշ. — 356
Ղարիբջանյան Գ. — 17
Ղափանցյան Գ. — 480
Ղոռանդյան Վ. — 480
Ղուկասյան Վ. — 17
Ղևոնդյան Գ. — 435

Ճուղուրյան Ավ. — 412

Մազմանյան Մ. Ա. — 406, 479
Մազմանյան Միք. — 477
Մազրել Ֆ. — 464
Մալխասյան Ս. — 435
Մալխասյան Արմ — 372
Մակինց Նշ. — 250, 396, 479
Մակինցյան Պ. — 79, 455, 479, 480
Մամիկոնյան Վ. — 345, 374
Մայիլյան Ա. — 500
Մանանդյան Ա. — 306
Մանդալյան Թ. — 38, 134, 247
Մանոյան Խ. — 84
Մանվելյան Մ. — 469, 480, 494
Մանուկյան Գ. — 409
Մանուկյան Թ. — 364
Մանուկյան Հ. — 364
Մասյան Գր. — 495
Մարգարյան Ա. — 252
Մարգարյան Ալ. — 157
Մարգարյան Զ. — 356
Մարգարյան Հր. — 364
Մարգարյան Մ. — 177
Մարկոսյան Մ. — 364, 374, 380
Մարոի Անդրե — 257
Մարտիրոսյան Լ. — 256
Մարցելով Ս. — 20
Մարքս Կ. — 5, 6, 82, 449
Մահմիտով Ա. — 20
Մելիք Նր. — 474
Մելիք-Ադամյան Ա. — 434
Մելիք-Շահնազարյան Կ. *(Տմբլաչի խաչան)* — 157, 168
Մելիք-Քարամյան Մ. — 435
Մելիքյան Ա. — 434
Մելիքյան Սպ. — 500
Մելիքսեթյան Ս. — 82, 198, 560, 502, 505
Մելյան Մ. — 446
Մելնիկով — 42
Մելքումյան Լ. — 374
Մեհրաբյան Գ. — 126, 194
Մեհրաբյան Թ. — 220
Մեհրաբյան Ն. — 83, 255
Միրաքյան Հ. — 364
Միրզայան Միք. — 500
Միրզոյան Հր. — 146, 150, 255
Միրիմանյան Խ. — 306
Միշուրին Ա. — 20
Մխիթարյան Ան. — 381
Մխիթարյան Մ. — 16, 17
Մկրտչյան Հայկ — 84, 138, 330
Մկրտչյան Հար. — 360, 480, 482, 489, 494, 504
Մկրտչյան Մ. — 220
Մկրտչյան Պապիկ — 247
Մյասնիկյան Ալ. *(Մարտունի)* — 43, 44, 52, 54, 76—79, 81, 83, 97, 102—105, 154, 168, 187, 188, 191, 196, 216, 419, 428, 456—458, 460, 464, 475, 477
Մնացականյան Աբ. — 18, 364, 374
Մոզիլևսկի — 464
Մոկացյան Հ. — 249
Մոսասան — 386
Մովսիսյան Աբ. — 409, 421
Մովսիսյան Ս. — 364

Մոցարտ — 501
Մռավյան Ա. — 38, 45, 78, 83, 154, 169, 209, 210, 244, 247, 406, 458, 462, 467, 475, 478
Մուխթար Ամենեղ — 31, 32
Մուշեղյան Տ. — 149, 151, 406, 409
Մուրադյան Ա. — 126
Մուրադյան Ավ. — 374

Յամպոլսկայա Ռ. — 20
Յարոսլավսկի Եմ. — 450

Նազարեթյան Հ. — 196
Նազարյան Գ. — 121, 372
Նազարյան Ս. — 17
Նալբանդյան Միք. — 471—473, 479
Նալբանդյան Ս. — 372, 374, 383
Նաջարյան Հ. — 364
Նար-Դոս — 497
Ներսիսյան Ա. — 345
Ներսիսյան Բ. — 138
Ներսիսյան Ստ. — 501
Նժդեհ — 42, 43, 474
Նոր-Այր — 364
Նորենց Վ. — 469, 470, 480, 489, 493
Նուրիջանյան Ավ. — 154

Շադունց Ս. — 79, 166, 168, 169
Շահազիզ Նր. — 473
Շահբազյան Կ. — 144
Շահզելդյան Ս. — 84, 126
Շահինյան Ս. — 406, 409
Շահինյան Մ. — 494
Շահսուվարյան Ա. — 83, 194
Շահվերդյան Ն. — 364
Շահվերդյան Ս. — 247
Շաղգամյան Գ. — 144, 252
Շամիլով Ա. — 67, 359
Շավարշ Հովհ. — 282, 450
Շավարշյան Ս. — 151, 406
Շահումյան Բ. — 150, 364, 374
Շիրազ Հ. — 356, 494
Շիրմազան Գր. — 306, 480
Շիրոյան Ան. — 450
Շիրոյան Ռ. — 146, 364
Շիրվանզադե — 470, 479, 493, 494

Ոսկերչյան Ա. — 479, 482, 489, 493

Զարենց Ե. — 454, 455, 460—464, 467, 469, 470, 475, 477—480, 493, 494, 498, 500
Զեխով Ա. — 386, 497
Զեմբելեն — 395
Զիշերին Գ. — 31
Զոլախյան Մ. — 157, 198, 330, 439
Զոփուրյան Է. — 157, 211, 480
Զուբար Ե. — 27, 35, 38, 45, 48, 144, 146, 154, 157, 179, 195, 210, 244, 247 330, 354, 462, 479, 489, 493 494

Պայազատ Ս. — 494
Պապիկյան Լ. — 177
Պարիս Գ. — 144
Պարոնյան Հ. — 450, 479
Պետրոսյան Աբր. — 364, 374
Պետրոսյան Արտ. — 220, 325, 350, 364
Պետրոսյան Հովհ. — 22, 179, 198, 437
Պետրոսյան Պ. — 247
Պիլիպենկո Վ. — 307
Պողոսյան Հ. — 374
Պողոսյան Հովհ. — 38, 252, 385
Պողոսյան Վ. — 364
Պուշկին Ա. — 493

Չալիլ Ջ. — 360
Չանան Մ. — 460
Չեղի Հ. — 360

Ռեզցով Ս. — 79
Ռաղնի — 235
Ռիզան Ա. — 70, 358
Ռուսթավելի Շ. — 469, 472

Սահակյան Ա. — 220
Սահակյան Գ. — 252
Սահակյան Սիմակ *(Մանկալ Շմավոն)* — 126, 151, 157, 421
Սանթրոսյան Մ. — 406, 409, 412
Սամվելյան Խ. — 462

Սաչկով Դ. — 217
Սարգսյան Անդր. — 306
Սարգսյան Արա — 480, 494
Սարգսյան Արս. — 220
Սարգսյան Ն. — 252
Սարգսյան Խ. — 489, 493
Սարգսյան Հր. — 406
Սարգսյան Ս. — 149, 150, 431
Սարգսյան Սուր. — 17
Սարյան Գեղամ — 480, 482, 492, 493
Սարյան Դուրգ. — 255
Սարյան Մ. — 179, 457, 462, 501
Սարոյան Վ. — 177
Սարուխանյան Ն. — 364
Սաֆարով Ռ. — 20
Սաֆրազբեկյան Ռ. — 237
Սեմերջյան Օ. — 364
Սերաֆիմովիչ Ա. — 483
Սիլանյան Հ. — 346, 347
Սիմոնյան Բ. — 364
Սիմոնյան *(Տեր-Սիմոնյան)* Դր. — 38, 83, 247, 479, 496
Սիմոնյան Կ. — 450
Սինանյան Գր. — 364, 396
Սիրաս Հմ. *(Ոսկանյան)* — 133, 380, 505
Սոլախյան Ա. — 364, 396
Սոխակյան Հ. — 144
Սողոմոնյան Ս. — 480, 494
Սպենդիարյան Ալ. — 500
Ստալին Ի. — 302, 515
Ստախանով — 392
Ստամբոլցյան Պ. — 121
Ստեփանյան Ա. — 421
Ստեփանյան Աղավնի — 372, 412
Ստիկալին Ս. — 20
Սուտիրին — 201
Սուրխաբյան Հ. — 455, 480
Սևյան Վ. — 19

Վահանյան Ընն. — 38, 479
Վահրատյան Ն. — 220
Վահունի Ս. — 494
Վաղարշյան Վ. — 502
Վանանդեցի Գ. — 459, 463, 482, 484, 494
Վարդանյան Աղ. — 463
Վարդանյան Ան. — 482
Վարդանյան Գ. — 41
Վարդանյան Հ. — 144
Վարդանյան Ս. — 247
Վարդանյան Ֆ. — 439
Վարդապետյան Ա. — 84
Վարդապետյան Արմ. — 409
Վարդունի Լ. — 364, 448
Վելիբեկով Ռ. — 358, 372
Վերնարդ Էմ. — 462, 472
Վեսպեր Մ. — 480
Վինզբերգ Ռ. — 249
Վշտունի Ա. — 454, 455, 459, 460, 470, 480, 489, 504, 505
Վորոմսկի Վ. — 92

Տանին Հ. — 179, 346, 437
Տարախչյան Վ. — 249, 439, 440
Տարոնցի Ս. — 356, 480, 482, 494
Տեմյան Ա. — 438
Տեր-Ներսիսյան Իս. — 157, 166, 168
Տեր-Պողոսյան Ս. — 84
Տեր-Ռուբենյան Գ. — 41
Տերյան Վ. — 461, 469, 470
Տերտերյան Ա. — 480, 484
Տիգրանյան Ն. — 501
Տոլստոյ Ալ. — 497
Տոներյան Ն. — 17
Տոնյան Ա. — 157
Տրիբուն *(Գևորգ Տեր-Տրիբունյան)* — 177
Տրոցկի — 85, 87, 94

Ուիտմեն — 462, 472
Ումարով — 67
Ուրարտու Այծեմիկ — 501

Փարիկյան Հ. — 364
Փիրզուլյան Գ. — 237
Փիրումյան Ք. — 434

Քալանթարյան Պ. — 166, 168, 346, 347
Քալաշյան Գ. — 330
Քամալյան Հ. — 346
Քարամյան Ա. — 83, 84, 256

Քացախյան Գ. — 195, 198, 406
Քեմալ — 31, 33, 34
Քեչեկ Հ. — 434
Քերզոն — 92
Քյարիմով Ս. — 67
Քոչար Հր. — 360, 492, 494
Քոչարյան Սուրեն — 480
Քսենոֆոնտ — 167
Քուչնարյան Քր. — 501

Օզանեզաշվիլի Ս. — 500
Օլյան Ս. — 138
Օնանյան Ս. — 364, 372
Օնանյան Վ. — 133, 372
Օ' Հենրի — 386
Օվանեսով — 256
Օրբելյան Ս. — 364
Օրջոնիկիձե Ս. — 52, 215

Պապեև Ա. — 257, 483
Պիրդուսի — 386
Պոլյան Պ. — 121, 157, 244, 345
Պուտմանով Գ. — 257, 483

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՐԱՐԱՏՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Մաս առաջին

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Գլուխ առաջին.— Խորհրդային իշխանության ամրապնդման դիրքերում, հանուն աշխատավորների ինտերնացիոնալ համախմբման . 25

Գլուխ երկրորդ.—Տնտեսական խնդիրների քննարկումը պարբերական մամուլում 95

Գլուխ երրորդ.—Պարբերական մամուլի կազմակերպական ամրապնդումը, մասսայական աշխատանքի ուժեղացումը 185

Մաս երկրորդ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՅՔԱՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՖՈՒՄԱՆ ՀԱՄԱՐ

Գլուխ առաջին.—Պարբերական մամուլը և սոցիալիստական ինդուստրացումը 225

Գլուխ երկրորդ.—Պարբերական մամուլը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը 313

Գլուխ երրորդ.—Պայքար ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումն ավարտելու համար 375

Մաս երրորդ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

Գլուխ առաջին.—Ժողովրդական կրթության և կուլտուր-լուսավորական աշխատանքի հարցերը մամուլի մեկնաբանությամբ . . . 401

Գլուխ երկրորդ.—Մամուլի պայքարը նոր մարդու հասարակական-բարոյական կերպարի ձևավորման համար 426

Գլուխ երրորդ.—Սոցիալիստական գրականության և արվեստի զարգացման խնդիրների արծարծումը մամուլում 453

Վերջաբան 511

Ամփոփում (Резюме) 517

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ 535

Անձնանունների ցանկ 551

559

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԻ ՖԵԼԵԿՅԱՆ
АРУТЮН ГАЙКОВИЧ ФЕЛЕКЯН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Վ. Մ. ԱՄԻՐԲԵԿՅԱՆ

Հրատարակչական խմբագիր՝
Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կազմը՝ Ցուլ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

Տեխնիկական խմբագիր՝
Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ

ՎՀ 03653 Պատվեր 413 ԵՀԽ 1223 Հրատ. 3246 Տպաքանակ 1090

Հանձնված է արտադրության 14/X 1969 թ., Ստորագրված է տպագրության 11/XII 1969 թ., Տպագր. 35,0 մամուլ., Հրատ. 29,75 մամուլ. Թուղթ № 1, 60×90 1/16, Գինը 2 ռ. 07 կ.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան.
Երևան, Բաբեկյանության 24.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220044297

II
A 44296